Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Переплетно-
и
галантерейная
мастерская
Меффертъ
Тифлисъ

Գիրքը դարձա՝ գրվում
361.5(47·925)
Հ-38
ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԵՐԵՍՆԱՄԵԱԿ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍՈՒՄ

1881—1911

8674

Կազմեց Լ. Է. Օ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ № 3.
1911

A II / 11913

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես.

Առաջաբան . . . . . VII—VIII

Նախապատրաստութիւն . . . . . 1—26.

ա. Բարեգործութիւնը հայերի մէջ 1—12.

բ. Հայ ընկերութիւնները 12—26.

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԶՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

(Կանոնադրութիւն 1881 թ.)

I. Ընկերութեան հիմնարկութիւնը . . . . . 28—38.

II. Վաւերացում և բացում . . . . . 38—52.

(Կանոնադրութիւն 1881-ի 40—48).

III. Կազմակերպչական գործունէութիւն . . . . 52—67.

ա. Ճիւղեր 53—59.

(Հրահանգ Տեղական Վարչութիւններին 54—58)

բ. Անդամներ 59—64.

գ. Հասարակութեան վերաբերմունքը 64—67.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԵՆՏՐՈՆ (1881—1899)

Երես.

I. Դպրոցական գործ . . . . . 68—85.
ա. Աշակերտներ և դպրոցներ 68—77.
բ. Ուսուցչական ցենզ . . . 77—85.

II. Լուսաւորութեան գործ . . . . . 85—95.
ա. Գրականութիւն 85—88.
բ. Գրադարան-Ընթերցարան 88—95.

(Կանոնադրութիւն Գրադարանի 90—93).

III. Օգնութիւն տնանկներին . . . . . 95—96.

IV. Աշխատաւորներ . . . . . 96—102.
ա. Մշակների ընկերութիւն 96—98.
բ. Արհեստներ . . . . . 98—102.

V. Աղէտներ . . . . . 102—122.
ա. Յունվարի 6-ի աղէտը 102—103.
բ. Խօլերա . . . . . 103—107.
գ. Սով (1893—1894) . . . 107—110.
դ. Թիւրքահայ դաղթականներ 110—122.

VI. Աբովեան-Նազարեան գրական ֆոնդ . . . . 122—126.

VII. Բարերարներ . . . . . 126—131.
ա. Յովսէփ Մուրադեան 127.
բ. Յովհաննէս Խուդադեան 128—131.

VIII. Դիւանական գործավարութիւն . . . . . 131—139.

IX. Ընդհանուր ժողովներ . . . . . 139—142.

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՃԻՒՂԵՐ (1881—1899)

Երես.

Ճիւղեր . . . . . 142—211.

I. Շուշի 142—149.—II. Երևան 149—155.—III. Ախալցխա 155—161.—IV. Բարվանսարա գիւղ 161—162.—V. Գօրի 162—166.—VI. Հին-Նախիջևան 166—169.—VII. Բաթում 169—178.—VIII. Նոր-Բայազէտ 178—179.—IX. Կաղզուան 174—180.—X. Կարս 180—185.—XI. Դերբենտ 185—186.—XII. Վաղարշապատ 186—191.—XIII. Արմաւիր 191—196.—XIII. Ախալքալաք 196—197.—XIV. Թելաւ 197—198.—XV. Ալէքսանդրօպոլ 198—201.—XVI. Ցխինվալ 201—205.—XVII. Նուխի 205—207.—XVIII. Արդահան 207.—XIX. Բալախանի 208.—XX. Գանձակ 209.—XXI. Թէմիր-Խան-Շուրա 210.:

ՉՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(Կանոնադրութիւն 1899 թ.)

I. Վերակազմութիւն . . . . . 212—222.

ա. Նոր կանոնադրութիւն 212—217.

բ. Լիքուիդացիա . . . . . 217—221.

գ. Առաջին Ընդհանուր ժողով 221—222.

II. Վարչութիւն . . . . . 222—227.

III. Աղքատախնամութիւն . . . . . 227—229.

IV. Խուդադեան որբանոց . . . . . 229—239.

V. Ճաշարան . . . . . 239—242.

VI. Հայ-Թուրքական ընդհարումներ . . . . . 242—246.

Երես.

VII. Անշարժ կալուածներ . . . . . 246—247.

VIII. Բարերարներ (Եղիա Բուդաղեան) . . . . . 247.

ԶՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ

(Կանոնադրութիւն 1908 թ.)

I. Հին Կանոնադրութեան վերականգնումը . . . 250—260.

II. Նոր կազմակերպում . . . . . 260—272.

ա. Առաջին ընդհանուր ժողով . 260—264.

բ. Խորհուրդը . . . . . 264—272.

III. Կենտրոնի գործունէութիւնը . . . . . 272—314.

ա. Դպրոցական գործ . . . . 272—284.

բ. Գրագարան-Ընթերցարան . 284—289.

գ. Որբանոց . . . . . 289—291.

դ. Ճաշարան . . . . . 291—293.

ե. Գրականութիւն . . . . . 293—297.

զ. Աղքատախնամութիւն . . . 297—300.

է. Թիւրքահայ գաղթականներ 300—304.

ը. Այլ և այլ բարեգործութ. . 305.

թ. Բարերարներ . . . . . 305—313.

ժ. Դիւան և ծառայողներ . . . 313.

IV. Ճիւղերի գործունէութիւնը . . . . . 314—330.

V. Վերաստուգող Յանձնաժողով . . . . . 330—331.

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

1. Կանոնադրութիւն Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում (1908) . . . . . 334.

2. Գրական ֆոնդ Կ. Հ. Բ. Ընկերութեան . . . 350.

3. Հրահանգ Կ. Հ. Բ. Ընկերութեան Թիֆլիսի Աղքատախնամ Մանաժողովներին . . . . 352.

4. Հրահանգ Կ. Հ. Բ. Ընկերութեան Վերաստուգող Յանձնաժողովին . . . . . 356.

Ա. Ռ Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

Ներկայ տարուայ յունուարի սկզբում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը ինձ պատիւ արաւ, առաջարկելով գրել Ընկերութեան երեսնամեայ գործունէութեան պատմութիւնը։ Հրաւիրուած լինելով Խորհրդի նիստին, ես, աշխատութեան պայմաններին ծանօթանալուց յետոյ, տուի համաձայնութիւնս։ Եւ այնուհետև ես ստացայ Խորհրդի գրութիւնը յունուարի 11-ից № 5, որի մէջ ասուած է.

«Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը, յայտնելով Ձեզ իր խորին շնորհակալութիւնը որ Դուք սիրալիր կերպով յանձն առաք կատարել Խորհրդի առաջարկութիւնը, այն է՝ պատրաստել տպագրութեան համար Ընկերութեան երեսնամեայ պատմութիւնը, որի ծաւալը պէտք է լինի մօտաւորապէս տասը տպագրական թերթ, խնդրում է Ձեզ, Մեծապատիւ Պարոն, սկսել այդ աշխատանքը, որպէս զի տպագրութիւնը վերջանայ ոչ ուշ այս տարուայ մայիսի սկզբից։

«Ընկերութեան արխիվում գտնուող մատեանները, տեղեկագրերը և այլ գրագրութիւնները Ձեր տրամադրութեան տակ են դրվում և այդ մասին յայտարարուած է Խորհրդի պաշտօնեաներին»։

Ես անմիջապէս սկսեցի աշխատել և չորս ամսուայ ընթացքում պատրաստեցի ներկայ գործը, որի վերաբերմամբ կարևոր եմ համարում մի քանի բացատրութիւններ տալ։

Ներկայ պատմութիւնը, լինելով Խորհրդի հրատարակութիւն, հարկաւ պիտի հիմնուած լինի այն պաշտօնական նիւթերի վրայ, որոնք պահվում են Խորհրդի արխիվում։ Այդպէս էլ վճռել է Խորհուրդը։ Սակայն Ընկերութեան հիմնարկութեան մասին մանրամասնութիւններ չը կան Խորհրդի գործերում։ Ուստի այս նախապատրաստական շրջանի պատմութիւնը գրելիս ես ստիպուած եղայ դիմելու կողմնակի աղբիւրների, գլխաւորապէս այն ժամանակների մամուլին։

Պատմութիւնը ամենից առաջ պիտի, իհարկէ, ցոլացնէ այն գործերը, որ կատարել է Ընկերութիւնը իր երեսնամեայ

գոյութեան ընթացքում։ Բայց պատմութիւնը չը պիտի անտես անէ և այնպիսի գործեր, որոնք չեն իրականացել այս կամ այն պատճառով, այլ մնացել են ծրագրային գրութեան, առաջարկութեան ձևի մէջ։

Ես ուշադրութիւն եմ դարձրել և այսպիսի գործերի վրայ։ Մի հիմնարկութեան կեանքը պատկերացնում են ոչ միայն նրա կատարած գործերը, այլ և այն դաղափարները, որոնք ծնվում են նրա ոգուց, նրա կանոնադրութիւնից։

Այսպիսով մենք նիւթեր տուած կը լինենք հասարակաց արդիւնաւորող մտքի պատմութեան համար։

Ես աշխատել եմ արձանագրել այստեղ ամեն մի աչքի ընկնող փաստ Բարեգործական Ընկերութեան գործունէութեան մէջ։ Վստահանում եմ կարծել, որ Ընկերութեան Կենտրոնի ամբողջ գործունէութիւնն է արձանագրուած ներկայ աշխատութեան մէջ։ Բայց նոյնը չեմ կարող ասել Ընկերութեան ճիւղերի վերաբերմամբ։ Խորհրդի արխիվում ես չը գտայ բոլոր կարևոր նիւթերը ճիւղերի գործունէութեան մասին։

Աշխատութիւնս կարդացուել է Խորհրդի նիստերում և լրացուել ու փոփոխութիւնների է ենթարկուել նրա ցուցմունքներով։

Խորհուրդը թէ յօրելեանական ուսումնամրութեան և թէ ներկայ հրատարակութեան մասին խորհրդակցութիւններ է ունեցել Ընկերութեան անդամներից կազմուած խառն ժողովների մէջ։ Այդ ժողովներն էլ ցուցմունքներ են տուել թէ ինչ պատկերներ պիտի դնուին այս աշխատութեան մէջ։ Եւ Խորհուրդը, պատկերների վերաբերմամբ, ղեկավարուել է այդ ցուցմունքներով։

Լ. Օ.

1911, մայիս.

Կառավարութիւն Գործոց
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ
Մեծ Իշխան
ՆԻԿՈԼԱՅ ՄԻԽԱՅԻԼՈՎԻՉԻ

1 յունիսի 1911 թիւ
№ 743
Ս. - Պետերբուրգ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի պ. Նախագահ Ս. Ս. Յարութիւնեանին:

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլովիչը բարեհաճեց յայտնել համաձայնութիւն որ իր ի Տէր հանգուցեալ ծնողի, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի պատկերը զետեղուի Ընկերութեան յօբելեանական հրատարակութեան մէջ:

Այս մասին Գործերի Կառավարութիւնը պատիւ ունի յայտնելու Ձեզ 'ի հետևումն Ձեր միջնորդութեան, այս տարուայ մայիսի 16-ից № 381, յանուն Նորին Կայսերական Բարձրութեան:

Կառավարիչ գործոց Նորին Կայսերական Բարձրութեան՝ Մ. ՄԱԵԴՈՎՍԿԻ:

Ի Տէր հանգուցեալ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան

ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ

Նախկին Փոխարքայ Կովկասի:

† Գեներալ-ադիւտանտ իշխան Լ. ՄԷԼԻՔՈՎ.
(Պաշտօնակատար Փոխարքայի):

Գեներալ-ադիւտանտ Կոմս Ի. Ի. Վ. ՈՐՈՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎ,
Փոխարքայ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Կովկասում:

Սառան - Պատա Կամսարի Ե. Ա. ՎՈՐՈՆՅՈՎԱ - ԳԱՇԿՈՎԱ
(Ամառվի Փոխարքայի):

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ա.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Բարի գործերով կարօտ անհատներին և հանրութեան օգտակար լինելու զգացմունքը խորթ չէ հայ ազգին՝ նրա պատմական կեանքի ընթացքում։

Նոյն իսկ հեթանոսութեան ժամանակ մենք տեսնում ենք բարեգործութեան հետքեր։ Այսպէս, Խորենացին յիշատակում է, որ Տիգրան վերջինը պատուեց իր եղբօր՝ Մաժան քրմապետի դերեզմանը, շինելով նրա վրայ բագին. «զի 'ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկոթիւք» [1]) Այս վկայութիւնը ցոյց է տալիս, որ հեթանոսական տաճարները մեզանում էլ, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ, ունէին և կարօտներին օգնելու կոչում։

Քրիստոնէութիւնը, ինչպէս յայտնի է, աղքատներին և անկարողներին խնամելու գործը առաջնակարգ պարտաւորութիւններից մէկը դարձրեց իրան հետևողների համար։ Եւ քրիստոնէութեան մուտքը Հայաստան իր առաջին իսկ քայլերից հանդէս է բերում աղքատներին խնամելու գործը։ Քրիստոնէութեան մուտքի պատմութիւնը մեզ աւանդում

---

[1]) *Խորեն. Բ. Կզ.*

է, որ Գրիգոր Լուսաւորիչը, քանդելով հեթանոսական մի քանի մեհեաններ, նրանց մէջ եղած դանձերը բաժանում էր աղքատներին [1]։

Բայց քրիստոնէութեան թեւադրած բարեգործական ոգին մեծ և ընդարձակ չափերով տարածուեց Հայաստանի մէջ Գրիգոր Լուսաւորչի շառաւիղներից մէկի, Ներսէս Մեծի ժամանակ, չորրորդ դարում։

Այս կաթողիկոսը, վերին աստիճանի մի ուժեղ և եռանդուն ընաւորութիւն, որ ահագին դեր էր կատարում և երկրի քաղաքական կեանքի մէջ, բաց արաւ Հայաստանում բազմաթիւ և տեսակ-տեսակ բարեգործական հաստատութիւններ, որոնք պահվում էին պետական սիջոցներով։ Յիշենք այդ հաստատութիւններից մի քանիսը [2]։

1) *Աղքատանոցներ*։ «Հրամայէր յամենայն աշխարհս և ի գաւառս և ի կողմանս-կողմանս... շինել աղքատանոցս, և ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավատս և զամենայն ցաւոտս»։ Այս հիմնարկութիւնները, ուրեմն, աւելի հիւանդանոցներ էին, ուր ցաւագար աղքատները գտնում էին ապրուստ և օգնութիւն։

2) *Որբանոցներ*։ «Որբոտների և տարափոխիկ հիւանդների համար»։ Որբոտները հին աշխարհում, ինչպէս յայտնի է, հեռացվում էին հասարակութիւնից, որպէսզի չը վարակեն ուրիշներին։ Նրանց համար Հայաստանում շինուեցին յատուկ ապաստարաններ։

3) *Դարմանոցներ*։ Այս հիմնարկութիւնների մասին Խորենացին ասում է «Տեղի մանդեան որբոց և ծերոց և անուանողաց տածումն» [3]։

4) *Այրենոցք*։ Յատկապէս այրի կանանց և որբերի ապաստարաններ, ուր նրանք ստանում էին ապրուստի միջոցներ։

---

[1]) Ագաթանգեղոս, Թիֆլիս 1909, եր. 408. 412.

[2]) Փաւստոս Բիւզանդացի, Վենետիկ 1832, եր. 68—71.

[3]) Խորեն. Գ, Ի։

5) Հիւրանոցներ կամ Օտարանոցներ: Փաւստոսն ասում է. «Եւ ամենայն մարդիկ երկրին Հայոց էին պըտղաբերք և ողորմածք առ ի յիշել զաղքատս և զնեղեալս, զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զնշդեհս, զպանդուխտս և զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսէսի, և դարմանս ի տեղեաց տեղեաց»:

6) Պանդոկներ: Ինչպէս վկայում է Ներսէս Մեծի կենսագիր Մեսրոպ երէցը, անբնակ տեղերում և լեռներում ճանապարհների վրայ, պանդոկներ շինուեցին ճանապարհորդների հանգստութեան և պաշտպանութեան համար [1]):

Բարեգործական հիմնարկութիւնների այն մեծ ցանցը, որով ծածկուած էր երկիրը, իհարկէ, իր պտուղները տուեց: Ամբողջ հայոց երկրում մուրացկանութիւն անող չը պիտի լինէր—այսպէս էր վճռել Ներսէսը: Եւ չը կար մուրացկանութիւն: Բարեկարգութիւնը ամեն տեղ էր: Այսպիսի մի երկրում, ի հարկէ, պիտի տիրապետէր և՛ բարքերի մեղմացում, և մարդասիրութիւն: «Եւ ամենայն աշխարհին պատուիրէր (Ներսէս), և գլխովին թագաւորին, առհասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, դութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրտսերս և ընդ աշակերտս, և սիրել իբրև զընտանիս, և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն, յուշ առնելով, զի և նոցա տէր գոյ յերկինս: Սոյնպէս և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տէրանց, զի 'ի տեառնէ լինիցի նոցա վարձք»:

Քրիստոնէական գթասրտութեան և ընկերասիրութեան հոյակապ տեսարան: Եւ այս Հայաստանի նման մի երկիր, Ասիայի խորքում, մի երկիր, որ նոր էր պաշտօնապէս դէն դրել հին հաւատը, այսինքն բաժանուել էր ասիականութեան միջավայրից և ընդգրկել էր, դարձեալ դեռ պաշտօ-

---

[1]) Ինճիճեան—«Հնախօսութիւն Հայաստանեաց» հ. Բ, Վենետիկ, 1835, եր. 356:

նապէս, քրիստոնէութիւնը, այսինքն հաղորդակից էր դառել եւրոպական քաղաքակրթութեան։

Հիացմունքով է պատմիչը նկարագրում այդ նոր կարգերը։ Այս հիմնարկութիւնների հետ իհարկէ, առանձնապէս փարթամանում է եկեղեցին։ Կրօնաւորների թիւը աճում և բազմապատկվում է։ Ամեն տեղ կղերանոցներ, մենաստաններ։ Բացվում են դպրոցներ։ «Արարին — ասում է Փաւստոսը — զամենայն ժողովուրդս երկրին հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն»։

Այս էր Ներսէս Մեծի խղէալը.— դարձեալ ամբողջ երկիրը մի վանական միաբանութիւն, բայց, ի հարկէ, ոչ— կուսակրօն, այլ ամուսնացեալ միաբանութիւն։

Տարաբախտաբար, այդպիսի մի պետութիւն չէր կարող գոյութիւն ունենալ իրական աշխարհում։ Հայաստանը երկու քաղաքական մեծ կազմակերպութիւնների՝ Պարսկաստանի և Բիւզանդիայի մէջ արոբուող մի թոյլ, արդէն շատ խախտուած քաղաքական անկախութիւն էր։ Երկիրը կարօտ էր պաշտպանութեան, լինել չը լինելու հարց ունէր իր առջև։ Կարող էր նա պետական միջոցների մի խոշոր մասը յատկացնել բարեգործական հաստատութիւններին։

Ի հարկէ, ոչ։— Եւ Ներսիսի հիմնարկութիւնները ճիշտ այնքան կեանք ունեցան, որքան ապրեց այդ, իսկապէս, մեծ հայրապետը։ Նրա մահից յետոյ Պապ թագաւորը, գործադրելով ճիշտ հասկացուած ըէալ քաղաքականութեան պահանջները, յետ խլեց եկեղեցիներին և բարեգործական հաստատութիւններին յատկացրած պետական հողերը, կրճատեց կրօնաւորների անչափ բազմացած թիւը և այլն։

Այնուհետև հայոց պատմութեան ընթացքում այլ ևս չենք տեսնում պետական բարեգործութեան այսպիսի ընդարձակ սիստեմ։ Բարեգործութիւնն այնուհետև անցնում է անհատներին։— Եւ մեր պատմութիւնը պահել է շատ անհատ բարեգործների անուններ։

Բարեգործությունը համարվում էր գերազանցօրէն հոգեշահ գործ, այնպիսի նուիրաբերություն սեփական ստացուածքից, որի համար նուիրաբերողները վարձ պիտի ստանան թէ այս և թէ հանդերձեալ աշխարհում։ Այդ զգացմունքը ամենայն եռանդով պահպանում էր կրօնը հաւատացեալների մէջ։ Եւ բարեգործությունը ամենից առաջ և ամենից շատ կրօնական ստուածահաճոյ կերպարանք ունի։

Այդ զգացմունքի արդիւնքներն են Հայաստանի բոլոր կողմերում շինուած անթիւ եկեղեցիներն ու վանքերը, որոնցից շատ շատերը ամբողջ մեծագործություններ են։— Այդ ստուածահաճոյ շինարարության հետ համազօր և առաջնակարգ քրիստոնէական պարտաւորություն է այդ սրբազան շինությունները կալուածներով և այլ հասոյթներով ապահովելը։—Եւ մեր եկեղեցիների ու վանքերի արձանագրությունները ցոյց են տալիս, թէ որպիսի ջերմեռանդությամբ անհուն հարստություններ են նուիրել դարերի ընթացքում հայ հասարակության բոլոր անդամները, սկսած թագաւորներից, իշխաններից մինչև ճորտ գեղջուկները։

Աստուածահաճոյ գործեր էին համարվում և հանրօգուտ ձեռնարկությունները։ Կամուրջ կառուցանել, աղբիւր հանել այսօր էլ մեր ժողովրդի մէջ համարվում են ամենավեհ բարեգործական առաքինություններ։ —Անիի արձանագրությունները ցոյց են տալիս և մի շատ հետաքրքրական երևոյթ։ Այդ բերդի աշտարակներից մի քանիսը շինուել են մասնաւոր անձանց ծախսերով «ի փրկություն հոգւոյ» կամ «յարևշատություն» այս ինչի։ Նշանակում է, որ հասարակաց ինքնապաշտպանության նպաստելն էլ հոգեշահ բարեգործություն էր։

Այնուհետև բարեգործության ամենատարածուած ձևն էր աղքատներին, կարօտներին, կեանքի զանազան պատահարներից թշուառացածներին օգնելը։ — Թագաւորների,

իշխանների և առհասարակ ունևորների լաւագոյն տիտղոսներն էին բարեգործութեան այդ ձևերը։

Յիշենք մի քանի օրինակներ մեր պատմութիւնից։

Մանուել Մամիկոնեան, (IV դար)։ Բաջ զօրավար և առատաձեռն խնամող. «Բազում և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխէր, իւրովք ձեռօք մատակարարէր,— ասում է պատմիչը [1])— և բազում մասունս յընչից իւրոց տայր եկեղեցիս և ի վկայանոցս, և բազում գանձ տայր ցքահանայապետսն, և ապա ինքն մեռանէր... Այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եղեալ, մեծաւ աշխարանօք լային զնա առհասարակ ազատք և շինականք, զի ամենայն մարդ իբրև զհօրէ 'ի կարի առնէին զնմանէ վասն քաղցրութեան, մարդասիրութեան, հեզութեան, հանդարտութեան, խնամոտ բարերարութեան՝ բարենշան զաշխարհաշէն անձն Մանուէլի»։

Գրիգոր Պատրիկ (VII դար)։ «Այր երկիւղած յԱստուծոյ, եղբայրասէր և օտարասէր և դարմանիչ աղքատաց» [2])։

Բագրատունի թագաւորներից իր անչափ աղքատասիրութեամբ յայտնի է Աշոտ Գ. Ողորմածը (X դար), որի մասին գրում է Ասողիկը. «Խոնարութեամբ և ողորմածութեամբ անցոյց զամենեքումբք. վասն զի զգոնջացեալսն և զկաղսն և զկոյրսն հաւաքէր առ ինքն և բարձակից ինքեան առնելով ի խրախճանութիւնսն, զոմանս ի նոցանէ իշխան և իշխանաց իշխանս և կիւրապաղատաս անուանէր, և զբօսնոյր նոքօք և զքոսն կարմիր և զվէրս նոցա առաջի աչաց իւրոց փոխանակ զարդուց և ականց փայլելոց համարէր։ Այլ և զրաժակն իւր թագաւորական ըմպելեօք մատուցանէր նոցա և յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ գինւոյն, յայնժամ զմնացորդս նոցա առեալ ինքն ճաշակէր։ Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարո-

---

[1]) Փաւստոս, եր. 258։

[2]) Ղևոնդ պատմագիր Պարիզ 1858 գլ. Գ։

տելոց, մինչև ի մահուն իւր ոչ լինել դրամ մի ի գանձատան նորա, այլ և զկապուտ զարդուցն և բազմականացն և որմոց տայր կարօտելոց» [1]։

Նոյն միջոցներում իր գործերով հռչակուեց Անիի ազնուական տոհմերից մէկը, որ քաղաքում յայտնի էր Ապուղամբենց անունով, իսկ մեր պատմութեան մէջ՝ Պահլաւունի իշխաններ անունով։

Այդ տոհմի նախահայրն էր Ապուղամբը, որի որդին՝ Գրիգոր իշխանը և նրա ամուսին Շուշանիկ կամ Շուշիկ տիկինը նշանաւոր բարեգործներ էին։ Նրանց թոռը, յայտնի մատենագիր Գրիգոր Մագիստրոսը, գրում է հետևեալը. «Սոցա ոչ էր այլ ինչ, եթէ ոչ գնել զգերեալսն, ազատել զբանտարկեալսն, կերակրել զքաղցեալսն, արբուցանել զծարաւեալսն, ուսուցանել զմանկունս, սնուցանել զորբս, օթևան լինել այրեաց, զըմբռնեալսն ի ձեռաց հրզօրաց կորզել, իւրովին ձեռօք իսկ կերակրել զաղքատս և զկրօնաւորս, ամուսնացուցանել զորբս ընդ միմեանս ողջախոհ և քրիստոնէական կրօնիւք։ Ո՞ ոք վախճանէր. և ոչ անդր ընթացեալք յուղարկաւորք լինէին գնացելոցն և մխիթար ճնացելոցն. ո՞ ոք պարտապան, երթալ առ նոսա և ոչ հատուցանէին, կամ տրամեալ, և անմխիթար ելանէր յարկաց նոցա, կամ հիւանդ ոք, զորս ոչ տեսանէին, կամ տնանկ, զորս ոչ ժողովէին» [2]։

Բայց աւելի մեծահռչակ է նրանց որդի Վահրամ Պահլաւունին։ Այս հոյակապ անձնաւորութիւնը, որի անունը զարդարում է Անիի թագաւորութեան պատմութեան վերջին տխուր էջերը, անպարտելի քաջութեան, հերոսական անձնազոհութեամբ, մաքուր հայրենասիրութեան, գրասիրութեան հետ միացնում էր լայն առատաձեռն բարեգործութիւն։

---

[1]) Ասողիկ, տպ. Պարիզ, եր. 167։

[2]) «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» Ալէքսանդրօպոլ, 1910, եր. 43։

Նա շինեց Մարմաշէնի հոյակապ վանքը [1]) 986—1029 թուականներին և զբաղում էր նրա երկար արձանագրութեան մէջ իր տոհմի մասին. «Որք էաք ամենայն տամբ և տոհմիւ հաւատարիմք տէրանց մերոց և նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մերով և որդոց մերոց և զանձուց առատութեամբ և ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհի և զհաստատութիւն եկեղեցեաց»։

Այս իշխանի ամբոցը գտնվում էր նոյն Մարմաշէնի կողքին, բարձր ժայռի վրայ։ Նրա դուռը միշտ բաց էր ոչ միայն հայ, այլ և վրացի ու պարսիկ անցորդների առջև։ Գալիս էին, մտնում էին, պահանջում էին ինչ ուզում էին, ճաշում էին որքան ուզում էին և գնում էին, առանց նոյն իսկ յայտնելու թէ ովքեր են։ Գրիգոր Մագիստրոսը պատմելով այս բոլորը [2]), աւելացնում է, որ նա էլ միշտ անում էր այն բարերարութիւնները, ինչ արել էին նրա ծնողները։

Վասպուրականի Արծրունի թագաւորներից իր բարեգործութիւններով յայտնի է Գագիկ Արծրունի (X դար), որի մասին Թոմա Արծրունի պատմագիրն ասում է. «Ի վերայ ամենայն բարեխնամող զթութեանց, որով զաղքատս գարմանէր, զգերեալս դարձուցանէր, զրկեալս փրկէր, դատ առնէր որբոց և տար իրաւունս այրեաց» [3])։

Ռուբինեան թագաւորներից յիշատակենք միայն Լևոն Մեծագործի դուստր և Հեթում թագաւորի ամուսին Զապել թագուհուն (XIII դար)։ Ի միջի այլ բարերարութիւնների, նա հիմնեց Սիսում մի հիւանդանոց։ «Ոչ միայն առատ ոռճկաւ՝ զոր իր զարդերէն և անցաւոր զբօսանքներէն կտրելով՝ կապեր էր անոնց, այլ և անձամբ այցե-

---

[1]) Ալէքսանդրապոլի հիւսիս-արևմտեան կողմում։

[2]) Գր. Մագիստ. թղթերը, եր. 39, 141։

[3]) Թոմա Արծրունի, Կ.-Պոլիս Ե, գ.

լութեամբ և ձեռօք դարմանելով, ըստ Խոսրովանուշայ բարեպաշտ դշխոյի Բաղրատունեաց»[1]։

Նոյն ժամանակները Արևելեան Հայաստանը անհնարին տառապանքների մէջ էր թաթարական արշաւանքների պատճառով։ Այդ դժբախտ ժամանակները, երբ քարը քարի վրայ չէր մնում, իր բարեպաշտութեամբ և առատ բարեգործութիւններով անուն հանեց Խաչէնի իշխան Զալալը։ Ժամանակակից պատմիչը[2] վկայում է, թէ այն բոլոր պահանջները, որ թաթարները ուղղում էին ազգաբնակութեան, տալիս էր այս իշխանը և այդպիսով չէր թոյլ տալիս, որ թաթարները կեղեքեն ընակիչներին։ Այնպէս որ հարկեր և այլ տուրքեր պահանջող թաթարները ուղղակի նրան էին դիմում։—Իսկ Զալալի մայրը ծախեց իր բոլոր հարստութիւնները, բաժանեց աղքատներին և ինքը գնաց Երուսաղէմ՝ այնտեղ ճգնելու մինչև մահ։

Թաթարական արշաւանքները ահաւոր տակնուվրայութիւններ են մտցնում Հայաստանի մէջ։ Ամենագլխաւորներից մէկն այն էր, որ խապառ ջնջվում են կամ շատ թուլանում հին իշխանական տոհմերը։ Երկիրը այլ ևս անկախութիւն չէ տեսնում։ Ազգաբնակութիւնը, վերջին ծայր աղքատութեան հասած, հազիւ է կարողանում իր ապրուստը հոգալ։ Եւ այս կացութիւնը շարունակվում է շատ երկար ժամանակ։ Վերջին ահեղ հարուածը, որ ոչնչացրեց հին դրութեան մնացորդները, Լէնկթէմուրի արշաւանքն էր (XIV դար)։

Սակայն հետզհետէ, ժամանակի ընթացքում, կեանքը թաթարական տիրապետողների իշխանութեան տակ մշակում է նոր ձևեր։ Եւ առաջանում է մեր Նոր Պատմութեան ամենախոշոր երևոյթը—հայ վաճառականութիւնը։ Նա զարգանում է, յարաբերութիւններ է սկսում Արևմտա-

---

[1]) Հ. Ալիշան—«Յուշիկք հայրենեաց Հայոց», Հ. Ա., Վենետիկ 1869, եր. 149.

[2]) Կիրակոս Գանձակեցի, Մոսկվա 1858, եր. 139.

եան աշխարհի հետ, գաղթականութիւններ է հիմնում Եւրոպայի զանազան կողմերում։

Վաճառականական դասը բռնում է հին ազնուականութեան տեղը, ստանում է նոյն «իշխան» անունը և սկսում է կատարել նրա դերը։ Բարեգործութեան ասպարէզը նորից կենդանանում է հայերի մէջ։ Նրա նպատակը գլխաւորապէս միևնոյնն է մնում — կրօնական հաստատութիւններին օժանդակել և նրանց միջոցով նաև ազգատներ խնամել։ Բայց ժամանակը, հայ վաճառականների շփումները քաղաքակիրթ ազգերի հետ, նոր-նոր շերտեր են մտցնում բարեգործութեան մէջ։

Այսպէս, հայ վաճառականութեան աջակցութեան շնորհիւ է առաւելապէս, որ հիմնաւորվում է մեզանում և զնալով զարգանում է տպագրական գործը։ Տպագրութեան պատմութեան մէջ հայերը առաջիններից մէկն են այն ազգերի թւում, որոնք սկսեցին գրքեր տպագրել։ Եւ այս հանգամանքը մենք պարտական ենք այն պատմական մեծ իրողութեան, որ հայ վաճառականները գաղթականութիւններ հիմնեցին Եւրոպայի զանազան կողմերում և միևնոյն ժամանակ իրանց նուիրատուութիւններով նպաստում էին, որ տպարաններ բացուին և գրքեր հրատարակուին։ Նոյն իսկ գրքերի բովանդակութեան վրայ էլ ազդում էին վաճառականները։ Նրանք փող տալիս էին շատ անգամ այն պայմանով, որ տպագրուին աշխարհիկ բովանդակութեամբ գրքեր։ Իսկ այս հանգամանքը այնպիսի մի ժամանակ, երբ գրականութիւնը համարեա բացառապէս կրօնական բովանդակութիւն ունէր, մի շատ խոշոր երևոյթ է մեր գրականութեան պատմութեան մէջ։

Հանրաշահ բարեգործութիւններով երախտաւոր դարձած հայ վաճառականութեան մէջ առաջին տեղը բռնում են ջուղայեցիները։ Նրանք հանդիսացան առաջաւոր կրթական-կուլտուրական պահանջների ներկայացուցիչ և հետզհետէ խոշոր գործեր կատարեցին։ Այսպէս էին Լա-

զարեանները, որոնք Մոսկվայում հիմնեցին իրանց համբաւաւոր ճեմարանը. Ջուղայեցիներն էին մեծ մասամբ, որ Հնդկաստանի հայ գաղթականութիւնը հիմնեցին։ Այդ գաղթականութիւնը շարունակ նպաստներ էր տալիս բուն հայրենիքի մտաւոր շահերին նուիրուած հիմնարկութիւններին։ Յայտնի են հնդկահայերի կտակները. և դրանց մէջ ամենանշանաւորը Սամուէլ Մուրատի (ոչ Ջուղայեցի) կտակը, որով Վենետիկի Մխիթարեանները ստացան 2 միլիոն ֆրանկ՝ հայ ազգաստ երեխաների համար Եւրոպայում բարեկարգ դպրոց հիմնելու նպատակով։ Յիշատակելի է և նրա աներոջ, Ռափայէլի կտակը՝ գրքեր հրատարակելու և դարձեալ դպրոց բաց անելու նպատակով։

Որքան հայերը մօտենում էին եւրոպական լուսաւորութեան, այնքան աւելի պարզ էին տեսնում հայ ազգի յետամնացութեան ամենագլխաւոր պատճառը – տգիտութիւնը։ Եւ այնքան աւելի հայ հարուստների բարեգործական եռանդը ուղղվում էր դէպի կրթական-դաստիարակչական նպատակը։ Այդ եռանդի շնորհիւ էր, որ սկսեց զարգանալ մեր գրականութիւնը և մեղանում երևացին կանոնաւոր դպրոցներ։

Կ. Պոլսի ամիրայական դասակարգը դեռ XVIII դարի վերջերից թէ իր և թէ ժողովրդի նուիրաբերութիւններով կանոնաւոր դպրոցների սկիզբն է դնում։ Ներսէս Աշտարակեցին Թիֆլիսում, ունևոր հայերի նուէրներով հիմնում է իր դպրոցը։ Աստրախանում Աղաբաբեանն է դպրոց բաց անում։ Նոր-Նախիջևանը դպրոցական բարեկարգութիւն է հաստատում հնդկահայերի կտակով։ Այս ուղղութիւնը բարեգործութեան մէջ շարունակվում է և մինչև այսօր։

Բ.

ՀԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մինչև այսօր մենք տեսանք անհատական բարեգործութիւնը, որ ամենահին ձևն է և որի առարկան էր երկար դարերի ընթացքում գլխաւորապէս աղքատախնամութիւնը թէ անձամբ և թէ եկեղեցիներին ու վանքերին արած նուէրների միջոցով։ Յետոյ միայն, նոր ժամանակների ազդեցութեան տակ աչքի ընկնող փոփոխութիւն է մտնում բարեգործական նպատակների մէջ։

Այս դրութեան մէջ չը կայ ոչինչ առանձնակի, մեզ միայն յատուկ հանգամանք։ Այսպէս է եղել բոլոր ազգերի մէջ։ Կրօնական հայեացքների տիրապետութիւնը ամեն տեղ միանման ներգործութիւն է ունեցել, ամեն տեղ եկեղեցուն է վերապահել դիտութեան, դաստիարակութեան, մտաւոր զարգացման գործերը։

Հաւաքական ուժերով հանրաշահ գործեր կատարելու վեհ սկզբունքը, որ առաջադիմութեան և հանրային բարեկեցութեան հզօր ազդակներից մէկն է, քաղաքակիրթ մարդկութեան մէջ էր, որ իրականացաւ։

Այդ սկզբունքը մենք առաջին անգամ տեսնում ենք հայերի մէջ XIX դարի սկզբներում իրագործուած։ Տեղը, ուր երևան է գալիս այդ սկզբունքով ապրող կազմակերպութիւնը, Կ. Պոլիսն է։

Այստեղ 1810 թուին, Մխիթարեան ամենահամբաւաւոր և բազմերախտ վարդապետներից մէկի, Հ. Ղուկաս Ինճիճեանի նախաձեռնութեամբ և յորդորներով, Տիւզեան ամիրայական ընտանիքի երկու երիտասարդ անդամներ կազմակերպում են «Արշարունեաց» անունով մի ընկերութիւն, որի նպատակն էր հանրամատչելի գրական հրատարակութիւններ անել։ Ծրագրած էր մօտ 200 փոքր հա-

տորներից բաղկացած մի ամբողջ գրադարան հրատարակել՝ գիտութեան և գրականութեան այլ և այլ ճիւղերի վերաբերեալ։ Բայց նախքան այդպիսի մի գործի համար անհրաժեշտ գումարը հաւաքելը՝ ընկերութիւնը վճռեց հրատարակել Վենետիկում, Մխիթարեան վարդապետների խմբագրութեամբ, մի պարբերական հրատարակութիւն, որի մէջ պատկերացած լիներ քաղաքակիրթ ազգերի քաղաքական կեանքը։

Եւ ահա 1812 թուի օգոստոսից, «Արշարունեաց» ընկերութեան ծախսով սկսվում է «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթը, որ առաջին աշխարհաբար հրատարակութիւնն էր հայերի մէջ։—Ահա ինչ էր գրում «Դիտակ Բիւզանդեանը» այդ ընկերութեան մասին.

«Մեր ազգին մէջ գովելի հոգևոր եղբայրութիւններ եղաւ. բայց ընկերութիւն մը չիկար. ասա ԺԹ դարուն սկիզբը, տեսնը-վեցաւ Ըստանպոլի մէջ մէկ նախանձելի ընկերութիւն մը՝ որ մէյտեղ խօսք գրած են, ձեռվընելէն եկածին չափ ջահդ ընեն, սակայն խարճ չի նային, որչափ պէտք ըլլայ տան, որ եղած ուսումնական գրքերուն վրայ, տահա այլ նորանոր գրքեր շինել տան գիտնոց ու տպել տան, որով որ ազգը պարէ ան շատէն քիչը կարդայ, սորվի, խմաստութեան անուշ համը առնէ։ Ամ ընկերութիւնը պղտիկ՝ 40—45 հոգւոյ չափ է, ու օր է օր կը շատնայ ու մեծ յոյս կուտայ, որ հաստատուն պիտ որ ըլլայ ու տևէ» [1]։

Նոյն այդ համարի մէջ տպուած է ընկերութեան հիմնադիրներից մէկի, Յակոբ Տիւզի մի ճառը, որ նա ասել է անդամներին խրախուսելու համար։ Եւ ահա, ի միջի այլոց, ինչ էր ասում նա.

«Զբսենք՝ ես ինչ ընեմ» ես զիս նայեմ, չիյտեմ մի որ ազգին ընելը բեզի ընելէ. որովհետև դուն ալ նոյն ազգին մասն ես. ազգին թշուառութիւնը, տգիտութիւնը բոլոր քուկդ է։ Բայց ինչ մենծ ուրախութիւն է մէկ ազգասէր մարդու մը տեսնել՝ որ ինքը միտակ չէ եղեր, հապա զանազան անձինք նոյն հոգւով մտմտացեր

[1]) «Դիտակ Բիւզանդեան» 1813, թ. 1։

են՝ որ իրենք զատ զատ կենալով այնչափ մենծ օգուտ չեն կրնար ընել (ինչպէս կըսեն, մէկ ձեռքը մինակ ձայն չի հաներ) մէկ եղեր՝ ընկերութիւն մըն են կազմեր, ինչպէս որ մենք հիմա եղեր ենք. ու աս ի՞նչ բանի համար, որ մեր ձեռքերնէս եկածին չափ, մեր վիճակին բերելու կէօրէ, ամէն կերպով ջանանք ուսումնականներու գիտնականներու ընկերք, անոնք մեզի աչք են, ձեռք են, կռնակ են, անոնց ամէն կերպով օգնենք, որպէս զի անոնց ձեռքով ազգին ուսում ու գիտութիւն սորվեցնել տանք» [1]։

Հարիւր տարի առաջ այսպիսի գաղափարներով և ձգտումներով էր հանդէս գալիս առաջին հայ բարեսիրական կազմակերպութիւնը։ Դա լոյսի ամբողջ մի խուրձ էր, որ մտնում էր հայկական խաւար իրականութեան մէջ։— «Դիտակ Բիւզանդեանը» հրատարակուեց ամբողջ չորս տարի և Կ. Պոլսում ունէր 1500—3000 բաժանորդ։ Եւ ի՞նչ էր այդ համեստ քաղաքական լրագիրը այն ժամանակուայ հայութեան համար։ Հ. Ինճիճեանը Վենետիկ գրած իր մի նամակի մէջ նկարագրում էր այն տպաւորութիւնը, որ արել էր այդ լրագրի առաջին համարը 1812 թուին։

Հաւաքուել էին, ասում է նա, բազմաթիւ հայ կաթոլիկներ Տիւզեանների տունը՝ պատարագ տեսնելու համար, երբ բերին առաջին համարը։ «Պարտ էր ասա լինել... և տեսանել զտուն Տիւզեանց դարձեալ իբրև Եւրոպա... իւրաքանչիւրոյ առեալ մի մի թերթ՝ փոխանակ պատարագ տեսանելոյ՝ եղեն մի մի ընթերցողք, որոյ պատճառաւ յապաղեաց յոյժ պատարագն։ Այնչափ եղև հաճութիւն ամենեցուն, զի և այն, որ ոչ գրեցաւ ի յընկերութիւն, այլ մանաւանդ հակառակէր, որչափ և ստիպէին ի գրել, իսկ և իսկ գրեցաւ։... Ո՞ւր մնացին մեր բազմահատոր գրեանք խնամով աշխատասիրեալք, մի կամ երկու անձ հազիւ գտանի սիրով ընթերցող և գովող՝ յորժամ հասանեն ասա, իսկ այս թերթիկ (այսինքն «Դիտակ») մարթ է ասել՝ զզրկեաց զՊօլիս, տեսին և Գօլեճեանք, և յոյժ զարմացան, նաև ի Յունաց և յոյժ գովեցին» [2]։

---

[1]) Անդ։

[2]) Հ. Բ. Սարգսեան—«Երկհարիւրամեայ գրականական գործունէութիւն Վենետկոյ Մխիթարեան Միաբանութիւն», Վենետիկ 1905, եր. 24։

Այսքան փառաւոր էին այս պատուղները, որ բերեց առաջին կանոնաւոր ընկերութիւնը մեզանում [1]։

Այս երևոյթը մի ծաղիկ էր մեզանում։ Սակայն յայտնի է, որ մի ծաղկով գարուն չէ լինում։ «Արշարունեաց Ընկերութիւնը» չէր կարող միանգամից բարեփոխել մեր ամբողջ հին իրականութիւնը։ Նա միայն սկզբնաւորութիւն էր, ապագայի յայտարար էր։

Եւ ապագան բերեց նման ընկերութիւնների մի երկար շարք։ Բայց նրանց գործունէութեան տեղը շարունակում էր մնալ միևնոյնը—արևմտեան հայութեան գլխաւոր կենտրոնները։ Այդ կենտրոնները բուն հայ երկրից հեռու գտնուող երկու գաղթականութիւններ էին, Կ. Պոլիս և Զմիւռնիա։ Այդ տեղերում էր, որ հայութիւնը մօտիկից շփվում էր եւրոպականութեան հետ։ Եւ այդ տեղերում էր, որ կազմուեց եւրոպական բարձր ուսում ստացած ինտելիգենցիա. առաջ եկաւ մամուլ, գրականութիւն։

Կ. Պոլսում և Զմիւռնիայում դեռ XVIII դարի վերջերից գոյութիւն ունէին Ազգային Հիւանդանոցներ, ուր խնամք և դարման էին գտնում աղքատ և անօգնական հիւանդները։ Դրանք պահպանվում էին ազգային տուրքով։ XIX դարի երեսնական թուականներին Կ. Պոլսի Ազգային Հիւանդանոցը նոր կազմակերպութիւն ստացաւ, շնորհիւ Պէզճեան Յարութիւն ամիրայի առատաձեռն նուէրների։ Միևնոյն ժամանակ կազմակերպուեց և յատուկ աղքատախնամ հիմնարկութիւն «Տնանկաց Մնատուկ» անունով։

Սրանք ընկերութիւններ չէին բուն իմաստով, բայց հանրային միջոցներով պահպանուող աղքատախնամութիւն,

---

[1]) Մենք գիտեմ ենք առաջ բերում այս մանրամասնութիւնները։ Մի բարեգործական ընկերութեան պատմութիւն թէպէտ աւելի գեղեցիկ նախաբան կարող է ունենալ, քան այն սիրուն գործը, որ ցոյց տուեց նրա անդրանիկ եղբայրակիցը 100 տարի առաջ, միանգամից այնքան վեհ կերպարանքի մէջ ներկայացնելով հաւաքական ուժերով գործելու գաղափարը։ Եւ բացի դրանից, չէ՞ որ հէնց այժմ բոլորում է հաբիւրամեայ շրջանը մեր բարեգործական ընկերութիւնների սկզբնաւորութիւնից։

որպիսի հիմնարկութիւններ գոյութիւն ունէին Եւրոպայում վաղուց։

Քառասնական թուականներին Կ. Պոլսում և Զմիւռնիայում բացվում են մասնաւոր ընկերութիւններ, որոնք այլ և այլ նպատակներ են ընտրում իրանց համար։ Դրանց մէջ անուանի է մանաւանդ «Համազգեաց» ընկերութիւնը, որ հիմնուեց հայ-կաթոլիկ երիտասարդների ձեռքով և որի նպատակն էր լուսաւորութեան գործին ծառայել ընդհանուր ուժերով, այսինքն համախմբելով գործի շուրջը ոչ միայն կաթոլիկ հայերին, այլ և անխտիր միւս դաւանութիւններին պատկանող հայերին էլ։ Այս ձեռնարկութիւնը ահագին նշանակութիւն ունէր այն ժամանակները, երբ կաթոլիկ հայերի մէջ սկսուել էր ուժեղ շարժում դէպի ընդհանուր ազգային միութիւնը, անկախ կրօնական համոզմունքներից։ Հէնց այդ պատճառով էլ «Համազգեաց» ընկերութիւնը դարձաւ ֆանատիկոս կաթոլիկ կղերի հալածանքների առարկայ։

Նոյն թուականներին էր, որ Կ. Պոլսում հիմնուեցին մի շարք մանր, մասնաւոր ընկերութիւններ, որոնց նպատակն էր պահպանել այս կամ այն դպրոցը։ Դրանց մէջ աչքի ընկնողն է Սկիւտարի Ճեմարանի ընկերութիւնը։ Այդ ժամանակ էլ առաջին անգամ փորձ եղաւ ընկերական հիմքերով ընթերցարան բանալու [1]։

Զմիւռնիայում դարձեալ նոյն քառասնական թուականներին հիմնուեցին «Սիւնեաց» և «Արազածունեաց» ընկերութիւնները, առաջինը՝ դպրոցական, երկրորդը՝ հրատարակչական [2]։

Հաջորդ տասնամեակին, 50 թուականներին, երբ Կ. Պոլսի մէջ կեանքը աւելի ևս կենդանանում է արևելեան

---

[1]) «Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի» 1901, Կ. Պոլիս, եր. 231։

[2]) Հ. Յ. Քոսեան—«Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» Վիեննա, 1889 Հ. Ա. եր. 177—179։

պատերազմի պատճառով, կրթական և այլ բարենպատակ ընկերութիւնների թիւը չէ պակասում, այլ աւելանում է։—Այդ ժամանակ ծնուածներից յիշատակենք «Ընթերցասիրաց», «Վերածնութեան Թանգարան», «Եղբայրսիրական», «Մեսրոպեան»։ Առաջին երկուսը գրադարանական էին, «Եղբայրսիրականը» չափահասներին ձրի դասախօսութիւններ կարդալու նպատակն ունէր, իսկ «Մեսրոպեանը» հրատարակչական էր [1])։

Մի կողմ թողնելով թէ այդ ժամանակների և թէ դրանից յետոյ թիւրքահայերի մէջ կազմուած ընկերութիւնների լիակատար ցուցակը, մենք միայն մի քանի նկատողութիւններ կանենք։

Այդ ընկերակցութիւնները փոքրիկ բաներ էին, մի սահմանափակ նպատակի նուիրուած։ Երկարատև չէին այդ մանր կազմակերպութիւնները. նրանք ծնվում էին, ապրում էին մի ժամանակ և տեղի տալիս ուրիշ այլանուն կազմակերպութիւնների։ Այդպիսի անջատ, մանր հաւաքական ուժերով, ի հարկէ, խոշոր, տեղական հանրային գործեր կատարել չէր կարելի։ Եւ մենք այդ բազմաթիւ հիմնարկութիւնները պիտի նկատենք լոկ իբրև գիտակցութեան նշան, թէ ինչ եղանակով պէտք է տանել ժողովրդի կրթական-կուլտուրական գործը։

Միայն մի անգամ թիւրքահայերը փորձ արին բարեգործական կազմակերպութեան միջոցով իրականացնելու մի խոշոր գործ։ 1860 թուականին Կ. Պոլսում կազմակերպուեց «Բարեգործական Ընկերութիւն Հայոց», որի նախաձեռնութիւնը պատկանում էր այն ժամանակուայ թիւրքահայ նշանաւոր գրական-հասարակական գործիչներին։—Ընկերութեան նպատակն էր՝ «ազգին որբ, անտէր և չքաւոր ազգայքը երկրագործութեան և արուեստից զբաղեցնելու միջոցներն ի գործ դնել»։ Կազմուեց կանոնադրութիւն,

[1]) «Ընդ. Օր.» եր 248։

A II 1913 #428

ընտրուեցին վարչական մարմիններ և ընկերութիւնը հրատարակեց մի յայտարարութիւն, որի մէջ ցոյց էր տալիս, թէ ինչ անգին նշանակութիւն ունի երկրագործութիւնը ամեն մի ազգի և մասնաւորապէս հայ ազգի համար, որ ոգէտ ու յետամնաց է, որովհետև աղքատ է [1]։—Սակայն Կ. Պոլսի հայ ինտելլիգենցիայի այդ ձեռնարկութիւնը, որ լայն կազմակերպութիւն և ընդարձակ միջոցներ էր պահանջում, զլուխ չեկաւ։

Ռուսահայերի մէջ անհամեմատ ուշ սկսուեցին ազգային—կուլտուրական հիմնարկութիւններն առ հասարակ (մամուլ, գրականութիւն, թատրոն)։ Բարենպատակ ընկերութիւնները այստեղ, ռուսահայերի մէջ, սկզբում նոյնպէս մասնաւոր նպատակներ և փոքրիկ կազմ ունէին։

Այսպէս, 1858 թուականի վերջերում Շուշի քաղաքում կազմուեց մի մասնաւոր շրջան, որ 1859-ին բաց արաւ Շուշում ընթերցարան և գրադարան։—Այդ շրջանը մի ընկերութեան բոլոր հանգամանքներն ունէր. ամեն տարի գրադարան—ընթերցարանի կառավարութեան համար յանձնաժողով էր ընտրում, անդամակցական վճարներ էր ստանում։ Նա կոչվում էր «Թանգարան Վերածնութեան», նմանուելով, անշուշտ Կ. Պոլսի նոյնանուն հիմնարկութեան [2])

1860 թուականին «Կռունկ» ամսագիրն առաջարկում էր, որ այսպիսի մի «Թանգարան Վերածնութեան» էլ Թիֆլիսում բացուի։ Հաշուել էին, որ գրադարանի համար կարելի է ձեռք բերել հայերէն բոլոր տպագրուած գրքերը 2000 ռուբլով [3])։

Դրամագլուխ՝ մի այդպիսի հիմնարկութեան համար հաշուում են 2500 ռուբլի, բաղկացած 50 բաժնից, իւրա-

---

[1]) «Կռունկ» ամսագիր 1862 եր. 607—625։

[2]) «Կռունկ» ամսագիր 1860, եր. 147—149։

[3]) «Կռունկ» ամսագիր 1860 եր. 794.

քանչիւրը 50-ական ռուբլի։ Բայց առաջարկութիւնը միայն 18 համակրող է գտնում [1]) և «Թանգարանը» մնում է ծրագիր։

Այստեղ էլ, ուրեմն, ռուսահայերի մէջ ևս, բարեգործական նոյն սիստեմը, ինչ արևմտեան հայերի մէջ—մանր, անչատ մարմիններով տեղական պէտքերին ծառայելը։— Սակայն, նոյն 1860-ական թուականների սկզբում, ռուսահայերի մէջ սկսվում է այդ հասկացողութեան յեղաշրջում։ Հասարակութեան մտքի մէջ հետզհետէ հասունանում է աւելի ընդարձակ կազմակերպութիւններով և աւելի բազմակողմանի ծրագրով գործելու գաղափարը։ Բայց այդ գաղափարը դեռ չէ մարմնանում կեանքի մէջ, այլ նախապէս արծարծվում է իբրև գրական քարոզ։

Եւ արծարծողը առաջին անգամ եղաւ մեզանում Մոսկվայի «Հիւսիսափայլը», մեր անդրանիկ առաջաւոր հրապարակախօսական օրգանը։

Այս ամսագրի խմբագիր Ստեփաննոս Նազարեանցը դեռ 1859 թուականին, խօսելով հայերի կոչման մասին, անցողաբար յիշել էր, որ հայերը իրանց կրթական-կուլտուրական գործերը պիտի առաջ տանեն կազմակերպուած ընկերութեան օգնութեամբ [2])։

1862 թուականին Նազարեանցը նորից արծարծում է այդ միտքը, և այս անգամ մի ընդարձակ և ուժեղ յօդուածի մէջ, որի վերնագիրն է «Առաջարկութիւն մի ընդհանուր Հայկական Ընկերութեան Ռուսաստանի մէջ, վասն բարեկարգելու Հայերի նիւթական և բարոյական կեանքը» [3])։

Երկարօրէն բացատրելով, որ մարդը լոկ «մի շնչաւոր աճելութիւն չէ», այլ կոչուած է ապրելու և ստեղծագործելու ընկերական կազմակերպութեամբ, Նազարեանցը քաղաքակրթութիւնը

---

[1]) «Կռունկ» 1861 եր. 80.

[2]) «Հիւսիսափայլ», 1859, № 1։

[3]) «Հիւսիսափայլ» 1862,

համարում է հէնց այդ ընկերական ջանքերի արդիւնք։ «Առհասարակ բոլոր աշխարհաշինութիւնը, բոլոր բարիքը, որ այժմ վայելում է մարդկութիւնս, թէ նիւթական և թէ իմացական, գոյացել են ընկերութեան միասին գործակցութեամբ. ոչինչ չէ արել և կարող չէր առնել մարդս միայնուխ՝ առանձնութեան մէջ»։

Բայց այս ոգին ճնշուած է Ասիայում։

«Բռնակալութիւնը երբէք սիրող չէ հպատակների միասնութեան և մօտաւորութեան միմեանց հետ. քանի որ դրա անմիասին, ջոկ-ջոկ, առանձնացած լինելն իրարից, այնքան ևս ձեռնտու է մի բռնակալ կառավարութեան, լցուցանելու իւր հաճոյքը։ Այսպէս ամէն մարդ իւր համար է, ամէն մարդ իւր գլխի հոգսում, եթէ մէնին զարկում են, միւսը փոխանակ օգնական լինելու իւր ընկերին, փախչում է. յաւելացրու մի այսպիսի կացութեան վերայ շատ անգամ ագքաստութիւն և միշտ ագիտութիւն և անկրթութիւն, որոնց մէջ Հայը երկար դարեր ապրել է, առանց կարողանալու երբ և իցէ բարձրացնել իւր գլուխը և զգալ իւր մարդկային արժանապատուութիւնը... Մեր Հայերը ասիական բռնակալութեան տակ, ինչպէս նոյն պայմանների մէջ սովոր է պատահել նոյն բանը ամենայն ազգերի, ուսել են միայն խորամանկութիւն և խարդախութիւն, իբրև միակ պաշտպանողական զէնք մի ստրուկ ազգի՝ ընդդէմ իւր տանջող և անիրաւ բռնակալի։ Ընդհանուր ժողովրդական թշուառութիւնը մի ոչքրիստոնիայ տիրապետող ազգի ձեռքում չէ յառաջացրել նոցա մէջ ոչինչ ընկերական հոգի, ոչինչ մօտաւորութիւն միմեանց. բաւական էր, կարծել են, ամենայն մարդու իւր թշուառութեան չափը, առանց բեռնաւորելու հոգսերով իւր ընկերի թշուառութեան վերայ. երբէք մտաբերել չեն նոքա թէ միասնութեամբ կարողացած կը լինէին իւրեանց հասարակաց թշուառութիւնը թեթևացնել։ Այսպէս յառաջացել է մեր Հայերի մէջ այն առանձնութեան հոգին, այն անսէր բարքը, այն կոպիտ անձնապաշտութիւնը, որ չէ թողնում Հայերի մէջ գոյանալու մի ընկերական բան, մի հասարակօգուտ ձեռնարկութիւն»։

Թէև պատմական ապականող իրողութիւնը վերացել է և հայերը արդէն Ռուսաստանի տիրապետութեան տակ են և կարողեն զարգացնել ընկերական ոգին, բայց հին ժառանգութիւնը դեռ ծանրացած է նրանց վրայ։ Եւ այդ պատճառով նրանք չեն հասկանում «թէ ոչինչ կարող չէ յառաջանալ մի ազգի մէջ, եթէ նրա անդամակիցքը ամեն

մինը կապրեն իւրեանց համար, եթէ, մի հասարակօգուտ ձեռնարկութեան ձայն լսելով, կը փախչեն և ծակամուտ կը լինին»։

Ոչ ոք չկամի առաջինը լինել մօտենալով մի առաջարկած ազգօգուտ գործի, հեռու կանգնած ամենքեան, նայում են մինը միւսի վերայ, սպասում են անմտաբար, որ գործը մի հրաշքով, առանց որոյ և իցէ օգնականութեան, ինքն ըստ ինքեան, յառաջ խաղայ, ապա թէ վերջապէս մինը, երկուքը կամ երեքը կիսասիրտ կամ անսիրտ կը մօտենան և հարց ու խնդիր կանեն։ Հայ մարդու համար իւր ամենեին նեղահայաց տեսութեան մէջ չկայ ոչինչ ընկերական, ոչինչ հասարակաց, ոչինչ ժողովրդական խընդիր, այլ բոլորը անձնական է, բոլորը ընտանեկան, բոլորը մասնաւոր. ամեն մարդ իւր գլխի ցաւը հոգայ, փող վաստակէ, իւր գլուխը, ընտանիքը պահպանելու, պրծաւ գնաց, ասում է և կրկնում է Հայը։ Այս պայմաններին միտ դնելով, չունենք տեղիք պարմանալու, որ Ռուսաստանում մինչև այսօր Հայերի մէջ չկայ ոչ մի ընկերութիւն ոչինչ խորհրդով, ոչ վաճառական, ոչ վաստակասիրական, ոչ ուսումնական, ոչ բարեգործական, այլ ամենայն ինչ առանձին, բաժան, ջոկ ջոկ, ցանուցիր, վայրի վերոյ, անկարգ և վայրենի, այնպէս որ ամենափոքր գործը, որ կարօտ է հասարակաց օգնութեան, խկոյն հանդիպում է այդտեղ ամենասառն, մեռած ու քարացած սրտերի և ջախջախվում է դոցա վերայ հաղար ու մի կսոր։

Այսքան խոր և ապդու պարզութեամբ ընորոշելով մեր իրականութիւնը, Նազարեանցն ասում էր, թէ ժամանակ է այդ «բարբարոս» դրութիւնից դուրս գալու և առաջարկում էր կազմել մի մեծ բարեգործական ընկերութիւն, որին պիտի մասնակցէ Ռուսաստանի ամբողջ հայութիւնը։

Ի՞նչը պիտի լինի այդ ընկերութեան նպատակը։— Այստեղ Նազարեանցը բաց է անում մի ընդարձակ, բազմակողմանի, իսկապէս վերանորոգչական գործունէութեան դաշտ, կեանքի գործնական պահանջներին բաւարարութիւն տալու համար։

«Եթէ կամէինք որև իցէ մարդու կամ ժողովրդի բարոյական կացութիւնը բարւոքել, ինչ պիտի առնենք նախ և յառաջ, որ

բանն է առաջին և գլխաւոր հոգալին։ Բանականութիւնը, առողջ դատողութիւնը ասում է մեզ, որ մեք պիտի սկսանենք գործը, այդ մարդու կամ ժողովրդի նիւթական կեանքը բարւոքացնելով, նրա ֆիզիքական ապրուստի պայմանքը հնարաւորելով, որովհետև նախ մարդս շնչաւոր է ապա հոգևոր, և հոգին աճել ու զօրանալ կարող չէ, եթէ նիւթական պայմանքը պակաս են։ Ուրեմն հայկական ընկերութեան առաջին պաշտօնը և հոգատարութիւնը կը լինի Հայոց ազգի չքաւոր զաւակներին Ռուսաստանի մէջ պատուաւոր հացի և ապրուստի ճանապարհ բանալ, ծանօթացնելով նրանց ձեռագործ արուեստների, երկրագործութեան, ընութեան բերքերի յառաջացութեան և դոցանից վաճառելի ապրանքի պատրաստութեան կերպի և եղանակի հետ, այլ և կրթելով Հայոց զաւակներից պօլիտեխնիկոսք, հմուտ վաճառականք, հաշուեհոների մէջ աշողակ գործակատարք և գրագրեր։ Իսկ այն չքաւոր պատանիքը, որ ցուցանում էին քանքար և ցանկութիւն վերին գիտութիւնների պարապելու և դառնալու մի ժամանակ ուսումնականք և ուսուցիչք ազգի, դոցա օգնական կը լինի Հայկական ընկերութիւնը, ապրուստ տալով և ազատելով հոգսից, որ նոքա կարողանային խաղաղ հոգով ուսանել և կրթուիլ Ռուսաստանի վերին դպրոցներում (համալսարաններում) և յետոյ պիտանի լինել իւրեանց և ժողովրդին։

«Հայկական ընկերութիւնը բաց ի հնար տալուց Հայոց չքաւոր զաւակներին կրթուելու և դաստիարակուելու թէ հացատու արուեստների և գիտութիւնների և թէ վերին ուսումնականութեան մէջ դպրոցական կարգով, ջանադիր կը լինի նոյնպէս, որքան ձեռնհաս է, յաջողութիւն տալ ամենայն հասարակօգուտ ձեռնարկութեան։ Նա պիտի հանդէս կանչէ և քաջալերէ հայկական քանքարը դէպի գործ և արդիւնաբերութիւն ազգին. նա պիտի թեր տայ Հայկական մատենագրութեանը, պահպանէ այնպիսի օրագրութիւնք, որ համաձայնէին այժմեան պիտոյքին ժողովրդի... Մի աշխատաւոր հեղինակ մեր մէջ, որ շատ տեսակ գեղեցիկ գրուածներ ունէր տալու իւր ժողովրդին, բայց նրա ձեռք ու ոտք կաշկանդած են, որովհետև չկայ մի հասարակութիւն, որ խելացի կերպով օգնէր և քաջալերէր նրան—մի աշխատաւոր հեղինակ, ասում ենք, եթէ լինէր Հայոց մէջ մի խելացի հոգաբարձու ընկերութիւն, ձեռք ու ոտք կը ստանար պիտանի լինելու իւր ժողովրդին, մինչ նա այս բոպէիս, ներկայ պայմանների մէջ մեռած է նորա համար։

«Հայկական ընկերութիւնը Ռուսաստանի մէջ կարող է և ազգատոր կերակրել և մերկեր զգեցուցանել և հիւանդներ ժողովել, բայց գոքա լինելու էին հարևանցի և երկրորդական հոգսեր։ Նորա գլխաւոր ուշադրութիւնը պիտի նուիրուի մի այլ գործի, որ է փակել ազգատութեան և մերկութեան ճանապարհը, դաստիարակելով և ուսուցանելով ժողովրդի չքաւոր զաւակները. դաստիարակութիւնը և ուսումը կը պատրաստեն մի ոսկի ապագայք. պատճառ՝ ով որ տեղեակ է մի արուեստի, հմուտ է մի գիտութեան, նա և ունի իր ծոցումը մի ոսկու և արծաթի հանք, մի արծաթագլուխ, որ միշտ կարող է կերակրել նրան»։

Հայկական այդ ընկերութիւնը Նազարեանցի ծրագրով, պիտի ունենայ չորս տեսակ անդամներ. 1) «հիմնադիր պարոններ», տարեկան 500 ռուբլի վճարով, 2) «օրինաւոր անդամակիցք», տարեկան 250 ռ., 3) «պատուաւոր անդամակիցք» տարեկան 125 ռ., 4) «լոկ մասնակիցք» տարեկան 5 ռ. վճարով. Ընկերութեան կենտրոնը պիտի լինէր Մոսկվայում, իսկ Ռուսաստանի և Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերում պիտի գործէին տեղական գործակալները։

Այսպիսով Նազարեանցը կարծում էր թէ առաջին իսկ տարուց կարող է կազմուել 100 հազար ռուբլու մի դրամագլուխ, որ խելացի շահեցողութեամբ կը բերէր ընկերութեան տարեկան 8—10 հազար ռուբլի եկամուտ։

Ահա ինչ տեսակ պահանջներ էին ներկայացնում ժամանակը և իրական կեանքի լաւ հասկացուած շահերը.— Թէ որքան Նազարեանցը գործնական էր իր առաջարկութեան մէջ, ցոյց է տալիս ջերմ համակրանքով համակուած այն յօդուածը, որ տպուեց այդ առիթով «Կռունկի» մէջ [1]։ Յօդուածագիրը վկայում էր, որ այն բոլոր պահանջները ժամանակակից են, առաջնակարգ, հայերի գոյութեան լինել—չը լինելու հարցեր։—Եւ ցոյց էր տալիս, թէ որքան ողորմելի պայմանների մէջ են գտնվում լուսաւորութեան

[1]) «Կռունկ», 1862, եր. 841—863.

և կուլտուրական զարգացման գործոնները հայերի մէջ։ Դառնապէս զանգատվում էր յօդուածագիր Գ. Տ. Ա. մասնաւանդ հայոց գրականութեան դրութեան վրայ։

Նազարեանցի առաջարկութեան մէջ «Կոնկի» յօդուածագիրը գտնում էր մի քանի գործնական պակասութիւններ։—Ամենից առաջ այն՝ որ անդամակցական վճարները շատ թանգ են—500, 250, 125 բուբլի։—Հեղինակը կարծում էր, որ հարկաւոր 100 հազար դրամագլուխը աւելի հեշտութեամբ կը կազմուի, երբ անդամավճարները քիչ լինեն և աւելի մեծ քանակութեամբ մարդիկ մասնակցեն ընկերութեան։ Կենտրոնը այդպիսի մի մեծ կազմակերպութեան պիտի լինի Թիֆլիսում։ Փոխանակ որ ընկերութիւնը իր խնամած աշակերտներին Ռուսաստանի գպրոցներում դասաւորակէր, աւելի լաւ կը լինէր, եթէ նա բաց անէր մասնագիտական գպրոցներ հայաշատ կենտրոններում։

Գաղափարը հասունացած է։ Բայց նրան կեանքի մէջ մտցնելու նախաձեռնութիւն է հարկաւոր։ Եւ ահա գըտնվում է մէկը, որ մի խոշոր ընկերութիւն կազմելու առաջին փորձն է անում ամենայն աջողութեամբ։

Դա «Հիւսիսափայլի» աշխատակիցներից մէկն էր, բժիշկ Դաւիթ Ռոստոմեանը, որի ջանքերով Բագու քաղաքում հաստատուեց «Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը» 1864-ին։—Նազարեանցի առաջարկութիւնը շատ շուտ է իրականանում, բայց ոչ իր ամբողջ ծաւալով։ Ընդհանուր բարեգործական մի միութիւն Ռուսաստանի ամբողջ հայութեան մէջ ստեղծելու ջանքեր չէ անում բժիշկ Ռոստոմեանը, և գուցէ դրանք ապարդիւն էլ անցնէին։ Նրա հիմնած Ընկերութիւնը տեղական նշանակութիւն ունէր, բայց ծրագրի բազմակողմանիութեամբ աչքի ընկնող։—Դպրոցներ, ուսանողներ, աղքատախնամութիւն, ապա և գրադարան—ընթերցարան, ահա այդ ընկերութեան գործունէութիւնը, որով նա պատուաւոր անուն է հանում։

Դա առաջին հայ ընկերութիւնն էր, որ խոշոր գումարներ ունէր իր տրամադրութեան տակ։

Նազարեանցի առաջարկութեան գլխաւոր կէտերից մէկը, հայոց գրականութիւնը, մոռացութեան տրուեց։ Բայց դա ազդակող պահանջ էր, որ նկատի առնուեց 15—16 տարիներից յետոյ, երբ ընկերութիւններ սկսեցին հիմնուել Կովկասի գլխաւոր կենտրոնում՝ Թիֆլիսում։

Ի Տէր հանգուցեալ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.

Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հոխանաւորոյ Խնամակալ Կ. Հ. Բ. Ընկերութեան:

ՀԱՅՈՑ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԾՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Կանոնագրութիւն 1881 թուականի.

I

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Հայ ազգի պատմական ճակատագրի վրայ խոր ազդեցութիւն են գործել այն պատերազմները, որոնք դարերի սկզբից մղվում էին նրա հայրենիքում։

Տասներեքերորդ դարում այդպիսի խոր, յեղաշրջող ազդեցութիւն արել են երկու պատերազմներ, երկուսն էլ սկսուած ռուսների կողմից Պարսկաստանի և Թիւրքիայի դէմ։ Այդ պատերազմները երկու դարաշրջիններ են մեր ժամանակակից պատմութեան մէջ, դարաշրջիններ, որոնք իրարից բաժանուած են ուղիղ յիսուն տարուայ ժամանակամիջոցով։ Առաջին պատերազմը, որ տեղի ունէր Արարատեան երկրում, 1827 թուին էր։ Երկրորդը, որի թատերաբեմն էր Թիւրքայ Հայաստանը, տեղի ունեցաւ 1877 թուականին։

Այս վերջին պատերազմը առաջինից աւելի նշանաւոր էր իր հետևանքով։ Առաջին պատերազմով Անդրկովկասի հայութեան խոշորագոյն մասը ազատվում էր մահմեդական լուծից։ Իսկ երբ եկաւ երկրորդ պատերազմը, մեր կեանքը իր յիսնամեայ բնական զարգացման ընթացքով առաջացրեց արդէն շատ խոշոր ազգային հարց, որ ոչ միայն քաղաքական մեծ նշանակութիւն ստացաւ, այլ և ուժեղ կուլտուրական շարժումների դրդապատճառ հանդիսացաւ։

Այդ հարցը Թիւրքահայերի դրութիւնն էր։ Նա դարձաւ պատերազմող կողմերի հաշտութեան պայմաններից մէկի առարկան։ Նա չէր լուծվում, այլ նոր միայն հարց է դառնում միջազգային դիւանագիտութեան մէջ։ Այդ հարցը իր սկզբնաւորութեան առաջին իսկ մոմենտից, պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ, լարում է հայ

ժողովրդի բոլոր այժերը և քաղաքական նպաստաւոր պայմանների հովանու տակ առաջացնում է եռանդուն գործունէութիւն թէ մեզանում և թէ արևմտեան հայութեան մէջ։

Եւ այդ նպաստաւոր ժամանակը, 1877—1883, մի շարք նշանաւոր հասարակական երևոյթներ ստեղծեց մեզանում։ Այդ անմոռանալի տարիներում հայ հասարակութեան ինքնագործունէութիւնը բեղմնաւոր է, մեր ազգային —կուլտուրական բոլոր գործոնները առաջադիմական մեծ մղումներ են ստանում։ Մենք չունէինք ամենօրեայ մամուլ և ունեցանք այդ տարիներում։ Մեր գրականութիւնը յանկարծ ծաղկեց, փարթամացաւ և անգին ժողովրդականութիւն ստացաւ։ Մեր թատրոնը մինչև այդ չը տեսնուած մի շքեղ շրջանի մէջ մտաւ։ Դպրոցական գործը զարգացաւ, գրաւեց ինտելլիգենցիայի և հասարակութեան ուշադրութիւնը։ Ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը գործող երիտասարդութեան իդէալը դարձաւ։ Հայ հասարակութիւնը հասկացել էր, որ ինքնագործունէութեան բեղմնաւորութիւնը կախուած է նրա հայթայթած նիւթական միջոցներից։ Եւ նուիրաբերութիւնները առատ թափվում էին այդ տարիները, մանաւանդ թիւրքահայերի օգտին։

Վերջապէս, նոյն այդ նշանաւոր ժամանակամիջոցում էր, որ Թիֆլիսում կազմակերպուեցին մի քանի բարեգործական ընկերութիւններ. 1880-ին «Հրատարակչական Ընկերութիւնը», 1881-ին «Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում» և 1882-ին՝ «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը»։

Ժամանակը ինքն էր ծնել անհրաժեշտութիւնը, ժամանակն էլ ցոյց էր տալիս նրան բաւարարութիւն տարու միջոցները։

Ասացինք որ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը վերջնականապէս ձևակերպուեց, մարմին ստացաւ 1881-ին։ Բայց նա յանկարծակի չը ծնուեց, նախքն-

թաց տարիներում նա ապրել և զարգացել էր իբրև գաղափար։ Եթէ ուզում ենք այդ գաղափարի ծնունդը տեսնել, այն ժամանակ պիտի փոխադրուենք 1877-ի ամառը, երբ ռուսաց և թիւրքաց թնդանօթները որոտում էին պատերազմի դաշտում։

Յայտնի է, որ ամառը ռուսական զէնքը անաջողութիւնների հանդիպեց և Ասիական Թիւրքիայում. ռուս զօրաբաժինները այստեղ էլ ստիպուած եղան նահանջել դէպի իրանց սահմանները։ Այդ զօրաբաժիններից մէկը, որ գործում էր Ալաշկերտի հովտում գէնէրալ Տէր-Ղուկասովի հրամանատարութեամբ, մի հերոսական նահանջ սկսեց, բերելով իր հետ դէպի ռուսական հողը և 3000 տուն հայեր, որոնք փախչում էին Ալաշկերտի հովտից։

Այդ ահագին գաղթականութիւնը ցրուեց Արարատեան դաշտում, ամառուայ խեղդող, նորեկների համար անսովոր տօթերին, վատառողջ կլիմայի մէջ։ Նա կարօտ էր անմիջական օգնութեան, նա կոտորվում էր քաղցից ու հիւանդութիւններից։ Հազարաւոր մարդկանց անելանելի դրութիւնը ցնցեց ամենից առաջ, ի հարկէ, հայ ազգաբնակութիւնը։ Թիֆլիսում կազմուեց մի յատուկ մասնաժողով, որ կարճ միջոցում խոշոր գումարներ հաւաքեց՝ դժբախտ Ալաշկերտցիներին օգնելու համար։

Սուր, աղաղակող կարիքը յանկարծակի էր բերել ռուսահայերին։ Եւ ինքն ըստ ինքեան հարց էր ծագում՝ ի՞նչ պէտք է անել այդպիսի դէպքերի համար։

Օրուայ այդ հրատապ հարցերին պատասխանում էր տաղանդաւոր հրապարակախօս Գրիգոր Արծրունին իր «Մշակ» լրագրի մէջ։ «Ուշ ենք հասկացել» վերնագրով առաջնորդողի մէջ նա գրում էր.

«Չէ կարելի չափսոսալ որ, մեզ հայերիս առհասարակ յատուկ է միայն այն ժամանակ ձեռք տալ այդ՝ տեսակ բարի գործերին (թշուառներին օգնելու համար փող հաւաքելուն), երբ, ինչպէս ասում են՝ դանակը ոսկորին է հասնում...

...«Մտածեցէք ընթերցող, ինչպէս լաւ կը լինէր, եթէ մենք փոքր առ փոքր, տարիներով հաւաքելով գումարները թէ նուիրատուութեան միջոցով, թէ անդամակցական վճարքի ձևով, վաղուց արդէն կազմած ունենայինք մի կենտրոնական ընկերութիւն (օրինակ Թիֆլիսում), Մարդասիրական Ընկերութեան պէս, միայն աւելի լայն, աւելի ընդարձակ պրոգրամայով, որ նշանաւոր գումարներ իր ձեռքումն ունենալով, կարող էր հարկաւոր ժամանակ օգնութիւն հասցնել հայոց հասարակութեան այս կամ այն տառապեալ մասին, նուիրել իր մայր գումարի տոկոսներից այս կամ այն տեղի հայ սովատանջներին կամ հրդեհից վնասուածներին, օժանդակել այս կամ այն օգտաւէտ ձեռնարկութեանը, պահպանել կատարեալ անկումից այս կամ այն ինչ ուսումնարանը...

«Վաղուց հարկաւոր էր մտածել այդ տեսակ մի ընկերութիւն կամ մանաժողով ունենալ, բայց եթէ մինչև այժմ ոչ ոք այս բանի վրա չը մտածեց,—այդ չէ նշանակում, որ այսուհետև էլ չը պէտք է մտածենք այդ տեսակ ձեռնարկութիւնը իրագործելու»[1]։

Ժողովրդական աղէտը, յանձին Ալաշկերտի գաղթականութեան, վերանորոգում էր մեր մամուլի մէջ մի ընդհանուր և ընդարձակ բարեգործական կազմակերպութեան գաղափարը, որ իր հիմնական տրամադրութիւններով Ստեփաննոս Նազարեանցի ծրագրի ոգին էր կրկնում։

Ալաշկերտցի գաղթականների մեծամասնութիւնը հաւաքուած էր Էջմիածնում։ Այդտեղ վանքի բժշկի ժամանակաւոր պաշտօն էր վարում երիտասարդ Բազրատ Նաւասարդեանը, վաղարշապատցի, որ Պետերբուրգի զինուորական - բժշկական ակադեմիայի հինգերրորդ կուրսի ուսանող էր, նա էր բժշկական օգնութիւն հասցնում գաղթականներին[2]։ Եւ թշուառութեան ծովի մէջ նա զգաց թէ որքան անհրաժեշտ է կազմակերպուած օգնութիւնը այսպիսի դէպքերում։ Նրան էլ վերապահուած էր

---

[1]) Տես Իմ «Գրիգոր Արծրունի» Հատ. Բ. Թիֆլիս 1903, եր. 532.

[2]) Հանգուցեալ Բաֆֆին բժշկի կատարած դերը նկարագրել է իր նշանաւոր «Խենթը» վէպի մէջ Տ. Գ. Լէ.

ընդհանուր հայկական բարեգործական ընկերութեան միտքը իրագործելու պատիւը։

Պատերազմից անմիջապէս յետոյ, ռուսահայ մամուլի և հասարակութեան ուշադրութիւնը գրաւեցին Թիւրքահայ բարեգործական ընկերութիւնները։ Դրանցից մէկը, որ հիմնուած էր 1876-ին և կոչվում էր «Արարատեան Ընկերութիւն» Թիւրքաց Հայաստանում դպրոցներ պահելու նպատակն ունէր։ Հէնց այն հանգամանքը, որ հիմնարկութիւնը պիտի ծառայէր ազէտ ու հարստահարուող գաւառական հայութեան, բաւական էր, որ այդպիսի մի ժամանակ, երբ նոյն հայութեան վրկութեան հարցն էր դարձել ընդհանուր ոգևորութեան առարկայ, մեծ համակրանք ստեղծուի ռուսահայերի մէջ դէպի «Արարատեանը»։ Թիֆլիսի լրագիրները սկսեցին նուէրներ հաւաքել յօգուտ այդ ընկերութեան և միայն «Մշակ» լրագիրը երկու տարուայ ընթացքում հաւաքեց մօտ 13 հազար ռուբլի [1])։

Բացի այդ ընկերութիւնից, Կ. Պոլսում գործում էին և «Կիլիկեան» ու «Դպրոցասիրեաց Արևելեան» ընկերութիւնները, որոնք նոյն կրթական նպատակն ունէին գաւառներում։ Կազմվում էին և զանազան նոր ընկերութիւններ։ Գոյութիւն ստացաւ նոյն իսկ երեխաների ընկերութիւն—«Միութիւն Մանկանց»։ Այդ ընկերութիւնները յոյս էին դրել և ռուսահայերի աջակցութեան վրայ։ Եւ իրաւ, տրամադրութիւնը մեր կողմերում այնքան նպաստաւոր էր, որ մի վարդապետ, Ամբրոսիոս անունով, կարողացաւ մի շատ խոշոր գումար հանգանակել ռուսահայերի մէջ յանուն մի ինչ-որ երազական, երբէք գոյութիւն չը ստացած դպրոցի։

Ռուսահայ մամուլն աջակցում էր այդ բարենպատակ ընկերութիւններին, բայց միևնոյն ժամանակ պահանջում էր, որ նրանք ցրուած ոյժերով չաշխատեն, այլ միանան,

---

[1]) «Մշակ» 1880, № 17.

որպէսզի կարողանան աչքի ընկնող գործունէութիւն ցոյց տալ։ Այդ պահանջներն այնքան ստիպողական էին, որ «Արարատեան», «Կիլիկեան» և «Դպրոցասիրաց» ընկերութիւնները միացան 1880-ին և կոչուեցին «Միացեալք Ընկերութիւնք Հայոց»։

Եւ այսպէս, հասարակաց միաքը շարունակ զբաղուած էր բարեգործական ընկերութիւնների կազմակերպութեան, նրանց նիւթապէս օժանդակելու հարցերով։

Այդ տրամադրութեան վրայ աւելացան և բնական ազէնները. —Անդրկովկասում 1879—1880 թուականներին հացի սաստիկ թանգութիւն էր և տարածուել էին տարափոխիկ հիւանդութիւններ։ Բայց տեղական այդ պատահարները այնքան չէին զբաղեցնում Ռուսաստանի հայութեանը, որովհետև դարձեալ Թիւրքաց Հայաստանն էր, որ կլանեց ընդհանուր ուշադրութիւն։

Ասիական Թիւրքիայում տարածուեց սաստիկ սով, Կ. Պոլսում, Ներսէս պատրիարքի նախագահութեամբ, կազմուեց յատուկ «Սովելոց Յանձնաժողով»։ Աշխարհի բոլոր կողմերից, նոյն իսկ օտար վեհապետներից, նուիրատուութիւններ եկան յօգուտ սովատանջ Թիւրքահայերի։ Ռուսահայերի մէջ նորից հանգանակութիւն սկսուեց Թիւրքահայերի համար։ Թէ ինչպէս էին վերաբերվում ռուսահայերը այդ մեծ ազէտին, ցոյց է տալիս այն, որ միայն «Մշակ» լրագիրը հաւաքեց 30 հազար բուբլուց աւել։ Սովատանջ հայերը արդէն սկսել էին գաղթել, և Թիֆլիսի փողոցներում շատ գաղթականներ մուրացկանութիւն էին անում։

Ահա այսպիսի մի ժամանակ, այսքան հանգամանքների ազդեցութեան տակ, պիտի նորից և նորից զգայուէր ընդհանուր մի հայկական բարեգործական ընկերութիւն հիմելու անհրաժեշտութիւնը։ Մնում էր, որ նախաձեռնողներ, գործ սկսողներ դուրս գան։

Հրապարակում երևաց բժիշկ Բ. Նաւասարդեանը։ 1879 թուականին նա ուղարկուած էր Անդրկովկասի արև-

ելեան կողմերը, ուր երևացել էր մի տարափոխիկ հիւանդութիւն։ Գիւղացի անօգնական ազգաբնակութիւնը, նրա անսահման տգիտութիւնը, խեղճութիւնը այնքան ազդել էին բժիշկ Նաւասարդեանի վրայ, որ Թիֆլիս վերադառնալուն պէս նա հաղորդեց իւր տեսածները մի քանի անձանց, աւելացնելով, որ լրագրներում նկարագրածները իւր տեսածների $^1/_4$ էլ չէր կազմում և այդ պատճառով նա ցանկութիւն յայտնեց հաստատ հիմանց վրայ կազմել մի «Հայկական» մշտական ընկերութիւն ազգի ցաւերին դարման տանելու համար [1]։

Իր այս միտքը նա նախ և առաջ մամուլի էջերում է երևան հանում և «Մշակի» մէջ զետեղում է երեք յօդուած, որոնք տպվում են իբրև առաջնորդող յօդուածներ՝ «Օրվայ կենսական հարց» ընդհանուր վերնագրի տակ [2]։

«Հայոց ազգային պատմութիւնը այսօր ներկայացնում է մի ճգնաժամ,—գրում էր բժ. Նաւասարդեանը իր առաջին յօդուածում.—Հիւանդ մարդի ճգնաժամի նման դա կարող է կամ մահացնել կամ կենդանացնել։

«Այսօր պէտք է մի մեծ խորհուրդ կազմել։ Մեր հիւանդին օգնութիւն հասաւ մեծափառ Կայսրը, Անգլիայի ուղեցոյցը, Գաղղիայի հանրակալը, իսկ մենք, իսկ մենք...

«Մենք ննջենք։ Եթէ ոչ յանուն ազգութեան, կամենաք յանուն մարդկութեան, յանուն մարդասիրութեան։ Հայոց պատմութիւնը կարդալուց մարդ ամենից շատ վշտանում է նրա վրայ, որ իրանք հայերը գործը իր ժամանակին չեն կատարել։ «Ա՜խ, ասումես, թէ ես ապրէի այս ինչ դրպէին, տես թէ ես ինչ կանէի»։ Ի՞նչ էք կարծում պարոններ, այս օրուայ օրը, հէնց «տես թէ ես ինչ կանէի» անելու ժամանակն է։

Հայոց վշտերը իրանց զենիթին են հասել։ Ձեր ձեռքերը բաց են, ազատ են գործելու, ձեր՝ դարերով խեղդուած զգացմունքը այսօր կարող են ելք գտնել։ Պատմութիւնը ինքն է ձեր ձեռքը զէնք տալիս, այդ զէնքը ձեր ազգի թշուառութիւններն են։ Գի-

---

[1]) «Մեղու Հայաստանի» 1881 թ., № 4.

[2]) «Մշակ», 1880, №№ 87, 88, 124.

տայէք օգուտ քաղել հայ ազգի մանկտեաց սառը դիակներից։ Բաւական են զոհեր, բաւական է արիւնը։ Ձեր ցանկութեանցը նպատակ դրեցէք և սահման, ձեր գործոցը մի ընդհանուր թել, ձեր ուժերին խելացի գործադրութիւն։

«Երկար խօսելը մեզ շատ հեռու կը տանի, ես կառաջարկեմ միայն այն, որ ամենաանհրաժեշտն է, որը առաջանում է Հայաստանի հայերի ներկայ թշուառ դրութիւնից։

«Ժողովուեն բանիմաց անձինք, կազմեն մի մեծ ընկերութիւն, ողորմած Կայսեր հովանաւորութեան ներքոյ, օգնելու թշուառ հայերին, ուր եւ լինէին նոքա։

«Այդ ընկերութիւնը լինի սիրտ, որից բղխելով կենսաբեր երակները, կը թափանցեն ամենուրեք, ուր կայ հայի «Ա՛խ»։ Այդ ընկերութիւնը լինի հեղինակ և պատկառելի լինի ամեն հայի համար։

«Այդ ընկերութեան այսօրուայ գործն է ուղարկել անձինք տեղեկանալու Վանայ և շրջակայից ներկայ դրութեան և այն միջոցների մասին, որոնք յարմարաւոր գտնուին անմիջապէս առաջարկելու։

...«Շտապենք. դանդաղ գործելը եթէ ներելի է, միայն այն ժամանակ, երբ պատմութիւնը իր բնական դանդաղ քայլերովն է ընթանում, բայց այսօր ճգնաժամն է, ամեն մի բոպէն, ամեն մի վայրկեանը անդառնալի կորուստ պէտք բերի ազգին. խեղճ Ն. հայոց ազգը, ձեռքից գնում է, ժամ է օգնելու։ Շտապենք, շտապենք»։

Ինչպէս տեսնում էք, ստիպողը, մտրակողը, միշտ օրուայ տագնապն էր, Թիւրքաց Հայաստանի աղէտը։

Բժ. Նաւասարդեանը քարոզից անցնում է գործի։ Նա կազմում է ընկերութեան ծրագիրը շատ ընդարձակ չափերով, գրում է կանոնադրութիւնը և տալիս է երդուեալ հաւատարմատար Սենեքերիմ Արծրունուն, որ նա իրը իրաւաբան, խմբագրէ իրաւաբանական յատուկ լեզուով։ Ապա այդ խմբագրուած կանոնադրութիւնը նա ենթարկում է մի խումբ անձանց քննութեան, որոնք յատկապէս հրաւիրուած էին այդ նպատակով Խաչատուր Խաչատրեանի (այժմ „Тифлисскій Листокъ“ լրագրի խմբագիր) բնակարանը։

Այստեղ, այս առաջին մասնաւոր ժողովում, ծագում են տարաձայնութիւններ, հակաճառութիւններ, ոչինչ գրական աշխատանք չի կատարվում։

Բայց սա անյաջողութիւն չէր, որովհետև այս նոյն ժողովին մասնակցում էր մեր տաղանդաւոր թատերագրող Գաբրիել Սունդուկեանը, որ մեծ համակրութեամբ, ջերմապէս փարեց ընկերութեան գաղափարին։

Այդ օրից Սունդուկեանը դառնում է բարեգործական ընկերութեան ամենաեռանդուն գործիչներից մէկը։ Բժ. Նաւասարդեանը և նա սկսում են նորից մշակել կանոնադրութիւնը ամառուայ տօթերին։—Գ. Սունդուկեանը առատ նիւթեր հաւաքեց մի լաւ կանոնադրութիւն կազմելու համար. Ռուսաստանի բոլոր յայտնի ընկերութիւնների կանոնադրութիւնները, պատշաճաւոր օրէնսդրութիւնները հաւաքուած ու դասաւորած էին Սունդուկեանի սեղանի վրայ, սենեակի անկիւններում [1])։

Նորից սկսուեց աշխատանքը։ Երկուսով խմբագրուեց կանոնադրութիւնը, որի համար օրինակ վերցուեց գլխաւորապէս Կարմիր Խաչի ընկերութեան կանոնադրութիւնը։ Նոյն 1880-ի վերջերում Թիֆլիսի հայոց առաջնորդարանում կայացաւ մի ժողով, ուր կային 40 հոգի Թիֆլիսեցիներ, գլխաւորապէս ինտելիգենտ և վաճառական դասակարգից։

Այդ ժողովում Գրիգոր եպիսկոպոս Աղափերեանը կարդաց Ներսէս պատրիարքի մի նամակը, որի մէջ Թիւրքիայի հայոց այդ հռչակաւոր ներկայացուցիչը յայտնում էր, թէ սովը Հայաստանում չէ վերջացել ու դարձեալ օգնութեան կարիք է զգացվում։ Ժողովականները ստորագրեցին 9 հազար ռուբլի։

Օգտուելով յարմար առիթից, բժ. Նաւասարդեանը

---

[1]) Տես իմ «Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան տասնամեակը» «Տարազ» 1891, № 48.

ներկայացրեց Աղափերեան եպիսկոպոսին Բարեգործական Ընկերութեան կանոնադրութիւնը ու խնդրեց ենթարկել այն ժողովի քննութեան։

Ժողովը, համակրութեամբ վերաբերուելով գաղափարին, ընտրեց իր միջից 13 հոգուց բաղկացած մի խումբ. բժ. Բ. Նաւասարդեան, Ս. Արծրունի, Գ. Սունդուկեան, Յ. Զիթախեան. Ա. Մանթաշեան, Վ. Մութաֆեան, Ս. Մելիք Մեհրաբեան, բժ. Ա. Բաբայեան, Գ. Եւանդուլեան, Ա. Յովհաննիսեան, Ա. Եղեկեան, Ա. Նահապետեան և Զ. Գրիգորեան։ Սրանցից առաջին երեքը կանոնադրութիւն մշակողներն էին, իսկ մնացած 10-ը պիտի քննէին կանոնադրութիւնը [1])։

Քննութիւնը լաւ համարուեց կատարել աւելի բազմամարդ ժողովի ձեռքով։ Ուստի, թէ առանձին տպուած թերթիկներով և թէ լրագրութեան միջոցով տարածուեց հետևեալ «ծանուցումը»։

«Այն անձինք, որոնք ցանկանում են մասնակցել Հայ–բարեգործական ընկերութեան կազմուելուն, հրաւիրվում են շնորհ բերել այս մասին արդէն գրած կանոնադրութեան նախագիծը քննելու համար պ. Արծրունու թատրոնը, ներկայ յունուար ամսոյս (1881) 4-ն, կիւրակի, 11 ժամին...»

Նշանակուած օրը հաւաքուել էին քիչ մարդիկ, ընդամենը 50—60 հոգի. կանոնադրութեան մշակող երեք անձանց կողմից Ս. Արծրունին զեկուցեց ժողովին գործի էութիւնը։ Ժողովը նախագահ ընտրեց բժ. Նաւասարդեանին և սկսեց կանոնադրութեան քննութիւնը։ Երկրորդ նիստը կայացաւ յունվարի 25-ին, արդէն 90 հոգու մասնակցութեամբ։ Այնուհետև կայացան դարձեալ երեք նիստեր, նախագահողը միշտ բժ. Նաւասարդեանն էր [2])։ Վերջին

[1]) «Մեղու հայաստանի», 1881 №№ 4, 7.

[2]) Մանրամասնութիւնները տես «Մեղու Հայաստանի» 1881, № № 4, 7, 19, և 34.

ժողովում, մարտի մէկին, ընտրուեցին 5 հոգի՝ բժ. Նաւասարդեան, բժ. Մ. Շահ-Պարոնեան, իշ. Ն. Ամատունի, Գ. Սունդուկեան և Ս. Մելիք Մեհրաբեան ընդունուած կանոնադրութիւնը կառավարութեան ներկայացնելու և նրա հաստատումը խնդրելու համար։

Ի՞նչ տեսակ կանոնադրութիւն էր դուրս եկել ժողովների քննութեան բովից։—Նպատակը չափազանց ընդարձակ էր։ Այն է՝ «նպաստել լուսաւորութիւն տարածելուն հայոց մէջ՝ Ռուսաց պետութեան սահմաններում և նիւթապէս օգնել նրանց և Ռուսաց պետութեան սահմաններից դուրս գտնուող հայերին բացի նիւթապէս օժանդակութիւն անելուց՝ լուսաւորութիւն ևս տարածել նոցա մէջ»։ Ընկերութիւնը ունենում է ճիւղեր գտնազան տեղերում։

Մի ծրագիր, որ գերազանցում էր Ստեփաննոս Նազարեանցի առաջարկութեանն անգամ։

II.

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԵՒ ԲԱՑՈՒՄ

Ընկերութեան գաղափարը և նպատակը մեծ համակրանք գտաւ թ'է հասարակութեան և թէ տեղական հայ ու օտար մամուլի մէջ։

Ահա ինչ էր գրում պաշտօնական „Кавказъ" լրագիրը առաջին ժողովի առիթով։

«Ցանկանալով կատարեալ աջողութիւն այդ գեղեցիկ գործին, որ սկսել են մեր ինտելլիգենտ հայերը, մենք չենք կարող չ'յայտնել մեր համակրանքը առաջին ընդհանուր ժողովին այն պատճառով, որ նա ընդունեց մի այնպիսի մարդասիրական գաղափար, որ արտայայտուած էր առաջարկած ծրագրի առաջին յօդուածի ձանօթութեան մէջ։ Եւ իսկապէս, ժողովրդական թշուառութիւնների, այն է՝ սովի, համաճարակ հիւանդութիւնների ժամանակ

բաժանած նիւթական օգնութիւնը ինչ մի ապահովութիւն կարող է լինել, թէ այդ չարիքներից մէկն ու մէկը աւելի զօրեղ կերպով չի նորոգուի, եթէ ժողովուրդը, ազգութեան մէջ կոշտանալով, զբաղուած չը մնայ իր տնտեսական դրութիւնը բարւոքելու միջոցներից։ Մենակ նիւթական օգնութիւնը, որ տրվում է առանց բարձրացնելու ազգարնակութեան մտաւոր և բարոյական մակերևոյթը, ինչպէս նկատել էին մասնաժողովի մի քանի անդամները, կարող է հետևանք բերել ծուլութիւնը, անտարբերութիւնը, մուրացկանութիւնը, մի խօսքով բարքերի կազմալուծումը» [1]։

Իսկ „Кавказскій Курьеръ“ լրագիր գրում էր։

«Վերջին երկու երեք տարիները բաւական նշանաւոր ժամանակամիջոց էին կազմում հայերի ազգային շարժման վերաբերութեամբ։ Այդ շարժման գլխաւոր երևոյթներից մէկը պէտք է համարել Հայոց Բարեգործական Ընկերութիւնները։

Հայոց Բարեգործական Ընկերութեան պրոգրամը պարունակում է ամեն տեսակ հոգսեր հայերի կրթական և բարոյական առաջադիմութեան համար։ Այդ ընկերութեան հիմնուելը համակրութեամբ ընդունուեցաւ բոլոր լուսաւորուած հայերի կողմից և այդ համակրութիւնը նշանաւոր գրաւական կարող է լինել նոր ընկերութեան գործունէութեան համար [2]։

Նոյնպիսի համակրութեան արժանացաւ ընկերութիւնը և Կովկասի կառավարութեան բարձր շրջաններում։ Փոխարքայ մեծ իշխ. Միխայիլը հաճութիւն տուեց, որ հաստատուի կանոնագրութիւնը այն պայմանով, ի հարկէ, եթէ նա կըվերաբերուի փոխարքայութեան սահմաններում գտնուող երկիրներին։ Հակառակ դէպքում, այսինքն եթէ ընկերութեան ծրագիրը պահպանուի անփոփոխ, պէտք է, խնդրել բարձրագոյն թոյլտուութիւն։ Այս պատճառով, որոշուեց ընկերութեան գործունէութիւնը ամփոփել միայն Կովկասի սահմաններում։

Եւ ընկերութեան անունն էլ փոխուեց այսպէս «Հայոց Բարեգործական Ընկերութիւն Կովկասում»։

1881 թուականի յուլիսի 6-ին փոխարքայ մեծ իշխա-

---

[1]) „Кавказъ“ 1881 № 4.

[2]) «Մշակ» 1881 № 26.

նի բացակայութեան պատճառով, նրա պաշտօնակատարը, գեներալ-ադիւտանտ իշխան Մելիքովը հաստատեց ընկերութեան կանոնադրութիւնը, որ և հրատարակուեց „Кавказъ“ լրագրի պաշտօնական բաժնում, Հոկտեմբերի 16-ին [1]։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը Հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթականապէս։

§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը, ըստ իւր այժերի զարգացման՝

ա) պահպանում է արդէն գոյութիւն ունեցող Հայոց ուսումնարանները և նիւթականապէս նպաստում է նորերը հիմնելուն.

բ) օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը.

գ) օգնում է ուսանողներին իւրեանց ուսման ասպարիզի մէջ.

դ) լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և գրադարան—ընթերցարաններ.

զ) հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ ախտ, հրդեհ և այլն։ Այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր, կամ ուղարկում է իւր կողմից հաւատարմատարներ.

---

[1]) „Кавказъ“ *1881*, № 227.

ը) իրաւունք ունի կարևոր դէպքերում նպաստել և այլ աղ-
գուստ ընկերութիւնների։

Ծանօթութիւն։ Վերոյիշեալ այն կէտերի վերաբերմամբ, որոնց մասին օրէնքով պահանջվում է կանխապէս ունենալ պատշաճաւոր իշխանութեան թոյլտվութիւնը, Ընկերութիւնը սկսում է իրագործել իւր ձեռնարկութիւնները այդ թոյլտվութիւնն ստանալուց յետոյ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 3. Ընկերութեան միջոցները կազմում են՝

ա) անդամների տարեկան վճարները.

բ) միանուագ նուէրներ դրամով, իրեղէններով և ամենատեսակ ստացուածքով.

գ) գումարներ, որոնք գոյանում են հրապարակական դասախօսութիւններից, երաժշտական հանդէսներից, թատրօնական ներկայացումներից և այլն, ըստ օրէնքի այլ ընկերութեանց, նոյնպէս և գրքերի, պարբերական հրատարակութիւնների և առհասարակ ամենատեսակ ստացուածքների վաճառումից, Ընկերութեան որոշման համաձայն։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 4. Ընկերութիւնը իւր գործունէութիւնը ընդլայնելու համար վայելում է ամեն կառավարչական հաստատութիւնների և անձանց օրինաւոր աջակցութիւնը։

§ 5. Ընկերութիւնը կարող է ունենալ հանգանակութեան տուփեր եկեղեցիների մէջ Հայոց հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ։

§ 6. Ընկերութիւնն ունի առանձին կնիք և դրոշմ այս վերնագրով՝ «ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

§ 7. Ընկերութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն այս կանոնադրութիւնը պատշաճաւոր իշխանութեան թոյլտվութեամբ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

§ 8. Ընկերութիւնը կազմում են՝

ա) պատուաւոր,

բ) մշտական և

գ) գործադիր անդամները։

Այս կոչումները կրում են երկու սեռի անձինք։ Անդամների թիւը սահմանափակած չէ։

§ 9. Պատուաւոր անդամներ կարող են ընտրուիլ Ընկերութեանը առանձին ծառայութիւններ ցոյց տուող անձինք։ Այդ ընտրութիւնը կատարում է Ընկերութեան ընդհանուր ժողովը, խորհրդի առաջարկութեամբ։

§ 10. Մշտական անդամներ համարվում են Ընկերութեանը միանուագ ոչ պակաս քան երեք հարիւր բուբլի նուիրող անձինք։

§ 11. Գործադիր անդամի կոչումն կրում են տարեկան հինգ բուբլի վճարողները։

§ 12. Պատուաւոր անդամներին տրվում է Ընկերութիւնից պատշաճաւորապէս ստորագրուած և կնիքով դրոշմած վկայագիրը։

§ 13. Բոլոր անդամները, ինչ կոչման և լինին, ունին ձայնի իրաւունք ընդհանուր ժողովների մէջ, ուր և կայանան այդ ժողովները, եթէ միայն անձամբ ներկայ են այնտեղ։

§ 14. Ընկերութեան անդամները հատուցանում են իւրեանց վճարը նոյն իսկ անդամ գրուելիս։ Տարեկան և միանուագ վճարների եղանակը որոշուած է 28-դ §-ում։

§ 15. Այն անդամները, որոնք չորս ամսուայ ընթացքում չեն հատուցել իւրեանց տարեկան վճարը, հրաժարուած են համարվում և կրկին ընդունվում են, երբ վերստին նորոգում են նոյն վճարը։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

§ 16. Ընկերութեան գործերը վարում են՝ Ընկերութեան Խորհուրդը և տեղական վարչութիւնները։ Խորհուրդը գտնվում է Տփխիսում, իսկ տեղական վարչութիւնները Կովկասի և Անդրկովկասի այլ քաղաքներում ու տեղերում, ուր այդ հնարաւոր կըլինի և Խորհուրդն օգտաւէտ կըհամարէ (§ 18)։

§ 17. Բացի նախընթաց 16-դ §-ի մէջ նշանակուած Խորհուրդը և տեղական վարչութիւնները, Ընկերութեան յաջողակ զարգացման համար՝ նորա գործունէութեան զանազան ճիւղերի մէջ, կազմվում են տեղական մասնաժողովներ սակաւաքնակ տեղերում և ուր անկարելի է բանալ տեղական վարչութիւն։

§ 18. Տեղական վարչութիւնները կազմվում են՝ երբ երկու սեռի ամենատեսակ անդամների թիւը 15-ի է հասնում և երբ իւրեանց գործողութիւններն սկսելու համար Խորհրդից թոյլտվու-

թիւն են ստանում։ Իսկ տեղական մասնաժողովները բացվում են, որքան անգամ և ունենան, երբ տեղական վարչութիւնների միջնորդութեամբ այդ մասին իրաւունք են ստանում Խորհրդից։ Ուր որ տեղական վարչութիւն չկայ, Խորհրդի համաձայնութիւնը կարելի է ստանալ անմիջապէս։

§ 19. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ ստանալով Խորհրդից իւրեանց գործողութիւնն սկսելու թոյլտուութիւնը, հաղորդում են այդ մասին տեղական իշխանութեանը։

§ 20. Ընկերութեան վարչութիւնների բոլոր անդամները, թէ Տփխիսում և թէ Տփխիսից դուրս, ձրի են կատարում իւրեանց պարտաւորութիւնները, բացի այն դէպքերից, որոնք Ընկերութեան Խորհուրդը վարձատրութեան արժանի կը դանէ։

§ 21. Ընկերութեան բոլոր գործիչների պարտաւորութիւնն է՝ զարգացնել նորա գործունէութիւնը, աճեցնել նորա միջոցները և որքան հնարաւոր է խնայողութիւն պահպանել, զգուշանալով աւելորդ ծախքերից։ Այս գործիչների կազմակերպութիւնը և նորանց պարապմունքների շրջանը բացատրուած է հետևեալ §§-ներում։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

§ 22. Խորհուրդը վարում է Ընկերութեան բոլոր գործերը։

§ 23. Խորհուրդը կազմվում է Տփխիսի ընդհանուր ժողովից ընտրուած ինն անդամներից և հինգ փոխ—անդամներից։ Այդ ինն անդամները ընտրում են իւրեանց միջից նախագահ և փոխ-նախագահ, որը վարելու է առաջինի պաշտօնը՝ նորա բացակայութեան ժամանակ։

§ 24. Խորհուրդը իւր պատասխանատուութեան ներքոյ ընտրում է իւր միջից կամ Ընկերութեան միւս անդամներից մի քարտուղար և մի գանձապահ։

§ 25. Խորհրդի նախագահը և անդամները ընտրվում են երկու տարով։ Ամեն տարուայ վերջում Խորհրդի անդամների կէսը թոշնում է իւր պաշտօնը հերթով, իսկ նոցա տեղերը բռնում են նոր ընտրուածները, որոնք կարող են լինել և դուրս գնացողներից։

Ծանօթութիւն։ Այս կանոնադրութեան գործադրութեան օրից մի տարի յետոյ՝ Խորհրդի անդամների կէսը հեռանում է վիճակով։

§ 26. Խորհուրդն, իբրև Ընկերութեան կենդրոնական հիմնարկութիւն, ղեկավարում է նորա բոլոր գործողութիւնները դէպի պատշաճաւոր միութիւն, համապատասխան նորա գոյութեան նպատակին։

§ 27. Խորհուրդը կենդրոնացնում է իւր մէջ տեղական վարչութիւնների և մանուաժողովների կայքի, դրամագլուխների և այլ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները և կարգադրում է այդ միջոցները իւր նախահաշուին կամ ընդհանուր ժողովի վճիռներին համաձայն։

§ 28. Խորհուրդը ընդունում է անդամների վճարները և դրամական նուէրները, մուծանելով այդ առանձին մատեանների մէջ և տալով նոցանից կարած անդորրագիր, գանձապահի ստորագրութեամբ։

§ 29. Խորհրդարանը, տեղական վարչութիւնները և տեղական մանուաժողովները մանող գումարները, ըստ իւրեանց նշանակութեան, բաժանվում են երեք տեսակի՝

ա) Ծախսուց գումարներ, որոնք Ընկերութեան ընթացիկ ծախքերի համար են որոշուած։

բ) Անձեռնմխելի գումար, որը կազմելու համար պահվում է ամենայն տարի Ընկերութեան եկամուտներից հինգ տոկոս, հանելով կանխապէս ընթացիկ ծախքերը։

գ) Յատուկ գումարներ, որոնք նուիրողի կողմից մի առանձին որոշ նպատակի են յատկացրած։

Ծանօթութիւն։ Յատուկ գումարները, որոնք առանձին նպատակների են յատկացրած, կարող են ծախսուել միայն այն ժամանակ, երբ նորանցով միանգամայն ապահովվում են նուիրատուներից նախագծուած գործադրութիւնները։ Հակառակ դէպքում այդ գումարները անձեռնմխելի են պահվում, մինչև որ կազմուին բաւարար և նպատակները ամբողջապէս ապահովացնող միջոցներ։ Յատուկ գումարները Խորհրդի հաշուի մէջ միւս գումարներից առանձին են նշանակվում։

§ 30. Իւրաքանչիւր տարուայ վերջին Խորհուրդը կազմում է նախահաշիւ Ընկերութեան յաջորդ տարուայ ծախսուց համար և այդ նախահաշիւը առաջարկում է Տփխիսում ընդհանուր ժողովի հաստատութեանը ց15-ն Դեկտեմբերի (§ 44)։

§ 31. Խորհրդարանը մանող գումարները տրվում են պետական կամ մասնաւոր բանկեր ցպահանջումն կամ ընթացիկ հաշուով, նայելով թէ ո՞րն է աւելի օգտաւէտ և աշխատելով որքան կարելի է Խորհրդարանում պահել ոչ աւելի քան հինգ հարիւր ռուբլի։

§ 32. Խորհուրդն ունի իրաւունք՝

ա) իւրեան տուած իշխանութեան սահմանների մէջ կապել ամենատեսակ պայմաններ և դաշինքներ,

և բ) դատ բանալ՝ ուր հարկն է, Ընկերութեան գործերի վերաբերութեամբ և պաշտպանել նորա շահերը իւր հաւատարմա-

տարների ձեռքով, որի համար և տալ նոցա իւր կողմից առանձին հաւատարմութիւն։

§ 33. Ընկերութեան գործերի վերաբերութեամբ Խորհուրդը հաղորդակցում է բոլոր կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների հետ։

§ 34. Խորհրդի պարապմունքներն անընդհատ են, իսկ նորա նիստերի օրերը որոշվում են ըստ պահանջման հարկի։

§ 35. Որպէս զի Խորհրդի վճիռներն օրինաւոր համարուին, անհրաժեշտ է ոչ պակաս քան հինգ անդամների ներկայութիւնը. սոցա թուումն է և նախագահը կամ փոխ-նախագահը։ Այս անդամների որ և իցէ մէկի բացակայութեան դէպքում, նախագահը հրաւիրում է փոխ-անդամներին հերթով։

§ 36. Վճիռները կայանում են ձայների առաւելութեամբ, որոնց հաւասարութեան դէպքում նախագահի կամ նորա փոխանորդի ձայնը տալիս է առաւելութիւն։ Այդ վճիռները գործադրվում են նախագահի ստորագրութեամբ և քարտուղարի վաւերացմամբ։

§ 37. Ընկերութեան գործերին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները և պայմանագրերը, նոյնպէս գումարների պահանջումը փոխատու հիմնարկութիւններից և առ հասարակ այն տեղերից, որոնց յանձնուած է Ընկերութեան դրամագլխի պահպանութիւնը, նմանապէս և Ընկերութեանը պատկանեալ գումարների փոխադրութիւնը պէտք է ստորագրեն նախագահը և Խորհրդի երկու անդամները, քարտուղարի վաւերացմամբ։

§ 38. Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար իրրև ձեռնարկ, Խորհուրդը կազմում է սոյն այս կանոնագրութեան սահմաններից դուրս չգալով, առանձին հրահանգներ (§ 48), որոնք պէտք է ենթարկուին ընդհանուր ժողովի վերահայեցողութեանը և հաստատութեանը։

§ 39. Խորհուրդը որոշում է իւր գործավարութեան եղանակը։ Նա բաժանում է պարապմունքները անդամների մէջ, իսկ մասնագիտական հարցերը վճռելու համար ընտրում է առանձին յանձնաժողովներ Ընկերութեան անդամներից կամ հրաւիրում է այլ մասնագէտներ։

§ 40. Խորհուրդն ունի կնիք իւր յատուկ անուանակոչութեամբ և յանձնում է տեղական վարչութիւններին ու մասնաժողովներին կնիք, կնիքների ձեւեր և մատեանների օրինակներ՝ դրամական վճարները և նիւթական նուէրները գրելու համար։

§ 41. Իւրաքանչիւր տարի տեղական վարչութիւններից և մասնաժողովներից նախընթաց տարուայ հաշիւները ստանալուց յետոյ՝ Խորհուրդը կազմում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան բոլոր գործիչների աշխատութեան, գումարների մտից և ելից և կայքերի դրութեան մասին և այս հաշիւը առաջարկում է ընդհանուր ժողովի վերանայութեանը ց15-ն Մայիսի (§ 44)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 42. Ընդհանուր ժողովն ունի իւր նախագահը և քարտուղարը, որոնք իւրաքանչիւր տարի ընտրվում են այդ իսկ ժողովից։

§ 43. Ընդհանուր ժողովները հրաւիրվում են Տփխիսում, տեղական լրագիրների միջոցաւ, տարէնը երկու անգամ՝ Մայիսի 15-ին հաշուի, և Դեկտեմբերի 15-ին նախահաշուի քննութեան համար։ Բացի սորանից Խորհուրդը հրաւիրում է արտաքոյ կարգի ժողովներ ամենայն ժամանակ, երբ նա անհրաժեշտ կը համարէ այդ, կամ երբ Խորհուրդը կստանայ յայտարարութիւն ոչ պակաս քան Տփխիսի անդամների թուի մէկ երեսներորդից ստորագրուած, իւրաքանչիւր անդամ կանխապէս հրատարակելով պարապմունքների առարկաները։

Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ նորա մէջ ներկայ են գտնվում ոչ պակաս քան նոյն անդամների թուի մի քսաներորդական մասը, հակառակ դէպքում չկայացած նստից ութ օր յետոյ հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար այլ ևս չէ պահանջվում անդամների որ և է սահմանեալ թիւ։ Վերջին ժողովի քննութեանը ենթարկվում են միայն այն գործերն ու հարցերը, որոնք մտած էին առաջին չկայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ։

§ 44. Ընդհանուր ժողովի պարապմունքներին ենթարկվում են՝

ա) Խորհրդի ընդհանուր հաշուի քննութիւնը։ Այս դէպքում Խորհրդի գումարների մտից և ելից և առ հասարակ նորա հսկողութեան ներքոյ գտնուող դրամագլուխների ստուգութեան համար ընտրվում է ժողովի միջից վերաստուգող յանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան երեք անձիքներից, որոնք Խորհրդի անդամ չպիտի լինին և որոնց տրվում են այդ առարկաների մասին հարկաւոր եղած հրահանգները։

բ) Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար Խորհրդից կազմուած հրահանգների քննութիւնը և հաստատութիւնը։

գ) Խորհրդի, տեղական վարչութիւնների և մանդատարների նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

դ) Լուծումն զանազան հարցերի, որոնք առաջարկվում են կամ Խորհրդից, կամ տեղական վարչութիւններից Խորհրդի միջնորդութեամբ։

ե) Պատուաւոր անդամութեան կոչումն յատկացնելը։

զ) Խորհրդի անդամների ընտրութիւնը։

է) Անշարժ կայքեր գնելուն և օտարացուցանելուն վերաբերեալ յառաջադրութիւնների հաստատութիւնը։

ը) Կանոնադրութեան փոփոխութիւնը։

թ) Ընկերութեան խափանումն։

Ընդհանուր ժողովին որ և իցէ առաջարկութիւն ներկայացնել ցանկացող անդամները պարտաւոր են այդ առաջարկութիւնը ներկայացնել Խորհրդին կանխապէս վեցներորդ՝ ընդհանուր ժողովի նիստից առ նուազն ութ օր առաջ։

§ 45. Ընդհանուր ժողովի մէջ բոլոր գործերը վճռվում են ձայների առաւելութեամբ, իսկ երբ նոքա հաւասար են, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս, բացառութեամբ այն հարցերի, որոնք վերաբերում են Խորհրդի անդամների ընտրութեան և կանոնադրութեան փոփոխման. սոքա վճռվում են ձայների երկու երրորդականի առաւելութեամբ։

Ընկերութեան խափանման հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճիռը։ Այս վերջին դէպքում Խորհուրդը թէ լրագրութեան միջոցով և թէ պաշտօնական յայտարարութիւններով կանխապէս ազդարարում է տեղական վարչութիւններին, որպէս զի նոքա իւրեանց ընդհանուր ժողովների վճիռներներն ուղարկեն Խորհրդին, որոշելով Ընկերութեան խափանումն ցանկացողների թիւը։

§ 46. Խորհրդի ընդհանուր հաշիւը՝ վերաստուգող յանձնաժողովի զեկուցման հետ, ընդհանուր ժողովի վերահայեցողութիւնից և հաստատութիւնից յետոյ, հրատարակվում է տեղական հայ լրագրներում։

ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՄՆԱԺՈՂՈՎՆԵՐ

§ 47. Տեղական վարչութիւնները և մանդատարները, որոնց կազմում է Խորհուրդը համաձայն 16-դ, 17-դ և 18-դ §§-ների, վարում են Ընկերութեան բոլոր գործերը իւրեանց վիճակի սահմանների մէջ։

Ծանօթութիւն։ Վիճակի սահմանները որոշում է Խորհուրդը։

§ 48. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները՝ վարչական կազմակերպութեան, գործավարութեան եղանակի, նախահաշիւ և հաշիւներ կազմելու, հաշուապահութեան, ընդհանուր ժողովներ կայացնելու, պարապմունքների շրջանը և նոցա նիւթերը որոշելու վերաբերութեամբ, գործում են Խորհրդից տուած առանձին հրահանգի ճիշտ հիման վերայ (§ 38 և ը բաժանումն 44-դ §-ի)։

§ 49. Տեղական վարչութիւնները և մասնաժողովները իւրանց կարգադրութեան ներքոյ գտնուող գումարներից հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախքերի համար, նախահաշուի որոշման համաձայն, իսկ մնացորդը, առանց յետաձգութեան, ուղարկում են Խորհրդին։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՓԱՆՈՒՄՆ

§ 50. Եթէ որ և է պատճառով Ընկերութիւնը դադարեցնել իւր գոյութիւնը, Ընկերութեան բոլոր մնացած դրամագլուխն ու կայքը գործ են դրվում ազգօգուտ գործերի վերայ, Ընկերութեան բոլոր անդամների երկու երրորդականի վճռին համաձայն (§ 45)։

Մարտի 1-ին ընտրուած չորս անձինք, ստանալով կառավարութեան թոյլատուութիւնը, սկսեցին անդամներ գտնել նոր ընկերութեան համար։ Մեծ եռանդով աշխատում էին մանաւանդ Գ. Սունդուկեանը և Բժ. Նաւասարդեանը։ Ցոյց տալու համար Գ. Սունդուկեանի ջերմագին վերաբերմունքը դէպի այդ նորածին հիմնարկութիւնը, մենք, նրա բարեհաճ թոյլատուութեամբ, բերում ենք այստեղ հետևեալ տողերը նրա մի նամակից, որ գրուած է Բժ. Նաւասարդեանին 1881 թուականի դեկտեմբերի 1-ին։

«Քո բարեկամական խօսքերը վարձատրեցին ինձ աւելի քան թէ ես արժանի եմ աշխատանաց համար, թէև ընկերութեան համար ես աշխատում եմ գիշեր ցերեկ, աշխատում եմ այնպէս, որ բոլորովին մոռանում եմ տուն, տեղ, կին, երեխայք, գրպանս ու պարտքերս, կարծես ծովի մէջ ընկած լող եմ տալիս կեանքս ազատելու, այսինքն ընկերութիւնը, որ քո շնորհիւ իմ կեանքս է դառել։ Այս գործի մէջ ես ինձ պատասխանատու եմ համարում միայն քո առաջ և խղճիս առաջ և հաւատա ինձ, որ դժուարանում եմ որոշել թէ ո՞րն է ձեզանից աւելի ներդործում ինձ վրայ՝

գու թէ իմ խիղճը։ Այնուամենայնիւ, ես մեծ մխիթարութիւն եմ զգում, որ այսպիսի սուրբ գործի համար առայժմս ես եմ չարչարւում և ես եմ տանջւում, տայ Աստուած, որ կարողանամ իրագործել բոլոր ցանկութիւնները» [1])։

Ընկերութեան պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1881 թուականի նոյեմբերի 15-ին։ Այդ օրը Արծրունու թատրոնում նշանակուած էր ընկերութեան անդամների առաջին ընդհանուր ժողովը, որ պիտի ընտրէր պաշտօնական մարմիններ՝ ընկերութեան գործունէութիւնն սկսելու համար։

Այդ օրը աչքի ընկնող մի երևոյթ էր Թիֆլիսի հայ հասարակութեան կեանքում։ Նկատվում էր մեծ համակրանք դէպի բարեսիրական այդ նոր գործը։ Ժողովի միջոցին թատրոնի մուտքում հարիւր հոգի նոր անդամներ դրուեցին [2])։ Իսկ թէ առհասարակ ինչ տպաւորութիւն թողեց այդ օրը հասարակութեան վրայ, այդ մասին ամենալաւ վկան կարող է լինել վրայ «Դրօէբա» լրագիրը, որ գրեց հետևեալը։

«Նոյեմբերի 15-ին Թիֆլիսի հայերը Արծրունու թատրոնում ժողով ունէին։ Հաւաքուեցան երեքհարիւրից աւելի [3]) անդամներ, այն «Բարեգործական Ընկերութեան», որ ունի նպատակ օգնելու տառապեալներին, կարօտեալներին, և դուրս բերելու

---

[1]) Այսպիսի ջերմ, ինքնամոռացութեան հանող վերաբերմունքն է, երևի, որ առիթ տուեց ապագայում ասելու թէ Գ. Սունդուկեանն է եղել Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան հիմնադիրը։ Այսպիսի մի բան տպուեց «Արձագանք» շաբաթաթերթի 1887 թ. № 41-ի մէջ։ Բայց Գ. Սունդուկեանը նոյն շաբաթաթերթի յաջորդ համարում (№ 42) գրեց. «Արձագանքը» ի միջի այլոց ինձ է վերագրում Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան հիմնելու գաղափարը, բարոյական պարտք եմ համարում յայտնել հրապարակաւ, որ ես միայն եղել եմ մինը այն անդամներից, որոնք այս կամ այն կերպով նպաստել են ընկերութեան կազմակերպութեանը։ Իսկ ընկերութիւնը հիմնելուն բուն գաղափարը յայտնել է բժ. Բ. Նաւասարդեանը, որը իղել է և նրան սկզբնական մղումն տուողը։

[2]) Кавказъ 1881 № 253.

[3]) Ժողովականներից էին 122 անդամ իսկ ընկերութեան անդամների ընդհանուր թիւը այդ օրը հասնում էր 300-ի։

խոր մթութիւնից իրանց եղբայրակիցներին, տարածելով լուսաւորութիւն, արհեստագիտութիւն և ուսումնական հիմնարկութիւններ թէ Կովկասում և թէ Անդրկովկասում։

...«Ամեն անդամ մեծ եռանդ ցոյց տուեց, ամենքն էլ ուրախ դէմք ունէին, ամենքն էլ յափշտակուած էին, ամենի վրայ նկատվում էր, որ նա իր սրտի մէջ պատկերացած ունի իր հայ եղբայրակիցների բարօրութիւնը։ Այս ժողովի մէջ մարդ տեսնում էր միայն այն անձանց, որոնք լաւ հասկացրել են իրանց, թէ ինչ է անձնական և ինչ հասարակական պարտաւորութիւնը և գործը։

«Ներանք այս ընդհանուր գործի մէջ ցոյց տուին մարդկային զգացմունք, յաւիտենականապէս ապացուցեցին, որ իրանք ունեն ի նկատի ժողովրդի բարօրութիւնը և սորանով իրանց յատուկ երջանկութիւնը։

«Այսպիսի համակրանք, այսպիսի հասարակութեան միութիւն մեծ նշանակութիւն ունի և օրինակելի է։ Այս հաստատ հիմքի վրայ հիմնված յիշեալ գործին բարի հետևանքներ չեն պակասի. դատապարտեալ է այն անդամը, որը դէպի ընկերութեան նպատակը որև է անհաւատարմութիւն կամ անտարբերութիւն ցոյց կը տայ։ Ընդհանրապէս հայերը ամեն հասարակական գործում անձնանուէր են. հասարակական գործում աշխատում են այնքան, որքան կարող են. առատութեամբ հանում են գրպանից այն տուրքը, որ պահանջում է մարդկութեան պարտաւորութիւնը. ընդհանուր գործով գրեթէ ամենայն հայ մէկը միւսին նեցուկ է լինում. թէ փոքրը և թէ մեծը շտապում է նեռս մացնել ընդհանուր, հասարակական գործի համար իր զոհաբերութիւնը։ Այս ուղղութեամբ նրանց բարի ձգտումները վերջ չունեն։ Ամեն քաղաքի եկեղեցիների դաւիթներում օրէցօր ստեղծվում են ուսումնարաններ հասարակութեան փողերով։ Ամեն ուսումնական և լուսաւորեալ անձ օգնում է առանց ոռճիկի այս բարի գործին։

«Այս միութեան պատճառը ինչ է։ Մթթէ հարստանալու դիտաւորութիւնը։—Ոչ... Սրա պատճառն է զգացմունքը, սէրը դէպի իր եղբայրակիցները։

«Երէկ Արծրունու թատրոնում հաւաքուած էին բացի մի քանի հարուստներից, այնպիսի անձինք, որոնք ապրում են միայն իրանց գիտութիւնով, աշխատանքով։

«Հարուստները, միլիոնատէրերը և հարիւր հազարներ ունեցողները, լաւ ուտել խմելու և զուարճութեան սովոր, թագնուել էին իրանց երեք-չորս յարկանի տների ծակերում։ Այս անձինք

իրանց համար կենդանի Աստուած շինել են սեպհական գրպանը և երկրպագում են միայն իրանց երկաթէ անդուկներին» [1]։

Ժողովը բացեց բժ. Նաւասարդեանը, որ մի համառօտ ճառով ծանօթացրեց հաստատուած կանոնադրութեան հետ և ի միջի այլոց բացատրեց, որ Թիֆլիսում և ընդհանրապէս Կովկասում Բարեգործական Ընկերութիւն հիմնելու գաղափարը պատկանում է ոչ թէ մի մարդու կամ մի խումբ մարդկանց, այդ գաղափարը ստեղծել են մի կողմից, այսպէս ասելով, ժամանակի ոգին և միւս կողմից՝ հայերի աղքատ դասի նիւթական միջոցների պակասութիւնը և անզարգացած դրութիւնը։ Իսկ սովատանջ և հիւանդ թիւրքահայերի գաղթը դէպի մեր կողմերը մի վճռական մղում էր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնելու համար [2]։

Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Հիմնադիր Կ. Հ. Բ. Ընկերութեան։

Այնուհետև բժ. Նաւասարդեանը յայտարարեց, որ «այն հինգ անձինք, որոնք ընտրուած էին կանոնադրութիւնը տէրութեան հաստատման ներկայացնելու համար, արդէն իրանց յանձնարարութիւնը կատարած են համարում» [3]

[1]) «Մշակ», 1881, № 218.

[2]) „Кавказъ“, 1881, № 253.

[3]) Արձանագրութիւն ընդ. ժողովի № 1.

և առաջարկեց, ըստ կանոնագրութեան, ընտրել ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար։

Միաձայն նախագահ ընտրուեց բժշկապետ Միքայել Շահ-Պարոնեան, իսկ քարտուղար՝ Գէորգ Զմշկեան։

III.

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 15-ին ընդհանուր ժողովում խորհրդի անդամներ ընտրուեցին հետեւեալ 9 անձինք. գեներալ Դիմիտրի Տէր-Աստուածատրեան, Աղեքսանդր Մանթաշեան, բժ. Բագրատ Նաւասարդեան, Գաբրիէլ Սունդուկեան, Յովհաննէս Զիլթախեան, Աղեքսանդր Մէլիք-Ազարեան, Աղեքսանդր Անանեան, Նիկողայոս Խոսրովեան և Ներսէս Աթաբէգեան։ Հետեւեալ ժողովում փոխ-անդամներ ընտրուեցին. Աղեքսանդր Բիշմիշեան, Յովհաննէս Ծովիանեան, Սպանդար Սպանդարեան, բժ. Մէլիք-Բեգլարեան և Նիկողայոս Տէր-Յակոբեան։

Նոյեմբերի 18-ին, ընդհանուր ժողովների նախագահ Շահ-Պարոնեանը, իր առն հրաւիրելով խորհրդի նոր— ընտիր անդամներին, առաջարկեց նրանց, կանոնադրութեան համաձայն, ընտրել իրանց միջից նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար։ Ընտրուեցին՝ նախագահ-Աղեքսանդր Անանեան, փոխ-նախագահ-գեներալ Տէր-Աստուածատրեան, գանձապահ—Զիլթախեան։ Գալով քարտուղարին, խորհուրդը հէնց այդ առաջին ժողովում վճռեց հրաւիրել մի քարտուղար դրսից, յատկացնելով նրան որոշ ռոճիկ։ Մինչև յարմար մարդ գտնելը քարտուղարութեան պաշտօնը ժամանակաւորապէս յանձն առաւ անդամ Խոսրովեանը։ Մի քանի ամսից յետոյ, այնէ 1882 թ. ապրիլի 2-ին քարտուղար է հրաւիրվում Պ. Աւետիք Եղեկեանը,

նախ 360 և ապա 600 ռուբլի ռոճիկով։ Պ. Եղեկեանը վարել է այդ պաշտօնը մինչև 1892 թուականի հոկտեմբերը։

Նկատենք այստեղ, որ վերոյիշեալ անձինքներից Ընկերութեան երկարատև ծառայութիւն են մատուցել. 1) Ալէքսանդր Անանեան, որ վարել է խորհրդի նախագահի պաշտօնը անընդհատ մինչև 1899 թուականը, երբ փոխուեց ընկերութեան կանոնադրութիւնը. 2) Ալէքսանդր Մելիք-Ազարեան՝ գանձապահի և փոխ-նախագահի պաշտօնով, 1882 թուից մինչև 1899 թ. 3) Ալէքսանդր Մանթաշեան՝ խորհրդի անդամ և փոխ-նախագահ, մինչև 1895 թուականի կէսը։

Նորակազմ խորհուրդը ամենից առաջ, ի հարկ է, կազմակերպչական գործունէութիւն պիտի ցոյց տար։ Նա էր որ որոշ կերպարանք տուեց ընկերութեան։ Եւ նրա գործունէութիւնը այդ ուղղութեամբ, մանաւանդ առաջին տարին, շատ եռանդուն էր։

ա. ՃԻՒՂԵՐ

Խորհրդի առաջին հոգսն է դառնում կեանքի մէջ մտցնել, իրագործել որքան կարելի է լայն չափերով, ընկերութեան կանոնադրութեան ամենակարևոր կէտերից մէկը, 16-դը, որ իրաւունք է տալիս դաւառական ճիւղեր բանալու։

Եւ ահա խորհրդի երկրորդ նիստում՝ նրա անդամներ Գ. Սունդուկեան և բժ. Նաւասարդեան ներկայացնում են իրանց կազմած նախագիծը — «Հրահանգ տեղական վարչութիւններին և մանաժողովներին», որ դաւառական ճիւղերի ներքին կազմակերպութիւնն ու գործավարութիւնն էր կանոնաւորում։ Նախագիծը քննուեց խորհրդի մէջ, ապա արուեց ընդհանուր ժողովին, որ 1882 թ. յունուարի 10-ի նիստում հաստատեց, մտցնելով իր կողմից մի քանի փոփոխութիւններ։

ՀՐԱՀԱՆԳ

ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ և ՄԱՄՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

§ 1. Տեղական վարչութիւնները կազմվում են տեղական Ընդհանուր ժողովից ընտրուած հինգ անդամներից և երեք փոխանդամներից։ Այս հինգ անդամներն իրանց միջից ընտրում են մի նախագահ և մի օգնական, որը փոխարինում է առաջինին նորա բացակայութեան ժամանակ։

§ 2. Տեղական վարչութիւնը իւր պատասխանատուութեամբ ընտրում է իւր միջից կամ Ընկերութեան միւս անդամներից մի գործավար և մի գանձապահ։

§ 3. Տեղական Վարչութեան նախագահը և անդամներն ընտրվում են երկու տարով։ Ամեն տարուայ վերջը Տեղական Վարչութեան անդամների կէսը թողնում է իւր պաշտօնը հերթով. իսկ նոցա տեղերը բռնում են նոր ընտրուածները, որոնք կարող են լինել և դուրս գնացողներից։

Ծանօթութիւն։ Տեղական Վարչութեան բացման առաջին տարուայ վերջը նորա անդամների կէսը փոխվում է վիճակով։

§ 4. Կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների հետ ունենալիք յարաբերութիւնների, ժողովներ հրաւիրելու, վճիռներ կայացնելու, ձայներ հաշուելու, թղթեր, արձանագրութիւններ և պարտադրեր տարադրելու, գումարներ պահանջելու և փոխադրելու և նոցա համար անդորրագրեր տալու, նմանապէս գործավարական կարգը որոշելու և մասնագիտական հարցեր քննելու համար առանձին մասնախմբեր նշանակելու վերաբերութեամբ՝ Տեղական Վարչութիւններն առաջնորդվում են այն կանոններով, որոնք սահմանուած են Խորհրդի համար կանոնադրութեան 4, 33, 34, 36, 37 և 39 յօդուածներում։

Այս Վարչութիւնները վայելում են նմանապէս այն իրաւունքները, որոնք կանոնադրութեան 32 յօդուածով որոշուած են Խորհրդի համար։

Ծանօթութիւն։ Որպէս զի Տեղական Վարչութիւնների վճիռները վաւերական համարուին, անհրաժեշտ է անդամներից գոնէ երեքի ներկայութիւնը, որոնց մէջ պէտք է լինի նախագահը կամ նորա տեղակալը. այս անդամներից մէկի բացակայութեան ժամանակ՝ նախագահը հերթով հրաւիրում է փոխ-անդամներին։

§ 5. Անդամակցական վճարները և գրամական ունեցական նուիրատուութիւններն ընդունուում են Տեղական Վարչութիւններում, իւրաքանչիւրը իրան շրջանի մէջ, կամ այն տեղերում, ուր Վարչութիւններն իրանք ցոյց կը տան, և գրվում են առանձին մատեաններում, որոնք յիշուած են կանոնադրութեան 40-րդ §-ի մէջ. այդ մատեաններից կարած անդորրագրերը տրվում են Վարչութեան գանձապահի ստորագրութեամբ։

§ 6. Իւրաքանչիւր տարուայ վերջը Տեղական Վարչութիւնները կազմում են առաջիկայ տարուայ իրանց ծախքերի նախահաշիւը և այս նախահաշիւը, Հոկտեմբերի 15-ի նիստին Տեղական Ընդհանուր ժողովներում քննելուց յետոյ, առաջարկում են Խորհրդին, որը նոյն նախահաշիւը իւր եղրակացութեան և Ընկերութեան նախահաշուի հետ ներկայացնում է Տփխիսու Ընդհանուր ժողովին քննելու և հաստատելու (Կանոնադր. § 30 և գ. կէտ 44-րդ §-ի)։

§ 7. Տեղական Վարչութիւնները՝ կանոնադրութեան 49-րդ §-ի համաձայն, Խորհուրդն ուղարկելիք գումարների հետ միացնում են և այն գումարները, որոնք Տեղական մասնաժողովից յանձնվում են իրանց։

§ 8. Տեղական Վարչութիւններն իրանց ընթացիկ ծախքերը հոգալու համար նախահաշուով որոշած գումարներից կարող են առձեռն պահել ոչ աւելի քան երկու տարուայ մանէթ. աւելորդ դրամը՝ ըստ չափու ստացման, յանձնում են արքունական բանկը, նորա բաժանմունքները, խնայողական դրամարկղները կամ քաղաքական, հասարակական բանկերը ցպահանջ կամ ընթացիկ հաշուով, նայելով թէ որը յարմար և ձեռնտու կը համարեն։ Իսկ ուր որ այսպիսի հիմնարկութիւններ չկան, յիշեալ գումարների պահպանութեան եղանակի որոշումը թողնվում է Տեղական Վարչութիւնների բարեհայեցողութեանը՝ նոցա իսկ պատասխանատուութեամբ։

§ 9. Իւրաքանչիւր տարուայ սկզբում Տեղական Վարչութիւնները՝ իրանց շրջանի մէջ եղած Մասնաժողովների հաշիւներն ստանալուց յետոյ, կազմում են թէ իրանց գործունէութեան և թէ ելից ու մտից գումարների և իրանց շրջանի մէջ եղած կայքերի հաշիւը։ Այդ հաշուի ելից ու մտից մասը կանխապէս գնում է Տեղական Վերատուչող Յանձնաժողովից և ապա ամբողջ հաշիւը, Մարտի 15-ին Տեղական Ընդհանուր ժողովում հաստատուելուց յետոյ, հաղորդվում է Խորհրդին (Կանոնադր. 41-րդ § և սոյն հրահանգի 12-րդ §-ի ա. կէտ)։

ՏԵՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 10. Տեղական Ընդհանուր ժողովները՝ իրաքանչիւր տարի ընտրուող տասնապետի նախագահութեամբ կազմւում են Ընկերութեան ամենատեսակ անդամներից (Կան. 42 և 48-րդ §§)։

§ 11. Սովորական Տեղական Ընդհանուր ժողովները հրաւիրվում են յայտարարութեամբ տեղական լրագրներում, ուր կան լրագիրներ, տարէնը երկու անգամ՝ Մարտի 15-ին հաշուի և Հոկտեմբերի 15-ին նախահաշուի քննութեան համար։ Բացի սրանից Տեղական Վարչութիւնները հրաւիրում են արտաքոյ կարգի ժողովներ այն ամենայն դիպուածներում, երբ կարևոր են համարում այդ կամ երբ Վարչութիւններն ստանում են յայտարարութիւն եօթն անդամից ստորագրած, իրաքանչիւր անդամ կանխապէս յայտարարելով պարապմունքների առարկաները։

Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ ներկայ է գտնվում ոչ պակաս քան անդամների թուի երկու-երրորդական մասը, հակառակ դէպքում չկայացած նստից ութ օր յետոյ հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար այլ ևս չէ պահանջվում անդամների սահմանեալ թիւը։ Այս վերջին ժողովի քննութեանը ենթարկվում են միայն այն գործերն ու հարցերը, որոնք մտած էին առաջին չկայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ։

§ 12. Սովորական Տեղական ժողովների պարապմունքներին ենթարկվում են՝

ա) Տեղական Վարչութեան հաշուի քննութիւնը։ Այս դէպքում Վարչութեան դումարների մաքից և ելից և առ հասարակ նորա հսկողութեան ներքոյ գտնուող դրամագլուխների ստուգութեան համար ընտրվում է ժողովի միջից Վերատեսուչ Յանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան երեք անձինքներից, որոնք Վարչութեան անդամ չպիտի լինին և որոնց տրվում են այդ առարկաների մասին հարկաւոր եղած հրահանգները։

բ) Նախահաշուի քննութիւնը։

գ) Տեղական Վարչութեանց և Մասնաժողովների կողմից առաջարկուած այլ և այլ հարցերի և միջոցների քննութիւնը (Կանոնագր. 44-րդ §-ի դ. կէտ)։

դ) Տեղական Վարչութեանց համար անդամներ ընտրելը։

ե) Ընկերութեան խափանման վերաբերեալ ենթադրութիւնների քննադատութիւնը (Կանոնագր. 45-դ §)։

§ 13. Տեղական Ընդհանուր ժողովների մէջ բոլոր գործերը

վճռվում են ձայների առաւելութեամբ, իսկ երբ ձայները հաւասար են, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս, բացի այն հարցերից, որոնք վերաբերում են Տեղական Վարչութեանց անդամների ընտրութեանը և Ընկերութեան խափանմանը։ Այս դիպուածներում Տեղական ժողովները վարվում են համաձայն այն կանոնների, որոնք սահմանուած են Տիֆլիսու Ընդհանուր ժողովի համար կանոնադրութեան 45-րդ յօդուածով։

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՄՆԱԺՈՂՈՎՆԵՐ

§ 14. Տեղական մասնաժողովները, որոնք կազմակերպվում են կանոնադրութեան 17 և 18-րդ §§-ի հիման վրայ, իրանք են որոշում իրանց անդամների թիւը և կարող են բաղկանալ երկու սեռի անդամներից ևս։

§ 15. Իւրաքանչիւր Մասնաժողով իւր միջից ընտրում է նախագահ, նորան օգնական և, եթէ կարեոր է համարում, գրագրավար ու դանձապահ։

§ 16. Մասնաժողովների անդամները ժողովի են հրաւիրվում ըստ բարեհայեցողութեան նախագահի։ Բոլոր հարցերն այդտեղ վճռվում են ձայների առաւելութեամբ, իսկ դոցա հաւասարութեան ժամանակ նախագահի ձայնն առաւելութիւն է տալիս։

§ 17. Բոլոր դրամական գումարները, բացի նախահաշուով որոշածից, Մասնաժողովները ներկայացնում են իրենց շրջանի մէջ եղած Տեղական Վարչութեանը, իսկ ուր վարչութիւն չկայ՝ ուղղակի Ընկերութեան Խորհրդին (Այս հրահանգի 7-րդ և կանոնադր. 49-րդ §§)։

§ 18. Անդամակցական վճարները, նմանապէս և դրամական ու նիւթական զոհաբերութիւններն ընդունելու կարգի վերաբերութեամբ Տեղական Մասնաժողովներն առաջնորդվում են այս հրահանգի 5-րդ §-ով, իսկ հաշուապահութեան վերաբերութեամբ ունենում են ելից ու մտից մատեաններ (Կանոնադր 40-րդ §)։

§ 19. Գումարներն ապահովութեան հիմնարկութիւնների մէջ դնելու վերաբերութեամբ՝ Տեղական Մասնաժողովներն առաջնորդվում են այն կանոններով, որոնք սահմանուած են Տեղական Վարչութիւնների համար այս հրահանգի 8-րդ §-ի մէջ։

§ 20. Տարուայ վերջը Տեղական Մասնաժողովները կազմում են իրանց գործունէութեան և ելից ու մտից գումարների հաշիւը և այն յանձնում են Տեղական Վարչութիւններին, որպէս զի սոքա կցեն իրանց հաշիւներին և ներկայացնեն Տեղական Ընդհանուր

ժողովներին։ Իսկ ակնկալեալ ծախքերի նախահաշիւը Մասնաժողովները կազմում են կանխապէս, որպէս զի իւր ժամանակին Տփխիսու Ընդհանուր ժողովի մէջ քննուին։ (Ընկերութեան կանոնադրութեան 44-րդ §-ի գ. կէտ)։

Միևնոյն ժամանակ խորհուրդը առանձին նամակներով դիմեց Կովկասի և Անդրկովկասի բոլոր աշքի ընկնող հայաբնակ վայրերը, առաջարկելով կամ տեղական ճիւղեր բաց անել, կամ, եթէ այդ անհնար է, անդամներ գտնել ընկերութեան համար։

Եւ որովհետև կանոնադրութեան 4 կէտը արամադրում էր, որ «Ընկերութիւնը իւր գործունէութիւնը ընդլայնելու համար վայելում է կառավարչական ամեն հաստատութիւնների և անձանց օրինաւոր աջակցութիւնը», ուստի խորհուրդը առանձին-առանձին պաշտօնական թղթերով դիմում է Կովկասի և Անդրկովկասի բոլոր նահանգապետներին, շրջանների կառավարիչներին և, ուղարկելով իւրաքանչիւրին 10-ական օրինակ կանոնադրութիւնից, խնդրում է նրանց օրինաւոր աջակցութիւնը Ընկերութեան գործունէութիւնը տարածելու համար։

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Թիֆլիսի նահանգի հայ ազգաբնակութեան մի մասը չը գիտէ հայերէն, խորհուրդը յանձնարարում է Գ. Սունդուկեանին թարգմանել կանոնադրութիւնը վրացերէն լեզուով, որպէս զի ընկերութեան նպատակների հետ ծանօթանայ վիրաբոս հայ ժողովուրդը։ Այդ թարգմանութիւնը կատարվում է և տպագրվում։

Խորհրդի դիմումներին արձագանք են տալիս շատ հայաբնակ վայրեր։ Ոմանք ցանկութիւն են յայտնում ճիւղեր բանալու, ոմանք բաւականանում են իրանց հաւաքած անդամակցական վճարները խորհրդին ուղարկելով. կան և այնպիսի տեղեր, որոնք պարզապէս յայտնում են, թէ չը կարողացան ոչինչ անել ընկերութեան համար։

Առաջին տարուայ ընթացքում տեղական վարչութիւն-

ներ բանալու թույլտվութիւն են խնդրում և ստանում են Շուշին, Երևանը, Մեծ Դարաքիլիսան, Ախալցխան, Բարվանսարա գիւղը, Վաղարշապատը, Դերբենդը, Կարսը Վլադիկաւկազը, Ջալալ-Օղլին և Բուխայիսը։ Այնուհետև, զաւառների դիմումները ճիւղեր բանալու մասին ըստ տարիների՝ ներկայացնում են զանազան պատկեր (Տես «Ճիւղեր» բաժինը)։

բ. Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Կանոնագրութիւնը որոշում է երեք տեսակ անդամներ. պատուաւոր, մշտական և գործադիր։

Խորհուրդը իր երկրորդ նիստում որոշում է Ընկերութեան բացման մասին յայտնել Գէորգ կաթողիկոսին և Ներսէս պատրիարքին ու խնդրել նրանց օրհնութիւնը, միաժամանակ և առաջարկել ընդհանուր ժողովին, որ երկուսն էլ ընտրուեն Ընկերութեան պատուաւոր անդամներ։ Օրհնութիւն խնդրող թղթերն ուղարկվում են դեկտեմբերի 5-ին։ Իսկ դեկտեմբերի 20-ին ընդհանուր ժողովը, որին ներկայացուած էր պատուաւոր անդամութեան առաջարկը, հարց դրեց «թէ վայե՞լ է արդեօք Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց կոչուիլ պատուաւոր անդամ Ընկերութեան, այն ինչ, նա, լինելով բարձրաստիճան խնամակալ ամեն տեսակ բարեգործութեանց իբրև Վեհափառ Տէր և կաթողիկոս ընդհանուր հայութեան, նրան կը վայելի կրել միայն խնամակալի անուանակոչութիւն»։ Եւ որոշեց «խնդրել Նորին Օծութեանը, որ նա բարեհաճէ ընդունել իբրև խնամակալ իւր հովանաւորութեան ներքոյ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը»։

Գալով «Սրբազան Արքեպիսկոպոս Ներսիսին, որն է պատրիարք Կ. Պոլսոյ, ժողովը միաձայն, խորին յարգանօք և մեծ համակրութեամբ որոշեց՝ խնդրել Նորին Բարձր

Սրբազնութեանը ընդունել Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում պատուաւոր անդամի կոչումն» [1]։

Դնում ենք այստեղ այդ երկու բարձրաստիճան հոգևորականների պատասխանները, ուղղած խորհրդի 9 անդամներին ի պատասխան նրանց՝ օրհնութիւնը խնդրող թղթերի։

I «Ծանեաք ի յայտարար գրութիւնէ ձերմէ զրարի և զհայոցուա նպատակ Բարեգործական Ընկերութեանդ նորոց հիմնելոյ, զի մարդասիրական հոգւով և ջերմեռանդն զգայմամբ առ լցեալ՝ խորհեալ էք գործել և հեղինակ հանդիսանալ այնպիսի գործոց, որ Աստուածահաճոյն է և առ ի յԱստուծոյ փառաւորութեամբ պատուեալ։

† Տ. Տ. ԳԷՈՐԳ Դ.
Կաթուղիկոս Ամենայն Հայոց
Նեմամակոլ Կ. Հ. Բ. Ընկերութեան

«Օրհնեալ եղիջիք դուք, որ ըստ կարեաց հայկական ազգային օգտի և ըստ պիտոյից ժամանակիս այսորիկ ընտրեալ էք ձեռնտու լինել տարածման մտաւոր լուսաւորութեան, օժանդակ լինել բարգաւաճման արհեստից, օգնական լինել որոց նուիրեն զանձինս յուսումն գիտութեան, մխիթարիչ հիւանդաց և կարօտելոց, և նպաստաւոր այլ ամենայն հոստատութեանց և միջոցաց, որովք ազգ մեր առաւել պայծառապէս փայլեսցի առաջի ազգաց օտարաց ըստ բազում մասանց։

«Մեծայոյս եմք, զի ամենեքին դուք գիտակ իսկ էք, թէ յոր պարտաւորութիւն կապեալ է Աստուծոյն տեսչութիւնն զիւրա-

[1]) Արձան. № 2։

քանչիւր ոք՝ տուեալ իւրաքանչիւրոց ի շնորհաց և ի բարի պարգևաց իւրոց, և յոր սահման կենաց վերակոչեալ, որ է կարողացն օգնել որոց կարօտին, և հմտացելոցն յամենայնի՝ առաջնորդել յուղղութիւն բարոյականութեան։ Այսպիսեաք եռանդեամբք տեսանեմք արդ զձեզ վառեալ և զօտեպնդեալ, և ուրախ եմք՝ զի որդիքդ մեր ըստ հոգւոյ ամենայն ճշմարտութեամբ զնան և յառաջադիմեն մեծաքայլ բարեաց ի բարիս և պարծանաց ի պարծանս թեակոխեալ ի փառս Տեառն Աստուծոյ և ի պէտս Հայաստան աշխարհի։

«Արդ օրհնեսցէ Տէր զբարի նպատակ Ձեր և առաջնորդ լիցի ամենայն ուղղութեամբ ի գործս յոր ուղղին սիրտք և նպատակ ընկերութեանդ։

«Օրհնեսցէ զխորհրդական անդամսդ, որք ստանձնեալ էք զծանրութիւն խորհրդոյ և գործառնութեանց նոցին քաղցրութեամբ և սիրով, տացէ ձեզ Տէր հանճար բարի և լոյս մտայ գործել ճշմարտութեամբ, արդարութեամբ և սրբութեամբ, զի փառաւորեսջիք յաստիս, և փառաւորեսցին անձինք ձեր յերկինս ի յարկսն արդարոց։

«Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ. Ամէն։

Թ. 478.
ի 18-ն դեկտեմբերի 1881 ամի
ըստ Տոմարիս Ռ. Յ. Լ. Ա.
ի Ս-Բ ԷՋՄԻԱԾԻՆ։

ԳԷՈՐԳ Դ.
Կաթողիկ. Ամ. Հայոց։

II «Մեծաւ և հոգեպարար ցնծութեամբ զՆոր զեկտեմբերի անցելոյ ամի զդրեալդ պատուական գիր ընկալեալ, փառս և մադթանս ջերմաջերմս վերառաքեցի առ Բարձրեալն Նախախնամող և պահապան վայրապատին ազգիս, որ գիտէ օգտակարս զարմանագործել յամենայն ժամ, որ և ի չարեաց իսկ բարիս արտագիտէ ի սփոփանս ժողովրդեան իւրոյ. լուր աւետեաց կազմակերպելոյ Բարեգործական Ընկերութեանդ առ հասարակ զամենեսին բերկրեցուցեալ էր, իսկ այս գիր պատուական յորում տեսանեմ զինն ստորագրութիւնս ինանց Պատուականագոյն Հոյակապ ազգայնոց մերոց ի Տփխիս, յանհնարինս ուրախ արար զիս և զամենայն Հայորեաւ։ Օրհնեցաք զՁեզ, Տեարք Ազգասէրք օրհնեցաք զամենայն անդամս բարեհպատակ ընկերութեանդ, Օրհնեցաք Մեծազօր

Տէրութիւնդ, որ հրամանաւ իւրով վաւերացոյց զկանոնագրութիւնդ յոյժ պատուական, օրհնեցաք զՆոգիս Ձեր, զսիրտս, զդպատումնս, օրհնեսցուք զվաստակս Ձեր, ց'որչափ շունչ պոյ 'ի մեզ, այլ զի՞նչ իցէ մերս օրհնութիւն առ օրհնութեամբք բազմաթիւ անձանց, որք բարերարեցան և որք բարերարելոց իցեն առ յաղագս առ 'ի Ձէնջ։ Բիւրք բիւրոց օրհնելոց են զՁեզ ընդ Յաւիտենից Օրհնելոյն՝ որ, ազերսեմ, իբր անսպառ օրհնութիւն ընակեսցի 'ի Ձեզ, յաջողեսցէ Ձեզ, զօրացուսցէ զՁեզ, միասիրտ միարան պահելով զՁեզ ամէն։

† Ց. ՆԵՐՍԷՍ արքեպիսկոպոս ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Պատուաւոր անդամ Կ. Հ. Բ. Բնկերութեան

1882 թ. Յունվարի 13-ին
Ի ԹԱՂԴԻՂ
Կոնստանդնուպօլսոյ.

Անամբ ողջոյնարար ընդ միշտ՝
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ։

Պատուաւոր անդամներ ընտրելուց յետոյ, Խորհուրդը հոգս է տանում և մշտական անդամներ ունենալու մասին։ Ըստ կանոնագրութեան՝ այդպիսի անդամներ համարվում են միանուագ ոչ պակաս քան 300 ռուբլի տուողները։ Եւ այդպիսի գումարներ մտցնելու և մշտական անդամ լինելու առաջին օրինակը տալիս են հէնց Խորհրդի անդամներից մի քանիսը։

Դեկտեմբերի 11-ի նիստում յայտարարվում է հետևեալը. նախագահ Ալէքսանդր Անանեանը տալիս է 1000 ռուբլի իր և իր ամուսին Վարդուհու կողմից, գանձապահ Յովհաննէս Զիլթախեան՝ 1200 ռուբլի իր և իր կնոջ Սոֆիայի ու Մարիամ և Աննա դուստրների կողմից, Ալէքսանդր Մանթաշեան՝ 900 ռուբլի իր և իր ամուսին Դարիայի և դուստր Աննայի կողմից, գեներալ Դիմիտրի Տէր-Աստուածատրեանց՝ 600 ռուբլի իր և իր մայր Մարթայի կողմից, Ալէքսանդր Մէլիք-Ազարեան՝ 600 ռուբլի իր և իր ամուսին Թագուհու կողմից, Յովհաննէս Էմինեան (Խորհրդի կազմից դուրս) 300 ռուբլի. ընդամենը 4600 ռուբլի։

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Խորհուրդը որոշում է տալ այդ բոլոր անձանց մշտական անդամի վկայագիր, իսկ գումարը համարել անձեռնմխելի։ Այդպիսով իրագործվում է կանոնադրութեան այն կէտն էլ, որ վերաբերում է գումարներին և կազմում է անշարժ դրամագլուխ, առանց որի ոչ մի ընկերութիւն չէ կարող գոյութիւն ունենալ։ Տարուայ վերջին մշտական անդամների թուին աւելանում են Յովհաննէս Անանեան, որ տալիս է 1000 ռուբլի և Գէորգ Լիանոզեան, որ տալիս է 300 ռուբլի։

Գալով գործադիր անդամներին, Խորհուրդը մի շարք միջոցներ ձեռք առաւ նրանց թիւը մեծացնելու համար։ Բացի «ստորագրական թերթեր» ուղարկելը գանազան ան-

ձանց Թիֆլիսում և գաւառներում, Խորհուրդը իր անդորրագրերը ուղարկեց Թիֆլիսի հայ յայտնի վաճառականներին,

ՄԻՔԱՅԵԼ ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆ

ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ

հայ եկեղեցիների քահանաներին և երեցփոխներին, և առանձին տպագրած շրջաբերական դիմումներով խնդրում էր տարածել այդ անդորրագրերը։

Շնորհիւ այն ոգևորութեան, որ տարածել էր հասարակութեան մէջ այս նոր գործը, շնորհիւ այսպիսի եռանդուն միջոցների, Ընկերութիւնը իր գոյութեան առաջին տարում ունէր Թիֆլիսի Խորհրդի հաշիւներով 589 անդամ [1]։

գ. ՀԱՅԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Առաջին տարուայ այդ արդիւնաւոր, եռանդուն գոր-

[1]) «Համառօտ հաշիւ» Թիֆլիս, 1886, եր. 5.

ծունկութիւնը չափազանց կարևոր էր՝ Ընկերութիւնը հաստատուն հիմքերի վրայ դնելու համար։ Եւ տարուայ վերջին մենք տեսնում ենք մի կազմակերպուած մարմին, որ թէև դեռ համեստ ոյժերի տէր է, բայց այնքան արդէն ապահովել է իր գոյութիւնը, որ կարող է ապրել, այդ համեստ ոյժերի ներածին չափ, նոյն իսկ աննըպաստ պայմանների մէջ։



Ա. ԱՆԱՆԵԱՆ
Նախագահ Խորհրդի

Իսկ պայմանների անբարենպաստութիւնը նկատելի է դառնում հէնց երկրորդ տարուց։ Հասարակութիւնը այլ ևս անտարբեր է դէպի Խորհրդի դիմումները։ Չը կայ ոգևորութիւն։ Եւ այդ տեսակ սառն վերաբերմունքի առաջին յայտարարը անդամների թիւն է երկրորդ տարուայ ընթացքում—358։ Երրորդ տարում աւելի ևս պակասում է այդ թիւը, հասնելով 156-ի։

Խորհուրդը իր անդրանիկ տպագրած հաշուի մէջ («Համառօտ հաշիւ նոյեմբերի 15-ից 1881—1885») չէր թաքցնում այդ հանգամանքը հասարակութիւնից։ Նա գրում էր. «Մի անբացատրելի սառնութիւն և անտարբերութիւն է նշմարվում հասարակութեան մէջ... Նոյն անտարբերութիւնը դէպի ընկերութեան գործը նշմարուած է նաև ընդհանուր ժողովի նիստերին յաճախելում, ուր ամեն մի անդամ իւր օգտաւէտ խորհրդով կարող է նպաստել ընկերութեան բարգաւաճմանը ու Խորհրդին աջակից լինել նրա գործունէութեան մէջ։

Նիւթական օժանդակութեան հետ ընկերութեանը խնայում են և բարոյական օժանդակութիւնը» [1]։

Փորձելով բացատրել այդ երևոյթը, Խորհուրդը մի քանի ենթադրութիւններ էր դնում հրապարակում։ Սակայն,

Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆ
Խորհրդի փոխ-նախագահ

Ա. ՄԵԼՔԻ-ԱԶԱՐԵԱՆ
Խորհրդի գանձապահ

վերջ ի վերջոյ ինքն էր դալիս այն եզրակացութեան, թէ երևոյթը անբացատրելի է։

Երեք տարուայ փորձով, ի հարկէ, անկարելի էր բացատրել հասարակութեան այդ վերաբերմունքը. հասարակական իւրաքանչիւր գործ իր զարգացմանը դիմում է ոչ թէ ուղիղ դէպի բարձր գնացող գծով, այլ շեղումներով, դիգզագներով, որոնք անկում և բարձրացում են ցոյց տալիս, երևոյթներ, որոնց պատճառները պէտք է որոնել հասարակական կեանքի պայմանների մէջ։

[1]) Եր. 12, 13.

Այդ պատկերը մեզ ցոյց կը տայ ընկերութեան գործունէութիւնը, որին կը դիմենք այժմ, բաժանելով նրան երկու գլխաւոր հատուածների. ա) Կենտրոն (Թիֆլիս) և բ) Ճիւղեր։

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԵՆՏՐՈՆ

1881—1899

I

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾ

ա. ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԴՊՐՈՑՆԵՐ

Առաջին տարին Խորհուրդը ել և մտական նախահաշիւ չէ կազմում, այլ թոյլատրութիւն է ստանում ընդհանուր ժողովից ծախսելու բարեգործական նպատակներով 2500 ռուբլի գործադիր անդամների վճարներից։

Յունուարի 8-ի (1882) նիստում քննելով թէ ինչ նպատակների յատկացնել այդ գումարը, Խորհուրդը նկատողութեան է առնում երկու առաջարկութիւն։ Դեկտեմբերի 11-ի նիստում կարդացուել էր Թիֆլիսի Նորաշէն Ս. Աստուածածնի եկեղեցու տղայոց դպրոցի ուսուցիչ Յ. Իւսուֆեանի նամակը, որով նա առաջարկում է «հիմնել մի կիւրակնօրեայ դպրոց ու մի ապաստանարան, այն տաճկահայ մշակների համար, որոնք գալիս են Թիֆլիս իրենց ամենօրեայ հացը ճարելու»։ Խորհրդի անդամներից ոմանք առաջարկում են հիմնել այդ ապաստանարանը, իսկ ոմանք առաջարկում են նպաստներ տալ Թիֆլիսի աղքատ ծխական դպրոցներին։

Երկու հարցերի վերաբերեալ նիւթեր հաւաքելով, Խորհուրդը հրաւիրում է իր նիստերին և Թիֆլիսի թեմի

թեմական Տեսչին ու մի քանի դպրոցների հոգաբարձուներին, և վերջ ի վերջոյ ուղղում է իր գործունէութիւնը՝ կրթական գործին օժանդակութիւն անելու կողմը։ Նա տալիս է մասնաւոր ամսավճարներ Թիֆլիսի դպրոցներում սովորող չքաւոր աշակերտներին և նպաստներ է տալիս քաղաքի աղքատ ծխական դպրոցներին։

Գործունէութեան այդ ձևն էլ մնում է Խորհրդի գլխաւոր հոգացողութիւնը և յետագայ տարիներում։ Նրա սովորական նախահաշուի մէջ իւրաքանչիւր տարի գլխաւոր տեղը բռնում են ուսումնառուներն և ուսումնարանները։

Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆ
Խորհրդի փ.-անդամ։

Սակայն այդ օժանդակութիւնը նորանոր ձևերի մէջ մարմնացնելու փորձեր են լինում։ Եւ առաջին փորձը տեղի է ունենում հէնց առաջին տարին։ Խորհուրդը որոշում է բաց անել Թիֆլիսում ապաստանարան չքաւոր աշակերտների համար և երկար զբաղվում է այդ հարցով։

Երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով (Ալէքսանդր Անանեան, Ներսէս Աթաբէկեան, Ալէքսանդր Քիշմիշեան), խորհրդակցութեան հրաւիրելով դպրոցական գործին ծանօթ մի քանի մարդկանց, ծրագրում է աշակերտական ապաստանարանի մի այսպիսի կազմակերպութիւն։

Ապաստանարանը բացվում է 20 աղքատ աշակերտների համար. ընդունվում են աշակերտներ ոչ միայն Ներսիսեան

դպրոցից, այլ և պետական միջնակարգ դպրոցներից։ Աշակերտները ստանում են ընակարան, լոյս, վառելիք, սնունդ և բժշկական օգնութիւն, նոյնպէս և մահճակալ և անկողին իր սպիտակեղէնով և բաղնիսի ծախս։ Եւ այս ամենի համար իւրաքանչիւր աշակերտ վճարում է ամսական հինգ ռուբլի։ Հիմնարկութիւնը գտնվում էր Խորհրդի անմիջական հսկողութեան տակ և կառավարվում էր առանձին վերակացուի ձեռով։

Նախահաշուով այդ հիմնարկութեան համար սահմանվում էր տարեկան ծախս 1948 ռուբլի, և բացի դերանից միանուագ ծախս կահ կարասիքի համար՝ 750 ռուբլի։

Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ
Խորհրդի անդամ։

Ծրագիրը և նախահաշիւը հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից օգոստոսի 29-ին և Խորհուրդը սկսում է պատրաստութիւններ տեսնելը։ Գտնում է կահ կարասիք ապաստանարանի համար, օգնութիւնը խնդրող աշակերտներից ընտրում է այնպիսիներին, որոնք կարող են ընդունուել այդ հիմնարկութեան մէջ։

Սեպտեմբերի 6 ին Խորհուրդը, ուղարկելով Թիֆլիսի նահանգապետին ծրագրի ռուսերէն թարգմանութիւնը, խնդրում է թոյլատրութիւն բաց անելու ապաստանարանը։ Նահանգապետը այդ ծրագիրն ուղարկում է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, որ և մի քանի փոփոխութիւններ է մտցնում ծրագրի մէջ։ Այսպէս, պահանջ-

վում էր, որ ապաստանարանի վերակացուն ընտրուի ժողովրդական դպրոցների դիրեկտորի համաձայնութեամբ և առնտարակ ապաստանարանը գտնուի նաև դպրոցական վարչութեան հսկողութեան տակ։

Այս փոփոխութիւնների ազդեցութեամբ Խորհրդի մէջ տեղի ունեցան սաք վիճաբանութիւններ։ Անդամների մեծամասնութիւնը գտնում էր՝ թէ ինքը Խորհուրդը իրաւունք ունի մացնել այդ փոփոխութիւնները ծրագրի մէջ։ Իսկ փոքրամասնութիւնը պնդում էր թէ առանց նախապէս ընդհանուր ժողովից հաւանութիւն ստանալու՝ Խորհուրդը այդպիսի քայլ անելու իրաւունք չունի։ Այդ վիճաբանութիւնները սուր, նոյն իսկ անձնական կերպարանք ստացան. և երևի հէնց այդ պատճառով էր, որ ապաստանարանի միտքը թողնուեց և հետևեալ տարին Խորհուրդը ծախեց իր գնած կահ կարասիքի մի մասը։

Ն. ԹՈՍՐՈՎԵԱՆ
Խորհրդի անդամ։

Թողնելով կրթական բարեգործութեան այդ ձևը, Խորհուրդը ընդգրկեց բացառապէս կարօտ ուսումնարաններին և ուսումնարաններին միանուագ կամ ամսական նպաստներ տալու ձևը։

Այդպէս, առաջին տարեշրջանում միանուագ նպաստներ ստանում 25 աշակերտ ու աշակերտուհի և երկու ուսումնարան։ Հետևեալ տարին (1883) միանուագ նպաստներ ստացող աշակերտների թիւը իջնում է տրդէն 3-ի, բայց դրա փոխարէն ամսական նպաստ (հնդական ռուբլի)

ստանում են 37 աշակերտ և աշակերտուհի, երրորդ տարին 44 հոգի և 5 հոգի միանուագ ստացողներ։ Բարձրագոյն դպրոցներում ուսանողներից առաջին և երկրորդ տարիներում, միանուագ նպաստ (75 բուբլի) ստանում են մի-մի հոգի, իսկ երրորդ տարում՝ 4 հոգի (200 բուբլի)։

Այս ընդհանուր պատկերը ներկայացնում են և հետևեալ տարիների նախահաշիւները։ Խորհուրդը նշանակելով այդպիսի գումարներ, չէր դուրս գալիս իր նախահաշիւների սահմաններից, թէև նրա գրամական կացութիւնը այնքան էլ վատ չէր։ Տարեկան մուտքից աւելացածը նա կցում էր իր անձեռնմխելի գումարներին։ Առաջին տարեշրջանի կրթական նպաստներից յիշատակութեան արժանի է 300 ր. նպաստը, որ տրուեց հայոց առաջին ուսուցչական ժողովին։

ԳԷՈՐԳ Դ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Փոխ-նախագահ խորհրդի։

Դպրոցական բարեգործութեան ընդունուած ձևի փոփոխութիւնը փորձում է մտցնել 1885 թուին Խորհրդի անդամ Գէորգ Աքիմեանը։ Մի մանրամասն դեկուցմամբ նա պարզաբանում է, որ փոխանակ աշակերտներին և ուսանողներին մանր նպաստներ տալու, աւելի լաւ է լիաթոշակ աշակերտներ պահուեն Ներսիսեան դպրոցում, և Գէորգեան ճեմարանում, ինչպէս նաև ուսանողներ բարձրագոյն դպրոցներում, այն պայմանով, որ այդ լիաթոշակ տեղերը պարտաւորուած լինեն ուսուցչութիւն անել հայոց դպրոցներում։

Սակայն Խորհուրդը չէ ընդունում այդ առաջարկութիւնը, պատճառաբանելով այսպէս. «Ի նկատ առնելով առհասարակ ընկերութեանս դրամական կարողութեան կարի նուազութիւնը և ի մասնաւորի տարեկան եկամտի որոշ բնաւորութիւն ստացած լինելը համեմատ ցայսօր նորան տուած միակերպ գործադրութեանը մի քանի հարկաւոր ճանաչուած պէտքերի վրայ, որը դժուար է անտես առնելը և եկամտին նոր գործադրութիւն նշանակելը» [1]։

Չկարողանալով արմատական փոփոխութիւններ մտցնել իր գործադրած դպրոցական բարեգործութեան մէջ, Խորհուրդը 1887-ին նորից վերադառնում է լիսթոշակների հարցին և այս անգամ կարողանում է, առանց խանդարելու նախկին կարգը, աւելացնել նպաստ ստացող աշակերտների թուին և մի քանի յատուկ թոշակներ, վճռելով պահել Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում մի գիշերօթ աշակերտ, յատկացնելով նրան 200 ր. և օրիորդական գիմնազիայում սովորող երկու աշակերտուհիների տալ տարեկան 100-ական ռուբլի։ Պայման էր որոշվում, որ այդ աշակերտն ու աշակերտուհիները կամ աւարտած լինեն հայոց դպրոցները կամ յառաջադէմ լինեն հայերէն լեզուից։ Այս որոշման նպատակն էր, անշուշտ, ուսուցիչներ և վարժուհիներ պատրաստել հայոց դպրոցների համար։

Հետևեալ տարին (1888) Խորհուրդը կարողանում է լուծել և մի դպրոցական հարց, որ դրուած էր նրա առջև իր գոյութեան սկզբից և եթ։ Այդ այն էր, որ կարևոր էր համարվում Թիֆլիսի հեռաւոր և աղքատ թաղերում ծխական դպրոցներ բաց անելը։

Բանակցութիւններ սկսելով Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի հետ, Խորհուրդը յայտնում է, որ եթէ Նաւթլուղ և Խարիսուղ թաղերի ծխականները իրանց միջոցներով դպրոցական շէնքեր կառուցանեն, Խորհուրդը կը հոգայ այդ դպրոցների ընթացիկ ծախսերի մեծագոյն մասը։

[1]) Արձ. 23.

1888-ին յայտնի դարձաւ, որ Ռէյտեր եղբայրները, ի յիշատակ իրանց հայադիկ մօր, Նաւթլուղում կառուցել են դպրոցական շէնք և Խորհուրդը անմիջապէս ուղարկում է Արխատակէս եպիսկոպոսին 300 բուբլի այդ դպրոցում ուսում սկսելու համար։

Այնուհետև նպաստը այդ քանակութեամբ դառնում է մշտական։ Իսկ Խարփուղի թաղում վարձվում է դպրոցական շէնք և Խորհուրդը ուսուցիչների ռոճիկների, դպրոցական պիտոյքների և կահ կարասիքի համար ծախսում է 600 բուբ. աւել։ Սակայն դպրոցը փակվում է 1890-ին։ Տարեկան նպաստ շարունակում է ստանալ Նաւթլուղի դպրոցը։

Ց. ՀԻԹԱԽՆԱՆ
Խորհրդի անդամ

1892 թուականից տարեկան 300 բուբլի նպաստ է յատկացվում Թուխայիսի նահանգի Զխաբ գիւղի հայոց դպրոցին։ Հետևեալ տարին նոյնքան նպաստ յատկացվում է Սաչխերէթ գիւղին, որի հասարակութիւնը բազմաստորագիր մի խնդրագրով դիմել էր Խորհրդին։ Շնորհիւ այդ նպաստի գիւղում բացվում է ծխական դպրոց։ Նմանապէս, յարգելով Արխատակէս եպիսկոպոսի միջնորդութիւնը, տարեկան 150 բուբլի նպաստ է յատկացվում Երևանեան նահանգի Էվջելար գիւղի դպրոցին. այդ նպաստները յիշեալ դպրոցներին տուած են մինչև 1897 թուականը [1]։

[1]) Վերջին տարին նպաստ ստանում էին միայն Զխաբի, Նաւթլուղի և Սաչխերէթի դպրոցները, այն էլ 150-ական բուբ.

1888 թուի սկզբին Խորհուրդը որոշում է մի հատ լիսթոշակ ուսանող պահել բարձրագոյն դպրոցներում, յատկացնելով տարեկան 360 ռուբլի։ Այդ թոշակը նոյն թուականից յատկացվում է Դորպատի համալսարանի պատմական — լեզուաբանական ֆակուլտէտի ուսանող Փարսադան (այժմ Մեսրովբ եպիսկոպոս) Տէր Մովսիսեանին։ Ուսումն աւարտելուց յետոյ Տէր-Մովսիսեանը գնում է արտասահման, կատարելագործելու համար, ստանալով Խորհրդից տարեկան 600 ռուբ. (Մինչև 1893 թ.)։

1890 թուի փետրուարի 25-ին ընդհանուր ժողովը որոշել է մի որդեգիր պահել Էջմիածնի ճեմարանում, և յանձնել էր Խորհրդին գործադրել այդ վճիռը նոյն տարուայ դեկտեմբեր ամսից։

Այս վճիռը Խորհրդի քննութեան առարկայ դարձաւ միայն 1891-ի դեկտեմբերին։ Խորհուրդը հասաւ այն եզրակացութեան, որ աւելորդ է որդեգիր պահել ճեմարանում, աւելի լաւ է ճեմարանն աւարտողներից մէկին ուղարկել ընկերութեան հաշուով արտասահման՝ բարձրագոյն ուսում ստանալու։ Այդ մտքով յայտարարութիւն եղաւ, և ճեմարանի սաներից 7 հոգի խնդիրներ ներկայացրին՝ թոշակը իրանց տալու մասին։

1892-ի ապրիլի 25-ին Խորհուրդը քննում էր, թէ խնդրատուներից ով է արժանի որդեգիր լինելու։ Խորհրդի անդամ Բ. Մելիք-Դարագեոզեանը առաջարկում է նախքան թոշակաւորի ընտրութիւնը, սահմանել թէ ինչ պայմաններ և ինչ պարտաւորութիւններ պիտի յանձն առնէ և կատարէ այդ կարգի մի թոշակաւոր, և այդ մտքով նա Խորհրդի քննութեան է առաջարկում ծրագրի հետևեալ կէտերը։ «1) Նա պիտի ուսանի աստուածաբանական և կամ պատմական ու լեզուագիտական ուսումն. 2). ուսման ընթացքը կարող է տևել 3—4 տարի. 3). յետ ուսման նա պարտաւոր է ծառայել ազգին Կովկասում և Անդրկովկասում (քահանայութիւն կամ ուսուցչութիւն անե-

լով) 4). սորագրութեամբ պարտաւորուի նա, ազգին չ՝ծառայելու դէպքում, իւր վրայ արուած ծախքի դրամը յետ դարձնել ընկերութեան» [1]) Խորհուրդը մերժում է չորրոդ կէտը և ասա, անդամ Փ. Վարդանեանի վկայութիւնները աչքի առաջ ունենալով, թոշակաւոր է ընտրում Գարեգին Սարկաւագ (այժմ վարդապետ) Յովսէփեանին, որ և նոյն տարուայ ամառը գնում է Գերմանիա և մինչև 1896 թուականի սեպտեմբերը ստանում է ընկերութիւնից ամսական 50 ռուբլի։

Բացի Տէր-Մովսիսեանից և Յովսէփեանից, ընկերութիւնը ուրիշ լիաթոշակ որդեգիր ուսանողներ չէ ունեցել։ Մինչև 1899 թուականը Խորհուրդը ըստ մի անդամ ընդունուած չափի չքաւոր ուսանողներին տալիս էր նպաստ ամսական 10 ռուբլի։

Թիֆլիսում սովորող աշակերտների համար որոշուած ամսաթոշակը—5 ռ. նոյնպէս անփոփոխ մնաց մինչև 1899 թուականը, բացառութեամբ միայն հետևեալ դէպքի։

1891 թուականի ամառը բանասաեղծ Ռափայէլ Պատկանեանը ծանր հիւանդ էր և ապրուստի միջոցներից զուրկ։ Նրա որդիներից մէկը սովորում էր Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցում։ Խորհրդի մէջ առաջարկութիւն եղաւ, ի պատիւ հիւանդ բանաստեղծի, թոշակ նշանակել այդ աշակերտին։ Եւ Խորհուրդը, նոյեմբերի 6-ի նիստում, սովորականի պէս, նշանակեց Պատկանեանի որդուն ամսական 5 ռուբլի։ Այդ որոշման առիթով Գրիգոր Արծրունին իր «Մշակում» մի խիստ յարձակողական առաջնորդող տպեց, որի մէջ յանդիմանում էր Խորհրդին, թէ նա այդպիսի չնչին թոշակով անպատուում է հայ ազգի նշանաւոր բանաստեղծին։ Խորհրդի նախագահ Անանեանի և Արծրունու մէջ տաք բանակռիւ սկսուեց այդ առիթով, սակայն Խորհուրդը շուտով ուղղեց այդ սխալը։ Դեկտեմբերի

[1]) Արձ. № 11.

14-ի նիստում Խորհրդի անդամ Գ. Սունդուկեանը առաջարկում է եկող տարուանից Պատկանեանի որդուն տալ ամսական 15 ռուբլի։ Թէև նախագահ Անանեանը սաստիկ ընդդիմանում է այդ առաջարկութեան, ասելով թէ ընկերութեան, առջև համահաւասար պիտի լինեն բոլոր չքաւորները, բայց Խորհուրդը ընդունում է Սունդուկեանի առաջարկութիւնը։

Բ. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՑԵՆՂ։

1889 թուի Մարտի 22-ին արձակուած բարձրագոյն հրամանով սահմանուած էր որ «Հայ—Գրիգորեան եկեղեցական ծխական դպրոցների մէջ ռուսաց լեզուի, պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան ուսուցիչներ ու վարժուհիներ պէտք է նշանակուին միայն օրինաւոր ուսուցչական ցենզ ունեցող անձինք, բայց թոյլատրել Կաթողիկոսին ընդունել այդ դպրոցներում ուրիշ առարկաների դասաւանդութեան համար և այն անձանց, որոնք չունին յիշեալ ուսուցչական ցենզը, միայն այն պայմանով, որ այդ բացառութիւնը կարող է տեղի ունենալ միայն 5 տարուայ ընթացքում։ Այդ ժամանակամիջոցից յետոյ ուսուցչական ցենզ չունեցող անձանց առհասարակ չէ թոյլատրվում դասաւանդութիւնը այդ դպրոցներում» [1])

Նշանակուած պայմանաժամը, ուրեմն, լրանում էր 1894 թ. մարտի 22-ին։ Բայց դեռ 1893-ի սկզբում այդ կարևոր հարցը Թիֆլիսում մտահոգութեան առարկայ էր դարձել։ Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը 1893-ի իր նախահաշուի մէջ մտցրեց ելքի մի յատուկ յօդուած՝ «Հայ ուսուցիչներին նպաստ, ցենզ ձեռք բերելու համար, 360 ր.» Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութիւնն էլ նոյն նպատակի համար նշանակել էր 200 ր. Ասում էին

---

[1]) Циркуляръ по управленію Кавк. учебн. Округомъ *1889*, № *5*, с. *153*,

թէ նոյն այդ գործը կարգաւորելու համար Թիֆլիսում կազմուել է «մի մասնաժողով, որ փոդեր էլ էր հանգանակում» [1]։ Երբ այդ որոշումները յայտնի դարձան հասարակութեան, ծխական դպրոցների ուսուցիչներից մի քանիսը դիմեցին Խորհրդին, խնդրելով նպաստ, որպէս զի կարողանան պատրաստուել և պահանջուած քննութիւնը տալ՝ ուսուցչական իրաւունք ձեռք բերելու համար։

Այդ դիմումների առիթով Խորհուրդը մարտի 20-ի նիստում կարծիք է յայտնում, թէ այդ խնդիրը ամենակարևոր և լուրջ խնդիրներից մինը լինելով, հարկաւոր է, որ Խորհուրդը նրա վրայ առանձին ուշադրութիւն դարձնէ։ Իր նշանակած 360 բուբլին չափազանց չնչին լինելով, հարկաւոր է համարում «գործը հիմնաւորապէս կազմակերպել. իսկ այդ կը լինի այն ժամանակ, երբ Բարեգործական Ընկերութիւնը ինքը գլուխ կանգնի այդ գործին. այն ժամանակ Խորհուրդը կարող է կենտրոնացնել իր ձեռքում այդ նպատակով որոշուած բոլոր միջոցները»։ Մասնաւորապէս Խորհուրդը ի նկատի ունէր այն 2000 բուբ. գումարը, որ մնացել էր հայոց առաջին ուսուցչական ժողովից և գտնվում էր այդ ժողովի կարգադրիչ յանձնաժողովի ձեռքում։ Եւ Խորհուրդը որոշում է դիմել կաթողիկոսական տեղապահ Երեմիա արքեպիսկոպոսին «և սասնալով Նորին Սրբազնութեան հաճութիւնը, կազմակերպել գործը, կենտրոնացնելով Խորհրդի ձեռքում այն բոլոր գումարները, որոնք յատկացրած են այդ նպատակին» [2]։

Երեմիա արքեպիսկոպոսը, որ շարունակում էր տեղապահական պաշտօնը, քանի որ դեռ չէր եկել Մկրտիչ կաթողիկոսը, մեծ համակրութեամբ է վերաբերվում Խորհրդի մտադրութեան, ուղարկում է օրհնութեան և խրախուսանքի թուղթ ու միաժամանակ առաջարկում է Թիֆ-

---

[1]) «Տեղեկագիր» Կ. Հ. Բ. Ը. 1893, եր 72.

[2]) Սրա. № 10։

լիսի կոնսիստորիային, որ նա ստանայ ուսուցչական ժողովի կարգադրիչ յանձնաժողովից նրա ձեռքում գտնուող ամբողջ գումարը և յանձնէ Խորհրդին։

Խորհուրդը, առանց սպասելու այդ գումարի ստացման, կազմեց մի մանաժողով ուսուցիչների օգնութեան գործը կազմակերպելու համար։ Մանաժողովի անդամներ հրաւիրվում են Յ. Սպենդիարեան, Ա. Բալանթար, Ա. Երիցեան Ս. Մալխասեան և Հ. Առաքելեան։ Երիցեանը հրաժարվում է, իսկ մնացածները սկսում են գործը։

Իր առաջին նիստում, մայիսի 15-ին, մանաժողովը «գտաւ, որ մեր ծխական դպրոցների ուսուցիչների մեծագոյն մասը անկարող է ինքնին ձեռք բերել ուսուցչական ցենզ և շատ քչերն են մինչև այսօր այդ նպատակին հասնելու համար փորձեր արել։ Այդ ուսուցիչները, որպէսզի պետական դպրոցներում քննութիւն տան և ուսուցչութեան իրաւունք ձեռք բերեն, պէտք է կամ թողնեն իրանց անմիջական պարապմունքը, որ միևնոյն է թէ զրկուեն ապրուստից, կամ պէտք է ամարուայ արձակուրդների ժամանակ պատրաստուեն։ Այս պարագայում էս նրանք կը հանդիպեն դժուարութեան, քանի որ զուրկ են որևէ նիւթական միջոցից վարձատրելու իրանց պատրաստող ուսուցիչներին և դասական պիտոյքները հոգալու»։

Միևնոյն ժամանակ նկատի առնելով, որ Խորհուրդը այնքան միջոցներ չունի, որ նպաստներ տայ բոլոր կարօտ ուսուցիչներին անմիջապէս պատրաստուելու, Մանաժողովը կարծիք է յայտնում որ «ներկայ ամարնային արձակուրդների ժամանակ բաւականէ բանալ երեք տեղ կուրսեր, Թիֆլիսում՝ Խորհրդի, Շուշում և Ախալցխայում տեղական վարչութիւնների հսկողութեան տակ. Թիֆլիսում հինգուելի կուրսերի վրայ պէտք կլինի ծախսել մինչև 800 ռուբլի, իսկ Շուշուն և Ախալցխային բաւական է իւրաքանչիւրին տալ 300-ական ռուբլի, ընդամենը 1400 ռ.»։

Ստանալով Խորհրդի հաւանութիւնը, մանաժողովը,

այսպէս է կազմակերպում Թիֆլիսի ամարային կուրսերը. «1) Յանձնել պ. պ. Բրիսաակոր Մելքայելեանին, Արամ Նազարէթեանին, Մելքումեանին և Գիւլնազարեանին պատրաստել ցանկացող ուսուցիչներին մանաւոր դասընթացքներ սարքելով, նշանակելով Յունիսի 20-ից մինչև Օգոստոսի վերջը վարձ երկու ամիս և 10 օրուայ համար մինչև 400 ռուբլի, որպիսի գումարը պարոնները կբաժանեն իրանց մէջ՝ իրանց աշխատութեան համեմատ։ 2) Հոգալ որ գաւառից եկած ուսուցիչները Ներսիսեան կամ ծխական դպրոցներից մէկի մէջ բնակարան ունենան, ևս աշխատութեան համար բոլոր կարևոր պիտոյքները, ինչպէս և դասական առարկաները»։ Գործի ընդհանուր անօրինութիւնը յանձնվում է ընդհանուր ժողովի քարտուղար Խ. Մալումեանին։

Կուրսերը 1893-ի ամառը բացվում են Թիֆլիսում և Ախալցխայում և տալիս են այսպիսի արդիւնք։ Երկուսի վրայ ծախս եղաւ ընդամենը 891 ռ. 46 կոպ. Թիֆլիսում պատրաստուողների թիւն էր 37, Ախալցխայում՝ 8. բացի դրանից, 5 հոգի նպաստներ էին ստացել կուրսերից դուրս պատրաստուելու համար։ Ընդհանուր առմամբ, ուրեմն, 50 հոգի։

Բայց այս օգնութիւնը չնչին էր՝ համեմատութեամբ հարիւրաւոր հայ ուսուցիչների, որոնք մնում էին դեռ անպատրաստ։ Ուստի Խորհուրդը չը բաւականացաւ այս փորձով, վճռեց աւելի լայն կազմակերպութիւն տալ գործին։

Ուսուցչական ժողովի կարգադրիչ Մանուժողովը հրաժարվում էր Խորհրդին յանձնել իր ձեռքում գտնուող գումարը, համարելով Տեղապահի թոյլտուութիւնը անբաւարար։ Այդ պատճառով, երբ Մկրտիչ Ա. Կաթողիկոսը հասաւ Էջմիածին և իր ձեռքն առաւ կառավարութիւնը, Խորհուրդը նրա մօտ ուղարկեց իր քարտուղար Հ. Առաքելեանին այդ հարցի լուծումը խնդրելու համար։ Կաթողիկոսը բարեհա-

ճութեամբ վերաբերուեց Խորհրդի գիտաւորութիւններին, օրհնութեան կոնդակ գրեց Խորհրդին, յանձնարարելու նրան իր ձեռքն առնել ամբողջ գործը. նա էլ կրկնեց Երեմիա արքեպիսկոպոսի կարգադրութիւնը, որ ուսուցչական ժողովի գումարը յանձնուի Խորհրդին։ Կարգադրիչ մասնաժողովը յանձնեց 2000 ռուբլի։

Ուսուցչական Մասնաժողովը կամ, ինչպէս նա ինքն իրանց անուանում էր, իրաւահասութեան (ցենզի) մասնաժողովը, դեկտեմբերի վերջին սաացաւ Խորհրդից առաջարկութիւն կազմակերպել ուսուցչական ցենզի գործը և մշակելով մի ամփոփ ծրագիր, ներկայացնել իրան։ Այդ ժամանակ Մասնաժողովի կազմի մէջ էին մտել նաև Յ. Մելիք-Բէգլարեան Թիֆլիսի թեմի թեմական տեսուչ Մեսրոպ Քահ. Մելեան և Խ. Մալումեան։

Այդ հիման վրայ մշակուած ծրագիրը հետևեալն էր։

«1) Նպատակն է ունենալ մի դպրոց կամ դասընթացներ, որտեղ ցանկացողները և հայոց ծխական դպրոցների այժմեան ուսուցիչները պատրաստուէին գիւղական և ստորին դպրոցների ուսուցչի ցենզ ձեռք բերելու համար քննութիւն տալու։

«2) Դիմել թեմական տեսուչներին, խնդրելով որ հաղորդեն հետևեալ տեղեկութիւնները 1) Քանի՞ ուսուցիչներ կան թեմում, 2) Քանի՞սը դրանցից ցենզ չունին, 3) Ովքե՞ր ցանկանում են ցենզ ձեռք բերել 4) Դրանցից որո՞նք են կամենում գալ Թիֆլիսում պատրաստուել և որո՞նք՝ իրանց տեղերում, 5) այդ ցենզը ձեռք բերել ցանկացողները ո՞րտեղ են ստացել իրենց ուսումը և քանի՞ տարի ուսուցչական պաշտօն են վարել հայոց դպրոցներում»։

Կուրսերը պէտք է լինեն ձմեռային և ամառային, նրանց տեղը պիտի լինի Թիֆլիսը, ուր ամեն յարմարութիւն կարելի է ունենալ այդ գործի յաջողութեան համար։ Մասնաժողովը հարկաւոր էր համարում, որ ուսուցիչներ

պատրաստող դասընթացները ժամանակաւոր հաստատութիւններ չը լինեն, այլ մշտական գոյութիւն պիտի ունենան։

Մանաժողովի այդ ծրագիրը քննելու և գործին վերջնական ձևակերպում տալու համար 1894 թ. մարտի 5-ին Խորհուրդը նիստ կազմեց, որին հրաւիրուած էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան, Ներսիսեան և Յովհաննեան դպրոցների տեսուչները, ընդհանուր ժողովի նախագահ բժ. Նաւասարդեանը։ Այդ Խառն ժողովը որոշեց ուժեղացնել Մանաժողովի կազմը, հրաւիրելով մասնակցելու նրա պարապմունքներին նաև բժ. Նաւասարդեանին և Ներսիսեան դպրոցի ուսուցիչներից երկուսին։ Սակայն քննութեան ենթարկելով Մանաժողովի ծրագիրը, ընդունեց նրան։

Դասընթացը Թիֆլիսում բացվում էր 80 հոգու համար։ Գաւառացի ուսուցիչներին յարմարութիւններ տալու նպատակով որոշուեց դասընթացներ բաց անել և Երևանում ու Ախալցխայում, ընկերութեան տեղական վարչութիւնների ղեկավարութեամբ, եթէ հնար է՝ նաև Շուշում։

Թիֆլիսի կուրսերը կազմակերպելու համար Մանաժողովը պիտի վարձէր ուսուցիչներ և պատրաստութիւններ տեսնէր, նկատի չառնելով նախահաշուի որոշումները, որովհետև Խորհուրդը յանձն էր առնում միջոցներ գտնել, եթէ աւելի ծախսեր պահանջուէին։

Դասընթացը պիտի բացուէր Յովհաննեան դպրոցում, իսկ պատրաստուող ուսանողները պիտի ապրէին Ներսիսեան դպրոցում։

Կատարելով այդ ժողովի որոշումները, Խորհուրդը, մարտի 13-ին ուղարկեց թեմական տեսուչների միջոցով բոլոր ծխական դպրոցներին մի տպագրած յայտարարութիւն, որի մէջ ասում էր, թէ ամարային դասընթացը պիտի բացուի Թիֆլիսում յունիսի 1-ից մինչև օգոստոսի վերջը։ «Դասընթացում պատրաստուողները կըստանան

ձրի ուսում, ընակարան, ծառայ և լուսաւորութիւն։ Զքաւորներն իրանց յատուկ ցանկութեամբ կունենան նաև դրամական նպաստ, երեք ամսուայ ընթացքում 20 ռուբլի և աւելի, եթէ ընկերութեան միջոցները ներեն»։

Խորհուրդն ինքը պիտի ընտրութիւն կատարէր, թէ որ ուսուցիչները կարող են իսկապէս յաջողութեամբ պատրաստուել։ Եւ այդպիսի ընտրութեան համար իր ձեռքի տակ նիւթեր ժողովելու նպատակով, նա նոյն տպագրած թերթի միւս երեսի վրայ դնում էր այն հարցերը, որ մշակել էր Մանսաժողովը։ Իւրաքանչիւր ուսուցիչ պիտի պատասխանէր այդ հարցերին ոչ ուշ՝ քան մայիսի մէկը։

Այս ձևով տեղեկութիւններ հաւաքուեցին Վրաստանի և Երևանի թեմերում [1])։

Գործի պահանջած ծախսերը հայթայթելու համար Խորհուրդը դիմեց նուէրներ հաւաքելու միջոցին։ Նախագահ Անանեանը յանձն առաւ Թիֆլիսում հանգանակութիւն անել։ Նա ինքը նուիրեց 500 ռուբլի և ժողովեց թէ Խորհրդի միւս անդամներից և թէ դրսից 2365 ռուբ. բացի դրանից Բագուի Մարգասիրական ընկերութիւնը տուեց 800 ռուբլի։ Եղան և մի քանի մանր նուէրներ, այնպէս որ Խորհուրդն ունէր իր տրամադրութեան տակ 4923 ռուբլի 76 կոպէկ։

Ամեն ինչ պատրաստ էր, մնում էր ստանալ կառավարութիւնից թոյլտուութիւն։ Այդ գործը յանձնուեց մասնաւոր ըէալական դպրոցի տէր և Մանսաժողովի անդամ Յ. Մէլիք-Բէգլարեանին, որ և դիմեց Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորին, խնդրելով թոյլ տալ Բարեգործական Ընկերութեան Խորհրդին բաց անել իր, Մէլիք-Բէգլարեանի ղեկավարութեամբ, ժամանակաւոր

---

[1]) Խորհրդի գործերում գտնվում են միայն Երևանի թեմի ուսուցիչների տուած պատասխանները, որոնք շատ հետաքրքրական նիւթ են այն ժամանակուայ մեր ծխական դպրոցների դրութիւնը ուսումնասիրելու համար։

մի մասնաւոր ուսումնարանական հասատատութիւն, ուր պիտի հայ ուսուցիչները պատրաստուին քննութիւն տալու և ուսուցչական իրաւունք ստանալու համար։

Մայիսի 31-ի գրութեամբ դիրեկտորը յայտնում էր Մելիք-Բէգլարեանին, թէ ուսումնարանական շրջանի հոգաբարձուն համաձայն է այդ թոյլտուութիւնը տալու, եթէ գործադրուած կը լինեն իր առաջարկած պայմանները։ Այդ պայմանները 7-հատ էին։ Եւ դրանցից գլխաւորներն էին այն, որ կուրսերը պիտի ունենային և վարժոց, ուր պատրաստուող ուսուցիչները պիտի գործնական պարապմունքներ ունենային դասաւանդութեան վերաբերմամբ։ Գլխաւոր ղեկավարութիւնը և հսկողութիւնը պիտի յանձնուեն դպրոցների դիրեկտորին, որ և պիտի ուղղութիւն տար պարապմունքներին։ Նա պիտի նոյնպէս հսկէր կարգ ու կանոնի վրայ և իրաւունք ունէր հեռացնելու ոչ միայն պատրաստուող ուսուցիչներին ու վարժուհիներին, այլ և ղեկավարներին և հարկաւոր դէպքում նոյն իսկ փակել կուրսերը։

Խորհուրդը պաշտօնական գրութեամբ հաղորդեց Մելիք-Բէգլարեանին, թէ ինքը միջոցներ չունի վարժոց պահելու և առհասարակ հոգաբարձուի պահանջած կազմակերպութիւնն իրականացնելու համար։

Այսպէս հրաժարուելով իր ծրագրած դասընթացներից, Խորհուրդը դիմում է մասնաւոր օգնութեան եղանակին։ Թիֆլիսում կազմվում են ուսուցիչների երեք խումբ, որոնք պարապում են ցանկութիւն ունեցող ուսուցիչների և վարժուհիների հետ։ Այդ խմբերին տրվում է նպաստ 858 բուբլի։ Շուշու, Ախալցխայի և Ալէքսանդրապոլի տեղական վարչութիւններին և մի քանի ուրիշ տեղեր ուղարկվում է 1200 բուբլի, որպէսզի պատրաստուել ցանկացող ուսուցիչներին նպաստներ տրուեն։ Այնուհետև Խորհուրդն էլ իր ձեռքով նպաստներ է բաժանում 21 անձանց՝ 662 բուբլի։

Ընդհանուր առմամբ, Խորհուրդը ուսուցչական ցենզի

համար ստանում է 1893 — 1894 թուականներին 5875 ռուբլի 22 կոպէկ և ծախսում է 4409 ռուբլի 97 կոպէկ. հետևեալ տարիները այդ գումարի մնացորդը այլ ևս անկարելի է լինում յատկացնել բուն նպատակին, որովհետև ծխական դպրոցները փակվում են։ Խորհուրդը այդ մնացորդից նպաստներ էր տալիս ուսուցչական ինստիտուտի հայ աշակերտներին։

1899 թուականին, երբ փոփոխութեան ենթարկուեց ընկերութեան կանոնադրութիւնը, Խորհրդի տրամադրութեան տակ գտնվում էր այդ գումարից 522 ռուբ. 25 կոպ.

II

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԱՆ ԳՈՐԾ

ա. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կանոնադրութեան § 2, կէտ 4, ասում էր, որ ընկերութիւնը «Լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ»։

Այս իրաւունքը ընկերութեան գործունէութեան առաջին շրջանում մնաց առանց գործադրութեան, թէև առաջարկութիւններ եղան այդ ուղղով։

1887 թուին Խորհրդի անդամ Ստեփան Զելինսկին (այժմ հանգուցեալ) առաջարկութիւն է մտցնում, որ ընկերութեան անունը տարածելու և գիւղերում անդամ յայտնի կացուցանելու համար՝ հարկաւոր է հրատարակել մի շարք գրքեր ժողովրդական ընթերցանութեան համար։ Բացատրելով իւր առաջարկութիւնը, կարդում ենք Խորհրդի արձանագրութեան մէջ. պ. Զելինսկին ասում է «թէ ինքը գիտէ մասնագէտ անձինք, որոնք յօժար են ի լոյս տալ գրքոյկ-

ների մի որոշ շարք, մինչև իսկ շաբաթական մի տեսակ՝ կէս թերթից մինչև երեք թերթ ծաւալով, օգտակար և դիւրահաս բովանդակութեամբ, նիւթի կողմից պարունակելով՝ վէպ, երկրագործութեան և ընդհանրապէս գիւղատնտեսութեան և արհեստից վերաբերեալ հարկաւոր գիտելիքներ, տարափոխիկ հիւանդութեանց և այլ աղէտների ժամանակ նոցա առաջն առնելու կամ նոցանից փրկուելու խրատներ և այլն։ Իւրաքանչիւր գրքոյկի մէջ ընկերութեան Խորհրդին կը յատկացուի երկու երես՝ ընկերութեան հաշիւների, յայտարարութեանց և այլ հրատարակելի նիւթերի համար»։ Եւ այսպիսի մի գործի համար, Ս. Զելինսկու կարծիքով, բաւական էր օժանդակութիւն Խորհրդի կողմից, տարեկան 400 ռուբլի։

Խորհուրդը որոշում է. «Համակրանքով վերաբերուելով Ս. Զելինսկու առաջարկութեան և ընդունելով նրա օգտակարութիւնը, Խորհուրդն իր միջից ընտրում է պ. պ. Մելիք-Ազարեանցին, Զիգիանեանցին, Զելինսկուն և քարտուղար Եղեկեանին՝ մշակելու գրքերի հրատարակութեան վերաբերմամբ մանրամասն ծրագիր և ներկայացնելու Խորհրդին» [1]։

Մշակուեց ծրագիրը թէ ոչ, գործերից չէ իմացվում։ Իսկ Խորհուրդը այնուհետև երբէք չը վերադարձաւ այս հարցին։

1891 թուի դեկտեմբերի 14-ի նիստում Խորհուրդը լսում է Խաչատուր Մալումեանի առաջարկութիւնը։ Սկսած լինելով ժողովրդական ընթերցանութեան համար մի շարք գրքոյկների հրատարակութիւն, Մալումեանը ներկայացնում էր մինչև այդ լոյս տեսած իր հրատարակութիւնները և խնդրում էր նպաստ «լոյս ընծայելով այն գրքերը, որ ինքը կը ներկայացնէ և Խորհուրդը ընտիր կը ճանաչէ»։

Որոշում. «Խորհուրդը, շատ համակրելի համարելով

[1]) Արձ. № 4.

հանդերձ պ. Մալումեանի առաջարկութեան առարկան, որին ինքն էլ ուզում է իրագործում տալ և սակայն արգելվում է իւր միջոցների չը ներելուն պատճառով, բացասական պատասխան տալ այդ խնդրին» [1]։

Սակայն նոյն նիստում կարդացվում է բժշկապետ Բ. Նաւասարդեանի թուղթը, որի մէջ նա «վերաբծարծելով 1889 թուի արուած առաջարկութիւնը, Խորհրդի կողմից մի տեղեկատու թերթ պարբերաբար հրատարակելու մասին, որ բովանդակէր ոչ միայն ընկերութեան հաշիւներին ու բոլոր գործերին վերաբերեալ հարկաւոր գտուած տեղեկութիւններն ու դրութիւնները, այլ և միւս հայ ընկերութիւններին վերաբերեալ տեղեկութիւններ և նաև ընդհանրապէս Բարեգործութեանը վերաբերեալ յօդուածներ։ Պ. Նաւասարդեանը աւելացնում է՝ եթէ ինքը Խորհուրդը չի բարեհաճի յանձն առնել հրատարակել այդ՝ «Տարազի» խմբագիրը յանձն է առնում իրրև յաւելուած կցել իւր թերթի հետ Բ. Ընկ. Խորհրդից ուղղած բոլոր դրութիւնները, իւրաքանչիւր ամիս և կամ շաբաթ, և տարուայ վերջը թերթահաշուով վարձատրուել։ Անցնելով պահանջելիք ծախսերին, նա առաջարկում է ծածկել ծախսերը, պարտաւորիչ դարձնելով ընկերութեան բոլոր անդամների համար իրենց անդամակցական վճարի վրայ մի-մի բուբլի վերադիր անելով»։

Խորհուրդն ընդունում է առաջարկութիւնը, որոշում է, որ ինքը հրատարակէ այդ տեղեկատուն տարին երեք անգամ, իւրաքանչիւր թիւը մի տպագրական թերթից բաղկացած։ Ծախսը որոշվում է առաջին տարին 200 բուբլի։ Այդ գումարը մտցվում է 1892-ի նախահաշուի մէջ։ Բայց հրատարակութիւնը չէ իրագործվում։

[1]) Արձ. № 20.

Ը. ԳՐԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Խորհրդի անդամ Սաեփան Զելինսկին 1889 թ. հոկտեմբերի 26-ին գրաւոր յայտարարութեամբ դիմում է Խորհրդին, առաջարկելով իրագործել կանոնագրութեան § 2-ի հինգերորդ կէտը։

«Առաջարկում եմ—գրում է նա—հիմնել Թիֆլիսում, ընկերութեան Խորհրդի անմիջական տեսչութեան ներքոյ, մի կենտրոնական գրատուն-ընթերցարան, որը շատ կարեւոր և անհրաժեշտ է գլխաւորապէս երկու տեսակէտից. նախ՝ մեր ազգը չունենալով ոչ մի տեղում հասարակութեանը հեշտ մատչելի մի գրադարան, ուր գիտնականը, ուսումնասէրը և ընթերցասէրը՝ իւրաքանչիւրը կարենար լրացնել իւր պահանջը և կարօտը, ընկերութեան կենտրոնական գրադարանը կ'լրացնէր այդ մեծ պակասութիւնը. երկրորդ՝ ընկերութեան Խորհուրդը կունենար իւր կենտրոնավայրը, ուր կը կարողանար կատարել իւր նիստը ու առհասարակ իւր բոլոր գործավարութիւնը»։

Խորհուրդը, համակրութեամբ վերաբերուելով այդ առաջարկութեան, յանձնարարում է նոյն Զելինսկուն և իր անդամներից Փ. Վարդանեանին և Ն. Տէր-Ղևոնդեանին՝ աւելի մանրամասն մշակել այդ հիմնարկութեան ծրագիրը։

Այդ երեք անձինք դեկտեմբերի 30-ին ներկայացնում են Խորհրդին իրանց զեկուցագիրը, որի մէջ այսպէս են ձևակերպում գրադարան-ընթերցարանի կոչումը և կազմակերպութիւնը։

«Ընդհանուր կրթութեան և ընթերցանութեան պահանջը դէթ մասամբ լրացնելու համար կարելի է գտնել մեր քաղաքում այլ և այլ գրատուններ. բայց մի գրատուն, ուր ամբողջովին ամփոփուած լինէին հայոց գրականութեան և մեր ազգին ու երկրի ուսումնասիրութեան նուիրած օտարալեզու գրուածքները, մեր հին ու նոր ձեռագիրները, նաև կովկասագիտութեան և արևելագիտութեան վերաբերեալ գրաւոր վաստակները, չը կայ ոչ միայն

կովկասում, այլ և ոչ մի ուրիշ տեղ. եւ ահա այդպիսի մի գրատուն է հարկաւոր մեզ։

«Ա՛րդ, ո՞րտեղ աւելի յարմար է հիմնել գրատուն, եթէ ոչ Թիֆլիսի նման բազմաթիւ հայ ժողովուրդ ունցող մի քաղաքում, ռուսարնակ հայերի մտաւոր կենտրոնում, և ո՞վ ամենից առաջ կոչուած է գլուխ բերել այդ մեծ գործը, եթէ ոչ մի ընկերութիւն, որ թէ իւր կանոնագրութեամբ և թէ բարոյապէս պարտական է հոգ տանել այդ մասին։ Ինչ որ մինչև այժմ անձեռնհաս էին կատարել առանձին անհատները, նոյնը կարող է դիւրին իրագործել մեր ընկերութիւնը, որ որպէս օրէնքով հաստատուած մի հաւաքական մարմին, միացնում է իւր մէջ շատերի բարոյական ու նիւթական ուժերը։

«Հիմնուելիք գրատունը կը գտնուի ընկերութեան Խորհրդի անմիջական տեսչութեան ներքոյ և կունենայ հետևեալ բաժինները։

«Առաջին բաժինը կը պարունակի բոլոր հայերէն գրքերն և ըստ կարելոյն ձեռագիրները։

«Երկրորդը կունենայ կովկասագիտութեան և արևելագիտութեան վերաբերեալ գրուածքներն անխտիր ամեն լեզուներով։

«Երրորդը կունենայ օժանդակիչ հրատարակութիւններ, որպիսիք են՝ բառարաններ քարտէզներ, օրէնսգրքեր, կանոնագրութիւններ, օրացոյցներ և այլն։

«Չորրորդը կը բովանդակէ մանկական և ընթերցանութեան դիւրամատչելի հայերէն գրքեր։ Իսկ ընդհանուր գրականութեան և գիտութեան վերաբերեալ օտարլեզու գրքերի համար գրատունը կունենայ մի առանձին բաժին։

«Առաջին երեք բաժնի գրքերը տունը չեն տարուիլ, այլ իւրաքանչիւր ընթերցող նոյն իսկ գրատան ընթերցարանում կ՚օգտուի նրանցից ձրիապէս։ Չորրորդ և խառն բաժնի գրքերը կարելի կըլինի տուն տանել սահմանեալ վճարով, որից գոյանալիք գումարը կաղմի ու մաշուած օրինակների լրացման համար գործ կածուի»։

Նոր բացուելիք հիմնարկութեան այս ծրագրային սկզբունքները միանգամայն համապատասխանում էին զգացուող պահանջին։ Թէ որքան այդ երեք հոգու մտնաժողովը լաւ էր ըմբռնել իր առջև դրած գործի հանգամանքներն ու նպատակը, ցոյց է տալիս այն, որ գրադարանը հիմնուեց հէնց այդ մատնանշած հիմունքների վրայ։

Խորհուրդը, սկզբունքով պարզուած համարելով այդ հարցը, 1890 թուականի իր նախահշուի մէջ մտցրեց 800 ռուբլի գրադարանի համար։ Նոյն քանակութեամբ գումարներ նա նշանակում է և հետեւեալ երկու տարիները։ Այսպիսով կազմվում է գրադարանի, այսպէս ասած, մայր գումարը։

1892 թուականի ապրիլի 20-ին Խորհուրդը դիմում է Թիֆլիսի նահանգապետին խնդրելով թոյլ տալ բանալ գրադարան-ընթերցարան։ Այդ թոյլատուութիւնը նահանգապետը տալիս է մայիսին անձնապէս Խորհրդի նախագահ Ալէքսանդր Անանեանցին, որև նշանակվում է պատասխանատու անձ։

Մինչև այդ, մշակվում է գրադարան-ընթերցարանի կանոնադրութիւնը, որև 1893 թ. մայիսի 30-ին ընդհանուր ժողովի քննութեան առարկայ դարձաւ. ժողովը ընտրեց 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով՝ կանոնադրութեան նախագիծը քննելու համար։

Վերջնականապէս կանոնադրութիւնը հաստատուեց ընդհանուր ժողովի կողմից 1894 թ. յունիսի 2-ին հետեւեալ ձևով։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ - ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

1) Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կենտրոնական-Մատենադարան-ընթերցարանը, որ գտնվում է Թիֆլիսում, բաղկացած է երկու մասից՝ հիմնական և շարժական։

2) Մատենադարան-ընթերցարանի հիմնական մասը բովանդակում է իր մէջ. ա) ամեն տեսակ հայերէն հին և նոր տպագրութիւններ. բ) հայագիտութեան, կովկասագիտութեան և առհա-

սարակ արեւելագիտութեան նպաստող հրատարակութիւններ՝ թէ սուսերէն և թէ այլ լեզուներով. գ) ընդհանրապէս գիտութեան ամեն ճիւղերի վերաբերեալ ընտիր երկեր. դ) բառարաններ, օրէնսգրքեր, ալբոմներ, քարտէզներ, պատկերներ, գրացուցակներ և այլն և ե) ձեռագիրներ ու գրաւոր յիշատակարաններ։

Ծանօթ. ա) այս մասում գտնվում են հին գրամների ու կնիքների ժողովածուն։ Պարտաւորիչ չէ ունենալ մատենադարան-ընթերցարանում հայերէն այն գրքերը, որոնք անփոփոխ արտատպութիւն են նախընթաց տպագրութիւնների։

Ծանօթ. բ) Իրրև բացառութիւն մատենադարան-ընթերցարանի այս մասից կարող են հրատարակութիւններ և իրեր ուղարկուել զիտական հասատատութիւններին՝ նրանց գրաւոր խնդրի համաձայն, ընկերութեան Խորհրդի բարեհայեցողութեամբ։

3) Մատենադարան-ընթերցարանի հիմնական մասի որև է գիրք կամ յիշատակարան և կամ հրատարակութիւն դուրս տալը արգելուած է։

4) Մատենադարան-ընթերցարանի շարժական մասը բովանդակում է իր մէջ. ա) մանկական գրքեր. բ) մանկավարժական հրատարակութիւններ. գ) աշխարհարար և գրարտ գրքեր. դ) դասական գրականութեան ընտիր երկեր՝ սուսերէն և այլ լեզուներով. ե) առհասարակ հանրակրթական գրքեր և զ) օժանդակիչ հրատարակութիւններ (բառարաններ, օրացոյցներ, կանոնագրութիւններ, գրացուցակներ, օրէնսգրքեր, քարտէզներ և այլն)։

5) Շարժական մասից գրքեր (բացառութեամբ օժանդակիչ հրատարակութիւնների) դուրս տանելու պայմաններն, վճարելիք տուրքը սահմանում է ընկերութեան Խորհուրդը առանձին հրահանգով, ինչպէս և մատենադարան-ընթերցարանի թէ հիմնական և թէ շարժական մասերում պարապելու պայմանները։

6) Մատենադարան-ընթերցարանը գտնվում է Խորհրդի կառավարութեան, հսկողութեան և պատասխանատվութեան ներքոյ։

7) Մատենադարան-ընթերցարանի անմիջական կառավարութիւնը Խորհուրդը յանձնում է իր անդամներից կամ ընկերութեան անդամներից մէկին՝ ըստ իր հայեցողութեան, որին, եթէ հարկաւոր համարի, կարող է և ռոճիկ նշանակել։

8) Կառավարիչն է վարձում և արձակում մատենադարան-ընթերցարանի սպասաւորներին։

9) Մատենադարան-ընթերցարանը ունի և գրապահ, որին ընտրում է և արձակում Խորհուրդը, կանխապէս լսելով կառավարչի կարծիքը։

10) Ընդհանուր ժողովը ընտրում է մի յանձնաժողով մատենադարան-ընթերցարանի համար պնուելիք հրատարակութիւնները, գրաւոր յիշատակարանները և իրերը՝ գիտական և հնագիտական՝ որոշելու համար (տես § 2)։ Յանձնաժողովը կանխօրէն առաջարկում է իր որոշումները Խորհրդի վաւերացման։

11) Մատենադարան-ընթերցարանի յանձնաժողովը ընտրվում է մի տարի ժամանակով և բաղկանում է 7 հոգուց, որոնցից հնգին ընտրում է ընկերութեան Ընդհանուր ժողովը։ Խորհրդի կողմից մատենադարան-ընթերցարանի պատասխանատու անձը և մատենադարան-ընթերցարանի կառավարիչը 'ի պաշտօնէ համարվում են յանձնաժողովի անդամներ։

12) Յանձնաժողովի նիստեր հրաւիրում է պատասխանատու անձը, առնուազն երկու ամիսը մի անգամ։

Յանձնաժողովի նիստերին նախագահում է մատենադարան-ընթերցարանի համար պատասխանատու անձը։

Պատասխանատու անձի բացակայութեան դէպքում յանձնաժողովի նիստ է հրաւիրում և նիստերին նախագահում է կառավարիչը։

13) Մատենադարան-ընթերցարանի կառավարութեան ներքին կանոնագիրը, բացուելու և փակուելու ժամերը, ընթերցողների և գրապահի համար որոշ պարտաւորիչ հրահանգներ և կանոններ սահմանելը, ըստ ամենայնի պատկանում է Խորհրդին։

14) Խորհուրդը ներկայացնում է ընկերութեան Ընդհանուր ժողովին իւրաքանչիւր տարի իր ընդհանուր նախահաշուի և հաշուի հետ՝ ա) մատենադարան-ընթերցարանի տարեկան տեղեկագիրը. բ) մատենադարան-ընթերցարանի նախահաշիւը և գ) մատենադարան-ընթերցարանի կանոնադրութեան վերաբերեալ փոփոխութիւնները։

15) Խորհուրդը մատենադարան-ընթերցարանի վերաբերեալ խնդիրներն վճռում է կառավարչի կարծիքը լսելուց յետոյ։

16) Խորհուրդը ապահովագրում է մատենադարան-ընթերցարանը հրդեհից։

17) Խորհուրդը որոշում է, թէ յանձնաժողովը տարուայ ընթացքում ինչ գումարի դիրք կարող է դնել իր հայեցողութեամբ։

18) Խորհուրդը անօրինում է տարուայ ընթացքում, երբ և կամենայ դնել և ստուգել մատենադարան-ընթերցարանի վիճակը։

19) Գրապահի պարտաւորութիւններն են՝ ա) գրքեր տալ ընթերցողներին և յետ ստանալ նրանցից. բ) կազմել գրացուցակ-

ներ. գ) արձանագրել վիճակագրական տեղեկութիւններ՝ Խորհրդի սահմանած ձևերի համեմատ. դ) կազմել տալ, թուահամարել և դրոշմել մատենադարան-ընթերցարանի բոլոր գրքերը, ձեռագիրները, յիշատակարանները, պատկերները և այլ՝ Խորհրդի սահմանած կարգով. ե) հսկել մատենադարան-ընթերցարանի մաքրութեան և ներքին բարեկարգութեան։

20) Մատենադարան-ընթերցարանը պարտաւոր է ունենալ՝ ա) մայր ցուցակ (ինվենտար). բ) սիստեմատիկական գրացուցակ. գ) հեղինակների գրքերի այբբենական ցուցակ. դ) ընթերցողների ցուցակ. ե) շարժական ցուցակ. զ) մատեան վիճակագրական տեղեկութիւնների համար և է) նկատողութիւնների մատեան։

Մատեանները պիտի լինին ժապաւինած և դրոշմած։

21) Մատենադարան-ընթերցարանը ունի սեպհական դրոշմը։

Գրադարան-ընթերցարանը բացվում է 1894 թ. սեպտեմբերի 1-ին։ Նրա շարժական մասը արդէն մասամբ կազմակերպուած էր։ Դեռ 1893 թ. իշխանուհի օրիորդ Սոֆիա-Արղութեան Երկայնաբազուկը նուիրել էր ընկերութեան իւր մասնաւոր գրադարանը, որ բաղկացած էր 2536 կտոր զանազան գրքերից։ Այդ նուէրն էլ դարձաւ նոր բացուած գրադարանի շարժական մասի հիմքը։

Խորհրդի նախագահ Անանեանը պատասխանատու անձի իր պարտաւորութիւնները յանձնեց Խորհրդի քարտուղար Հ. Առաքելեանին, որ այսպիսով դարձաւ նախագահ գրադարանական այն Մասնաժողովի, որ ընտրուած էր ընդհանուր ժողովի կողմից [1])։ Մասնաժողովը եռանդուն դիմումներով նուէրներ ստացաւ և այլ բազմաթիւ անձերից։ Այնպէս որ 1895 թ. գրադարանն ունէր իր մէջ նուիրուած գրքեր 3715 կտոր։ Երկրորդ տարում նուէր ստացուեց 229 կտոր, երրորդ տարին՝ 449, չորրորդ տարին՝ 25 կտոր։

Առաջին տարին ընկերութեան միջոցներով գնուած

---

[1]) 1896 թ. դեկտեմբերի 1-ից գրադարան-ընթերցարանի կառավարիչ է նշանակուել Խորհրդի անդամ բժ. Վ. Արծրունին, որ վարել է այդ պաշտօնը մինչև 1898 թ. մայիսը. այնուհետև կառավարիչ եղել է փոխ-անդամ Յ. Մելիք-Բախտամեանը առաջին տարին։

են Թիֆլիսում և Վիեննայում—կովկասագիտութեան, արևելագիտութեան, մասնաւորապէս հայագիտութեան վերաբերեալ գրքեր հայերէն և օտար լեզուներով, ինչպէս նաև հայերէն հին և նոր տպագրութիւններ, ընդամենը 2052 ր. արժողութեամբ. երկրորդ տարին՝ նոյն տեսակ գրքեր 260 ր. արժողութեամբ, երրորդ տարին՝ գրքեր գնուած են գլխաւորապէս շարժական մասի համար 334 ր. արժողութեամբ, իսկ չորրորդ տարին՝ հիմնական և շարժական բաժինների համար 127 ռուբ. արժողութեամբ։

Ընթերցարանն առաջին տարին ստանում էր 34 պարբերական հրատարակութիւններ (լրագիր ամսագիր, հանդէս), որոնցից 12-ը ձրի, մնացածները կամ գեղջով կամ միայն ճանապարհածախսը վճարելով։ Երկրորդ տարին՝ 38 հատ, երրորդ տարին 37 հատ, իսկ չորրորդ տարին՝ 43 հատ։

Գրադարան-ընթերցարանի չորս ամեայ, գործունէութեան մասին հետաքրքիր տեղեկութիւններն ենք բերում, քաղելով Խոբհրդի անդամ Փ. Վարդազարեանի զրաւոր զեկուցումից, որ կազմուած է 1898 թ. նոյեմբերի 13-ին։

Գրադարանի մէջ հաշվում էր 6257 հատ գիրք, բայց 1897-ին կարգի բերելուց, հին գրքերը դատելուց յետոյ երևաց, որ կայ ընդամենը 3400 օրինակ։

Այդ թուից 1100 հատ հիմնական բաժնում, որոնք դուրս էին տրվում, 850 հատ զանազան ամսագրերից կազմած ժողովածուներ, իսկ մնացած 1450 հատը զանազան բովանդակութեամբ։

Չորս տարուայ ընթացքում գրքերի և պարբերական հրատարակութիւնների վրայ ծախսուած է 4460 ռուբ. 74 կոպ., բնակարանի, գրատեղի, ծառայի, և այլն 4598 ռուբ. 43 կոպէկ։ Մուտք եղել է ընդամենը 437 ռուբ. 34 կոպ. Միջին թուով իւրաքանչիւր օր տուն է տարուած կարդալու 5 գիրք։

Այսքան թոյլ գործունէութիւնն ի նկատի ունենալով, Փ. Վարդազարեանը առաջարկում էր փակել գրադարանի

շարժական մասը, պահել միայն հիմնականը, իսկ այսպիսով խնայուած գումարը յատկացնել ուրիշ գրադարաններին, կամ կարօտ աշակերտներին ու տառապեալներին։

Փակելու հարցը մերժվում է, բայց հետևեալ 1899 թ. գրադարան-ընթերցարանը ինքն իրան փակվում է, որովհետև փոփոխվում է ընկերութեան կանոնադրութիւնը։

III

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏՆԱՆԿՆԵՐԻՆ

Իր գործունէութեան սկզբից Խարհուրդը առանձին եռանդ չէ ցոյց տալիս սովորական աղքատախնամութեան վերաբերմամբ։

Նախահաշիւների մէջ նա այդ նպատակին յատկացնում էր սովորաբար փոքրիկ գումարներ։ Այսպէս, առաջին տարին «թշուառներ, կարօտեալներ, պանդուխտներ, և այլն» անունով նպաստ ստանում են 6 հոգի—82 ր., երկրորդ տարին՝ 5 հոգի—86 ռուբլի, երրորդ տարին՝ 12 հոգի—136 ռուբլի։ Հետևեալ տարիներն էլ այդպիսի չնչին գումարներ են նշանակվում. 1892-ին և 1893-ին նախահաշուով նշանակուած էր 160 ռուբլի, 1894-ին 300 ռուբլի, 1895-ին 136 ռուբլի, 1896-ին 420 ռուբլի 1897-ին 480 ռուբլի։

Այս վերաբերմունքը դէպի աղքատներն ու տնանկները դժգոհութիւն է յարուցանում հասարակութեան մէջ և լրագրութիւնը յարձակումներ է գործում ընկերութեան դէմ։ 1891 թ. նիսաբերից մէկում Խորհրդի անդամ Բ. Մելիք-Ղարագեօզեանը առաջարկում է ի նկատ առնել այդ յարձակումները և, «համարելով որ այդպիսի շարունակ կրկնուող մի մեղադրութիւն վարանման մէջ է դնում ընկերութեանս տեղական վարչութիւնները և ժողովրդին հետզհետէ ընկերութիւնից սառեցնելու մի արգասի է առաջ

բերում միայն», կարևոր է համարում, որ այս առիթով Խորհուրդը պաշտօնական բացատրութիւն տայ։ Այդ բացատրութիւնը տրվում է նոյն թուին տեղական վարչութիւններին ուղղած շրջաբերականի մէջ։

Շրջաբերականը, առաջ բերելով կանոնադրութեան այն կէտերը, որոնց մէջ բովանդակուած է ընկերութեան գործունէութիւնը, ասում է...

«Այստեղ օգնութիւն հասցնել նիւթականապէս որոշվում է միայն ժողովրդական հանուր ազէտների ժամանակ։ Ընկերութեան անդամներից շատերը միչև անդամ այնքան բառացի են ցանկանում հասկանալ այս վերջին կէտը, որ թէ ընդհանուր ժողովների ժամանակ և թէ մասնաւոր խօսակցութիւնների միջոցին՝ առաջարկում են խոսքաւ հանել նախահաշիւներից տառապեալների դումարը... Այս այսպէս լինելուց յետոյ, բոլորովին անտեղի են այն յարձակումները, որոնք կատարվում են Ընկերութեան գործունէութեան յիշատակած կէտի վերաբերմամբ» [1]։

IV

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

ա) ՄՇԱԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1882 թ. մայիսի 5-ին «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին ուղարկում է Խորհրդին հետևեալ նամակը.

«Այս օրերս ներկայացան ինձ մի քանի մշեցի մշակներ, որոնք յայտնեցին ինձ, թէ դիտաւորութիւն ունին կազմել մշակների,—իրանց ընկերների,—գլխաւորապէս մշեցիների համար մի տեսակ փոխադարձ օգնութեան գանձարան, 5 կոպէկ շաբաթական անդամական վճարով։ Նրանք բերեցին մինչև անդամ իրանց գրած կանոնադրութիւնը, որ, ի հարկ է շատ թերի է։

«Նրանց մտադրուած ընկերութեան նպատակն է օգնութիւն

[1]) Արձ. № 6.

հասցնել իրանց ընկերներին, որոնք կամ հիւանդ են, կամ ազքատ են, կամ կամենում են վերադառնալ հայրենիքը և ճանապարհի փող չունին, կամ վերջապէս իրանց հաշուով թաղել իրանց մեռած, ազքատ ընկերներին։

«Դիտենալով, որ այդ տեսակ մի ընկերութիւն հիմնելու համար բաւական դժուարութիւն կը լինի, կառավարութիւնից թոյլտուութիւն ստանալու համար, և, լսած լինելով, որ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը դիտաւորութիւն ունէր հիմնել քաղաքիս մշակների համար մի ապաստարան,— ես համարձակվում եմ հեռևեալ առաջարկութիւնն անել Ընկերութեան Խորհրդին։

«Արդեօք չէ՞ր կարելի, որ Ընկերութիւնը յանձն առնէր միացնել այդ մշակների ապաստարանի գործի հետ կամ առհասարակ վերցնէր իր հովանաւորութեան տակ մշակների այդ ընկերութիւնը, քանի որ Բարեգործական Ընկերութեանը աւելի հեշտ է ստանալ կառավարութեան հրամանը այդ տեսակ ձեռնարկութեան համար։

Իսկ մօտ եկած մշակները յայտնել են նոյնպէս, որ իրանց կասսայի գումարի մեծանալուն պէս, նրանք դիտաւորութիւն ունեն և մշակների համար ճաշարաններ բանալ»։

Ինչպէս երևում է առաջարկուած կանոնագրութեան նախագծից, դա իսկապէս առանձին մի ընկերութիւն էր, իր ընդհանուր ժողովներով, իր միմիական վարչութեամբ։ Այդ ընկերութիւնը միայն պիտի գտնուէր Բարեգործական Ընկերութեան հովանաւորութեան տակ և իր դրամական միջոցները պահէր Խորհրդի գանձարանում։

Խորհուրդը, ինչպէս ինքն էր գրում Արծրունուն, «մեծ յօժարութեամբ և շնորհակալութեամբ կարդաց» այդ առաջարկութիւնը։ Նա իր հեռևեալ նիստին հրաւիրում է թէ Գրիգոր Արծրունուն և թէ մշեցի մշակների ներկայացուցիչներին, որպէս զի միասին քննեն և խմբագրեն կանոնագրութիւնը։ Այնուհետև Խորհուրդը դարձեալ խորհրդակցութեան է կանչում մշեցիներին։ Բանակցութիւնների գլխաւոր առարկան այն էր, որ Խորհուրդը գտնում էր թէ ծրագրուող ընկերութիւնը յատկապէս մշեցի մշակների

համար է, ուստի և նրա հաստատությունը կարող է արգելքների հանդիպել։ Այդ արգելքները վերացնելու համար Խորհուրդն առաջարկում էր, որ ընկերությունը լինի ոչ թէ բացառապէս մշեցի մշակների համար, այլ ընդհանրապէս հայ մշակների։

Այս ուղղությամբ համաձայնություն կայանում է։ Նոր խմբագրուած կանոնադրությունը առաջարկվում է Ընդհանուր ժողովին, որ 1882 թ. յունիսի 13-ի նիստում «համակրությամբ ընդունեց մշեցի մշակների ընկերությունը Թիֆլիսում հիմնելու խնդիրը, բայց առանց կարդալու Խորհրդից ներկայացրած այդ ընկերության կանոնադրության նախագիծը, որոշեց առաջարկել Խորհրդին նախ հաստատել տալ այդ նախագիծը կառավարության կողմից և յետոյ ներկայացնել Ընդհանուր ժողովի քննության» [1])։

Կանոնադրությունը թարգմանվում է ռուսերէն, բայց թէ յետոյ ինչ է լինում,—այդ մասին տեղեկություն չը կայ Խորհրդի գործերի մէջ՝ ընկերությունը չի հիմնուել։

բ. ԱՐՀԵՍՏՆԵՐ

Կանոնադրության § 2-ի երկրորդ կէտը տրամադրում է, որ Ընկերությունը նպաստում է արհեստների տարածման, Այս նպատակի իրագործումը Խորհուրդը համարել է այն, որ ամսական նպաստ ստացող աշակերտների թւում կան և այնպիսիները, որոնք սովորում են Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում։

Սակայն մի երկու անգամ փորձ է եղել, որ Խորհուրդը ուրիշ միջոցներով էլ նպաստէ արհեստների տարածման և այդ փորձերը մնացել են լոկ ծրագրային դրության մէջ։

1885 թ. նոյեմբերի 8-ին Խորհրդի անդամ Գէորգ Աքիմեանը մի ընդարձակ դրաւոր առաջարկության մէջ բացատրելով թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել աղ-

[1]) Արձ. № 5.

քաղաքութեան դէմ կռուելու համար, մասնաւորապէս էր անում, թէ այդ միջոցների մէջ նախապատուութիւն պէտք է տալ աղքատ մարդկանց արհեստներ սովորեցնելուն։ Յիշեցնելով թէ որքան աղքատ երեխաներ մնում են փողոցում, չը կարողանալով ոչ ուսում ստանալ և ոչ որևէ արհեստ սովորել. նա ասում էր։

«Ես կարծում եմ, որ մեր ընկերութիւնը բազմաթիւ ընտանեաց բախտաւորութեան պատճառ կարող է դառնալ առանց զոհաբերութիւն անելու, եթէ ինքը մի քանի արհեստանոց բանայ։ Առ այժմ ես առաջարկում եմ երեք արհեստանոց և այնպիսիք, որոնց բանալու համար ոչինչ ծախս հարկաւոր չէ, բացի երկու երեք վարպետի վարձ, ընակարանի վարձ և մի ինչին էլ գումար գործիքներ գնելու համար. տակառագործի (բոնդարի) արհեստանոց, կրօվնլշչիկի արհեստանոց և լուացքարարի արհեստանոց կամ լուացքարարատուն»։

Խորհուրդը մերժում է այս առաջարկութիւնը, «ի նկատ առնելով, որ արհեստանոց պահելը ծանր և բազադրեալ գործ լինելով՝ ոչ բաւական ազատ գումար կայ պահանջեալ ծախքն անելու համար և ոչ Խորհրդի անդամք, սեփական գործերով զբաղուած, ժամանակ ունին այդպիսի ձեռնարկութեան համար անհրաժեշտ խիստ և շարունակ հսկողութիւն անելու, ուրեմն և ստիպմունք կը լինի վարձկան ձեռքերի դիմելու՝ որպէսզի գործը վարեն, և այդ դէպքում դժուար էր երաշխաւորելը թէ այդպիսի ձեռնարկութիւնից դրամական վնաս չի հասնել ընկերութեան» [1])։

Իսկ 1888 թ. մարտի 3-ին մի հետաքրքրական առաջարկութիւն անում է Ընկերութեան անդամ Բալա-բէգ Մելիք-Ղարագեօզեանը (այժմ հանգուցեալ)։

«Մեր Տփխիսի արհեստաւորաց դասը որը, ինչպէս յայտնի է, մօտիկ անցեալում նշանաւոր էր իւր մաքուր բարք ու վարքով և անպայման ազնուութեամբ, վերջերումս հետզհետէ կորցնում է իւր այդ համակրելի յատկութիւնները։ Ես չեմ կարող

[1]) Արձ. № 23.

յառաջ բերել բուն պատճառը, գուցէ կեանքի պայմաններն են այժմ աւելի բարդուած, գուցէ բարի օրինակներն և բարոյական ազդեցութիւններն են պակասել կամ գուցէ ուրիշ այլ և այլ հանգամանքների շնորհիւն է յառաջ եկել այսպիսի վատ ուղղութիւն, սակայն և այնպէս պարզ և ամենքի համար ակներև է այն փաստը, որ արհեստաւորաց դասը, որ գլխաւորապէս բաղկացած է հայերից, արագ քայլերով հեռանում է իւր նախկին բարոյական սկզբունքներից։

«Մեր արհեստաւորները, ի հարկ է, այն աստիճան զարգացած չեն, որ կարող լինին հասկանալ թէ ինչ վնաս են պատճառում նոքա իւրեանց ամբողջութեան շահերին, անտգիտանալով իւրեանց տեխնիքական աշխատութեանց և ձեռագործի մէջ։ Նոքա, մրցելով միմեանց դէմ, սաստիկ վայր են ձգում իրարու հակառակ իւրեանց աշխատութեանց գինը և որպէս զի լրացնեն իւրեանց անխուսափելի կորուստը և վնասը, խարդախութիւններ են գործ դնում թէ նիւթեղէնի և թէ գործելու պակասութեան մէջ. ուրիշ խօսքով ասել, նոքա խարում են յաճախորդներին, վերջիններս էլ զգուշացած առաջին իսկ փորձից, փախուստ են տալիս մեր արհեստաւորներից, որով ի հարկ է կորցնում են նախ և առաջ իրենք արհեստաւորները»։

Այս երևոյթի դէմ մրցելու և հասարակութեան վստահութիւնը դէպի արհեստաւորները վերականգնելու միջոց էր համարում «մրցանակ նշանակել այն արհեստաւորներին, որոնք կը լինէին անաչառապէս արդար և ճշմարիտ դէպի իւրեանց յաճախորդներն և պատուէր տուողները»։

Իր կողմից Մելիք-Ղարագեօզեանը պատրաստակամութիւն էր յայտնում տալու հինգ հարիւր բուբլի, մրցանակ ֆոնդ կազմելու համար։ Այդ գումարը նա խոստանում էր անմիջապէս ներկայացնել, երբ կը մշակուին մրցանակի կանոնները։

Գալով այդ կանոններին, Մելիք-Ղարագեօզեանը ցանկալի էր համարում, որ նրանք կազմուէին «անմիջապէս իւրեանց արհեստաւորաց ձեռքով կամ նոցա և նոցա ներկայացուցչաց մասնակցութեամբ»։ Իր կողմից նա ցանկալի էր համարում. ա) իր 500 ր. մնայ անձեռնմխելի, ինչպէս և այն գումարները, որոնք կարողեն նուիրուել այդ նպա-

տակով, իսկ տոկոսներից տրուին մրցանակներ. բ) այդ դրամագլխին միացնել մի որոշ տոկոս այն փողերից, որ համքարները ստանում են՝ զանազան հանդէսների մասնակցելու համար, նաև զանազան պատահական եկամուտներ. գ) անձեռնմխելի գումարը պէտք է շահեցնել, «տալով մաս-մաս տոկոսով այն արհեստաւորներին, որոնք յայտնի են իւրեանց համեմատաբար աւելի բարեխղճութեամբ, այն էլ կամ արհեստաւորաց ընկերութեան երաշխաւորութեամբ և կամ ուրիշ ապահովութիւնով»։ Մրցանակի իրաւունքը վերապահվում է միայն հայ և վրացի արհեստաւորներին։ «Ցանկալի էր, որքան կարելի է, մեծ արտօնութիւն տրուէր արհեստաւորներին ինքնագործունէութեան մէջ, իսկ Բարեգործական Ընկերութիւնը իւր վերայ պահէր միայն իրրև վճռաբեկ ատեանի իրաւունքը, երբ կը նկատէ կարգադրութիւնների մէջ կանոնների հակառակ ընթացք»։

Սակայն, աւելացնում էր առաջարկութիւն անողը, այս պայմանները ոչինչ արգելք չը պէտք է լինեն, որ խմբագրուին աւելի լաւ նոր կանոններ։ Անփոփոխ պիտի մնայ միայն նպատակը։

Խորհուրդը յայտնում է առաջարկութիւն անողին, թէ ինքը «բոլորովին պատրաստ է» նրա «գեղեցիկ միտքն ընդունելու» բայց առաջարկութեան մէջ կան երկու կէտեր, որոնք չեն համապատասխանում կանոնագրութեան. մէկն այն է, որ մրցանակ պիտի ստանան և վրացի արհեստաւորները, մինչդեռ ընկերութեան գործունէութիւնը միայն հայերի վրայ է տարածվում, իսկ միւսն այն, որ Դրամագլուխը պէտք է շահով տալ արհեստաւորներին, մինչդեռ Խորհուրդը պարտաւոր է իր փողերը պահել միայն Բանկերում։ Եւ առաջարկում էր այս երկու պայմանների փոփոխութիւն։

Մելիք-Դարագեոզեանը, չը գիտենք ինչու, չէ պատասխանում այդ թղթին։ Եւ սրանով էլ վերջանում է այդ առաջարկութիւնը։

V

ԱՂԷՏՆԵՐ

Ընդարձակ չափերով գործադրուել է կանոնադրութեան այն կէտը (§ 2 է), որ ընկերութեան նպատակներից մէկն է դարձնում օգնել «տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ»։

Մինչև 1892 թուականը Կովկասի հայութեան մէջ չկային այնպիսի երևոյթներ, որոնք «ժողովրդական թշուառութիւն» անունը կրէին։ Եւ Խորհուրդը մինչև այդ տարին առիթ չէ ունեցել ցոյց տալ որ և է գործունէութիւն այդ ուղղութեամբ։

Իսկ 1892-ից յետոյ մի շարք ժողովրդական թշուառութիւններ պահանջում են ընկերութեան արտակարգ ուշադրութիւնն ու գործունէութիւնը։

ա. ՅՈՒՆՎԱՐԻ 6-ի ԱՂԷՏԸ

Յայտնի է, որ 1892 թ. Զբօրհնէքի տօնին Թիֆլիսում տեղի ունեցաւ մի սարսափելի աղէտ։ Վանքի եկեղեցուց մինչև գիմացի կղզին շինուած փայտէ ժամանակաւոր կամուրջը կոտրուեց այն բօլէին, երբ նրա վրայով անցնում էր Զբօրհնէքի թափորը։ Բազմաթիւ մարդիկ, մեծագոյն մասամբ չքաւոր դասակարգից, Քուռ գետը թափուեցին, եղան տասնեակ խեղդուածներ և վնասուածներ։

Յունվարի 11-ի նիստում Խորհուրդը որոշում է. աղէտի զոհ գնացածների ընտանիքներին օգնութիւն հասցնելու համար՝ «Ընկերութեան մայր գումարից այդ առարկայի համար նշանակել մի հազար բուբլի, որ և առաջարկել յունվարի 12-ի ընդհանուր ժողովին ի քննութիւն և հաստատութիւն», միաժամանակ յանձնելով իր անդամ-

ներից Բ. Մելիք-Ղարագեոզեանին «հոգալ ձեռք բերել ապէտուածների անուանացուցակը»։—

Ընդհանուր ժողովը յունվարի 22-ին միաձայն հաւանութիւն է տալիս Խորհրդի առաջարկութեան։ Մելիք-Ղարագեոզեանը ներկայացնում է ապէտուածների ցուցակը, և «Խորհուրդը քննելով այդ ցուցակը, գտնում է, որ ՀՀատուածների մի մասը քաղաքից՝ իսկ միւսները Կովկասի այլ և այլ քաղաքներից և գիւղերից են։ Վերջիններից մեծ մասը այն տեղերից են, ուր Ընկերութիւնս ունի տեղական Վարչութիւններ, ուստի Խորհուրդն որոշում է՝ ՀՀատուած ընտանիքների նիւթական վիճակն և կարօտութեան չափն ուսելի մօտիկից իմանալու համար դիմել Ընկերութեանս տեղական վարչութիւններին, որոնց շրջանում կան ապէտուածների ընտանիքներ, հրաւիրելով քաղել հարկաւոր տեղեկութիւնները տառապածների մասին, և մինչև այս առաջիկայ վեսրվար ամսի վերջը հաղորդել Խորհրդին, որպէս զի կարևոր օգնութիւնը մատուցուի նոցա» [1])։

Սակայն Խորհրդի ոչ գործերի և ոչ հաշիւների մէջ մենք չենք գտնում որև է տեղեկութիւն այս օգնութեան մասին։ Գումարը չէ ծախսվում։—

Բ. ԽՕԼԵՐԱ

1892 թ. ամառը Անդրկովկասում երևան եկան և սկսուեց արագ տարածուել խոլերայի համաճարակը։ Ադդարնակութիւնը միանգամայն անպատրաստ էր այս ապէտի դէմ պաշտպանուելու համար։ Սկսուեց իրարանցում, սարսափ էր տիրում վարակուած վայրերում։ Սակայն լրագրութիւնն սկսեց եռանդուն քարոզութիւն, որ հասարակական ուժերը կազմակերպուեն դժբախտութեան դէմ մաքառելու համար։ Ուժեղ կերպով առաջ մղուեց չքաւոր ադդարնակութեան հարցը։ Նրան օգնելը, նրան պատսպարելը, նրան

[1]) Արձ. № 3.

միջոցներ տալը ամենաէական պայմաններից մէկն էր, որ հատաճարակը շատ չը տարածուի, շատ զոհեր չը տանէ։

Յուլիսի 16-ի արտակարգ նիստում Խորհուրդը որոշեց ընկերութեան պահեստի գումարներից փոխարինաբար վերցնել 5000 ռուբլի, հինգ տարուայ ընթացքում վերադարձնելու պայմանով և այդ գումարը գործ ածել բացառապէս գաւառացի ազգաբնակութեան և գլխաւորապէս գիւղացիներին օգնելու համար։ Այդ որոշումը հաստատելու համար նոյն ամսի 22-ին գումարուեց ընդհանուր ժողով, որ և ընդունեց Խորհրդի առաջարկութիւնը։

Գումարը մուրհակով վերցուեց Թիֆլիսի Առևտրական Բանկից և պիտի գործադրուէր Ընկերութեան տեղական վարչութիւնների ձեռքով։ Որոշուեց գումարը բաժանել այսպէս՝ Շուշու և Հին-Նախիջևանի տեղական վարչութիւններին 400-ական ռուբլի, Երևանի, Ախալցխայի, Գօրու, Նոր-Բայազէդի, Կաղզուանի, Կարսի, Վաղարշապատի, Դերբենդի, Ախալքալակի, Թելաւի, Ալէքսանդրապօլի, Արդահանի և Նուխու տեղական վարչութիւններին—200-ական ռուբլի։ Հեռագրով հարց առաջարկուեց այդ վարչութիւններին, թէ ինչպէս են ուզում ստանալ այդ նպաստները, փողով թէ ախտահանիչ և այլ դեղերով։ Ստացած պատասխանների համաձայն ուղարկուեցին նպաստները կամ փողով կամ դեղերով։

Թիֆլիսում Խորհրդի արածը միայն այն էր, որ 12 ռուբլի տուեց մի հիւանդի։

Ամարուայ վերջին խօլերան սաստկացաւ Երևանեան նահանգում և Կարսի շրջանում։ Խորհուրդը օգոստոսի 26-ի նիստում որոշում է այդ կողմերն ուղարկել մի բժշկական—սանիտարական խումբ ազգաբնակութեան անմիջական օգնութիւն հասցնելու համար։ Այդ նպատակին նա յատկացնում է իր մօտ եղած Մացորդից 1200 ռուբլի, որ յետոյ հասցնվում է 1500 ռուբլու։ Խմբի գործունէութիւնը պիտի տևէր մի ամիս։

Գործի ամբողջ կազմակերպութիւնը և ղեկավարութիւնը Խորհուրդը յանձնեց ընդհանուր ժողովի նախագահ բժշկապետ Բ. Նաւասարդեանին, որ և ստացաւ Խորհրդի լիազօրի անունը։

Առողջապահական մասնախումբը բժ. Նաւասարդեանը կազմեց մի բժշկից (Ա. Հայրապետեան) 300 բուբլի ռոճիկով, մի բժիշկ-ուսանողից (Ա. Շխեանց) 100 ր. ռոճիկով մի դեզինֆեկտորից (Ա. Տէր-Գրիգորեան), որ հրաժարուեց ռոճիկից, մի աւագ ֆելդշերից և մի ծառայից։

Մանրամասն ցուցմունքներ և հրահանգներ տալով մասնախմբին, բժ. Նաւասարդեանը ճանապարհ դրեց նրան սեպտեմբերի 4-ին։ Մասնախումբը այցելեց Երևանեան նահանգը և Կարս քաղաքը։ Երևանի նահանգապետը հրամանագրեց իր ստորադրեալ իշխանութիւններին աջակցութիւն ցոյց տալ մասնախմբին, կաթողիկոսական տեղապահ Երեմիա արքեպիսկոպոսը Սինոդի միջոցով նոյն տեսակ հրամաններ ուղարկեց հոգևոր իշխանութիւններին։ Կարսի նահանգապետը թոյլ չտուեց, որ մասնախումբը շրջէ գիւղերը և Խորհուրդ տուեց բաւականանալ Կարսի մէջ գործելով։

«Այսպէս տեղական թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութիւնների աջակցութիւնը վայելելով, մասնախումբը Դիլիջանի վրայով գնաց Երևան, Վաղարշապատ և մօտակայ ու շրջակայ գիւղօրայքը—ինչպէս գրում էր բժ. Նաւասարդեանը իր զեկուցագրի մէջ—մի առ մի այցելելով խօլերայով հիւանդներին և բժշկելով նրանց ու մատակարարելով թէյ, շաքար և փող թէ հիւանդներին և թէ անճար մնացած սրբերին և այրիներին։ Ախատանն արեց բոլոր տները, որոնց մէջ եղել են խօլերայի դէպքեր։ Շարունակելով իր ճանապարհը միշտ քայլ առ քայլ, գիւղից գիւղ և, անցնելով Արագածի ստորոտով, Ապարանի վրայով գնաց Ալեքսանդրապոլ, ապա Կարս և Նոր-Բայազէտ։ Եւ այդ բոլոր տեղերում ելրեք և ոչ ոքից չէ խնայել իր բժշկական և նիւթական օգնութիւնը։ Իսկ ժողովուրդը, ուր էլ գնում էր առողջապահական խումբը, հանդիպում էր նրան սիրով և հաւատով, իբրև Բարեգոր-

ծական Ընկերութեան անդրանիկ առաքեալներին, ամենայն կերպ աշխատում էր կատարել նրա տուած խորհուրդները, իրանց հիւանդների և առողջների համար ստանալով փոքրիկ սրուակներում բուժիչ և նախապաշտպանողական դեղեր և հոգում էր մասնավորի նիւթական պիտոյքը, զրանով դէթ մի փոքր արտայայտելով Բարեգործական Ընկերութեանը, իր խորին երախտագիտութիւնը» [1]։

Թուանշաններով առողջապահական մասնախմբի գործունէութիւնը արտայայտվում էր այսպէս.

Ախտահան արած տների թիւը հասնում է 1700-ի։

Խոլերայով հիւանդների բժշկական օգնութիւն տուած է 70 հոգու։

Զանազան տեսակ հիւանդութիւններով դիմել են բժշկին և դեղեր ու խորհուրդներ ստացել մի քանի հազար հոգի։

Ծախս եղել է մի ամսուայ մէջ. ընդամենը 1389 ր. 65 կոպէկ։

Զմեռը հիւանդութիւնը անհետացաւ։ Բայց ամենքն սպասում էին, որ գարնանը նա նորից պիտի վերսկսուի։ Այդ պատճառով ընկերութեան անդամներից 12 հոգի 1893 թ. փետրվարին տալիս են Խորհրդին գրաւոր յայտարարութիւն, որի մէջ յայտնում են թէ «այլ ևս ոչ մի կասկած չը կայ, որ այս տարին ևս հարկաւոր կը լինի խոլերայի դէմ մաքառելու։ Արդէն զանազան պետական և մասնաւոր հաստատութիւններ, զանազան քաղաքներ սկսել են միջոցներ ձեռք առնել, որպէս զի կազմ և պատրաստ լինին, երբ խոլերան երևան կը դայ»։ Հարկաւոր համարելով, որ այդ տարին ընկերութիւնը իր տեղական ճիւղերով աւելի ևս լայն գործունէութիւն սկսէ ժողովրդին օգնելու համար, 12 անդամները առաջարկում էին, որ տեղեակ անձերից մի մասնաժողով կազմուի այժմից և եթ հարկաւոր պատրաստութիւնը տեսնելու համար։

---

[1]) «Տեղեկագիր» 1892 թ. եր. 32—33։

Առաջարկելով այդ յայտարարութիւնը ընդհանուր ժողովին, Խորհուրդը կարծիք էր յայտնում, որ կարիք չը կայ այժմից իսկ մասնաժողով դումարելու և կարգադրութիւններ անելու, քանի որ Թիֆլիսում պիտի կայանայ բժիշկների համաժողով, որ պիտի մշակէ խոլերայի դէմ մաքառելու միջոցները։ պէտք է դեռ սպասել այդ համաժողովի վերջնական եզրակացութիւններին։ Ընդհանուր ժողովը ընդունում է Խորհրդի այդ կարծիքը։

Բայց ապրիլի 17-ի նիստում Խորհուրդը խնդրում է բժիշկներ Բ. Նաւասարդեանին և Վ. Արծրունուն կազմել մի հրահանգ, որով դեկավարուէին տեղական վարչութիւնները համաճարակի դէմ մաքառելու համար։—

Այդ հրահանգը մշակում են երկու բժիշկները մայիսին։ Տեղական վարչութիւններին յանձնարարվում էր կազմակերպել առողջապահական խմբեր, հոգ տանել մաքրութեան, ախտահանութեան, աղքատներին միջոցներ մատակարարելու մասին։— Բացի դրանից, Խորհուրդը գնում է 1000 օրինակ բժ. Վ. Արծրունու «Խոլերա» գրքոյկից և ուղարկում է տեղական վարչութիւններին։—

գ. ՍՈՎ (1893—1894)

Դեռ 1893 թուի գարնանը Անդրկովկասի մի քանի մասերում, գլխաւորապէս Երևանի նահանգում, շատ զգալի էր դարձել հացահատիկների թանգութիւնը, որ առաջացել էր երաշտից։ Մայիսի 6-ին Ընկերութեան 15 անդամներ թուղթ տուին Խորհրդին, որ ընդհանուր ժողով հրաւիրուի տառապեալ ազգաբնակութեան օգնելու համար։—

Խորհուրդը գտնում է, որ ինքը որ և է ազատ գումար չունի ժողովրդական աղէտի ծանրութիւնը թեթևացնելու համար։ Միակ հնարաւոր միջոցը նա համարում է նուէրներ հաւաքելը և նոյն իսկ խմբագրում է լրագրներում

տալու համար մի յայտարարութիւն, թէ նուէրներ է ընդունում Ալէքսանդրոպոլի, Նոր-Բայազէդի և Էջմիածնի գաւառներում երաշտից վնասուած գիւղացիների օգտին։

15 անդամների յայտարարութիւնը քննվում է ընդհանուր ժողովում մայիսի 23-ին։ Առարկողներ եղան թէ հացի թանգութիւնը, ճիշտ է, կայ, բայց ժամանակաւոր երևոյթ է, սպասվում է որ առաջիկայ հունձը բաւարար կը լինի։ Սակայն մի քանի անդամներ պատասխանում են «որ սովի լինելը անկասկածելի է» [1]։ Մերժելով փոխարինութիւն անելու, առանձին մասնաժողով ընտրելու առաջարկութիւնները, Ընդհանուր ժողովը որոշում է կարօտ գիւղացիներին օգնելու գործը յանձնել Խորհրդին։

Խորհուրդը վճռում է այդ որոշումն «ունենալ ի նկատի» [2]։ Եւ երբ Նոր-Բայազէդի տեղական վարչութիւնը «միջնորդում է օգնութեան հասնել նոյն քաղաքի ազգաբնակութեան չքաւոր դասին, որ հացի թանգութեան պատճառով տառապանքի մէջ է և խնդրում է տալ առնուազն 400 ռուբլի միանուագ նպաստ», Խորհուրդը որոշում է, «յայտնել տեղական վարչութեան, որ Խորհուրդս հնարաւորութիւն չունի որ և է գումար տալ, բացի հանգանակած 53 ռուբլուց» [3]։

Այդ գումարն ուղարկում է Վարչութեան։ Այսքանով էլ բաւականանում է Խորհուրդը 1893-ի ընթացքում։—

Իսկ ժողովրդական աղէտը դնալով մեծ չափեր է ստանում։ Ամարուայ հնձի վրայ դրած յոյսերը չարդարացան և աշնան վերջերին արդէն սով էր Նոր-Բայազէդի, Երևանի, Ալէքսանդրոպոլի գաւառներում։ Վնասուած և կարօտ էր մանաւանդ Կարսի շրջանը։ Այդտեղ դրութիւնը աւելի ևս ծանրանում էր այն պատճառով, որ Թիւրքաց Հայաստանից բազմաթիւ ընտանիքներ, նեղուելով անբեր-

[1]) «Տեղեկագիր» 1893 թ. եր. 80.—
[2]) Արձ. № 19։—
[3]) Արձ. № 19։—

ըութիւնից և քրդերի սովորական հարստահարութիւնից, գաղթում էին Ռուսաց հողը՝ հայ և հանգստութիւն որոնելու համար։ Գաղթականական հոսանքը կանգ առաւ Կարսի շրջանի զանազան կողմերում, ցրուեց գիւղերը, ուր առանց այդ էլ ազգաբնակութիւնը սոված էր։—

Ձմերուայ մեծ մասն անցել էր, երբ դարձեալ Ընկերութեան անդամները հարկադրեցին Խորհրդին, մոռածել ժողովրդական աղէտի մասին։ Նորից 15 հոգի փետրվարի 1-ին (1894) դիմեցին Խորհրդին մի յայտարարութեամբ, որի մէջ գրում էին.

«Լրագրներն և մասնաւոր տեղեկութիւններն արդէն հաստատում են, որ Կարսի և Երևանի նահանգներում կատարեալ սով է տիրում։ Շատ գիւղերի բնակիչներ, ապրուստի պակասութիւնից սոխոլուած այս խիստ ձմեռ ժամանակ թողել են իրանց բնակութիւնները և թափառում են գիւղից գիւղ, քաղաքից քաղաք՝ մի կտոր հաց մուրալու։ Եղել են նոյն իսկ մահուան դէպքեր սովից»։—

Այս անգամ էլ Խորհուրդը այդ յայտարարութիւնն ուղարկում է Ընդհանուր ժողովին, աւելացնելով իր կողմից թէ ինքը որևէ միջոց չունի դրամական օգնութիւն հասցնելու և կարծում է, որ պէտք է դիմել մասնաւոր նուէր հաւաքելու եղանակին։ Ընդհանուր ժողովը չը կարողացաւ ցոյց տալ թէ ինչ միջոցներով կարելի է դրամական նպաստներ հաւաքել և ամբողջ գործը յանձնեց Խորհրդին։

Այս անգամ նուիրաբերութիւնների տրամադրութիւն ստեղծուած էր հասարակութեան մէջ։ Մամուլն արդէն ստանում էր գումարներ, հասարակութիւնը ինքնաբերաբար հանգանակութիւններ էր անում։ Խոշոր գումարներ էին ուղարկվում Ամենայն Հայոց Կաթողիկոսին։—

Խորհուրդը դիմեց Ընկերութեան տեղական ճիւղերին, յայտարարութիւններ տպեց լրագրներում, և զանազան կողմերից նուիրաբերութիւններ սկսեցին ուղարկել նրան։

Այս աղէտի ժամանակ անգնահատելի ծառայութիւն մատուցին ժողովրդին տեղական վարչութիւնները—Ալէքսանդրօպոլի, Կարսի, Կաղզուանի, Երևանի, Նոր-Բայազէդի։ Խորհուրդը միայն նուիրաբերութիւններ էր հաւաքում և ուղարկում էր այդ վարչութիւններին։ Բայց սրանք միայն Խորհրդի ուղարկած նպաստներով չէին գործ տեսնում։ Իրանք էլ անմիջապէս ստանում էին դրսից խոշոր գումարներ։ Ալէքսանդրօպոլում և Կարսում ձրի ճաշարաններ բաց արին, բոլոր վարչութիւնները ալիւր և սերմացու գնեցին ու բաժանեցին սովատանջ գիւղացիներին։

1894 թուականի ընթացքում Խորհուրդն ստացաւ սովեալների օգտին զանազան կողմերից նուէրներ 7543 ր. 94 կոպ. և այդ գումարից ուղարկեց Կարսի Վարչութեան 1817 ր. 20 կոպ., Ալէքսանդրօպոլի վարչութեան 1400 ր., Նոր-Բայազէդի՝ 1600 ր., Կաղզուանի՝ 700 ր. և Երևանի՝ 1000 ր., ընդամենը 6517 ր. 20 կոպ.։ Իսկ իր մօտ մնացած գումարից տուել է մասնաւոր նպաստներ գաղթականներին և աղքատներին Թիֆլիսում։

Բացի սրանից, Խորհրդի միջոցով ստացուել է Ստաւրօպոլից 610 պուդ ցորեն, որ ուղարկուել է տեղական վարչութիւններին։

դ). ԹԻՒՐՔԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

Հազիւ էին մոռացվում 1894-ի սովի հետևանքները, և ահա յանկարծակի, անակընկալ կերպով արձանացաւ ամենահռելին այն աղէտներից, որ երբ և իցէ տեսել է հայ ժողովուրդը։

1894 թուի ամառը տեղի ունեցաւ Սասունի կոտորածը։ Դա արիւնոտ նախերգանքն էր յաջորդ մի շարք տարիների, երբ Թիւրքահայ ժողովուրդը սրի էր քաշվում ոչխարի պէս և տանջեակ հաղարներով դիակներ սփռվում էին Հայաստանի հողերի վրայ։

Այդ ահռելի ազէտները սասնեակ հազարներով փախստականներ քշեցին դէպի աշխարհի դանազան կողմերը։ Կովկասը, իբրև դրացի երկիր, փախստական բազմութեան մեծագոյն մասի ապաստան դարձաւ։ Հայ Ժողովուրդը պիտի իր վրայ վերցնէր ազէտի զոհերին պատսպարելու գործը։

Եւ այդ գործի մէջ մի խոշոր բաժինը վիճակուեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան։

Դեռ 1895 թ. յուլիս ամսին Խորհուրդն ստացաւ Մուշի առաջնորդարանի նամակը, գրուած մայիսի 21-ին, որի մէջ ասուած էր.

«Սասուն-Տալուորիկի ազէտալի, ամենացաւալի և սրտաճմլիկ անցքերն, քառասունէ աւելի գիւղերու այրեցաւեր լինելն, գոյից, ընչից և անասնոց գրաւուիլն և թալանուիլն և կոտորածէ զերծ մնացած այդ վատաբաղդիկներու ի սիրուս աշխարհի մուրացկանութեան համար թափառաշրջելնին համայն ազգայնոց յայտ է արդէն։—

«Ցորչափ կարելի է, Մշոյ քաղաքացիք և գիւղացիներն ապաստան և պարէն տալով ցարդ օգնութեան հասան, բայց մշեցիք ոչ նուազ վիճակակից են գաւառացիներուն, ուստի անհնար է այլևս օգնութեան հասնել ու փրկել սովամահ կորնչելէ այդ անտուն, անտէր, անպատսպար և զրկեալ ամենաթշուառները։

«Հետևանքն բնականաբար մահ պիտի լինէր սովալլուկներուն՝ որք համանգամայն կրած էին մերկութեան և անպատսպարան մնալու դժնդակ ազդեցութիւնքը, ներփակ ցուցակն աւելի պերճախօս պիտի լինի, յորում նշանակուած են սովամահ կորընչողները (մեղի պաշտօնէ հաղորդած) և թէ որչափ կան դեռ անյայտ [1])։

«Արդ նկատելով այդ խեղճերու ամենագառն կացութիւնը, նկատելով մշեցիներու օգնութեան հասնելու անրաւական և անձեռնահաս գտնուիլը և որ առաւելագոյնն է՝ նկատելով որ նոթութիւնն սկսած է իր զոհերն ունենալ՝ կուգամք հրաւէր կարդալ համազգայնոց՝ յանուն կրօնի բարեպաշտական զգացմանց,

---

[1]) Նամակին կցուած է «Աշնանէ ի վեր սովամահ մեռնողներու պաշտօնական ցուցակ», որի մէջ արձանագրուած են 46 անձինք։—

յանուն մարգասիրութեան և յանուն հայութեան, օգնութեան հասնել Սասուն-Տարաւորիկի կոտորածէ զերծ մնացած սովալլուկ թշուառներուն»։—

Խորհուրդը ոչինչ չէր կարող անել, ի հարկ է, քանի որ իր կանոնադրութիւնը չէր թոյլ տալիս Կովկասի սահմաններից դուրս գործ կատարել։ Բայց շուտով թշուառութիւնը ինքն իր ոտով եկաւ մտաւ Կովկասի սահմանները։

Ինչպէս յայտնի է, նոյն 1895-ի աշնանն էր, որ սկսեցին կոտորածներ Տրապիզոնում և շրջակայքում։ Նոյեմբերի 13-ին Թիֆլիսի թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեանցը, ուղղում է Խորհրդին հետեւեալ գրութիւնը.

«Ի հաւասոի աղբերաց տեղեկացայ՝ զի ի մօտ աւուրս գաղթեալ են ի Տաճկահայոց աւելի քան չորս հարիւր անձինս, ըստ մեծի մասին կանայք և մանկտիկ մերկք, քաղցեալք և խպառ զուրկք յամենայն միջոցաց ապրուստի, որոց հարկ է անյապաղ հասուցանել զօգնութիւն, զի մի սովամահ լիցին և զրաւեսցին 'ի կենաց։

«Ծանուցեալ զայսմ աղէտից Վարչութեան Բարեգործական Ընկերութեանդ, խնդրեմ առանց ժամավաճառ լինելոյ հասուցանել ի միջոցաց իւրաց ի ձեռն մասնաճիւղի իւրոյ որ ի Բաթում, թշուառ գաղթական աղգայնոց մերոց զդրամական նպաստ առ ի պահել զնոսա աւուրս ինչ, մինչ ըստ կարգադրութեան իմոյ ի ձեռն քահանայից քաղաքին ժողովեսցին յեկեղեցիս ի բարեպաշտ ժողովրդոց կամաւոր նուէրք յօգուտ նոցա։ Նմին զարաբեալ կարգաւորութենէ իւրմէ յայտնել ինձ, յառելով ի գիտութիւն Վարչութեանդ, թէ յետ ժողովման նուիրաց ունիմ դարձուցանել զփոխադարձաբար ծախեալ դրամս Ընկերութեան»։

Ստանալով այս գրութիւնը, Խորհուրդը գտաւ, որ «Կանոնադրութեան § 2 կէտի հիման վրայ Ընկերութեան վրայ

պարտք է դրուած օգնել տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ. ներկայ հանգամանքում 400 անձանց գաղթականութիւնը Թիւրքիայից, սոված և անպատսպար լինելը արդիւնք է աղէտի, և պէտք է համարուի աղէտ, իսկ գաղթական հայերը գտնուելով Կովկասի սահմաններում, նրանց օգնելը վերաբերում է Ընկերութեան գործունէութեան շրջանին»[1]։ Եւ որոշում է 1500 ռուբլի փոխադրել Բաթումի Տեղական Վարչութեան, յանձնարարելով նրան կազմակերպել օգնութեան գործը ըստ իր բարեհայեցողութեան։

Այսպէս է սկսվում գործը։

Ուշադրութիւնը ամբողջովին կենտրոնացած էր Բաթումում։ Տեղական Վարչութիւնը շուտով ծախսում է այդ գումարը, որովհետև կարիքը մեծ էր։ Սուրէնեան արքեպիսկոպոսը իր գրութիւնից 9 օր յետոյ ուղարկում է Խորհրդին վերոյիշեալ 1500 ռուբլին։ Այդ գումարը ժողովուած էր Թիֆլիսի հայոց եկեղեցիներում։ Մի քանի օրից հետոյ ուղարկում է դարձեալ 1000 ռուբլի՝ Բաթում փոխադրելու համար, նոյնպէս և 200 ռուբլի այն գաղթականների համար, որոնք գալիս են Թիֆլիս։ Իսկ Թիւրքիայից Բաթում փախչողների թիւը գնալով աւելանում էր։ Տեղական Վարչութիւնը աշխատում էր գործ գտնել գործարաններում աշխատանքի ընդունակ տղամարդկանց համար, իսկ անկարողներին բաժանում էր նպաստ։ Խորհուրդը սկսեց հաւաքել և զգեստեղէն ու ուղարկեց Բաթում։

1895 թուին Բաթումում և Թիֆլիսում գաղթականներին օգնելու համար ծախսուեց 2700 ռուբլի։

Կոտորածները Տրապիզոնի վիլայէթում ազդանշան էին աւելի մեծ և համատարած կոտորածների, որոնք տարածուեցին Էրզրումի, Վանի, Դիարբէքիրի վիլայէթներում

[1]) Արձ. № 22.

և ուրիշ հայաբնակ վայրերում։ Եւ գաղթականութիւնը առաւոր չափեր ընդունեց։ Ռուս-թիւրքական սահմանագլխի վրայ երեք գլխաւոր կէտեր կային, ուր խմբվում էին փախստականները—Կարս, Կաղզուան և Իգդիր։ 1896-ի աշնանը այդ տեղերում արդէն հաւաքուել էին հազարաւոր մերկ ու սոված դժբաղդներ, որոնք հետզհետէ առաջ էին անցնում, տարածվում էին Կարսի շրջանի և Արարատեան երկրի գանազան կողմերը։

Նրանց ծայրը հասաւ և Թիֆլիս, Բաքու։ Տեսնելով թէ ինչ ահագին միջոցներ են հարկաւոր այդ թշուառութեան տանջանքները մասամբ ամոքելու համար, Խորհրդի նախագահ Անանեանը սեպտեմբերի 10-ին դիմեց Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով նրա միջնորդութիւնը, որ թոյլատրուի հանգանակութիւն բանալ յօգուտ գաղթականների։ Սակայն կառավարչապետի օգնական գեներալ Տաղիշչիը, ինչպէս հաղորդում էր Թիֆլիսի նահանգապետը, անկարելի համարեց տալ այդ թոյլաւութիւնը։

Այսպիսով Խորհուրդն ինքը չը կարողացաւ հանգանակութիւն բաց անել։ Բայց ազէտի սարսափելի չափերը, ժամուի նկարագրութիւնները ինքնաբերաբար դրդեցին հասարակութեանը օգնութեան դալ գաղթականներին։ Եւ Խորհուրդն սկսեց ստանալ գանազան կողմերից յօժարակամ նուէրներ։ Դրանք խոշոր գումարների հասան և Խորհրդին թոյլ տուին սկսել գործունէութիւնը։

Նախ և առաջ Խորհուրդը իր անդամներից Սամսոն Յարութիւնեանին, բժ. Վ. Արծրունուն, փոխանդամ Յ. Քոչարեանին և քարտուղար Հ. Առաքելեանին յանձնարարեց Թիֆլիսում ապաստանուած գաղթականներին օգնելու գործը։ Այս մասնաժողովը [1]) շրջեց Թիֆլիսի այն թաղերը, ուր ապրում էին գաղթականները, ուսումնասիրեց նը-

[1]) Խորհուրդը յետոյ հրաւիրեց ընկերութեան անդամներից 6 հոգի մասնաժողովին աջակցելու համար։

բանց կացութիւնը և մի շարք միջոցներ ձեռք առաւ նրանց սովից և հիւանդութիւններից ազատելու համար։ Յարմարաւոր բնակարան վարձեց, թեմական առաջնորդից խնդրեց Խորհրդի միջոցով, որ եկեղեցիների բակերում սենեակներ յատկացուին գաղթականներին, կարգադրեց մնունդի հարցը։ Գլխաւոր պակասութիւնը, որից տառապում էին փախստականները, զգեստի և անկողնի բացակայութիւնն էր. Խորհրդի տուած փողով գընուեցին վերմակներ, զգեստ։

Այստեղ, Թիֆլիսում, դեռ գործի համեմատաբար հեշտ մասն էր։ Գաւառներից ստացուող տեղեկութիւնները սարսափելի էին։

Ահա ինչ էր գրում Բաթումի վարչութիւնը հոկտեմբերի 21-ից, «Վերջերում թշուառ գաղթականների հոսանքը դարձեալ շատացաւ։ Այդ թշուառների դրութիւնը անտանելի է, նրանց օրուայ հացի կարօտութիւնը խիստ զգալի է։ Վարչութիւնս իւր սուղ միջոցներով և թէ տեղիս հայ հասարակութիւնը, որ մեծաւ մասամբ կազմուած է բանուոր դասակարգից, անզօր ենք, առանց դրսի օգնութեան, լիովին օգնութեան հասնելու այդ խեղճերին»։

Կարսի յաջորդ Եղիշէ վարդ. Մուրադեանը հոկտեմբերի 23-ից գրում էր.

«Վերադառնալով վիճակիս գիւղերում ապաստան գտած գաղթականներին արածս այցելութիւնից, շտապում եմ հրաւիրել յարգելի Վարչութեանդ լուրջ ուշադրութիւնը այդ դժբաղդների սոսկալի կացութեան վերայ։

«Կարսի նահանգում այժմս ապաստանած են մօտ 4500 հոգի նոր գաղթականներ, որոնք ոչ զգեստ ունին, ոչ ուտեստ և ոչ անկողին։ Ընտանիքներից մեծ մասը զուրկ հասակաւոր աշխատաւոր անդամներից՝ բաղկացած են կանանցից, փոքրահասակ երեխաներից, որոնց տեսքը սարսափ է ազդում այցելուին։ Այժմս վրայ է հասնում տեղւոյս ցրտաշունչ ձմեռը իր կորստաբեր հետևանքներով այդ մերկանդամ թշուառների համար և ստիպում օր առաջ մտածել այդ դժբաղդների դրութեան մասին, որոնց մէջ հէնց

այժմեանից տարածուած են տիֆ, և այլ տարափոխիկ հիւանդութիւններ։ Սարսափելի պիտի լինի այդ թշուառների կացութիւնը, եթէ օր առաջ զգալի օգնութիւն չը հասցնենք նոցա, ուստի սրանով աղերսում եմ յարգելի Վարչութեանդ՝ շտապել օգնութեան, որպէսզի դատապարտուած չը լինենք տեսնելու թէ ինչպէս է մեռնում մեր արիւնակից եղբայրը սովից և ցրտից այն ժամանակ, երբ եղբայրակիցները հազարներ են վատնում շռայլութեան վրայ»։

Կաղզուանի վարչութեան նախագահ բժ. Կաճկաճեանը հոկտեմբերի 31-ից հաղորդում էր.

«Գաղթականների դրութիւնը սարսափելի է, բառիս բուն նշանակութեամբ։ Արճշու գաւառից գաղթողներն համարեա չնչին բացառութեամբ մերկ են և բորիկ, և համարեա թէ ամենքը չունեն անկողին. այստեղ նոքա ստիպուած են չոր գետնի վրայ քնել, որովհետև դժուար է ամենքին անկողնի պիտոյքներ տալ և միայն հիւանդներին կարող ենք լինում մատակարարել յիշեալ պիտոյքները։

«Վարչութեան նախագահը գաւառապետի հետ ի միասին այցելելով բոլոր գիւղերը, ուր մնացած են վերջին ժամանակներում Արճշուց եկած գաղթականներն, գտաւ նոցա կացութիւնն շատ և շատ վատթար։ Մեծ մասամբ բնակվում են ախոռներում, նոյնպէս մերկ և նոյնպէս չոր գետնի վրայ։ Մի քանի գիւղերում պառկած են խոտի վրայ և ծածկուելու ոչինչ չունին... Բնիկ ժողովուրդը սարսափելի. անտարբեր է դէպի թշուառները»։

Իգդիրում Ընկերութիւնը ճիւղ չունէր։ Այնտեղ գաղթականներին օգնելու գործը տանում էր Սուրմալուի գաւառի գործակալ Հմայեակ վարդապետ Արշակունին, որին օգնում էին տեղական ուսուցիչները։ Խորհուրդը յարաբերութիւն սկսեց այդ տեղական գործիչների հետ և նրանցից կազմեց մի խնամատար մանախումբ։

Հոկտեմբերի 20-ին մանախմբի անդամ Աւետիս Ահարոնեանը, ուղարկելով Սուրմալու գաւառի գաղթականների մանրամասն ցուցակը, մի ընդարձակ նամակով բացատրում էր թէ ինչ կացութեան մէջ են գաղթականները և ինչ

է նրանց հարկաւոր։ Յուցակագրուած էին 99 ընտանիք, 775 հոգուց բաղկացած։

«Գաղթականները—գրում էր Սահարոնեանը—մեր գաւառն են եկել առանց բացառութեան մերկ և խպառ կողոպտուած. առաջին եկողները կարողացան Իգդիրից հնոտիներ ստանալ, մնացածները դրանից էլ զուրկ մնացին։ Գիւղերում գոցա տուել են ընակարան (շատերը խիստ անյարմար, խոնաւ), ուտելու հաց, տեղ-տեղ էլ հաւաքել են նրանց համար բաւականին ցորեն։ Իսկ հոցա զգեստի և մանաւանդ անկողնի մասին ոչ ոք չէ հոգացել»։

Լաւ չէր գաղթականների դրութիւնը և Վաղարշապատում, թէև Խրիմեան կաթողիկոսը օգնում էր նրանց։ «Մինչև հոկտեմբերի 22-ը, ինչպէս հաղորդում էր տեղական Վարչութեան նախագահ Օհանջանեանը, Վաղարշապատ մտել էին 1270 հոգի գաղթականներ, որոնց մեծ մասը Կաթողիկոսի կարգադրութեամբ ցրուեցին զանազան տեղեր։ Վաղարշապատում և Էջմիածնայ գաւառում (գիւղերում) կան այժմ 500 հոգի գաղթականներ, որոնց մեծ մասը կազմում են 1 տարեկանից մինչև 14—15 տարեկան երեխաներ և մանուկներ, յեռոյ քանակութեամբ երկրորդ տեղը բռնում են կանայք, իսկ փոքրամասնութիւնը՝ տղամարդիկը»։

Այսպիսով գործի էին հրաւիրվում զլխաւորապէս Կարսի, Կաղզուանի, Վաղարշապատի, Երևանի և մասամբ Աղէքսանդրօպոլի տեղական Վարչութիւնները։ Սակայն այս անգամ Խորհուրդը լոկ նրանց միջոցներ մատակարարողի դերը չէր կատարում։ Օգնութեան գործը շատ բարդ էր, և նրա կազմակերպութիւնը Խորհրդի մէջ էր կենտրոնացած։

Ինչպէս տեսանք, ամենաառաջին կենսական պահանջն էր անկողիններ և զգեստներ հասցնելը։ Թիֆլիսում, Բաքուում և ուրիշ քաղաքներում (մինչև իսկ Ռուսաստանի հայաբնակ վայրերում) հաւաքուեցին ահագին քանակութեամբ հին զգեստներ, գնուեցին կտաւեղէն և այլ ան-

հրաժեշտ կտորներ և այդ բոլորը հակերով ուղարկվում էր Աղստափա, (ուր Խորհուրդը կազմակերպել էր մի փոքրիկ օժանդակող մարմին), այդտեղից էլ Երևան, Իգդիր, Էջմիածին, Կաղզուան, Կարս։

Այնուհետև գալիս էր հիւանդութիւնների դէմ մաքառելու անհրաժեշտութիւնը։ Թիֆլիսում այդ գործը հեշտ կարգադրուեց։ Դաղթականական մասնաժողովը դիմեց Թիֆլիսի քաղաքային բժշկական մասի կառավարիչ բժ. Ստեփանեանին, որ ուրախութեամբ յանձն առաւ դաղթականներին բժշկական օգնութիւն հասցնելու գործը։ Նրա կարգադրութեամբ Թիֆլիսի բոլոր թաղային բժշկները ձրի խնամում էին հիւանդ դաղթականներին, դեղերն էլ ձրի էին տրվում քաղաքի դեղատնից։ 1897 թ. Յունուարից բժ. Նաւասարդեանն էլ սկսեց ձրի բժշկել դաղթականներին թէ իր հիւանդանոցում և թէ տներն այցելելով։ 1897-ին Խորհուրդը բաց արաւ հիւանդանոց Թանդոյեան եկեղեցու բակում։

Դժուարը գաւառներում գործն էր։ Տիֆ և այլ տարափոխիկ հիւանդութիւնները տարածուած էին դաղթականների մէջ։ Խորհուրդը դիմեց Երևանի և Կարսի նահանգապետներին, խնդրելով թոյլ տալ, որ Իգդիրում և Կարսի շրջանում բաց անէ հիւանդանոցներ յատկապէս դաղթականների համար, սակայն չ'ստացաւ թոյլատրութիւն։ Կարսի նահանգապետը յայտնեց Խորհրդին, թէ դաղթականների առողջական դրութիւնը այնքան արդէն բարեկարգուել է, որ յատուկ հիւանդանոցի կարիք չկայ։

1896 թուի ընթացքում Խորհուրդն ստացաւ դաղթականների օգտին 19,253 ր. 32 կոպ.։ Այդ գումարի մէջ կային հետևեալ խոշոր նուիրաբերութիւնները. Ասարխանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը հաւաքել և ուղարկել էր 4000 ռուբլի (հետևեալ տարին նաև 1178 ռուբլի 72 կոպէկ), Գէորգեան ժառանգներ, Ն. Կրասիլնիկեան ժառանգներ, Ե. Փիթոեվ.

ընկերութիւն, Արիսողոմով, Արմաւիրի Տեղական Վարչութիւն — 1000-ական ռուբլի։

1896 թուականի դեկտեմբերի 11-ին կայացաւ Բարձրագոյն հրաման, որով թոյլատրվում էր Ռուսաստանի բոլոր կողմերում բաց անել հանդանակութիւն յօգուտ Թիւրքիայից փախած հայերի, այն պայմանով, որ բոլոր նուիրատվութիւնները ուղարկուեն Կովկասի կառավարչապետին, իսկ օգնութեան գործը յանձնուի կառավարչական օրգաններին։ Այդ կարգադրութեան հիման վրայ, 1897-ի յունվարի 10-ին Կառավարչապետի պաշտօնակատարը հրատարակեց մի շրջաբերական, որի մէջ հրահանգներ էին տրվում Պետական վարչութիւններին նպաստներ հաւաքելու և բաժանելու մասին։

Բարեգործական Ընկերութեան կատարելիք դերը այնուհետև մնում էր այն, որ յատուկ նուէրներ Թիւրքահայ գաղթականների համար նա այլևս չէր ընդունում. գաղթականները այնուհետև նկատվում են լոկ իբրև տառապեալներ, որոնց օգնելու իրաւունքը պարզ որոշուած էր կանոնադրութեան մէջ։ 1897-ի ընթացքում տառապեալներին օգնելու համար նուիրատվութիւններ եղան 15,886 ռ. 62 կոպ.։ Դրանց մէջ ամենախոշորն էր Առաքել Ծառուբեանի նուէրը 10,000 ռուբլի։

Մարտի 28-ի նիստում Խորհրդի նախագահ Ա. Անանեանը զեկուցեց, որ ինքը ստացել է Դանիայի Կոպենհագէն մայրաքաղաքում հաստատած Հայկական նպաստամատոյց Յանձնաժողովից, մի առաջարկութիւն։

«Ս. Հենրիզս, Պետական Խորհրդական և Նորին Վեհափառութեան Դանիայի թագուհու կարինէտի քարտուղարը, մի նամակ ուղղելով Խորհրդի նախագահ պ. Ա. Անանեանին, ներկայ մարտ ամսի 25/13-ից գրած, յայտնում է հետևեալը.—«1896 թուի դեկտեմբեր ամսին Դանիայում կազմուել է մի յանձնաժողով, որի նպատակն է փող խնդրել դանիական ազգից՝ մի փոքր թեթևացնելու համար թշուառ հայերի վիճակը։ Այդ յանձնաժողովը գոր-

ծում է Զելանդիայի եպիսկոպոսի նախագահութեամբ և նրա նպատակն է ամենից առաջ օգնել այն հայերին, որոնք ապաստանարան են գտել ուրիշ երկրներում. իմանալով որ Թիֆլիսում գոյութիւն ունի Հայոց Բարեգործական Ընկերութիւն, Հենրիքսը, որ յանձնաժողովի գանձապահն է, գիմում է յանձնաժողովի անունով պ. Անանեանին իբրև այդ ընկերութեան նախագահի և խնդրում է իմացնել՝ արդեօք արամադիր է Ընկերութիւնը ընդունել մի գումար — 14 հազար ֆրանկ — և բաժանել այն՝ Կովկասում պատսպարուած կարօտեալ հայ գաղթականներին» [1]։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ կառավարչական կարգադրութիւնը, նախագահ Անանեանը, նախ քան պատասխան տալը, գիմում է Թիֆլիսի նահանգապետին և հրահանգ խնդրում։ Նահանգապետը զեկուցանում է այդ մասին կառավարչապետ իշխան Գոլիցինին, որ և թոյլ է տալիս Ընկերութեան ընդունել դանիական նպաստը և գործադրել առաջարկուած պայմաններով։ Ա. Անանեանը իսկոյն հեռագրով յայտնում է Հենրիքսին թէ Ընկերութիւնը ուրախութեամբ ընդունում է դանիական յանձնաժողովի առաջարկութիւնը։ Հենրիքսը երեք նուագում ուղարկում է Անանեանին 17,979 ռուբլի 4 կոպէկ, որ և կազմում է Խորհրդի մէջ առանձին դանիական գումար, նուիրած յատկապէս թիւրքահայ գաղթականներին։

Դանիական յանձնաժողովը, ի միջի այլոց, վճռած է լինում նպաստել, որ հայերը գաղթեն Փոքր Ասիայից, քանի որ նրանց դրութիւնը այդ երկրում լաւ չէ։ Այդ պատճառով նա պայման էր դնում, որ Խորհուրդը այդ գումարից նպաստներ չը տայ այն գաղթականներին, որոնք կամենում են վերադառնալ հայրենիք։ Խորհուրդը այսպէս էլ կարգադրում է։ Դանիական գումարը մաս-մաս ուղարկում է գաւառական վարչութիւններին, ինքն էլ ծախսում է. պահում է առանձին հաշիւ՝ յանձնաժողովին

[1]) Արձ. № 16.

մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու համար, թէ ինչպէս է ծախսուած նրա ուղարկած գումարը։

Կովկասի Կառավարչապետի շրջաբերականի հիման վրայ Իգդիրի տեղական իշխանութիւնը յունվարին դադարեցնում է Հմայեակ վարդապետի նախագահութեամբ գործող խնամակալութեան գործունէութիւնը և խնամակալութիւնը Խորհրդին է ուղարկում իր հաշիւներն ու գրամի մնացորդը։ — Իսկ մարտին Կարսի գինուորական նահանգապետը առաջարկում է Տեղական Վարչութեան՝ գաղթականներին վերաբերեալ բոլոր հաշիւները, նպաստները յանձնել Կարսի ոստիկանապետին։ Խորհրդի գիտութեամբ և թոյլատրութեամբ այդ առաջարկութիւնը կատարվում է և Կարսի վարչութիւնը այլ ևս չէ խառնվում գաղթականների գործի մէջ, իսկ Խորհրդից ստացած գումարների մնացորդը — 3200 ռուբլի — վերադարձնում է Խորհրդին։

Մնացած Տեղական Վարչութիւնները շարունակում են իրանց գործունէութիւնը։ Կարիքը դեռ սուր էր, նորանոր գաղթականներ էին գալիս և Խորհուրդը դանիական գումարի միջոցով կարողանում էր նպաստներ հասցնել օգնութիւն խնդրող Վարչութիւններին։ Բայց աշնանը արդէն Խորհուրդը յանձնարարում էր Վաղարշապատի Վարչութեան, որ գաղթականներին օգնելու համար դիմէ Երեւանի նահանգապետին, քանի որ կառավարութիւնը իր վրայ էր վերցրել գաղթականներին խնամելու գործը։

Թիֆլիսում կազմվում է գաղթականների խնամող յանձնաժողով, որի նախագահն էր նահանգապետի ամուսինը։ Սա դիմում է Խորհրդին և յայտնելով, որ յանձնաժողովը վճռել է պահել Թանդոյեան եկեղեցու բակում նրա բացած հիւանդանոցը, խնդրում է նպաստ։ Եւ Խորհուրդը որոշում է դեկտեմբերից մինչև 1898 թ. ապրիլի 1-ը տալ հիւանդանոցին նպաստ ամսական 150 ռուբլի։ Դեկտեմբերի 11-ի նիստում որոշվում է «առաջիկայ յունվար ամսից պահել 10 մշտական թոշակաւոր գաղթական աշա-

կերտներից թէ Ներսիսեան և թէ այլ դպրոցներում և այդ նպատակով առանձնացնել գաղթականների և տառապեալների գումարից 3000 ռուբլի» [1]։

1897-ի վերջում գաղթականների և տառապեալների գումարից կար մնացորդ, դանիական գումարից 3031 ռուբ. և միւս նուիրատուութիւններից 11793 ռ. 95 կոպ։ Այս վերջին գումարից հանուեց 4800 ռուբ, որ նուիրատու Ա. Ծատուրեանի կամքով միացուեց անձեռնմխելի գումարներին խօլերայի առիթով եղած պարտքը ծածկելու համար։

Հետևեալ տարին ծախսուեց դանիական գումարի մնացորդը ամբողջովին և միւս գումարից՝ տառապեալներին 2300 ռուբլի։ Թիւրքահայ գաղթականութիւնը այնպիսի մի աղէտ չէր, որ կարելի լինէր վերացնել մի յայտնի ժամանակամիջոցում։ Թիւրքահայ տառապեալը այնուհետև էլ իւր ցաւերին դարման անելու համար դիմում էր Բարեգործական Ընկերութեան։

VI

ԱԲՈՎԵԱՆ—ՆԱԶԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

1896 թ. դեկտեմբերի 11-ին Խորհուրդը դիմեց բանաստեղծ Սմբատ Շահզիզին հետևեալ գրութեամբ։

«Խորհուրդս, իմանալով որ Ձեր գրական յօբելեանի առիթով մօտ 8000 ռուբլու մի գումար է ժողովուել հիմնելու մի ֆոնդ հայ գրողներին օգնելու համար, ի նկատի ունենալով որ Թիֆլիսում թէև ջանքեր եղան հիմնել գրողներին օգնելու մի առանձին ընկերութիւն, բայց մինչև այսօր չ'ստացուեց թոյլատուութիւն. ի նկատի ունենալով, որ Բարեգործական Ընկերութիւնը իր կանոնադրութեամբ իրաւունք ունի կատարելու այն, ինչ որ պէտք է կատարէր ծրագրեալ ընկերութիւնը. ի նկատի ունենալով, որ ներկայումս

[1]) Արձ. № 46.

շատ հայ գրողներ անօգնական մնացած, գիտում են զանազան ոչ գրական գրգռմունքների,— որոշեց գիտել Զեզ, մեծապատիւ պարոն, և առաջարկել հետևեալը.— արդեօք Դուք չէ՞ք համաձայնուի յանձնել այդ գումարը Խորհրդին, որը, կազմելով գրական ֆոնդ թէ այդ և թէ ուրիշ գումարներից, որոնք կարող են ստացուել, կը գործադրէր տոկոսիքը հայ գրողներին օգնելու համար համաձայն այն հիմունքների, որոնք կը մշակուեն մանրամասն երկուսակը, այն է՝ Զեզ և Խորհրդիս համաձայնութեամբ»։

Այս գիտումին Շահ-Ազիզը պատասխանում է 1897 թ. փետրուարի 2-ի նամակով, որի մէջ յայտնում է թէ սկզբունքով համաձայն է Խորհրդի առաջարկութեան, սակայն յօբելեանական յանձնաժողովը ցանկալի է համարում կատարել նուիրատուների կամքը, այն է՝ հիմնել առանձին մի ընկերութիւն։ Գուցէ այն, ինչ չէ յաջողուել Թիֆլիսում, յաջողուի Մոսկուայում։ Երբ այս ուղղութեամբ արած ջանքերը բոլորովին ապարդիւն կլինեն, այն ժամանակ միայն կարելի է գումարը յանձնել Բարեգործական Ընկերութեան։

Ս. ՇԱՀ-ԱԶԻԶԵԱՆ

Մի տարուց յետոյ, 1898-ի փետրուարի 10-ին, Շահ-Ազիզը գրում է Խորհրդի նախագահին, թէ առանձին ընկերութիւն կազմելու յոյսերը դուր անցան, ուստի, եթէ Խորհուրդը չէ փոխել իր մտադրութիւնը, ինքը պատրաստ է գումարը անյապաղ ուղարկել նրան։

«Փոխադարձ պայմանագրութիւնը,— ասելացնում է Շահ-Ա-

զիզը,— ոչ մի կերպ չէ կարող արգելք լինել գործին. այդ պայմանները այնքան ևս որոշ են, որքան և պարզ է նոյն ֆոնդի նպատակը, այսինքն.

«ա) Մայր գումարը մասնաւոր բարեգործների զոհաբերութիւններով, որ կարող են լինել ներկայում և ապագայում, մնում է անձեռնմխելի։

«բ) Գումարի տոկոսը միայն տարեցտարի բաժանվում է կարօտեալ դրականագէտներին ըստ անօրէնութեան Բարեգործական Ընկերութեան։

«գ) Խորհուրդը իւր տարեկան հաշուից յետոյ լոկ տեղեկութիւն է տալիս յօրելեարին, թէ ով ինչ է ստացել։

«դ) Եթէ առանձին ֆոնդ հիմնուի Կովկասում, Բարեգործական Ընկերութիւնը պարտաւորվում է յանձնել այն նոր ֆոնդին անձեռնմխելի գումարը։

«ե) Եթէ ժամանակով այլ և այլ հանգամանքների շնորհիւ խափանուի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում, Ընկերութիւնդ պարտաւոր է մայր գումարը աւանդել ազգային հաստատութիւններից մէկին, որպէս մարդասիրական Ընկերութեան Բագում, կամ Գասպարեան Անկելանոցին Մոսկուայում»։

Խորհուրդը չէ ընդունում այս պայմանների միայն չորրորդ կէտը, առարկելով թէ ընդունելու դէպքում ընկերութիւնը կը հանդիսանայ լոկ իբրև աւանդատու և բացի դրանից, ընկերութեան կանոնադրութիւնը թոյլ է տալիս Խորհրդին կատարել այդ գործը ոչ պակաս աջողութեամբ, քան կարող է կատարել մի յատուկ ընկերութիւն։ Խորհուրդը միաժամանակ փոփոխում էր պայմանների հինգերորդ կէտը այն մտքով, որ ընկերութեան փակուելու դէպքում մայր գումարը յանձնվում է ներսիսեան դպրոցին։

Մարտի 14-ի նամակով Շահ-Ազիզը համաձայնութիւն է տալիս։ Իսկ վիճելի չորրորդ կէտի վերաբերմամբ գրում է.

«Այդ յօդուածը դնելով, ես իմ աչքիս առաջ ունեցել եմ այն հանգամանքը, որ նախ նոր ընկերութեան հաստատութիւնը կարող էր դրաւել և նոր գումարներ ազգի բարեգործներից, ինչպէս և մի քանիսը խոստացել էին ինձ այդ և երկրորդ, ես այդ նոր ընկերութիւնով կամենում էի յաւերժացնել երկու նուիրական

անուն հայկական լուսաւորութեան պատմութեան մէջ, այն է՝ Ա. Աբովեանի և Ս. Նազարեանցի, հետևաբար գոցա անունով իսկ կոչելով «Աբովեան-Նազարեան գրականական ֆոնդի կամ նպաստի ընկերութիւն»։ Այժմ այդ խնդիրը թողնելով բաց ապագայի համար, ես հաճաձայն եմ յանձնել գումարը Բարեգործական Ընկերութեան»։

Գալով գումարին, բանաստեղծը գրում էր.

«Գումարը, որ յանձնել է ինձ յօբելեանի ժամանաժողովը, է եօթ հազար ինն հարիւր քառասուն և ինն ռուբլի (7949 ռուբլի)։ Սորա վերայ ես աւելացնում եմ ինձանից 51 ռ. որպէսզի գումարը լինի ուղիղ ութ հազար, առանց կոտորակի։ Որովհետև մեր բանակցութիւնը սկսուել է մի տարի առաջ, ես յանձն եմ առնում դնելու իմ վերայ տուգանք և առաջուց վճարել, իբր թէ նոյն անցած տարուայ տոկոսը 350 ռուբլի և խոնարհաբար կը խնդրեմ Բարեգործական Ընկ. Խորհրդից, որ այդ 350 ռուբլին այժմս իսկ բաժանէ մեր կարօտեալ գրականներին։ Եւ թող—աւելացնում էր նա—գրականների այդ փոքրիկ գումարը, որ է 8000 ռուբլի, որի հիմքը դրել է հայ հասարակութիւնը 1892 թուակ., մնայ լուսաւոր հանգանակ այն զաղափարի, որ ոչ մի ազգ, եթէ նա կամենում է ապրել, այսինքն յետ չընկնել և առաջ գնալ, պէտք է համերաշխաբար ձեռը մեկնէ իւր կարօտեալ գրականներին և նիւթապէս օգնէ դրանց։ Այն ես հաւատում եմ որ մի օր հայկական ազգը, կուլտուրայի դիտակցութեամբ ներշնչած և ամենաազնիւ ձգտողութիւններով զարդացած, աւելիս կ'տայ իր մտաւոր մշակներին, ասելով «Եկայք առիս ամենայն աշխատելք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ»։

Ապրիլի 8-ին նամակով Շահ-Ազիզը խնդրում է որ իր տուած գումարը Խորհուրդը չանուանէ «գրական ֆոնդ Շահ-Ազիզ», ինչպէս այդ երևում է Խորհրդի գրութիւնից, այլ «Աբովեան-Նազարեան գրականական ֆոնդ»։

Նոյն տարուայ օգոստոսի 25-ի նամակով Շահ-Ազիզը յայտնում է Խորհրդին, որ կամենալով ուժեղացնել ֆոնդը, նա իր ունեցածից տալիս է 2000 ռուբլի ի պատիւ իր նախկին աշակերտների։ - Եւ այսպիսով, Բարեգործական Ընկերութիւնը ունենում է իր դրամարկղում

10,000 բուբլի, որի տոկոսները պէտք է տար կարօտ գրողներին։ Աւելացնենք, որ այդ միջոցին «Մշակի» խմբագրութեան միջոցով նուէրներ եղան, յօգուտ ֆոնդի 52 ր. 95 կոպ.։

Ս. Շահ-Ազիզի ուղարկած 350 բուբլի տոկոսը Խորհուրդը յատկացրեց երկու կարօտ գրականագէտի։

Հետևեալ տարին նպաստ ստացան չորս կարօտ գրողներ, իւրաքանչիւրը 100-ական բուբլի, բայց այս տարին էլ Ընկերութեան կանոնագրութիւնը փոխուած էր և գրական ֆոնդն էլ այնուհետև յետ ուղարկուեց Շահ-Ազիզին։

VII

ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Մենք տեսանք թէ ինչպէս սկսուեց կազմուել Ընկերութեան հաստատուն հարստութիւնը, անձեռնմխելի կամ մայր գումարը։ Մշտական անդամների թիւը տարիների ընթացքում մեծացաւ և 1899-ի սկզբում հասնում էր 43-ի (միայն կենտրոնում)։ Դրանց անդամավճարները, ինչպէս գիտենք, անձեռնմխելի գումարներին էին միացվում։

Բացի դրանից, Խորհուրդը ստանում էր և նուէրներ անձեռնմխելի պահելու պայմանով։ Այդ նուէրները բազմաթիւ են, բաղկացած են մանր գումարներից (100—1000 և էլ աւել բուբլի), որ չենք յիշատակի այստեղ։ Այսպիսով կազմուած անձեռնմխելի դրամագլուխը առ մէկը յունվարի 1899 թ. կազմում էր 51,034 բուբլի 34 կոպ.։

Սովորական մանր նուէրների հետ Խորհուրդը այս առաջին շրջանում (1881—1899) ստացել է և խոշոր նուիրաբերութիւններ երկու անգամ, երկուսն էլ կտակներով։

ա) ՅՈՎՍԷՓ ՄՈՒՐԱԴԵԱՆ

1884 թ. փետրվարի 27-ին Փոթիում վախճանուած Յովսէփ Մուրադեանը թողել էր մի կտակ, որով իր կարողութեան մեծագոյն մասը, այն է՝ 7000 ռուբլի, յատկացնում էր Բարեգործական Ընկերութեան։

Ստանալով այդ մասին տեղեկութիւն Գէորգ քահանայ Գնունուց, Խորհուրդը կարգադրում է հոգեհանդիսա կատարել Փոթիում և իր կողմից ներկայացուցիչ է կարգում տեղացի հայերից մէկին։ Հետևեալ տարուայ փետրվարի 1-ին Խորհուրդը ստանում է հանդուցեալի կտակակատար Գաբրիէլ Խատիսեանից կըտակուած 7000 ռուբլին ամբողջովին։ Մուրադեանի մահուան առաջին տարելիցին Խորհուրդը հանդիսաւոր հոգեհանդիսա է կատարում Վանքի եկեղեցում, իսկ երկրորդ տարելիցին, ծախսելով մօտ 400 ռուբլի, մարմարեայ յուշարձան է դնում հանդուցեալի գերեզմանի վրայ՝ «Յովսէփ Մուրադեանին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնից» ոսկեգիր արձանագրութեամբ։

Ց. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Ընկ. առաջին քարեար

Արձանի բացմանը Խորհրդի կողմից ներկայացուցիչ է նշանակվում գնդապետ Ալէքսանդր Մելիք-Հայկազեանը, իսկ հանդէսը կատարում է Խորհրդի խնդրանքով Քութայիսից Փոթի գնացած Դաւիթ աւագ քահանայ Եարալեան։

Սա առաջին խոշոր նուէրն էր, որ ստանում էր Ընկերութիւնը։—

բ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆ

1897 թ. ապրիլի 27-ին Վանքի եկեղեցու միաբան Գիւտ քահանայ Աղանեանցը գրում է Խորհրդին.

«Իմ ժողովուրդ տփխիսաքաղաքացի Բ. կարգի վաճառական Յովհաննէս Դաւթեան Խուդադեանցը վախճանուելով ամսոյս 25/26-ի գիշերը՝ թողեց մի կտակ, որով իւր հարստութեան՝ անշարժ և շարժական կալուածների մեծագոյն մասը նուիրում է Խորհրդիդ խնամքին յանձնուած Բարեգործական Ընկերութեանը։

«Իսկական կտակը պաշտօնապէս ներկայացրել ենք պատշաճաւոր իշխանութեան և դատարանական միջոցներ են գործ դրուած արդէն բոլոր կայքերի անկորուստ պահպանութեան համար։

«Հանգուցեալի բոլոր գումարները անուանական լինելով՝ իր ամուսինը իրաւունք չունի ստանալ առ այժմ և ոչ մի կողմից և արդէն իսկ կնքուած են. իսկ նրա թաղման համար այժմ դրամ չկայ։

«Կտակի զօրութեամբ, որի վաւերացրած պատճէնը սորա հետ ներկայացնում եմ յարգելի Խորհրդիդ, թաղման ծախս նշանակուած է երեք հազար ռուբլի, որի մասին յայտնելով՝ յարգանքով խնդրում եմ շուտով տնօրինել այդ գումարը հայթայթել իւր ընտանիքին»։

Հանգուցեալը կտակակատարներ էր նշանակել Խորհրդի նախագահին, փոխ-նախագահին և Թիֆլիսի վաճառական Կաճկաճեանին։ — Խորհրդի նախագահ Անանեանը անմիջապէս հոգաց թաղման ծախսերը։ Խուդադեանը իր կտակի մէջ ցանկութիւն էր յայտնել թաղուած լինել Մողնու եկեղեցու բակում։ Խորհրդի միջնորդութեամբ՝ հոգևոր իշխանութիւնը յարգեց այդ ցանկութիւնը։ Թաղումը մեծ շքով տեղի ունեցաւ կիրակի օր մայիսի 4-ին։ Թաղման և քառասունքի ծախսերը հասնում էին 3106 ռ. 9 կոպէկի։

Այնուհետև կտակակատարները հետևեցին, որ կատարուեն օրէնքի պահանջած ձևականութիւնները և կտակը հաստատուեց Թիֆլիսի նահանգական դատարանի կողմից 1897 թ. յունիսի 4/11-ին։—Մեծ աշխատանք էր պահանջում հանգուցեալի թողած ամբողջ հարստութիւնը որոշելու

անհրաժեշտութիւնը։ Խուդադեանը մանուֆակտուրային ապրանքի մագազին ունէր ընկերակցութեամբ մի վաճառականի։ Պէտք էր պարզել այդ մագազինի հաշիւները և նրանց հետ կապուած զանազան հաշիւները Թիֆլիսի բանկերում։ Այդ աշխատանքը Խորհուրդը յանձնեց իր անդամ Փիլիպոս Վարդազարեանին և քարտուղար Հ. Առաքելեանին, որոնք վերջ ի վերջոյ պարզեցին բոլոր հաշիւները։

Յայտնի դարձաւ որ Խուդադեանը իր ձեռքով ցուցակագրել է իր ամբողջ կարողութիւնը և ցոյց է տուել նրա ընդհանուր արժէքը 141.333 ր. 20 կոպ. իսկ պարտք 2358 ր. 56 կոպ.։ Սակայն այդ ամբողջ կարողութիւնը չէր անցնում Բարեգործական Ընկերութեան։ Խուդադեանը որոշ գումարներ էր նշանակել՝ իր մօրը, ամուսնուն, ազգականներին և երկու հիմնարկութեան տալու համար։ —Այդ գումարները կայքի ընդհանուր արժողութիւնից դուրս գալուց յետոյ մնում էր Ընկերութեան անշարժ և շարժական կայք արժողութեամբ 111997 ր. 7 կոպէկ։ — Անշարժ կայքերն էին Խուդադեանի տունը Աբաս-Աբաթեան հրապարակում, գնահատուած հանգուցեալի ձեռքով 30 հազար ռուբլի, ածուխի մայդանի $^3/_4$ մասը [1]) — 15922 ռուբլի և

Ց. ԽՈՒԴԱԴԵԱՆ

[1]) Մնացած $^1/_4$ մասը Խորհուրդը գնեց սեփականատէրերից 1899 թուին, ծախսելով մօտ 13 հազար ռուբլի։

մի խանութ՝ 3335 ռուբլի։— Մնացած շարժական գոյքը բաղկացած էր պետական և բանկային արժեթղթերից։

Տալով Ընկերութեան այդպիսի մի հարստութիւն, Յովհաննէս Խուդաղեանը իր կտակի մեջ պարտաւորեցնում էր. 1) որ Ընկերութիւնը այդ հարստութեան բերած եկամուտներով բաց անէ «բարեգործական հիմնարկութիւններ, ինչպէս են՝ ապաստարաններ, դպրոցներ, աղքատանոցներ, ձրի հիւանդանոցներ և համանման հիմնարկութիւններ, ըստ բարեհայեցողութեան նոյն Ընկերութեան ընդհանուր ժողովի, սահմանելով այդ հիմնարկութիւնների համար կանոնագրութիւններ, որոնք հաստատվում են իշխանութեան կողմից։ Այս հիմնարկութիւնները բաց անել կամ իմ տանը, Աբաս-Աբաթեան հրապարակի վրայ, երբ նա կանցնի Բարեգործական Ընկերութեան կամ ուրիշ տեղ, ուր Ընկերութիւնը իր բարեհայեցողութեամբ աւելի յարմար կը դատէ։ Բարեգործական Ընկերութեան բացած հիմնարկութիւնները պէտք է անուանուեն «հիմնարկութիւններ Յ. Դ. Խուդաղեանի» (6-րդ կէտ կտակի)։ [1]) 2), Ամեն տարի, մեծ պասին, Գրիգոր Լուսաւորչի տօնին, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել իր զերեզմանի վրայ Մողնու եկեղեցու բակում և այդ հոգեհանգստին հրաւիրել քահանաներ և սարկաւագներ Մողնու, Բեթխեհէմի և վանքի եկեղեցիներից, տալով աւագ քահանաներին հինգական, հասարակ քահանաներին երեքական և տիրացուներին մի-մի ռուբլի։ Նոյն այդ հոգեհանգստին պիտի երգէ Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը, որի համար նոյն դպրոցին կտակարարը կտակում է միանուագ 1500 ռուբլի (կէտ 5, կտակի)։ 3) Բարեգործական Ընկերութեան փակուելու դէպքում ամբողջ կտակուած կարողութիւնն անց-

[1]) Խուդաղեանի մահից յետոյ այդ տանը եօթը տարի պիտի ապրէր նրա ամուսին Մարիամը։

նում է Ներսիսեան Հոգևոր Դպրոցին, որ և պարտաւոր է կատարել կոտակի բոլոր կարգադրութիւնները [1]։

IX

ԴԻՒԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Առաջին, կազմակերպչական գործունէութեան տեսութեան մէջ մենք տեսանք որ Խորհրդի պաշտօնաւոր անձանց մի մասը անփոփոխ վերընտրուելով, երկար ժամանակով մնաց Խորհրդի կազմի մէջ։ Նախագահ Ալէքսանդր Անանեանը և գանձապահ Ալէքսանդր Մելիք-Ազարեանը մնացին մինչև առաջին շրջանի (1881—1899) վերջը, իսկ փոխ-նախագահ Ալէքսանդր Մանթաշեանը՝ մինչև 1895 թուականը։ Քարտուղար Աւետիք Եղեկեանը պաշտօնավարեց սկզբից մինչև 1892 թ. կէսը։

Այս հանգամանքն արդէն բաւական է, որ Խորհրդի ընդհանուր գործունէութեան մէջ հաստատուն միօրինակութիւն, մի որոշ ընթացք։ Ճիշտ է Խորհրդի միւս անդամները շարունակ փոփոխվում էին և շարունակ նոր անձինք էին մտնում նրա կազմի մէջ, բայց այդ փոփոխութիւնները ընդհանրապէս շատ չէին ազդում Խորհրդի սովորական գործավարութեան վրայ։

Սկզբից և եթ Ընկերութեան վստահութիւնը դէպի Խորհրդի գլխաւոր պաշտօնատար անձինք արտայայտվում է նրանց ամեն անգամ վերընտրութեան մէջ։ Նոյն վստահութիւնը տեսնում ենք և Խորհրդի կազմի մէջ ամեն ժամանակ։ Արձանագրութիւններից երևում է որ Խորհրդի

---

[1]) Այստեղ չենք բերում Խուդադեան կոտակի այն կէտերը, որոնք ժամանակաւոր նշանակութիւն ունին և վերաբերվում են հանգուցեալի ազգականներին։—

փոխ-նախագահ Ալէքսանդր Մանթաշեանը մի քանի անգամ հրաժարուել է պաշտօնից, պատճառ բերելով իր յաճախակի բացակայութիւնները քաղաքից։ Բայց ամեն անգամ Խորհուրդը չէ ընդունել այդ հրաժարականը։ Իսկ երբ 1896-ի յունվարին նախագահութեան պաշտօնից գրաւոր յայտարարութեամբ հրաժարուեց Ալէքսանդր Անանեանը, Խորհուրդը, ի նկատի առնելով նրա «բազմամեայ գործունէութիւնը յօգուտ Ընկերութեան և այն հանգամանքը, որ նա Ընկերութեան հիմնարկութիւնից ղեկավարել է նրան իբրև Խորհրդի նախագահ և որ նրա հեռանալը կարող է միանգամայն վնասել Ընկերութեան շահերին, որոնց նա այդքան տարի եռանդով նուիրել է իր ոյժերը», միաձայն որոշում է խնդրել նրան յետ վերցնել իր հրաժարականը։ Այդ որոշումը յայտնվում է Անանեանին առանձին գրութեամբ. Խորհուրդը միաժամանակ խնդրում է Ընդհանուր ժողովի նախագահ բժ. Նաւասարդեանին այդ գրութիւնը յանձնել Անանեանին և «համոզել նրան, եթէ հնար է, յետ առնել իր հրաժարականը»։ Այս դիմումները ազդում են և Անանեանը մնում է իր պաշտօնում։ 1899 թ. յունիսի 11-ին, երբ Ընդհանուր ժողովը արդէն ընդունել էր Ընկերութեան նոր կանոնադրութիւնը, Ա. Անանեան վերջնականապէս հրաժարուեց և նրա տեղ նախագահ ընտրուեց Ալէքսանդր Մելիք-Ազարեան, որ երեք ամիս պաշտօնավարեց, մինչև սեպտեմբերի 17-ը, երբ 1881-ի կանոնադրութիւնը վերջ դրեց իր գոյութեանը։ —

Խորհրդի ամբողջ գործունէութեան ընթացքում մենք միայն մի տարի ենք տեսնում, երբ նրա անդամները բաւականաչափ ուշադրութեամբ չեն վերաբերվում իրանց պարտաւորութիւններին։ Դա 1884 թուականն է, երբ Խորհրդի նախագահը բացակայում է և նրա պաշտօնը վարում է փոխ-նախագահ բժ. Նաւասարդեան։—Մարտի 9-ից մինչև ապրիլի 26-ը Խորհրդի հինգ նիստեր միմեանց ետևից չեն կայանում, որովհետև, անդամների կանոնական թիւ չէ

դալիս։ Եւ փոխ-նախագահը և նիստերին յաճախող երկու անդամները ստիպուած էին այսպիսի մի գրութիւն ուղարկել բացակայող անդամներին. «Դիմում են Ձեզ Ձեր պաշտօնակիցները, խնդրելով մի միջոց առաջարկել կամ գրաւոր կերպիւ կամ բերանացի ներկայանալով Խորհրդի առաջիկայ նիստին, ուրբաթ, ապրիլի 20-ին, թէ ինչ պէտք է արած Խորհրդի պարապմունքը երեսն ի վեր չթողնելու համար։ Մօտ երկու ամիս ստորագրողքս շարունակ ժողովում ենք նիստ կազմելու և միշտ իզուր։ Հաւատի ենք, մեծապատիւ պարոն, որ Դուք հաւասարապէս մօտ էք ընդունում Ձեր սրտին Ընկերութեան յառաջադիմութեան գործը»։

Նկատենք, սակայն, որ այդ տարին մի տեսակ լքման և անտարբերութեան ժամանակ էր։ Ընդհանուր ժողովի նախագահ Սենեքերիմ Արծրունին էլ գրում էր Խորհրդին թէ ընդհանուր ժողովների նիստերը չեն կայանում անդամների պակասութեան պատճառով և խնդրում էր միջոցներ ձեռք առնել։

Գալով Խորհրդի դիւանական գործառնութիւններին, մենք տեսնում ենք որ նրա գրագրութիւնները առաջին իսկ տարիներից սկսում են աստիճանաբար ընդարձակուել։ Թէև ինքը, Խորհուրդը, մինչև 1892 թուականը մի շատ պարզ ու հասարակ ծրագրի էր հետևում, բայց Ընկերութեան գաւառական ճիւղերը արդէն բաւական առատ նիւթ էին տալիս գրագրութիւնների։ Խորհրդի նիստերում զբաղմունքների մեծագոյն մասը այդ ճիւղերն էին։ Շատ յաճախ էին ծագում հարցեր, որոնք երկարատև բանակցութիւններ և գրագրութիւններ էին պահանջում։

Ընկերութեան կանոնադրութիւնը կենտրոնացման սկզբունքն էր սահմանել։ Եւ որովհետև ընկերութեան կենդանութիւնը իր կանոնադրութեան անթերի կատարումն էր, ուստի Խորհուրդը շարունակ պիտի հսկէր, որ ճիւղերը չը

շեղումն այդ կանոնագրութիւնից և եռանդով պաշտպանում էր կենտրոնացման անհրաժեշտութիւնը։

Այս ուղղութիւնը գաւառներին ընդունել տալու համար Խորհուրդը չէր բաւականանում ամեն մի անհատական դէպքում տրուած ցուցմունքներով և բացատրութիւններով, այլ և երբեմն շրջաբերականներ էր ուղարկում նոյն իմաստով։

1890 թուի յունիսի 18-ի ընդարձակ շրջաբերականով Խորհուրդը նորից և նորից շեշտում էր, որ տեղական վարչութիւնները յաճախ արհամարհում են կանոնագրութեան որոշ ու մէկին ցուցմունքները։ «Այսպէս ամեն տարուայ զիտուած բան է,—Հնկերութեան Տեղ. վարչութիւններից ոմն ժամանակին իւր նախահաշիւը չի ներկայացնում, ոմն հաշիւը, ոմն բոլորովին իսկ մոռանում է նախահաշիւ ներկայացնելու և ոմն հաշիւ, կայ նաև մէն, որ ոչ միայն հաշիւ ու նախահաշիւ չէ ներկայացնում, այլ Խորհրդի գրութիւններն անգամ անպատասխան է թողնում. այլը, հակառակ կանոնագրի, առանց Խորհրդի զիտութեան և ընկ. ընդհանուր ժողովի անօրէնութեան, այս և այն կարևոր գործն են սկսում, որ նախուստ պատշաճաւոր թոյլատուութեան էր կարօտ և տեսական ծանր ծախս էր պահանջում... ոմանք կանոնագրութեան 49 յօդուածը չեն կատարում և ուելացրած գումարները ինքնիշխանաբար իրենց համար անձեռնմխելի են համարում»։

Ցոյց տալու համար թէ ընկերութիւնը մի է, թէ նրա միջոցները պատկանում են նրա ամբողջութեան և ոչ թէ այս կամ այն մասին, Խորհուրդը գրում էր։

«Ընկերութիւնս ամենի և ամեն տեղի համար է, նրա կենտրոնը Տփխիսում է, այն, բայց ընդարձակութիւնը և դրամական միջոցները Կովկասի և Անդրկովկասի համար են։ Ամենայն Տեղ. Վարչութիւն, որ իւր միջոցներով չի կարողանում իւր տեղական պէտքերը, համաձայն ընկերութեան նպատակներին, հոգալ, կարող է օգտուել և հարկաւորապէս և իրաւունքով պէտք է օգտուի կենտրոնում ամփոփուած միջոցներից, որքան սոքա կը ներին՝ ի հարկէ, եթէ իւր օրինաւոր և հանրաշահ ընթացքով նա արժանի է դրան»։

Այս սկզբունքը, սակայն, իրագործուած չենք տեսնում։ Տեղական վարչութիւնների դիմումներ կան, որոնց մէջ

եղած նպաստի խնդիրները մերժուած են Խորհրդի կողմից։ Եւ եթէ մի երկու վարչութիւնների օգնել է Խորհուրդը, այդ էլ փոխարինաբար, յետ ստանալու պայմանով։ Մեր, խօսքը չէ վերաբերում ժողովրդական աղէտներին, երբ ինչպէս տեսանք, Խորհուրդը ինքն էր բաժանում իր տրամադրութեան տակ եղած միջոցները տեղական վարչութիւններին։ Տեղական վարչութիւնների հետ ունենալիք յարաբերութիւնները կանոնաւորելու համար Խորհուրդը 1890 թ. սկսեց նոր հրահանգ մշակել, որ պիտի փոխարինէր 1881-ի հրահանգը։ Այդ հրահանգը, որ պարունակելով իր մէջ նախորդի համարեա ամբողջ բովանդակութիւնը, աւելի ևս խստացնում ու շեշտում էր կենտրոնացման սիստեմը, ընդհանուր ժողովի կողմից հաստատուեց 1892 թ. յունվարի 12-ին և տպագրուեց 1895-ին։

Սակայն ճիւղերի վերաբերմամբ տեղի ունեցաւ աւելի կարևոր մի կարգադրութիւն։

1891 թ. յունիսի 17-ի գրութեամբ Թիֆլիսի ոստիկանապետը, Թիֆլիսի նահանգապետի առաջարկութեամբ, յայտնեց Խորհրդին թէ կայացել է առանձին Բարձրագոյն հրաման, որի զօրութեամբ ջնջուած են համարվում ընկերութեան 1881-ի կանոնադրութեան 16, 17 և 19 յօդուածները, այսինքն այն յօդուածները, որոնք իրաւունք են տալիս Խորհրդին, առանց առանձին թոյլատուութիւն խընդրելու, բաց անել տեղական վարչութիւններ և յանձնաժողովներ Կովկասի և Անդրկովկասի այն քաղաքներում և աւաններում, ուր Խորհուրդը այդ հարկաւոր և օգտակար կը համարէ։

Այդ կարգադրութեամբ՝ արդէն գոյութիւն ունեցող տեղական վարչութիւնները պահպանում էին իրանց իրաւունքները, բայց նոր դաւառական ճիւղեր այլ ևս չէին կարող կազմուել։—

Կարծելով թէ նոր կարգադրութեան իմաստն այն է, թէ Ընկերութիւնը զրկվում է միայն առանց նախնական

թոյլատրութեան ճիւղեր բաց անելու իրաւունքից, Խորհուրդը նոյն թուի դեկտեմբերի 10-ին առանձին խնդրագրով դիմում է Կովկասի կառավարչապետին և ներկայացնելով 16, 17 և 19 յօդուածների նոր, փոփոխած խմբագրութիւն, որով ճիւղերի բացման համար պարտադիր էր դառնում ամեն անգամ իշխանութեան թոյլատրութիւնն ստանալ, խնդրում էր, որ իրան թոյլատրուի այդ նոր խմբագրութիւնը մտցնել Ընկերութեան կանոնադրութեան մէջ, որ պիտի նոր հրատարակուէր։—

Այդ միջնորդութեան պատասխանը չը տրուեց մինչև 1894 թուականը։ Խորհրդի նախագահ Անանեանը անձամբ ներկայացաւ պատշաճաւոր բարձր իշխանութիւններին և խնդրեց տնօրինութիւն, քանի որ պէտք կար Ընկերութեան կանոնադրութիւնը նորից տպագրելու։ Այդ տեսակցութեան ժամանակ նա տեղեկացաւ, որ յիշեալ յօդուածների ոչ մի նոր խմբագրութիւն չը պիտի ընդունուի։

Եւ իրաւ, Կառավարչապետի Դիւանը 1894 թ. յուլիսի 27-ի № 6778 գրութեամբ իմաց էր տալիս Թիֆլիսի նահանգապետին թէ, որովհետև Բարձրագոյն հրամանով արգելուած է Կովկասում նոր հայկական ընկերութիւններ հիմնելը, ուստի 1881-ի կանոնադրութեան § 16-ի վերջը (այս է՝ «ուր այդ հնարաւոր կը լինի և Խորհուրդն օգտաւէտ կը համարէ» խօսքերը), նոյնպէս և § 17, 18 և 19 պէտք է հանարուին ջնջուած։ Կառավարչապետի Դիւանը թոյլ էր տալիս հրատարակել կանոնադրութիւնը, հանելով նրա միջից այդ խօսքերը և յօդուածները։ Այդ փոփոխութիւնով էլ կանոնադրութիւնը հրատարակուեց 1895-ին։—

Գործերի մէջ մենք տեսնում ենք, որ 1891-ից յետոյ շատ տեղերից դիմում են Խորհրդին, խնդրելով նոր ճիւղեր բանալ, բայց Խորհուրդը բացասում է այդ դիմումները։

Խորհրդի պաշտօնատար անձանց մասին խօսելիս՝ չէ կարելի անտես անել և քարտուղարի պատասխանատու և կարևոր պաշտօնը։

Ինչպէս տեսանք, իր առաջին իսկ նիստում Խորհուրդը որոշում է քարտուղար չընտրել իր անդամներից, այլ հրաւիրել Ընկերութեան անդամներից մէկին, յատկացնելով նրան ռոճիկ։ Ընկերութեան այդ միակ ռոճիկաւոր պաշտօնեայի հարցը մի քանի անգամ յարուցուել է ընդհանուր ժողովներում։ Առաջին անգամ նա գրուեց 1892 թուի յունվարի 12-ի նիստում։ Քննելով նախահաշիւը, ժողովը գտնում է որ քարտուղարի ռոճիկը—600 ր.—շատ է և նշանակում է 300 ռուբ. և գիւանական ծախսերի համար 100 ռուբլի։—

Խորհուրդը արձանագրում է, որ «ինքն յարմարութիւն չէ գտնում կառավարել իւր գիւանը 400 ռուբլիով, երբ այնքան բարդուած են իւր գործերը բազմաթիւ տեղ. վարչութիւնների հետ գրագրական յարաբերութեամբ և գործավարական ծանրութիւններով, որոնց ամենքին պիտի հասնի մի քարտուղար, առանց գրագրի, առանց ծառայի, մանաւանդ երբ նա միևնոյն ժամանակ և հաշուապահ է Խորհրդում և՝ գանձապահի պաշտօնակատար, ստանալով դրամներ, բաշխելով ռոճիկներ, նպաստներ և թոշակներ, և՝ նախագահի օգնական, որին դիմում են ամեն կարգի խնդրատուներ, թէ իրենց ցաւն յայտնելու, թէ տեղեկութիւններ առնելու, թէ պատասխաններ ստանալու» [1]։

Յաջորդ ընդհանուր ժողովը, համոզուելով թէ ճիշտ որ քարտուղարի պաշտօնը ծանր է, փոխում է իր նախընթաց որոշումը և թողնում է քարտուղարի ռոճիկը 600 ռուբլի։

1892 թ. սեպտեմբերից քարտուղար Աւետիք Եղեկեանը թողնում է քարտուղարի պաշտօնը, որ ամենայն բարեխղճութեամբ և օրինակելի խնամքով վարել էր 10 տարի անընդհատ, մեն-մենակ, առանց օգնականի, կրելով իր ուսերի վրայ կազմակերպչական գործունէութեան ամբողջ ծանրութիւնը։ Այդ 10 տարուայ ընթացքում Խոր-

[1]) Արձ. № 6.—

հուրդը գուցէ միակ հիմնարկութիւնն էր ռուսահայերի մէջ, որ կարող էր օրինակելի համարուել գեղեցիկ հայերէնով գրուած իր գործավարութեամբ։

Եղեկեանին քարտուղարութեան պաշտօնում յաջորդում է Համբարձում Առաքելեանը։ Այդ ժամանակից էլ Խորհրդի գործունէութիւնը աւելի ևս բարդ կերպարանք է ստանում։ Ընկերութեան Գրադարան-Ընթերցարանը, ուսուցչական ցենդը, ժողովրդական ոգէտները, ճիւղերի ընդարձակուած գործունէութիւնը դալիս են աւելի ևս շատացնելու գրգռմունքները, գործավարական յարաբերութիւնները, կազմակերպչական հոգսերը։ Միաժամանակ աւելի բարդանում է Ընկերութեան տարեկան հաշուետուութիւնը։ 1892-ից սովորութիւն է դառնում ամեն տարի տպագրած տեղեկագրներ հրատարակելը, որոնց մէջ թէ կենտրոնը և թէ մասամբ ճիւղերը հանդէս են գալիս իրանց հաշիւներով, առանձին զեկուցումներով և այդպիսով հասարակութիւնը աւելի մօտիկից, աւելի մանրամասն կերպով է ծանօթանում Ընկերութեան։ Բազմանում են առանձին առանձին հարցերով զբաղուող մասնաժողովները, որոնց մասնակցում էր քարտուղարը։ Գրագրութիւնների տեսակէտից քարտուղարի գործը փոքր ինչ թեթևանում է գրադարանի բացուելուց յետոյ, որովհետև գրադարանը սկսում է նրան օգնել։—

Չը նայած այս բոլորին, քարտուղարական ռոճիկի հարցը երբեմն յուզվում էր Ընդհանուր ժողովներում։ Պէտք է նկատել, որ այդ հարցի մէջ սկզբից և եթ դեր կատարել են աւելի կուսակցական հակառակութիւնները, քան իրական դրութիւնը։—

Խորհրդի հետզհետէ բարդուող գործառնութիւնը առիթ է տալիս Խորհրդի անդամ բժ. Վ. Արծրունուն 1894-ի մայիսին մտցնել մի առաջարկութիւն, որի մէջ նա ցոյց էր տալիս մի ներքին կազմական կանոնագրութեան անհրաժեշտութիւնը։ Դիւանական գործառնութեան մէջ բժ.

Արծրունին կարևոր էր համարում նորոդութիւն մացնել աշխատանքի բաժանման սկզբունքի վրայ։—

«Նախագահը և քարտուղարը, կարծես, միակ պատասխանատու անձինքն են Խորհրդի գործունէութեան մէջ,—գրում էր նա.—միւս անդամները միանգամայն անմասն են այս պատասխանատուութիւնից և մինչև անգամ ազատ են զբաղուել կամ չը զբաղուել Ընկերութեան գործերով։ Չը կայ մի որոշ կանոնագրութիւն, որով դեկավարուէր պ. Նախագահը այս ինչ կամ այն ինչ անդամին գոնէ իրան օգնութեան հրաւիրելու»։—

Կարմիում է մի մանաժոդով (Բ. Նաւասարդեան, Արծրունի, Փ. Վարդազարեանց), որ համաձայն այս առաջարկութեան՝ մշակում է «ներքին կառավարութեան կանոնագրութիւն» ծրագիրը, որ քննվում է Խորհրդի մէջ միայն 1896-ին։ Խորհուրդն ընդունում է այդ ծրագրի մի քանի կէտերը, օրինակ անդամների հերթակալութիւն մի ամիս ժամանակով, աշխատանքի մի երկու ճիւղի բաժանում։—

Հաշուապահութեան, գրադարանի, մի քանի ճիւղերի վերաբերմամբ գործունէութեան առաջարկութիւններ մրցունում է և Փ. Վարդազարեանը, որ Խորհրդի անդամ և գանձապահ էր 1895 թուից։—

Հ. Առաքելեանը քարտուղարութեան պաշտօնից հեռանում է 1898-ի սեպտեմբերին։ Նրանից յետոյ այդ պաշտօնը մինչև ընկերութեան վերակազմութիւնը (1899 թ.) վարում է Գր. Տէր-Պողոսեանը։—

X

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Ընդհանուր ժողովները մինչև 1884 թուականը գումարվում էին Արծրունի եղբայրների թատրոնում, որ Գրի-

գոր Արծրունու կարգադրութեամբ ձրի էր բերվում։ Այնուհետև երբ այդ թատրոնն անցաւ ուրիշ սեփականատիրոջ, ժողովները տեղի էին ունենում գլխաւորապէս Դուման դահլիճում։

Առաջին տարին, երբ կազմակերպչական շրջանում էր ընկերութիւնը, տեղի ունեցաւ ընդհանուր ժողովի 8 նիստ։ Յետոյ այդ թիւը սկսեց պակասել, մինչև որ արտակարգ ժողովներ հրաւիրելու շատ քիչ հարկաւորութիւն էր լինում։ Բազմամարդութեան կողմից էլ հետզհետէ անկում է նկատվում։ Առաջին տարիները, սովորական է տեսնել արձանագրութիւնների մէջ, որ ներկայ եղող անդամների թիւն էր 30—40։ Լինում էին և այդչափ կամ պակաս կողմնակի մարդիկ։

Ընդհանուր ժողովների նախագահ եղել են բժ. Միքայէլ Շահ-Պարոնեան սկզբից մինչև 1883-ի դեկտեմբերը. երդուեալ հաւատարմատար Սենեքերիմ Արծրունի—այդ ժամանակից մինչև 1889 թ., երբ նա հրաժարվում է և բժ. Բ. Նաւասարդեան—1889-ից մինչև 1899 թ.։

Ընդհանուր ժողովների արձանագրութիւնները առաջին տասնամեակում կազմվում էին համառօտ և պարունակում էին իրանց մէջ համարեա միայն որոշումները։ Այնուհետև արձանագրութիւնների մէջ սկսում են մտցնել և մանրամասնութիւններ, աշխատելով տալ վիճաբանութիւնների էական բովանդակութիւնը։ Այդ մանրամասն արձանագրութիւններն էլ տպագրվում էին տարեկան տեղեկագրերի մէջ, որովհետև կենտրոնի ընդհանուր ժողովը ընկերութեան բարձր ինստանցիան էր, ապա ուրեմն և նրա որոշումներն ու լուսաբանութիւնները կարևոր էին համարվում մանաւանդ դաւառական ճիւղերի համար։

Ընդհանուր ժողովները, բացի իրանց սովորական պարտաւորութիւններից, այն է՝ կենտրոնի և ճիւղերի նախահաշիւները, հաշիւները քննելուց և հաստատելուց, զբաղվում էին և այն առաջարկութիւնների, ծրագիրների քննու-

թեամբ, որ ներկայացնում էր Խորհուրդը։ Գլխաւոր աշխատանքները մենք յիշատակել ենք իրանց տեղերում։ Ներկայացրած ծրագիրներն ու կանոնագրութիւնները քննելու համար ընտրուել են մասնաժողովներ։

Նկատելի է, որ ընդհանուր ժողովների պարապմունքների վրայ աղդել են մեր մէջ գոյութիւն ունեցած լրագրական կուսակցութիւնների (գլխաւորապէս «Մշակ» և «Արձագանք») պայքարները, և այս մասնաւորապէս 1892 թուականից յետոյ։ Այսպէս մենք տեսնում ենք վիճաբանութիւններ լրագրի մէջ տպուած յօդուածների մասին։ Ամբողջ մի քննութիւն է սկսվում այն պատճառով, որ հակառակ կուսակցութեան պատկանող մէկը (Ս. Հախումեան) մասնակցել է ընդհանուր ժողովին, չունենալով անդամակցական տոմսակ։ Ապա Խորհուրդը իր անդամներից երեքին նշանակում է քննելու նոյն այդ անձի յարձակումները քարտուղարի դէմ։ Եւ այլ այսպիսի մանր մունր հաշիւներ, որոնք անհրաժեշտ են համարել արձանագրուելու ընկերութեան պաշտօնական թղթերի մէջ։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՃԻՒՂԵՐ

1881 — 1899

I

ՇՈՒՇԻ

Ընկերութեան Խորհրդի դիմումները, տեղական վարչութիւններ կազմելու մասին ամենից առաջ և անմիջապէս արձագանք են գտնում Շուշի քաղաքում։

1881 թուի դեկտեմբերի 23-ի գրութեամբ Ղարաբաղի թեմի առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսը հաղորդում է Խորհրդին թէ թեմական դպրոցի տեսուչ Հ. Առաքելեան, գտնելով 26 անդամները, ընդհանուր ժողովի է հրաւիրել նրանց և դեկտեմբերի 22-ին այդ ժողովը բաղկացած 19 անդամներից, ընտրել է իրան, Անդրէաս արքեպիսկոպոսին նախագահ, ապա և կատարել է տեղական Վարչութեան անդամների ընտրութիւն։

Խորհուրդը ընդունում և վաւերացնում է կատարուած իրողութիւնը։ 1882 թ. փետրվարի 22-ին Անդրէաս արքեպիսկոպոսը յայտնում է Խորհրդի թոյլտուութիւնը ընդհանուր ժողովին։ Բայց Վարչութեան անդամները, որոնք ընտրուած էին անցեալ ժողովից, հրաժարվում են, ի նկատի ունենալով որ իրանք ընտրուել են այնպիսի մի ժամանակ, երբ չը կար Խորհրդի թոյլտուութիւնը տեղական ճիւղ բանալու մասին, այլ և այն, որ ընկերութեան անդամների

թիւը այժմ աւելացել է և իրանք ցանկանում են որ վարչութեան անդամները ընտրուած լինեն առաջին ընդ. ժողովից աւելի բազմամարդ ժողովում։

Այդ հրաժարականն ընդունվում է և նոր ընտրութիւն է կատարվում։ Սակայն այս անգամ էլ Խորհուրդն է համարում այն ընտրութիւնը անկանոն, քանի որ ընտրուածներից միայն մէկն էր ստացել ընտրողական ձայների $^2/_3$ մասը, ինչպէս տրամադրում է կանոնադրութիւնը։ Ուստի երրորդ անգամ ընդհանուր ժողով կայանում է 1882-ի ապրիլի 11-ին, որի ընտրած վարչութիւնը այսպէս է կազմակերպում իր դիւանը. գնդապետ Իւան Քալանթարեան՝ նախագահ, բժ. Մարգար Առստամեան՝ փոխ-նախագահ, Դաւիթ Ադամեան՝ անդամ—գանձապահ, Ջաւադ Իշխանեան և Սահակ Թադէոսեան՝ անդամներ, Համբարձում Առաքելեան՝ փոխ-անդամ և գործավար, տ. Գայեանէ Աթաբէգեան և Գրիգորիս Իւզբաշեան՝ փոխ-անդամներ։

Այդ վարչութեան կազմած նախահաշիւը միայն սեպտեմբերին հաստատուեց Թիֆլիսի ընդհանուր ժողովում, այնպէս որ Շուշու ճիւղի իսկական գործունէութիւնն սկսվում է 1882-ի աշնանից։

Առաջին տարուայ նախահաշիւը 600 ռուբլի մուտք և այդքան էլ ծախս էր որոշում։ Բայց իրապէս մուտք եղաւ 1148 ր. 65 կոպէկ, որից 500 ռուբլին նուէր Մարկոս Գոլուխանեանից՝ անձեռնմխելի պահելու պայմանով։ Անդամների թիւն էր 86։

Վարչութիւնը սկզբից և եթ որոշում է բանալ Շուշում գրադարան-ընթերցարան և գրելով Խորհրդին, որ այդ մասին պատշաճաւոր թոյլտուութիւնն ստանայ, ինքը ձեռք է բերում տեղական փակուած հասարակական գրադարանի գրքերն ու գոյքը 100 ռուբլով (գրադարանի ամբողջ արժողութիւնն էր 400 ռուբլի)։ Խորհուրդը դիմում է Գանձակի նահանգապետին, խնդրելով թոյլտուութիւն, բայց պատասխան չէ ստանում։ Այդ դիմումը նա կրկնում և

երեքկնում է հետևեալ 1883-ին, դարձեալ պատասխան չէ ստանում։

Նախահաշուի մնացած մասը վարչութիւնը յատկացնում է կրթական նպատակների, գլխաւորապէս գիւղական դպրոցների օգտին։ Վճռվում է կազմել դպրոցական գրադարաններ, ուսումնական պիտոյքներ հայթայթել չքաւոր դպրոցներին, չքաւոր աշակերտներին նպաստներ տալ։ Աղքատների համար ոչինչ գումար չէ նշանակվում։—Սակայն գրադարանների և ուսումնական պիտոյքների ենթադրութիւնը ի կատար չէ ածվում և վերջ ի վերջոյ, վարչութիւնը թէ այդ և թէ հետևեալ տարիները իր միջոցները յատկացնում է դպրոցներին, աշակերտներին և աղքատներին։

Եւ այդ միջոցները մեծ էլ չէին։ Առաջին տարուց յետոյ Շուշում ևս սկսվում է գործի անկում. անտարբերութիւն է նկատվում դէպի Ընկերութիւնը, այնպէս որ 1885-ի համար կազմուած նախահաշուի գումարն է արդէն 401 ռուբլի, իսկ 1886-ի համար՝ 212 ռուբլի։ Սկսվում է վարչութեան կատարեալ կազմալուծումը. 1884, 1885 և 1886 թ. հաշիւները մնում են առանց քննութեան և հաստատութեան. 1886-ին ընդհանուր ժողով բոլորովին չէ կայանում, Ընկերութեան անդամների թիւն է ընդամենը 14. անդամ են գրվում, բայց անդամավճար չեն տալիս նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք եղել են Վարչութեան փոխ-նախագահ, անդամ, գործավար և այլն։—

1887 թ. փետրվարին տեղական երիտասարդութիւնից 15 հոգի անդամ են գրվում և պահանջում են անուանով միայն գոյութիւն ունեցող Վարչութիւնից ընդհանուր ժողով նշանակել կանոնադրութեամբ սահմանուած գործառնութիւնները կատարելու համար։ Մարտի 3-ին ընդհանուր ժողովը նոր վարչութիւն է ընտրում որ և կազմակերպում է այսպէս. Հ. Առաքելեան՝ նախագահ, Յ. Կամսարական՝ փոխ-նախագահ, Ա. Բաբախանեան՝ գոր-

ծավար, Մ. Խունունց՝ դանձապահ և Ն. Աթաբէգեան անդամ։ Փոխանդամներ Վ. Բարսեղեան, Ս. Ղուլիքեխցեան և Ա. Հայկազեան։—

Այս տարուանից Շուշու տեղական ճիւղն սկսում է կամաց-կամաց կենդանանալ։ Անդամների թիւը հասնում է 47-ի տարեկան մուտքը հէնց նոյն 1887-ին 805 ռուբլի է։

Վարչութեան տպագրած հաշուից տեղեկանում ենք, որ նա, «դիտելով որ Ընկերութեան գործերը քայքայուած և ողորմելի դրութեան են հասած», դիմում է քաղաքի երիտասարդ այժերի աջակցութեան իր միջոցներն աւելացնելու համար և միաժամանակ որոշում է «իր սուղ միջոցները առ այժմ գործ ածել գլխաւորապէս քաղաքի սահմաններում, որպէս զի զօրութիւն ունենայ մի շօշափելի գործ կատարելու և դրանով ժողովրդի համակրութիւնը վառակելու»։ Իր միջոցների մեծագոյն մասը յատկացնում է դպրոցական գործին, իսկ 80 ռուբլի էլ նշանակում է ժողովրդական գրքեր հրատարակելու համար։— Սակայն այդ գումարը մնում է առանց գործադրութեան, որովհետև, ինչպէս գրում էր Վարչութիւնը, «հայ հեղինակներից ոչ ոք ձայն չը տուեց Վարչութեան հրաւէրներին և ոչ ոք ոչ մի աշխատութիւն չուղարկեց»։

Հետևեալ տարին նոյն նպատակի համար նշանակուած էր 100 ռուբլի։—Բայց պէտք եղաւ թողնել գրքեր հրատարակելու միտքը, որովհետև Վարչութիւնը վճռեց բաց անել Շուշում արհեստագիտական դպրոց չքաւոր աղջիկների համար։ Ծրագիրը ենթարկուեց բաղմակողմանի քննութեան։ Բայց որքան համեստ լինէր նախագծուած գործը, Վարչութեան միջոցները բաւական չէին նրան իրագործելու համար։ Ուստի նա ընդհանուր ժողովի յանձնարարութեամբ դիմեց Խորհրդին և խնդրեց նրանից նպաստ 300 ռուբլի։ Սկզբում Խորհուրդը յոյսեր տուեց և պահանջեց արհեստագիտական դպրոցի մանրամասն ծրագիրը։ Եւ Վարչութիւնը շտապեց կատարել այդ պահանջը։ Նրա

ներկայացրած ծրագիրը ենթադրում էր միդասեան մի դպրոց, երեք տարուայ դասընթացով, ուր աղքատ աշակերտուհիները պիտի սովորէին գլխաւորապէս ձեռագործ և տպագրութիւն։ 1888-ի նախահաշուի մէջ մտցրուեց այդպիսի մի դպրոցի պահպանութեան ծախս 800 ռուբլի, որից 300 ռ. սպասվում էր Խորհրդից իբրև նպաստ։

Սակայն Խորհուրդը չուզեց օժանդակել մի այդպիսի գործի, գոնէ առաջին տարիները, ինչպէս խնդրում էր Վարչութիւնը։ Նա մերժեց այդ խնդիրը, առարկելով թէ ծրագրուած դպրոցը սովորական ծխական դպրոցներից մէկն է և իբրև այդպիսին՝ կարող է բացուել և պահպանուել տեղական Վարչութեան միջոցներով։ Դպրոցը չէ բացվում։—

Այդ միջոցին լուծում է ստանում գրադարան-ընթերցարանի հարցը։ Գանձակի նահանգապետը 1886 թուի յուլիսին թոյլ է տալիս բաց անել Շուշում գրադարան-ընթերցարան և Վարչութիւնը իր ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս այդ հիմնարկութեան վրայ։ Նա մշակում է կանոններ և ներկայացնում է Խորհրդին ի հաստատութիւն։ Գրադարանը բացվում է 1889 թուի մարտ ամսին։

Վարչութիւնը իր միջոցներից, ի հարկ է կարողանում է միայն փոքրիկ գումարներ յատկացնել այդ գործին։ Բայց գրադարան-ընթերցարանը առաջին իսկ տարուց սկսում է արագ առաջանալ և հարստանալ։ Տրվում են նրա օգտին ներկայացումներ, ստացվում են նուէրներ, գործի գլուխ անցած երիտասարդները ջրօրհնէքի տօներին «աւետիս» են մատ գալիս, գործում եռանդով։

Թէ ինչպէս է շնորհիւ այդ ջանքերի զարգանում գրադարան-ընթերցարանը, այդ ցոյց են տալիս հետևեալ թուանշանները։ Առաջին տարում (1889) գրադարանն ունէր 587 կտոր գիրք, իսկ տասնամեայ գոյութիւնը բոլո-

բելուց յետոյ, առ 1 յունվարի 1899 թ.—4917 կտոր՝ 6793 ր. արժողութեամբ, առաջին տարին տուն տարուած գրքերի թիւն էր 1834, իսկ տասներորդ տարին՝ 8659։

Շուշու Տեղական Վարչութեան այդ եռանդոտ գործունէութիւնը արձանագրուած է Խորհրդի տարեկան տեղեկագրերի մէջ (1892 և 1893) և արձագանք գտաւ Թիֆլիսի Ընդհանուր ժողովի նիստերից մէկում [1])։ Այդ եռանդի, ինչպէս նաև գրագարան-ընթերցարանի ասպիճանաբար հարստացման արդիւնք էր, որ Ընկերութեան անդամների թիւը տարէց տարի շատանում էր և հասաւ 160-ի, դրա համեմատ մեծանում էին և Վարչութեան եկամուտները։ 1898 թ. մուտք եղել է 2090 բուբլի։—

Ինչպէս տեսանք, հէնց առաջին տարում Շուշու Վարչութիւնն ունեցաւ անձեռնմխելի գումար։ Հետևեալ տարիների ընթացքում այդ գումարը աւելացաւ և 1890 թ. հասնում էր 1100 ր.։—Ըստ կանոնադրութեան, այդ գումարը պիտի պահուէր Խորհրդի գումարների հետ Թիֆլիսում։ Բայց Խորհուրդը սկզբից ուշադրութիւն չէր դարձրել այդ հանգամանքի վրայ և գումարը մնում էր Տեղական Վարչութեան ձեռքին։ Եւ երբ Խորհուրդը, վերջապէս, սկսեց պահանջել որ կատարուի կանոնադրութեան տրամադրութիւնը, Տեղական Վարչութիւնը այլ և այլ պատճառաբանութիւններով խուսափում էր այդ պահանջը կատարելուց։ Ծագեց երկարատև գրագրութիւն Խորհրդի և Վարչութեան մէջ, մինչև որ 1891-ին գումարը ուղարկուեց Թիֆլիս և այդպիսով լուծուեցին տարիների տարաձայնութիւնները։ Առ 1 յունվարի 1899 թ. Տեղական Վարչութեան պատկանող յատուկ գումարը, որ պահվում էր Խորհրդի մէջ, հասել էր 2500 բուբլու։

Շուշու տեղական վարչութեան սովորական նախահաշիւը պարունակում էր ծախսեր գրադարանի, տառա-

---

[1]) «Տեղեկագիր» 1894, եր. 77։

պեալներին և չքաւոր աշակերտներին նպաստելու համար։ Այդ սովորական գործավարութիւնից դուրս՝ վարչութիւնը գործունէութիւն ցոյց տուեց և ժողովրդական աղէտների ժամանակ։ 1892-ի խօլերայի միջոցին նա թէ Խորհրդից ստացած 400 ր. նպաստը և թէ յատուկ այդ առիթով իր ստացած 275 ր. նուէրները բաժանեց Շուշու և Զանգեզուրի գաւառների ՀԱՍՏՈՒԱԾ ազգաբնակութեան թէ առձեռն դրամով և թէ դեղերով։ 1897 թուին, երբ թիւրքահայ գաղթականները Շուշի էլ հասան, վարչութիւնը բայց արաւ նրանց համար ձրի ճաշարան, որ գոյութիւն ունեցաւ յունվարի 15-ից մինչև մարտի 15-ը։ Իսկ հետևեալ տարին, Զանգեզուրի և Նախիջևանի գաւառներում անբերրիութիւնից տառապող ազգաբնակութեան օգնելու համար վարչութիւնն ստացաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից 825 ռուբլի։ Այդ գումարից 225 ռուբլի ուղարկուեց Նախիջևանի վարչութեան, իսկ մնացածը երկու յատուկ մանդատարների ձեռքով բաժանուեց Զանգեզուրի գաւառում։

Վերջապէս յիշատակենք և հրատարակչական գործունէութիւն սկսելու երկրորդ անյաջող փորձը։ 1893 թ. Զբօրհնէքի տօներին մի խումբ երիտասարդներ նախկին տարիների նման, «աւետիս» ման գալով, իրանց ժողոված փողերի մի մասը նուիրում են գրադարանին, իսկ միւսը— 82 ռուբլի յանձնում են վարչութեան՝ ժողովրդական գրքեր հրատարակելու յատուկ նպատակով։ Այդ գումարը յետոյ դառնում է 137 ռուբլի, բայց չէ ծախսվում։ «Վարչութիւնից անկախ պատճառներով գրքերի հրատարակութիւնն անհնարին եղաւ», կարդում ենք վարչութեան տեղեկագրի մէջ (1895 թ.)։

Գումարը ամբողջովին մնաց մինչև 1899 թ.. երբ փակուեց Շուշու ճիւղը։

II

ԵՐԵՒԱՆ

(1882—1899)

1882 թ. փետրվարի 15-ին Խորհուրդն ստանում է Երևանից մի գրութիւն 18 երիտասարդների ստորագրութեամբ։ Ստորագրողները պատմում են, որ Երևանի երիտասարդութեան մի մասը, բաղկացած աւելի քան քսան հոգուց, մի քանի անգամ ժողովներ է ունեցել և քննել թէ ինչ միջոցներով կարելի է օգնութեան հասնել լուսաւորութեան կարօտ ժողովրդին։ Գլխաւոր միջոցը համարուել «հասարակ ժողովրդի և գրքերի մէջ մի սերտ բարեկամութիւն հաստատելը։ Նախ ժողովը՝ վճռեց գործ դնել իր ձեռքից եկած ուժերը հայ հասարակ ժողովրդին ծանօթացնելու մօտացնելու — բարեկամացնելու — սիրահարացնելու գրքերի, այդ կենդանի խօսքի, այդ անխարդախ և անդաւաճան ընկերութեան հետ»։ Թէև Թիֆլիսում արդէն գոյութիւն ունէր Հրատարակչական Ընկերութիւն, բայց ստորագրող երիտասարդները գտնում էին, որ նրա նպատակը առհասարակ գրքեր հրատարակելն է, մինչդեռ հարկաւոր է մի կազմակերպութիւն, որ բացառապէս այնպիսի գրքեր հրատարակէ, որոնք գնի և բովանդակութեան կողմից միանգամայն մատչելի լինեն ժողովրդին։

Այդպիսի մի ընկերութիւն հիմնելու միտքն ունէին Երևանի երիտասարդները։ Բայց քանի որ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կանոնագրութիւնը թոյլ է տալիս և հրատարակչական գործունէութիւն, ուստի ստորագրողները այլ ևս աւելորդ էին համարում առանձին ընկերութիւնը և առաջարկում էին Խորհրդին բանալ ճիւղ Երևանում, բայց այն պայմանով որ այդ ճիւղը ինքնուրոյն

գործելու լիակատար իրաւունք ունենայ։ Այդ նպատակով առաջարկվում էր, որ նոյն իսկ փոփոխուի կանոնագրութեան 49 յօդուածը յատկապէս Երևանի վերաբերմամբ։

Խորհուրդը, ի հարկէ, մերժեց այդ առաջարկութիւնը։

Այնուհետև, յունիսի 7-ին ստացուեց 17 անձերից (որոնց թւում և նախկին թուղթը ստորագրողներից մի քանիսը) մի պարզ առաջարկութիւն՝ այնէ, բաց անել Երևանում Տեղական Վարչութիւն.

Խորհուրդը թոյլ է տալիս, Երևանում անդամ են դարձվում 49 հոգի, որոնք հոկտեմբերի 24-ին ընդհանուր ժողով կազմելով թեմի առաջնորդի փոխանորդ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցի նախագահութեամբ, ընտրում են Վարչութիւն, որի դիւանը կազմվում է այսպէս. նախագահ՝ բժ. Լևոն Տիգրանեան, գանձապահ՝ Ռուբէն Զալալեան, գործավար՝ Թ. Մեհերեան. անդամներ՝ Հայկ Մատակեան, Յովհաննէս Տէր-Զաքարեանց, փոխ-անդամներն էին Վլասիոս Տէր-Յովհաննիսեանց, Յովհաննէս Աթանասեանց և Թորոս Տէր-Ղազարեանց։

Նորընտիր Վարչութիւնը խնդրում է Խորհրդից կնիք փորել տալ, ստանում է այդ կնիքը, և այնուհետև ոչ մի տեղեկութիւն չէ տալիս իր մասին, ոչ հաշիւ է ուղարկում, ոչ պատասխանում է Խորհրդի թղթերին։ Համարելով Երևանի ճիւղը փակուած, Խորհուրդը երկար որոնում է թէ ուր մնացին նրա գործերն ու հաշիւները և 1886 թ. սեպտեմբերին դիմում է Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանին, իբրև ընդհանուր ժողովի նախագահին, մի թղթով, որի մէջ ասում էր, «Անդորրագրոց տետրներ, դրամք, կնիք և վարչութեան դիւանի գործ, այդ ամենը ցայսօր մնացել են ուր կամ ում մօտ աւանդ՝ այդ անյայտ է կացել Խորհրդին»։ Եւ խնդրում էր, որ Սուրէնեան եպիսկոպոսը հաղորդէ տեղեկութիւններ այդ բոլորի մասին։

Գէորգ եպիսկոպոսը պատասխանում է, թէ ինքը տեղեկութիւն չունի, որովհետև հրաժարուած է եղել ընդ-

հանուր ժողովի նախագահութեան պաշտօնից, բայց խորհուրդ է տալիս դիմել Երևանի քաղաքագլուխ Վասիլ Գեղամեանին, որ եղել է ընդհանուր ժողովի նախագահ։ Գեղամեանը պատասխանեց Խորհրդին, թէ ինքն էլ տեղեկութիւն չունի, սէտք է հարցնի երկու անձանց, որոնք եղել են Վարչութեան գանձապահ և գործավար։

Խորհուրդը նորից դիմում է Երևանի առաջնորդի փոխանորդին, որ այդ ժամանակ Սուքիաս եպիսկոպոս Պարգեանցն էր և խնդրում է տեղեկանալ այդ անձերից թէ ուր են Ընկերութեան թղթերն ու հաշիւները։ Սուքիաս եպիսկոպոսը կարողանում է գտնել կնիքը և ուղարկում է Խորհրդին, խնդրելով չոչնչացնել նրան, որովհետև ինքը մտադիր է աշխատելու, որ նորից բացուի Երևանի ճիւղը։ Ապա տեղեկանում է, որ ինքն իրան գաղարած Վարչութեան գումարներից 270 բուբլի գտնվում է երկու անձանց մօտ։

1888 թ. ապրիլին Երևանի ընակիչներից 52 հոգի դրաւոր խնդրում են Պարգեան եպիսկոպոսից միջնորդել որ նորից բացուի Երևանում Տեղական Վարչութիւն։ Ստանալով Խորհրդի թոյլատրութիւնը, Սուքիաս եպիսկոպոսը յունիսի 12-ին գումարում է ընդհանուր ժողով, որ իր նախագահութեամբ կատարում է վարչութեան անդամների ընտրութիւն։ Այնուհետև Երևանի ճիւղը կանոնաւոր կերպով շարունակում է իր գոյութիւնը։

Վերաբացուած ճիւղի Վարչութեան առաջին կազմը հետևեալն էր. բժ. Ալէքսանդր Սիմէօնեան՝ նախագահ, գործավար՝ Սիրական Տէր-Մարտիրոսեան, անդամներ՝ Էմին Տէր-Գրիգորեան, Կոստանտին Իւղբաշեանց, Կարապետ Դադամեանց։ —

Վարչութիւնը իր առաջին նախահաշիւը կազմելիս նկատի է առնում 785 ր. մուտք։ Նա վճռում է բաց անել Երևանում գրադարան-ընթերցարան և յատկացնում է այդ նպատակին 400 բուբլի։ Գիւղական դպրոցների գրա-

դարանների համար ընթերցանութեան գրքեր ձեռք բերելու 50 ռուբլի և Երևանի բոլոր գպրոցներում սովորող հայ աշակերտներին նպաստ 250 ռուբլի։— Նախկին դադարած Վարչութեան գումարներից ստացվում է միայն 70 ռուբլի։—

Մօտաւորապէս նոյն գործունէութիւնն ի նկատի է առնում Վարչութիւնը և հետևեալ տարիները։ Գրադարանի համար նշանակվում է գումար, որ պահվում է մինչև բացման թոյլտուութիւն ստանալը։ Աւելացվում է ծախսերի վրայ և տեղական աղքատներին օգնելու համար որոշ գումար։—

Սակայն, պէտք է նկատել, որ Երևանի Տեղական Վարչութեան տարեկան եկամտացոյցը գնալով մեծանում է։ Այսպէս, 1893 թուի գործադիր անդամների թիւը 220 է և մուտքի գումարը հասնում է 2824 ռուբլու։ Այդ գումարի մեծագոյն մասը յատկացվում է կրթական գործին։ Վարչութիւնը, ի նկատի ունենալով հայի պակասութիւնը, Աբարանում և Դարաչիչագում, իր միջոցներից, առանց նոյն իսկ նախապէս Խորհրդի համաձայնութիւնը հարցնելու, նախահաշուից դուրս, բաժանում է սոված աղգաբնակութեան 449 ռ. 60 կոպէկ։—

Աւելի նշանաւոր է Տեղական Վարչութեան գործունէութիւնը հետևեալ 1894 թուականին, երբ ինչպէս գիտենք, հայի թանգութիւնը Երևանի նահանգում աւելի ևս սաստկացաւ։ Յատկապէս սովեալներին օգնելու համար Վարչութիւնն ստացաւ Խորհրդից և ուրիշ տեղերից 5257 ռուբլի։ Այդ գումարով նա ձեռք բերեց 3335 պուդ ցորեն և բաժանեց Նոր-Բայազէդի, Դարաչիչագի, Ղրխբուլաղի և Աբարանի գիւղերում։ Օգնութիւն ստացան ընդամենը 1117 ընտանիք բաղկացած 6007 հոգուց։— Մնացորդ 1405 ռ. գործադրուեց նոյն նպատակով հետևեալ տարին։—

Իսկ 1896 թուականից սկսվում է Վաչութեան գործունէութիւնը թիւրքահայ գաղթականներին օգնելու հա-

մար։ Այդ թուին Վարչութիւնն արդէն ստանում է յատուկ յօգուտ գաղթականներին 761 ր. 45 կոպ. և ծախսում է 1354 ր. 40 կոպէկ։ Հետևեալ տարին յօգուտ գաղթականների ստացվում է 3141 ր. 33 կոպ., որից 1900 ր. Խորհուրդն էր ուղարկել։ Ստացուեց բացի դրանից և մօտ 25 հակ զգեստներ զանազան քաղաքներից, այլ և մեծ քանակութեամբ կտորներ։ Վարչութիւնը բաժանեց գաղթականներին 3542 կտոր հագուստեղէն, 3822 արշին ճօթեղէն և դրամական նպաստ ապրուստի, բժշկական օգնութեան և ճանապարհածախսի համար 2950 ր. 56 կոպ. Ընդամենը ծախսուեց 4331 ր. 32 կոպէկ։—Իսկ 1898-ին գաղթականների համար ստացվում է Խորհրդից 300 ր. և ծախսվում է 1210 բուբլի։

Վարչութեան սեփական միջոցներն էլ զգալի կերպով աճում են. և մենք տեսնում ենք, որ հաշիւների մէջ ցոյց է տրվում եկամուտ պարահանդէսներից, ներկայացումներից 1000 ր։ Համեմատ դրան աւելանում են և նպաստները կրթական գործին։ Այսպէս, 1898-ին Երևանի թեմական դպրոցի չքաւոր աշակերտներին բաժանուած են նպաստներ ընդամենը 807 բուբլի։ Իսկ անդամների բազմութեան կողմից Երևանի ճիւղը երբեմն հաւասարվում էր Թիֆլիսի կենտրոնին։

Թիւրքահայ գաղթականների տառապանքները միտք են տալիս Վարչութեան հիմնելու Երևանում մի ապաստարան-աղքատանոց։ Յետ է դրվում այդ նպատակով 500 բուբլի։ Մշակվում է ծրագիր և ուղարկվում է Խորհրդին։ Սակայն թէ այս հիմնարկութիւնը և թէ դրադարան ընթերցարանը դուրս չեն գալիս Վարչութիւնից անկախ պատճառներով։

Գրադարանի բացման թոյլտուութիւն Խորհուրդը խնդրում է Երևանի նահանգապետից դեռ 1890 թ. նոյեմբերի 8-ի դրութեամբ։ Լրացուցիչ տեղեկութիւններ ուղարկվում են նահանգապետին 1892-ի մարտին։ Իր խնդիրքը Խոր-

հուրդը կրկնում է 1893-ին և 1896-ին։ Նոյն թուի հոկտեմբերի 16-ի գրութեամբ նահանգապետը յայտնում է Խորհրդին, թէ ընկերութեան միջոցներով բացուող գրադարանները պիտի ենթարկուեն այն կանոններին, որ սահմանել է ներքին գործերի մինիստրը ժողովրդական ձրի գրադարանների համար, քանի որ այդ կանոնները վերաբերում են և այն գրադարաններին, որոնք թէև ձրի չեն, բայց մատչելի են ժողովրդի հասարակ դասին։ Հիմնուելով այդ կանոնների վրայ, նահանգապետը յայտնում էր, որ եթէ Խորհուրդը կամենում է որ գրադարանի թոյլատրութեան հարցը ընթացք ստանայ, նա պիտի ներկայացնէ իրան, նահանգապետին. 1) այն կանոնների ծրագիրը որոնք որոշում են ընթերցարանի նշանակութիւնը և նրանից օգտուելու պայմանները. 2) տեղեկութիւններ՝ թէ ինչ միջոցներով է ընթերցարանը հիմնվում և ապահովվում։ Բացի դրանից, այդ տեսակ գրադարաններում կարելի է պահել միայն այն գրքերը, որոնք առանձին ցուցակով թոյլատրուած են ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կողմից։ Եւ որովհետև այդ ցուցակում նշանակուած են միայն ռուսերէն գրքեր, ուստի Խորհուրդը պիտի ներկայացնէ նահանգապետին և հայերէն գրքերի ցուցակը, որպէս զի այդ ցուցակն էլ ուղարկուի ուր հարկն է ի հաստատութիւն։

Նահանգապետի այս պահանջները վերաբերում էին և այն գրադարաններին, որոնց բացման մասին խնդրել էին Հին-Նախիջևանի և Վաղարշապատի Տեղական Վարչութիւնները։

Խորհուրդը որոշում է ձեռք բերել նահանգապետի մատնանշած կանոնները և նրանց հետ ծանօթանալուց յետոյ, պարտ ու պատշաճը անօրինել։ Եւ այնուհետև Խորհուրդը, պատասխանելով 1898-ին Տեղական Վարչութեան նոր դիմումին, յայտնում է թէ ինքը Վարչութիւնը թող ներկայացնէ նահանգապետին հայերէն լրագրների և գրքերի ցու-

ցակը և Խորհուրդ է տալիս, որ մինչև թոյլտուութեան ստանալը բացուի զրադարան առանց հայերէն գրքերի։

Այնուհետև այլ ևս ոչ մի տեղեկութիւն չը կայ այս հարցի մասին։

Առ 1 յունվարի 1899 թ. Երևանի Վարչութեան տրամադրութեան տակ մնում էր առձեռն գումար զրադարանընթերցարանի համար 1360 ր. 13 կոպ։

III

ԱԽԱԼՑԽԱ[1]

Խորհուրդը դիմել էր Կարապետ Յովհաննէսեան Մութաֆեաններին՝ Ախալցխայում ճիւղ բանալու մասին։ Այդ երկուսի նախաձեռնութեամբ՝ 17 հոգի ախալցխացիներ 1882-ի մարտի 10-ին դիմում են Խորհրդին, խնդրելով թոյլտուութիւն՝ ճիւղ բանալու համար։ Խորհուրդը անմիջապէս թոյլատրում է։ Բայց «մի քանի տեղական հանգամանքների» պատճառով, ինչպէս ասուած է Յովհաննէսեան Մութաֆեանի նամակում, այդ թոյլտուութիւնը գործադրվում է միայն 1884-ի յունվարին, երբ գումարվում է անդամների ընդհանուր ժողով, գնդապետ Իսահակ Մելիք-Հայկազեանի նախագահութեամբ և ընտրվում են Վարչութեան անդամներ։ Ընտրուածներն էին. գնդապետ Ի. Մելիք-Հայկազեան, Յովհաննէսեան Մութաֆեան, Գրիգոր Պուտուղեան, Աբրահամ քահանայ Ղազազեանց և Յովհաննէս Զաթալբաշեան։ Վարչութեան նախագահն էր Ի. Մելիք-Հայ-

---

[1]) Խորհրդի արխիվում այս ճիւղի գործունէութեան մասին կցկտուր տեղեկութիւններ կան։ Տեղական Վարչութեան հաշիւները շատ անկանոն և խառն ի խուռն են։

կազեան, որ վարեց այդ պաշտօնը անընդհատ մինչև 1894 թուականը։

Նորընտիր Վարչութիւնը, գլխաւորապէս շնորհիւ իր նախագահի դրած դրած ջանքերի, առաջին տարին այնպիսի աչքի ընկնող եռանդ է ցոյց տալիս, որ Խորհրդի շնորհակալութիւններին և բարեմաղթութիւններին է արժանանում։ Եւ իրաւ, այդ առաջին տարին Ախալցխայի ճիւղն ունէր 100 անդամ, բացի դրանից՝ Վարչութիւնը հաւաքեց նուէրներ 578 ր. 72 կոպէկ։ Ընկերութեան նուիրուեցին և անցեալ տարիները թիւրքահայ Բարեգործական Ընկերութիւնների համար հաւաքուած նպաստներից մնացած 500 ռուբլի, իսկ մի անհատ (Արշակ Յակոբջանեան) նուիրեց և խաղարկութեան մի տոմս [1])։ Այսպիսով Վարչութիւնը առաջին իսկ տարին կազմեց իր համար անձեռնմխելի մի գումար 1325 ր., որ վերածուեց բանկային արժէթղթերի։

ԳՆ. Ի. ՄԷԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆ

Սակայն երկրորդ տարուանից տեղացիների ողորմութիւնը պակասում է և անդամների թիւը հասնում է մինչև 15-ի։ Այնուհետև այդ թիւը դարձեալ սկսում է բարձրանալ և 1897—1898 թուականներին հասնում է 80—90-ի։

Ախալցխայում էլ Վարչութեան առջև կանգնած գլխաւոր հոգսը կրթական գործն էր, որի նպաստելու համար

[1]) 1887-ին երկու խաղարկութեան տոմս նուիրեց Սուրէն Մութաֆեանը։

նա ծախսում էր իր միջոցների ամենախոշոր մասը։ Նա օգնում էր չքաւոր աշակերտներին, իսկ ժողովրդի կրթական պահանջներին բաւարարութիւն տալու համար 1892 թուին Վարչութեան անդամ Սամսոն Յարութիւնեանի ջանքերով բաց արաւ գրադարան-ընթերցարան։ Այս գործի մէջ Տեղական Վարչութիւնը այն ինքնուրոյն թիւը ցոյց տուաց, որ նախքան գրադարան-ընթերցարան բանալը նրա համար սեփական շինութիւն ունեցաւ։ Գլխաւորապէս Ս. Յարութիւնեանի միջնորդութեամբ քաղաքը ընծայեց մի կտոր գետին, իսկ շինութիւնը շինուեց տեղացիների նուէրներով։ Նրա վրայ ծախսուեց 3000 բուբլի։

Գրադարան-ընթերցարանի մասին մենք ունենք միայն համառօտ տեղեկութիւններ, որոնք վերաբերում են 1897 թուականին։ Այդ տարուայ սկզբին գրադարանում կային 1755 կտոր գիրք՝ 1497 ր. արժողութեամբ։ Բացի ընկերութեան անդամներից, որոնք ձրի էին օգտվում, գրադարանն ունեցել է, տարեկան և ամսական յատուկ բաժանորդներ--198։

Ախալցխայի Վարչութեան ինքնուրոյն գործունէութիւնը արտայայտուեց և արհեստաւորներին նպաստելու գործում։ 1887 թ. յունվարից նա բաց արաւ գորգագործութեան արհեստանոց չքաւոր դասի կանանց համար։ Տարաբախտաբար, յայտնի չէ թէ ինչպէս կազմակերպուեց այս գործը, որքան սովորողներ կային և դրամական ինչ միջոցներ էին ծախսվում։ Վարչութեան մի զեկուցագրից իմանում ենք, որ գորգագործութիւնը գոյութիւն ունեցաւ միայն հինգ տարի և պատրաստեց փորձուած վարպետուհիներ։

Ախալցխայում հին ժամանակներից գոյութիւն ունէր առանձին աղքատախնամ հոգաբարձութիւն, որ ունենում էր իր ձեռքի տակ բաւական նշանաւոր գումարներ, բայց որովհետև մատակարարութիւնը կատարվում էր անհատների ձեռքով, առանց հսկողութեան և կօնտրոլի, ուստի

և կորչում էին գումարները։ Տեղական Վարչութեան բացուելու օրից, նրան է յանձնվում և ազգատոհնում հոգաբարձութեան ամբողջ գործը։ Հոգաբարձութիւնը, շարունակելով ըստ հին աւանդութեան իր գոյութիւնը, գանվում էր Տեղական Վարչութեան հսկողութեան տակ և իր միջոցները պահում էր Վարչութեան գանձարանում։ Սակայն այսպէս գործել կարելի եղաւ միայն առաջին տարին, որովհետև Թիֆլիսի Խորհուրդը պահանջեց, որ կամ ազգատոհնում հոգաբարձութիւնը վերջ տայ իր գոյութեան, յանձնելով իր բոլոր գործերը Տեղական Վարչութեան, կամ բաժանուի Ընկերութիւնից։ Այս վերջին պայմանն էլ կատարուեց։

Ախալցխայի Տեղական Վարչութիւնը լուրջ փորձեր արաւ և մի հիւանդանոց կառուցանելու։ Նախագահ Մելիք-Հայկազեանը, ինչպէս կարդում ենք Տեղական Վարչութեան զեկուցագրի մէջ, «հրաւիրում է պատուաւոր քաղաքացիներ, մասնագէտ բժիշկներ, կազմում է նոցանից մի մասնաժողով և ձեռնարկում կանոնագրութեան նախագիծը կազմելու»։ Թիֆլիսի նահանգապետը, որին ներկայացուած էր այդ ծրագիրը, համակրութիւն ցոյց տուեց և խոստացաւ իր աջակցութիւնը։ Սակայն, «իրանից մի քանի անկախ պատճառներով», այդ հիմնարկութիւնը գլուխ չէ գալիս։—Տեսանք որ Տեղական Վարչութիւնը առաջին տարուց կազմեց անձեռնմխելի գումար։ Այդ գումարը պատճառ դարձաւ ընդհարումների՝ Խորհրդի և Վարչութեան մէջ։—Նախ և առաջ երկար գրագրութիւն սկսուեց կանոնագրութեան 49 յօդուածը կատարելու մասին։ Իսկ երբ Վարչութիւնը կատարեց այդ յօդուածը, ուղարկելով իր անձեռնմխելի գումարները Խորհրդին, այն ժամանակ էլ հարց յարուցուեց, թէ ինչ տեսակ գումար պէտք է համարել խաղարկութեան տոմսերը։ Խորհուրդը պահանջում էր, որ նրանք համարուեն անձեռնմխելի և ոչ յատուկ։ Վարչութիւնը իր իրաւունքներն էր պաշտպանում և բերում էր նուիրատուների պարզ արտայայտուած ցանկութիւնը,

որ այդ տոմսերը յատկապէս Ախալցխայի տեղական պէտքերի համար նշանակուած համարուէն։

Պէտք է խոստովանել որ Խորհուրդը այս հարցի մէջ աւելորդ կրքոտութիւն ժոցրեց։ Այս երևում է 1891 թ. մայիսի 25-ի գրութիւնից, որի մէջ Խորհուրդը, նոյն իսկ աւելորդ համարելով ընդհանուր ժողովի անօրէնութիւնը հարցնել, իր կողմից կարգադրում էր, որ եթէ նուիրատուները համաձայն չեն, կարող են յետ վերցնել իրանց նուէրը։ Եւ նրանցից մէկը, Յակոբջանեան, անուանելով Խորհրդի այդ վարմունքը «բռնաբարութիւն իրաւունքի և ցանկութեան», իր խաղարկութեան տոմսը նուիրում է Ախալցխայի քաղաքային դպրոցին, որի տեսուչ Բոդդանովը ստանում է այդ տոմսը։

Յարաբերութիւնները Խորհրդի և Տեղական Վարչութեան մէջ կրքոտ ընաւորութիւն են ստանում, մանաւանդ 1893 թուականին։ Խորհրդի քարտուղարը փետրվարի 14-ի ընդհանուր ժողովում կարդում է զեկուցագիր Ընկերութեան 19 ճիւղերի եռամեայ (1889, 1890 և 1891 թ.) հաշիւների մասին, ցոյց է տալիս նրանցից մի քանիսի կատարած «զեղծումները և յապաղումները» և առաջարկում է ուղարկել «քննիչներ՝ տեղական ճիւղերի գործունէութեան աւելի կանոնաւոր ընթացք տալու համար»։

Խօսք է լինում և Ախալցխայի մասին։ Տեղական Վարչութեան նախկին անդամ Սամսոն Յարութիւնեանը յայտարարում է, թէ «Ախալցխայի ճիւղին վերագրած մի քանի զեղծումները իրօք զեղծում չեն, այլ գործունէութիւն։ Այդ ճիւղը ձեռնարկելով մեծամեծ գործերի, ինչպէս օր. ընթերցարանի և արհեստանոցի հիմնարկութեան, չէ կարողացել ժամանակին ուղարկել հաշիւները և կամ ճշտութեամբ հետևել նախահաշուին և այդ պատճառով քննիչ ուղարկելը, նա համարում է անհիմն» [1])։

---

[1]) «Տեղեկագիր» 1893, եր. 71.

Այդ առիթով և պատասխանելով Խորհրդի զրութիւններին, Տեղական Վարչութիւնը մի խիստ բանակռուի մէջ է մտնում։ Նա ապացուցանում է, որ ինքը ոչ մի զեղծում չէ գործել և սաստիկ բողոքում է ընդհանուր ժողովում կարդացուած զեկուցագրի դէմ, անուանելով այն «անհիմն և աննպատակ, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ցուցամոլութեան դարձեալ մի նոր ապացոյց»։

1894 թուին Վարչութեան նախագահ Մէլիք-Հայկազեանը հեռացաւ Ախալցխայից։ Այս առիթով Վարչութիւնը տեղական ընդհանուր ժողովին առաջարկեց ընտրել Մէլիք-Հայկազեանին ընկերութեան պատուաւոր անդամ ի վարձատրութիւն նրա սասնամեայ անխոնջ գործունէութեան։ Առաջարկութիւնն ուղարկուեց Խորհրդին։ Վերջինս առաջ բերեց վերոյիշեալ բանակռիւը, գտնելով որ Մէլիք-Հայկազեանի նախագահութեան օրով են տեղի ունեցել «զեղծումները և յապաղումները»։ Սակայն Վարչութիւնը նորից պնդեց, որ ոչմի զեղծում տեղի չէ ունեցել։ Առաջարկութիւնը ներկայացուեց Թիֆլիսի ընդհանուր ժողովին, որ և 1896 թ. փետրվարի 25-ի և մարտի 3-ի նիստերում, երկարատև վիճաբանութիւններից յետոյ, ընտրեց Մէլիք-Հայկազեանին Ընկերութեան պատուաւոր անդամ։

Ախալցխայի ճիւղի գործունէութեան մէջ յիշատակելի է և այն, որ նա Խորհրդից ստացած նպաստներով մասնակցել է հայ ուսուցիչներին ցենզ ձեռք բերելու համար օգնելու գործի մէջ, ինչպէս և խնամել է թիւրքահայ գաղթականներին։

IV.

ՔԱՐՎԱՆՍԱՐԱ ԳԻՒՂ

(1882—1883)

Խորհուրդը սաորագրական թերթ և հրաւէր էր ուղարկել այս գիւղի ծխատէր քահանայ Ղուկաս Սիմէօնեանցին, որ 1882-ի մարտին, ներկայացնելով Խորհրդին 15 անդամների ցուցակը և նրանց վճարած 75 բուբլին, խնդրեց թոյլատուութիւն բաց անելու գիւղում տեղական վարչութիւն։

Վարչութիւնը կազմուեց նոյն տարուայ հոկտեմբերին և նրա նախագահ ընտրուեց նոյն Ղուկաս քահանան։ Վարչութիւնը, տեղեկացնելով Խորհրդին, թէ արդէն սկսել է իր գործունէութիւնը, խնդրեց վերադարձնել իրան պատկանող 75 բուբլի գումարը։ Խորհուրդը կատարեց այդ խնդիրը։ Այնուհետև Տեղական Վարչութիւնը կատարեալ լռութեան մատնեց իրան։ Եւ մի տարուց յետոյ Խորհուրդը գրում էր. «Վարչութիւնդ անցեալ 1882-ի հոկտեմբերի 22-ից իւր գոյութիւնը Խորհրդին յայտարարելուց դէս, էլ ոչ մի հաղորդութիւն արած չլինելով... և ոչ վերջապէս այսքան ժամանակ կամեցած լինելով իւր գոյութեան շարունակութիւնը որև է նշանով ապացուցանել Խորհրդին»։ Խորհուրդը հարցնում էր տեղեկութիւններ, պատասխան չը ստացուեց։

Միայն 1885-ին նախագահ Ղուկաս քահանան յայտնում է Խորհրդին, թէ Տեղական Վարչութիւնը մի տարի միայն գոյութիւն է պահպանել, երկրորդ տարին անկարելի է լինում անդամներ գտնել և ճիւղը փակվում է։ Վարչութեան դրամը, մօտաւորապէս 130 բուբլի, մնացել է գան-

ձապահի մօտ, որ տուել է դանապան անձանց ի շահեցողութիւն։

Խորհուրդը գրում է Ղուկաս քահանային, որ նա ամեն ջանք գործ դնէ Վարչութեան գործունէութիւնը նորից սկսելու, իսկ եթէ այդ անհնար է, այն ժամանակ աշխատէ ստանալ Վարչութեան գումարը՝ 130 ր. և անդորրագրերի տետրակի ու գործի հետ ուղարկէ Խորհրդին։

Պատասխան չէ ստացվում։

V

ԳՕՐԻ

(1884—1899)

Այս ճիւղի հիմնադիրն էր Ստեփանոս տէր քահանայ Տէր-Ստեփանեանցը և դրդապատճառը եղել է Գօրում 1876 թուից բացուած Անդրկովկասեան Ուսուցչական Սեմինարիան, որի նպատակն էր գիւղական ուսուցիչներ պատրաստելը։

Ստեփանոս քահանան կրօնուսոյց և հայոց լեզուի դասատու էր այդ Սեմինարիայում։ Գիւղական ուսուցչի պաշտօնին ձգտում էին դլխաւորապէս անապահով դասակարգի երիտասարդները։ Նրանք գնում էին Գօրի, համարեա ամենքն էլ չունենալով ապրուստի միջոցներ։ Թէև պետական գանձարանից չքաւորներին մասնաւոր նպաստ էր տրվում, բայց միայն այդ նպաստը բաւական չէր ապրելու համար։

Ահա այդպիսիներին օգնելու համար էր, որ Ստեփանոս քահանան ձեռնարկում էր Ընկերութեան ճիւղ հիմնելուն։ Բացի դրանից, նրան ղեկավարում էր և մի

այլ դաղափար, որ նա այսպէս էր բացատրում 1884 թ. յունիսի 8-ին Խորհրդին ուղարկած թղթի մէջ։

«Ուսանողների գործնական վարժութեանց համար (Սեմինարիայում) բացուած են չորս տարրական դպրոցներ՝ ռուսաց, հայոց, վրաց և տաճկաց, որտեղ ապագայ ուսուցիչները դասախօսում են իրանց մայրենի լեզուով ամեն մէկը իր ազգութեան պատկանեալ դպրոցում։ Հայոց տարրական դպրոցի կազմակերպութիւնը բնականից փոքր ինչ շեղուած է, որովհետև Գօրուց և նրա գաւառի հայերը, չիմանալով իրանց մայրենի լեզուն, չեն մատակարարում այնպիսի անգրագէտ մանուկներ, որոնք կարողանային սկզբնական դաստիարակութիւնը սկսել իրանց մայրենի-հայերէն լեզուով. այդպիսիները թէև ուսանում են հայերէնը, բայց օտար լեզուի օգնութեամբ»։ Այդ պակասութիւնը վերացնելու համար պէտք էր հայաբնակ գաւառներից անգրագէտ երեխաներ բերել Գորի, իսկ նրանց ապրուստի միջոցները հայթհայթել Ընկերութեան նպաստով։—

Ստանալով Խորհրդից թոյլատրութիւն, Ստեփանոս քահանան 1885 թ. յունվարի 4-ին գումարում է տեղական անդամների ընդհանուր ժողով, որ ընտրում է Տեղական Վարչութիւն։ Ընտրուեցին. Ստեփանոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեան, Յակոբ Էլիմիրզեան, բժիշկ Զաքար Տէր-Մինասեան, Գալուստ Ստեփանեան և Ալէքսանդր Յակոբեան։ Վարչութեան նախագահ ընտրուեց ինքը հիմնադիրը, որ և վարեց այդ պաշտօնը մինչև իր մահը (1894)։—

Տեղական հանգամանքների համեմատութեամբ՝ Գորու ճիւղը բաւական աչքի ընկնող գործունէութիւն ունէր։ Անդամների թիւը 1885-ին 40 էր, 1887-ին՝ 87։ Տարեկան նախահաշիւը երբեմն հասնում էր մինչև 900 ր. [1]։

Այդ միջոցների գործադրութեան եղանակը արդէն նախատեսուած էր Ստեփանոս քահանայի վերոյիշեալ

[1]) Բոլոր տարիներին վերաբերեալ հաշիւներ չը կան Խորհրդի գործերի մէջ։

թղթի մէջ։ Նորընտիր Վարչութիւնը 1885 թ. յունվարի 25-ին իր արձանագրութեան մէջ գրում էր հետևեալը.

«1) Կովկասու Հայոց Բարեգործական Ընկերութեան ամենանշանաւոր նպատակներից մէկն է լուսաւորութիւն տարածել հայ հասարակութեան մէջ ընդհանրապէս. համակրելով այս սուրբ նպատակին, Գօրայ Տեղական Վարչութիւնը մասնաւորում է այդ նպատակը, կենտրոնացնելով իւր գործունէութիւնը Գօրայ և նրա վիճակի վիրախօս հայ մանկաւոյ վրայ։ Ուրեմն աշխատելու է. նախ՝ բազմաթիւ բնակչաց մէջ, որոնք լեզուով բոլորովին խորթացած են հայութիւնից, տարածել հայախօսութիւնը և ապա ազգային լեզուի միջնորդութեամբ հայ մանկաւոյն մատակարարել և տարրական ամենակարևոր ուսումը, չը շեղուելով երբէք քրիստոնէական-բարոյական ուղղութիւնից։ 2) Որովհետև Գօրայ մէջ հայախօսութիւնը չէ ընդհանրացած հայ ընտանիքներում և այս պատճառով դժուար է այստեղ գտնել հայախօս մանուկներ, ուստի վերոգրեալ նպատակը յաջողութեամբ յառաջ տանելու հաւար զանազան հայախօս գաւառներից ինչպէս՝ Ելիսաւետպոլ, Շուշի, Շամախի, Ախալցխա և այլն, պիտի հերթով Վարչութեանս ծախսով հրաւիրուեն անգրագէտ հայախօս աղքատ ծնողաց որդիք 7—9 տարեկան, որպէսզի սոքա տարրական ուսումը ստանալով Գօրիում գտնուող Անդրկովկասեան Ուսուցչական դպրանոցի հայոց դպրոցում, առանձին բնակարանում կենան վիրախօս հայ, նոյնպէս աղքատ ծնողաց որդոց հետ։ Սոցա թէ թուոյ, թէ ընտրութեան և թէ ապրուստի եղանակների մասին Վարչութիւնս ունի մշակել առանձին կանոններ»։

Ծրագրվում է բաց անել աշակերտական բնակարան. առաջին տարին այդտեղ պիտի ընդունուէին երկու հայախօս և երկու վիրախօս երեխաներ։ Այդ բնակարանը բացվում է նոյն 1885-ին։ Դա մի փոքրիկ, բայց հետաքրքրական հիմնարկութիւն էր։ Կարևոր ենք համարում նրա մասին մի քանի տեղեկութիւններ տալ։ Ահա ինչ էր գրում Տեղական Վարչութիւնը 1887-ի մայիսի 16-ին.

«Աշակերտական բնակարանի կարևորութիւնը վաղուց զգացվում էր Գօրի քաղաքի համար, որպէսզի նոյն տեղում բնակուելով հայախօս երեխաներ վիրախօսների հետ, վերջինները միջոց

ունենան հայախօսութեան մէջ վարժուելու. բացի դրանից նոյն բնակարանում ազատ մուտք ունենալով հայ մանուկներ թէ հայոց ծխական և թէ ուսուցչական դպրանոցի տարրական ուսումնարաններից, նոյնպէս վարժուին հայախօսութեան մէջ, մանաւանդ որ Գօրի քաղաքում դժուար է գտնել մի հայ ընտանիք, որտեղ ընդհանրացած լինի հայախօսութիւնը: Բայց որպէսզի բնակարանի գոյութիւնը օրինաստման լինի, Վարչութիւնս հրաւիրեց երկուց վարժապետաց, այն է պ. պ. Սողոմոնի Տէր-Յարութիւնեանց և Գրիգորի Խիթարեանց մասնակցութիւնը, որոնցից առաջինը ծառայում է Անդրկովկասեան Ուսուցչական դպրանոցում, իսկ երկրորդը՝ հայոց ծխական դպրոցներում և օրիորդական պրոգիմնազիայում, ուստի երկու իսկ անձինք յայտնի են տեղական դպրոցական վարչութեանը, որոնց մօտ անարգել կարող են ընակութիւն ունենալ թէ հայոց ծխական և թէ ուսուցչական դպրանոցի աշակերտները»: Այդ ուսուցիչները յանձն են առնում աշակերտական բնակարանում ապրել և վճարել Վարչութեան ամսական 20-ական ռուբլի իբրև իրանց ծախս: «Գործի այսպիսի դրութեան օգուտը ակներև ցոյց տրուեցաւ վեց ամսեայ փորձովը թէ նիւթապէս և թէ մանաւանդ բարոյապէս: Գօրայ վիճակից դեկտեմբերին քուէով ընտրած 8 տարեկան դիւղացի մանուկը—Սարգիս Մովսիսեանց—չորս ամսուայ միջոցում սկսեց հայերէն խօսել: Բացի դրանից՝ նոյն բնակարանում նոյն միջոցում կատարուեցան երկու գրականական երեկոյ և մի գրականական առաւօտ, յորում բնակարանի աշակերտները, խառնուելով հայոց ծխական դպրոցի աշակերտների հետ, վարժվում էին հայախօսութեան մէջ, մանաւանդ գրականական երեկոների նախապատրաստող պարապմունքների ժամանակ»:

Վեց ամսուայ ընթացքում այդ բնակարանի վրայ ծախսուել էր 327 ռուբլի: Եւ որովհետև Վարչութիւնը միջոցներ չունէր բնակարանի կահաւորման ծախսերը հոգալու, նրա խնդիրքով Խորհուրդը իր միջոցներից 1886-ին միանուագ նպաստ տուեց 120 ռուբլի:

Սակայն այս հիմնարկութիւնը մշտական չէր: Վարչութիւնը երեք տարուց յետոյ արդէն միայն որդեգիրներ է պահում դպրոցներում, նպաստներ է տալիս ծխական դպրոցներին, բժշկուելու միջոց չունեցող հիւանդներին: Այս

սահմանների մէջ էլ Գօրու ճիւղը շարունակում է իր գործունէութիւնը մինչև 1899 թուականը։ —

VI

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ

(1885 — 1899)

Ճիւղը բացվում է Նախիջևանի յաջորդ Յովսէփ վարդապետ Փինաչեանի նախաձեռնութեամբ։ 1885 թ. յունվարի 21-ի Ընդհանուր ժողովից ընտրուած Վարչութեան կազմն էր. Միքայէլ Մելիքեանց (նախագահ), Ստեփանէգ Գասպարբէգեանց, Սերգէյ Սարգսեանց, Յովհաննէս Բախշիեան, Յովհաննէս Մելիքսէթեան։

Վարչութիւնը վճռում է գրադարան-ընթերցարան բաց անել։ Սպասելով թոյլտուութեան, նա ոչ մի ծախս չէ անում, նոյն իսկ նախահաշիւ չէ կազմում հետևեալ տարուայ համար։ Մի տարուց աւել անցնելուց յետոյ Խորհուրդը ստիպուած է լինում նամակով հարցնել Փինաչեան վարդապետից թէ արդեօք գոյութիւն ունի՞ Տեղական վարչութիւնը և ստանում է հեռագրով պատասխանթէ՝ այո՛ գոյութիւն ունի։ 1887 թ. Խորհուրդը գրութիւններ ստանում է Տեղական Վարչութիւնից։

1887-ին էլ Երևանի Նահանգապետը № 4265 վկայականով թոյլ է տալիս բաց անել գրադարան, որ և բացվում է։

Բայց 1889 թ. յուլիսի 13-ին նախագահ (որ և գանձապահ) Մելիքեանը գրում է Խորհրդին թէ Վարչութեան անդամներից մէկը 1888-ին 8 հատ անդամակցական անդորրագրեր էր բաժանել զանազան անձանց և երբ նրանից պահանջուեց այդ անդորրագրերի փողը, նա պատաս-

խանեց թէ դեռ չէ ստացել, թէ գրուողներից ոմանք վերադարձրել են անդորրագրերը և թէ ինքը չը գիտէ թէ ուր է դրել այդ վերադարձրածները։ Բայց խոստացաւ թէ փողը և թէ անդորրագրերը հասցնել Վարչութեան։ Ամիսներ անցան, նորից պահանջուեց և նորից նոյն պատասխանն ստացուեց։ Այս պատճառով ամենքը զզուած հեռացան և ոչ ոք այլ ևս չը կամեցաւ Ընկերութեան անդամ գրուել։ Քանի անդամ հրաւէրներ եղան, բայց ոչ ոք չեկաւ։—

Սրտի ցաւով յայտարարելով այս մասին, նախագահը խնդրում էր Խորհրդից, որ Նախիջևանի ճիւղը այնուամենայնիւ փակուած չը համարուի, քանի որ նորից ճիւղ բանալը ոչ միայն դժուար է, այլ և անհնարին։

Խորհուրդը «սեպտեմբերի 16-ի նիստում ցաւօք սրտի եկաւ այն տխուր եզրակացութեանը, թէ երբ մի փոքրիկ և ամփոփ հասարակութեան մէջ, որ հնարաւորութիւն ունի միշտ տեղեակ լինելու իր հասարակական շահին վերաբերեալ մի գործի, ուրեմն և նրա կատարման թերութիւնները և անճշտութիւնները լրացնելու և ուղղելու, այնքան անտարբերութիւն է տիրապետում, որ նա ոչ թէ յիշեալ պակասութիւնների կարճումն է պահանջում խստութեամբ, այլ մէկի գործած զեղծմունքի պատճառով միւսներն իրենց ձեռքերը լուանում և յետ են քաշվում,— այնպիսի տեղում մի հասարակական հիմնարկութիւն, որպիսին է Ընկերութեանս տեղական բաժինը, չի կարող առ ժամն գոյութիւն ունենալ առանց խանգարելու Ընկերութեան կանոնաւոր և ապահով ընթացքը»։ Եւ որոշում է փակուած համարել Նախիջևանի ճիւղը և խնդրել նախագահին որ հաշիւները, գոյքը ուղարկէ իրան, Խորհրդին, մաքրելով նաև վերոյիշեալ 40 բուբլու հաշիւը։—

Փակուած ճիւղն ունեցել է 1885-ին 23 անդամ, 1886-ին 19, 1887-ին և 1888-ին՝ 21։—

1891 թուին Հին-Նախիջևանի երիտասարդութիւնը

(21 հոգի) խնդրում է յաջորդ Գրիգորիս վարդապետ Տէր-Յակոբեանից միջնորդել, որ նորից բացուի Տեղական Վարչութիւնը։ Խորհրդի թոյլատրութեամբ ընդհանուր ժողով է հրաւիրվում, ընտրվում է վարչութիւն, համարեա հին կազմով։ Ընթերցարանը բացվում է նորից 1892-ին։ Անդամների թիւը 27 է։ Ընթերցարանի վրայ ծախսվում է 191 ռուբլի։

Բայց նոյն 1892-ին փոխվում է Վարչութեան կազմը և Գրադարան-Ընթերցարանը դառնում է նոր Վարչութեան առանձին հոգացողութեան առարկայ։ Թէ ինչ դրութեան մէջ էր այդ հիմնարկութիւնը մինչև այդ, ցոյց է տալիս Վարչութեան մի գրութիւն, որի մէջ ասուած է. «Գրադարանը կառավարվում էր շատ անկանոն կերպով. ամիսներով փակ էր, գրքեր գրեթէ չընկալին գրադարանում և եղածներից էլ ոչ ոք չէր օգտվում, սատացվում էին միայն Թիֆլիսում հրատարակուող հայերէն և ռուսերէն պարբերական հրատարակութիւնները, որոնք յաճախ փոխանակ ընթերցարանում դրուելու, զանազան անձանց ձեռքն էին ընկնում»։

Նոր Վարչութեան ջանքերով բարեկարգուած Գրադարան-Ընթերցարանը անմիջապէս ազդում է ճիւղի գործունէութեան վրայ. անդամների թիւը հասնում է 61-ի։

Սակայն նոյն 1893-ի հոկտեմբերին տեղային ոստիկանական պրիստաւը փակում է Գրադարան-Ընթերցարանը, յայտնելով թէ այդ կարգադրութիւնն արել է Երևանի նահանգապետը, «որ անյարմար է գտել Նախիջևանում Ընթերցարանի գոյութիւնը»։ Յայտնելով այս եղելութիւնը Խորհրդին, Վարչութիւնը խնդրում էր որ նա իր կողմից հնարաւոր ջանքերն անէ, որպէս զի նորից բացուի Գրադարան-Ընթերցարանը, քանի որ առանց նրան Նախիջևանի ճիւղը չէ կարող ունենալ յաջողութիւն։

Եւ իրաւ, հետևեալ տարին 1894-ին, անդամների թիւը արդէն 16 է և Վարչութիւնը 130 ռուբլի է տալիս ու-

սումարաններին։ Իսկ 1896-ին թէև անդամների թիւը 22 է, բայց ծախսը միայն այս է. դիւանական՝ 6 ր. 72 կոպ., 5 % ֆոնդի համար 5 ր., տաճկահայ գաղթականներին 16 ր. 90 կոպ., տեղական աղքատներին՝ 3 բուբլի։ Գումարը 31 ր. 62 կոպէկ, մնացորդ 184 ր. 19 կոպ.։ Հետևեալ տարիների հաշիւները չը կան Խորհրդի գործերում։—

Փակուած գրադարանի մէջ, ինչպէս երևում է Վարչութեան ուղարկած ցուցակից, կային ընդամենը 258 հատ հայերէն և ռուսերէն հրատարակութիւններ, մեծագոյն մասը էժանագին բրոշիւրներ և ռուսերէն շաբաթաթերթերի ձրի յաւելուածներ։ Խորհուրդը դիմեց Երևանի նահանգապետին, խնդրելով թոյլատրութիւն որ վերաբացուի Գրադարանը, բայց մեզ արդէն յայտնի է նահանգապետի կարգադրութիւնը գրադարանների մասին [1]։

VII

ԲԱԹՈՒՄ

(1889—1899)

1889 թուականի մարտի սկզբում, մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ, Բաթումի հայ հասարակութիւնից 58 հոգի ժողով կազմելով, ժամանակաւոր նախագահ են ընտրում Առաքել Սարուխանեանին, քարտուղար Յովսէփ Տէր-Պետրոսեանին և գանձապահ՝ Մկրտիչ Միհրանեանին և Ընկերութեան անդամ գրուելով ու անդամավճարը գանձապահին յանձնելով, ստորագրում են մի թուղթ Խորհրդի անունով, խնդրելով թոյլ տալ որ Բաթումում

[1] Տես վերևում «Երևան»։—

բացուի Տեղական Վարչութիւն։ Յովսէփ Տէր-Պետրոսեանը, ուղարկելով այդ թուղթը ընդհանուր ժողովի նախագահ բժ. Նաւասարդեանին, մի առանձին նամակով խնդրում էր նրա աջակցութիւնը, որ Խորհուրդը շուտ կարգադրութիւն անէ ճիւղը բանալու մասին և մանրամասն հրահանգներ տայ թէ ինչպէս պէտք է տանել գործը։ Նա յայտնում է թէ որքան կարևոր է ընկերութեան ճիւղի գործունէութիւնը Բաթումում, թէ որքան ուրախութիւն պատճառեց այն հանգամանքը, որ կարելի եղաւ ի մի խմբել հասարակութեան մի մասը՝ այդպիսի մի գործ յաջողացնելու համար։

Ստանալով թոյլաւութիւն, ժամանակաւոր նախագահ Սարուխանեանը նոյն թուի ապրիլի 20-ին հրաւիրեց անդամներին ընդհանուր ժողովի, ուր և ընտրուեցին Վարչութեան անդամներ. Առաքել Սարուխանեան, Յարութիւն Մնացականեան, Յովհաննէս Գէորգիէվեան, Արշակ Ծառուբեան և Մկրտիչ Միհրանեան։ Վարչութիւնն այսպէս կազմակերպեց իր դիւանը. նախագահ՝ Սարուխանեան, փոխ-նախագահ՝ Գէորգիէվեան, գանձապահ՝ Միհրանեան, գործավար Յովսէփ Տէր-Պետրոսեան։—Ա. Սարուխանեան վարեց նախագահի պաշտօնը մինչև 1895-ի կէսը։

Նոյն 1889 թուին, Բաթումի Տեղական Վարչութեան միջնորդութեամբ, բացուեց Արդուինում Տեղական Մասնաժողով, որ ենթարկուած էր Բաթումի ճիւղին։

Առաջին տարին Բաթումի Վարչութիւնը նախահաշիւ և ծախսեր չունեցաւ։ Ընդհանուր ժողովը, ի նկատի առնելով որ տարուայ կէսն արդէն անցել է և Թիֆլիսի ընդհանուր ժողովը նախահաշիւը կարող է քննել և հաստատել միայն երկրորդ կիսամեակին, աւելի լաւ համարեց որ Տեղական Վարչութիւնը պահէ իր եկամուտները եկող տարուայ համար։

1890 թուի նախահաշիւը նախատեսում էր մուտք 1414 ռուբ. 10 կ.։ Անդամների թիւը նշանակուած էր

80։ — Այդ եկամուտը ամբողջութեամբ յատկացվում էր դպրոցական գործին։ Վարչութիւնը ողջոյց ծխական դպրոցին նպաստ նշանակեց 500 ռուբլի. և որովհետև մտադրութիւն կար նոյն թուի սեպտեմբերին բաց անել օրիորդական դպրոց ևս, Վարչութիւնը, այդ գործը յաջողեցնելու համար որոշեց տալ այդ դպրոցին 800 ռուբլի նպաստ։ Գլխաւորապէս այդ օգնութեան շնորհիւ էր որ բացուեց օրիորդաց ծխական դպրոցը։

Մի ժամանակ Վարչութիւնը որոշում է բաց անել Բաթումում գրադարան-ընթերցարան և դիմում է Խորհրդին պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնն ստանալու համար։ Տեղական թատերասէրները յատկապէս այդ նպատակով ներկայացում են տալիս և եկամուտը, 251 ր. 32 կոպ., յանձնում են Վարչութեան։ Խորհուրդը դիմում է Բուլթայիսի գինուորական նահանգապետին, բայց սա չէ ընդունում Բաթումի Վարչութեան կողմից ներկայացրած անձին իբրև պատասխանատու գրադարան-ընթերցարանի համար։ Խորհուրդը 1894-ին առաջարկում է ուրիշ անձնաւորութիւն։ Թէ ինչ հետևանք է ունենում այս առաջարկութիւնը, յայտնի չէ։ Գրադարան-ընթերցարան Բաթումում չէ բացվում։

1892 թ. Բաթումի Տեղական Վարչութիւնը վճռում է դպրոցական գործը ապահովել մի հիմնաւոր օժանդակութեամբ։ «Ծխական դպրոցը իր սեփական շինութիւնը չունենալով, — կարդում ենք Վարչութեան տեղեկագրի մէջ — պահվում էր այնպիսի բնակարանում, որ դպրոցական պահանջներին չը համապատասխանելով հանդերձ, մեծ գումար (տարեկան 900 ռուբլի) էր կլանում վարձի համար դրպրոցի նիւթականապէս նեղ միջոցներից։ Այս զգալի պակասութիւնը դարմանելու համար՝ Տեղական Վարչութիւնս որոշեց յատուկ ուսումնարանի համար և ամեն դպրոցական յարմարութիւն ունեցող մի շէնք կառուցանելով՝ այն յանձնել Բաթումի ազգային — ծխական երկու դպրոցներին։

Հարկ եղած ձեռականութիւնները կատարելով և պատշաճաւոր հոգևոր իշխանութիւնից այդ մասին իրաւունք ստացուելով, մտադրուած շէնքը սկսուեց կառուցանուել»[1]։

Վարչութիւնը, ի հարկէ, պատրաստի միջոցներ չունէր մի այդպիսի մեծ ձեռնարկութիւն իրագործելու համար։ Բայց նա դիմում է վերին ոստիճանի եռանդոտ միջոցների և կարողանում է արագութեամբ գլուխ բերել իր մտադրութիւնը։ Ամենից առաջ Բաթումի քաղաքային Վարչութիւնը ձրի տալիս է 400 սաժէն հող, այն պայմանով, որ այդ հողի վրայ կառուցուի միմիայն դպրոցական շինութիւն։ Իսկ դրամական միջոցներ գտնելու և շինութիւնը կառուցանելու համար Վարչութիւնը ընտրում է մի յատուկ յանձնաժողով, որի մէջ մտնում էին Վարչութեան փոխ-նախագահ Դաւիթ Խարազեան և գանձապահ Աւետիս Խոջամիրեան։

Յանձնաժողովը նուիրատուութիւններ է հաւաքում Բաթումում, թատրոնական ներկայացումներ է տալիս։ Հանգանակութիւնը, որին մասնակցել են առաւելապէս օտար ֆիրմաները, տուեց 5068 ր. 65 կոպէկ. թատրոնական ներկայացումներից գոյացաւ 1326 ր. 39 կոպէկ։ Բացի դրանից, Վարչութիւնը Խորհրդից խնդրեց փոխարինաբար, առանց տոկոսների, և ստացաւ 3000 ռուբլի, երեք տարուայ ընթացքում վերադարձնելու պայմանով։ Սակայն այսքան միջոցներն էլ քիչ էին, որովհետև շինութեան կառուցումը որ աւարտուեց 1893-ին նստեց 10498 ր. 73 կոպէկ։ Պակասող գումարը Վարչութիւնը պարտք վերցրեց զանազան տեղերից։ Սակայն Վարչութեան եռանդն այնքան մեծ էր, որ նա ստանալով Խորհրդի փոխատուութիւնը 1892 թ. դեկտեմբերին, հետևեալ տարուայ յունվարին արդէն վերադարձնում է նրան 1000 ռուբլի։— Առ 1-ն յունվարի 1894 թ. Վարչութեան վրայ դեռ մնում

[1]) «Տեղեկագիր» 1892, եր. 57—58։

էր պարտք 4168 ր. 69 կոպէկ։ Այդ թուին նախահաշուով որոշուած էր վճարել 3168 ր. 69 կոպէկ։ Բայց, ուրիշ որ և է ծախս չանելով հանդերձ՝ կարողանում է վճարել միայն 808 ռուբլի։—1895-ին նոյնպէս Վարչութեան համարեա բոլոր միջոցները գործադրվում են պարտքի մի մասը (1631 ր.) վճարելու համար. իսկ 1896-ին վճարվում է 500 ր...

Այսպիսի ջանքերով Տեղական Վարչութիւնը կարողանում է յաջողութեամբ կատարել «այնպիսի մի գործ, որ մշտական յիշատակով բարձր պիտի պահէ Բաթումում Ընկերութեան անունն ու յարգը»; ինչպէս գրում էր նախագահ Ա. Սարուխանեանը Խորհրդի նախագահ Անանեանին։— Այդ պաշտօնական թղթով վկայելով որ այդ գործի յաջողութիւնը ամենամեծ մասամբ պարտական է փոխ-նախագահ Դաւիթ Խարազեանի և գանձապահ Աւետիս Խոջամիրեանի եռանդուն ջանքերին, Ա. Սարուխանեան խնդրում էր որ Ընկերութեան կենտրոնի կողմից շնորհակալութիւն յայտնուի այդ աշխատաւորներին։

Դպրոցական շինութեան հետ միաժամանակ Բաթումի Վարչութիւնը օգնութիւն է հասցրել և ուսանողներին։ Այսպէս, 1892 և 1893 թուականներին նա 700 ռուբլի է տուել Ժընեվում ուսանող Վ. Փափազեանին և ճանապարհածախս է տուել Պետերբուրգի երկու ուսանողների։

Վարչութիւնը փորձել է և տառապեալներին օգնելու գործը կանոնաւորել։ «Բաթումը՝ թէ իբրև միջնորդ քաղաք Կարսի և Տաճկական Հայաստանի մէջ և թէ իբրև արտահանութեան կարևոր նաւահանգիստ՝ միշտ ունենում է իր մէջ մեծ թուով չքաւոր պանդուխտներ», գրում է Վարչութիւնը 1892 թ. իր տեղեկագրի մէջ։ Դրանք դիմում են ժողովրդին, որ շատ յաճախ չէ կարողանում իմանալ թէ ով է իսկական չքաւորը և կարօտը։ Ուստի Վարչութիւնը «որոշեց, որ կարօտեալները, փոխանակ ժողովրդին դիմելու, ուղղակի Վարչութեանը դիմեն և Վարչութիւնն էլ իր կողմից որոշէ նպաստի չափը և եղանակը՝ կարօտեալի հանգամանքների համեմատ։ Այս նպատակի համար Վարչութիւնը

իր տարեկան նախահաշուի ելքի մէջ առանձին գումար մտցրեց և տպագրել տուց նուիրատուութեան անդորրագրերի տետրակներ, որոնցով Վարչութեան անդամները կամ որևէ կողմից նշանակուած անձինք հաւաքում են գրամական նուէրներ և յանձնում Վարչութեան դանձապահին» [1]։

Ինչպէս տեսանք Խորհրդի գործունէութեան պատմութեան մէջ, հայկական կոտորածների հէնց սկզբում Բաթումն էր այն տեղը, ուր առաջին անգամ թափուեցին սարսափահար, մերկ ու անօթի գաղթականները։ Այդ միջոցին Բաթումի Տեղական Վարչութեան դրամական կացութիւնը շատ տխուր էր։ 1896-ի սկզբում, ինչպէս ասում է տարեկան տեղեկագիրը, «Վարչութիւնը ոչ միայն մի կոպէկ չէ ունեցել դրամարկղում, այլ և ճիւղիս վրայ ծանրացած է գտել մօտ երկու հազար ռուբլի պարտք» (դպրոցի շինութեան)։

Սակայն գիտենք, որ յատկապէս գաղթականներին խնամելու համար Խորհուրդը շարունակ գումարներ է ուղարկում Վարչութեան։ 1896-ին Վարչութիւնը Խորհրդից ստացաւ 4100 ռուբլի. եղան և Տեղական նուիրատուութիւններ—1295 ռ.։ Այս միջոցներով ահա Վարչութիւնը պիտի գործէր ահագին կարիքի դէմ։ Բաթում թափուած փախստականների թիւը հաշուում էր 5000 հոգի, որոնցից առնուազն 2000 հոգի կարօտ էին օգնութեան։

Նախորդ Վարչութիւնից մնացել էին երկու հոգի։ դեռ 1895-ի նոյեմբերի 15-ին տեղական ընդհանուր ժողովը ընտրեց երեք անդամ և կազմուեց նոր Վարչութիւնը. նախագահ՝ Աբիսողոմ Յովհաննիսեան, փոխ-նախագահ՝ Ս. Թառումեան և դանձապահ Ա. Խոջամիրեան։ «Իսկ գործավարութեան համար խնդրեցին պ. Միք. Համբարձումեանցին շարունակել իւր արդիւնաւոր պաշտօնը», գրում է Վարչութիւնը։

---

[1]) «Տեղեկագիր» 1892 թ. եր. 59։

Նկատի առնելով, որ Վարչութեան կազմը բաւարար չէ գաղթականների հոգը քաշելու համար, տեղական ընդհանուր ժողովը ընտրեց և մի օժանդակիչ մասնախումբ, բաղկացած վեց հոգուց, որոնցից չորսը կանայք։

Գաղթականների կարիքները բազմակողմանի էին։ Եւ Վարչութիւնը բաժանում էր այդ կարիքները հետեւեալ կերպով. 1) *Բնակարան*։ Բոլորովին անճար գաղթականների ժամանակաւոր բնակութեան համար վարձուեցին մի բնակարան՝ վեց սենեակից բաղկացած և սենեակներ քարվանսարաներում։ Ծախսուեց մօտաւորապէս 1000 ռուբլի։ 2) *Սննդաղրամ*։ Երկու տեսակ էր — ամսական և միանուագ։ Վարչութիւնը որոշում էր իւրաքանչիւր ընտանիքի կարօտութեան չափը և դրա համեմատ փող էր տալիս կերակրուելու համար, ոմանց կարճ ժամանակով, մինչև գործ ու աշխատանք գտնելը, իսկ որբերով ծանրաբեռնուածներին՝ երկար ժամանակ. ծախս 2100 ր.։ 3) *Ճանապարհածախս*։ Փախստականներից շատերն ունէին բարեկամներ և ազգականներ, որոնք առաջուց գաղթել էին Սև ծովի ռուսական ափերը և այդտեղ ծխախոտի մշակութեամբ էին զբաղուում։ Վարչութիւնը այդպիսիներին ճանապարհածախս տուեց՝ իրանց բարեկամների և ազգականների մօտ գնալու համար։ Եւ ծախսեց մօտ 1700 ր. 4) *Գործ*։ Գաղթականներին Վարչութիւնը տեղաւորել է գործարաններում և մշակների զանազան խմբերի մէջ, ոմանց էլ ուղարկել է ուրիշ քաղաքներ։ Բացի այս՝ ընտանիքի հայր արհեստաւորներից ոմանց տուել է գործիքներ, հում նիւթ (կաշի, թիթեղ, մարմար), կամ մի փոքր առևտուր սկսելու համար դրամագլուխ է տուել 10—30 ռուբլի։ Իսկ երկրագործների համար գնուել են գործիքներ (կացին, բահ և այլն)։ Կանանց տեղաւորել է ընտանիքներում իբրև սպասուհի, լուացարար և այլն։ 5) *Հանդերձեղէն*։ Բաժանելէ զանազան տեղերից (ի միջի այլոց և Ամերիկայից) ուղարկուած հնամաշ և նոր զգեստեղէններ։ 6) *Բժշկական օգնութիւն*։

երկու հայ բժիշկներ, Մ. Մերիմանեան և Մ. Զարգարեան, ձրիաբար բժշկել են գաղթականներին։ «Կոտորածի ժամանակ վիրաւորուածներին և ծանր հիւանդներին հիւանդանոց է փոխադրել, թէ քաղաքային, թէ զինուորական, և իւր ծախսով բժշկել նոցա, քանի որ տաճկաց հիւպատոսը զլանում էր նոցա չքաւորութեան վկայական տալ և այդ պատճառով էլ քաղաքային վարչութիւնը մերժում էր նոցա ձրի ընդունելու» 7) Այլ և այլք։ Այս վերնագրի տակ Վարչութիւնը դասաւորում էր այն նպաստները, որ տալիս էր գաղթականներին Ծննդեան և Զատկի տօներին, մեռելներ թաղելու, մկրտութիւն, ամուսնութիւն կատարելու համար։

Օժանդակող մասնախմբի անդամներից առանձնապէս եռանդուն գործունէութիւն են ցոյց տուել տիկին Շուշանիկ Յարութիւնեան և Յակոբ Մեղաւորեան։ «Այս երկու յարգելի անձինք շարունակ յաճախում էին գաղթականներին, նորեկների մասին լիակատար տեղեկութիւններ բերելով, հների մասին ընդարձակ բանաւոր զեկուցումներ տալով, և առհասարակ հսկելով, որ ոչ ոք օգնութեան կարօտներից անմասն չը մնայ ճիւղիս նպաստից»։

1897 թ. շարունակվում էր օգնութեան գործը նոյն եղանակով։ Վարչութեան գործը թեթևացնում էր այն, որ գաղթականների հոսանքը համարեա բոլորովին դադարեց ամառը։

Բայց ահա նոր կոտորած Կ. Պոլսում և աշնանը դարձեալ գաղթականների նոր մեծ հոսանք։

Խորհուրդը այս անգամ ուղարկեց Դանիական դումարից 5556 ռուբլի. տեղական նուէրներ Վարչութիւնն ստացաւ 1038 ռ. ներկայացումներից՝ 715 ռուբլի։ Վարչութիւնը ուրիշ ոչ մի նպատակ չէր ճանաչում, բացի գաղթականներին օգնելուց։ Այդ տարին նա ծախսեց. ննդադրամ՝ 4000 ռ., ճանապարհածախս՝ 2000 ռուբլի, բնակարան՝ 800 ռ., դեղերի՝ 300 ռուբլի։

Ճանապարհածախսի համար շատ դումար էր պահանջվում այն պատճառով, որ գաղթականների մի մասը ամառը սկսեց վերադառնալ հայրենիք, Տրապիզոն և ուրիշ տեղեր։

Իսկ հետևեալ տարին [1]) 1898-ին ճանապարհածախսի կարիքը աւելի ևս սաստկացաւ։ Մարտ ամսին հրատարակուեց Բարձրագոյն հրաման, որով թիւրքահայ գաղթականներին տրվում էր մի տարուայ ժամանակամիջոց՝ հայրենիք վերադառնալու համար։ Բաթումի վրայով վերադարձողների թիւը շատ մեծ էր։ Իսկ Վարչութիւնը այլ ևս չէր կարող Խորհրդի աջակցութեան վրայ յոյս դնել։ Խորհուրդը դումարներ չունէր այլ ևս և միայն 500 ր. կարողացաւ ուղարկել Բաթում։ Տեղական նուիրաբերութիւններն էլ շատ նուազել էին, որովհետև Բաթումի հայերը այդ միջոցին եկեղեցի էին կառուցանում իրանց համար։

Իր ամբողջ մուտքից Վարչութիւնը միայն իր դիւանի համար ծախսեց 22 ռուբլի, մնացածը ամբողջովին յատկացրեց գաղթականներին։ Միայն ճանապարհածախս նա բաժանեց 1045 ռուբլի։ Դա մի փոքրիկ նպաստ էր, որ շուտ սպառուեց։ Սակայն Վարչութիւնը կարողացաւ փոքրիկ միջոցներով էլ խոշոր գործ կատարել։ Նա բանակցութիւններ սկսեց շոգենաւային ընկերութիւնների հետ և յաջողեցրեց որ յատկապէս գաղթականներին տոմսակների գնից 30—50% զեղչ անուի։—Իր միջոցներով Վարչութիւնը ճանապարհ դրեց մօտ 700 հոգի։ Իսկ երբ այլ ևս միջոցներ չկային, նա միջնորդ հանդիսացաւ գաղթականների և շոգենաւային ընկերութիւնների մէջ. նրա ցուցմունքներով էժանացրած տոմսակներ ստացան և ճանապարհուեցին մօտ 1000 հոգի։

---

[1]) Այս ժամանակ Վարչութեան նախագահ էր՝ Յակոբ Քոչարեան, փոխնախագահ՝ տիկ. Շուշանիկ Յարութիւնեան, գանձապահ՝ Ս. Թառումեան։

VIII

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ

(1889 — 1899)

Նոր-Բայազէտ գաւառի գործակալ Եղիազար քահանայ Տէր-Միքայէլեանը 1889 թ. ապրիլի 5-ի գրութեամբ ուղարկեց Խորհրդին 15 անձանց ստորագրութեամբ մի խնդիրք՝ քաղաքում Տեղական Վարչութիւն բաց անելու մասին։ Առաջին ընդհանուր ժողովը կայանում է մայիսի 5-ին։ Նրա ընտրած Վարչութիւնը, նախագահ՝ Գէորգ Արծրունի, փոխ-նախագահ՝ Ստեփան Բագիկեանց, դանձապահ՝ Ալէքսանդր Մաղաքեանց, գործավար՝ Երուանդ Ատովմեան։

Ինչպէս և պէտք էր սպասել, Բարեգործական Ընկերութեան ճիւղը Նոր-Բայազիտի նման մի խուլ, աղքատ գաւառական անկիւնում շատ սահմանափակ միջոցների և սահմանափակ գործունէութեան տէր պիտի լինէր։ Եւ իրաւ նրա եկամուտը համարեա միշտ կազմվում էր անդամավճարներից, իսկ անդամների թիւը զանազան տարիների ընթացքում 16—54 էր հասնում։ Սովորական բիւջէն 80—290 ռուբլի։—Այդ եկամուտը Վարչութիւնը ծախսում էր, նպաստներ տալով տեղական դպրոցին, աշակերտներին, երբեմն ուսանողներին և տառապեալներին։

Սակայն միայն այսքանը չէր այն օգնութիւնը, որ Տեղական Վարչութիւնը հասցնում էր կարօտ ազգաբնակութեան։ Հէնց լոկ նրա գոյութիւնը արդէն այն օգուտն ունէր, որ ազգաբնակութիւնը ընդհանուր աղէտների ժամանակ իր բաժինն էր ստանում այն միջոցներից, որ ծախսում էր Ընկերութեան կենտրոնը։ Այսպէս էր 1892-ի խօլերայի ժամանակ (նպաստ Խորհրդից 228 ռ. 50 կոպ.

դեղերով)։ Այսպէս էր և 1893—1894 թուերի սովի ժամանակ։ —

Աղէտը սոսկալի է Վարչութեան յաճախակի դիմումներ անել Խորհրդին և նպաստներ խնդրել։ Նա գրում էր որ միայն քաղաքում սովեալների թիւը հասնում է 3000-ի, իսկ գիւղերի դրութիւնը աւելի ևս սարսափելի է։ 1894-ին Տեղական Վարչութիւնն ստացաւ Խորհրդից 1600 բուբլի և ուրիշ տեղերից փողով և ալիւրով 2395 բուբլի։—Այդ գումարից 1192 ր. Վարչութիւնը բաժանեց քաղաքի սովեալներին՝ յատուկ կազմուած քաղաքային յանձնաժողովի ձեռքով։ Գնեց և նուէր ստացաւ 2627 պուդ 18 ֆունտ ալիւր և ցորեն, որից 360 պուդ ստացան քաղաքի սովեալները, իսկ մնացածը բաժանուեց 16 հայ գիւղերի սովեալներին Վարչութեան նախագահի և անդամների ձեռքով։

IX

ԿԱՂԶՈՒԱՆ

(1889 — 1899)

Այս ճիւղը հիմնուել է բժիշկ Գէորգ Կաճկաճեանի (այժմ հանգուցեալ) նախաձեռնութեամբ 1889 թուի ապրիլին։ Խորհրդին դիմող կաղզուանցիների թիւն էր 22։ Առաջին ընդհանուր ժողովը մայիսի 10-ին։ Նրա ընտրած Վարչութիւնը. նախագահ՝ բժ. Կաճկաճեան (որ այնուհետև էլ շատ անգամ եղել է այս պաշտօնում և առհասարակ եռանդուն գործունէութիւն է ցոյց տուել), փոխնախագահ՝ Ա. Բալասանեան, գանձապահ՝ Ս. Զանփոլադեան, գործավար՝ Յ. Փիլոյեան։—

1890 թուի համար կազմուած նախահաշիւը հետեւեալ պատկերն է ներկայացնում. 50 անդամ—250 բուբ-

լի և նուէր — 50 բուբլի։ Այդ գումարը նշանակվում էր նպաստ տեղական դպրոցի աշակերտներին և տառապեալներին։ — Մօտաւորապէս այսչափ եկամուտների (300-500 ր.) տէր էր Վարչութիւնը և միւս տարիներում։ Եւ ծախսի աղբիւրներն էլ մի և նոյնն էին մնում։ — 1898-ին Վարչութիւնը վճռեց գրադարան-ընթերցարան բաց անել, բայց յետոյ փոխեց այդ վճիռը և կար ու ձևի մի դպրոց բաց անելու միտքը առաջարկեց։ — Սակայն այս էլ գլուխ չեկաւ։

Սովի և գաղթականութեան ժամանակ (1894, 1896—1897 թ.) Տեղական Վարչութիւնը ստացաւ հետևեալ նպաստները. 1894-ին՝ Խորհրդից 900 ր. և ուրիշ տեղերից՝ 1301 ր. 90 կոպէկ, 1896-ին՝ 1795 ր. 86 կոպէկ, 1897-ին՝ 200 բուբլի։ Այդ նպաստները տրուել են սովեալներին և գաղթականներին։ (Մանրամասնութիւններ չկան Խորհրդի գործերի մէջ)։—

1898-ին Կաղզուանի ճիւղի անդամների թիւը այնքան նուազել էր, որ հարց դրուեց ճիւղը փակելու մասին։ — Այդ հարցը դրականապէս վճռեց Տեղական Ընդհանուր ժողովը 1899-ի սկզբներում։ Թիֆլիսի Ընդհանուր ժողովը յունիսի 6-ի նիստում յանձնարարեց յորդոր կարդալ Կաղզուանի Վարչութեան, որ նա վերսկսէ իր գործունէութիւնը։ Բայց արդէն նոյն տարին փոփոխուեց Ընկերութեան կանոնադրութիւնը, որի մէջ ճիւղեր այլ ևս չը կային։—

X

ԿԱՐՍ

(1889 — 1899)

Կարսի հայոց ծխական դպրոցի ուսուցիչ Ալէքսանդր Պետրոսեանը հաւաքում է 58 ստորագրութիւն և 1889 թ.

ապրիլին ուղարկում է Թորհրդին, խնդրելով Տեղական Վարչութիւն բանալու թոյլտուութիւն։ Առաջին Ընդհանուր Ժողովը, որ կայանում է յուլիսի 31-ին Կարսի յաջորդ Յուսիկ վարդապետ Մովսիսեանի նախագահութեամբ, ընտրում է Վարչութիւն, որի կազմն այսպէս էր. նախագահ՝ բժիշկ Ալէքսանդր Ղազարեանց, փոխ-նախագահ՝ Մինաս քահանայ Տէր-Գրիգորեան, դանձապահ՝ բժ. Շահրիար Մելիք-Փարսադանեան, անդամներ՝ տ. տ. Սոֆիա Ղազարեան և Նունէ Մելիք-Փարսադանեան, գործավար՝ փոխ-անդամ Սեդրաք Գրիգորեանց։—

Բացի սովորական աղքատախնամութիւնից, երկու գլխաւոր տեղական կարիքների բաւարարութիւն տալու հարկն էր, որ անհրաժեշտ էր դարձնում Բարեգործական Ընկերութեան ճիւղի բացումը Կարսում—եկեղեցական-ծխական դպրոցներին նպաստելը և գրադարան-ընթերցարան ունենալը։—Ուստի այս երկու հիմնարկութիւնների վրայ էլ կենտրոնացաւ Տեղական Վարչութեան գործունէութիւնը։

Իր անդրանիկ նախահաշուի մէջ (1890 թ.) Վարչութիւնը ենթադրում էր ունենալ 103 գործադիր անդամ։ Հետևեալ տարիներում այդպիսի թիւ այլ ևս չըկար, բայց Կարսի ճիւղը առհասարակ անդամների թուի շատութեան կողմից աչքի ընկնող ճիւղերից մէկն էր։ Ամեն տարի 70—95 անդամներ ունէր։ Տարեկան եկամտացոյցը 1000 ռուբլուց պակաս չէր։ Տեղական դպրոցին, տեղական հայոց և պետական դպրոցների չքաւոր աշակերտներին տառապեալներին նպաստներ հասցնելուց յետոյ, Վարչութիւնը որոշ դումար էր յետ դնում գրադարան-ընթերցարանի համար, որի բացումը ուշանում էր։

Այս սովորական գործառնութիւնից դուրս Կարսի Տեղական Վարչութիւնը շատ աշխոյժ և գնահատելի գործունէութիւն ցոյց է տուել ժողովրդական աղէտների ժամանակ։

1892-ի խօլերայի ժամանակ Տեղական Վարչութիւնը չը բաւականացաւ Խորհրդի ուղարկած 200 ր. նպաստով, այլ ինքն էլ հաւաքեց նուէրներ դրամով և նիւթեղէնով 756 ր. 23 կոպ. և բաց արաւ ձրի ճաշարան, որ 25576 բաժին կերակուր բաց թողեց աղքատներին առանց խըտրութեան ազգութեան և կրօնի։ — Այդ տարին Վարչութեան նախագահն էր բժ. Ալէքսանդր Տէր-Յարութիւնեան։

Չը բաւականանալով այդ աչքի ընկնող օգնութեամբ, Տեղական Վարչութիւնը 1892-ի աշնանը ծրագրեց օգնութիւն համաճարակի չքաւոր զոհերին։ Խօլերայից մեռածների որբ ընտանիքները պէտք էր պատսպարել ձմեռուայ ցրտերին։ Եւ որովհետև Վարչութիւնը սեփական միջոցներ չունէր, ուստի դիմեց Խորհրդին, խնդրելով 1000 ռուբլու փոխառութիւն, հինգ տարուայ ընթացքում մասմաս վերադարձնելու պայմանով։ Փոխառութիւնը թոյլատրուեց Թիֆլիսի Ընդհանուր Ժողովի կողմից և 1000 ռուբլին մտաւ Կարսի Տեղական Վարչութեան 1893-ի նախահաշուի մէջ իբրև նպաստ տառապեալներին։—Սակայն այդ փոխառութիւնը պատրուակ դարձաւ որ Կարսի Տեղական Վարչութեան մէջ պառակտումներ և տարաձայնութիւններ ծագեն։ Փոխառութիւնը Վարչութիւնն արել էր առանց նախապէս Տեղական Ընդհանուր Ժողովի թոյլտուութիւնը խնդրելու։ Եւ ահա Վարչութեան անդամների մի մասը և ընկերութեան անդամներից մի քանիսը յայտարարութիւն են տալիս Վարչութեան, որի մէջ դովաբանելով նրա գործունէութիւնը խօլերայի ժամանակ, արձանագրում էին փոխառութեան համար Տեղական Ընդհ. Ժողովի հաւանութիւն չը ստանալը։—

Այս անմեղ հանդամանքը բորբոքում է կրքեր։ Վարչութեան նախագահը և նրա հետ մնացած երկու անդամները չեն կարողանում պատշաճաւոր սառնասրտութիւն պահպանել։ Երկու անդամ և երեք փոխ-անդամ, որոնց մէջ և գանձապահը հրաժարական են տալիս և սկսում են

բողոքել թէ Վարչութեան նախագահ Տէր-Յարութիւնեանի և թէ Ընդհանուր Ժողովի նախագահ Նահապետ վարդապետի «բռնութիւնների և կամայականութիւնների դէմ»։ — Տարաձայնութիւնները գնալով սուր կերպարանք են ընդունում. հրաժարուած գանձապահը չէ յանձնում իր հաշիւները Վարչութեան, համարելով նրան լուծուած։ Սկսվում է անգին գրագրութիւն Խորհրդի հետ։ Վարչութիւնը տասնեակ երեսներից բաղկացած բացատրութիւններ էր գրում, բողոքողները իրանց կողմից Վարչութեան դէմ էին գրում։ Կիրք, անձնական և կուսակցական հաշիւներ երկու կողմից։ Ինքն ըստ ինքեան այդ երևոյթը հասկանալի էլ չէր լինի, եթէ բողոքողները պարզապէս չը խոստովանէին, որ Բարեգործական Ընկերութեան մէջ մտել էին դրսում, հասարակական գործերի շուրջը կազմուած կուսակցական պայքարները։ —

Խորհուրդը երկարօրէն բացատրութիւններ է տալիս, բայց Կարսում կրքերը իսկոյն չեն հանդարտվում։ Տարուայ վերջերում ընդհանուր ժողովների մէջ լինում են վիրաւորական յարձակումներ, անվայել վարմունքներ։ Կարգը վերջ ի վերջոյ հաստատվում է շնորհիւ այն հանդամանքի, որ բողոքողները փոքրամասնութիւն էին կազմում։ Նրանք հեռացան ժողովից, հաւանաբար և ընկերութիւնից, իսկ մեծամասնութիւնը վերընտրեց Վարչութեան նախագահին և նրա համախոհներին։

Բարեբախտաբար Տեղական Վարչութեան գործունէութիւնը շատ չը փչացուեց այդ տարաձայնութիւնից։ Եռանդը և հասարակութեան համակրական վերաբերմունքը չը պակասեցին։ Եւ այդ շատ հարկաւոր էր, քանի որ առջևում կար սովի և գաղթականութեան դժբախտ տարին։

«1894 թ. սկզբներից—գրում էր Վարչութիւնը իր տարեկան տեղեկագրի մէջ—քաղաքիս և նահանգի մէջ օր աւուր սկսաւ բազմանալ Տաճկաստանից գաղթած հայերի թիւը։ Այդ թը-

շուառները, վայրենի բուրդի բարբարոսութիւնից իւրեանց կեանքը և պատիւը ազատելու համար, թողնելով հայրենի հողը, տունը, տեղը և բոլոր գոյքը, գաղթեցին մեր երկիրը, հանգիստ կեանք վարելու համար։ Բայց ճակատագիրը այլ կերպ էր անօրինել նոցա բաղդը։ Նոքա ազատուելով բարբարոս քուրդի արիւնաթաթախ ճիրաններից, մեր երկրում ընկան քաղցածութեան և սովի գերկը։ Մի կողմից խստաշունչ ձմեռը, միւս կողմից սովը և մերկութիւնը այդ խեղճերին հասցրին յետին աստիճանի դրութեան և ազքատութեան, այնպէս որ գիւղերում և քաղաքում ամեն դրան առաջ կարելի էր տեսնել նոցանից տասնեակ անձնաւորութեանց ողորմութիւն և օգնութիւն խնդրելիս» [1]։

Այդ մեծ թշուառութեան դիմաց Վարչութիւնն ունէր իր նախահաշուի մէջ միայն 400 ր. նպաստ տառապեալներին՝ նրան չէր օգնի և տեղական հանգանակութիւնը (1098 ր.), եթէ դրսից խոշոր գումարներ չը գային աղէտի դէմ մաքառելու համար։ Տարուայ ընթացքում Վարչութիւնն ստացաւ 8672 ր. 20 կոպ. (Վեհ. կաթողիկոսից 3000 ր., «Մշակ» լրագրի հաւաքած 2400 ր., Խորհուրդը 1150 ր.)։

Քաղաքի չքաւորների համար նորից բացուեց ձրի ճաշարան, որ գործեց 53 օր և իւրաքանչիւր օր բաց էր թողնում 350—400 բաժին կերակուր։ Գիւղերում բաժանուեց 3839 բուբ. 68 կոպէկի ցորեն, գարի և ալիւր։ Կարսի գաւառի 54 գիւղեր ստացան 1520 պուդ ալիւր, Կազդուանի գաւառում 10 գիւղ՝ 624 պուդ և Նախիջևանի գաւառամասի 7 գիւղ՝ 116 պուդ։ Ընդամենը օգնութիւն ստացան 37 ընիկ և 524 գաղթական ընտանիքներ, բաղկացած 3657 հոգուց։—

Հետևեալ տարին, 1895-ին գաղթականների հոսանքը ոչ միայն չը դադարեց, այլ աւելի սաստկացաւ։ Վարչութիւնը դիմեց Վեհ. Կաթողիկոսին և ստացաւ նրանից 3000 բուբլի։ Նախորդ տարուանից նա ունէր մնացորդ 3329

[1]) «Տեղեկագիր» 1894, եր. 111։—

բուբլի։ Այդ դումարներով դարձեալ նպաստներ բաժանուեցին գլխաւորապէս ալիւրով և մանաւորապէս դրամով գաղթականներին և տեղացի չքաւորներին։ Քաղաքի մէջ 206 գաղթական ընտանիք ստացան 1113 պ. ալիւր, Շիրակում 88 գիւղերի մէջ 430 ընտանիք՝ 1872 պ., Թախտէ գաւառակում և Կարսի շրջակայքում 23 գիւղերի մէջ 454 ընտանիք՝ 2137 պ. ցորեն. Բասենի գաւառակի 10 գիւղերի մէջ 168 ընտանիք՝ 849 պ. ցորեն։ —

Աւելի դժուար գործ դեռ առջևումն էր, 1896—1897 թուերին, երբ կոտորածից փախած գաղթականներին պէտք էր պահպանել։ Տարաբախտաբար, այդ թուականներին վերաբերեալ մանրամասն տեղեկագրեր և հաշիւներ չը կան Խորհրդի արխիւում, ուստի պէտք է բաւականանալ այն տեղեկութիւններով, որոնք գետեղուած են Խորհրդի գործունէութեան մէջ։

Այդ լարուած գործունէութեան միջոցին, այն է 1895-ին, Կարսի զինուորական նահանգապետը թոյլ տուեց Տեղական Վարչութեան բաց անել գրադարան-ընթերցարան։ Տարիների ընթացքում դումարներ յետ դնելով, Վարչութիւնն ունէր այդ հիմնարկութեան համար 1500 բուբլուց աւել մի դումար։ Գրադարան-ընթերցարանը բացուեց 1896 թուականին։ Սակայն նրա կազմակերպութեան և գործունէութեան մասին մենք ոչինչ տեղեկութիւն չունենք։

XI

ԴԵՐԲԵՆՏ

(1889 — 1899)

Ճիւղը բացուեց 1889 թ. դեկտեմբերին համաձայն 23 հոդու խնդրագրի։ Վարչութեան առաջին կազմն էր.

նախագահ՝ Գր. Իւզբաշեան, գործավար Կ. Մելիք-Շահնազարեան։

Անդամների թիւը տատանվում էր տարիների ընթացքում 16-ի և 40-ի մէջ, տարեկան եկամուտը՝ 140—400 ռուբլու մէջ։—Տեղական Վարչութիւնը նպաստներ էր տալիս տեղական հայոց դպրոցին և նրա աշակերտներին, տեղական ընթերցարանին, իսկ դպրոցը փակուելուց յետոյ՝ առ հասարակ աշակերտներին և տառապեալներին։

XII

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

(1889--1899)

Վաղարշապատում ճիւղ բանալու փորձ արուել է դեռ Ընկերութեան հիմնարկութեան առաջին տարին։ Խորհրդի դիմումը ուղղուած էր Գէորգ Խան-Աղեանին, որ գտնում է 14 անդամ և տասրագրական թերթն ու անդամավճարները յանձնում է Գէորգեան Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետեանին, խնդրելով որ նա մի անդամ էլ գտնէ և իր վրայ վերցնէ Տեղական Վարչութիւնը բաց անելու հոգսը։ Նոյն խնդիրքով Նահապետեանին դիմում է և Խորհուրդը։ Սակայն Նահապետեանը ինքը ևս անդամ գրուելով, ուղարկում է անդամավճարները Խորհրդին և յայտնում է, որ զբաղուած լինելով, չէ կարող Տեղական Վարչութիւն բաց անել։

1889 մայիսին բժշկապետ Բ. Նաւասարդեանը Վաղարշապատում ժողով է գումարում, որ և վճռում է Տեղական Վարչութիւն բաց անել։ Խորհրդին ուղղած թղթին ստորագրում են 61 հոգի։

Առաջին ընդհանուր ժողովը գումարվում է սեպտեմ-

բերի 28-ին Գրիգոր քահանայ Տէր-Գրիգորեանի նախագահութեամբ։ Առաջին Վարչութեան կազմը. նախագահ Գ. քահանայ Տէր-Գրիգորեան, անդամներ՝ Յովհաննէս Յովհաննիսեան, Մատթէոս Տէր-Պետրոսեան, ա. Եղիսաբէթ Տէր-Յովսէփեան, Մատթէոս Բարատեան, գործավար՝ փոխանդամ Մկրտիչ Ենգիբարեան։

Անդամների թիւը տատանուել է 40—65-ի մէջ։ Տարեկան բիւջէն 400—800 ռուբլի։ Նպաստներ են տուել տեղական դպրոցներին, նրանց աշակերտներին, բարձրագոյն դպրոցներում սովորող ուսանողներին։

Այդ սահմաններից դուրս Տեղական Վարչութիւնը երկու միտք էլ է աշխատել իրագործել։ 1893-ին նա վճռեց բաց անել Վաղարշապատում շերամապահական կայարան և դրադարան-ընթերցարան։

Շերամապահական կայարանի համար մշակած ծրագրից մենք իմանում ենք, որ այդ հիմնարկութեան նպատակը պիտի լինէր զարգացնել շերամապահութիւնը տեղական ազգաբնակութեան մէջ, ցոյց տալով նրան կատարելագործուած միջոցներ՝ անտեսութեան այդ կարևոր ճիւղը աւելի ևս արդիւնաւոր դարձնելու համար։ Կայարանը պիտի փոքր չափեր ունենար։ Նրա կառավարիչը ոչ միայն պիտի գործնական օրինակներ տար ժողովրդին, այլ և պիտի դասախօսութիւններ կարդար կատարելագործուած շերամապահութեան մասին թէ Վաղարշապատում և թէ շրջակայ գիւղերում։

Սակայն Խորհուրդը այդ ձեռնարկութիւնը համարեց ոչ թէ արհեստների զարգացում, այլ արդիւնաբերութիւն, որ արդէն դուրս էր Ընկերութեան կանոնադրութեան սահմաններից։ Տեղական ընդհանուր ժողովը համաձայն չէր այդ բացատրութեան, նա գտնում էր որ հիմնարկութիւնը ժողովրդին սովորեցնելու նպատակն ունէր. նա նոյն իսկ համաձայն էր բանալ կայարանը միայն 2—3 տարով և պիտի փակէր, երբ ժողովրդի մէջ բաւականաչափ տարա-

ծուած կը լինէր կատարելագործուած շերմապահութիւնը։ Հարցը ձգձգուեց տարիներով, իսկ Տեղական Վարչութիւնը պահում էր այդ գործին յատկացրած 320 ռուբլին։ Բայց կայարանը վերջ ի վերջոյ չը բացուեց։

Գրադարան-ընթերցարանն էլ չը բացուեց։ Երևանի նահանգապետը պատասխանեց Խորհրդին թէ ինքը կարելի չէ համարում թոյլատրութիւն տալ այն պատճառով, որ Վաղարշապատի Տեղական Վարչութիւնը չէ ներկայացնում օրէնքով պահանջուող հաշիւներ իր գործունէութեան մասին և չէ կատարում Տեղական Վարչութեան պահանջները այս առիթով, այնպէս որ նոյն իսկ հարց կար Վարչութիւնը պատասխանատուութեան ենթարկելու։ Բայց բացի այս հանգամանքից մենք արդէն տեսանք թէ ինչ հայեացք ունէր նահանգապետը գրադարան-ընթերցարանների մասին առհասարակ[1])։

Վաղարշապատի Տեղական Վարչութեան գործունէութիւնը շատ եռանդոտ էր կոտորածներից փախած թիւրքահայ գաղթականներին օգնութիւն հասցնելու մէջ։ 1896 թ. ամառը, երբ փախստականների առաջին խմբերը եկան ռուսաց հողի վրայ, Վարչութիւնն սկսեց պատրաստութիւններ տեսնել։ Գլխաւոր հոգսն այն էր, որ Վաղարշապատում այդ միջոցին տարածուած էին տարափոխիկ հիւանդութիւններ—դիֆտերիտ, տիֆ։ Որպէս զի հիւանդութիւնները զարգացման և աւերանքի նպաստաւոր հող չը գտնեն քաղցած ու մերկ փախստականների և առհասարակ չքաւորութիւնից տառապող ժողովրդի մէջ, Վարչութիւնը մի շարք միջոցներ ծրագրեց, այնէ՝ խնամել հիւանդներին, հայթայթելով նրանց բժշկական օգնութիւն, սնունդ և այլն։

Գաղթականներից միայն 26 ընտանիք տեղաւորվում են Վաղարշապատ գիւղի մէջ։ Քանի եղանակները լաւ էին և դաշտերում ու այգիներում շարունակվում էին գիւ-

---

[1]) Տես «Երևան»։

զական աշխատանքները, Վարչությունը այդ գաղթականներից աշխատանքի ընդունակներին ուղարկում էր գործելու և օրավարձ ստանալու։ Իսկ ձմեռը, մինչև միւս տարուայ սպրիլը, գաղթականներին պատսպարելու և խնամելու համար Վարչությունը կազմեց 417 ռուբլու նախահաշիւ։

Բացի այդ գաղթականներից, նորեկ 16 ընտանիք, բաղկացած 100 հոգուց, դիմել էին Էջմիածնի վանքը, որ և տեղաւորել էր նրանց վանական գոմանոցում, տալիս էր հաց և կերակուր։ Սրանց դրութիւնը մանաւանդ շատ ծանր էր։ Ամենքն էլ մերկ էին և ոտաբոբիկ, մէջները կային հիւանդներ, գոմանոցի հակառողջական պայմանները աւելի ևս նպաստում էին հիւանդութիւնների տարածման։

Այս բոլորն ի նկատի առնելով, Տեղական Վարչությունը նոյեմբերի 5-ին դիմեց Խրիմեան կաթողիկոսին մի գրաւոր յայտարարութեամբ, որի մէջ ասում էր։

«Ձերդ Վեհափառութեան տնօրէնութեամբ՝ նորեկ գաղթականների համար առ ժամանակեայ բնակութեան տեղ նշանակած է Վանքի գոմանոցը, իսկ հիւանդների համար՝ գիւղի մէջ գըտնուած վանական շինութիւնը, ուր, որպէս տեղեկացանք, երեքչորս հիւանդ կար պառկած։ Սակայն գաղթականները, բնակուելով Վանքի գոմանոցում և ստանալով Վանքից հաց և կերակուր, ենթակայ են լինում թէ անպատուութեան ծառաների կողմից և թէ գանազան հիւանդութիւնների, շնորհիւ այն անյարմարութեան և հակառողջական պայմանների, որոնց մէջ թշուառները ստիպուած են իւրեանց դառն օրերը անցկացնելու, մինչդեռ գոմանոցի հիւանդներին տեղափոխելով նոցա համար նշանակուած հիւանդանոցը, իսկ առողջներին բնակեցնելով գիւղի մէջ, կարելի կը լինէր մի կողմից հիւանդութեան տարածման առաջն առնել, ազատելով գոնէ միւսներին վարակուելուց»։

Վարչությունը խնդրում էր իրան յանձնել հիւանդանոցը և թոյլ տալ գոմանոցի գաղթականներին տեղափոխել գիւղը և շարունակել տալ նրանց հաց և կերակուր։ Կաթողիկոսը համակրանքով է ընդունում այդ առաջարկու-

թիւնը, խոստանում է կերակրի տեղ տալ նիւթեղէններ, որոնցից գաղթականները կարող էին իրանք կերակուր պատրաստել։ Բայց մի քանի օրից յետոյ Վարչութիւնն ստանում է Կաթողիկոսի դիւանից թուղթ, որով յայտնվում է թէ Վարչութեան խնդիրը մերժուած է Վեհափառի կողմից։

Միաժամանակ Վարչութիւնը Խորհրդի յայտնաբարութեամբ տեղեկութիւններ է հաւաքում Էջմիածնի գաւառում ցրուած գաղթականների դրութեան մասին։ Վարչութեան նախագահ Աւետիս Օհանջանեանը և անդամ Սուքիասեանը շրջում են գիւղերը և ցուցակագրում են 81 ընտանիք, բաղկացած 428 հոգուց։ Դրանց դրութիւնը մնունդի և կացարանի կողմից ապահովուած էր. հայ գիւղացիները անտարտունջ օգնում էին իրանց թշուառ եղբայրակիցներին։ Մի անգին կարիք, որ զգացվում էր և այստեղ, ինչպէս և ամեն տեղ, ուր սիրուել էին փախստականները, հագուստի և անկողինների պակասութիւնն էր։

Վաղարշապատի Վարչութիւնը եռանդով գործում է և այդ սուր կարիքը վերացնելու համար Խորհրդից և այլ տեղերից նա ստանում է կտորներ՝ հագուստ և անկողիններ պատրաստելու համար, ինչպէս նաև պատրաստ զգեստներ, ինքն էլ գնում է ոտնամաններ և բաժանում է գաղթականներին։

Նոյն այդ գործունէութիւնը, որի համար Տեղական Վարչութիւնը շնորհակալութիւն էր ստանում Խորհրդից, շարունակուեց և 1897 թուին, մինչև աշուն։ Այդ տարին նա ծախսեց գաղթականների վրայ Խորհրդից և այլ տեղերից ստացած 3021 ռուբլի։ Պէտք է ասել որ այդ տարին գաղթականների թիւը աւելի ևս շատացաւ, բայց Խորհուրդը այլ ևս միջոցներ և իրաւունք չունէր գաղթականներին օգնելու։ Ինչպէս տեսանք, պատասխանելով Վարչութեան դիմումին, նա խորհուրդ էր տալիս օգնութիւն խնդրել տեղական իշխանութիւնից, քանի որ նրան էր

Կանձնուած դաղթականների խնամատարութեան ամբողջ գործը։

1899 թուականին Տեղական Վարչութիւնը ծրագրեց մի դահլիճ կառուցանել ապագայ գրադարան-ընթերցարանի համար և Էջմիածնի Սինոդը թոյլատրեց այդ շինութիւնը շինել Վաղարշապատի Ս. Աստուածածին եկեղեցու գաւթում։ Բացի դրանից, Վարչութիւնը ի նկատի ունէր բաց անել և արհեստանոց ու կիրակնօրեայ դպրոց։

Նոյն թուականին լրանում էր Վաղարշապատի ճիւղի տասնեամեակը։ Վարչութիւնը որոշում է տօնել այդ տարեդարձը համեստ կերպով։ Ամենից առաջ նա վճռում է այդ առիթով, որ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանը, թէ իբրև Ընկերութեան առհասարակ և մասնաւորապէս Վաղարշապատի ճիւղի հիմնադիր, ընտրուի ընկերութեան պատուաւոր անդամ։ Տեղական ընդհանուր ժողովը միաձայն ընդունում է այդ առաջարկը։ Խորհուրդը այդ որոշումը առաջարկում է Թիֆլիսի ընդհանուր ժողովին, որ 1899 թ. յունիսի 6-ի իր նիստում «ընտրեց ընկերութեանս հիմնադիր պ. բժ. Բագրատ Նաւասարդեանին Կ. Հ. Բ. Ընկերութեան պատուաւոր անդամ», ինչպէս ասուած է Վաղարշապատի Տեղական Վարչութեան զեկուցագրի վրայ դրուած մակագրութեան մէջ։

XIII

ԱՐՄԱՒԻՐ

(1889 — 1899)

Արմաւիրում ճիւղ բաց անելու փորձ լինում է դեռ 1882 թուին։ Սակայն Խորհրդի արած դիմումին պատասխանում են թէ անկարելի եղաւ ճիւղ բաց անել։

1889 թ. հոկտեմբերին արմաւիրցիները ինքնաբերաբար, 30 հոգու ստորագրութեամբ թոյլտուութիւն են խնդրում Խորհրդից Տեղական Վարչութիւն հիմնելու։ Թոյլտուութիւնն իսկոյն ուղարկվում է, բայց արմաւիրցիները իսկոյն չեն կարողանում ընդհանուր ժողով կազմել, որովհետև տեղական իշխանութիւնը չէր ճանաչում ընկերութիւնը, թէև նրան ներկայացուած էր կանոնադրութիւնը։ Բայց այդ արդելաւոր հանգամանքը չէ յուսահատեցնում արմաւիրցիներին։ Կանոնադրութեան վրայ հիմնուելով և ունենալով Խորհրդի թոյլտուութիւնը նրանք 1889 թ. դեկտեմբերի 30-ին կազմում են ընդհանուր ժողով Գաբրիել քահանայ Թուելեանի նախագահութեամբ։ Ընտրվում է Վարչութիւն հետևեալ կազմով. Աղէքսանդր Թորոսեան (նախագահ, անընդհատ վարել է այդ պաշտօնը մինչև ճիւղի փակուելը, 1899 թ.), Յովհաննէս Հալաջեան (փոխ-նախագահ), Յարութիւն Թորոսեան (փոխ-անդամ, գանձապահ), Բաղդասար Կուսիկեան, Յովակիմ Գասպարեան, Յովհաննէս Գէորգեան (անդամներ) գործավար՝ Յարութիւն Տէր-Մկրտչեան։

Այսպիսով գոյութիւն է ստանում Բարեգործական Ընկերութեան ամենակարևոր ճիւղերից մէկը Հիւսիսային Կովկասի հայաբնակ մեծ գիւղում, որի ազգաբնակութիւնը, ինչպէս յայտնի է, բաղկացած էր չէրքէզահայերից, այսինքն այն հայերից, որոնք հին ժամանակներից գաղթականութիւն էին հաստատել Կովկասեան լեռներում, չէրքէզների երկրում և կորցրել էին իրանց մայրենի լեզուն, պահպանելով միայն կրօնը և ապա, XIX դարի առաջին կէսում, կովկասեան պատերազմների ժամանակ, գաղթել էին Կուբանի տափարակները, ուր հիմնել էին Արմաւիր գիւղը։

Հետաքրքրական հանգամանք է որ տեղական իշխանութիւնը շարունակեց չը ճանաչել Վարչութիւնը և այն ժամանակ, երբ նա սկսեց իր գործունէութիւնը։ Այսպէս, երբ Խորհուրդը ուղարկեց Վարչութեան կնիք, մատեաններ,

տեղական պոստը չը տուեց այդ ծրարը, որովհետև նա չէր ճանաչում այդպիսի մի հիմնարկութեան գոյութիւնը, իսկ ոստիկանատունը չէր վաւերացնում պօստային ծանուցագիրը դարձեալ նոյն պատճառով։ Հարկաւոր եղաւ որ Խորհուրդը խնդրէ յանձնել իր ուղարկած ծրարը Վարչութեան անդամներից մէկին յականէ յանուանէ։ Սակայն տեղական իշխանութիւնը միաժամանակ չէր էլ արգելում Վարչութեան գործունէութիւնը։ Վարչութիւնը յայտնել էր իշխանութեան ճիւղի բացումը, ինչպէս պահանջում էր կանոնադրութիւնը, և սկսեց անարգել գործել։

1899 թ. ապրիլի 3-ին Վարչութիւնը գումարեց Ընկերութեան անդամների ժողով, որին հրաւիրուած էին և տեղական հասարակութեան անդամները։ Ժողովի նպատակն էր ծանօթացնել հասարակութեան թէ ինչ է ընկերութիւնը և շատացնել անդամների թիւը։ Կարդացուեց և բացատրուեց ընկերութեան կանոնադրութիւնը. ժողովի նախագահ Ալէքսանդր Թորոսեան, ինչպէս գրում էր Վարչութիւնը, «ատենաբանեց և պ. Բաղդասար Կուսիկեանց ճառախօսեց»։ Ժողովը, շարունակում է Վարչութիւնը, «փառաւոր հետևանք ունեցաւ. մշտական անդամ ստորագրուեցին քսան և հինգ անձինք, որոնցից պ. պ. Ալէքսանդր և Մարկոս Թորոսեանները ի բաց առեալ անդամակցական վճարը, հարիւրական ռուբլի էլ նուէր տուին։ Մշտական անդամների ստորագրութեան գումարը հասաւ եօթն հազար ինն հարիւր ռուբլու։ Տարեկան անդամներին առաջարկուեց միանուագ նուէր տալ՝ դրամագլուխ կազմելու համար. անդամակցական վճարների և միանուագ նուէրների ստորագրութիւնը հասաւ հազար երկու ռուբլու»։

Սակայն, երբ սկսեցին հաւաքել ստորագրուած գումարները, ծագեց մի մեծ դժուարութիւն։ Ստորագրողները ուսումնասիրել էին կանոնադրութիւնը։ Եւ նրա 49 յօդուածը, որով Տեղական Վարչութիւնները պարտաւորվում էին իրանց բոլոր յատուկ, անձեռնմխելի գումարներն ուղարկել Խոր-

հրդին, շատերին յետ է կասեցնել տալիս։ Նրանք փող տալիս էին Արմաւիրի տեղական պէտքերի համար և յանկարծ դուրս էր գալիս որ նրանց կազմած դրամագլուխը պիտի պահուի Խորհրդի դանձարանում [1])։ «Եւ իրաւի,— գրում էր Վարչութիւնը — որ հայ հասարակութիւնը առաւել բազմադիմի, անյետաձգելի բարոյական կարիքներ ունի, քան Արմաւիրի մի բուռն հայ գաղթականութիւնը, որը ազգութեան գլխաւոր ֆակտորից՝ մայրենի լեզուի դիտութիւնից զուրկ է և որ իր մատաղերամ սերունդը հայ ոգւով դաստիարակելու համար մի միակ յուսալի նեցուկը Տեղական Վարչութեանս գոյութեան մէջ է գտնելու»։

Սակայն արմաւիրցիների այս տրամադրութեան մէջ շատ շուտով առաջանում է յեղաշրջում։ Մայիսի 27-ի նիստում Վարչութեան նախագահ Ա. Թորոսեանը յայտնում է թէ «ընկերութեան ստորագրուող անդամները և նուէր տուողները վերջնականապէս եկել են այն եզրակացութեան, որ ընդհանուր հիմունքների վրայ պէտք է միանալ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան հետ» և Վարչութիւնը միաձայն որոշեց «որ փողը անմիջապէս ուղարկուի ի անօրէնութիւն Խորհրդի՝ ըստ ընդհանուր տրամադրութեան կանոնադրութեան»։ Եւ անմիջապէս ուղարկում է Խորհրդին մշտական անդամների վճարներից գոյացած 8000 ռուբլի։

Այնուհետև էլ, հետևեալ տարիներում, Արմաւիրը տալիս է մշտական անդամներ, որոնց վճարները դարձեալ ուղարկվում են Թիֆլիսի կենտրոնին։ Առ 1 յունվարի 1899 թ. Արմաւիրի մշտական անդամների թիւը հասնում էր 32-ի։

Եւ Արմաւիրի Տեղական Վարչութիւնը կարիք էլ չունէր իր այդ յատուկ գումարի տոկոսներն ստանալու։ Ամեն տարի նա կազմում էր հարուստ բիւջէ, որից դեռ խոշոր

---

[1]) Պէտք է ասել որ 49 յազ. քար գայթակղութեան է եղել բոլոր Տեղական Վարչութիւնների համար։

մնացորդներ էլ էին մնում։ Անդամների սովորական թիւն էր 120—170. մուտքի գումարը սովորաբար 3, 4 կամ նոյն իսկ 5 հազար էր։ Եւ այդպիսի մի եկամուտ տեղումը ծախսելու երկու գլխաւոր աղբիւր կար՝ դպրոց և տառապեալներ։ Դպրոցական նպաստների մէջ խոշորագոյնը մենք տեսնում ենք 1894 թ. հաշուի մէջ, ուր ցոյց է տուած իբրև ծախս 5000 ռուբլի դպրոցի շինութիւն կառուցանելու համար, մի գործ, որի մանրամասնութիւնները մեզ յայտնի չեն։ Շուտով հայոց դպրոցները փակվում են և Տեղական Վարչութիւնը իր առջև ունենում է համարեա միայն ուսանողներին և տառապեալներին օգնելու գործը։ Այսպէս, 1898-ի նախահաշուի մէջ նշանակուած է. «ուսումնարաններին ա) թոշակաւոր 1200 ռ., բ) միանուագ՝ 500 ռ.»։ Իսկ տառապեալներին յատկացրած ենք տեսնում 300—500 ռուբլի։

1897 թուին տեղային ռուսաց բարեգործական մի հասատատութիւն խնդրում է Վարչութեան օգնել նրա հիմնած գրադարանին։ Ընդհանուր ժողովը որոշում է «ա) Ռուսաց Ընկերութեան նորաբաց գրադարանում ունենալ հայոց գրքերի առանձին բաժին, որի համար և յատկացնել միանուագ 400 ռ., բ) մասնակցել նոյն գրադարանի տարեկան ընդհանուր ծախքերին, նշանակելով իւրաքանչիւր տարի 150 ռ., որից 50 ռ. գործադրել հայ պարբերական հրատարակութիւնների համար. գ) Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից նշանակել մարդիկ, որոնց պարտականութիւնը լինի գրադարանի հայոց բաժնի համար ընտրել գրքեր և պարբերական հրատարակութիւններ և հսկել այդ գրքերի, հրատարակութիւնների թէ գործադրութեան և թէ պահպանութեան վրայ մինչև Հայոց Բարեգ. Ընկ. տեղական ճիւղի ապագայ գրադարանի բացումը, ուր փոխադրել անմիջապէս Ռուսաց գրադարանից հայոց գրքերի բաժինը»։

Եւ իրաւ, սեփական գրադարան հիմնելու որոշումը կայացնում է Տեղական Վարչութիւնը 1897-ին, այդ նպա-

տակով յետ դնելով իր գումարներից 750 ռուբլի։—Բայց գրադարան չէ բացվում։

Գալով ժողովրդական աղէտներին, Արմաւիրի Տեղական Վարչութիւնը 1892-ի խօլերայի ժամանակ հեռագրով 1000 ռուբլու արտակարգ ծախսի թոյլտուութիւն է խնդրում սանիտարական մասնախմբեր կազմելու համար։—Բայց ծախսում է միայն 386 ռուբլի։—1894-ի սովի ժամանակ Վարչութիւնը հանդանակութիւն է անում և ուղարկում է Կաթողիկոսին։ Իսկ թիւրքահայ գաղթականներին օգնելու համար Վարչութիւնը, ինչպէս տեսանք իր տեղում, ուղարկեց Խորհրդին 1000 ռուբլի։

XIII

ԱԽԱԼՔԱԼԱՔ

(1890 — 1898)

Այս ճիւղը բացուել է 1890 թ. յունվարի 21-ին համաձայն խնդրագրի 28 անձանց, որոնք դիմել էին Խորհրդին։ Առաջին ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Խորէն աւագ քահանայ Բարսեղեանցի, ընտրեց Վարչութիւն այսպիսի կազմով։ Աբրահամ Երիցփոխեան (նախագահ), Զարմայր Աւվանեան, Արշակ Գրիգորեան, Յարութիւն Յարութիւնեան և Զալալ Տէր-Գրիգորեան (գործավար, ապա փոխ-նախագահ և յետոյ նախագահ, կարճ ընդհատումով, մինչև ճիւղի փակումը)։

Գործադիր անդամների թիւը տարեկան 23—60։ Նախահաշիւ միջին թուով տարեկան 400 ր.։—Գործադրութիւն. նպաստներ դպրոցներին, աշակերտներին, տառապեալներին, մանաւորապէս աղքատ հիւանդներին։—

Տարեկան մի փոքրիկ գումար էլ (30—50 ռուբլի)

ծախսվում էր ժողովրդական էժանագին գրքոյկներ գնելու և ձրի տարածելու համար։

Տարիների ընթացքում իր սովորական մուտքից գումարներ յետ դնելով, Տեղական Վարչութիւնը կազմեց մի յատուկ գումար Ախալքալաքում մանարան-գործարան արհեստանոց բաց անելու համար։ 1898-ի նախահաշուով այդ հիմնարկութեան համար յետ դրած գումարը 1628 ր. 72 կոպէկ էր։ Վարչութիւնը պիտի թոյլատրութիւն ստանար և բաց անէր արհեստանոցը։—Բայց նա չը բացուեց։

XIV

ԹԵԼԱՒ

(1890 — 1899)

Այս ճիւղի նախաձեռնողներ եղել են Թելաւում պետական ծառայութեան մէջ գտնուող Քրիստափոր Թադէոսեան և Մատթէոս Մուրատեան։ Խորհրդին խնդիրքով դիմողների թիւն էր 15։

1890 թ. փետրվարի 4-ին տեղական ընդհանուր ժողովի (նախագահ Գէորգ Աւ. քահանայ Տէր-Սարգսեան) ընտրած վարչութիւնը. նախագահ Աբէլ քահանայ Սուքիասեան (միշտ վերընտրուելով, մնացել է այդ պաշտօնում մինչև ճիւղի փակուելը), փոխ-նախագահ՝ Միքայէլ Թաթուզեանց, գանձապահ՝ Յովհաննէս Բաղդասարեանց, գործավար՝ Մատթէոս Մուրատեանց և անդամ Արտէմ Տէր-Սարգսեան։

Տարեկան անդամների թիւը, սակաւ բացառութեամբ, 60։ Տարեկան մուտք, միջին թուով, 800 ռուբլի։—Բարեգործական նպատակներ, նպաստներ ուսումնարանին, աշակերտներին, տառապեալներին։

Երբ 1896 թ. սկզբին փակուեցին հայոց ծխական դպրոցները, Թելաւի օրիորդաց դպրոցի աշակերտուհիներից շատերը մտան Ս. Նունէի դպրոցը (заведеніе)։ Վարչութեան նախագահ Աբել քահ. Սուքիասեան համաձայնութիւն կայացրեց այդ դպրոցի վարչութեան հետ, որ հայոց լեզուի դասերը աւելացուին մինչև 8 (շաբաթական), այն պայմանով, որ Տեղական Վարչութիւնը նպաստ տայ դպրոցին յատուկ այդ նպատակով տարեկան 150 ռուբլի։ Խորհրդի թոյլտուութեամբ այդ նպաստը տրուեց։—

Թելաւի Տեղական Վարչութիւնը սկզբի տարիներից շինեց հայոց ուսումնարանի մէջ թատրոնական դահլիճ և բեմ, որից վարձ էր ստանում տարեկան 140—150 ռուբլի։—

1892-ի խօլերայի ժամանակ Վարչութիւնը, ստանալով Խորհրդից 200 ռ., բաց արաւ յատուկ խօլերային հիւանդանոց 10 մահճակալներով։—

1898-ի նախահաշուի մէջ մտցրուեց 750 ռուբլի՝ Թելաւում արհեստանոց բաց անելու համար։ Բայց այդ միտքը չիրագործուեց։—

XV

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ

(1890 — 1899)

Տեղական Վարչութիւն Ալէքսանդրոպոլում իսկապէս բացուել է դեռ 1884 թ. մարտի 15-ին Կարապետ Ջալալեանի ջանքերով։ Այդ թուի ընդհանուր ժողովը նոյն իսկ ընտրել էր Վարչութեան անդամներ։ Սակայն այդ Վարչութիւնը, ոչինչ գործ չունենալով, ինքն իրան խափանուել էր։

1890 թուականին Ալէքսանդրոպոլի յաջորդ Գարեգին

վարդապետ Սաթունեան, տեսնելով որ այդ ընդարձակ վիճակը չունի Բարեգործական Ընկերութեան ճիւղ, ժողովներ է անում, բացատրում է ճիւղ բաց անելու անհրաժեշտութիւնը և ուղարկում է Խորհրդին 71 անձանց ստորագրութեամբ մի թուղթ, որով խնդրում են Տեղական Վարչութիւն կազմելու թոյլտուութիւն։ – Առաջին ընդհանուր ժողովը գումարուեց 1890 թ. օգոստոսի 19-ին, իսկ նրա ընտրած Վարչութիւնն այսպէս կազմեց իր դիւանը. նախագահ՝ Յարութիւն Զիթողցեան, փոխ-նախագահ՝ Յարութիւն Յարութիւնեան, գանձապահ՝ Յովհաննէս Յակոբեան և գործավար՝ Մեսրոպ քահանայ Գեօնջեան։ Վարչութիւնը գործունէութիւն սկսում է տարուայ վերջից։—

Անդամների թիւը 39 – 90։ Տարեկան եկամուտ 300—800 բուբլի։ Ծախքի սովորական աղբիւրներն էին չքաւոր աշակերտներ և սովորական տառապեալներ։

Առաջին տարուց Ալէքսանդրօպոլի Վարչութիւնը իր ուշադրութիւնը կենտրոնացնում է գրադարան-ընթերցարանի վրայ։ Այդ հիմնարկութեան անհրաժեշտութիւնը այնքան զգալի էր քաղաքում, որ տեղական ընդհանուր ժողովները յաճախ յանձնարարում էին Վարչութեան շտապեցնել գործը։ Վարչութեան խնդրանքով Խորհուրդը դեռ 1892-ին դիմեց Երևանի նահանգապետին թոյլտուութիւն ստանալու համար։ Սակայն այդ թոյլտուութիւնը չը ստացուեց։ Գրադարանի համար Վարչութիւնը տարիների ընթացքում յետ էր դրել իր եկամուտներից մօտ 800 բուբլի, մշակել էր կանոններ, նոյն իսկ կազմել էր ձեռք բերելիք ռուսերէն և հայերէն գրքերի ցուցակը։

1897 և 1898 թուականների նախահաշիւների մէջ մենք այլ ևս չենք տեսնում գրադարանական գումար։ Գրադարանի փոխարէն Վարչութիւնը ծրագրում է բաց անել արհեստանոց և յատկացնում է այդ նպատակին մինչև 700 բուբլի։ Բայց այս ձեռնարկութիւնն էլ չէ յաջողվում։

Ալէքսանդրօպոլի Տեղական Վարչութեան ամենաեռանդուն գործունէութեան շրջանը 1894-ի սոմն է։

Թէ ինչ չափեր էր ստացել ժողովրդական այդ աղէտը Ալէքսանդրօպոլի շրջանում, երևում է Տեղական Վարչութեան գրութիւնից, որ ուղղուած է Խորհրդին 1894 թ. ապրիլի 6-ին։ Նա յայտնում էր թէ կարօտեալների դրութիւնն ուսումնասիրելու համար, ինքը կազմել է մի առանձին մասնաժողով, որ շրջել է գիւղերը և անձամբ տեղեկացել կարօտութեան չափերին։

«Շիրակի, հայի այդ շտեմարանի բնակիչները,— գրում էր Վարչութիւնը,— ծայրայեղ թշուառութեան մէջ են։ Գիւղացիների $^2/_3$ մասը միջին թուով 100 բուբլու չափ պարտք ունի ամենածանր տոկոսներով, $^1/_3$ մասից աւելին ոչ մի անասուն չունի։ Շատ գիւղացիք ցրուած են զանազան կողմեր մուրացկանութեան, երիտասարդները, չնայելով դարձեան վրայ հասնելուն, դուրս են եկել հեռաւոր քաղաքներ պանդխտութեան»։

Աղէտի դէմ հնար եղածին չափ մաքառելու համար միջոցներ որոնելով Վարչութիւնը Տեղական Ընդհանուր Ժողովի հետ որոշում է Խորհրդից 1000 բուբլու փոխառութիւն խնդրել, դրաստարանական 500 բուբլի գումարը փոխարինաբար ծախսել և խնդրել որ սովեալներին յատկացրած նպաստների մի մասն էլ Ալէքսանդրօպոլ ուղարկուի։

1000 բուբլու փոխառութիւնը չէ յաջողվում։ Բայց Վարչութիւնը բաւականաչափ նպաստներ է ստանում ծրագրած օգնութիւնը իրականացնելու համար։ Ալէքսանդրօպոլում հանգանակվում է 488 ր., ստացվում է քաղաքից 300 բուբլի մի գումար, որ հաւաքուած էր խօլերայի ժամանակ։ Խորհուրդը 1400 բուբլի է ուղարկում, Խրիմեան կաթողիկոսը 500 ր., «Մշակի» խմբագրութիւնը՝ 768 բուբլի։—Ստացվում են և ուրիշ տեղերից նուէրներ։—

Օգնութեան գործը կազմակերպվում է այսպէս։ Բա-

դաքի սուված ազգաբնակութեան համար բացվում է ձրի ճաշարան, իսկ գիւղական ազգաբնակութեանը բաժանվում է ցորեն և գարի, թէ իբրև սերմացու և թէ իբրև ուտելիք։

Քաղաքի ձրի ճաշարանը բացվում է յունվարի 24-ին և փակվում է ապրիլի 24-ին։ Երեք ամսուայ ընթացքում նա ծախսում է 1642 ռուբլի և կերակուր է մատակարարում օրական մօտ 260 ընտանիքի։ Սերմացու և ուտելիք հայտատուներ բաժանվում են երկու մասնախմբերի ձեռքով։ Սերմացու ստանում են 39 գիւղ, բաղկացած 533 ընտանիքից, ընդամենը 1422 պուդ 20 ֆունտ ցորեն և 1096 պ. գարի։ Իսկ ուտելիք ստանում են քաղաքում 112 ընտանիք (525 հոգի) և 10 գիւղ (86 ընտանիք) գարի՝ 297 պ. 20 ֆ., ալիւր՝ 25 պ. և ցորեն—ալիւր 286 պուդ։—

Սերմացու գիւղացիներին բաժանուած էր փոխարինաբար, յետ ստանալու պայմանով, որովհետև Վարչութիւնը մտադիր էր Շիրակում հիմնել կենտրոնական շտեմարան։ Բայց յետ ստացուածը ծախվում է և փողը մնում է Վարչութեան նախահաշուի մէջ։

XVI

ՑԽԻՆՎԱԼ

(1890 — 1899)

Գօրու գաւառի այս վիրախօս հայ գիւղում Ընկերութեան ճիւղ բաց անելու մասին 1890 թուի յունիսին խընդիր են ուղարկում Խորհրդին 19 հոգի։—Առաջին վարչութիւնն ունէր հետևեալ կազմը, նախագահ և գանձապահ՝ Ալէքսանդր Զաւրեան, փոխ-նախագահ՝ Սաչինօ Մուրադեան, գործավար՝ Յովհաննէս Շահպարոնեան։

Առաջին տարին ճիւղն ունենում է 36 անդամ, այնուհետև երկու տարի՝ 22 անդամ և վերջապէս անդամների թիւը իջնում է 15-ի։ Տարեկան եկամուտը 100—200 ր. (մի տարի 600 ռուբլուց աւել)։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդպիսի մի միջավայրում Վարչութեան հոգսը պիտի լինէր տեղական հայոց ծխական դպրոցը։ Վարչութիւնը իր գրութիւններից մէկում յայտնում էր Խորհրդին թէ որքան ծանր է գործել Ցխինվալի պէս մի շրջանում, ուր հայերը «բացի անունից կորցրել են այն ամենը, ինչ որ յատուկ է ազգութեան, այսինքն լեզուն, սովորութիւնները»։

Այնուամենայնիւ, այս աննպաստ պայմաններում էլ Ցխինվալի Վարչութիւնն ունի մի փոքրիկ շրջան, երբ նա ցոյց է տալիս եռանդ և արդիւնաւոր գործունէութիւն։ Այդ շրջանը սկսվում է 1893 թուից, երբ Վարչութեան նախագահ է ընտրվում Յովհաննէս Տէր-Ստեփանեանցը։ Սա շարունակ միջոցներ էր որոնում Վարչութեան եկամուտները շատացնելու համար։ Նոյն թուին Վարչութիւնը կազմակերպում է ժողովրդական զբօսանք վիճակախաղով և ստանում է 237 ռուբլի արդիւնք։ Միաժամանակ Վարչութիւնը դիմում է Խորհրդին, խնդրելով նրա աջակցութիւնը որպէս զի կարելի լինի մի յարմար շինութիւն կառուցանել տեղական օրիորդաց ծխական դպրոցի համար, քանի որ այդ դպրոցի դրութիւնը շատ խղճալի է։

Այդ հարցը առաջ է գնում մանաւանդ շնորհիւ այն հանգամանքի, որ թիֆլիսաբնակ այրի Մարիամ Պօպովեանցը, գնալով Ցխինվալ և տեսնելով կարիքը, իր կողմից 2000 ռուբլի է նուիրում յօգուտ դպրոցի շինութեան. իսկ Զաալ Օհանեանը նուիրում է նոյն նպատակով 540 քառակուսի սաժէն հող։ Վարչութիւնը ծրագրում է այդ դեռնի վրայ կառուցանել ոչ միայն դպրոց, այլ և եկեղեցի։ Ծախս հաշուած էր ընդամենը 5000 ռուբլի։ Այդ

գումարից Ցխինվալը կարող էր տալ մօտ 1000 ռուբլի, հետևաբար կարիք կար հաւաքելու դեռ ևս 2000 ռուբլի։

Վարչութիւնը խնդրում է որ կամ Խորհուրդը ինքը փոխարինաբար տայ այդ գումարը, կամ, թէ չէ կարող, հանգանակութիւն բաց անէ Թիֆլիսում։ Ինքը Վարչութիւնն էլ հանգանակութիւն է սկսում և հաւաքում է 273 ռուբլի։ Նա պատրաստում է ռուսերէն ու հայերէն լեզուներով տպագրուած դիմումներ, խնդրելով բարեսէր մարդկանց օգնութեան ձեռք մեկնել ցխինվալցիներին։

«Մեր ընկերութիւնը—ասուած էր այդ թղթի մէջ—դիմում է ձեր մարդասիրական զգացմունքներին, խնդրելով, որ մասնակցութիւն յանձն առնէք իրագործելու այն բարձր քրիստոնէական նպատակները, որոնց նա կոչուած է ծառայելու—թեթևացնելու «կրտսեր եղբայրների» վիճակը, որոնք կաշկանդուած են տգիտութեան և աղքատութեան մէջ, և բարձրացնելու նոցա մտաւոր և բարոյական հորիզոնը արժանավայել աստիճանի։

«Կեանքի հետ ծանօթ իւրաքանչիւր մարդ փորձով գիտէ, թէ որչափ դժուար է այս բարի նպատակի իրագործութիւնը մեր նիւթական դարում. բայց նա հարիւրապատիկ աւելի դժուար է վիրախօս հայերի մէջ, որոնք զրկուած են իրանց «աւագ եղբայրների» բարերար ազդեցութիւնից և խրախոյսից՝ նիւթական, բարոյական և մտաւորական յառաջադիմութեան շաւիղը մտնելու համար»։

Վարչութիւնը խոստանում է ամեն տարի, Զատկից յետոյ, եկեղեցում կատարել մաղթանք կենդանի նուիրատուների և հոգեհանգիստ՝ մեռածների համար։ Բացի դրանից, 100 ռուբլուց աւել նուէր տուողի անունը պիտի արձանագրուէր մարմարէ տախտակի վրայ, որ եկեղեցու պատի մէջ պիտի դրուէր։ Բացի ծրագրուած շինութիւնից Տեղական Վարչութիւնը միտք ունէր նաև արհեստանոց բաց անել գիւղում «պարապ մնացած և դատարկ շրջող մատաղահաս տղայոց համար» և այդ նպատակով նոյն իսկ ձեռք էր բերել գործիքներ։

Խորհուրդը առաջարկեց Վարչութեան, որ նա առ

այժմ մի կողմ թողնէ թէ ինչ միջոցով պէտք է ձեռք բերել պակասորդ 2000 ր.—փոխառութեամբ արդեօք, թէ հանգանակութեամբ. այլ նախ կազմել տայ մակարդակ և բոլոր ծախսերի նախահաշիւը, որպէս զի կարելի լինի կարգաւորել հարցը։—Բայց 1894-ի վերջերում նախագահ Տէր-Ստեփանեանը ստիպուած է լինում թողնել իր պաշտօնը, և այնուհետև Ցխինվալի ճիւղը մատնվում է մեռելութեան։

Գիւղում չէ ճարվում մի մարդ, որ ընդունակ լինէր վարելու նախագահի պաշտօնը, ուստի Վարչութեան նախագահ ընտրվում է Գօրու յաջորդ Եղիշէ Մուրադեանը. իսկ երբ նա պաշտօնով տեղափոխվում է Կարս, Ցխինվալի ճիւղը սկսում է քայքայուել։ Վարչութեան անդամները վրացերէն էին ստորագրում Խորհրդին ուղարկած թղթերը։ Այդ անդամներից միայն մէկը, տեղական քահանայ Խաչանեանը, գրում էր թղթերը։ Նա էլ 1896 թուին յայտնեց Խորհրդին, որ ճիւղը փակուելու վտանգի մէջ է և խնդրեց մի ազդեցիկ մարդ ուղարկել Ցխինվալ, որպէս զի կարելի լինի կարգաւորել գործերը և կենդանացնել Տեղական Վարչութիւնը։

Խորհուրդը խնդրում է Թիֆլիսի թեմի թեմական Տեսուչ Մեսրոպ քահ. Մելեանին, որ նա իր այցելութեան ժամանակ, իբրև ընկերութեան անդամ, վերահասու լինի Տեղական Վարչութեան գործերին և միջոցներ ձեռք առնէ ճիւղը փակուելու վտանգից ազատելու համար։ Թեմական Տեսուչը կատարում է այդ յանձնարարութիւնը, ընդհանուր ժողով է հրաւիրում, նոր Վարչութիւն է ընտրել տալիս, բացատրում է Բարեգործական Ընկերութեան նշանակութիւնը, կազմում է 1896 թուականի համար նախահաշիւ։

Սակայն այդ թուականից յետոյ Խորհրդի գործերում տեղեկութիւններ չը կան Ցխինվալի մասին. 1898-ին, ինչպէս երևում է Խորհրդի տարեկան տեղեկագրից, Ցխին-

վալի ճիւղը դեռ գոյութիւն ունէր, որովհետև նա էլ այդ տարին դրուած է Ընկերութեան ճիւղերի ցուցակի մէջ։—

XVII

Ն Ո Ի Խ Ի

(1890—1899)

Երբ Կովկասի Հայոց Բար. Ընկերութիւնը հիմնվում էր Թիֆլիսում, Նուխում գոյութիւն ունէր մի ընկերութիւն, որի անունն էր «Ուսումնասիրական Ընկերութիւն Նուխի քաղաքի յանուն սրբոյն Եղիշէի առաքելոյն Աղուանից»։ Նա հիմնուել էր 1878-ին և նրա կանոնադրութիւնը հաստատել է, Գէորգ կաթողիկոսը 1880 թուին։

Այդ «Ուսումնասիրական Ընկերութիւնը» 1882-ի յուլիսին դիմում է Խորհրդին և յայտնելով թէ ինքն ունի 25 պատասուաւոր, հիմնադիր և մշտական անդամներ և առձեռն դուսար 1126 ռուբլի, ցանկութիւնը էր յայտնում միանալու Կովկասի Հայոց Բար. Ընկեր. հետ, կազմել Նուխու ճիւղ «որոշ պայմաններով»։—Խորհուրդը պատասխանում է թէ ինքը ուրիշ պայմաններ չէ ճանաչում բացի իր կանոնադրութիւնից և հրաւիրում էր Նուխու ընկերութեանը բացատրել թէ ինչ են նրա «որոշ պայմանները»։ Պատասխան չէ ստացվում և յայտնի չէ թէ ինչ է դառնում «Ուսումնասիրական Ընկերութիւնը»։

1890 թուին Նուխու յաջորդ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանը հաւաքում է նուխեցիներին և 40 հոգու համաձայնութիւն առնելով, ստանում է Խորհրդից Նուխում ճիւղ բաց անելու թոյլտուութիւն։ Առաջին ընդհանուր ժողովը, նոյն Վահան վարդապետի նախագահութեամբ 1890 թ. դեկտեմբերի 5-ին ընտրում է Վարչու-

թիւն, որ ստանում է այսպիսի կազմ. նախագահ՝ Գրիգոր Մարգարեան, փոխ-նախագահ՝ Խաչատուր Խոջամիրեան, գանձապահ՝ Յովհաննէս Բինիաթեան, գործավար՝ Գալուստ Թումանեան։

Առաջին տարին անդամների թիւն էր 71, յետագայ տարիներում այդ թիւը բարձրացաւ, հասնելով 104-ից—107-ի (1904-ին)։ Բայց պէտք է նկատել որ բոլոր անդամները Նուխում ապրողներից չէին, կէսը օտար քաղաքներում ապրողներից էին։ Վարչութեան տարեկան եկամուտը սկզբի երկու տարիներում 350—390 ր., այնուհետև 800—1200 ռուբլի։

Բացի դպրոցին, աշակերտներին և տառապեալներին օգնելուց, Վարչութիւնը 1893-ից աշխատել է գրադարան-ընթերցարան բաց անել և այդ նպատակով իւրաքանչիւր տարի յետ է դրել մի որոշ գումար։ Գրադարանի թոյլատուութիւնը Գանձակի նահանգապետը տուել է նոյն 1893-ի յուլիսին։ Եւ 1894-ի յունվարի 23-ին մի համեստ հանդիսով բացվում է այդ կրթական հաստատութիւնը։

Այնուհետև Տեղական Վարչութիւնը իր միջոցների մեծագոյն մասը ծախսում է գրադարան-ընթերցարանի վրայ։ Թէև որոշում է բանալ և ապաստանարան և այդ նպատակով մտցնում էր իր նախահաշիւների մէջ մօտ 800 ր., բայց այս մտադրութիւնը մնում է առանց իրագործման։

Թիւրքահայ գաղթականները Նուխի էլ են հասնում և նրանց օգնելու համար Վարչութիւնը Խորհրդից ստանում է 400 ռուբլի նպաստ։

Առ 1 յունվարի 1899 թ. Նուխու գրադարանն ունէր 972 հատ հայերէն և 590 հատ Ռուսերէն գրքեր, ընդհանուր արժողութեամբ 2321 ռուբլի։ 1898-ին Ընթերցարանն ստանում էր 20 հատ պարբերական հրատարակութիւններ։ Գրադարան-ընթերցարանի տուած եկամուտը նոյն թուին 65 ռուբլի. ծախս Վարչութեան միջոցներից՝ 804 ռուբլի։

XVIII

ԱՐԴԱՀԱՆ

(1891—1894)

Այս ճիւղը բացուել է Արդահանի երիտասարդութեան նախաձեռնութեամբ 1890 թ. դեկտեմբերի 8-ին Վարչութեան նախագահն էր Մկրտիչ Տէր-Սիմէոնեան, անդամներ՝ Յակոբ Ալօեան, Բաղդասար Սիրունեան, գործավար՝ Վ. Տէր-Անտոնեան։

1891-ին անդամների թիւն էր 30, 1892-ին՝ 33։ Տարեկան եկամուտ 250—380 ռուբլի։ 1892-ին Վարչութիւնն ստացաւ Խորհրդից 200 ռուբլի՝ խօլերայի դէմ մաքառելու համար։ Իր միջոցներով նա օգնում էր տեղական դպրոցին և տառապեալներին։

1894-ին Վարչութիւնը դադարեցրեց իր գործունէութիւնը՝ անդամների պակասութեան պատճառով։ Իսկ երբ 1895-ին Խորհրդի ջանքերով և յորդորներով ճիւղը վերըսկըսեց իր գործունէութիւնը և նոր Վարչութիւն ընտրուեց, Կարսի զինուորական նահանգապետը արգելեց նրան գործել, պատասխանելով Խորհրդի դիմումին, թէ ընկերութիւնը, համաձայն 1891-ի Բարձրագոյն հրամանի, այլ ևս իրաւունք չունի ճիւղեր բանալ։

XIX

ԲԱԼԱԽԱՆԻ

(1898)

1890 թ. վերջում Բալախանում Գաբրիել Պապեանի նախաձեռնութեամբ կազմվում է մի խումբ՝ Տեղական Վարչութիւն բաց անելու համար։

1891 թ. փետրվարի 5-ին ընդհանուր ժողով է գումարվում և նրա ընտրած Վարչութիւնը կազմակերպվում է այսպէս, նախագահ՝ Մուշեղ Մամիկոնեան, փոխ-նախագահ՝ Դաւիթ Յարութիւնեան, գանձապահ՝ Արսէն Կրասիլնիկեան, գործավար՝ Սարգիս Տէր-Զաքարեան և անդամ՝ Տէր-Մարգարեան։

Սակայն Բագուի գաւառապետը յայտարարում է, որ ինքը չի թոյլ տայ Վարչութեան գործել՝ առանց Նահանգապետի թոյլտուութեան։ Բանակցութիւնները գաւառապետի հետ ոչ մի արդիւնք չեն տալիս։ Վարչութիւնը դիմում է նահանգապետին, բայց նա, ինչպէս յայտնել էր գաւառապետը, դիմել էր Կովկասի Կառավարչապետին՝ հարցնելով թէ կարելի՞ է թոյլ տալ Վարչութեան գործունէութիւնը։ Խորհուրդն էլ երկար ժամանակ առանց պատասխանի է թողնում Վարչութեան դիմումները։

Իսկ Վարչութիւնը, հաւաքելով 168 անդամների վճարը, անգործութեան է մատնվում։ 1891 թուի յունվարից յետոյ Ընկերութիւնն այլ ևս իրաւունք չունէր ճիւղեր բաց անելու։ Եւ Խորհուրդը այնուհետև աշխատում է ստանալ Բալախանու ճիւղի անդամավճարներից գոյացած գումարը։ Այդ գումարը 840 ռուբլի, նա ստանում է 1894-ին գանձապահ Ա. Կրասիլնիկեանից։

XX

ԳԱՆՁԱԿ

(1891)

Գանձակի հայուհիները, թուով 16 հոգի, 1889 թ. դեկտեմբերին խնդիրք են ուղարկում Խորհրդին որ թոյլ տայ ճիւղ բաց անել Գանձակում։ Եւ ահա ինչ է պատասխանում Խորհուրդը։

«Շնորհակալ խոստովանելով իրան Մեծարուհի Տիկնայդ՝ որ Ընկերութեանս բարի գործը հայութեան մէջ ծաւալելու օժանդակ էք կամենում հանդիսանալ բարի նախանձաւորութեամբ, Խորհուրդը, սակայն նկատելով որ ստորագրուածների թուում ոչ մի այր մարդ չը կայ, կասկածամտեցաւ թէ մի՞ գուցէ Մեծարուհի Տիկնայդ անխառն, այն է միայն և միայն կանանց շրջանակի մէջ էք ուզում ամփոփել ցանկացեալ Տեղ. Վարչութիւնը, իբր սկզբունք դրած լինելով՝ չընդունել արանց մասնակցութիւնը։ Խորհուրդը, նախ քան խնդրեալ թոյլտուութիւնն անելը, կը ցանկար ստուգիւ տեղեկանալ Ձեր դիտաւորութիւնը»։

Գանձակի հայուհիները այս հարցման չեն պատասխանում։ Ուղիղ մի տարուց յետոյ Գանձակում ճիւղ հիմնելու ջանքեր անում է այստեղի յաջորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանը։ Երկու կիրակի նա քարոզներ է խօսում եկեղեցիներում, բացատրում է Ընկերութեան նպատակը և ապա ժողով գումարելով, 77 անդամներ է գտնում Ընկերութեան համար։ Ընդհանուր ժողովը մարտի 10-ին ընտրում է Վարչութեան անդամներ։ Սակայն Խորհուրդը բեկանում է այդ ընտրութիւնները՝ կանոնադրութեան § 45-ը պահպանուած չը լինելու պատճառով։ Նոր ընտրութիւններ են կատարվում, գործը ուշանում է։ Եւ ահա 1891 թ. յունիսի հրամանը վրայ է հասնում, որով ընկերութիւնն այլ ևս նոր ճիւղեր բացանելու իրաւունք չունէր։

XXI

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ

Նոյն պատճառով չէ կարողանում գործունէութիւն սկսել և Թէմիր-Խան-Շուրայի ճիւղը, որը բացուել էր 1891-ին զինուորական ինժիներ Եփրեմ Աւշարեանցի ջանքերով և որ արդէն ունէր ընտրուած Վարչութիւն։

Ընկերութեան առաջին շրջանում մեծ Ղարաքլիսան, Մոզդոկը և Եկատերինոդարը թոյլատրութիւն են ստացել Խարհրդից՝ Տեղական Վարչութիւններ հիմնելու համար, բայց չեն իրագործել այդ թոյլատրութիւնը։

ԾՐԶԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Կանոնադրութիւն

1899—1908 թուականի.

I

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ա. ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1889 թ. մարտի 11-ին Թիֆլիսի ոստիկանապետը գրութեամբ յայտնում է Խորհրդին թէ Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը ներքին գործերի մինիստրի համաձայնութեամբ կազմել է Ընկերութեան համար նոր կանոնադրութեան ծրագիր։ Ուղարկելով այդ ծրագիրը Խորհրդին, ոստիկանապետը առաջարկում էր «Գումարել ընդհանուր ժողով մինչև մի ամիս պատասխանելու՝ կամենում է արդեօք ընկերութիւնը ընդունել առաջարկուած ծրագիրը և նրանով շարունակել իր գործունէութիւնը, իսկ եթէ չէ կամենում ընդունել, այն դէպքում, դադարելով այլապէս գոյութիւն ունենալուց, ինչ նպատակի է յատկացնում Ընկերութիւնը իր գումարը և գոյքը» [1]։

Ընկերութեան անդամներին նոր կանոնադրութեան հետ ծանօթացնելու համար Խորհուրդը, նախ քան ընդհանուր ժողով հրաւիրելը, տպագրել է տալիս իրան ուղարկուած ծրագիրը և բաժանում է անդամներին։

Ահա այդ կանոնադրութեան էական կէտերը։

Թիֆլիսում գոյութիւն ունեցող «Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում» վերակազմվում է, դառնալով «Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւն» հետևեալ հիմունքների վրայ։

I. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ։ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան նպատակն է հայթայթել միջոցներ՝ բարեւելու համար հայ-լուսաւորչական դաւանութեան պատկանող եր-

[1]) Արձ. № 4։

կու սեռի անձանց նիւթական դրութիւնը՝ բացառապէս Թիֆլիսում, առանց խտրութեան հասակի և դիրքի։

Գոյութիւն ունեցող ճիւղերը կարող են շարունակել իրանց գործունէութիւնը միայն իբրև անկախ տեղական հայոց Բարեգործական Ընկերութիւններ, երբ ամեն մէկի համար առանձին կանոնադրութիւն կը հաստատուի՝ ներկայ կանոնադրութեան հիմունքների վրայ։

Ընկերութիւնը կարող է օգնել.

ա) Տալով հագուստ, կերակուր և ապաստարան չքաւորներին, եթէ սրանք չեն կարողանում ձեռք բերել այդ բաները իրանց սեփական աշխատանքով. կարելի է նոյնպէս դրամական նպաստներ տալ, բայց ծայրայեղ դէպքերում։

բ) Աշակցելով որ կարօտեալները պարապմունքներ և ծառայութեան տեղ գտնեն, որ նրանք ձեռք բերեն աշխատանքի համար նիւթեր ու գործիքներ և շահաւէտ կերպով վաճառուեն աղքատ աշխատաւորների պատրաստած իրերը։

գ) Հասցնելով աղքատ հիւանդներին բժշկական օգնութիւն՝ տանը՝ բժշկի հսկողութեամբ, կամ տեղաւորելով այդպիսի հիւանդներին, ընկերութեան միջոցներով, հիւանդանոցներում, նոյնպէս և օժանդակելով մեռածների թաղմանը։

դ) Տեղաւորելով զառամեալներին և անկարողներին աղքատանոցների, ապաստարանների մէջ, իսկ անչափահասներին՝ որբանոցների մէջ։

ե) Միջոցներ տալով որբերին, չունևորների կամ անյայտ ծնողների երեխաներին պահպանելու համար։

զ) Չունևորներին միջոցներ տալով վերադառնալ հայրենիք։

Այս բոլորը իրագործելու համար, ընկերութեանը, ըստ չափու աճման նրա միջոցների, տրվում է իրաւունք բանալու հասարակական ճաշարաններ, թէյատներ, էժանագին ընակարաններ, գիշերելու տներ, ապաստարաններ, հանրակացարաններ, աշխատանքի տներ, հիւանդանոցներ, ամբուլատորիաներ և այլ այսպիսի հիմնարկութիւններ, բայց ամեն անգամ առանձին թոյլտուութիւն ստանալով պատշաճաւոր իշխանութիւնից։

II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ։ Ընկերութիւնը կազմվում է անսահմանափակ թուով երկու սեռի անձինքներից, բայց բացառապէս այնպիսիներից, որոնք մշտական ընակութիւն ունին Թիֆլիսում և ռուսահպատակ են։ Անդամ չեն կարող լինել. ա) անչափահաս-

ները և դպրոցներում սովորողները և բ) դատաստանական վճիռներով իրաւունքների սահմանափակման ենթարկուածները։

Անդամները երկու տեսակի են. պատուաւոր և գործադիր։ Պատուաւոր անդամ կարողին դառնալ այնպիսիները, որոնք ընկերութեանը խոշոր նուիրաբերութիւն են արել (ոչ պակաս քան 500 ր. միանուագ) կամ որոնք ուրիշ աչքի ընկնող ծառայութիւններ են մատուցել։ Գործադիր անդամների տարեկան վճարը որոշում է ընդհանուր ժողովը, բայց 6 ռուբլուց պակաս չը պիտի լինի։ Միանուագ 150 ռուբլի տուողը նոյնպէս գործադիր անդամ է համարվում ընդ միշտ։ Ընկերութեան այն անդամը, որի գործողութիւնները խախտում են ընկերութեան շահերը, կարող է հեռացուել ընկերութեան կազմից, ընդհանուր ժողովի որոշումներով։

III. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ կազմվում են. ա) անդամակցական վճարներից, բ) ընկերութեան դրամագլխի և կայքերի արդիւնքներից և գ) ընկերութեան անդամների, կողմնակի անձանց և զանազան հիմնարկութիւնների նուէրներից, ինչպէս դրամով, նոյնպէս և իրերով, այլ և կտակներով նշանակուած գումարներից։ Նուէրներ և կտակներ ընկերութիւնը կարող է ընդունել բացառապէս այն նպատակների համար, որոնք յիշուած են վերևում։

Ընկերութեան գումարները երկու տեսակ են. անձեռնմխելի և ընթացիկ տրամադրելի։ Անձեռնմխելի գումարներին ամեն տարի աւելացվում է ընկերութեան եկամուտների 10%։

IV. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ յանձնվում է. ա) Ընկերութեան Վարչութեան և բ) անդամների ընդհանուր ժողովներին։

Հայ-լուսաւորչական հոգևորականութեան ներկայացուցիչները չեն կարող մասնակցել Ընկերութեան Վարչութեան մէջ և ընտրուել ընդհանուր ժողովների նախագահ կամ ընկերութեան հիմնարկութիւնների պաշտօնատար անձ։

ա) Վարչութիւնը բաղկացած է ընդհանուր ժողովից որոշուած թուով (6—12) անձերից, որոնք ընտրվում են նոյն ընդհանուր ժողովի ձեռքով ընկերութեան անդամներից, երեք տարի ժամանակով։ Ամեն տարի փոխվում է Վարչութեան կազմի 1/3 մասը։ Ընտրվում են և 2—4 անձնափոխանորդներ։

Վարչութեան անդամները ընտրում են իրանց միջից նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար։ Բոլոր անդամ-

ները ծառայում են ընկերութեան գործին ձրի։ Վարչութեան նիստերը օրինական են, երբ ներկայ եղողների թիւը անդամների կիսից պակաս չէ։

Ամբողջ գործավարութիւնը, գրագրութիւնները և հաշիւները, պետական վերահսկողութիւնը հեշտացնելու համար, ռուսերէն լեզուով են վարվում։

բ) Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ։

Ընդհանուր ժողովների օրուայ, ժամի, տեղի և պարապմունքների առարկաների մասին Վարչութիւնը պարտաւոր է ամեն անգամ վաղօրօք յայտնել Թիֆլիսի նահանգապետին և ընկերութեան անդամներին։ Ընդհանուր ժողով կարող է կայանալ միայն այն դէպքում, երբ թոյլտուութիւն է ստացուած Թիֆլիսի նահանգապետից, որ կարող է, եթէ հարկաւոր համարէ, նշանակել մի պաշտօնեայ այդ ժողովներում ներկայ լինելու համար։

Սովորական ընդհանուր ժողովները տեղի են ունենում տարին ոչ պակաս քան մի անգամ։ Արտակարգ ժողովներ հրաւիրվում են անյետաձգելի հարցեր քննելու համար, կամ Վարչութեան որոշումով ու բարեհայեցողութեամբ, կամ ներքին գործերի մինիստրի, Կովկասի կառավարչապետի և Թիֆլիսի նահանգապետի պահանջով, կամ վերաստուգիչ Յանձնաժողովի առաջարկութեամբ և կամ ընկերութեան անդամների $^1/_{10}$ մասից ոչ պակաս անձանց գրաւոր յայտարարութեան հիման վրայ։

Ընդհանուր ժողովը բաց է անում Վարչութեան նախագահը և այնուհետև իւրաքանչիւր նիստի համար ընտրվում է նախագահ։

Ընդհանուր ժողովները, ի միջի այլոց քննում են և ընկերութեան կամ նրա անդամների դէմ եղած գանգատները և այն առաջարկութիւնները, որ յանձնում են նրանց քննութեան նահանգապետը և Կովկասի կառավարչապետը կամ ներքին գործերի մինիստրը։ Այս գանգատները և առաջարկութիւնները քննվում են մօտագայ սովորական կամ արտակարգ ընդհանուր ժողովում և նրա որոշումները անյապաղ հաղորդվում են Թիֆլիսի նահանգապետին, կամ նրա միջոցով, Կովկասի կառավարչապետին և ներքին գործերի մինիստրութեան։

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՈՆՆԵՐ։ Ընկերութիւնն ունի կնիք բացառապէս իր անունով միայն։ Ոչ մի դրոշմ, էմբլէմ և նշանակ ընկերութեան կնիքի վրայ չէ թոյլատրվում։

Ընկերութիւնն իրաւունք ունի օրէնքով սահմանած միջոցներով ձեռք բերել և օտարայնել անշարժ կալուածներ, ամեն տեսակ գաշնագիրներ կապել, նոյնպէս և պաշտպանել իր շահերը դատարաններում՝ հաւատարմատարների միջոցով։

Կանոնադրութեան փոփոխութեան կամ լրացման համար ամեն անգամ թոյլտուութիւն է խնդրվում Թիֆլիսի նահանգապետի միջոցով Կովկասի կառավարչապետից։

Մանրամասն տարեկան հաշիւները ընկերութեան գումարների և գործունէութեան մասին, ընդհանուր ժողովից հաստատուելուց յետոյ, ներկայացվում են՝ երկու օրինակ Թիֆլիսի նահանգապատին, չորս օրինակ նրա միջոցով, Կովկասի կառավարչապետին և ներքին գործերի մինիստրութեան։ Նոյն կարգով ներկայացվում են և ընկերութեան տպագրած կանոնադրութիւնից հինգ-հինգ օրինակ Կովկասի կառավարչապետի Վարչութեան և ներքին գործերի մինիստրութեան։ Անկախ սրանից, նոյն տեղերը ներկայացվում են, որոշուած ձևով, նաև համառօտ քաղուածքներ ընկերութեան տարեկան հաշիւներից և ընկերութեան բոլոր անդամների, Վարչութեան և նրան ենթակայ հիմնարկութիւնների ցուցակները։ Այս պահանջի անկատար մնալը երկու տարուայ ընթացքում կարող է հիմք դառնալ ընկերութիւնը փակելու համար։

Կովկասի կառավարչապետին իրաւունք է տրվում ամեն ժամանակ, իրան ենթարկուած պաշտօնեաների միջոցով, ընկերութեան գործերի և հիմնարկութիւնների վերաքննութիւն կատարել։

VI. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ։ Կովկասի կառավարչապետը իրաւունք ունի փակելու ընկերութիւնը միշտ, երբ այս հարկաւոր կը համարուի համաձայն այնպիսի տեղեկութիւնների, որոնք ցոյց կը տան թէ ընկերութեան մէջ տեղի ունին անկարգութիւններ կամ կանոնադրութիւնը խախտուած է։

Եթէ Ընկերութիւնը որ և է պատճառով փակուի, նրան պատկանող ամբողջ դրամագլուխը և բոլոր կայքերը անցնում են տեղական քաղաքային ինքնավարութեան, որ գործադրում է այդ միջոցները համաձայն գոյութիւն ունեցող կարգադրութիւնների, իսկ յատուկ գումարները պէտք է յատկացուին այն նպատակներին, որ ցոյց են տուել նուիրատուները։

Ընդհանուր ժողովը, որ պիտի ծանօթանար այս կանոնադրութեան հետ և յայտնէր իր համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը, կայացաւ 1899 թ. ապրիլի 1-ին,

նախագահությամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի։ Ահա ինչ ենք կարդում այդ նիստի արձանագրության մէջ։

Պ. նախագահը ամփոփում է բոլոր վիճաբանությունները, ապա մի համառօտ պատմական ակնարկ է դցում Ընկերության 18 ամեայ գոյության և գործունէության վրայ. պատմում է թէ ինչ հանգամանքների և պայմանների մէջ ծնունդ առաւ այդ ընկերությունը, ինչ փառաւոր գործունէություն ունեցաւ և թէ որքան անհրաժեշտ է Կովկասի հայերի համար ունենալ մի բարեգործական հաստատություն։ Բացատրելով որ կառավարությունը կայսրության բոլոր Բարեգործական Ընկերությունների համար մշակած ունի «նորմալ» կանոնադրություն և այժմ այդ նորմալ կանոնադրությունն է յարմարեցրել և Հայոց Բարեգործական Ընկերության կանոնադրությունը, բայց... լայն ասպարէզ է թողնում բարեգործության համար, պ. նախագահը կոչում արեց ժողովի զգացմունքներին ընդունել նոր ծրագիրը և թոյլ չը տալ վերադառնալ նախկին դրության, երբ Թիֆլիսում հայերը չունէին ոչ մի բարեգործական հաստատություն, ուր դումարուելով մտածէին իրանց չքաւոր եղբայրների օգնության համար։

«Ժողովը միաձայն ընդունեց պ. նախագահի առաջարկությունը։ Այդ հիման վրայ պ. նախագահը յայտարարեց որ կառավարության առաջարկած նոր կանոնադրության ծրագիրը, որով «Հայոց Բարեգործական Ընկերությունը Կովկասում» վերակազմվում է և վերածվում «Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերության», ընդունվում է միաձայն»։

Նոր կանոնադրությունը հաստատուեց ներքին գործերի մինիստր սենատոր Գորեմիկինի կողմից նոյն 1899 թուին, ճիշտ այն օրը, երբ հաստատուել էր 1881-ի կանոնադրությունը, այն է յուլիսի 6-ին։

Բ. ԼԻՔԻՈՒԻԴԱՑԻԱ

Ապրիլի 1-ին Ընդհանուր ժողովից յետոյ Խորհրդի առաջին գործն է լինում հաղորդել ընդունած որոշումը դաւառական ճիւղերի Վարչություններին։ Ապա կազմվում է մանրամասն ցուցակ այն գումարների, որոնք յատուկ

նպատակներով յանձնուած են Խորհրդին և այն գումարների, որոնք ուղարկուած են ճիւղերից և պահվում են Խորհրդի գանձարանում։

Պարգուեց հետևեալը.

ա. Ճիւղերի գումարները.

1) Շուշին ունի 2500 ր., որի %-ը Տեղական Վարչութիւնը գործ է դնում իր պէտքերի համար։ 2) Կարսը ունի 600 ր., որի %-ով, ըստ կտակողի կամքի, պէտք է մի որդեգիր պահուի Կարսի ծխական դպրոցում։ 3) Ախալցխան ունի ա) 275 ր. գրադարանական գումար և բ) 1200 ր., որ 30 տարի բարդ %-ով պէտք է շահեցնել և ապա գործ դնել Ախալցխայում արհեստներ տարածելու։ 4) Ալէքսանդրօպոլն ունի. ա) 500 ր., որի %-ը գործադրվում է տեղական պէտքերի համար, բ) 600 ր. գրադարանական գումար և գ) 800 ր. յատկացրած կար ու ձևի դպրոց բաց անելու նպատակին։ 5) Նուխին ունի 256 ր. 51 կոպ. Նուխում աշակերտական ապաստանարան հիմնելու համար։ 6) Գօրին՝ 817 ր. 92 կոպ., որ յատկացրած է Գօրու գաւառում ծխական դպրոց բանալու։—

բ) Խորհրդի յատուկ գումարները.

1) Ինժիներ Համբարձում Կարապետեանը տուել էր 1000 ր., որ նրա %-ով չքաւոր աշակերտ պահուի. 2) Գաբրիել Սունդուկեանը 1890 թ. դեկտեմբերին յանձնել էր Խորհրդին իր «Ամուսիններ» պիէսի առաջին ներկայացումից գոյացած զուտ արդիւնքը 835 ռուբլի 66 կոպ. այն պայմանով, որ այդ գումարը համարուի յատուկ և անձեռնմխելի պահուի, տրուելով շահեցողութեան, որպէսզի յանձնուի Հայոց Դրամատիքական Ընկերութեան, բայց միայն այն ժամանակ, երբ այդ Ընկերութիւնը «մի օրինական յարատևութիւնը ապահովեցնող կազմակերպութիւն կունենայ»։ 3) Այրի Մարիամ Պօպովեանի նուէրը 2000 ր.

Ցխինվալի դպրոցի համար [1]։ 4) «Աբովեան-Նազարեան» գրականական ֆոնդ՝ 10000 ռուբլի, որի մասին արդէն մանրամասն խօսել ենք։—

Ի նկատի ունենալով որ նոր կանոնադրութիւնն ընդունելուց յետոյ, Խորհուրդը այլ ևս անկարող պիտի լինի պահել իր մօտ այդ բոլոր գումարները, նախ այն պատճառով, որ ճիւղերը այնուհետև անկախ ընկերութիւններ պիտի նկատուին և երկրորդ՝ որ «կրթական գործին և լուսաւորութեան նպաստելը դուրս է նոր կանոնադրութիւնից» որոշվում է դիմել վերոյիշեալ բոլոր ճիւղերին և անձերին և առաջարկել որ նրանք շտապեն հաղորդել թէ ինչ կարգադրութիւն են անում իրանց գումարների վերաբերեալ։—

Ամենքը, առանց բացառութեան, ցանկութիւն են յայտնում յետ ստանալ իրանց գումարները։ Եւ Խորհուրդը, ստանալով յունիսի 13-ի Ընդհանուր Ժողովի հաւանութիւնը, վերադարձնում է այդ բոլոր գումարները։ Տեղական Վարչութիւններից մէկը հարց է յարուցանում որ վերադարձուեն և այն գումարները, որոնք կազմուել են տարիների ընթացքում իւրաքանչիւր տարուայ եկամուտից հանած 5 %-ից (անձեռնմխելի ֆոնդ)։ Սակայն յունիսի 13-ի Ընդհանուր Ժողովը մերժեց այդ առաջարկը, գտնելով որ այդ ֆոնդը, ըստ Կանոնադրութեան, կարելի է ծախսել միայն այն դէպքում, երբ Ընկերութիւնը փակվում է, մինչդեռ այժմ Ընկերութիւնը չէ փակվում, այլ միայն կերպարանափոխվում է։—

Նկատենք այստեղ, որ Խորհուրդը, բացի վերոյիշեալ գումարներից, ունէր իր մօտ և Արմաւիրի ճիւղի գումարը, որ, ինչպէս գիտենք, գոյացել էր մշտական անդամների վճարից և հասնում էր 9600-ի։ Երևանի ճիւղը ունէր 3661 ր. 90 կոպ., իսկ Նոր-Բայազէդի ճիւղը՝ 194 ր. 70

[1]) Տես վերև «Ցխինվալ»։—

կոպէկ։ Նրանք մնացին առանց վերադարձնելու և անցան վերակազմուած Ընկերութեան Վարչութեան։

Նոր Կանոնադրութիւնը փակում էր և Ընկերութեան Գրադարան-Ընթերցարանները։ Թիֆլիսի Կենտրոնական գրադարանի հարցը Խորհուրդը դրեց յունիսի 13-ի Ընդհանուր Ժողովի առաջ։ Ժողովը որոշեց՝ գրադարանը նուիրել մի որ և է ազգային հիմնարկութեան և լիազօրութիւն տուեց Խորհրդին կարգադրել այդ գործը, ըստ իր բարեհայեցողութեան։—Բայց Խորհուրդը յանձնեց գրադարանը ամբողջութեամբ իրան յաջորդած Վարչութեան։—

Հաստատուած նոր Կանոնադրութիւնը ստացուած էր և սեպտեմբերի 19-ին նշանակուած էր Ընդհանուր Ժողով՝ այդ Կանոնադրութիւնը գործադրութեան մէջ մտցնելու համար։

Խորհրդի սեպտեմբերի 10-ի նիստում կարդացվում է Ընկերութեան 9 գործադիր անդամների գրութիւնը, որով նրանք առաջարկում են Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել Ալէքսանդր Մելիք-Ազարեանին ի վարձատրութիւն նրա երկարամեայ ծառայութեան։ Մելիք-Ազարեանը շնորհակալութիւն յայտնելով առաջարկութիւն մտցնողներին, ասում է որ ինքը գործել է Ընկերութեան մէջ սկզբից՝ և միշտ Ալէքսանդր Անանեանի հետ։—Այդ պատճառով առաջարկում է Ընդհանուր Ժողովի առաջ դնել նաև Ալէքսանդր Անանեանին պատուաւոր անդամութեան կոչումը տալու խնդիրը։ Խորհուրդն ընդունում է այդ առաջարկը, բայց վճռում է հարցը չը հանել սեպտեմբերի 19-ի Ընդհանուր Ժողովի առաջ, որի պարապմունքի առարկան պիտի լինի միայն նոր Վարչութիւն ընտրելը, այլ յանձնել նոր Վարչութեան ի տնօրինութիւն։—

Խորհրդի վերջին նիստը տեղի է ունենում սեպտեմբերի 17-ին։

Սեպտեմբերի 19-ի Ընդհանուր Ժողովը բաղկացած էր երկու մասից և ունի երկու արձանագրութիւն—հայե-

ըէն և ռուսերէն։ Հայերէնը վերաբերում է այդ օրը վերջ ստացած Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան և շատ համառօտ է. «Նախագահ պ. Բ. Նաւասարդեան, յայտնելով խորին շնորհակալութիւն Ընկերութեան բոլոր գործողներին և յորդորելով ու ցանկութիւն յայտնելով որ այդ գործողները նոյն եռանդով շարունակեն գործել վերակազմուող Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան մէջ, յայտնում է որ այսօրուանից Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան գործունէութիւնը պէտք է շարունակուի ըստ նոր Կանոնադրութեան իբրև «Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւն»։—

Այնուհետև նախագահն առաջարկում է ընտրել ըստ նոր Կանոնադրութեան նախագահ այս ժողովի համար։ Ժողովը միաձայն նախագահ է ընտրում հէնց իրան բժ. Նաւասարդեանին։

գ. ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Նոր Կանոնադրութեամբ Ընկերութեան անդամներ կարող են լինել միայն նրանք, որոնք մշտական բնակութիւն ունին Թիֆլիսում։ Ստուգում և տեսնում են որ բոլոր ներկայ եղողները այդպիսի անդամներ են։ Կարդացվում է Թիֆլիսի ոստիկանապետի հաղորդագրութիւնը թէ Ընկերութեան կանոնադրութիւնը հաստատուած է ներքին գործերի մինիստրից։

Ժողովը անդամակցական վճար նշանակում է 6 ռուբլի տարեկան։ Ապա նախկին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան պատուաւոր անդամ բժ. Նաւասարդեանին և մշտական անդամներին հաստատում է նոյն կոչումների մէջ։—Վարչութեան կազմը որոշում է լինել 9 հոգուց։ Եւ ապա գաղտնի քուէարկութեամբ ընտրում է Վարչութեան անդամներ։

Ընտրուեցին. Յովսէփ Ամիրխանեան, Աբրահամ Երեց-

փոխեան, Մարկոս Դօլուխանեան, Պետրոս Ալիբէգեան, Փիլիպպոս Վարդապարեան, բժ. Արիստակէս Զարդարեան, իշխանուհի Մարիամ Թումանեան, Սողոմոն Ծուրինեան և Նիկողայոս Աբրահամեան։ Փոխ-անդամներ. Ադասի Մելիք-Այվազեան, Ստեփան Մալխասեան և Յովհաննէս Թումանեան։

II

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը նախագահ ընտրեց Մարկոս Դօլուխանեանին, որ յաջորդ տարիներում ևս վերընտրուելով, շարունակեց այդ պաշտօնը մինչև 1904 թիւը։ Փոխ-նախագահ ընտրուեց Ա. Երեցփոխեան, գանձապահ՝ Փ. Վարդապարեան, քարտուղար՝ Ամիրխանեան։—

Մ. ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆ
Վարչութեան նախագահ

Յաջորդ տարիներում հետևեալ փոփոխութիւնները եղան այդ պաշտօնների մէջ՝ 1904-ին նախագահ ընտրուեց Յովհաննէս Սպենդիարեան, 1905-ին՝ Տիգրան Յովհաննիսեան և 1906-ին՝ Սամսոն Յարութիւնեան։ Փոխ-նախագահ 1902-ին ընտրուեց իշխանուհի Մ. Թումանեան, որ մնաց այդ պաշտօնում մինչև 1906 թ., երբ ընտրուեց Լևոն Սարգսեան. իսկ

1907-ին ընտրուեց, Սահակ Լիսիցեան։ Գանձապահ ընտրուել են. 1903-ին՝ Գէորք Մելիք-Դարագեօզեան, 1905-ին՝ Կարապետ Շիրինեան, 1906-ին՝ Ս. Մնացականեան, 1907-ին Առաքել Սարուխանեան։ Քարտուղար ընտրուել են. 1902-ին՝ Ռուբէն Յովհաննիսեան, 1903-ին՝ Զաքար Մամուլեան, 1905-ին՝ Յակ. Ստեփանեանց, 1906-ին՝ Աշոտ Աթանասեան, 1907-ին՝ Ռուբէն Խանազատեան։

Յով. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ
Վարչութեան նախագահ

Ընդհանուր Ժողովների նախագահ ամբողջ այս շրջանում (1899 — 1908) ընտրուել է բժ. Բ. Նաւասարդեան, բացառութեամբ երեք դէպքերի, երբ նախագահել են Յովհաննէս Սպենդիարեան, Նազարէթ Տիգրանեան և Լևոն Սարգսեան (1904—1905 թ.)։

1899-ի կանոններով գոյութեան հրաւիրուած Վարչութեան ընդհանուր գործունէութիւնը գնահատելու համար պէտք է, 'ի հարկ է, ամենից առաջ 'ի նկատի առնել այն բարեգործական ասպարէզը, որ բացուած էր նրա առջև նոյն կանոններով և այն հանգամանքները, որոնց ազդեցութեան տակ էր դրուած այդ ասպարէզը։ Բաւական է մի թռուցիկ հայեացքով ընդգրկել նոր կանոնադրութիւնը, որպէս զի իսկոյն հասկանալի դառնայ թէ այդպիսի մի հասարակական հիմնարկութիւն չէր կարող գրաւել հասարակութեան վստահութիւնն ու համակրանքը լայն չափերով։ Աւելացնենք որ այդպիսի մի կանոնադրութիւն գործում էր իշխան Գոլիցինի կառավարութեան

ժամանակ, երբ փակուեցին հայոց դպրոցները, Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, դրաւուեցին եկեղեցական կալուածները և այլն։—

Բնականաբար, Ընկերութեան առանց այն էլ սահմանափակուած գործունէութիւնը պիտի աւելի ևս նեղուած լինէր։ Եւ մենք տեսնում ենք, որ հասարակութեան վերաբերմունքը դէպի Ընկերութիւնը արտայայտվում է ամենից առաջ գործադիր անդամների թուի մէջ։ Ութ տարուայ ընթացքում անդամների թիւը միայն մի անգամ է (1902-ին) հասել 200-ի, այն էլ շնորհիւ այն հանգամանքի, որ Ընդհանուր ժողովը ուշադրութիւն էր դարձրել անդամների թուի նուազութեան վրայ և ընտրել էր մի առանձին յանձնաժողով, որ պիտի միջոցներ ձեռք առնէր այդ թիւը շատացնելու համար։

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Վարչութեան նախագահ

Երկու տարի իրար ետևից, 1903-ին և 1904-ին, Վարչութիւնը իր տարեկան տեղեկագրի մէջ դառնապէս դանդատվում էր հասարակական անտարբերութեան վրայ։ Ահա ինչ ենք կարդում 1904-ի տեղեկագրի մէջ. «Վարչութիւնը իր պարտքն է համարում մատնացոյց անել Թիֆլիսի հայ ժողովրդի անտարբերութեան վրայ դէպի Հայոց Բարեգործական Ընկերութեան կարիքները։ Ընկերութեան օգնութեան ամեն օր դիմում են բազմաթիւ խնդրատուներ, որոնց ամենաէական պահանջներին բաւարարութիւն տալու համար Վարչու-

թիւնը չունի այնքան միջոցներ նոցա օգնելու, ուստի և ստիպուած է մերժել շատերին, որոնք զրկուած են ապրուստի ամեն միջոցներից։ Միայն հայ հասարակութեան կենդանի աջակցութիւնը և համակրանքը դէպի թշուառների կարիքները հնարաւորութիւն կը տայ Բարեգործական Ընկերութեան, լայնացնել իր գործունէութիւնը յօգուտ թշուառների և կարօտեալների»[1]։ Բայց այդ յորդորները չէին ազդում անդամների թուի վրայ։ Ինչպէս տեսանք, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն էլ իր գոյութեան առաջին տարիներում նոյն այսպիսի դրութեան մէջ էր գտնվում։—Միայն 1905-ից յետոյ է նկատվում կենդանութիւն Վարչութեան գործունէութեան մէջ. ինչպէս յայտնի է, այդ ժամանակ էլ փոխուեց երկրում տիրող կառավարչական ըէժիմը։

Ս. ՑԱՐՈՒԹԻՒՆՅԱՆ
Վարչութեան նախագահ

Իր գործունէութեան առաջին երկու տարում Վարչութիւնը դեռ պիտի վերջացնէր նախկին Խորհրդից ժառանգած մի քանի հարցեր։ Ամենից առաջ նա Ընդհանուր Ժողովին առաջարկեց Ա. Անանեանին և Ա. Մելիք-Ազարեանին պատուաւոր անդամ ընտրելու որոշումը։ Ընդհանուր Ժողովը 1899-ի նոյեմբերի 7-ի նիստում երկուսին էլ ընտրեց պատուաւոր անդամ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան... Ապա Վարչութիւնը վերջա-

[1]) «Տեղեկագիր». եր. 15։—

ցրեց դրադարանի հարցը, ծախելով նրա ամբողջ շարժական մասը Թիֆլիսի Էժանագին Գրադարանին 100 ռուբլով, իսկ հիմնական մասը վճռեց պահել իբրև Ընկերութեան գոյք։—Արմաւիրի փակուած ճիւղը պահանջում էր Վարչութիւնից վերադարձնել 9600 ռուբլի գումարը։ Վարչութիւնը գտաւ, որ այդ գումարը կարելի է վերադարձնել միայն այն դէպքում, երբ Արմաւիրում կը բացուի Բարեգործական Ընկերութիւն։ Եւ Ընդհանուր Ժողովը համաձայնութիւն տուեց այդ որոշման այնպէս, որ գումարը մնայ Վարչութեան ձեռքին։ Բայց միևնոյն ժամանակ Վարչութիւնը Երևանի ճիւղի գումարից 1902 թուին ուղարկեց Երևանի քաղաքային Վարչութեան 1360 ռուբ. 13 կոպ. դրադարան բաց անելու համար։ Այդպիսի մի վճիռ կայացրել էր Երևանի ճիւղը, բայց, ինչպէս տեսանք, Խորհուրդը չէր ընդունել այդ վճիռը։—Վարչութիւնը այդ գումարը ուղարկեց քաղաքային Վարչութեան այն պայմանով, որ եթէ Երևանում բացուի Հայոց Բարեգործական Ընկերութիւն, դրամը յանձնուի նրան։

Վարչութեան գործունէութեան մէջ նկատելի կերպով փոփոխութիւն և ինքնավստահութիւն է նկատվում 1905 թուից, երբ Կովկասի բարձր կառավարութեան ձևը փոխվում է և Փոխարքայ է նշանակվում կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը։ Փոխարքայի բարեացակամ վերաբերմունքը դէպի կովկասեան ազգութիւնները հնարաւորութիւն է տալիս, որ Վարչութիւնը սեղմուած չը մնայ իր կանոնադրութեան տառացի տրամադրութիւնների սահմաններում։ Այսպէս մենք տեսնում ենք որ հայ-թրքական ընդհարումների ժամանակ Փոխարքայի կառավարութիւնը ինքն է հնարաւորութիւն տալիս Վարչութեան որ սա օգնէ աղէտից ենթարկուածներին և Թիֆլիսից դուրս [1]) 1906-ին, նախ ընդհանուր ժողովների, ապա և Վարչութեան արձա-

[1]) Տես ներքև, «Հայ-Թրքական ընդհարումներ»։

նագրութիւնները սկսում են գրել հայերէն լեզուով։ 1905 թուից յետոյ Վարչութիւնը վստահանում է աշխատակցութեան հրաւիրելու՝ ընկերութեան անդամներին, կազմելով զանազան մասնաժողովներ, որոնց մէջ մասնակցում էին և Վարչութեան անդամ չեղող անձինք։

III

ԱՂՔԱՏԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը ամբողջ ժամանակ զբաղուած էր իր Կանոնադրութեան որոշած աղքատախնամութեան զանազան ձևերով։—Նրա տարեկան նախահաշիւը գրեթէ միանման պատկերն ունէր։ Եկամուտը միջին թուով մինչև 4000 բուբլի։ Ելքի մէջ ամենախոշոր գումարներն էին. աղքատներին 2800—3000 բուբ. և դիւանական ծախսեր 1100—1200 բուբլի։

Որպէս զի ցոյց տանք աղքատախնամ գործունէութեան մանրամասնութիւնները, բերում ենք 1903-ի տարեկան հաշուից հետևեալ տեղեկութիւնները։

Աղքատախնամ նպաստները երկու տեսակի էին—մշտական և միանուագ։ Մշտական էին կոչվում այն նպաստները, որ Վարչութիւնը ամսէ ամիս տալիս էր աղքատներին՝ բնակարան վարձելու համար։ Այդպիսի նպաստ 1903-ին ստացել են 96 ընտանիք, միջին թուով իւրաքանչիւրը 2 ր. 36 կոպ. ամսական, ընդամենը 1876 բուբլի։—Այնուհետև գալիս էր մշտական նպաստների երկրորդ տեսակը՝ սնունդի նպաստ։ Այս նպաստը Վարչութիւնը առհասարակ առձեռն դրամով չէր տալիս։ Նա գնում էր էժանագին ճաշարանի տոմսեր և բաժանում էր իրան դիմող աղքատներին։ Բայց լինում էին և այնպիսի դէպքեր, երբ սնունդի նպաստներ տրվում էին առձեռն դրամով։—

1903 թուին այդպիսի նպաստներ ստացել են 20 հոգի։ Մի ջին թուով օրեկան ստացել են 12½ ճաշ՝ 87 կոպէկի արժողութեամբ։ Ընդամենը 317 ր. 9 կոպ.։ Բացի դրանից՝ սննդադրամ տրուել է 130 ր. 50 կոպէկ։ —

Միանուագ նպաստներ ստացել են, 25 հոգի՝ տնունդի և այլ կարիքների համար 52 ր. 30 կոպ., 20 հոգի՝ հայրենիք վերադառնալու համար՝ 111 ր. 79 կոպ., 19 հոգի՝ զգեստի և տնամանների համար՝ 46 ր. 50 կոպ., 23 հոգի՝ բժշկուելու, դեղերի համար՝ 79 ր, 50 կոպէկ. 4 հոգի Միքայէլեան հիւանդանոցում բժշկուել են Ընկերութեան հաշուով, տրուած է 151 ր.։ Ընդամենը բժշկութեան համար նպաստներ՝ 230 ր. 50 կոպ.։ 9 մեռելի թաղման ծախս տուած է 43 ռուբլի։ Երկու հոգու տուած է 20 ր. 50 կոպ. նպաստ՝ կարի մեքենաներ գնելու համար։

Ընդամենը աղքատախնամ նպաստներ տարուայ ընթացքում 2828 ր. 24 կոպէկ։

Բայց որ աստիճան էր այդ նպաստը բաւարարութիւն տալիս Թիֆլիսի աղքատ աղգաբնակութեան կարիքներին։ Վարչութիւնը յայտարարում էր թէ ինքը մերժել է 378 բերանացի և 50 գրաւոր դիմումներ՝ միջոցներ չունենալու պատճառով. և այս ոչ թէ մի տարուայ ընթացքում։ «Յուլիս ամսից,—կարդում ենք տեղեկագրի մէջ—Վարչութիւնը ստիպուած էր սահմանափակել խնդիրքների ընդունելութիւնը և փակել Բարեգործական Ընկերութեան դրռները խնդրատուների բազմութեան առջև»։—

Մօտաւորապէս այս պատկերն էր ներկայացնում Վարչութեան աղքատախնամ գործունէութիւնը նրա գոյութեան ընթացքում։

Վարչութիւնը փորձեց իրագործել աղքատախնամութեան և մի այլ միջոց։ 1900 թուականին նա որոշեց բաց անել աշխատանքի տուն։ Այդ որոշումը Ընդհանուր Ժողովի հաւանութիւնը գտաւ։ Վարչութիւնը յատուկ այդ նպատակով ստացաւ «Միրզոև և ընկ.» նաւթարդիւնաբե-

բական ընկերութիւնից 1500 բուբլի։ Բայց աշխատանքի տունը չը բացուեց։

IV

ԽՈՒԴԱԴԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Դեռ 1898 թուին ընդհանուր ժողովը ընտրել էր 6 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որ պիտի մշակէր ծրագիր թէ ինչպէս պէտք է գործադրել Խուդադեանի կտակը։ Յանձնաժողովի անդամներն էին. բժիշկներ Ա. Զարգարեան և Բ. Նաւասարդեան, Երուանդ Լալայեան, Կարապետ Եաղուբեան, Վաս. Վարդանեան և Աւետիք Արասխանեան։ Յանձնաժողովը չը կարողացաւ միանալ մի որոշ նպատակի շուրջը և ներկայացրեց Խորհրդին երկու ծրագիր։ Մեծամասնութիւնը, բաղկացած չորս անդամից, առաջարկում էր բանալ Խուդադեան դումարով մի որբանոց, որ պիտի ունենայ երկու բաժանմունք — տղաների և աղջիկների։ Պիտի ընդունուէին որբեր 7 տարեկան հասակից. նրանք պիտի վայելէին որբանոցի խնամքը մինչև տասն տարի։ Այդ ժամանակամիջոցում որբերը կամ դըպրոցներ կուղարկուեն, կամ արհեստներ կը սովորեն։ Իսկ փոքրամասնութիւնը, բաղկացած երկու անդամից, կարծում էր որ աւելի նպատակայարմար է պահել յանուն Խուդադեանի գրադարան-ընթերցարան երկու ընդարձակ բաժանմունքով—Կովկասագիտական և հանրակրթական։ Գրադարանի համար կառուցանել յատուկ շինութիւն Խուդադեանի քարվանսարայի տեղը, որի վերանորոգութիւնը կամ վերաշինութիւնը այժմ անխուսափելի է։ Ապագայում այդ շինութեան կից կարելի է բանալ ժողովրդական լսարան, իսկ առայժմ այդտեղ կարելի է զետեղել Խորհրդի գրասենեակը։

Յանձնաժողովն ստացաւ առաջարկութիւններ և միքանի կողմնակի անձերից. 1) բանալ ձրի ճաշարան աշակերտների և տառապեալների համար. 2) հիմնել հիւրանոց իր տնտեսական, առողջապահական և այլն ընդարձակ բաժանմունքներով. 3) հիմնել աշակերտական ապաստանարան. 4) բանալ գիւղական խնայողական դանձարան։

Այս առաջարկութիւններից ոչ մէկը չընդունեց յանձնաժողովը և Խորհրդին ներկայացրեց իր սեփական երկու ծրագիրը։ Բայց Խորհուրդն էլ այդ ծրագիրներին հաւանութիւն չը տուեց։ Նա ունէր իր սեփական ծրագիրը։ Եւ այս երևում է 1899 թ. փետրուարի 11-ի արձանագրութիւնից։ Ահա ինչ ենք կարդում այդտեղ։

«Որբանոց բանալուն Խուդադեանի անունով՝ Խորհուրդս հաւանութիւն չէ տալիս հետևեալ երեք հիմքով. նախ որբանոցից օգտուել կարող է սահմանափակ մի դասակարգ միայն, նա, ով որբ է, իսկ չքաւոր դասակարգի ոչ-որբ զաւակները զրկվում են բարեգործի կտակից. այդ նեղ մտքով սահմանափակումը և մասնաւորացումը ցանկալի չէ։ Երկրորդ՝ Խորհրդիս ծրագրած գործունէութիւնը բոլորովին անուշադիր է թողնուած յանձնաժողովի կողմից. Խորհուրդս իւր սուղ միջոցներով հազիւ միայն կարողանում է աննշան օգնութիւն տալ այն բազմաթիւ կարիքներին, որոնցով շրջապատուած է. Խուդադեանի հազուադէպ և խոշոր կտակը շատ նպատակայարմար կը լինէր, եթէ նրանով բացուէր մի հաստատութիւն, որը կը փոխարինէր այն խնամքին, որ թերի կերպով միայն կարողանում է կատարել Խորհուրդը. որբանոց բանալով, Խուդադեանի դրամագլուխը կը գործադրուի այդ հաստատութեան վրայ ամրողջովին, որ նոր է և ոչ մի կերպ Խորհրդի անցեալ և ներկայ ծրագրուած աշխատութեան չէ կարող օժանդակ հիմնարկութիւն հանդիսանալ։ Երրորդը՝ որբանոցի իբրև մատաղ հասակի համար մի դաստիարակիչ հաստատութեան երկսեռ բաժանմունքը խիստ պատասխանատու դժուարակիր մի խնդիր է, որին շատ հեշտութեամբ է նայել յանձնաժողովը։ Խորհուրդս առաջարկում է բանալ «Ապաստանարան յանուն Յ. Դ. Խուդադեանի հայ չքաւոր տղայոց համար»։ Ապաստանարանը Խորհրդի գործունէութեան հետ սերտ առնչութիւն ունեցող մի հաստատութիւն է. Խորհուրդը իւր տարեկան եկամուտի $^1/_2$ և մերթ $^2/_3$-ը ուսումնառուների մէջ



ԽՈՒՊԱՎԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ. — Սեղանատուն:

է բաժանում առանց հսկելու հնարաւորութիւն ունենալու նրանց բարոյականի, մնունդի և նիստ ու կացի վրայ, այդ հաստատութիւնը հիմնուելով թէ յիշեալ պակասութիւնը կը լրանար և թէ Խորհրդոյ գործունէութիւնը կընդարձակուէր դէպի այլ և այլ բարեգործական նպատակներ, որոնք այժմ մնում են անուշադիր՝ միջոցների սղութեան պատճառով։ Ապաստանարանում կընդունուեն թէ որբ և թէ ոչ-որբ երեխաներ»[1]։

Այս բոլոր առաջարկութիւնները քննվում էին ընդհանուր ժողովի նիստի մէջ, որ կայացաւ 1899 թ. փետրվարի 21-ին։ Զը կարողանալով կանգ առնել առաջարկութիւններից մէկն ու մէկի վրայ, ժողովը ընտրեց չորս հոգի (այն է՝ Ստեփան Մալխասեան, Տիգրան Փիրումեան, Սիմէօն Շահվերդեան և Գէորգ Ղարաջեան), որոնք նախկին վեց հոգու հետ պիտի նորից մշակէին այն հարցը, թէ ինչպիսի գործադրութիւն պէտք է տալ Խուդադեանի կըտակած գումարին։ Յանձնաժողովին առաջարկվում էր քննել այդ հարցը նախ առանձին նիստերում, ապա Խորհրդի հետ խառն ժողովներ կազմելով, որպէս զի կարելի լինի որոշ եզրակացութեան գալ։ Բացի դրանից, յանձնաժողովը պիտի ընդունէր առաջարկութիւններ և կողմնակի անձինքներից և այդ բոլոր նիւթերը տպագրելով, ներկայացնէր ընդհանուր ժողովին։

Վերակազմուած Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը սեպտեմբերի 19-ի նիստում վերահաստատեց այս յանձնաժողովը իր պաշտօնի մէջ։ Բայց թէ ինչ արաւ նա, այդ մասին գործերի մէջ մանրամասնութիւններ չենք գտնում[2]։ Յայտնի

---

[1]) Արձան. № 7։—

[2]) Նկատենք, որ առհասարակ Ընկերութեան այս երկրորդ շրջանի դիւանական գործերը չափազանց աղքատ են և անկանոն. իսկ Վարչութեան արձանագրութիւնները կազմուած են չափազանց համառօտ կերպով և մանրամասն տեղեկութիւններ չեն պարունակում։

է միայն, որ յանձնաժողովը երկար զբաղուել է այս հարցով և մշակել է որբանոցի կանոնադրութիւնը։

1900 թ. փետրվարի 29-ի նիստում Վարչութիւնը, հարկաւոր համարելով ընդհանուր ժողով հրաւիրել, նշանակում է զբաղմունքների առարկաները, որոնցից մէկն է. «Վարչութեան զեկուցումը՝ Խուդադեանի անունով մանկական ապաստանարան հիմնելու մասին»։—Այնուհետև ընդհանուր ժողովի արձանագրութեան մէջ (ապրիլի 16, 1900 թ.) կայ հետևեալ տեղեկութիւնը. «Կարդացուեց Վարչութեան զեկուցումը՝ յանուն Յովհաննէս Խուդադեանի՝ աղջիկների որբանոց հիմնելու մասին։ Ընդհանուր ժողովը որոշեց. համաձայն Վարչութեան զեկուցման, հիմնել աղջիկների համար որբանոց յանուն Յովհաննէս Դաւթեան Խուդադեանի, յանձնարարելով Վարչութեան, պատշաճաւոր իշխանութիւնից թոյլտուութիւն ստանալուց յետոյ կազմել հրահանգ որբանոցի կառավարութեան մասին և այդ հրահանգը ներկայացնել ընդհանուր ժողովին ի քննութիւն»։

Բացման թոյլտուութիւնը տուեց Կովկասի կառավարչապետը 1902 թ. նոյեմբերի 8-ին։ Հետևեալ տարուայ սկզբին Վարչութիւնը կազմեց այդ նոր հիմնարկութեան նախահաշիւը և ընդունեց յանձնաժողովի կազմած հրահանգը նրա կառավարութեան մասին։ Երկուսն էլ հաստատութիւն գտան 1903 թ. մարտի 23-ի ընդհանուր ժողովի կողմից։

Ահա այդ հրահանգը, որ մենք թարգմանում ենք ռուսերէնից.

§ 1. Աղջիկների որբանոցը նպատակ ունի խնամել, դաստիարակել և ուսուցանել հայ-լուսաւորչական դաւանութեան բոլորովին որբ (հօրով և մօրով), կէս-որբ (հօր կամ մօր կողմից) երեխաներին, նոյնպէս և ամենաաղքատ ծնողների երեխաներին։

§ 2. Որբանոցում խնամուող երեխաները կամ կը յաճախեն տարրական դպրոցները կամ թէ որբանոցի մէջ կը սովորեն գրագիտութիւն՝ տարրական դպրոցների ծրագրով։

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԽՈՒԴԱԴԵԱՆ ՀՐԲԱՆՈՑ. — Ոզրկը։

§ 3. Բացի դպրոցներում սովորելուց, երեխաները որբանոցի մէջ կը սովորեն կար, խոհարարութիւն և առհասարակ տնպահութիւն:

§ 4. Որբանոցը Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան անմիջական տնօրինութեան տակ է գտնվում:

§ 5. Որբանոցին աւելի մօտիկուց հսկելու համար Վարչութեան անդամները իրանց միջից ընտրում են երկուսին, մի տարի ժամանակով:

§ 6. Կընդունուեն 6-ից մինչև 12 տարեկան հասակի երեխաներ. նրանք կարող են մնալ որբանոցում մինչև այն հասակը, երբ կարող կը լինեն աշխատել անկախ:

§ 7. Այն անձինք, որոնք կամենում են տալ իրանց աղգականներին և երեխաներին Որբանոց, պիտի խնդիր տան Վարչութեան անունով, կցելով խնդրագրին վկայականներ՝ աղքատութեան մասին ստիկանութիւնից, ծննդեան և ծաղկի պատուաստման: Երեխաների ընդունելութիւնը կարող է լինել և առանց խնդրագրի, երբ ինքը Վարչութիւնն իմանում է թէ կան բոլորովին անխնամ մնացած որբեր:

§ 8. Սկզբում որբերի թիւը սահմանափակվում է 20-ով: Ընդունելութեան միջոցին անհայր և անմայր որբերը ունին անպայման նախապատուութիւն և միայն այդպիսի որբերին տեղաւորելուց յետոյ, աղատ տեղերը տրվում են կէս-որբերին և ամենաաղքատ ծնողների երեխաներին: Միանման դրութեան մէջ գտնուող երեխաների ընդունելութիւնը կատարվում է վիճակով:

§ 9 Կէս-որբերը և ամենաաղքատ ծնողների երեխաները ընդունվում են միայն այն ժամանակ, երբ նրանց ծնողները և աղգականները տալիս են գրաւոր պարտաւորութիւն հնազանդուելու Բարեգործական Ընկերութեան կարգադրութիւններին և պահանջներին: Ամեն տեսակ գանգատներ և պահանջներ, որոնք ծագում են որ և է թիւրիմացութիւնից, ծնողները և աղգականները պարտաւոր են յայտնել անմիջապէս Որբանոցի կառավարչուհուն, որ յանձնում է գանգատը Բարեգործական Ընկերութեան Վարչութեան:

§ 10. Անհայր և անմայր որբեր ընդունելիս պէտք է պահանջել ստորագրութիւն, որ եթէ որբը որ և է պատճառով հեռացուի որբանոցից, այն անձը, որ մտցրել է որբ երեխային որբանոց, պարտաւոր է նորից նրան ընդունել իր մօտ: Այս պատճառով թէ այդ անձինք և թէ կէս-որբի ու աղքատ երեխաների

ծնողները պարտաւոր են ամեն անգամ յայտնել իրանց ընակութեան տեղի փոփոխութեան մասին։

§ 11. Որբանոցի մօտիկ հսկողութիւնը և կառավարութիւնը յանձնվում է կառավարչուհուն, որ նշանակվում է Բարեգործական Ընկերութեան Վարչութեան կողմից։ Կառավարչուհին պարտաւոր է հսկել Որբանոցի ներքին կարգի վրայ։ Նա հսկում է և երեխաների վարքի վրայ, ղեկավարում է նրանց պարապմունքները դպրոցական զբաղմունքներից ազատ ժամանակ։ Հետևում է երեխաների մտաւոր և բարոյական զարգացման, տեղեկութիւններ է հաւաքում երեխաների առաջադիմութեան մասին դպրոցներում, հոգ է տանում որբանոցի մաքրութեան և կերակրի լաւութեան մասին։ Որբանոցի բոլոր ծառայողները անմիջապէս ստորադրուած են կառավարչուհուն։

§ 12. Կառավարչուհին նշանակում է այն օրերը և ժամերը, երբ երեխաներին կարող են այցելել նրանց ծնողները և ազգականները։ Նա իրաւունք ունի թոյլ տալ երեխաներին ոչ օրերին այցելել իրանց ազգականներին, բայց այն պայմանով, որ երեխաները տուն գնան և որբանոց վերադառնան ազգականների ուղեկցութեամբ։

§ 13. Բարեգործական Ընկերութեան իւրաքանչիւր անդամ ունի իրաւունք ամեն ժամանակ այցելելու որբանոցը և իր նկատած պակասութիւնների մասին յայտնելու Վարչութեան։

§ 14. Որբանոցի գործավարութիւնը առանձին է կատարվում և իւրաքանչիւր տարուայ վերջում Վարչութիւնը որբանոցի առանձին տեղեկագիր է կազմում։

Վարչութիւնը որոշել էր որբանոցը բաց անել Խուդադեանի տանը, Աբաս-Աբադեան հրապարակում, բայց այդ տունը ընկերութեան ձեռքը պիտի անցնէր 1904-ի մայիսին։ Ուստի հարկաւոր եղաւ վճարել Խուդադեանի այրուն վարձ մինչև մայիս 894 ր. 40 կոպէկ։ Այդ տան մէջ կատարուեցին վերաշինութիւններ և կարկատաններ, որոնք նստեցին 1987 ր. 28 կոպէկ։ Համաձայն հրահանգի, Վարչութիւնը որբանոցի կառավարիչներ նշանակեց իր անդամներից իշխանուհի Մ. Թումանեանին [1]) և Ա. Խատիսեանին։

[1]) Իշխանուհի Թումանեանը, որ շատ աշխատել է նաև թոյլաութիւն

1903-ի մայիս ամսին Վարչութիւնը յայտարարեց լրագրներում թէ ընդունում է որբեր։ Մինչև սեպտեմբեր Վարչութեան տրուած խնդրագրերի թիւը հասնում էր 95-ի։ Մի առանձին յանձնաժողով կազմուեց այդ խնդրագրերի քննութեան, վերաստուգութեան և որբերի ընտրութեան համար։ Ընտրուեցին 20 երեխայ, ինչպէս սահմանուած էր նախահաշուով և հրահանգով։ Դրանցից եօթը հոգի անհայր և անմայր երեխաներ էին 6—11 տարեկան, իսկ 13-ը՝ կէս-որբեր 6—9 տարեկան։

Սեպտեմբերի 20-ին, ընդունուած որբերի ներկայութեամբ, Մուղնու եկեղեցու բակում հոգեհանգիստ կատարուեց Խուդադեանի գերեզմանի վրայ և պաշտօնապէս բացուեց «Խուդադեան որբանոցը»։ Կառավարչուհի նշանակուեց օրիորդ Շուշանիկ Բեանդարեանը, որ այդ պաշտօնը ամենայն բարեխղճութեամբ վարում է մինչև այսօր։— Որբանոցի կահաւորման համար ծախսուեց 1031 ր. 99 կ.։ Ընդամենը առաջին տարին ծախս եղաւ 6524 ր. 88 կոպէկ։ Հետևեալ 1904 թ. ընդունուեցին դարձեալ 7 որբ. 1905-ին աւելանում են դարձեալ 3 որբ, 1906-ին՝ 1 որբ, 1908-ին կային 33 որբ։

Որբանոցը ծախսում է Խուդադեանի կտակած գումարի բոլոր տոկոսները։ 1904 թուին ծախսուել է նրա վրայ 4260 ր., 1905-ին՝ 5148 ր., 1906-ին՝ 5906 ր., 1907-ին (մինչև 1908-ի փետրվարը) 6780 ր.։

Սկզբի 3—4 տարիներում չափազանց դժուար էր մի այդպիսի նոր հիմնարկութեան կանոնաւորումը։ Սոսկալի աղքատութեան ճիրաններից խլած, կեղտերի մէջ կորած փոքրիկ որբերին պահել պահպանելը ոչ միայն լարուած

ստանալու գործում, այդ պաշտօնը Վարչութեան մի անդամի հետ (որ փոփոխվում էր) վարեց մինչև 1908 թ., այնուհետև որբանոցի կառավարութեան համար ընտրվում էր մի ամբողջ մասնաժողով, որին մասնակցում էր և իշխ. Թումանեանը։

ուշադրութիւն էր պահանջում, այլ և կատարեալ անձնազոհութիւն։ Սակայն իշխանուհի Թումանեանի անսպառ եռանդը և սրտագին, խստակ մայրական վերաբերմունքը դէպի որբուհիները տարիների ընթացքու վերացրին բոլոր դժուարութիւնները։ Տիկին Թումանեանը ամբողջ օրեր էր անցկացնում որբանոցում, իր ձեռքերով լուանում, մաքրում էր որբերին, օգնում էր օր. Բեանդարեանին, խրախուսում էր նրան անվհատ տանել իր ծանր պաշտօնը, որին դեռ սովոր չէր օրիորդը։ Որբերի շահերը իշխանուհի Թումանեանը պաշտպանում էր ամեն տեղ, իսկ որբանոցի բարեկեցութիւնը նրա հոգսերի գլխաւոր առարկան էր։ Նա մի դաշնամուր նուիրեց որբանոցին, որպէսզի երաժշտական ընդունակութիւն ունեցող երեխաները սովորեն և երաժշտութիւն։

Այժմ բերենք մի քանի տեղեկութիւններ այդ հիմնարկութեան ներքին կացութեան մասին։

1. Բնակարան։ 1908-ի Տեղակագրից իմանում ենք, որ Որբանոցը գտնվում է Խուդադեանի տան վերին յարկում, ունի 8 սենեակ։ Դրանցից չորսը ննջարան, մէկը կառավարչուհու սենեակ, երկուսը պարապմունքների համար, մէկը՝ հիւանդանոց։ Ունի և մի մեծ պատշգամբ, որ յարմարեցրած է ցերեկուայ պարապմունքների համար։ Մինչև 1908 թուականը որբանոցն ունէր սեփական խոհանոց։ Այդ թուականից Ընկերութեան ճաշարանը բացուեց Ընկերութեան շինութեան մէջ և որբերը ճաշում են այդտեղ։

2. Ներքին կեանքը։ Ընկերութեան Վարչութիւնը իր տարեկան տեղեկագրի մէջ միայն մի անգամ 1904-ին է մանրամասն տեղեկութիւններ հաղորդել Որբանոցի մասին։ Բերում ենք այդ տեղեկութիւնները անփոփոխ կրճատումներով։

«Դպրոցական հասակի որբերը՝ թւով 20 յաճախում են Ջիգրաշէնի ծխական դպրոցը, իսկ մնացածները առայժմ մնում են որբանոցում, որտեղ որբանոցի կառավարչուհու հսկողութեամբ պատրաստվում են։

«Որբանոցի բացման օրից սանուհիների համար սահմանուած են հետևեալ կարգերը։ Առաւօտեան նոքա վաղ վեր են կենում,

թէյ են խմում և գնում ուսումնարան։ Վերադառնալով որբանոց ժամը 12-ին, նրանք հանգստանում են մինչև ճաշ, որ տեղի է ունենում ժամը 2-ին։ Այնուհետև սանուհիները մի ժամի չափ կրկին հանգստանալուց և խաղալուց յետոյ, սկսում են սովորել հետևեալ օրուայ դասերը և ապա զբաղուել տնային գործերով. այսպէս օրինակ, մաքրում են իրենց շորերը, սրբում կօշիկները, օգնում խոհարարուհուն ամաններ լուանալու մէջ, հարթակում լուացքի մի մասը, սրբում սեղանատունը և պատշգամբը, կարում թաշկինակներ և երեսսրբիչներ։ Երեկոյեան ժամը 6½-ին սանուհիները թէյ են խմում և ապա պարապում. իսկ ժամը 8-ին պառկում են քնելու։ Առաջին տարուայ փորձը ցոյց տուեց, որ ժամանակի բաժանման վերաբերմամբ սահմանուած այս կարգը, բացի անյարմարութիւններ չյարուցանելուց, նաև բարերար ազդեցութիւն է գործում նրանց առողջութեան վրայ։

«Սանուհիները, որբանոց ընդունելիս, կարելի է ասել, առանց բացառութեան վատառողջ էին. չքաւոր կեանքը, մուրացիկ պատահական հացը, որով կերակրվում էին մի քանիսը որբանոց մտնելուց առաջ և ընդհանրապէս մանկական հասակին անհրաժեշտ խնամքի բացակայութիւնը, թողել էին նրանց վրայ իրանց վնասակար ազդեցութիւնը—շատերը նրանցից չափազանց նիհար էին, ֆիզիքապէս անզարգացած իրանց հասակի համեմատութեամբ, վատոյժ, գունատ, սակաւարիւն, յաճախ ենթարկուած հիւանդութիւնների, շատ անգամ ամենաչնչին պատճառներից։ Չնայելով այն առատ սնդին, որ սանուհիները ստանում են որբանոցում բացման առաջին օրերից, չնայելով կանոնաւոր կեանքին, մաքրութեան պահպանմանը և առհասարակ այն ամեն պայմաններին, որոնցով որբանոցի կեանքը անհամեմատելի չափով գերազանց էր սանուհիների նախկին կեանքից, այնուամենայնիւ առաջին կիսամեակի ընթացքում կարելի էր կարծել, որ որբանոցի կեանքը չը-պիտի կարողանար փոխարինել նրանց ֆիզիքական առողջութեան այն կորուստը, որ նրանք ունեցել էին ըստ երևոյթին անդառնալի կերպով, իրանց նախկին դրութեան ժամանակ։ Սակայն երկրորդ կիսամեակից սկսած, փոքր առ փոքր սկսեցին երևալ նախ սանուհիներից մի քանիսի և ապա նաև միւսների վրայ նշաններ, որոնք յոյս էին տալիս նրանց առողջութեան վիճակի կատարեալ բարւոքման, բացի Սիրանոյշ Յովհաննիսեանից, որ անցեալ սեպտեմբեր ամսին վախճանուեց։

«Կարելի էր սպասել, որ ժողովրդի ստորին խաւերից հա-

ւաքած որբուհիները կը բերեն իրանց հետ որբանոց այնպիսի բարոյական պակասութիւններ, որոնք յաճախ պատահում են այդ կեանքում և ըղխում են անհպատ հանգամանքներից, որոնց մէջ ապրում է չքաւորը։ Ընդհանուր առմամբ փոքրիկ որբիկները մտան որբանոց մանկական ոգու անարատութեամբ և այն մասնաւոր բարոյական պակասութիւնները — ստախօսութիւն, նախանձ, երեխայական գանգատասիրութիւն և այլն, որ ունէին որբերից մէկը կամ միւսը, յամառ դիմադրութիւն չցոյց ուրն ուղղելու ճանապարհի վրայ։

«Իբրև դաստիարակչական միջոցներ՝ սանուհիների բարոյական աշխարհի վրայ ազդելու և նրանց մէջ ցանկալի յատկութիւններ արծարծելու համար, բացի դպրոց յաճախելուց, որբանոցում նոցա հետ զբաղուել են զրուցաւութեամբ և ընթերցանութեամբ։ Բացի այդ պարապմունքներից հէնց առաջին տարուանից որբանոցում նախապատրաստում են ապագայ աշխատաւոր կեանքի համար և սանուհիներից ամեն մէկին տրվում է իրանց հասակի համապատասխան աշխատանք, որ նրանք կատարում են սիրով և առանց դժուարութեամբ։

«Դպրոց յաճախող սանուհիներից, նախկին տարուայ ընթացքում, դասատները փոխել են 8 հոգի, ուսումնարանական ժամանակից ուշ յաճախելու պատճառով, մնացել են դասարանում 7 հոգի։ Անցեալ 1904 թ. ուսումնարան սկսել են յաճախել 20 հոգի, իսկ մնացել են 6-ը։

«Որպէս զի սանուհիների և նոցա ազգականների մէջ եղած կապը չկտրուի խսպառ, Զրօրհնէքի և Զատիկական տօներին, այն սանուհիները որոնք ունեն բարեկամներ, արձակվում են մէկ կամ երկու օրով նոցա մօտ։ Իսկ առհասարակ անարգել կերպով թոյլ է տրվում այցելել իրանց որբերին որբանոցում։ Որբանոցի միանալման կեանքը զանազանակերպելու և սանուհիներին կրթիչ զուարճութիւն պատճառելու նպատակով, տարուայ ընթացքում տօներին կատարուել են մանկական հանդէսներ և տօնածառ, որ մեծ զուարճութիւն է պատճառել նրանց։

«Անցեալ տարուայ յունիս ամսի 15-ին սանուհիները ուղարկուեցին Թիֆլիսի մօտակայ Գլդան գիւղը։ Փորձը ցոյց տուեց, որ ամարանոց գնալը նոյն իսկ մի այնպիսի գիւղ, ինչպիսին Գլդանն է, ուր չկան այնքան յարմարութիւններ, այնուամենայնիւ բարերար ազդեցութիւն ունեցաւ սանուհիների վրայ, տալով նրանց հնարաւորութիւն համարեա ինքնամեայ փակ կեանքից յետոյ,

աղատ ընութեան երես տեսնելու և թարմ ու առողջարար օդ շնչելու և թէ ընդլայնացնելու սանուհիների մտաւոր աշխարհը, գիւղը և նրա շրջապատը դաշտերն ու ձորերը, անտառները։ Գիւղական տնտեսութիւնը իւր բազմատեսակ առօրեայ զբաղմունքներով, իւր քաղաքային կեանքից այնքան տարբեր հոգսերով և գործերով անսպառ նիւթ է մատակարարում երեխաների մտաւոր աշխարհին։ Ոչինչ այնքան կրթիչ նշանակութիւն չի կարող ունենալ նրանց համար, քան գիւղացի կնոջ անխոնջ, տնտրտունջ և ուրախ աշխատանքը, առաւօտից մինչև երեկոյ։ Բացի որբանոցի սանուհիներից ամարանոց էին տարել նաև Երեխաների Խնամատարութեան ընկերութեան որբանոցից 4 հայ երեխաներ, որ խնդրել էր այդ ընկերութեան վարչութիւնը բարեգործական ընկերութեան՝ խնամել նոցա միայն ամառուայ ամիսների ընթացքում, այնպէս որ ամառը որբերի թիւը 4-ով աւելացել էր»։

Ամառը որբերին ամարանոց տանելը սովորութիւն դարձաւ և այնուհետև։

1906-ին աւելի նպատակայարմար համարուեց բաց անել որբանոցում դպրոց։ Այդ դպրոցը բացուեց, բայց մի տարուց աւելի գոյութիւն չունեցաւ։ Որբանոցի գոյութեան ընթացքում մինչև 1909 թուականը, վախճանուել են չորս որբեր — երեքը 1907 թուին և մէկը 1908-ին։ Երկուսը վախճանուեցին ժառանգական թոքախտից իսկ երկուսը՝ սկարլատինա հիւանդութիւնից։

V

ՋԱՇԱՐԱՆ

Ընդհանուր ժողովը 1904 թ. ապրիլի 25-ի նիստում որոշեց բաց անել ձրի և էժանագին ճաշարան՝ գլխաւորապէս աղքատ աշակերտների համար։ Ահա ինչ տեղեկութիւններ է հաղորդում Վարչութիւնը այդ հիմնարկութեան մասին 1904-ի, իր տեղեկագրի մէջ [1])։

---

[1]) Եր. 32—34.

«Ճաշարանը բացուեց 1904 թ. նոյեմբերի 12-ին 40 հոգու համար Աբաս-Աբադակիյ հրապարակի վրայ ընկերութեան տան ներքին յարկի մէջ։

«Այդ գործի թէ կազմակերպութեան և թէ ղեկավարութեան համար Վարչութիւնը իր միջից մի մասնաժողով ընտրեց երկու անդամից բաղկացած։ Մասնաժողովի անդամներ ընտրուեցին պ. պ. Ա. Մելիք-Այվազեանցը և Գ. Մելիք-Կարագեոզեանը։

«Մասնաժողովը ամեն կերպ աշխատում էր ճաշարանի վերաբերմամբ ընդհանուր ժողովի որոշումը իրագործել հէնց նոյն 1904 թուին, և որովհետև ճաշարանից օգտուելու ցանկացողների խնդիրները ստուգելը շատ ժամանակ կարող էր խլել, մասնաժողովը առաջարկեց Վարչութեանը դիմել զանազան դպրոցական և այլ հիմնարկութիւններին, խնդրելով, որ նրանք մասնանիշ անեն իրենց աշակերտներից ամենաչքաւորների վրայ։ Այս միջոցը ընդունուեց, Վարչութեան կողմից բերանացի դիմումներ արուեցին և ճաշարանի բանալուց յետոյ կէս շաբաթ անցած, ճաշողների ամբողջ ցուցակը արդէն լրիւ էր։

«Ճաշարանը բաղկացած է երկու սենեակից իսկական ճաշարանից և խոհանոցից։

«Խոհանոցին կից գտնվում է մթերանոցը, կայ և նկուղ վառելափայտի և ածուխի համար։ Ճաշարանի մէջ դրուած են չորս մեծ սեղաններ, որոնք ծածկուած են սպիտակ կլէօնկայով։ Ճաշարանի գործը անմիջապէս վարում են կառավարչուհին և խոհարարը։ Կառավարչուհու պարտականութիւնն է՝ ստուգել բաղարից բերած մթերքները, պաշարեղէն տալ խոհարարին մթերանոցում գտնուող մթերքների պահեստից, ղեկավարուելով Վարչութեան կողմից հաստատուած չափերով. հետևել որ ճաշը միշտ ժամանակին պատրաստ լինի, և որ ճաշարանից օգտուեն նոքա, որոնք այդ թոյլտուութիւնը արդէն ստացել են Վարչութիւնից, որ ճաշը համեղ լինի, առողջարար և բաժանուի հաւասար. լսել այցելողների գանգատները և ըստ հնարաւորութեան, բաւարարութիւն տալ նրանց և առհասարակ անհրաժեշտ և անյապաղ կարգադրութիւններ անել թէ խոհանոցի և թէ ճաշարանի վերաբերմամբ։ Մասնաժողովը յատկապէս յանձնարարել է կառավարչուհուն խստիւ հետևել գործի առողջապահականութեան վրայ, մաքուր պահելով թէ սեղանատունը և թէ ամանները։

«Ճաշողները բոլորն էլ աշակերտներ և աշակերտուհիներ են, գլխաւորապէս Ներսիսեան դպրանոցից, կիրակնօրեայ ուսումնա-

բանից, կանանց Բարեգործ. Ընկ. ուսումնարանից։ Ճաշողներից տղաներ եղել են 22, իսկ օրիորդներ՝ 18 հոգի, հասակով, 8-ից մինչև 20 տարեկան։

Ճաշարանի սկզբնական ծախսերի (կահաւորում, վերանորոգում ընակարանի) և երկու ամսուայ գործունէութեան համար Վարչութիւնը տուեց իր միջոցներից 509 բուբլի։ Այնուհետև այս հիմնարկութիւնն սկսեց աստիճանաբար մեծանալ։ Հետևեալ տարին ճաշ պատրաստվում էր 60 հոգու համար, ծախս եղաւ 1527 բուբլի։ 1906 թուին Վարչութիւնը 90 հոգու համար տուեց 2234 բուբլի։ Բացի դրանից Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը տուեց 757 բուբ. 58 կոպ. յատկապէս այդ դպրոցի աշակերտներին ճաշ տալու համար։ Ստացուեցին և մի քանի մասնաւոր մանր նուէրներ։ 1907 թուականին Վարչութիւնն 120 հոգու համար ծախսեց իր միջոցներից 4206 բուբ. 57 կոպէկ։ Բացի դրանից, Ներսիսեան դպրոցը վճարեց 1127 բուբ. 27 կոպ., մի անյայտ անձ 20 աշակերտներին ճաշ տալու համար նուիրեց 537 բուբլի։ Լժանագին ճաշերից ստացուեց 173 բուբ. 10 կոպէկ։

Այդ տարին բաց թողած ճաշերի թիւն էր 38386։ Ծախսուեց ընդամենը 6009 բուբլի 86 կոպէկ։

Ընկերութեան միջոցները հասարակութեան նուէրներով աւելացնելու համար՝ Վարչութիւնը 1908-ի յունվարի 8-ի նիստում որոշում է ժողովրդականացնել Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ այն միտքը, որ աւելի նպատակայարմար է ննջեցեալների քելեխի փոխարէն նուէրներ տալ Բարեգործական Ընկերութեան։ Այդ միտքը տարածելու համար Վարչութիւնը հետևեալ միջոցներն է որոշում։

«1) Լրագրների միջոցով դիմումներ անել ժողովրդին Բարեգործական Ընկեր. կողմից, 2) նոյն տեսակ դիմումներ անել նաև տպագրած թերթերով ամեն անգամ ննջեցեալների տէրերին, 3) դիմել թեմական առաջնորդներին, խնդրելով. ա) եկեղեցու բեմից

յորդորներ անել ժողովրդին այդ ուղղութեամբ և նոյնը տպագրած կախել տալ եկեղեցիների պատերին, բ) պատուիրել քահանաներին՝ հանգամանքից օգտուելով այն դիմումները անել թէ եկեղեցիների բեմից և թէ իւրեանց ծխի մէջ իւրաքանչիւր դէպքում, 4) ննջեցեալների տէրերից Ընկերութեան օգտին ստացած նուէրների համար ունենալ Ընկեր. գրասենեակում առանձին ժապաւենեալ մատեան, 5) նոյնը յայտարարել լրագրութեան միջոցով, 6) Ընկերութեանս աշակերտական ձրի ճաշարանում կախել փոքր գրատախտակ, որի վրայ իւրաքանչիւր անգամ գրել թէ որ հանգուցեալի յիշատակին է այդ օրուայ ճաշը» [1]։

Բելեխի սովորութիւնը, ի հարկէ, չը վերացաւ, բայց Վարչութիւնը նուէրներ ստանում էր ննջեցեալների տէրերից՝ յատկապէս ճաշարանի համար։

VI

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Յայտնի էր որ 1905 թ. փետրվարի 6-ին Բագու քաղաքում թուրքերը յարձակուեցին հայերի վրայ և սկսուեց կոտորած ու թալան, որ տևեց երեք օր։ Դա նախերգանքն էր այն ահռելի արիւնահեղութեան այդ երկու ազգերի մէջ, որ պատերազմի դաշտ դարձրեց Անդրկովկասի շատ տեղերը և որ ընդհատումներով շարունակուեց մի տարի և ութ ամիս։

Բագուի առաջին կոտորածի ազդած ընդհանուր սարսափը փոքր ինչ մեղմացաւ, երբ դրանից յետոյ անմիջապէս երկու հարևան ազգերը սկսեցին փոխադարձ համերաշխութեան և բարի դրացիութեան ցոյցեր անել։ Բայց դրանք խաբուսիկ նշաններ էին։ Նոյն փետրվարի 20—22-ին հայ-թրքական ընդհարումները տեղի ունեցան Երևա-

[1]) Սրձ. № 2.

նում։ Այստեղ էլ սակայն համերաշխութեան և հաշտութեան ցոյցեր հանդէս եկան արիւնահեղութիւնից անմիջապէս յետոյ և յոյս ծնուեց թէ անմիտ, զարհուրելի եղբայրասպան պատերազմը ուրիշ տեղեր չի անցնի։

Բայց յանկարծ, անսպասելի կերպով, կոտորածի և դաղանութիւնների դաշտ դարձաւ Հին-Նախիջևանը իր գաւառով։ Այդտեղ փոքրաթիւ հայ ժողովուրդը ենթարկուեց այնպիսի խժդժութիւնների, որոնք Թիւրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածների ճիշտ նմանութիւնն էին բերում։ Կոտորածը Հին-Նախիջևանում սկսուեց մայիսի 12-ին։ Հայ վաճառականները կոտորուեցին իրանց խանութներում, որոնք կողոպտուեցին և յետոյ հրդեհուեցին։ Աւելի զարհուրելի էին միաժամանակ սկսուած կոտորածները Նախիջևանի գաւառում. — կանանց և աղջիկների բռնաբարում, եկեղեցիների և նրանց անօթների պղծում, բռնի մահմեդականացում, մի խօսքով՝ թուրք խուժանի հին, ծանօթ խժդժութիւնների կատարեալ պատկեր։ Նա սարսափ և զայրոյթ պատճառեց ամեն տեղ։ Եւ այս սարսափները դժբախտ գաւառում տևեցին մինչև մայիսի 15 — 16-ը։

Մայիսի 15-ին Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ընդհանուր ժողով ունէր քաղաքային Դումայի դահլիճում։

Բաց անելով ժողովի նիստը, Վարչութեան նախագահ Յ. Սպենդիարեանը առաջարկեց յարգել Հին-Նախիջևանում զոհուածների յիշատակը։ Ժողովը ոտքի կանգնելով ի նշան յարգանքի Հին-Նախիջևանի դէպքերի առիթով ընդունեց հետևեալ բանաձևը. «Ընդհանուր ժողովը, յարգելով յոտնկայս Հին-Նախիջևանի և նրա շրջակայքում ընկած անմեղ զոհերի յիշատակը, միաձայն որոշեց իր խորին ցաւակցութիւնը և կսկիծը յայտնել այդ աղէտալի դէպքերի առիթով և իր անհուն զզուանքը դէպի մարդասպանների անարգ խուժանը և նրանց կազմակերպողները»։

Սակայն Ընկերութիւնը լոկ այդպիսի պլատոնական վերաբերմունքով չը բաւականացաւ։ Կոտորածները թշուառութեան մի ամբողջ ծով էր բաց անում դժբախտ ազգաբնակութեան առջև։ Հարկաւոր էր օգնութիւն ամենալայն չափերով։ Թէև Թիֆլիսում գոյութիւն ստացաւ մի յատուկ նպաստամատոյց մարմին, բայց Բարեգործական Ընկերութիւնն էլ, չը նայած իր Կանոնադրութեան սահմանափակող տրամադրութիւններին, անմասն չը մնաց ընդհանուր աղէտի դէմ մաքառելու գործի մէջ։—

Յուլիսի 17-ին Վարչութիւնը որոշում է խնդրել թոյլտուութիւն՝ դրամով և իրերով նուիրատուութիւններ հաւաքելու յօգուտ հայ-թրքական ընդհարումներից վնասուածների Թիֆլիսում և նրա գաւառում և այս մասին յայտարարութիւն տալ լրագրների մէջ։ Միաժամանակ Վարչութիւնը նշանակում է իր անդամներից և Ընկերութեան անդամներից հերթապահութիւն իր գրասենեակում՝ նուիրած իրերն ստանալու համար։

Վարչութեան օգնութեան է հասնում ինքը, կառավարութիւնը։ Փոխարքայի դիւանատունը կարգադրութիւն է անում որ պետական գանձարանը տայ Բարեգործական Ընկերութեան 8200 բուբլու արժէթղթեր, որոնք պահվում էին այնտեղ թիւրքահայ գաղթականների անունով։ Ինչպէս տեսանք, կառավարչապետ իշ. Գոլիցինի ժամանակ թիւրքահայ գաղթականներին խնամելու գործը յանձնուած էր իշխանութեան, որ և ստանում էր բոլոր նուիրատուութիւնները։ Այդպիսով հաւաքուած գումարների մեծագոյն մասը յանձնուած էր գանձարանին և մնում էր այնտեղ առանց գործադրութեան։ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի առաջին գործերից մէկն եղաւ վերջացնել այդ հաշիւը։ Եւ նրա կարգադրութեամբ՝ մնացորդ գումարը 8200 բուբլի, յանձնվում էր Բարեգործական

Ընկերութեան՝ բաժանելու համար Թիւրքիայից փախած հայերին և այժմ անկարգութիւններից վնասուածներին» [1]։

Բացի դրանից, Վարչութիւնը նոյն 1905-ին ստացաւ նուէրներ յօգուտ կոտորածներից վնասուածների 2316 բուբլի։ Հետևեալ տարին 1800 ր. և 1907 թ. 5252 բուբլի։—Դրամական նպաստներ աղէտեալներին տրվում էին Թիֆլիսում, ուր Կովկասի զանազան կողմերից հաւաքուած էին կոտորածներից փախածները։ Բացի դրանից, ինչպէս յայտնի է, Թիֆլիսում էլ 1905-ի վերջերում տեղի ունեցաւ հայ-թրքական ընդհարումներ։ 1905-ին Վարչութիւնը ծախսեց 2184 ր. 94 կոպէկ և գաղթականների գումարից 1622 ր 85 կոպէկ, իսկ 1906-ին 1397 ր. աղէտեալների գումարից և 3523 ր. 43 կոպէկ գաղթականների գումարից։—

Բացի դրանից, Վարչութիւնը ստացաւ թէ Թիֆլիսից և թէ Անդրկովկասի այլ քաղաքներից գործ ածած զգեստներ մեծ քանակութեամբ։ Դրանց մի մասը նա ուղարկեց Հին-Նախիջևան Թոմա Վարդապետին՝ կոտորածներից վնասուածներին բաժանելու համար, մի մասն էլ Գանձակ տեղային յանձնաժողովին։

Վարչութիւնը այդ օգնութեան գործը կազմակերպելու միջոցին (1905 թ. ամարուանից մինչև 1907 թ. ամառը) գործում էր աչքի ընկնող եռանդով։ 1906-ին նախագահ Տիգրան Յովհաննիսեանի առաջարկութեամբ, Վարչութիւնը որոշեց բացի իր սովորական նիստերից՝ շաբաթը երկու արտակարգ նիստ էլ ունենալ՝ օգնութեան գործը աջողութեամբ տանելու համար։

Ստանալով Բաթումի թիւրքահայ գաղթականներից խնդիրք իրանց օգնութեան կարօտ վիճակի մասին, Վարչութիւնը իր անդամներից մէկին և գործավարին ուղարկեց Բաթում, ուր նրանք հայոց եկեղեցու երեցփոխի ու

[1]) Արձ. № 25.

քահանայի հետ միասին սուրդեցին կարօտութեան չափը և բաժանեցին 1500 բուբլի։—

VII

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Վարչութիւնը Խուդադեանի կտակած անշարժ կալուածների պահպանութեան և վերանորոգութեան հարցերով շատ է զբաղուել։ Գլխաւոր հոգսը պատճառում էր քարվանսարան, որ, ինչպէս տեսանք, քայքայուած դրութեան մէջ էր գտնվում։ Զանազան ժամանակ մասնագէտների ձեռքով կազմուեցին նախագծեր այդ շինութիւնը վերանորոգելու համար։ Բայց այդ նախագծերը չիրագործուեցին, որովհետև մեծ ծախքեր էին պահանջում։ 1907-ին Վարչութեան նախագահը զեկուցեց որ կարելի է համեմատաբար փոքր գումարով շինել քարվանսարան։ Ծախս հաշուած էր 9 հազար բուբլի։ Ընդհանուր ժողովի հաւանութեամբ՝ Վարչութիւնն սկսեց իրագործել այդ նախագիծը։ Առանձին շինարարական յանձնաժողով կազմուեց մասնագէտներից և Վարչութեան անդամներից։ Շինութիւնն աւարտուեց 1907-ի ամառը։ Ծախս եղաւ (Խուդադեանի գումարներից) 15385 ր. 71 կոպէկ։

Նոյն տարին Ընկերութիւնը նոր անշարժ կալուածք էլ գնեց։ Վարչութեան նախագահ Ս. Յարութիւնեան, ի նկատի ունենալով, որ աճուրդով ծախվում է Խուդադեանի տան կպած Արէշեանի տունը, առաջարկեց որ Ընկերութիւնը գնէ այդ տունը, «ի նկատի առնելով որ այդ տունը Խուդադեանի տան կից է և ապագային Ընկերութեանը

հարկաւոր է ուսումնարանի և իր հիմնարկութիւնների համար» [1]։

Տունը գնուեց 11500 ռուբլով։

VIII
ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Ընկերութիւնը իր այս երկրորդ շրջանում ունեցաւ մի հատ բարերար։ 1907 թուականի մայիսի 15-ին Օդեսայում վախճանուեց Բագուի առաջին կարգի վաճառական Եղիա Գալբստեան Բուդաղեանը, թողնելով մի կտակ, որով զանազան գումարներ էր յատկացրել ազգային հիմնարկութիւններին։ Այդ կտակով Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան նշանակուած էր տալ 10,000 ռուբլի։



Ե. Դ. ԲՈՒԴԱՂԵԱՆ

Գումարը հանգուցեալի այրի Սոփիա Բուդաղեանը ուղարկեց Վարչութեան նոյն թուի դեկտեմբերին։ Նուէրի գործադրութեան եղանակը հանգուցեալը թողել էր Բարեգործական Ընկերութեան։

[1]) Արձ. № 2.

I

ՀԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Կովկասում կառավարչապետ իշխան Գոլիցինի հաստատած վարչական ռէժիմը վերջացաւ 1905 թուականի սկզբում։ Այդ խոշոր պատմական եղելութիւնը մի տառնձին և պատահական երևոյթ չէր, այլ կապուած էր Ռուսաստանի մէջ տեղի ունեցող մեծ շարժման հետ, որ վերջ ի վերջոյ բերեց հասցրեց Ռուսաստանը սահմանադրական կարգին։ 1905 թուականը մի սահմանագիծ է հին և նոր Ռուսաստանի մէջ։ Հին կարգը, որ լցուած էր անվստահութեամբ դէպի ժողովրդական ինքնագործունէութիւնը, կատարեալ պարտութիւն էր կրել։ Ստեղծվում էր նոր կարգ, արևմտեան Եւրոպայի օրինակով, մի կարգ, որ գործունէութեան ընդարձակ դաշտ էր բաց անում հասարակութեան առաջ, ազատելով նրան արգելքների կապանքներից։

Այդ նշանաւոր ըէֆորմներից զուրկ չը մնաց և Կովկասը, ուր վարչական խատութիւնները հասել էին ծայրայեղութեան։ Ջնջուեց կառավարչապետի պաշտօնը և նորից վերականգնուեց փոխարքայութիւնը, որ այնքան լաւ յիշողութիւններ էր թողել երկրի ազգաբնակութեան մէջ։

Նոր նշանակուած փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, Կովկաս ժամանելուց առաջ, հրատարակեց „Кавказъ“ լրագրում մի պաշտօնական դիմում, որի մէջ պարզում էր այն քաղաքականութիւնը, որին ինքը պիտի հետևէր։ Այդ ծրագիրը իր բարեացակամ տրամադրութիւններով մեծ տպաւորութիւն թողեց ամբողջ ազգաբնակութեան վրայ, և ամենքը զգացին, որ Կովկասում սկսվում է նոր դարաշրջան, երբ խաղաղ կուլտուրական զարգացման

հնարաւոր հովանաւորութիւն կը տրուի և Կովկասի բազմաթիւ ազգութիւնները երկրի բարձր իշխանութեան մէջ կը գտնեն իրանց օրինաւոր, մտաւոր և կուլտուրական շահերի պաշտպան։

Այդ վստահութիւնը ամենից առաջ արձագանք գտաւ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան մէջ։ Դեռ նոր էր Փոխարքան մեծ հանդիսով մուտք գործել Թիֆլիս, և ահա Վարչութիւնը մայիսի 8-ին հրաւիրուած Ընդհանուր Ժողովի պարապմունքների մէջ դնում է և Կանոնադրութեան փոփոխութիւնը։ Բայց որովհետև այդպիսի փոփոխութեան համար պահանջվում էր Ընկերութեան անդամների կէսի ներկայութիւնը, ուստի այդ օրը հարցը չը քննուեց։ Մայիսի 15-ին նոյն Ժողովի շարունակութիւնն էր։ Բայց, ինչպէս տեսանք, հէնց այդ օրը ամենքը գտնվում էին Հին-Նախիջևանի զարհուրելի կոտորածների և գազանութիւնների ազդեցութեան տակ։ Հարցը ոչ միայն չը քննուեց այդ Ժողովում, այլ և հանուեց օրակարգից, որովհետև հայ ժողովուրդը յանկարծ դրուած էր այնպիսի մի դրութեան մէջ, որ չէր ապահովում նրա կեանքը, գոյքը, պատիւը։—

Սակայն անցնում են արիւնոտ իրականութեան ազդած առաջին տարսափները։ Հայ ժողովուրդը նոյն իսկ այդ արհաւիրքների մէջ էլ չէ մոռանում իր մտաւոր կուլտուրական պահանջները։ Այսպէս է եղել նա իր ամբողջ պատմութեան ընթացքում—ամենասոսկալի դժբախտութիւնների տարիներում իսկ մոռացութեան չը տալ իր ազգային գոյութեան յենարանները։ 1906 թուի փետրվարի 19-ին, երբ հայ-թրքական ընդհարումների մղձաւանջը դեռ չէր վերացել, Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր Ժողովի առջև դրուած էր նոյն հարցը—Կանոնադրութեան փոփոխութիւնը։

Ահա ինչ ենք կարդում այդ Ժողովի արձանագրութեան մէջ.

«Ընկերութեան հիմնադիր և պատուաւոր անդամ բժշկ. Բագրատ Նաւասարդեան (ժողովի նախագահ) զեկուցանում է հետևեալը. 1881 թուին փոխարքայութեան ժամանակ, հաստատուեց Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը։ Այդ Կանոնադրութիւնը յետ առնուեց Իշխան Գոլիցինի կառավարչապետութեան ժամանակ և նրա փոխարէն տրուեց Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը։ Նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, իբրև հասարակական հաստատութիւն, գործել է միշտ խիստ օրինական ճանապարհով, իր պարտաւորութիւնների սահմանում և Կովկասի հասարակութեան համար օգտակար մի հաստատութիւն է եղել։ Խնդրենք Նորին Գայծառափայլութեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովից վերահաստատել նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը և շնորհել մեզ մեր նախկին Ընկերութիւնը։

«Ժողովը միաձայն որոշում է—խնդրել Նորին-Գայծառափայլութիւն Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովից վերահաստատել նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը և վերականգնել նախկին Ընկերութիւնը։

«Վարչութեան նախագահ Տ. Յովհաննիսեան յայտնեց, որ 1905 թուի օգոստոսից սկսած թէ Թիֆլիսից և թէ գաւառական քաղաքներից Վարչութեան դիմել են խմբական սորագրութիւններով, օրինակ՝ Բաթումից, Ախալքալաքից, Ախալցխայից, Երևանից և այլն, ուր գոյութիւն ունէին նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան գաւառական ճիւղեր ու գրասրաններ և խնդրում են դիմումներ անել ուր հարկն է նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը վերականգնելու համար։ Ուստի Վարչութիւնը Ընդհանուր Ժողովին առաջարկում է ընտրել պատգամաւորական մարմին՝ ներկայանալու Նորին Գայծառափայլութիւն Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին և մի պետիցիայով արտայայտելու Կովկասեան հայ հասարակութեան ցանկութիւնն ու խնդիրքը վերահաստատելու նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը և վերականգնելու նախկին Ընկերութիւնը, որը արդէն բոլորում է իր քսան և հինգերորդ տարեշրջանը։

«Ժողովը ընդունեց Վարչութեան առաջարկութիւնը, որոշեց ընտրել պատգամաւորական մարմին, դնելով նրա վրայ պարտաւորութիւն՝ կազմել պետիցիա ժողովի տրամադրութեան համա-

պատասխանող իմաստով և, ներկայանալով Փոխարքային, խնդրել վերահաստատել նախկին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը։

«Այնուհետև ժողովը զբաղուեց պատգամաւորական մարմնի ընտրութեամբ, որ տուեց հետևեալ հետևանքը։—Ընկերութեան երեք պատուաւոր անդամներ՝ բժշկ. Բ. Նաւասարդեան, Ա. Մելիք-Ազարեան և Ա. Անանեան, Վարչութեան նախագահ Տ. Յովհաննիսեան, փոխ-նախագահ իշխ. Մ. Թումանեան և պ. պ. Գ. Սունդուկեան, Ա. Խատիսեան, Ա. Քալանթար, Յ. Ամիրխանեան և Յ. Սպենդիարեան»։—

Սակայն այդ պատգամաւորութիւնը չը ներկայացաւ Փոխարքային զանազան հանգամանքների շնորհիւ, ինչպէս բացատրեց բժշկ. Նաւասարդեանը նոյն տարուայ հոկտեմբերի 8-ի Ընդհանուր Ժողովում։ Ընդհանուր Ժողովը, ընտրելով նոր Վարչութիւն, նրան յանձնեց այդ գործը։ Իսկ նորընտիր Վարչութիւնը նոյեմբերի 4-ի նիստում յանձնարարեց իր նախագահ Սամսոն Յարութիւնեանին և անդամներ Միքայէլ Աթաբէգեանին և Յովհաննէս Սպենդիարեանին ներկայացնել 1881-ի Կանոնադրութիւնը կոմս Վորոնցով-Դաշկովին։—

Վարչութեան անունից կազմուեց հետևեալ խնդրագիրը.

«Ութսունական թուականների սկզբին, հայ հասարակութիւնը, զգալով ստիպողական անհրաժեշտութիւնը այնպիսի բարեգործական հիմնարկութիւնների, որոնք կարողանային բաւարարութիւն տալ հայ ազգաբնակութեան աղքատ մասի նիւթական և հոգևոր պահանջներին, այս առիթով միջնորդութիւն յարուցեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայի առաջ։

«Այդ միջնորդութիւնը արժանացաւ երկրի բարձր իշխանութեան ուշադրութեան։ 1881 թ. յուլիսի 6-ին Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայի պաշտօնակատար գեներալ-ադիւտանտ Մելիքովը հաստատեց Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութիւնը։ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը այդ Կանոնադրութեան հիման վրայ գործեց մինչև 1889 թուականը, երբ այդ Կանոնադրութիւնը, ի մեծ վիշտ հայ

ազգաբնակութեան, փոխարինուեց մի նոր Կանոնադրութեամբ։ Հին Կանոնադրութեամբ Ընկերութիւնը կրում էր «Հայոց Բարեգործական Ընկերութիւն Կովկասում» անունը և նոր Կանոնադրութեան մտցնելու միջոցին ունէր 19 բաժանմունք Կովկասի զանազան տեղերում։ Իսկ Ընկերութեան գործունէութիւնն արտայայտվում էր՝ տարրական, միջնակարգ և բարձր դպրոցներում սովորողներին թոշակներ տալու, էժանագին ճաշարաններ, գրադարաններ, ընթերցարաններ պահելու, չունևորներին նիւթական օգնութիւն հայթհայթելու, խօլերայի ժամանակ Կովկասի ազգաբնակութեան բժշկական օգնութիւն հասցնելու համար, բժշկական առողջապահական խմբեր կազմակերպելու մէջ և այլն։

«Ընկերութեան այս ամբողջ կրթական-մարդասիրական գործունէութիւնն անցնում էր Կովկասի բարձր իշխանութեան վերահսկողութեան տակ և այդ իշխանութեան ամեն տարի ներկայացվում էին օրէնքով և շրջաբերականներով պահանջուող հաշիւները և իր տասն և ութ ամեայ գոյութեան ընթացքում Ընկերութիւնը բոլորովին չէ նկատուած որ և է դատապարտելի բանի մէջ։

«Բայց, չը նայած սրան, 1899 թուականին, գլխաւոր իշխանութեան առաջադրութեամբ, ներքին գործերի պ. մինիստրը հաստատեց մի նոր Կանոնադրութիւն, որի զօրութեամբ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը զրկուեց ճիւղեր ունենալու իրաւունքից, ուստի և բոլոր 19 ճիւղերը փակուեցին։ Իսկ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան գործունէութիւնը դրուած է ամենանեղ շրջանակների մէջ. նա իրաւունք ունի միայն նիւթական օգնութիւն հասցնելու, այն էլ շատ սահմանափակ շրջանի մարդկանց, որ է՝ այն չքաւորներին, որոնք բնակվում են Թիֆլիս քաղաքում և պատկանում են հայ-լուսաւորչական դաւանութեան։ Եւ յետոյ նոր Կանոնադրութեամբ արգելուած է Ընկերութեան, ի միջի այլոց, ա) հայերէն լեզուի գործածութիւնը Ընկերութեան գործավարութեան և Ընդհանուր ժողովների մէջ, բ) դպրոցներ, գրադարաններ, ընթերցարաններ և առհասարակ կրթական դաստիարակչական հիմնարկութիւններ պահելը, գ) թոշակներ և նպաստներ տալը դպրոցներում սովորողներին։ Այս բոլոր սահմանափակումների հետևանքն էր Ընկերութեան բազմաթիւ կրթական հիմնարկութիւնների փակումը և Ընկերութեան թոշակառուներին կրթութիւնը շարունակելուց զրկելը։

«Ընկերութեան հասցրած հարուածը դառնութեամբ լցրեց

բոլոր հայերի սրտերը, որոնք բոլորովին անմեղ Ընկերութեան փակման մէջ տեսնում էին ոչ մի կերպ չարդարանալի անարդարութեամբ մի գործողութիւն։—

«Որ այդ վիրաւորանքը խոր զգում են Կովկասի բոլոր հայերը մինչև այժմ, երևում է Կովկասի բոլոր քաղաքների զանազան խմբերի և անձերի կողմից Ընկերութեան Վարչութեան ուղղած բազմաթիւ դիմումներից, որոնց մէջ պահանջվում է միջնորդել Ձեր Պայծառափայլութեան առաջ, որ վերականգնուի Ընկերութեան հին Կանոնադրութիւնը։—

«Ի նկատի առնելով այս յայտարարութիւնները և կեանքի առաջացրած ստիպողական պահանջները, Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան անդամների Ընդհանուր Ժողովը այս տարուայ փետրվար և հոկտեմբեր ամիսներում կայացած իր նիստերի մէջ լիազօրեց Ընկերութեան Վարչութեանը՝ Ձեր Պայծառափայլութեան լուսամիտ ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վրայ, որ Ընկերութիւնը առանց պատճառի զրկուած է հայ խաւար, աղքատ ազգաբնակութեան մէջ կրթական և ճշմարիտ մարդասիրական նպատակներ իրագործելուց և խնդրել Ձեզ վերականգնել 1881 թ. Կանոնադրութիւնը։—

«Վարչութիւնը, խորապէս հաւատալով որ Ձեր անկեղծ ցանկութիւնն է օգուտ բերել Ձեզ հաւատացած երկրի ազգաբնակութեան, մանաւանդ նրա ամենաաղքատ մասին, և կատարելով Ընկերութեան Ընդհանուր Ժողովի յիշեալ որոշումները, պատիւ ունի ամենայն յարգանքով խնդրելու Ձեր Պայծառափայլութեանը որ չը մերժէք բաւարարութիւն տալու Ընդհանուր Ժողովի աւելի ճիշտ՝ Կովկասեան ամբողջ հայ ազգաբնակութեան արդարացի միջնորդութեան՝ 1881 թ. Կանոնադրութեան վերականգման մասին։

«Այս խնդրագրին կցուած են 1881 և 1889 թուականների Կանոնադրութիւնները»։

Նոյն նոյեմբերին Վարչութեան երեք լիազօրները ներկայացան փոխարքային։

Կոմս Վորոնցով—Դաշկովը համակրութեամբ վերաբերուեց այս դիմումին և պատգամաւորների հետ ունեցած խօսակցութեան միջոցին ասաց. «Ես պատրաստ եմ օգնելու այս բարի գործին»։

Սակայն փոխարքան իր իշխանութեամբ չը կարգա-

դրեց այդ հարցը։ Վարչութեան նիստում, 1907 թ. ապրիլի 14-ին, նախագահ Ս. Յարութիւնեանը զեկուցեց թէ ինքը տեղեկացել է որ Վարչութեան դիմումը փոխարքայի կողմից ուղարկուած է Պետերբուրգ, որովհետև գործող կանոնադրութեան վերացումը և հնի վերականգնումը տեղի պիտի ունենայ Բարձրագոյն հրամանով և այս մաքով էլ փոխարքան միջնորդութիւն է յարուցել Պետերբուրգի իր ներկայացուցիչ բարոն Նոլդէի միջոցով։ Նախագահը աւելացրեց որ ինքը հեռագրներով խնդրել է Պետական Խորհրդի անդամ Ղուկասեանին և Պետական Դումայի անդամ Աթաբէգեանին որ նրանք միջնորդեն ուր հարկն է, որպէսզի ընդունուի Վարչութեան խնդիրքը։

Զը բաւականալով այսքանով, Վարչութիւնը մայիսին մի երկրորդ խնդրագրով դիմեց փոխարքային և նորից բացատրելով այն նկատառումները, որոնք ցանկալի են դարձնում 1881 թուականի կանոնադրութեան վերականգնումը, խնդրում էր որ շուտափոյթ տնօրինութիւն անուի, որովհետև թէպէտ և Վարչութեան առանձին խնդրագրին ընթացք է տուած, բայց մինչև այժմ հարցը բարեյաջող լուծում չէ ստացել։

Այս խնդրագրի մէջ Վարչութիւնը շօշափում էր և մի կարևոր հարց։ 1906 թուին հրատարակուած օրէնքով նոր ընկերութիւններ բացվում էին իւրաքանչիւր նահանգական Վարչութեան մէջ կազմուած առանձին ատեանի հաւանութեամբ։ Վարչութիւնը գտնում էր որ 1881-ի կանոնադրութիւնը այդ օրէնքի սահմանած կարգով չը պիտի վերականգնուի, քանի որ այս դէպքում նոր ընկերութիւն չէ հիմնվում, իսկ 1906-ի օրէնքով ընկերութիւնները բացվում են մի քանի անձանց նախաձեռնութեամբ և արձանագրվում են նահանգական վարչութիւնների առանձին ատեանների մէջ։ Այսպիսի կարգով ընկերութիւնը չէ կարող ունենալ 1881-ի կանոնադրութեամբ բացուող ընկերութեան ոյժը։ «Կարևոր է մանաւանդ այն,— գրում էր Վարչութիւնը,—

որ այժմ Բարեգործական Ընկերութիւնը իրաւունք չունի յանձնելու նոր ընկերութեան իր դրամագլուխը և կայքերը, որոնք մօտ 300,000 ռուբլի գումարի են և նուիրուած են հէնց ներկայ Բարեգործական Ընկերութեան այն պայմաններով, որոնք արտայայտուած են ընծայաբերութեան թղթերի և կտակների մէջ»։—Եւ խնդրում էր փոխարքայի աջակցութիւնը որ ամբողջ հայ ազգաբնակութեան վաղուց սպասուող բարեյաջող լուծումը շուտ դրուի 1881 թուականի կանոնադրութեան վերաբերմամբ, «որ կարողութիւն կը տայ զբաղուելու խաղաղ և կուլտուրական աշխատանքով ժողովրդի աղքատ և տգէտ մասսայի մէջ։

Այս երկրորդ դիմումին փոխարքայի դիւանատունը պատասխանեց թէ գործը ուղարկուած է Պետերբուրգ։ Վարչութիւնը մայիսի 31-ի նիստում, նախագահի առաջարկութեամբ, որոշում է նորից դիմել Պետերբուրգում գտնուող հայերին. «խնդրել պ. պ. Ղուկասեանին, բժ. Վարդանեանին, Ամիրէգեանին և Եւանգուլեանին դիմումներ անել վերականգնման խնդրի առթիւ, տալով նրանց լիազօրութիւն հրաւիրել նաև ում որ յարմար կը համարեն՝ իրանց օգնելու այս հարցում։ Կառավարութիւնից մերժում ստանալու դէպքում՝ դիմումն անել ուր հարկն է ընկերութիւնը վերակազմելու խնդրի առթիւ նոր օրէնքի հիման վրայ։ Այս հարցի մշակելը յանձնել պ. պ. Ս. Յարութիւնեանին, Առ. Սարուխանեանին, Հ. Առաքելեանին, բժ. Բ. Նաւասարդեանին, Յով. Սպենդիարեանին, Մ. Գէորգեանին, Բ. Վերմիշեանին։ Մանաժողովին լիազօրութիւն տալ հրաւիրել նաև կողմնակի անձանց» [1])։

Եւ այսպիսով վճռում էր, 1881 թ. կանոնադրութիւնը չը վերականգնելու դէպքում, դիմել 1906 թ. օրէնքին և նրա ցոյց տուած ձևով վերակազմել Ընկերութիւնը։ Այս դէպքում 1881-ի կանոնադրութիւնը իր տառացի

[1]) Արձ. № 28.

ամբողջութեամբ չէր վերակենդանանում, այլ ենթարկվում էր մշակութեան։ Վարչութիւնը սեպտեմբերի 14-ին գրաւոր լիազօրութիւն է տալիս Ս. Յարութիւնեանին, իբրև իր նախագահին, որ նա ուր հարկաւոր է գրաւոր և բերանացի միջնորդութիւններով աշխատէ որ շուտ վերականգնուի 1881 թ. կանոնադրութիւնը։

Վարչութեան ցանկացած եղանակով 1881-ի կանոնադրութիւնը չը վերահաստատուեց։ Ներքին գործերի մինիստրը յայտնեց, որ կարիք չը կայ կենտրոնական բարձր կառավարութեան դիմելու, քանի որ 1906-ի օրէնքով կարելի է կարգաւորել Ընկերութեան վերակազմութիւնը Թիֆլիսի նահանգական վարչութեան առանձին ատեանի միջոցով։

Վերամշակուած կանոնադրութիւնը նախ կարդացվում է նոյեմբերի սկզբին կայացած մասնաւոր խորհրդակցութեան մէջ, որին հրաւիրուած էին Ընկերութեան անդամներից 22 հոգի։ Ապա հարցը տանվում է ընդհանուր ժողովին, որ գումարուած էր դեկտեմբերի 1-ին։ Նախագահ Նաւասարդեանը բացատրեց թէ նոր վերամշակուած կանոնադրութիւնը իր էական կէտերով նոյն է, ինչ էր 1881-ի կանոնադրութիւնը, բացառութեամբ միայն մի քանի կէտերի։ Ձեռնհաս անձանց խորհրդակցութիւնը շատ հաւանել է այդ նոր խմբագրութիւնը, որի գլխաւոր կէտերն էլ կարդաց նախագահը։

Ժողովականներից ոմանք փորձ են անում փոփոխելու Ընկերութեան անունը։ Նրանք, «առաջնորդուելով,—ինչպէս կարդում ենք արձանագրութեան մէջ,—այն հանգամանքով, որ կանոնադրութեամբ Ընկերութիւնը կամենում է իր սեփական ուսումնարաններն ունենալ և այլ կուլտուրական գործեր կատարել, առաջարկում են վերականգնելիք Ընկերութիւնը անուանել «Կովկասեան Հայոց կըրթական—Բարեգործական Ընկերութիւն», իսկ ոմանք էլ—ուղղակի դուրս գցել «Բարեգործական» բառը և անուանել

նրան միմիայն կրթական կամ կուլտուրական ընկերութիւն»։

Այդ առաջարկութեան դէմ բերվում է այն բացատրութիւնը թէ «դա անկարելի է անել պարզապէս այն հիման վրայ, որ Ընկերութեան անունը հիմնովին փոխելը կը նշանակէր վերջնականապէս փակել հին Բարեգործական Ընկերութիւնը և նրա տեղը մի նոր Ընկերութիւն հիմնել, մի բան, որ ներկայ ժողովը ոչ մի իրաւունք չունի, քանի որ սա Թիֆլ. Հ. Բարեգ. Ընկերութեան ժողովն է, հրաւիրուած այդ Ընկերութեան Վարչութեան կողմից»։ Ցանկալի էլ չէր համարվում ընկերութեան անունը փոխել և այն պատճառով, որ «այդ անուան հետ երկար տարիների տրադիցիաներ են կապուած և որ ինչ զլխաւորն է, Ընկերութեան անունը փոխելով, նա կարող է զրկուել այն բոլոր հարստութիւններից, որ թողնուած են նրան կտակով»։

Այնուհետև ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց Վարչութեան ներկայացրած կանոնադրութիւնը և յանձնեց Վարչութեան որ նա, Ընկերութեան պատուաւոր անդամներ Նաւասարդեանի և Մելիք-Ազարեանի հետ միասին կանոնադրութիւնը ներկայացնեն նահանգական ատեանին, միաժամանակ իրաւունք տալով նրանց, հարկ եղած դէպքում, այս կամ այն փոփոխութիւնը մտցնել կանոնադրութեան մէջ։

Կանոնադրութիւնը անփոփոխ հաստատուեց 1908 թ. յունվարի 31-ին [1])։

---

[1]) Տես Յաւելուած։

II

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ա. ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Կանոնադրութեան հաստատութիւնից երկու օր անցած, փետրվարի 2-ին, Թիֆլիսի Բօրսայի դահլիճում կայացաւ Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը։ Ինչպէս և Ընկերութեան սկզբնաւորութեան ժամանակ, 1881-ին, նկատելի էր հասարակութեան վառ հետաքրքրութիւն։ Նիստը բացուեց երեկոյեան $7^1/_2$ ժամին 128 անդամների ներկայութեամբ։ Նախագահ ընտրուեց բժշ. Բ. Նաւասարդեան, քարտուղար՝ Աշոտ Աթանասեան։

«Նախագահը—կարդում ենք արձանագրութեան մէջ—շնորհաւորեց ժողովականներին, որ այսօր Կովկասի հայ ժողովրդի կուլտուրական ամենաթանկագին հաստատութիւններից մէկը՝ որպիսին էր Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը նորից կեանք առաւ, վերականգնեց իր գործունէութիւնը, որը ահագին համակրութիւն էր գտել ամեն տեղ, իւր երկարամեայ գոյութեան ընթացքում։

«Սամսոն Յարութիւնեանը (Վարչութեան նախագահ) խօսք առնելով, ասաց. «Ուրախ եմ, որ այսօր կարող եմ ես ևս շնորհաւորել հայ հասարակութեանը նախկին «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան» վերաստեղծման փաստով, մի ընկերութեան, որ շնորհիւ սրանից տասը տարի առաջ գոյութիւն ունեցած ներքին քաղաքականութեան ջանքերի՝ 1899 թուականին փակուեց և նրա տեղը մենք ստացանք «Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւն» սահմանափակ գործունէութեան շրջանով մի կանոնադրութիւն. այս վերջինը համեմատած իր նախորդի հետ, հանդիսացաւ մի ողորմելի ընկերութիւն և, չը նայելով որ նա ապրում և գործում էր, բայց այդ կեանքը մեռած էր, գործը ապարդիւն, անհետաքրքիր և այնքան նեղ, որ ըստ այդ կանոնադրութեան Ընկերութիւնը կարող էր օգնել միմիայն Թիֆլիս

քաղաքում ապրող թշուառներին և այն էլ միմիայն հայ լուսաւորչականներին և այդ օգնութիւնը դրամական ինչին նպաստներից, հանդերձեղէն հայթայթելուց այն կողմը չէր կարող անցնել։ Հէնց դրանով էլ պէտք է բացատրել այն տխուր փաստը, որ այդ ընկերութիւնը հայ հասարակութեան կողմից չէ գտնում ոչ մի համակրութիւն, որով Ընկերութեան նիւթական աղբիւրները օր ըստ օրէ ցամաքում են և հատնում են մի խղճուկ դրութեան։ Հայ հասարակութիւնը սակայն չէր մոռանում իր նախկին Ընկերութիւնը և ակնապիշ անհամբերութեամբ սպասում էր այն օրին, երբ նա հնարաւորութիւն կունենայ նորից տեսնել վերաստեղծուած «Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան» հին և լայն կանոնադրութիւնը իր բազմաթիւ ճիւղերով, իր ընդարձակ գործունէութեան սահմաններով։ Այսօր հայ հասարակութեան իղձերը այդ նկատմամբ իրագործուած են. վերադարձուած է մեզ մեր հին Ընկերութեան կանոնադրութիւնը, որով մենք վերջապէս հնարաւորութիւն ենք ստանում սոսկ բարեգործութիւնից անցնել կուլտուրական—կրթական բազմագիմի մի գործունէութեան, որը իր ճիւղերը փռելու է Կովկասի բոլոր հայաբնակ քաղաքներում և զարկ է տալու մեր ազգային առաջադիմութեանը, աւելի քան մի այլ հաստատութիւն։ Այժմ այդ ընկերութեան շուրջը կարող են համախմբուել բոլոր, մանաւանդ մեր ինտելլիգենտ ոյժերը, առանց քաղաքական-հասարակական հայեացքների խտրութեան, քանի որ մեր Ընկերութեան գործունէութեան սահմանները խիստ լայն են ամէն տեսակ կուլտուրական ձգտումների համար։ Շնորհաւորելով այսօրուայ օրով, հրաւիրում եմ ձեզ բոլորիդ գալ միանալ և ձեռք ձեռքի տուած շարունակել մի գործ, որ այնպէս կոպիտ ձեռքով ընդհատուել էր»։

Լաւագոյն ապացոյցը թէ հասարակութիւնը որքան համակրական վերաբերմունք ունէր դէպի Ընկերութեան վերակազմութիւնը, այն փաստն էր, որ այդ խօսքերից յետոյ Ս. Յարութիւնեանը հաղորդեց ժողովին։ Ընկերութեան նախկին Խորհրդի նախագահ և պատուաւոր անդամ Ալէքսանդր Անանեանը այդ օրուայ առիթով ուղղել էր Ս. Յարութիւնեանին հետևեալ նամակը։

«Ի սրտէ շնորհաւորելով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան վերակազմութիւնը, որին (Ընկ.) երկար տարիների

ընթացքում ծառայել և սիրել եմ, իբրև մի նշանաւոր և ազգօգուտ հաստատութեան, շատ ցաւում եմ, որ հիւանդութեանս պատճառով անկարող եմ ներկայ լինել այսօր Ընկերութեանդ ընդհանուր ժողովի առաջին նիստին։

Համակրելով ընկերութեանդ նոր մշակած կանոնադրութեան բոլոր նպատակները, առաւելապէս կրթականը, ես ի հաստատութիւն իմ այդ համակրանքի դէպի այդ ընկերութիւնը, նուիրում եմ այժմ Ընկերութեանը քսան հազար բուբլի կանխիկ գումար հետևեալ պայմաններով. 1) Այդ գումարը պէտք է լինի անձեռնմխելի, իբր նուէր իմ անունից։ 2) Գումարի տոկոսները պէտք է գործադրուին յատկապէս կրթական նպատակների համար, գլխաւորապէս գիւղական դպրոցների վերայ, հիմնելով նոր դպրոցներ կամ օժանդակելով նոր բացուելիք և գոյութիւն ունեցող հայ դպրոցներին։ 3) Իցէ թէ Ընկերութեան այժմեան կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկուի և շնորհիւ այդ հանգամանքի Ընկերութիւնը անկարող լինի հայկական դպրոցներ հիմնել կամ այդպիսիներին օժանդակել, այդ դէպքում իմ ներկայ գումարի տոկոսը Ընկերութիւնը պէտք է գործադրի միւս հայկական և կանոնադրութեամբ թոյլատրուելիք կարիքների վերայ։ 4) Իսկ եթէ Ընկերութիւնը փակուի, այն ժամանակ այս գումարը յատկացվում է մի այլ հայկական հաստատութեան կամ նպատակի՝ Ընդհանուր ժողովի որոշմամբ։

«Նոր սերնդի բարոյական ու մտաւոր զարգացումից կախուած է մեր հայ ժողովրդի ապագան։ Բարոյագիտութիւնը դպրոցներում պէտք է անհրաժեշտութիւն ներկայացնի և այդ առթիւ ես կը ցանկանայի որ Ընկերութիւնը հետևէր Եւրոպայի, դլխաւորապէս Գերմանիայի կենդանի օրինակին

«Ի գիտութիւն Ընկերութեան հարկաւոր եմ համարում յայտնել որ նա բացի այս քսան հազար բուբլուց, կը ստանայ ապագայում իմ կտակով ևս տասն հազար բուբլի։ Կրկին անգամ շնորհաւորելով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանդ վերաբացումն, խորին սրտով ցանկանում եմ Ընկերութեանդ յառաջադիմութիւն՝ յօգուտ մեր ազգի։

«Թիֆլիս, 2 փետրուարի 1908 թ.

Խորին յարգանօք՝ Ա. Անանանեան,

«Յ. Գ. Յարգելի պ. Սամսոն Յարութիւնեան.

Ուղարկելով այս նամակը Ձեզ, իբրև Կ. Հ. Բ. Ընկերութեան

նախագահի, խնդրում եմ այս մասին յայտնել Ընկերութեանդ այսօրուայ Ընդհանուր ժողովին»։

Ընդհանուր ժողովը ծափահարութիւններով ընդունում է իր նախագահի առաջարկութիւնը, այն է, որ Վարչութեան նախագահ Ս. Յարութիւնեանը ժողովի կողմից շնորհակալութիւն յայտնէ Ա. Անանեանին։ —

Այնուհետև Վարչութեան անդամ Հ. Առաքելեանը «կարդում է իր զեկուցումը, որը պարունակում է իր մէջ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ողջ գործունէութիւնը»։ Իսկ Վարչութեան գանձապահ Ա. Սարուխանեանը ծանօթացնում է ժողովին Ընկերութեան նիւթական կարողութեան հետ, որի ամբողջ արժէքն էր 236,800 ռուբլի։ —

Այս զեկուցումները լսելուց յետոյ Ընդհանուր ժողովը դիմում է գլխաւոր հարցին, այն է՝ վերակազմութեան և «ի նկատի առնելով, որ նոր Կանոնադրութեամբ նոր ընկերութիւն չէ կազմուել, այլ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը կերպարանափոխուել է, դառնալով Հայոց Բարեգործական Ընկերութիւն Կովկասում, որ այս հիմամբ Ընկերութեան ունեցածը մնում է նոյն դրութեան մէջ, անփոփոխ, առանց յանձնելու մէկ կողմից և առանց ընդունելու միւս կողմից, որոշեց Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան բոլոր ունեցուածքը — թէ շարժական և թէ անշարժ, համարել սեպհականութիւն Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում»։

Նոր Կանոնադրութեան գործունէութիւնն սկսվում է պաշտօնատար անձանց ընտրութեամբ. «Վարչութեան նախագահ պ. Ս. Յարութիւնեանը յայտնում է, թէ աչքի առաջ ունենալով, որ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը այժմ գործելու է նոր Կանոնադրութեամբ, ընդարձակ ծրագրով և որ իրենք ընտրուած են ըստ հին Կանոնադրութեան, ուստի և նա և իր հետ Վարչութեան բո-

լոր անդամները հրաժարվում են իրենց պաշտոններից և առաջարկում Ժողովին ընտրել պաշտոնական նոր մարմին։ Տ. Յովհաննիսեան առաջարկում է յայտնել շնորհակալութիւն Վարչութեանը, որ կարողացաւ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում գլուխ բերել վերակազմուած Ընկերութեան Կանոնադրութեան հաստատումը։ Ժողովը ծափահարութեամբ շնորհակալութիւն է յայտնում։ Նախագահը շնորհակալութիւն է յայտնում և հին Վարչութեանը, որ այս գործը նախաձեռնեց (ծափահարութիւն), ապա առաջարկում է պատուել ոտքի կանգնուելով Ընկերութեան հանգուցեալ անդամների յիշատակը (Ժողովը ոտքի է կանգնում»)։—

Ի վերջոյ Ժողովն սկսում է ընտրութիւններ կատարել։ Ընտրողների թիւն էր 102։ Ընտրվում են Խորհրդի անդամներ. Սամսոն Յարութիւնեան (որ ստանում է 100 ապիտակ քուէ), Սամուէլ Բալաղեան, Առաքել Սարուխանեան, Յովհաննէս Սպենդիարեան, Խաչատուր Աֆրիկեան, Սմբատ Խաչատրեան, Յովսէփ Ամիրխանեան, Սահակ Լիսիցեան, տիկին Հեղինէ Առատամեան, Յակոբ Շահնազարեան, Ալէքսանդր Պապովեան, Յակոբ Քոչարեան։ Փոխանդամներ՝ Ստեփան Մալխասեան, Արշալոյս Մխիթարեան, Սարգիս Մելքումեան, Գէորգ Խատիսեան։

Բ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհուրդը իր առաջին հերթական նիստում կազմակերպեց իր դիւանը, այսպէս.—Նախագահ՝ Սամսոն Յարութիւնեան (որ մինչև այս օր էլ վարում է այդ պաշտօնը), փոխ-Նախագահներ՝ Յովհաննէս Սպենդիարեան (որ նոյնպէս վարում է այդ պաշտօնը մինչև այսօր) և Սմբատ Խաչատրեան։ 1909-ին՝ Սամուէլ Բալաղեան, 1910-ին Եփրեմ վարդապետը (այժմ եպիսկոպոս), գանձապահ՝ Առաքել Սարուխանեան (այսօր էլ նոյն պաշտօ-

նում), քարտուղար՝ Ալէքսանդր Պոպովեան (1909-ից Յակոբ Շահնազարեան)։

Սկզբից և եթ Խորհուրդը ընարում է գործունէութեան մի այնպիսի ընդարձակ և բազմակողմանի ծրագիր, որի նմանը չէ ունեցել Ընկերութիւնը իր գոյութեան սկզբից։ Անցեալ շրջանից մնացած երկու հիմնարկութիւնները—որբանոց և ճաշարան շարունակում են իրանց գոյութիւնը, սովորական ազքատախնամութիւնը նոյնպէս մնում է իբրև գլխաւոր ճիւղերից մէկը։ Դրանց վրայ Խորհուրդն աւելացնում է ընդարձակ դպրոցական գործունէութիւն, գրադարան-ընթերցարան, գրական ֆոնդ, հրատարակչական գործ։ Թէև նոր կանոնագրութեամբ Խորհուրդը բաղկացած է 12 անդամից, բայց այդ թիւը չէր կարող բաւարարութիւն տալ՝ գործունէութեան բոլոր ճիւղերը պատշաճաւոր բարեկարգութեամբ առաջ տանելու համար։ Ուստի Խորհուրդը սկզբունք է ընդունում գործելու յատուկ մասնաժողովների աշխատակցութեամբ, մասնաժողովներ, որոնք կազմում են Խորհրդի անդամներից և դրսից հրաւիրուած ձեռնհաս անձերից։ Այս կերպով կազմակերպվում են հետևեալ մասնաժողովները՝ ճաշարանի, որբանոցի, ֆինանսական, կալուածական, նպաստամատոյց, գրադարան-ընթերցարանի, գիւղատնտեսական, գրական ֆոնդի, հրատարակչական, ներկայացումների և երեկոյթների. առաջին տարին նաև՝ գիւղատնտեսական, և թիւրքահայ գաղթականների։

Այդ ընդարձակ գործունէութիւնը արտայայտվում է հէնց առաջին տարուայ համար կազմուած նախահաշուի մէջ։ Խորհուրդը այդ նախահաշուով սպասում էր սովորական մուտք և նուէրներ 18624 ռուբլի, մի գումար, որ երբէք հանդէս չէ եկել Ընկերութեան նախահաշիւների մէջ։ Այդպիսի մի նախահաշիւ իրականացնելու համար Խորհուրդը պիտի դիմէր եռանդուն միջոցների։ Ընկերութեան գործը ժողովրդականացնելու և հասարակական

ուժերը դէպի այդ գործը գրաւելու համար նա դիմումներ արաւ թէ ընդհանրապէս մամուլի միջոցով և թէ մասնաւորապէս բազմաթիւ անհատների և ազգային հաստատութիւնների։ Եւ այդ դիմումները չը մնացին առանց արձագանքի։ Նուիրատուութիւնները, ինչպէս կը տեսնենք, բաւական խոշոր էին և նրանց միջոցով Խորհուրդը կարողացաւ մի կարճ միջոցում աչքի ընկնող խոշոր գործեր կատարել։

Միաժամանակ Խորհուրդը առանձին ուշադրութիւն դարձրեց Ընկերութեան անդամների թիւը մեծացնելու վրայ։

Ընկերութեան հովանաւորող խնամակալ։ 1910 թ. ապրիլի 24-ի ընդհանուր ժողովում Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը, նկարագրելով Ընկերութեան ներկայ բարգաւաճ դրութիւնը և հետզհետէ ընդարձակուող գործունէութիւնը, որի գլխաւոր առարկան հայ ժողովրդի կրթական-կուլտուրական գործն է, շեշտեց որ այդ գործունէութիւնը վայելել է հոգևոր իշխանութեան հովանաւորութիւնը, ուստի առաջարկեց. «Աղերսել Նորին Վեհափառութեան, որ նա լինի բարձր հովանաւորող անդամ Ընկերութեան, մանաւանդ որ նրա սրտին միշտ մօտ է եղել մեր Ընկերութեան գործունէութիւնը»։

Ժողովը միաձայն և յոտնկայս ընդունում է այդ առաջարկութիւնը։ Վեհ. Իգմիրլեան Մատթէոս Բ. Կաթողիկոսը ի պատասխան այդ ընտրութեան, ուղղում է Խորհրդին հետևեալ կոնդակը.

Գերաշնիւ նախագահաց ընդհանուր ժողովոյ և խորհրդի և պատուական տեարց անդամոց Բարեգործական Ընկերութեան Հայոց Կովկասու, հարազատ և հաւատարիմ որդւոց մօրս լուսոյ Ս. Էջմիածնի բազմասցի շնորհ, սէր և ողջոյն փրկչաւանդ հանդերձ հայրապետական օրհնութեամբ։

Գոհունակութեամբ ընկալաք զհեռագիր սիրեցեալ առ ի մէնջ որդւոցդ ի 25 ամսեանն ապրիլի, յորմէ իրազեկ եղաք, եթէ ընդ-

հանուր ժողովն Բարեգործական Ընկերութեանդ Հայոց Կովկասու որոշեալ է համարել զՀայրապետն լրութեան Ազգիս պատուաւոր անդամ Հովանաւորող Ընկերութեանդ։

Հոչակ բեղմնաւոր և արդիւնաշատ գործունէութեան Բարեգործական Ընկերութեանդ խնդրանէ անտի ցայսօր քաջայայտ է մերազնեայ ժողովրդեան, զի պատկառելի հաստատութիւնդ, բազմաթիւ ճիւղաւորութեամբ իւրովք, ընդ հովանեաւ բարեխնամ պետութեան Ռուսիոյ, շնորհիւ բարեմիտ և գիտակից անձանց ձեռն օժանդակութեան կարկառէ յամենայն ժամ բազմաթիւ դժբախտ անձանց, չքաւորաց, ուսումնատենչ պատանեաց և առհասարակ ամենայն կրթական և հանրօգուտ ձեռնարկութեանց և հաստատութեանց, որով մեծապէս նպաստէ մտաւոր և բարոյական յառաջադիմութեան և երջանկութեան Ազգիս։

Արդ՝ ընկալեալ Մեր զորոշումն Ընդհանուր Ժողովոյ սոյնպիսի բազմարդիւն Ընկերութեանդ վասն կոչման պատուաւոր Հովանաւորող անդամութեան Մերոյ, որ ի յարգանս Հայրապետութեան Ամենայն Հայոց, այսու Հայրապետական կոնդակաւ մերով յայտնեմք սիրելի որդւոցդ զսրտագին գոհունակութիւնս Մեր հանդերձ օրհնութեամբս. մաղթեմք առ Տէրն տէրանց ի հաճոյս իւր ընդունել զրոլորանուէր վաստակս Մեծայարգ անդամոցդ և պարգևել բազմավաստակ սիրելեացդ զիմաստութիւն, զեռանդ բարեգործութեան և զքաջառողջութիւն՝ նովին սրտաբուխ եռանդեամբ և անձնուիրութեամբ շարունակել զբեղմնաւոր գործունէութիւնն Ձեր յօգուտ տառապեալ ազգիս։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր, պահպանեալ ի խնամս Հօրն երկնաւորի և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթ. Ամ. Հայոց

2 Մայիսի 1910 ամի և ըստ
տոմարիս ՌՅԾԹ

Ի Հայրապետութեան Մերում Ա. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 1192։

Գործաղիր անդամներ։ Տարեկան 5 ռուբլի վճարող անդամների թիւը 1908-ին հասաւ 304-ի, բայց հետեւեալ տարին այդ թիւը իջաւ 267-ի, իսկ 1910 թուին կենտրոնի անդամների թիւն էր 342։ Ամեն տարի Խորհուրդը ուղարկում է Թիֆլիսում ապրող հայերին հարիւրաւոր տպագրուած նամակներ, որոնց մէջ թուելով Ընկերութեան կատարելիք գործերը, առաջարկում է անդամ գրուել։ Եւ անշուշտ Խորհրդի մեղը չէ որ այդ դիմումների մեծագոյն մասը անպտուղ է մնում։

Ա. ՂԱՐԱՋԾԱՆ
Պատուաւոր անդամ։

Մշտական անդամներ։ Նոր Կանոնադրութեամբ միանուագ 100 ռուբլի վճարողները համարվում են մշտական անդամներ։ Խորհուրդը աշխատելով մեծացնել այդպիսի անդամների թիւը, պատրաստել տուեց յատուկ մեծադիր վկայականներ, զարդարուած գեղարուեստական նկարով [1]) և առանձին-առանձին անհատների դիմելով, կարողացաւ մշտական անդամներ գտնել, որոնց թիւը առ 1 յունվարի 1910 թ. կազմում էր 29 հոգի։

Պատուաւոր անդամներ։ Ընկերութեան այս երկրորդ շրջանում մենք տեսնում ենք որ Խորհուրդը Ընկերութեան խոշոր նուէրներ անողներին պատուաւոր անդամ կոչում տալու որոշումն է անում և իրագործում։ Իր

(1 Տես այս գրքի շապիկը։

գործունէութեան երկրորդ ամսում Խորհուրդը Ընդհանուր Ժողովին առաջարկութիւն է անում պատուաւոր անդամ ընտրելու Պետրովսկի վաճառական Ալէքսանդր Ղարաջեանին, որի առատաձեռն նուէրով կառուցվում է շինութիւն Խուդադեանի տան կից [1]։ Ընդհանուր Ժողովը մարտի 22-ի նիստում ընտրում է Ա. Ղարաջեանին պատուաւոր անդամ։—

Նոյն 1908 թ. մայիսին Շուշու Տեղական Վարչութիւնը, Տեղական Ընդհանուր Ժողովի հաւանութեամբ, առաջարկում է Խորհրդին՝ Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել Առաքել Բաբախանեանին (ԼԷՕ), սրա գրական գործունէութեան 25 ամեայ յօբելեանի առիթով, որ տօնվում էր նոյն մայիսին։ Իր զեկուցագրի մէջ Վարչութիւնը թւում էր թէ ինչ ծառայութիւն է մատուցել Ա. Բաբախանեանը Շուշու Տեղական Ճիւղին։ Խորհուրդը իր կողմից զեկուցում ներկայացրեց մայիսի 17-ի Ընդհանուր Ժողովին, որ և միաձայն ընտրեց Ա. Բաբախանեանին Ընկերութեան պատուաւոր անդամ։

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ (ԼԷՕ)
Պատուաւոր անդամ։

Հետևեալ տարին, 1909-ին, պատուաւոր անդամ ընտրուեցին երկու հոգի. մայիսի 17-ի Ընդհանուր Ժողովը միաձայն ընտրեց Ալէքսանդր Մանթաշեանին, որ ինչպէս

[1]) Տես ստորև «Բարերարներ»։—

արդէն գիտենք 1881—1895 թուականների ընթացքում անընդհատ Խորհրդի անդամ է եղել և որ 1908-ին նուիրել էր Ընկերութեան 20000 բուբլի։ Միաժամանակ գրուած էր և Թիֆլիսի Վաճառական Տիգրան Աֆրիկեանին պատուաւոր անդամ ընտրելու հարցը։ Աֆրիկեանի մասին Խորհուրդը զեկուցեց որ նա յանձն է առել և անցեալ տարուանից սկսել է տալ 4700 բուբլի տարեկան նպաստ դպրոցներին։ Ընդհանուր Ժողովը ընտրեց Տ. Աֆրիկեանին պատուաւոր անդամ։ Իսկ 1910 թուի յունվարի 10-ին Ընդհանուր Ժողովը միաձայն պատուաւոր անդամ ընտրեց Թիֆլիսի վաճառական Աւետիս Պողոսեանին, որ առանձին դրամով 7100 բուբլի էր նուիրել՝ գրքեր հրատարակելու համար։—

Տ. ԱՖՐԻԿԵԱՆ

Պատուաւոր անդամ։

Ընկերութեան տունը։ Ինչպէս տեսանք, 1907-ին Վարչութիւնը գնեց Աբաս-Աբադեան հրապարակում գտնուող նրա տան կից շինութիւնը, որ պատկանում էր Արէշեանին։ — Խորհրդի առաջին գործը եղաւ քանդել այդ հին շինութիւնը և նորը կառուցանել։ Շինութիւնը նոյն 1908-ին շինուեց Ա. Ղարաջեանի նուէրով։ Խորհրդի անդամ ինժիներ Սահակ Լիսիցեանի նախագծով եւ ընկերութեան անդամ Ա. Ի. Շահիկեանի հսկողութեամբ կառուցուած այդ շինութիւնը միացուեց Խուդադեանի տանը և այդպիսով Ընկերութիւնն ունեցաւ Թիֆլիսում մի մեծ և գեղեցիկ տուն, որի մէջ տեղաւորուեցին Ընկերութեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԸ (Թիֆլիս, Արաս-Արտաքսյան հրապարակ)։

բոլոր հիմնարկութիւնները — որբանոց, գրադարան-ընթերցարան, ճաշարան, Խորհրդի գրասենեակ։ Նոր շինութեան վերին յարկը մի ընդարձակ դահլիճ է, երկու մասից բաղկացած, ուր կայանում են Ընկերութեան ընդհանուր ժողովները, լինում են դասախօսութիւններ, երեկոյթներ։ Շինութիւնը լուսաւորվում է ելեքտրականութեամբ։

Ճիւղեր։ 1908-ի Խորհուրդն էլ, 1881-ի Խորհրդի նման, իսկոյն և եթ դիմումներ արաւ Կովկասի և Անդրկովկասի հայաբնակ վայրերը՝ Ընկերութեան ճիւղեր բաց անելու համար։ Եւ այդ հրաւէրները արձագանք տուին բազմաթիւ տեղերում, մի հանգամանք, որ ապացուցում էր թէ միանգամայն ճիշտ էր ասում 1907-ին Վարչութիւնը Կովկասի փոխարքային տուած իր խնդրագրի մէջ՝ թէ ամբողջ Կովկասի հայ ազգաբնակութիւնը փափագում է վերականգնած տեսնել Հայոց Բարեգործական Ընկերութիւնը իր նախկին կանոնադրութեամբ։

Ա. ՊՕՂՈՍԵԱՆ

Պատուաւոր անդամ։

Խորհուրդը կազմուեց փետրուարի 2-ին, իսկ մարտի 22-ին զեկուցանում էր ընդհանուր ժողովին, որ մինչև այդ, թոյլատրութիւն են ստացել ճիւղեր բանալու 18 հայաբնակ քաղաքներ և գիւղեր։ 1908-ի վերջում Ընկերութիւնը ունէր 40 ճիւղ, իսկ այժմ երեսնամեայ գոյութիւնը բոլորելու վրայ, ունի 45 ճիւղ։

Ներկայ կազմը։ Խորհրդի ներկայ կազմը, որին

վիճակուած է իր գործունէութեամբ բոլորել Ընկերութեան կեանքի երեսնամեայ շրջանը, բաղկացած է հետեւեալ անձերից. նախագահ՝ Սամսոն Յարութիւնեան (1906 թ.), փոխ-նախագահներ՝ Յովհաննէս Սպենդիարեան (Նոյնպէս) և Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեան, դանձապահ՝ Առաքել Սարուխանեան (1907-ից), քարտուղար՝ Յակոբ Շահնազարեան և անդամներ՝ ա. Հեղինէ Առստամեան, Ալէքսանդր Շահիկեան, Սահակ Լիսիցեան, Սարգիս Մելքումեան, բժ. Բախշի Աղասարեան, Զաքար Մամուլեան և բժ. Արամ Մխիթարեան։ Այս կազմի մեծագոյն մասը (Յարութիւնեան, Սպենդիարեան, Սարուխանեան, Շահնազարեան, Շահիկեան, Մելքումեան) Ընկերութեան երկարամեայ ծառայութիւններ մատուցած մարդկանցից է բաղկացած։ Երեսուն տարուայ ընթացքում Ընկերութիւնը ստեղծել է գործիչների մի ամբողջ շարք, որից և գլխաւորապէս կազմվում են նրա պաշտօնատար մարմինները։

Ընդհանուր ժողովներին երբորդ շրջանի ընթացքում նախագահել են՝ բժշկ. Բ. Նաւասարդեան (ութ անգամ) Ա. Քալանթար (վեց անգամ) Տ. Յովհաննիսեան (1 անգամ)։

III

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(1908—1911)

ա. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾ

Վերակազմուած Ընկերութեան ամենագլխաւոր հոգսը, ինչպէս և 1881—1899 թ. շրջանում, դառնում է հայ ժողովրդի կրթութեան գործը։ Բայց օգնութեան սիստեմի, միջոցների տեսակէտից մեծ տարբերութիւն է նկատվում նախկին և նոր Խորհուրդների մէջ։

ԽՈՐՀՈՒՐԴ

Մէջ տեղ — Ս. Յարութիւնեան (նախագահ): ԱՌԱՋ ԿՈՂՄԻՑ. Եղիազար Եպիսկոպոս Սուքիասեան (փոխ-նախագահ), անդամներ — ս. Հեքիմ Աղասեանի, Առաքել Սարգսեանց (գրագրագիր), Ալէքսանդր Ղազարեան, Յակոբ Ղանդաղեան (հաշուագիր): ԱՋ ԿՈՂՄԻՑ — Յովհաննէս Սարգիսեան (փոխ-նախագահ), անդամներ — Սարգիս Մկրտչեան, Սանտալ Լիսիցեան, Զաքար Մանուչեան, բժ. Արամ Միքայէլեան:

Մենք տեսանք որ նախկին Խորհուրդը բաւականանում էր իր նախահաշուի խոշոր մասը յատկացնելով ուսումնառուներին, այսինքն աշակերտներին և ուսանողներին, տալով նրանց ամսական փոքրիկ թոշակներ կամ միանուագ նպաստներ. երկարատև կամ միանուագ նպաստներ ստանում էին և մի քանի ծխական դպրոցներ։ Դաւառների կրթական դրութիւնը համարեա միանգամայն անծանօթ էր Խորհրդին. տեղական ճիւղերն էին միայն, որ իրանց կարողութեան չափ օգնում էին տեղային դպրոցներին։ Սակայն մենք տեսանք արդէն, որ տեղական ճիւղերը նախ և առաջ շատ բազմաթիւ չէին և երկրորդ՝ նրանց դրամական միջոցներն էլ մեծագոյն մասամբ շատ սահմանափակ էին։

Նոր Խորհուրդը նախկինի շաւղով չը գնաց։ Նրա առջև կանգնած էր ժողովրդական մեծ կարիքը աւելի որոշուած, աւելի ընդարձակ սահմաններով գծագրուած կերպարանքով։ Վերջին տարիների ահեղ ցնցումները—նախ հայ-թրքական ընդհարումները, ապա ամբողջ Կովկասը բռնած յեղափոխական շարժումները վերջնականապէս ջլատել էին հայ ժողովրդի նիւթական և բարոյական կարողութիւնը։ Թշուառութիւնների անսահման և անեզր ծով էր ներկայացնում հայութիւնը Անդրկովկասում։ Եւ երբ անցան փոթորիկները, երբ վերահաստատուեց խաղաղութիւնը, աւերանքների ենթարկուած կեանքը նորից և աւելի մեծ, տենդային թափով հրապարակ հանեց խաղաղ կուլտուրական աշխատանքի տենչերը, միմիայն այդ աշխատանքի մէջ տեսնելով իր փրկութիւնը տնտեսական և բարոյական կատարեալ քայքայումից։

Բայց ի՞նչ պատրաստութիւն ունէր, ի՞նչ կարողութեան տէր էր հայ ժողովուրդը, իր կուլտուրական տենչերը իրականացնելու համար։

Խորհուրդը, 1908-ին սկսելով իր դպրոցական գործունէութիւնը, միաժամանակ մի վերին ատիճանի կարևոր

գործ կատարեց։ Իր ճիւղերի և իր յատուկ շրջիկ լիազօրի միջոցով նա մանրամասն տեղեկութիւններ հաւաքեց հայ ժողովրդի կրթական դրութեան և գոյութիւն ունեցող հայ դպրոցների մասին։—Այդ բազմակողմանի տեղեկութիւնները հարուստ և կարևոր նիւթեր են մեր ժամանակակից կուլտուրական կեանքի պատմութեան համար։ Նրանք ցոյց տուին որ աղէտը երևակայածից անգամ շատ մեծ է։ Նրանք հանդէս բերին անդրադիտութեան միապաղաղ թանձր խաւարի մէջ թաղուած մի ամբողջ ժողովուրդ։ Վերին աստիճանի հետաքրքրական է այդ կողմից Խորհրդի լիազօր Վահան Տէր-Աբրհամեանի կազմած ընդարձակ տեղեկագիրը, որ տպուած է Ընկերութեան 1908-ի ընդհանուր Տեղեկագրի մէջ [1])։ Ահա ինչ փաստեր ենք գտնում այնտեղ։

1907 թ. ընդհանուր ժողովրդագրութիւնը զիւղացի ազգաբնակութեան դրագիտութեան վերաբերմամբ տուել է մի շարք թուանշաններ, որոնք մօտաւոր ճշտութեամբ այսպիսի պատկեր են ներկայացնում.

ԲՈՒԹԱՅԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1000 տղամարդկանց գալիս է 172 դրագէտ, այսինքն 17,2%, 1000 կանանց՝ 92 կամ 9,2%։ Այս թուերը վրացի ազգաբնակութեան են վերաբերվում։ Տեսնենք հայաբնակ երկու նահանգները—Գանձակի և Երևանի։

ԳԱՆՁԱԿԻ նահանգում հազար տղամարդկանց գալիս է 50 դրագէտ, այսինքն՝ 5%, 1000 կանանց՝ 7 դրագէտ, այսինքն 0,7%։ ԵՐԵՒԱՆԻ նահանգում 1000 տղամարդկանց գալիս է 66 դրագէտ կամ 6,6%, 1000 կանանց՝ 0,6%։

«Այս երեք նահանգների դրագիտութեան միջին %-ը զիւղական ազգաբնակութեան համար կազմում է 9,6% (տղամարդ) և 3,3% (կին.)։

Այս թուերի դէմ կարելի է առարկել, թէ Գանձակի ու Երե-

---

[1]) Եր. 18—40.

ւանի գաւառների հայ աղգաբնակութեան գրագիտութեան տոկոսը անպայման շատ աւելի բարձր կարող է լինել, քանի որ թուրք աղգաբնակութիւնը նուազեցնում է այդ տոկոսը։ Բայց, համեմատելով գրեթէ ամբողջովին թրքաբնակ Դաղստանի, Զաքաթալի շրջանի և Բաքւայ նահանգի գրագիտութեան թուերի հետ, կարելի է գալ այն համոզման, որ թուրքերը կարող են նուազացնել այդ տոկոսը ոչ աւելի, քան 1%։ Մեր հարևան վրացիները մեզնից շատ առաջ են ընթացել կրթութեան ճանապարհին, իսկ թուրքերից էլ այդ խնդրում գրեթէ չենք տարբերւում։

Վերև բերած թուերը եթէ համեմատելու լինենք Ռուսաստանի և մանաւանդ եւրոպական երկրների գրագիտութեան ընդհանուր թուերի հետ, մեր առաջ կը բացուի այն վիհը, որ բաժանում է մեր երկիրը ժամանակակից քաղաքակրթութիւնից։

Ռուսաստանում	(1897 թ)	1000 մարդուն	ընկնում է	277	գրագէտ
Գերմանիայում	(1895 թ.)	»	»	980	»
Բելգիայում		»	»	998	»
Ֆրանսիայում		»	»	979	»
Միացեալ Նահանգներում		»	»	893	»

Բայց ոչ միայն գրագիտութեան %-ով ենք տարբերւում մեւս երկրներից, նոյնքան պերճախօս են նաև փաստերը կրթութեան որակի մասին, որ տալիս են մեզ համեմատական տախտակները։ Կրթութեան էութիւնը միայն կարդալ գրելու մէջ չէ։ Որչափ նպաստաւոր պայմաններում դրուած լինեն դպրոցները նիւթականի նկատմամբ, կրթութեան որակը այնքան բարձրանում է։

Եւ Տեղեկագիրը բերում է մի շարք երկիրներ և տեղեկութիւն է տալիս թէ իւրաքանչիւր երկրում մի շնչին ընդհանուր դպրոցական բիւջէից որքան է ընկնում։ Եւ մենք տեսնում ենք որ մինչդեռ միացեալ նահանգներում մի շնչին գալիս է 4 ր. 86 կոպէկ, Շվեյցարիայում՝ 2—43, Ֆրանսիայում՝ 1—66, Եապոնիայում՝ 54 կ. Ռուսաստանում 31 կոպ. մեզ մօտ, Նոր-Բայազէդի գաւառում, մի շնչին ընկնում է $7^1/_2$ կոպէկ։ Մինչդեռ Ռուսաստանում մի դպրոցը ընկնում է 2117 շնչին, նոյն Նոր-Բայազէդի գաւառում մի դպրոցն ընկնում է 9199 շնչին։

Տեղական Վարչութիւնների միջոցով հաւաքած տեղեկութիւններից երևում է հետևեալը։

Կարսի շրջանում գտնուած 91 հայ գիւղում (64,500 բնակիչ, Կարս քաղաքը չը հաշուած) կան միայն հինգ ծխական և 14 պետական դպրոցներ։ Մնացած 72 գիւղերը դուրկ են դպրոցներից։ Ընդարձակ Շիրակը, բաղկացած 25 հայ գիւղերից, ունի միայն 2 դպրոց։ Օլթիի թրքախօս շրջանում, ուր հայ լեզուն մոռացութեան է տրուել, 9 հայ գիւղեր ունեն միայն 2 դպրոց։ Բասենի 12 հայ գիւղերը—2 դպրոց։ Թալինի շրջանում եղած 16 հայ գիւղերը—կրկին միայն 2 դպրոց, իսկ Կաղզուանի շրջանում՝ և ոչ մի դպրոց։

Հին-Նախիջեւանի վիճակում գտնուած 85 գիւղերից 74 հայ գիւղեր չունեն ծխական դպրոցներ։

Նոր-Բայազէտի գաւառը, բաղկացած 58 հայ գիւղերից (102,327 բանկիչ, քաղաքը չը հաշուած), ունի միայն 8 ծխական դպրոց։ Այդ գաւառի Գեղարքունիքի մասում, 33 գիւղերից բաղկացած, կայ միայն 1 (մէկ) ծխական դպրոց, այն էլ Նոր-Բայազէտ քաղաքում, իսկ գիւղերում՝ միայն 3 պետական դպրոց։

Ալէքսանդրապօլի հոգևոր փոխանորդութեան վիճակում, այս ամենահայաշատ շրջաններից մէկում, որը ունի 130,000 հայ ազգաբնակութիւն, կայ միայն 22 ծխ. դպրոց, որոնք նոր են բացուել։ Իսկ եթէ հաւատանք Մատթէոսեան վարդապետի՝ Խորհրդիս ուղղած գրութեանը,— այս շրջանում ազգաբնակութեան 95%-ը անգրագէտ է։

Աբարանը, իր 25 զուտ հայաբնակ գիւղերով, ուր ապրում են 30,000 բնակիչ, ունի միայն 2 (երկու) դպրոց։

Գանձակի շրջանի 35 հայաբնակ գիւղերից միայն երկուսը ունեն ծխական դպրոցներ։

Գորուայ գաւառի 19 վիրախօս հայ գիւղերից միայն երեքում կան դպրոցներ։

Ախալքալաքի շրջանը, բաղկացած 87 հ. գիւղերից (76,469 հայ ազգաբնակութիւն), ունի միայն 1 ծխական դպրոց. աստեղ կան նաև 15 պետական դպրոցներ։

Իսկ եղած դպրոցները ի՞նչ դրութեան մէջ էին։ Այս հարցը լուսաբանելու համար Խորհուրդը մի շրջաբերական-նով դիմեց բոլոր ճիւղերին և դնելով 43 հարց, որոնք վերաբերվում էին դպրոցների կազմակերպութեան, կատարած գործին, խնդրեց պատասխաններ ուղարկել։ Ստա-

ցուած տեղեկութիւններից դպրոցական տեղեկագիրը հետևեալ եզրակացութիւններն էր դուրս բերում.

Դպրոցը—դա ինքը ուսուցիչն է. դպրոցում ուսման առաջադիմութեան գործում միակ մեծ դերը կատարում է լաւ պատրաստուած ուսուցիչը, սակայն մեր ուսուցիչների մի մասը բաւարար պատրաստուած չէ իր պատասխանատու պաշտօնի համար։ Կարիք է զգացւում մի յատուկ ուսուցչանոցի. իսկ առ այժմ այդ կարիքը կարող էին լրացնել մեր թեմական դպրոցները, եթէ բանային մանկավարժական մասնագիտական դասարաններ մէկ կամ երկուտարեայ դասընթացով։

Ներկայումս մեր դպրոցներում խոշոր պակասութիւն է զգացւում օրինակելի դասագրքերի։ Նաև մայրենի լեզուի առանձին դասագրքի կարիքը, յատկապէս վիրախօս և թրքախօս վայրերում գտնուած դպրոցների համար, անհրաժեշտութիւն է ներկայացնում։ Մի դովելի գործ կատարած կը լինեն այդ վայրերում պաշտօնավարած հմուտ ուսուցիչները, եթէ օր առաջ զրաղուեն այդ խնդրով և հէնց առաջիկայ ուս. թ. սկզբին հրատարակեն այդպիսի ձեռնարկներ։

Ի՞նչ կարող է անել նոյն իսկ լաւ ուսուցիչը, երբ դպրոցը զուրկ է անմենակարևոր պիտոյքներից։ Նոյն իսկ դպրոցական շէնքերը, մասնաւորապէս գիւղերում, խիստ անյարմար են պարապմունքների համար։ Ահա մի խոշոր պակասութիւն ևս, որին շատ դիւրին կերպով կարող էր բաւարարութիւն տալ հէնց տեղական շահագրգռուած համայնքը՝ ընդհանուր ոյժերով։ Հարկաւոր են միայն նախաձեռնողներ.

Մեր ժողովուրդը խիստ կարիք ունի նաև աշխատանոցների, ինչպիսին են, օրինակ, արհեստանոցներ, որ շատ վայրերում և ընկերութեանս ճիւղերի շնորհիւ, արդէն գոյութիւն ունեն։

Մի խոշոր կարիքի—գիւղատնտեսական դպրոցների—մասին ևս հոգացել է խորհուրդս։

Ահա որքան մեծ ու աղէտալի էր դպրոցական սովը մեզանում։ Ի՞նչ կարող էր անել Բարեգործական Ընկերութիւնը այդ համատարած թշուառութեան դէմ։ Խորհուրդը մասնաւոր խորհրդակցութիւններ կազմեց Ընկերութեան ձեռնհաս անդամներից։ Հարցը քննուեց և ընդհանուր ժողովներում։ Ծրագիրներ շատ եղան, քննադատութիւններ՝

ուչ պակաս։ Սակայն վերջ ի վերջոյ, թէ առձեռն միջոցները և թէ ընդհանուր դրութիւնն ի նկատի ունենալով, Խորհուրդը այսպէս ծրագրեց իր դպրոցական գործունէութիւնը. «1) Աջակցել հայոց եկեղեցական—ծխական դպրոցներին, ընկերութեանս միջոցներով այդպիսիները հիմնելով կարևոր վայրերում և նպաստելով արդէն գոյութիւն ունեցող դպրոցներին, որոնք նիւթական միջոցների պակասութեան պատճառով ենթարկուած են փակման վտանգին, 2) Նոր դպրոցներ հիմնելիս կամ եղած դպրոցներին նպաստելիս, նախապատուութիւն տալ այն վայրերին, որտեղ մեծ տարածութեան վրայ գոյութիւն չունեն դպրոցներ և կամ ուր մայրենի լեզուին մոռացութեան վտանգ է սպառնում։ 3) Որ և է վայրում դպրոց հիմնելիս, աշխատել, որ տեղական հայ հասարակութիւնը իր կարողութեան չափով մասնակցէ դպրոցական ծախքերին» [1]։

Եւ հետևելով այդ ծրագրին, Խորհուրդը 1908 թուին նպաստներ տուաց 63 եկեղեցական ծխական դպրոցների Թիֆլիսի և Երևանի թեմերում։ Ընդհանրապէս նպաստների քանակն էր 100—300 ռուբլի, բայց Տ. Աֆրիկեանի հաշուով պահուող դպրոցներից չորսը ստացան 500-ական և մէկը 900 ռուբլի։—Նպաստների ընդհանուր գումարն էր այդ տարում 15650 ռուբլի։ Այդպիսի գումար Բարեգործական Ընկերութիւնը դեռ ոչ մի տարի չէր ունեցել իր հաշիւների մէջ իբրև դպրոցական նպաստ։—

Նպաստներով գործելու եղանակը, ինչպէս ասացինք, քննադատութիւնների տեղիք էր տալիս Ընդհանուր ժողովներում։ Գտնում էին որ փոքրիկ նպաստներով չէ կարելի շօշափելի բարելաւում մտցնել դպրոցական գործի մէջ։ Աւելի լաւ էր որ Խորհուրդը իր ծախսած գումարով մի քանի կամ նոյն իսկ մի հատ օրինակելի, ապահովուած դպրոց պահէ, քան մի քանի տասնեակ դպրոցների համե-

[1]) «Տեղեկագիր» եր. 26.

մատաբար չնչին նպաստներ տայ։ Այսպիսի վիճաբանութիւններ եղան 1908 թ. սեպտեմբերի 24-ի և 1909 թ. փետրվարի 22-ի Ընդհանուր Ժողովներում, ինչպէս և ուրիշ անգամներ։ Սակայն այդ վիճաբանութիւնները որոշ եզրակացութեան չը հասցրին և գերակշռող մնաց այն հանգամանքը, որ պարզ գրագիտութեան տարածուելուն նպաստելն էլ պէտք է շատ զոհացուցիչ համարուի ներկայ հանգամանքների մէջ։

Սակայն նպաստների գործը փոխանակ հետզհետէ մեծանալու, երկրորդ տարուանից սկսեց պակասել։ 1909 թուի նախահաշուով նշանակուած էր դպրոցական նպաստ 17000 բուբլի։ Բայց Խորհուրդը կարողացաւ նպաստ տալ 54 դպրոցների (5 միդասեան և 49 երկդասեան) 12839 ր. 41 կոպէկ, ուրեմն նշանակածից 4160 ր. 59 կոպ. պակաս։ Իսկ 1910 թուին բաժանուած է նպաստ 57 դպրոցների (հաշուելով և այդ առիթով զանազան ծախսեր) 11300 բուբլի։

Այս թուանշանները ցոյց են տալիս որ Խորհուրդը սկսելով մեծ եռանդով և ընդարձակ ծրագրով դպրոցական գործունէութիւն, հասարակութեան կողմից բաւարար աջակցութիւն չը գտաւ։ Դպրոցական նպաստի տարեկան գումարը իսկապէս կազմվում է հետևեալ նուէրներից. Պետերբուրգի Հայոց եկեղեցական Խորհրդից՝ 4000 ր., Տիգրան Աֆրիկեանից 4700 բուբլի, Անանեանի և Մանթաշեանի գումարներից 2189 ր. 76 կ., Հռիփսիմէ Ադամեանից՝ 600 բուբլի, Միքայէլ Ալիբէգեանից՝ 300 բուբ., Սամսոն Յարութիւնեանից՝ 250 ր. և Գաբրիէլ Կաֆեանից՝ 150 բուբլի։ Լինում են և պատահական նուէրներ։

Դպրոցական գումարի մէջ մտնում է և Խորհրդի յատուկ լիազօր վերահսկիչի ստացած ռոճիկը։ Այս պաշտօնեայի մասին հետևեալն ենք կարդում Խորհրդի Տեղեկագրի մէջ. «Խորհուրդը ցանկանալով թէ որքան արժանի են ուշադրութեան և բաւարարութեան այն բազմաթիւ

դիմումները, որ ստացվում են հոգաբարձութիւններից, գիւղական հասարակութիւններից նպաստ նշանակելու իրենց թէ նոր բացուելիք և թէ փակման վտանգին մատնուած դպրոցներին և կարևոր համարելով, որ ուսումնական տարուայ ընթացքում հակոդութիւն լինի, որպէս զի նշանակած նպաստները ծառայեն իրենց նպատակին, մանաւանդ որ այդպիսի պահանջ դրուած է նուիրատուների մեծամասնութեան կողմից, ունեցել է յատուկ ուսումնարանական վերահսկիչ» [1]: Նա այցելում էր Ընկերութիւնից նպաստներ ստացող դպրոցները, հաւաքում էր տեղեկութիւններ դպրոցների նիւթական և ուսումնական դրութեան մասին և զեկուցում էր Խորհրդին, որ այդպիսով մօտիկուց տեղեակ էր լինում իր նպաստած գործին: Վերահսկիչի պաշտօնը 1908—1909 ուսումն. տարում վարել է Վահան Տէր-Աբրահամեանը, իսկ յաջորդ ուսումն. տարում՝ Խորհրդի փոխ-անդամ Երուանդ Լալայեանը: Այնուհետև վերացուեց այդ պաշտօնը՝ քանի որ եկեղեցական-ծխական դպրոցների մեծ մասն արդէն ունէր հոգևոր կառավարութեան կողմից նշանակուած թեմական տեսուչներ:

Խորհուրդը միայն դրամական նպաստներով չէ աշխատել օգնել դպրոցական գործին: Նա փորձեր է արել բարելաւելու և դպրոցների կացութիւնը: Այսպէս, ի նկատի ունենալով որ շատ գիւղերում յատուկ դպրոցական շինութիւններ չը կան և եղածներն էլ անյարմար են ու գործին անհամապատասխան, նա 1909-ին իր անդամ ինժիներ Լիսիցեանին կազմել տուեց միդասեան և երկդասեան դպրոցների շինութեան մի որոշ տիպի մակարդակներ և առաջարկեց դպրոցների հոգաբարձութիւններին ձրիապէս օգտուել այդ մակարդակներից:

Մի քանի դպրոցներում Խորհուրդը կազմել է և փոքրիկ դրադարաններ:

---

[1]) Տեղեկագիր 1909 թ. եր. 30:—

Իր գործունէութեան առաջին տարում Խորհուրդը լուրջ ուսումնասիրութեան առարկայ դարձրեց և հայ ժողովրդի կրթական մի այլ շատ կարևոր պահանջի վրայ։ Դա Գիւղատնտեսական ոստոնքների տարածելն է։ Խորհուրդը կարծում էր թէ այդ մեծ կարիքին կարելի է գէթ մասնակի բաւարարութիւն տալ, բաց անելով գիւղատնտեսական բաժանմունքներ մեր եկեղեցական-ծխական դպրոցներում։—

Այս հարցը մանրամասն մշակելու համար՝ Խորհուրդը կազմեց մի «Գիւղատնտեսական Մասնաժողով», որի մէջ մասնակցելու հրաւիրուեցին Թիֆլիսում ապրող հայ մասնագէտ գիւղատնտեսներ՝ Սարգիս Աբովեան, Աշոտ Աթանասեան, Տիգրան Գիւզալեան, Յակոբ Մելիք-Բախտամեան, Յովհաննէս Շահպազեան, Աւետիք Սահակեան, Յարութիւն Փիրալեան։ 1908 թ. նոյեմբերի 14-ին այդ անձինք որոշեցին կազմել Գիւղատնտեսական Մասնաժողով, նախագահութեամբ Ա. Սահակեանի և քարտուղարութեամբ Ա. Աթանասեանի, որ երեք ամսուայ ընթացքում պիտի մանրամասն ուսումնասիրէր հարցը և մշակէր ծրագիր։

Մասնաժողովը մի շարք խորհրդակցութիւններ ունեցաւ, որոնց մասնակցելու հրաւիրվում էին և Ս. Էյրանեան, Մ. Մուշայեան և Կ. Մելիք-Շահ-Նազարեան։ Իսկ Խորհրդի կողմից ներկայ էին լինում Ս. Բալաղեան և Ս. Մելքումեան։

Ահա ինչ ենք կարդում այդ Մասնաժողովի զեկուցման մէջ.

Մասնաժողովը մանրամասն քննութեան առնելով մեր ժողովրդի գիւղատնտեսական պայմանները և կարիքի չափը՝ գիւղատնտեսական ուսման և օգնութեան խնդրում, որոշեց. ա) չունենալ ծխական դպրոցներին կից գիւղատնտեսական բաժանմունքներ—իբրև արդէն շատ անգամ փորձուած մի անաջող միջոց—գիւղատնտեսական գիտութիւնը տարածելու, այլ կազմել յատուկ գիւղատնտեսական-մասնագիտական դպրոցների ծրա-

գիր։ Այս տեսակ դպրոցներից մասնաժողովը կանգ առաւ սորին կարգի դպրոցների վրայ, որպէս թէ աւելի էժան նստող և թէ աւելի գործնականի և մատչելի՝ ժողովրդի համար, ուստի և որոշեց այդ դպրոցների ծրագրով և նախահաշուով զբաղուել։ Միաժամանակ մասնաժողովը դատաւ, որ մեր երկիրը շնորհիւ իր բազմազան կլիմայական, հողային և այլ պայմանների, կարիք ունի ոչ թէ մի տիպի դպրոցի, այլ երեք—այն է՝ 1) լեռնային-կաթնատընտեսական-անասնապահական, 2) զուտ երկրագործական-պարտիզպանական (միջին սարահարթերի համար) և 3) դաշտային այգեգործական, այն պայմանով, որ դրանցից իւրաքանչիւրին կից լինին նաև այդ շրջանների համար գիւղատնտեսական այլ ճիւղերի պարապմունքներ—որպէս օժանդակ գիտութիւններ։

Իր այս որոշումից յետոյ, մասնաժողովը անցաւ ծրագիրներ և նախահաշիւներ կազմելու գործին, որը և յանձնեց իր միջից ընտրած մի յատուկ յանձնաժողովի, կազմուած հետեւեալ անձերից՝ պ. պ. Սրովեան, Մելիք-Բախտամեան, Գիւզալեան և Մուշայեան, որոնք և պատրաստելու էին ծրագիրն ու նախահաշիւը և ներկայացնելու գիւղատնտեսական մասնաժողովի քննութեանը։

Յանձնաժողովը 10—12 նիստերում բաժանելով իր մէջ աշխատանքը ըստ մասնագիտութեան, երեք ամսուայ ընթացքում կատարեց իր գործն և մարտ ամսի սկզբին ներկայացրեց գիւղատնտեսական մասնաժողովին, որը ծանօթանալով մանրամասնութեանց հետ և ենթարկելով այլ և այլ փոփոխութեան, ընդունեց ամբողջովին և Մարտ ամսի վերջին յանձնեց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին։

Ներկայացրած գիւղատնտեսական դպրոցի ծրագրի նախագիծը աչքի առաջ ունի հետեւեալ գլխաւոր կէտերը։ ա) Դպրոցներում ուսման ողջ ընթացքը լինելու է քառամեայ։ բ) Դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն աշակերտները, որոնք աւարտած կլինեն եկեղեցական-ծխական դպրոցների չորս տարուայ դասընթացը։ գ) Ուսուցման առարկաները բաժանվում են երկու կարգի. 1) ընդհանուր զարգացողական, որոնք կազմում են մեր ծխական դպրոցներում աւանդուող առարկաների անմիջական շարունակութիւնը՝ արդէն լրացուած և ամբողջացած և 2) զուտ մասնագիտական առարկաներ գիւղատնտեսութեան այն ճիւղերից, որ տիպը որ գերազասելի կը համարուի տուած դպրոցում (անասնապահական, երկրագործական և այգեգործական), որով այդ դպրոցներում աւանդուող բոլոր առարկաների թիւը հասնում է

21-ի։ գ) Դպրոցում ընդունվում են թէ գիշերօթիկ և թէ երթևեկ աշակերտներ. աշակերտների ընդհանուր թիւը հասնում է 120—150-ի։ ե) Դպրոցը տալու է գործնական կեանքի համար պատրաստուած երկրագործ-մասնագէտներ, որոնք կարող կը լինեն թէ ինքնուրոյն կերպով վարել իրենց տնտեսութիւնը և թէ ուսուցիչներ դառնալ մեր ծխական դպրոցներում։ Ուսուցչական կազմը բաղկացած է լինելու մի կառավարչից — բարձրագոյն մասնագիտական կրթութեամբ, մի ընդգէտից նոյպէս բարձրագոյն կրթութեամբ, երկու միջնակարգ ուսում ստացած մասնագէտներից (շերամապահ-մեղուաբոյծ, այգեգործ-պարտիզպան) և երեք ուսուցիչներից՝ միջնակարգ ուսմամբ (կրօն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն և այլն), որոնք բոլորն էլ ապրելու են դպրոցի շէնքի մէջ կամ նրանից ոչ հեռու (բացի կառավարչից և մասնագէտներից, որոնց՝ դպրոցում ապրելը անհրաժեշտ է)։ զ) Դպրոցներից առաջին տիպը, – կաթնատնտեսական-անասնապահականը ունենալու է 350 դեսեատին հող իր տնտեսութեան համար, երկրորդը՝ երկրագործական-պարտիզպանականը՝ 250 դեսեատին, որից 100-ը վարելահող, իսկ երրորդը՝ այգեգործական-երկրագործականը—50 դեսեատին ջրովի հող, որից 10 դեսեատինը խաղողի այգի և պտղատու պարէզ։

Դպրոցի նախահաշիւը կազմուած է այսպէս։

Տիպ I. կաթնատնտեսական-անասնապահական։

1)	Դպրոցի գլխաւոր շէնքի համար . . .	8000 ր.
2)	Սեղանատան և խոհանոցի » . . .	2000 »
3)	Ննջարանի և հիւանդանոցի » . . .	4000 »
4)	Բաղնիք, լուացք և փուռն » . . .	1000 »
5)	Բնակարաններ ուսուցչ. կազմի համար .	7000 »
6)	Անասուններ, անասնատուն և ինվենտարի համար շինութիւններ	8000 »
7)	Մեղուանոց	1200 »
8)	Թռչնատուն իր ինվենտարով	400 »
9)	Երկրագործական մեքենաներ, գործիքներ և ծածկ	2200 »
10)	Դասարանական պիտոյքներ, կահ-կարասիք և այլն	6000 »
	Ընդամենը	39,800 ր.

Տիպ II Երկրագործական-պարտիզպանական։

Սրա ծախքերը նոյն են, ինչ և տիպ I-ը, միայն թէ պակասում է անասունների թիւը՝ 4000 ռուբլով ուրեմն՝ 35,800 ր.

Տիպ III Այգեգործական-երկրագործական։

Սրա ծախքերը նոյն են, ինչ և տիպ I-ը, միայն պակասում է ինվենտարը 2000 ռուբլով, ուրեմն . . . . 37,800 ր.

Երեք դպրոցներից իւրաքանչիւրի ուսուցչական ողջ կազմը, կառավարչով մասնագէտներով և ծառաներով տարեկան կը պահանջի 9200—9500 ռուբլի վարձատրութիւն։

Դպրոցի միւս բոլոր ծախքերը—աշակերտների ուսման, կերակրի և այլն ծածկվում է դպրոցի անտեսութիւնից ստացուած եկամուտից։ Հետևապէս այդ երեք տիպի դպրոցներից որը և լինի, պահանջում է.

ա) Զրի հող (նշանակած քանակութեամբ)

բ) Միանուագ ծախք շինութիւնների և ինվենտարի վրայ . . . . . 36,000—40,000 ր.

գ) Տարեկան ծախք . . . . . 9,000—10,000 ր.

Այս զեկուցագրի մէջ որոշուած ծախսերի խոշոր գումարները արդէն ինքն ըստ ինքեան ցոյց են տալիս որ Խորհուրդը իր ունեցած միջոցներով չէր կարող բաց անել այդպիսի գիւղատնտեսական դպրոցներ։ Եւ գործը մնաց լոկ իբրև մի գեղեցիկ ծրագիր։

բ. ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1908 թ. Խորհրդի առաջին գործերից մէկը եղաւ բաց անել 1899-ի կանոնադրութեամբ փակուած գրադարան-ընթերցարանը։ Այդ հիմնարկութիւնը կազմակերպելու և կառավարելու համար Խորհուրդը առանձին գրադարանական յանձնաժողով կազմեց թէ իր և թէ Ընկերութեան անդամներից։ Յանձնաժողովի կազմը այս երեք տարիների ընթացքում յաճախակի փոփոխութիւնների է ենթարկուել։



ԴՐԱԴԱՐԱՆ - ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (Թիֆլիս). — Գրադարանի գլխաւոր սենեակը:

Իր առաջին ժողովներում յանձնաժողովը քննութեան առաւ գրադարանի կազմակերպութեան հարցը և համաբեա ամբողջութեամբ ընդունեց փակուած գրադարանի ծրագիրը, այն է՝ հաւաքել բոլոր հայերէն տպագրութիւնները, ունենալ հայագիտութեան, կովկասագիտական և առհասարակ արևելագիտութեան վերաբերեալ հրատարակութիւններ զանազան լեզուներով։ Այս հիմնական բաժինն էր։ Ժողովրդական էժան ընթերցանութեան նիւթ ապահովելու համար որոշուեց պահել և հարուստ շարժական մաս, որի մէջ պիտի պահուէին թէ հայերէն և թէ այլ լեզուներով գեղարուեստական և գիտական գրուածքներ։

Այսպիսի մի կազմակերպութեան համար գրադարանն արդէն ունէր հնի հիմնական բաժինը, որ ինչպէս գիտենք, պահուեց իբրև Ընկերութեան գոյք։ Սակայն այդ գոյքը միանգամայն անթերի չէր հասել վերաբացուող գրադարանին. անյայտացել էին շատ գրքեր, մանաւանդ եւրոպական լեզուներով հրատարակուածներից։ Թէ հիմնական մասը հարստացնելը և թէ շարժական մասը նորից կազմելը յանձնաժողովը որոշեց կատարել հետզհետէ, տարիների ընթացքում, տարեկան նախահաշիւների մէջ որոշուած գումարներով։ Բայց նոյն տարին փակուեց Թիֆլիսի Էժանագին Գրադարանը և նրա գրքերի մեծագոյն մասը, գրադարանի կարգադրիչների որոշմամբ, յանձնուեց Բարեգործական Ընկերութեան։ Այս գրքերի մէջ էր և Ընկերութեան հին գրադարանի շարժական մասը, որ ինչպէս տեսանք, ծախուած էր Էժանագին Գրադարանին 100 բուբլով։ Ընդամենը Էժանագին Գրադարանը յանձնեց Խորհրդին մօտ 7000 կտոր գիրք, բայց մեծագոյն մասամբ խիստ հնացած և քայքայուած։ Պէտք եղաւ մէկ-մէկ նայել այդ բոլոր գրքերը, միանգամայն փչացածները դուրս ձգել և նորոգել այնպիսիները, որոնք դեռ այնքան չէին քայքայուած։—

Դրանով չէր լրացվում մի բարեկարգ և մեծ գրադա-

ռանի կազմը։ Հարկաւոր էին գրամական նոր և խոշոր միջոցներ։ Խորհուրդը չունէր այդ միջոցները ուստի որոշեց դիմել մասնաւոր անձանց և նուէրներ խնդրել գրամով և թէ գրքերով։

Այդ դիմումների շնորհիւ Ընկերութիւնը 1909-ին ստացաւ Պետերբուրգում ապրող Ստեփան Գուլիշամբարեանից 1320 կտոր ռուսերէն գրքեր՝ իբրև պայմանական նուէր։ Նուիրատուն իր պայմանները որոշել է հետևեալ նամակի մէջ, որ ուղղուած է Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանին.

«Ներկայ դեկտեմբերի 10-ին ըժ. Բուդուղեանը Ձեզանից ստացել է մի հեռագիր, որով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից համաձայնութիւն էք յայտնում ընդունելու ինձանից իմ գրքերը՝ հօրս անունով Գորի քաղաքում գրադարան բանալու համար և նախ քան այդ նպատակը իրագործելը, թոյլատրում էք յիշեալ գրքերը յանձնելու Ընկերութեանդ Թիֆլիսի կենտրոնական Գրադարանին և դրանցից օգտուելու։ Ես այդ մասին հեռագրով իմ համաձայնութիւնը տուել եմ և այժմ էլ նոյնը հաստատում եմ սոյն նամակով ու խնդրում եմ ի նկատի ունենալ հետևեալ պայմանները

1) Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը օգտվում է իմ նուիրաբերութիւնից Թիֆլիսում միայն ժամանակաւորապէս և նա պէտք է իմ գրքերը ապագայում ուղարկէ Գորի, ուր կը բացուի հասարակական գրադարան՝ հօրս՝ Յովսէփ Ստեփանովիչ Գուլիշամբարեանի անունով։ Այդ բարոյական պարտաւորութիւնը պիտի յարկադրէ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը՝ ամեն կերպ փութացնել իմ ցանկութեան իրագործումը։

2) Իմ գրադարանում գտնուած այն գրքերը, որոնք նպատակայարմար կամ մատչելի չեն համարուի հասարակական գրադարանի համար, այդպիսի գրքերը Ընկերութիւնը կարող է յանձնել այլ՝ համապատասխան հիմնարկութեանց։

3) Արդէն Ձեզ ուղարկածս գրքերի հետ միասին կազմած գրացուցակի և դրա յաւելուածի օրինակով, իմ ծախքով պէտք է տպագրել տալ գրացուցակ՝ մի քանի հարիւր օրինակ և ձրիապէս յանձնել Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը։

4) Գրացուցակի մէջ լինելու է հօրս պատկերը, իսկ յառա-

ԴԻԱԳԱՐԱՆ - ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (Թիֆլիս). —Ընթերցարանի դահլիճը։

ջարանում՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը իր կողմից կը յիշատակէ, որ գրքերը նուիրաբերում եմ հօրս յիշատակին։ Ցանկալի է, որ հօրս պատկերը կախ տրուի գրադարանին կից ընթերցարանում կամ գրադարանում»։

Ընդհանուր ժողովը յունիսի 8-ի նիստում ընդունեց այդ պայմանները և Գուլիշաբարեանի գրքերը յանձնուեցին գրադարանին։

Նոյն 1909-ին Արտաշէս Էնֆիաճեանը գրադարանին նուիրեց իր հանգուցեալ հայր Համբարձում Էնֆիաճեանի գրադարանը, բաղկացած 300 կտոր հայերէն գրքերից, որոնց մէջ կան մի քանի արժէքաւոր հին տպագրութիւններ։

1910 թուին Խորհուրդը լրագրութեան միջոցով դիմեց հասարակութեան, խնդրելով նուէրներ յօգուտ գրադարանի։ Այդտեղ էլ Խորհուրդը յայտարարում էր թէ նա վճռել է Թիֆլիսի գրադարանի աւելորդ գրքերից գրադարաններ կազմել Ընկերութեան գաւառական ճիւղերի համար, ուստի շնորհակալութեամբ կընդունէ ամեն տեսակ նուիրած գրքեր։ Բայց այդ դիմումը մեծ արդիւնք չը տուեց։ Եղան մի շարք մանր նուիրատուութիւններ, որոնց մասին Խորհուրդը յայտարարում էր բոլոր հայ լրագրների մէջ։

1908 թ. կիսից մինչև 1909-ի վերջերը մի շարք նախապատրաստութիւններ եղան։ Խորհուրդը Ղարաջեան շինութեան մէջ երեք սենեակ յատկացրեց գրադարան-ընթերցարանին. երկուսը՝ գրքերի և մէկը ընթերցարանի համար [1])։ Գրքերին յատկացրած մի մեծ սենեակում շինել տուեց երկյարկանի մեծ պահարաններ, որոնք բռնում են պատերի ամբողջ երեսը։ Միաժամանակ յանձնաժողովն էլ մշակեց կանոններ և հրահանգներ գրադարան-ընթերցարանի համար։ Ահագին աշխատութիւն էր պահանջում 10 հազարից աւելի գրքերի ցուցակի կազմելը։ Այդ

---

[1]) Ընթերցարանի սենեակը ընդարձակուեց 1911-ի ձմեռը։

գործը յանձնուեց Աւետիք Արասխանեանին, որ և ընտրուեց գրադարանապետ։ Սակայն նա մի քանի ամիս աշխատելուց յետոյ, պաշտօնով տեղափոխուեց Էջմիածին։ Գրացուցակ կազմելու գործը Խորհուրդը յանձնեց Վրթանէս Փափազեանին, որի կատարած գործը անբաւարար համարուեց։ Վերջնականապէս գրացուցակ կազմեց 1910-ին գրադարանապետ հրաւիրուած Արիստակէս Փարեմուզեանը։

Մինչև այդ Խորհուրդը գրադարան-ընթերցարան բանալու թոյլտուութիւն ստացաւ Թիֆլիսի նահանգապետից։ Պատասխանատու անձ հաստատուեց Խորհրդի անդամ ա. Հեղինէ Առստամեան։

Մինչև գրադարանի գրացուցակ կազմելը, Խորհուրդը 1909-ի յուլիսի 5-ին բաց արաւ Ընթերցարանը։ Իսկ գրադարանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1910 թ. փետրվարի 7-ին։

Այդ կրթական հաստատութիւնը ժողովրդական լայն խաւերին միանգամայն դիւրամատչելի դարձնելու համար, յանձնաժողովը, Խորհրդի հաւանութեամբ, որոշեց բաժանորդագրութեան նուազագոյն չափերը։ Այսպէս, Ընթերցարան յաճախողները վճարում են ամսական 10 կոպէկ, իսկ մուտքի համար՝ 1 կոպէկ։ Գրադարանից վերցրած իւրաքանչիւր գրքի համար բաժանորդը վճարում է ամսական 15 կոպէկ և բացի դրանից, իրաւունք ունի առանց վճարի օգտուել ընթերցարանից։ Աշակերտները և առհասարակ չունևորները կարող են փոխանակ դրամով գրաւական թողնելու, ներկայացնել դպրոցական հաստատութիւնների և վստահելի անձանց գրաւոր երաշխաւորութիւնը։

Գրադարան-ընթերցարանի գործունէութիւնը 1910 թուականին ներկայացնում է հետևեալ պատկերը։

Առ 1-ն յունվարի 1911 թ. գրադարանն ունի գրքեր՝ 1) հայերէն 3400, 2) ռուսերէն 6500, 3) ֆրանսերէն և այլ լեզուներով՝ 923, ընդամենը 10823 կտոր։

1910 թ. յունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը



ԽՈՒԳԱՊԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ. — Ննջարան։

ընթերցարան յաճախել են արակ. սեռ՝ 18534. իգակ. սեռ՝ 3641 հոգի, ընդամենը 22,175։

Ընթերցարանն ստացել է 1) հայերէն՝ 22, 2) ռուսերէն՝ 16, 3) Թուրքերէն՝ 2, 4) վրացերէն՝ 1, 5) ֆրանսերէն՝ 1 պարբերական հրատարակութիւններ։

Գրադարանն ունեցել է 380 բաժանորդ։

Տրուած է կարդալու 1) գրադարանի բաժանորդներին 7848 կտոր գիրք, 2) ընթերցարանում կարդալու համար՝ 3182, ընդամենը 11030։

գ. ՈՐԲԱՆՈՑ

Խուդադեան որբանոցի կազմակերպութեան մէջ առանձնապէս աչքի ընկնող փոփոխութիւններ տեղի չեն ունեցել վերջին երեք տարիներում։ Որբերի թիւը 33-ից չը բարձրացաւ։ Թէև դիմումներ շատ են լինում, բայց Խորհուրդը անկարող է լինում նոր որբեր ընդունել։ Այդ նրան արգելում են որբանոցի շինութիւնը և միջոցների պակասութիւնը։

Իշխ. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կառավարութեան ձևը համարեա մի և նոյնն է մնում, ինչ էր նախկին շրջանում։ Խորհուրդը կառավարում է որբանոցը առանձին մի յանձնաժողովի ձեռքով։ Գլխաւոր ղեկավարութիւնը Իշխ. Մ. Թումանեանին էր պատկանում։ Նա մնաց յանձնաժողովի մէջ

և 1909-ին։ Բայց այդ թուականից իշխ. Մ. Թումանեանին գլխաւոր գեկավարութեան մէջ յաջորդում է տիկին Իւլիա Սպենդիարեան, որ նոյնպիսի սրտագին և մայրական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի խնամուող որբերը։

Որբերի դաստիարակութեան եղանակը մնում է մի և նոյնը։ Նրանք սովորում են Թիֆլիսի հայոց ծխական դպրոցներում, իսկ տանը զանազան տնային աշխատանքներ են կատարում։ 1908 թուից վճռուեց արհեստագիտութիւն էլ մտցնել որբանոցի մէջ։ Այդ մասին Խորհրդի Տեղեկագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները.

«Կար ու ձեւի համար հրաւիրուած է յատուկ վարժուհի (օր Մ. Շախկամեան), որ շաբաթական երեք անգամ մեծերի հետ պարապում է ձեռագործով, սաներն են կարում իրանց ձմերային և ամարային շրջազգեստները, գոգնոցները և սպիտակեղէնը։

«Ասեղնագործութիւն սովորեցնում էր իշխանուհի Մարիամ Թումանեանը, սկսած 1908 թ. Ապրիլից մինչև 1909 թ. վերջը։ Երեխաները սովորել են գործել ասեղնագործ ժապաւէններ՝ զանազան տեսակ նկարներով։

«Գուլբայագործութիւնը յատուկ մեքենայի վրայ սովորել են 6 հոգի, որոնք և կը սովորեցնեն հետզհետէ միւսներին։

«Թաղիքագործութիւնը սովորեցնում է կառավարչուհի օր. Բեանդարեանը, սկսած 1908 թ. մարտ ամսից [1]։ Իսկ 1910-ից մտցրուեց այն կարգը, որ չափահաս որբերը (թուով 20), բաժանուած 5 հոգուց բաղկացած խմբերի, անում են իրանց լուացքը։

Որբանոցի շինութեան մէջ կատարուել են վերանորոգութիւններ. պատրաստուած է մի յատուկ սենեակ՝ հիւանդ որբերին միւսներից առանձնացնելու համար։

Որբանոցում բժշկի պաշտօն անվարձ կատարել են բժիշկ Արտաշէս Շխեան և Խորհրդի անդամ բժ. Աղասարեան։ Հարկաւոր դէպքերում հրաւիրուել են բժշկական

---

[1]) «Տեղեկագիր» 1909, եր. 16։—

ՁԻՒ ԵՒ ԼԻԱՆԱԳԻՒՆ ԱՌՇԱՐԱՆ.— Ախալքալաքի դարձիմը։

համախորհուրդներ, որոնց մասնակցող բժշկները նոյնպէս հրաժարուել են վարձից։

Առողջական և դաստիարակչական մեծ նշանակութիւն ունի որբերին ամարանոց տանելը։ Որբերը 1909 թ. ամառը անցկացրին Դիլիջանի ամարանոցում (ուր նրանց համար վարձուածէր տեղական օրիորդաց դպրոցի ընդարձակ շէնքը). կառավարչուհու հսկողութեան տակ, նրանք յաճախ կատարում էին խմբական զբօսանքներ և ուղևորութիւններ դէպի շրջակայ նշանաւոր վայրերը և սրբատեղիները (Սևան, Հաղարծին և այլն)։ Ամարանոցային կեանքը բարերար ազդեցութիւն է արել նրանց առողջութեան վրայ [1])։

Որբանոցի վրայ Խուդադեանի գումարից ծախսուած է 1908-ին՝ 3482 ր. 38 կոպ. 1909-ին՝ 3943 ր. 1910-ին՝ 3904 ր. 62 կոպէկ։

դ. ՃԱՇԱՐԱՆ

Ճաշարանը, ինչպէս տեսանք, բացուած է բացառապէս աղքատ աշակերտների և աշակերտուհիների համար։ 1908-ին, երբ կառուցուեց Ղարաջեանի շինութիւնը, ճաշարանը տեղափոխուեց այդ շինութեան ներքին յարկը, ուր նրան յատկացուած են մի մեծ դահլիճ, մի սենեակ, երկու նախասենեակ և մի խոհանոց։

Ճաշ աշակերտներն ու աշակերտուհիները ստանում են կամ ձրի կամ էժան գներով։—Այս վերջին տեսակի ճաշերի արժէքը տալիս են գլխաւորապէս ուսումնարանական այն հաստատութիւնները, ուր սովորում են ճաշողները, կամ առանձին անհատներ։ Իրանց հաշուով ճաշողների թիւը շատ անշան է եղել միշտ։ Աղքատ աշակերտներ և աշակերտուհիներ ընդունվում են անխտիր Թիֆլիսի բոլոր ուսումնարաններից—հայոց եկեղեցական—ծխական, քաղաքային, պետական, մասնաւոր։ Ճաշողների աղքատու-

[1]) «Տեղեկագիր» 1909, եր. 15։

թիւնը Խորհուրդն ստուգում է կամ անձամբ կամ հաստատութիւնների տուած վկայականներով։—Ճաշողների թիւը եղել է 1908-ին՝ օրական 168, 1909-ին՝ 206, 1910-ին՝ 264 հոգի։

Սակայն պահանջը աւելի մեծ է։ Խորհրդին շարունակ դիմում են աղքատ աշակերտներ ու աշակերտուհիներ, խնդրելով ճաշ. բայց այդ դիմումները մնում են առանց բաւարարութիւն ստանալու, որովհետև Խորհուրդը միջոցներ չունի։ Ինչպէս տեսանք, նախընթաց Վարչութիւնը մի քանի փորձեր արաւ դրաւելու հասարակութեան ուշադրութիւնը դէպի այս դեղեցիկ և օգտակար հիմնարկութիւնը, բայց այդ ջանքերը առանձին մեծ և տևողական արդիւնք չը տուին։ Նուիրատուութիւններ լինում են, բայց շատ սահմանափակ չափով և պատահական։

Մինչդեռ օգնութեան ամենալաւ միջոցն այն կը լինէր, որ մասնաւոր մարդիկ յանձն առնէին ամեն տարի որոշ քանակութեամբ ճաշողների համար նուէրներ տալ։—Մանաւանդ որ օգնութեան այդ ձևը հեշտացրել է Խորհուրդը, հասցնելով ճաշերի վարձը նուազագոյն չափի. մինչև 1909-ի երկրորդ կէսը այդ վարձն էր 2 ր. 40 կոպէկ, իսկ այնուհետև դարձաւ 1 ր. 80 կոպ. ամսական։ Ճաշարանը գործում է ուսումնական տարուայ ընթացքում, սեպտեմբերից մինչև մայիսի վերջերը։ Մշտական նուէր 30 ճաշողների համար տալիս է միայն Ալեքսանդր Դարաջեանը։

Ճաշը սովորական օրերին մի տեսակի է, զլխաւորապէս գանազան տեսակի սալատներ, իսկ մեծ տօներին տրվում է ճաշ երկու տեսակից։ Մթերքների թարմութիւնը և լաւութիւնը առաջին պահանջն է։

1908-ին Ճաշարանը բաց է թողել 33093 ճաշ, 1909-ին՝ 49200, 1910-ին՝ 55366։ Եւ ծախս եղել է 1908-ին՝ 4980 ր. 65 կոպէկ, 1909-ին՝ 6100 ր 86 կոպէկ. 1910-ին 5524 ր. 75 կ։ Խորհրդի միջոցներից տարեկան ծախսվում է միջին թուով 2000 բուբլի։

Ճաշարանի վրայ հսկում էին 1908-ից Խորհրդի անդամներ՝ տ. Հեղինէ Առստամեան և Յակոբ Շահնազարեան։ 1909-ի կէսից հսկողն է տ. Առստամեան։ Գործել է և վեց հոգուց բաղկացած մի մանաժողով, որի կազմը փոփոխական է եղել։

Ե. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Խորհրդի նպաստները։ Խորհուրդը անձամբ, իր միջոցներից, իր կանոնադրութեան մէջ սահմանուած հրատարակչական գործունէութեան համար մի քանի ծախսեր է արել։ Նա հրատարակել է մանկավարժ Սեդրաք Մանդինեանի 1) «Նոր Այբբենարան» (աշակերտական) և 2) նոյնը ուսուցիչների համար, որոնք լոյս տեսան 1909-ին։ Երկու տարի նպաստներ տուեց «Գիւղատնտես» շաբաթաթերթին ընդամենը 450 ռուբլի, իսկ 1910-ին նաև «Նոր-Դպրոց» մանկավարժական ամսագրին 150 ր. այն պայմանով, որ այդ հրատարակութիւններից տարեկան որոշ թուով ուղարկուին Ընկերութիւնից նպաստներ ստացող դպրոցներին։

2. Հրատարակչական ֆոնդ։ 1909 թուի նոյեմբերի 12-ին, Թիֆլիսում բնակուող Հին-Նախիջևանի քաղաքացի Աւետիս Պողոսեանը ուղղում է Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանին հետևեալ նամակը։

Մի ժողովրդի վերածնութեան և յառաջադիմութեան գործում նշանաւոր գործօններից մէկը, իմ նուաստիս կարծիքով ևս, դրականութիւնն է և ընթերցանութեան տարածումն։ Մեծ համակրանքով վերաբերուելով այդ վսեմ նպատակին, ես էլ, իրը հասարակութեան մի անդամ, ինձ պարտաւոր եմ համարել ծառայութիւնս մատուցանել այդ գործին և տարիներ առաջ, երբ ես բնակւում էի Մոսկվա առևտրական գործերով, իմ վաստակից նշանակեցի 10,000 ր., որ այդ փողի տոկոսներով հրատարակուեն հայերէն գրքեր թէ օրիգինալ և թէ ընտիր գրքեր, որոնց վրայ ծախսուած է թէ տոկոսները և թէ մի մասը յիշեալ գումարի, որից այժմ մնացել է 7100 ր. պետական 4 % բէնտայով իրենց կուպոններով սկսած 1-ից դեկտեմ. 1909 թ.։ Վաղուց մտահոգութեանս առարկան է

եղել այն, որ ես յիշեալ գումարը յատկացնեմ մեր ազգային հաստատութիւններից մէկին, որ նա պահի այդ գումարը և գործադրի իմ նշանակած նպատակի համար նրա %-ը։

Լաւ ծանօթանալով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Կանոնադրութեան և գործունէութեան հետ, ես որոշեցի իմ գումարը նուիրել այդ ընկերութեանը, իբր յատուկ և անձեռնմխելի գումար, հետևեալ պայմաններով։

1) Այդ գումարը կազմում է հրատարակչական ֆոնդ և պահւում է անձեռնմխելի։

2) Նուիրած գումարի տոկոսները Ընկերութեան Խորհուրդը գործադրում է հայերէն, գլխաւորապէս ժողովրդական գրքերի վրայ թէ օրիգինալ (ինքնուրոյն) և թէ թարգմանական, որոնց վրայ պէտք է յիշուի, որ իմ հրատարակութիւնն է։

3) Այդ հրատարակութիւնների գործում պէտք է մասնակցեն հետևեալ անձինք ես՝ Պ. Պ. Ղազարոս Աղայեան, Ալէքսանդր Բալանթար, Լևոն Սարգսեան և Ռուբէն Խանազատեան։

4) Այդ հրատարակութիւնների մասին Խորհուրդը հաշիւ է տալիս ընդհանուր ժողովին, որի մէկ օրինակն էլ յանձնում է ինձ ի տեղեկութիւն։

5) Եթէ որևիցէ ժամանակ Ընկերութիւնը ինչ-ինչ պատճառներով անկարող եղաւ գրքեր հրատարակել, այդ դէպքում իմ նուիրած փողի տոկոսիքը նա գործադրում է Հին-Նախիջևան քաղաքի հայ հասարակութեան կամ նոյն գաւառի մի հայ աղքատ գիւղի կուլտուրական և կրթական կարիքների վրայ, իսկ եթէ ընկերութիւնը որևիցէ ժամանակ դադարեցնի իւր գործունէութիւնը, իմ նուիրած գումարը պէտք է յատկացնի Հին-Նախիջևանի Ս. Գէորգ եկեղեցուն, որ վերջինս պահելով գումարը անձեռնմխելի, տոկոսիքը գործադրի տեղական հայոց ծխական դպրոցի վերայ կամ մի այլ կրթական նպատակի համար։

Բացի այս գումարից, ես նուիրում եմ Բարեգործական Ընկերութեան և իմ հրատարակած և մինչև օրս չ'ծախուած բոլոր գրքերը առանձին ցուցակով՝ գումարով 3489 ր. 45 կոպ.։ Այդ գրքերի բաժանելը, ծախելը և ստացած գումարների գործադրութիւնը թողնում եմ Խորհրդիդ բարեհայեցողութեանը։ Նուիրում եմ և մի առանձին ցուցակով Կենտրոնիդ գրադարանի համար 36 գիրք հայերէն լեզուով։

Խնդրեմ իմ այս առաջարկութիւնը ներկայացնէք Խորհրդիդ և

եթէ Խորհուրդը ընդունի իմ պայմանները, թող միևնոյն ժամանակ կարգադրէ ընդունել ինձանից թէ նուիրած գումարս և թէ գրքերը։

Ընդհանուր ժողովը 1910-ի յունվարի 10-ի նիստում շնորհակալութեամբ ընդունեց Ա. Պողոսեանի այս նուէրը առաջարկած բոլոր պայմաններով և, ինչպէս տեսանք, ընտրեց Պողոսեանին Ընկերութեան պատուաւոր անդամ։

1910-ի ընթացքում Ա. Պողոսեանի հրատարակչական ֆոնդի տոկոսներով հրատարակուել է միայն մի գրքոյկ— «Զմերային Հէքիաթ, ըստ Շէքսպիրի» գործ Ղ. Աղայեանի։

3. *Աբովեան-Նազարեան ֆոնդ։* 1907-ի աշնանը Մոսկվայում յանկարծամահ եղաւ բանաստեղծ Սմբատ Շահ-Ազիզը։ Նա կտակ չէր թողել և նրա խոշոր կարողութեան տիրայան նրա մօտիկ ազգականները։

Մեր ընթերցողները արդէն գիտեն որ հանգուցեալ Շահ-Ազիզը 1899-ին յետ էր ստացել Խորհրդից «Աբովեան-Նազարեան ֆոնդի» ամբողջ գումարը՝ 10,000 ռուբլի։ Գիտեն՝ նաև, որ այդ գումարի մեծագոյն մասը բանաստեղծի գրական-մանկավարժական գործունէութեան յօբելեանի համար կազմուած յանձնաժողովի ձեռքով էր հաւաքուած յատկապէս գրական չքաւոր գործիչներին նպաստելու նպատակով։ Գիտեն, վերջապէս, թէ Շահ-Ազիզը որքան մեծ սէր ունէր դէպի այդ գործը, որքան նա փափագում էր տեսնել այդ գումարը աւելի ևս մեծացած։ Գումարը Խորհրդից յետ ստանալուց յետոյ, նա ինքն էր բաժանում տոկոսները չքաւոր և հիւանդ գրագէտներին։ Յանկարծահաս, անսպասելի մահը թոյլ չը տուեց որ նա կարգադրէ իր մօտ գտնուող գումարի վիճակը։

1908-ի հոկտեմբերին Խորհուրդը, ստանալով Շահ-Ազիզի յօբելեանական յանձնաժողովի անդամներից մէկի, Տէր-Յակոբեանի հաւատարմատարից, նոյն յօբելեանական յանձնաժողովի երկու արձանագրութիւնները, որոնց մէջ պարզուած էր թէ ինչ նպատակի է յատկացուած բանաս-

տեղծի յօբելեանական գումարը, անմիջապէս դիմեց բանաստեղծի ժառանգներին՝ Սիմէօն, Երուանդ և Սարիբէգ Շահազիզեաններին, խնդրելով ուղարկել իրան 10 հազար ր. գումարը։ Առաջին երկուսը իսկոյն պատասխանում են թէ կը կատարեն իրանց պարտականութիւնը՝ ժառանգութեան իրանց մասը ստանալուն պէս, իսկ երրորդը, Սարիբէգ Շահազիզեան, ոչինչ պատասխան չէ տալիս։

Այնուհետև, 1909 թ. փետրվարի 21-ին, Խորհուրդը ստանում է Սիմէօն Շահազիզից հետևեալ նամակը.

«Մենք եղբ. Սիմէօն, Արմենակ, Երուանդ Շահազիզեաններս և հօրեղբօր դուստր Օվսաննա Արամեանցս, յարգելով մեր հանգուցեալ անմոռանալի հորեղբօր Սմբատ Շահազիզեանի յիշատակը և միևնոյն ժամանակ մեզ բարոյապէս պարտաւոր համարելով հայ հասարակութեան առաջ, ուղարկում ենք այս նամակով Ընկերութեանդ՝ Արովեան-Նազարեան գրականական ֆոնդի, հիմնուած 1892 թ. հանգուցեալի երեսուն և հինգ ամեայ մանկավարժական և բանաստեղծական յօբելեանի առթիւ 10 հազար ռուբլու $^2/_3$ մասը, այն է՝ 6666 ր. 67 կոպ., որից վեց հազար հինգ հարիւր վաթսուն երկու ռուբլի 50 կոպ., (6562 ր. 50 կ.) արժէթղթերով (облиг. рос. гос. 5 % заiма 1906 г.), իսկ մնացած 104 ռուբ. 17 կոպ. կանխիկ դրամով, որ և խնդրում ենք Ընկ. զործ դնել իր յատուկ նպատակին։ Աւելացնում ենք որ այդ 10000 ր. գումարից կառավարութեան պահանջելիք ժառանգական տուրքը ժառանգներս արդէն վճարել ենք»։

Գումարը Սիմէօն Շահազիզեանը ներկայացրեց նոյն օրը կայացած Ընդհանուր Ժողովին, որին և բացատրութիւններ տուեց ժառանգութեան առթիւ։ Այնուհետև Խորհուրդը բազմաթիւ գիմումներ արաւ միւս ժառանգ Սարիբէգ Շահազիզեանին, որպէս զի ստանայ նրա բաժին 3333 ր. 33 կոպէկը։

Խորհուրդը նոյն իսկ Վաղարշապատի ճիւղի աջակցութիւնն էլ խնդրեց։ Բայց 1910 թ. ապրիլի 24-ի Ընդհանուր Ժողովում ստիպուած էր յայտարարել թէ «չը նայելով բազմիցս եղած յորդորներին, նոյն իսկ սպառ-

նալիքին, (Սարիբէգ Շահազիզեանը) չի կամենում յանձնել դրամը»։ – Մինչև այժմ էլ Խուհուրդը չէ կարողացել ստանալ այդ գումարը։ Եւ այդպիսով, հանգուցեալ բանաստեղծի փայփայած գաղափարը մասամբ միայն է իրագործվում շնորհիւ այն հանգամանքի, որ նրա ժառանգներից մէկը բարոյական պարտաճանաչութիւն չէ ընդունում այս հարցի մէջ։

Նոյն Ընդհանուր Ժողովին (1910 թ. ապրիլի 24) Խորհուրդը ներկայացրեց Աբովեան-Նազարեան ֆոնդի Կանոնադրութիւնը, որ կազմուած էր Խորհրդի ձեռքով և Ղ. Աղայեանի, Ա. Եղեկեանի Հ. Առաքելեանի աշխատակցութեամբ։ Ընդհանուր Ժողովը մի քանի սրբագրութիւններով հաստատեց այդ կանոնադրութիւնը [1]) և ընտրեց չորս հոգուց բաղկացած (Ղ. Աղայեան, Լէօ, Ա. Եղեկեան, Ե. Լալայեան) մի մանաժողով, որ պիտի գործադրէր գումարի տոկոսները։

1910 թ. այդ տոկոսներից նպաստ ստացաւ կարօտութեան վիճակի մէջ գտնուող մի հայ գրող։

գ) ԱՂՔԱՏԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Աղքատներին օգնելու համար Խորհուրդն սկզբից որոշեց տարեկան 2000 ռուբլի մի գումար։ Եւ այդ գումարը մենք տեսնում ենք անփոփոխ բոլոր երեք տարիների նախահաշիւների մէջ։—

Գործադրութեան եղանակը մի և նոյնը մնաց, ինչ մշակուել էր 1899-ի Կանոնադրութեան տրամադրութիւնների սոյպմամբ։ Այսպէս, 1909-ին Խորհուրդը ծախսեց նախահաշուով որոշուած 2000-ից մի քիչ պակաս [2]) —1895 ր. 64 կոպէկ հետևեալ կերպով.

---

[1]) Տես Յաւելուած։

[2]) Նախորդ տարին ծախսել էր նախահաշուից 500 ռուբլի աւել։—

«Նպաստները բաժանուած են հետևեալ կարգով.

«1) Ուսման, 2) Բժշկութեան, 3) Թաղման, 4) Ճանապարհածախս, 5) Միանուագ և 6) Բնակարանի վարձ։ Ուսման համար տուած է 49 ր. 50 կոպ., բժշկութեան՝ 112 ր. 15 կ., թաղման՝ 88 ր., հանապարհածախս՝ 176 ր. 26 կ., միանուագ՝ 606 ր. 73 կ. և բնակարանի վարձ՝ 863 ր. ընդամենը 1895 ր. 64 կոպէկ։

«Տարուայ սկզբին ամսաթոշակ ստացողների թիւը 30 էր, բայց խիստ քննելուց յետոյ հարկ համարուեց պակասացնել նրանց թիւը և հասցնել 10-ի, որով տարուայ վերջը բաժանվում էր միայն 30 ռուբ. ամսական։

«Ամսական նպաստ տանում էին 1 ռուբլուց մինչև 5 ռուբլի։ Մի քանի ընտանիքներ, 3—4 տարի շարունակ ստանում են դրամական նպաստներ։

«Միանուագ նպաստներ տրվում էր 1 ր. մինչև 25 ռուբլի, ամեն մէկին նպաստ տալուց առաջ տեղն ու տեղը քննվում էր խնդրատուի նիւթական դրութիւնը։ Զատկի և Նոր-Տարուայ տոներին տրվում էր առանձին օժանդակութիւն չքաւորներին, իւրաքանչիւրին 50 կ. մինչև 3 ռուբլի։

«Ամբողջ տարուայ մէջ Խորհրդին ներկայացուել է նպաստի համար 448 խնդիր, որոնցից 187 մերժուած է, իսկ 261-ին տրուած է բաւարարութիւն. մերժուել է Ընկերութեան միջոցների սղութեան պատճառաւ, առաւելութիւն տրվում էր որբերի տէր այրիներին։ Ամենամեծ կարիք զգացվում էր Հալաբարում և հինգերորդ քաղաքամասում։

«Այն հիւանդները, որոնք դիմում էին Խորհրդիս օգնութեանը, ուղարկվում էին Խորհրդիս անդամ բժ. Բ. Աղասարեանի մօտ, որ սիրով տալիս էր իւր խորհուրդը և հնար եղածին չափ անում հարկաւոր կարգադրութիւնը [1]։

Նպաստների գործը վարում էր առանձին Նպաստամատոյց Մանուժողովը, որ կազմուած էր Խորհրդի փոխնախագահ Յ. Սպենդիարեանից, անդամներ՝ Ա. Շահիկեանից և Ս. Մելքումեանից։ Այս թուին էլ լուրջ փորձ եղաւ բարեփոխելու աղքատախնամութեան եղանակը։

Մայիսի 17-ի Ընդհանուր Ժողովին զեկուցուեց Ընկերութեան անդամ Մակար Զմշկեանի դրաւոր առաջար-

---

[1]) Տեղեկագիր 1909 թ. եր. 12—13։—

կութիւնը, որի մէջ ցոյց էր տուած թէ ինչ հիմքերի վրայ պէտք է դնել աղքատախնամութիւնը։ Այդ առիթով փոխ-նախագահ Յ. Սպենդիարեանը յայտարարեց թէ ինքն արդէն մշակել է մի ծրագիր, որ հաւանութիւն է գտել Նպաստամատոյց Մասնաժողովից և որի հիմնական միտքն այն է՝ թէ պէտք է աղքատախնամութեան գործը բոլորովին զատել Խորհրդի գործունէութիւնից։ Դրա համար պէտք է հիմնել Թիֆլիսում աղքատախնամ թաղական հոգաբարձութիւններ, որոնց ձեռքը պիտի յանձնուի թաղի աղքատներին խնամելու ամբողջ գործը։ Բարեգործական Ընկերութեան յարաբերութիւնը այդ հիմնարկութեան հետ կը լինի այն, որ Խորհուրդը իւրաքանչիւր տարի նրա տրամադրութեան տակ կը դնի իր նախահաշուով որոշուած աղքատախնամ գումարը և թաղական հոգաբարձութիւններն էլ կը գտնուին Խորհրդի անմիջական հսկողութեան տակ։

Ընդհանուր Ժողովը համակրութեամբ ընդունեց այդ միտքը սկզբունքով։ Մնում էր որ այնուհետև Խորհուրդը մշակէր աւելի ընդարձակ և մանրամասն զեկուցում, ինչպէս նաև նոր հաստատութեան Կանոնադրութիւնը։

Այդ նպատակով Խորհուրդը կազմեց մի շարք խորհրդակցական ժողովներ Թիֆլիսի հայոց եկեղեցիների երեցփոխներից և քահանաներից, որոնք Յ. Սպենդիարեանի նախագահութեամբ պարզեցին մի շարք հարցեր՝ ապագայ աղքատախնամ հաստատութիւնների գործունէութեան վերաբերմամբ։ Յ. Սպենդիարեանը այդ նիւթերի վրայ հիմնուած մի Կանոնադրութիւն խմբագրեց, որ Խորհրդի կողմից ընդունուելուց յետոյ քննվում էր 1910 թ. մարտի 6-ի Ընդհանուր Ժողովում։

Զեկուցումը և Կանոնադրութիւնը առաջ բերին երկարատև վիճաբանութիւններ, որոնց ընդհանուր իմաստն այն էր, թէ նոր հիմնարկութիւնը չէ համապատասխանում Ընկերութեան Կանոնադրութեան։ Ուստի և Ընդհանուր Ժողովը յանձնարարեց Խորհրդին նորից վերամշակել Կա-

նոնադրութիւնը, համաձայնեցնելով Ընկերութեան Կանոնադրութեան և նորից ենթարկել Ընդհանուր Ժողովի քննութեան։

3. Սպենդիարեանը նորից նիստերի մէջ վերամշակեց այդ հարցը, նորից Կանոնադրութիւն կազմեց, որը ընդունուեց ու հաստատուեց 1910 թ. դեկտեմբերի 26-ի Ընդհանուր Ժողովից, որ և շնորհակալութիւն յայտնեց 3. Սպենդիարեանին նրա կատարած մանրակրկիտ և բարեխիղճ աշխատութեան համար։

Աղքատախնամ հոգաբարձուների Կանոնադրութիւնը [1]) դեռ գործադրութեան մէջ չէ մտել, բայց անկասկած, ապագայում մի կարևոր օրգան պիտի հանդիսանայ չքաւոր ազգաբնակութեան օգնելու գործում։

Է. ԹԻՒՐՔԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

1908 թուին նորից հրապարակ եկաւ Թիւրքահայ գաղթականների հարցը։ Բայց այս անգամ բոլորովին այլ հանգամանքների մէջ։ Յուլիս ամսին Կ. Պոլսում տեղի ունեցած անակընկալ յեղափոխութիւնը հաստատեց սահմանադրական կարգեր և Աբդիւլ-Համիդի դաժան բռնակալութեան տակ ճմլուած և դժբախտացած երկիրը ստացաւ մի շարք ազատութիւններ։ Հայ ժողովրդի զարհուրելի տառապանքներն էլ մասամբ վերջ էին ստանում։ Բացուեցին Թիւրքիայի սահմանները և կոտորածից ու գազանութիւններից փախածները կարող էին վերադառնալ իրանց հայրենիքը։

Ռուսաստանի սահմաններում դեռ ապրում էին տասնեակ հազարներով հայ գաղթականներ։ Նրանք էլ, ինչպէս և աշխարհի միւս կողմերը ցրուած գաղթականները, հէնց որ աւետիս առան Սուլթան Համիդի բռնապետու-

[1]) Տես Յաւելուած։

թեան ջախջախման մասին, սկսեցին խմբերով ուղևորուել իրանց հայրենիքը։—Եւ ահա Խորհրդի առջև դրվում էր անհրաժեշտութիւն—օգնել չունևորներին, որ գնան հայրենիք, ինչպէս մի ժամանակ, 1895—1897 թուականներին նախկին Խորհուրդը ընդունում էր նրանց, ամոքելով նրանց վիճակի սարսափները։

Միջոցներից զուրկ գաղթականներին բարեգործական միջոցներով հայրենիք վերադարձնելը ունէր և մի շատ կարևոր նշանակութիւն, որ բացատրում էր Խորհրդին Կարսի Տեղական Վարչութիւնը 1908 թ. հոկտեմբերի 19-ի իր գրութեամբ։ Ահա ինչ ենք կարդում այդտեղ.

«Ընդհանրապէս գաղթականների վերադարձի մասին Վարչութիւնս հետևեալ կարծիքին է։ Պէտք է անպայման գլխաւորապէս ուշադրութիւն դարձնել այն տանջեակ հազարաւոր հողազուրկ գաղթականութեան վրայ, որը տեղաւորուելով սահմանակից նահանգների գիւղօրայքում, մի տեսակ բեռն է դարձել առանց այն էլ սակաւահող գիւղացիութեան վզին և չգտնելով ապրուստի որ և է աղբիւր, շատ յաճախ դիմում է աններելի միջոցների, ինչպիսիք են՝ գողութիւն, թալան և այլն։ Այդ տգեղ երևոյթը բացատրելի է նրանով, որ երբ գաղթականութիւնը չունի ապրուստի որ և է միջոց, նա ստիպուած է լինում դիմելու այդպիսի աններելի միջոցների, որով թէ անբարոյականանում է ինքը և թէ տնանկացնում է տեղացի գիւղացիութեան։ Եթէ ընկերութիւնս աշխատի տեղափոխել այդ մասսային, միաժամանակ նա ծառայած կը լինի երեք նպատակի. նախ՝ կը վերադարձնի գաղթականութիւնը իր հայրենի երկրի գիրկը, երկրորդ՝ ազատելով նրան աղքատութիւնից, կը կապի հայրենի հողի և աշխատանքի հետ, և երրորդ՝ կազատէ որոշ տեղերի կիսակուշտ գիւղացիութիւնը այդ պատուհասից»։

Այս անգամ էլ հարկաւոր էին խոշոր միջոցներ՝ գաղթականական հոսանքը դէպի հայրենիք դարձնելու համար։ Եւ Խորհուրդը ջանքեր արաւ այդ նպատակով բաւարար գումարներ ստանալու։

Նախ և առաջ նա սեպտեմբերի 24-ի Ընդհա-

նուր Ժողովից թույլտուութիւն ստացաւ ծախսելու նախորդ տարիներից իր արամադրութեան տակ գտնուող 2000 ր. գումարը, որ յատուկ թիւրքահայ գաղթականներին էր պատկանում։ Բայց գաղթականական շարժումը այնքան մեծ էր և նպաստների հարցը այնքան լուրջ կերպարանք էր ընդունում, որ Խորհուրդը կազմեց մի առանձին Մասնաժողով, բաղկացած 18 հոգուց։ Խորհուրդը խնդրեց օգնութիւն Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովից, որ և վճռեց տալ 5000 ռուբլի, բայց տուեց միայն 2000 ր.։ Բացի դրանից, կազմուեց մի առանձին հանգանակիչ մասնախումբ, բաղկացած 19 հոգուց, որոնցից 17 տիկիններ և օրիորդներ էին։ Մասնախմբի նախագահն էր տ. Մարիամ Խատիսեան։ Թիֆլիսի մէջ Մասնախումբը հանգանակեց 1908-ին 3242 ր. 30 կ., իսկ 1909-ին՝ 865 ռուբլի 70 կոպէկ։

Այս անգամ էլ գաղթականներին անգնահատելի ծառայութիւններ մատուցին Ընկերութեան այն ճիւղերը, որոնք գտնվում էին սահմանագլխի վրայ—Բաթում, Կարս և Իգդիր։ Խորհուրդը այս երեք ճիւղերի միջոցով էր կարգադրում գաղթականների վերադարձի ամբողջ գործը։ Ճիւղերին նա ուղարկում էր գումարներ անհրաժեշտ ծախսերի համար։ Ճիւղերի միջոցով էլ կազմակերպեց սահմանագլխի վրայ օժանդակիչ մասնախմբեր, որոնք ամեն կերպ աջակցում էին սահման անցնող գաղթականներին։

Գաղթականական արտագաղթը մեծ հոսանքներով սկսուեց նոյն 1908-ի աշնանը, և շարունակ աճելով՝ հետեւեալ տարին աւելի ընդարձակ չափեր ընդունեց։ Այդ երկու տարին Ընկերութեան աջակցութեամբ հայրենիք վերադարձած գաղթականների թիւը հասնում էր 15 հազարի։ Ծախսուեց ընդամենը 6225 ր. 92 կոպէկ։

Առանձնապէս աչքի է ընկնում Կարսի Տեղական Վարչութեան վերին աստիճանի եռանդոտ գործունէութիւնը։ Գլխաւոր դերը նրան էր վիճակվում, որովհետև թիւրքա-

հայ գաղթականութեան մեծագոյն մասը տեղաւորուած էր Կարսի շրջանում։ Վարչութիւնը սկզբից և եթ մեծ աջակցութիւն արաւ Խորհրդին իր ցուցմունքներով և տեղեկութիւններով։ Սահմանն անցնելը կապուած էր զանազան պաշտօնական ձևականութիւնների հետ։ Կարսի Վարչութիւնը Խորհրդի աջակցութեամբ կարողացաւ հնար եղածին չափ հարթել այդ դժուարութիւնները։ 1909-ին արտագաղթը կանգ չառաւ, չը նայած Ադանայի սոսկալի ջարդերին, որոնք կարծես թէ գալիս էին ասելու որ սահմանադրական Թիւրքիան էլ դեռ ապահովութիւն չէ հայերի համար։

Կարսի ճիւղի այդ եռանդուն գործունէութեան արդիւնքն է, որ միայն նա կարողացաւ Թիւրքիա փոխադրել մօտ 10 հազար գաղթականներ։

1910 թուին հոսանքը դադարած չէր. Խորհուրդը նպաստներ տուել է այդ թուին 489 ր. 33 կոպէկ և առ 1 յունվարի 1911 թ. ունէր մնացորդ 685 ր. 83 կոպէկ։—

Նկատի առնելով որ օժանդակելու կարիքը միանգամայն չէ վերացել, այլ ընդհակառակն, դեռ շատ բազմաթիւ են հայրենիք վերադառնալ ցանկացող գաղթականներ, իսկ օգնութեան միջոցներ այլ ևս չը կան, Խորհուրդը, տեղեկանալով որ Կովկասի նահանգապետները Փոխարքայի դիւանն են ուղարկել 1896-ի դեկտեմբերի 11-ի Բարձրագոյն հրամանի հիման վրայ [1]) իրանց ստացած և ծախսած գաղթականական գումարների մնացորդները, որ այդ մնացորդների ընդհանուր գումարը 10,676 ր. 36 կ. է, 1910-ի յունվարին դիմեց Փոխարքայի Օգնական Սենատոր Է. Ա. Վատացիին, խնդրելով որ այդ գումարը յանձնուի իրան՝ հայրենիք վերադարձող գաղթականներին նպաստելու համար։

Այդ դրութեան պատասխանեց Փոխարքայի Դիւանա-

---

[1]) Տես վերև, եր. 119։

տունը մայիսին, յայտնելով թէ Սենատօր Վատացին անկարելի է համարում կատարել Խորհրդի խնդիրը, քանի որ 1896-ի հրամանով գումարը պէտք է գործադրէ երկրի իշխանութիւնը։ Բայց մի և նոյն ժամանակ, ընդունելով որ Բարեգործական Ընկերութիւնը հնարաւորութիւն ունի լաւագոյն կերպով տեղեակ լինելու թէ որքան իսկապէս կարօտ դաղթականներ կան, Դիւանատունն առաջարկում էր Խորհրդին ներկայացնել տեղեկութիւններ հայրենիք վերադառնալու ցանկութիւն ունեցող չքաւորների մասին, որպէս զի այդպիսիներին նպաստներ տրուին։

Այս յայտագրութիւնը Խորհուրդը ուղարկեց Տեղական Վարչութիւններին, որոնցից Երևանը, Իգդիրը, Արդահանը և Արմաւիրը ուղարկեցին նպաստի կարօտ դաղթականների խնդրագրեր ու ցուցակներ և ցոյց տուին թէ որքան ճանապարհածախս է հարկաւոր՝ դրանց հայրենիք ուղարկելու համար։ Այսպէս, միայն Երևանի Վարչութիւնը տալիս էր 476 անձանց ցուցակ։

Հիմնուելով այդ տեղեկութիւնների վրայ, Խորհուրդը յունիսին կրկնեց իր խնդիրքը Փոխարքայի Դիւանատան, որպէս զի կարելի լինի նպաստներ բաշխել Տեղական Վարչութիւնների միջոցով։ Սակայն Դիւանատունը կրկնեց վերոյիշեալ հաղատասխանը, աւելացնելով թէ Տեղական Վարչութիւնները պիտի իրանց տեղեկութիւնները ուղարկեն Դիւանատուն՝ տեղական նահանգապետների միջոցով։

1911-ի մայիսի 7-ին, Խորհուրդը մի խնդրագրով դիմեց Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովին։ Խնդրագիրը ներկայացրեց Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը, որին կոմսը յայտնեց իր համաձայնութիւնը և խոստացաւ կարգադրել, որ գումարը յանձնուի Ընկերութեան։

Ը. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովրդական աղէտների մի դէպք է միայն տեղի ունեցել Խորհրդի գործունէութեան ընթացքում։ 1908 թ. Ալէքսանդրօպոլում հեղեղը անագին վնասներ տուեց չքաւոր ազգաբնակութեան և մարդկային զոհեր էլ տարաւ։ Խորհուրդը խստոյն ներկայացուցիչներ ուղարկեց աղէտի տեղը՝ դրութիւնն ուսումնասիրելու համար և յատկացրեց աղէտեալներին 500 ռուբլի նպաստ։

Գիւղերում արհեստներ տարածելու համար Խորհուրդը 1909-ին ծախսել է 200 ռուբլի 40 կոպէկ։ Նոյն թուին Գօրում բաց է արել Ջուլհականոց, որի համար յատուկ նուէր 400 ռուբլի տուել է Ստեփան Գուլիշամբարեանը։ Ջուլհականոցը կառավարում էր Գօրու Տեղական Վարչութիւնը։

Ձեռնարկել է նաև գիւղական փոքրիկ դեղատներ բաց անելու և ծախսել է այդ նպատակով 1909-ին մօտ 100 ռ.։ 1910-ին նոյնչափ։ Նոյն 1910-ի նախահաշուում նշանակուած է և 100 ռուբլի «գիւղացիներին ընտիր սերմ բաժանելու»։

1909-ին 100 ռ. նպաստ տուեց գիւղատնտես Աֆրիկեանին գիւղերում դասախօսութիւններ կարդալու համար։

Թ. ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Արդէն յիշատակեցինք թէ Խորհուրդը իր սկզբնաւորութեան օրից ինչ խոշոր նուէրներ ստացաւ (Ա. Անանեան, Ա. Մանթաշեան, Տ. Աֆրիկեան, Ա. Ղարաջեան, Ա. Պողոսեան)։

Բերում ենք այստեղ այդ նուիրատուութիւններից մի քանիսի մասին (որոնք չեն յիշատակած իրանց տեղերում) մանրամասնութիւններ։

Ալէքսանդր Մանթաշեանի նամակը.

«Ստացայ պատուարժան Խորհրդից 18 յունիսի նամակը՝

Կովկասում վարժարաններ բաց անելու հարցի վերաբերեալ։ Ես արդէն գրած եմ Թիֆլիսի մեր դրասենեակը, որ 20,000 ռուբլու անուանական արժողութեամբ Кредитное Общество-ի օրլիգացիաներ գնեն և յանձնեն Խորհրդիդ, որպէս զի այդ գրամագլուխը անձեռնմխելի պահելով, տոկոսը (տարեկան 900 ռուբլի) գործ ածէ նոր բացուելիք դպրոցների համար։

«Խորապէս շնորհակալ եմ այն զգացմունքների մասին, որ պատուարժան Խորհուրդդ արտայայտում է իմ նկատմամբ, իր վերոյիշեալ գրութեամբ։

Պարիզ, 1/11 յուլիսի, 1908»։

Տիգրան Աֆրիկեանի նամակը.

«Իմ որդի Խաչատուրի միջոցով յայտնած էի Խորհրդիդ, որ ես ցանկանում եմ յանձնել Ձեզ գումարներն՝ իմ նպաստով բացուած գիւղական ուսումնարանների, նոյնպէս և զանազան հիմնարկութիւնների, այս 1908 թ. սեպտեմբերից, որի մասին յայտնած էիք Ձեր համաձայնութիւնը, ուստի ուղարկում եմ ցուցակը.

Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութեանը՝ տարեկան 1000 ր., Երևանի թեմական դպրոցին՝ տարեկան 1000 ր., Երևանի Մարիամեան Օրիորդաց դպրոցին՝ տարեկան 200 ր., Զիրուխլի գիւղի ուսումնարանին տարեկան 500 ր., Ներքին Ախտայի՝ 500 ր։ Ոնդամալի՝ 300 ր., Կարբիի՝ 900 ր., Բազարջուի՝ 500 ր., Նորաշէնի (Շօրագալ)՝ 300 ր., Ուլիա-Նորաշէնի (Շարուր Դարալագեազ)՝ 300 ր., Նորագուղի՝ 300 ր., Ներքին Գեօզալդարայի՝ 300 ր., Օրդակլուի՝ 500 ր., Ցամաքաբերդի՝ 300 ր,, ընդամենը 6,900 ր.։

1 Մարտի, 1908 թ.
Թիֆլիս»

Աղէքսանդր Ղարաջեանի նամակը.

Մեծարգոյ պարոն Սամսոն Յարութիւնեան։

«Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան վերակազմուելը և նրա նոր մշակած կանոնադրութիւնն իր համակրելի կըբթական, կուլտուրական և բարեգործական նպատակներով, ինձ

վրայ ևս, իբրև հայ հասարակութեան մի անդամի, բարոյական պարտականութիւն է դնում օժանդակել այդ ընկերութեանը, որպէսզի նա յաջողութեամբ իրագործի իր ձգտումները, այն է՝ բարեւաւելու մեր հասարակութեան աղքատ մասի դրութիւնը, տարածելով նրա մէջ լուսաւորութիւն և հոգալու—թեթեւացնել նրա թշուառութիւնը տնտեսական կողմից։

«Ես իմանալով, որ ընկերութիւնը որշել է կառուցանել նոր շինութիւն իր կարիքների համար և որի համար նախահաշուով հարկաւոր է մօտ տասն և հինգ հազար ռուբլի (15000), խնդրում եմ Խորհրդի միջոցով առաջարկել ընդհանուր ժողովին ընդունել ինձանից 15,000 ր. նուէր՝ յատկապէս շինութեան համար։ Շինութիւնը լինելով իբր լիակատար սեպհականութիւն ընկերութեան, վերջինս շահեցնում է ըստ իր բարեհայեցողութեան՝ առանց սահմանափակումների։ Եւ եթէ երբևիցէ ընկերութիւնը փակուի, շինութիւնը, ընկերութեան ընդհանուր ժողովի որոշումով, յատկացնում է մի այլ աղգօգուտ նպատակի կամ հաստատութեան։ Այդպիսի դէպքում (այսինքն՝ փակուելու դէպքում) ընկերութիւնը իրաւունք ունի ծախել շինութիւնը և գումարը գործադրել նոյն նպատակների համար։ 20 մարտի, 1908 թ.»։

Ինչպէս գիտենք, շինութիւնը նստեց 22,187 ր. 48 կ. և այդ ամբողջ գումարը տուեց Ա. Ղարաջեանը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ աւ. քահ. ՏԷՐ-ԳԱԼՍՏԵԱՆՑ

1908 թ. յունիսի 20-ին Խորհուրդն ստացաւ հետեւեալ գրութիւնը.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Ախալքալակ գիւղի (Գօրուայ գաւառի) աւագ քահանայ Տէր-Յովհաննէս Տէր-Գալստեանից

յայտարարութիւն

Յիշեալ Ախալքալակ գիւղում ես ունիմ սեպհական երկու քարէ տուն և մէկ այգի։ Գտնուելով ծերութեան մէջ, ես ցանկանում

եմ իմ կալուածները նուիրել Բարեգործական Ընկերութեանդ, հետեւեալ պայմաններով. ա) Այդ կալուածները պէտք է շահագործուեն Ախալքալակ գիւղի հայ հասարակութեան կարիքների համար, գլխաւորապէս կրթական կարիքների։ բ) Կալուածներից նոր մեծ տունը պէտք է ծառայէ դպրոցի շինութեան համար և անցնում է ընկերութեանդ անմիջապէս, իսկ հին տունը և այգին անցնում են ընկերութեանդ՝ իմ մահից յետոյ։ Այս կալուածները յանձնում եմ օրինական թղթով (ընծայաբերական կամ կուպչիով)։ Խնդրում եմ Խորհրդից տալ ինձ գրաւոր պատասխան՝ այս յայտարարութեանս մասին։ 20 յունիսի, 1908 թ. Թիֆլիս։

Ց. աւ. քահանայ ՏԷՐ-ԳԱԼՍՏԵԱՆ

Աւելացնում եմ հետեւեալը ևս։ Իցէ թէ Կ. Հ. Բարեգործական ընկերութիւնը վակուֆ կամ անկարող լինի, իրաւունքի տեսակէտից, պահպանել Ախալքալակ գիւղում մի որևիցէ աղքատ հասարակական հիմնարկութիւն, այդ դէպքում կալուածները անցնում են տեղական լուսաւորչական ս. Կարապետ եկեղեցու սեպհականութիւն։

Յովհաննէս աւ. քահանայ Տէր-Գալստեան

Տ. Յովհաննէս աւ. քահանայի նուիրած կալուածները գնահատուած են 20,000 ռուբլի։ Նոր շինութիւնը, որ կառուցուածէ յատկապէս դպրոցի համար, յանձնուեց Խորհրդին, որ տուեց այդ շինութիւնը վարձով գիւղական հիւանդանոցին (տարեկան 500 ռ. վճարով)։ Խորհուրդը մասնաւոր նպաստներ տուեց նուիրատու քահանային՝ ապրուստի համար։

Իշխ. ՍՈՓԻԱ ԱՐՂՈՒԹԵԱՆ

1908 թուի դեկտեմբերի 12-ին իշխանուհի տ. Սոփիա Արղութեան-Երկայնաբազուկ մի նամակ ուղղելով Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանին, մանրամաս նկարագրում էր իր արած ջանքերը՝ Սանահին գիւղում դպրոց հիմնելու մասին։ Դպրոցը իշխանուհին բացել էր, այնուհետև պէտք էր հոգս տանել նրա համար շինութիւն կառուցանելու և առհասարակ նրա գոյութիւնը ապահովելու մասին։ Այդ բանը նա ծրագրում է գլուխ բերել Արղութեան իշխանական տոհմի ընդհանուր աջակցութեամբ։ Թէ իր միջոցներով, թէ միւս տոհմակիցների օժանդակութեամբ և թէ գիւղացիների օգնութեամբ սկսվում է շինութեան կառուցումը, որ սակայն չէ աւարտվում։ Իսկ դպրոցի պահպանութեան գործը պէտք է Արղութեանների տուած միջոցներով ապահովուի և հէնց այդ պատճառով էլ դպրոցը պիտի կոչուի Արղութեան։

Իշխ. Ս. ԱՐՂՈՒԹԵԱՆ

Այդ իշխանուհի Սոփիա Արղութեանը անկարող լինելով անձամբ տանել դպրոցի պահպանութեան գործը, խնդրում էր որ Ընկերութիւնը յանձն առնի այն՝ հետևեալ պայմաններով.

1) Ինձ պատկանող այն բոլոր հողերը, որոնք գտնվում են Բորչալուի գաւառի Սանահին գիւղում և որոնք նշանակած են

երկու մակարդակի վրայ (планъ), ես նուիրում եմ որպէս սեփականութիւն՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան։ Ընկերութեան իրաւասութեանն է յանձնվում միաժամանակ նաև այն երկյարկանի քարեայ տունը, որ Սանահնում կառուցում եմ իմ գետնի վրայ և որը յատկացրած է դպրոցի և արհեստանոցի համար ու աւարտելու է իմ և Արղութեան Երկայնաբազուկ իշխանների այլ միջոցներով։

2) Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ընդունելով իմ նուիրաբերած հողերը և երկյարկանի տունը և դրանց հսկողութիւնն ու շահագործումը, պարտաւոր է այդ շէնքը ծառայացնել միայն Սանահնի հայոց դպրոցի համար, իսկ հողերից ստացուած եկամուտը յատկացնել նոյն դպրոցի պահպանման գործին։

3) Եթէ երբ և իցէ Ընկերութիւնը դադարէ գործելուց և կամ երբ նա հնարաւորութիւն չի ունենալ դպրոցը պահպանելու կամ դրան նպաստելու, այդ դէպքում Ընկերութիւնը պարտաւոր է յիշեալ բոլոր հողերը և շէնքը յանձնելու ի սեպհականութիւն Սանահնի գիւղի հասարակութեան, կրթական նպատակների համար շահագործելու։

4) Ամեն ամառ, յիշեալ շէնքում մի կամ երկու սենեակից օգտուելու իրաւունքը ես ինձ եմ վերապահում։

5) Դպրոցի ուսումնական մասի, նոյնպէս և արհեստանոցի կառավարութեան հարցերում ես պէտք է մասնակցեմ՝ ունենալով վճռական ձայնի իրաւունք։

6) Դպրոցը, արհեստանոցի հետ միասին, պէտք է կոչուի Արղութեան—Երկայնաբազուկ իշխանների անունով. ես իմ կողմից պարտաւորուում եմ ա) Ընկերութեան Խորհրդի անդամների աջակցութեամբ նուէրներ հաւաքելու Արղութեան—Երկայնաբազուկ իշխաններից՝ շինութիւնը աւարտելու և հարկաւոր կահ կարասի գնելու համար։ բ) Ամեն տարի պարբերաբար, պարտաւորվում եմ վճարել տարեկան 300 բուբլի՝ ուսուցչուհուն ռոճիկ. գ) պարտաւորուում եմ իմ միջոցներից հոգալ դպրոցի նաև դասական պիտոյքները։

Ընդհանուր ժողովը 1909-ի Յունիսի 8-ի նիստում լսելով Խորհրդի զեկուցումը իշխանուհի Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի այս նուիրաբերութեան մասին, շնորհակալութեամբ ընդունեց այն։

Ներկայումս այդ գործը գտնվում է այսպիսի դրութեան մէջ։ Իշխանուհի Ս. Արղութեան յանձնել է Խորհրդին իր նուիրած հողերի օրինաւոր կերպով վաւերացրած ընծայագիրը, որ կազմուած է նրա մօր՝ Իշխանուհի Վարվառէ Արղութեան-Երկայնաբազուկի ձեռքով, որովհետև հողերի վաւերաթղթերը նրա անունով են։ Ընծայուած անշարժ կալուածը բաղկացած է մի դպրոցական մեծ շինութիւնից և նրա մօտ անտառ ու հող։ Բոլոր կալուածքը մօտ 32 $^1/_2$ դեսեատին է։

Մօտաւորապէս արժէքն է 10—13 հազար ռուբլի։

Իշխ. ԹԱՐԽԱՆ ԽՕՋԱՄԻՆԱՍԵԱՆ

1910 թ. դեկտեմբերի 10-ին հանգուցեալ Իշխան Խօջամինասեանի ժառանգների հաւատարմատար ինժիներ Գրիգոր Զ. Եարալեանը տուեց Խորհրդին հետևեալ յայտարարութիւնը.

Իշխ. Թ. ԽՕՋԱՄԻՆԱՍԵԱՆ

«Հանգուցեալ Իշխան Թարխան Աղամալովիչ Խօջամինասեանը թողել է մի կտակ՝ հաստատուած Թիֆլիսի Շրջանային դատարանում 20-ին մայիսի 1908 թ., որի մէջ ի միջի այլոց, կտակատարը կարգադրել է, որ իր թողած ժառանգութիւնից 15,000 ռ. գումարի մի դրամագլուխ մուծէր բանկային հիմնարկութիւնը իբրև անձեռնմխելի դրամագլուխ մի քանի չքաւոր երիտասարդ տղաների և օրիորդների կըրթութեան համար, որոնք պէտք է համարուեն ու կոչուեն թոշակառուներ՝ տղաները—Իշխան Թարխան Աղամալովիչ Խօջամինաս-

եանի անունից, իսկ օրիորդները—նրա կնոջ՝ Սոֆիա Սոլոմոնովնա Խոջամինասեանի անունից։

«Ժառանգուհիները ցանկանալով իրագործել կտակարարի ցանկութիւնը այնպիսի պայմաններում, որ ապահոված լինի ոչ միայն նրանց կենդանութեան օրոք, այլև մահից յետոյ, որոշեցին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը ներկայացնել Թիֆլիսի Վարկային Ընկերութեան 15,000 ր. օրլիգացիաներ կուպոններով՝ սկսած 1-ից յունուարի 1911 թ. այն պայմանով, որ Ընկերութիւնը պահի պետական բանկում իբր անձեռնմխելի դրամագլուխ հանգուցեալ Թարխան Աղամալովիչ Խոջամինասեանի անունից. քանի կենդանի են ժառանգուհիները և փեսաները, թոշակառուներին ընտրում են իրանք, իսկ ընկերութեան Խորհուրդը վճարում է թոշակները և հսկողութիւն է ունենում թոշակառուների վրայ։

«Ժառանգներից և փեսաներից յետոյ յիշեալ դրամագլխի կարգադրութիւնն անցնում է լիովին ընկերութեան Խորհրդին ի միջի այլոց և թոշակառուների ընտրութեան իրաւունքը, միայն գրամագլուխը կրկին պէտք է մնայ անձեռնմխելի։

«Խորհուրդը հանգուցեալ իշխան Խոջամինասեանի գրամագլխի, իբր յատուկ գումարի՝ հաշիւը պահում է իր մատեաններում առանձին և տարեկան տեղեկագրի մէջ ներկայացնում է այդ հաշիւը Ընդհանուր ժողովին։

«Խնդրում եմ այս իմ գրութեան պատասխանը տալ գրաւոր։

ԴՐ. ԵԱՐԱԼԵԱՆ.

Դեկտեմբերի 10-ին 1910 թ.»։

Ընդհանուր ժողովը 1910 թ. դեկտեմբերի 26-ի նիստում շնորհակալութեամբ ընդունեց այդ նուիրատուութիւնը։ Գումարը յանձնուած է Խորհրդին և գործադրութիւնը կատարվում է առաջադրած պայմաններով։ Ներկայումս այդ գումարի տոկոսներով սովորում են Խոջամինասեանի ժառանգների ընտրած երեք աղջիկ Թիֆլիսի I իգական գիմնազիայում և երեք տղայ՝ Թիֆլիսի I և V գիմնազիաներում։

ԵԳՈՐ ԶՕՀՐԱԲԵԱՆ

Թիֆլիսի վաճառական Եգոր Գերասիմիչ Զօհրաբեանը կտակել էր ի միջի այլ ընկերութիւնների՝ նաև Կ. Հ. Բ. Ընկերութեան 5000 ռուբլի, իբրև պարգ նուէր, առանց որ և է պայման դնելու։ Խորհուրդն 1910 թուին այդ գումարն ստացաւ և արձանագրեց իբրև սովորական նուէր, բայց կամենալով պահպանել հանգուցեալ բարերարի յիշատակը, որոշեց ամեն տարի՝ տարեկան նպաստ 250 ռուբլի յատկացնել մի գիւղական դպրոցի, հանգուցեալի յիշատակին։ Նուիրուած գումարն էր 5000 ռ. որից ժառանգական պետական հարկ 199 ռ. 30 կոպէկ զեղջուելով՝ ընկերութիւն դանձել է ընդամենը 4800 ռ. 70 կ.։ Ընկերութեան 1910 թ. դեկտեմբերի 22-ի ընդհանուր ժողովը հաստատեց այս որոշումը։

Ժ. ԴԻՒԱՆ ԵՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ

Խորհրդի տարեկան բիւջէի մէջ խոշոր գումար են կազմում զանազան դիւանական ծախսերը. 1910-ի նախահաշուով այդ ծախսերը հասնում են 3000 ռուբլու։ Այս թուի մէջ են դրասենեակի ծառայողների, լուսաւորութեան վառելիքի, տպարանական, պոստ-հեռագրական և այլ ծախսերը։ Գումարը ցոյց է տալիս թէ որքան ընդարձակ չափերի է հասել Խորհրդի գործունէութիւնը։ Համեմատութեան համար յիշատակենք որ առաջին շրջանի սկզբներում Խորհրդի դիւանական ծախսերն էին 7—8 հարիւր ռուբլի։

IV

ՃԻՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ [1]։

Ընկերութեան գաւառական բաժանմունքները այս երկրորդ շրջանում աւելի քան առաջին շրջանում կարևոր ծառայութիւններ են մատուցել ընդհանուր մարդասիրական կուլտուրական գործին։ Եւ այս հասկանալի է, երբ նկատի առնենք որ առաջին շրջանում Խորհրդին աջակցում էին 18 ճիւղեր (1891-ի կառավարչական կարգադրութիւնը կանգնեցրեց ճիւղերի տարածումը), մինչդեռ երկրորդ շրջանին Խորհուրդն ունի 45 ճիւղերի աջակցութիւնը։

Բաւական է վերցնել Ընկերութեան առաջնակարգ նպատակը — դպրոցական գործունէութիւնը։ Խորհուրդը իր տարեկան նպաստների խոշոր գումարները բաժանում է դպրոցներին տեղական ճիւղերի միջոցով։ Եւ եթէ աւելացնենք դրա վրայ և ճիւղերի ինքնուրոյն դպրոցական գործունէութիւնը, այն ժամանակ կը տեսնենք, որ Ընկերութեան մարմինների համախմբուած գործակցութիւնը իսկ որ գնահատելի մի երևոյթ է մեր մտաւոր զարգացման ասպարէզում։—

1908-ի Կանոնադրութիւնը լինելով իր սկզբունքների մէջ կրկնութիւն 1881-ի Կանոնադրութեան, նոյն կենտրոնացման սիստեմն է իրագործել Ընկերութեան ընդհանուր կազմակերպութեան մէջ։ Այսպէս հին Կանոնադրու-

---

[1]) Ի նկատի ունենալով որ ճիւղերի գործունէութիւնը այս երկրորդ շրջանում շատ կարճատև ժամանակ է ընդգրկում (2½—2 տարի), այլ և այն, որ այս տողերը գրելու միջոցին բոլոր ճիւղերը չեն ուղարկել Խորհրդին 1910 թուականի հաշիւները, այնպէս որ այժմ շատերի 1½—1 տարուայ գործունէութիւնը միայն, մենք այստեղ դնում ենք ճիւղերի համառօտ տեսութիւնը միայն։—

թեան § 43-ը, որ վերաբերում էր Տեղական Վարչութիւն-ներին պատկանող յատուկ և անձեռնմխելի գումարներին և որ, ինչպէս տեսանք, գոյութակղութեան քար է եղել Տեղական Վարչութիւնների համար, նոր Կանոնադրութեամբ վերահաստատվում էր (§ 65) դեռ աւելի սահմանափակող տրամադրութեամբ։

Նոր Կանոնադրութեան գործադրութիւնը դեռ համեմատաբար շատ կարճ ժամանակ ունի իր ետևում, ուստի մինչև այժմ Խորհրդի և Վարչութիւնների յարաբերութիւնները դեռ չեն ցոյց տալիս թէ ինչ հետևանքներ է առաջացնում այդ կենտրոնացումը։

Դնում ենք ճիւղերի ցուցակը՝ բացման ժամանակագրական կարգով [1]։

1908

1. ԳԻԼԻՋԱՆ (Բացուած փետրվարի 28)։ Անդամներ՝ 30։ Մուտք և ելք՝ 319 ր. 96 կոպէկ։ Նախագահ՝ Գ. Ասլանեան, քարտուղար՝ Վ. Մատինեան, անդամներ՝ Ա. Անանեան, Ստ. Դաւթեան։

Նպաստել է դպրոցներին, աշակերտներին, տառապեալներին։ Կար ու ձևի արհեստանոց է բացել, 23 աշակերտուհիներով։

2. ՂԱՋԱԽ (Մարտի 3-ին)։ Անդամներ՝ 25։ Մուտք և ելք 356 ռուբլի։ Նախագահ՝ Յովհաննէս Տէր-Իսրայէլեան, դանձապահ՝ Գերասիմ Բաղրամեան, քարտուղար՝ Զաքարիա քահանայ Ալբրեսեանց, անդամներ՝ Կոստանդին Բաղդասարեան, Յովհաննէս Զաղէթեան։

---

[1] Տեղեկութիւնները անդամների թուի և գումարների մասին վերաբերում են 1909 թ.

Նպաստել է դպրոցին, աշակերտներին։ Ծրագրել է բաց անել գրադարան-ընթերցարան։

Բացել է մանկական գրադարան։

3. ՇԻՐՇԻ (Մարտի 6-ին)։ Անդամներ՝ մշտական՝ 1, գործադիր՝ 97։ Մուտք 7627 ր. 14 կոպէկ (որից 2526 ր. 49 կոպ. յատուկ և հասարակ նուէրներ)։ Ելք՝ 2133 ր., մնացորդ՝ 5494 ր. 14 կոպէկ։ Նախագահ՝ Մկրտիչ Ղոնդաղսաղեան, գանձապահ՝ Գեղէոն Տէր-Մինասեան, քարտուղար՝ Թէոդորոս Տէր-Մինասեան, անդամներ՝ բժ. Խաչատուր Բահաթրեան, Մովսէս Իւղբաշեան։

Իր գործողութիւնը սկսելուն պէս՝ Վարչութեան առաջին հոգն է եղել բաց անել Ագուլեաց եկեղեցու բակում ծխական միդասեան երկսեռ դպրոց ամենաչքաւոր և որբ երեխաների համար (առաջին տարին 42, որոնցից 19 աղջիկ)։ Վարչութիւնը հայթհայթել է ձրի ուսում, դասական պիտոյքներ և հագուստ։ Ծախս, առաջին տարին 770 ր., երկրորդ տարին՝ 667 բուբլի։ Երկրորդ գործը եղել է՝ նախկին փակուած ճիւղի պարծանքը կազմող Գրադարանը քաղաքային վարչութիւնից յետ ստանալը, որ և յաջողվում է նոյն թուի (1908) նոյեմբերի 1-ին։ Կարճ ժամանակամիջոցում կարգի է բերվում անուշադիր թողնուած Գրադարան-Ընթերցարանը և յաճախողները սկսում են կանոնաւոր օգտուել նրանից» [1])։ Ծախս Գրադարան-Ընթերցարանի (1909) 876 ր. 22 կոպ.։ Նպաստել է անգործ մնացած արհեստաւորներին և տառապեալներին (295 ր. 3 կոպէկ)։ Պահել է թոշակաւոր աշակերտներ տեղական դպրոցներում։ Ծրագրել է բաց անել «Աշխատանքի տուն»։

4. ՍՂՆԱԽ (Մարտ 16-ին)։ Անդամներ՝ 30։ Մուտք 138 բուբլի, ելք՝ (անյայտ)։ Նախագահ՝ Յարութիւն Եղիազարեան, քարտուղար-գանձապահ՝ Արշակ Ղուլիջանեան,

---

[1]) Տեղեկագիր 1908, եր. 63—64։

անդամներ՝ Նիկողայոս Ամիրխանեան, Անանա Սարգսեան, Սարգիս Յովակիմեան։

Նպաստել է դպրոցին, աշակերտներին, տառապեալներին։ 1910 թուին գործունէութիւն չէ ունեցել։ Վերակազմուել է 1911-ին։

5. ՆԻՓ գիւղ, Նուխու գաւառ (Մարտի 16-ին)։ Նախագահ՝ Վաղարշակ քահանայ Ճօտինեան, քարտուղար՝ Մարտիրոս Շիրուանեան, գանձապահ՝ Արշակ Աղաջանեան, անդամներ՝ Սողոմոն Փալչեան, Յարութիւն Ղարաջեան։

Դրամական գործողութիւն չէ ունեցել. սկզբից և եթ անյաջող և անակընկալ հանգամանքներ են ծագել, որոնց պատճառով ճիւղը փակուել է 1909 թ. վերջերում։

6. ԼԱԳՈԴԱՂ գիւղ Թիֆլիսի նահ. (Մարտի 23-ին)։ անդամներ՝ 23։ Մուտք և ելք՝ 91 ր. 13 կոպէկ։ Նախագահ՝ Բագրատ քահանայ Սուքիասեան, քարտուղար՝ Յակոբ Գրիգորեան, անդամներ՝ Եղիսաբէթ Թումեան, Ասատուր Բալա Հայրումեան, Մինաս Լեկրեան։

Բաց է արել գրադարան-ընթերցարան, ծախսելով 37 ր. 68 կոպէկ, նպաստել է ուսումնարանին (22 ռուբ.), չքաւորներին (12 ր. 50 կ.)։ Հիմնել է Մանր Վարկի Ընկերութիւն, 45 հոգու մասնակցութեամբ և 6000 ռուբլի դրամագլխով։ Ձեռնարկել է ծխախոտի մշակութեան։

7. ՆՈՐ ԲԱՅԱԶԷՏ (Մարտի 23-ին)։ Անդամներ՝ 23։ Մուտք և ելք՝ 261 ր. 2 կոպէկ։ Նախագահ՝ Ստեփան Բաղիկեան, քարտուղար՝ Լևոն Պետրոսեան, անդամներ՝ Հ. Տ. Միքայէլեան, Պետրոս Զալդրեան, Գէորգ Սինանեան։

Բացել է գրադարան-ընթերցարան։ Կազմակերպել է երեկոյեան դասընթացներ՝ հասակաւորների համար, նպաստել է ուսումնառու աշակերտներին։ 1910-ին փակման աստիճանին էր հասել։

8. ԱՐԳԱՀԱՆ (Մարտի 30-ին)։ Անդամներ՝ 26։

Մուտք և ելք՝ 662 ր. 93 կոպէկ։ Նախագահ՝ Տիգրան Տէր-Միքայէլեան, քարտուղար Էմանուէլ քահանայ Դէմիրջողլեան, անդամներ՝ Յակոբ Տէր-Բաղդասարեան, Յարութիւն Սերովբեան։

Նպաստել է տեղական դպրոցին։

9. ԱԽԱԼՔԱԼԱՔ (Մարտի 31-ին)։ Անդամներ՝ 55։ Մուտք 2700 ր. ելք՝ 1520 ր. 20 կոպէկ։ Մնացորդ՝ 1180 ր. 34 կոպէկ։ Նախագահ՝ Խաչատուր Կարապետեան, քարտուղար՝ Յովակիմ Շէխոյեան, գանձապահ՝ Կարապետ Զրպետեան, անդամներ՝ Յովհաննէս Սահաթճեան, Յակոբ Տօնականեան, Սարգիս Սլեկեանց և Աբիսողոմ Տէր-Յակովբեանց։

Վարչութիւնը աչքի ընկնող և իրապէս արդիւնաւոր միջոցներ է ձեռք առել իր դրամական մուտքը աւելացնելու համար և սահմանել է նուէրներ հաւաքել անուանակոչութիւնների, պսակների, թաղումների ժամանակ։ Ստացել է նախկին ճիւղի պահած արհեստանոցը իր գործուածքներով, բայց անձեռնտաու է համարել պահել այդ հիմնարկութիւնը։ ուստի ծախել է։ «Ի նկատի ունենալով դաւառիս կլիմայական պայմանները, յարմար համարեց դաւառումս տարածել կանեփի և վուշի մշակութիւն, նախօրօք ինքը ցանելով ցուցադաշտեր ի ցոյց ժողովրդեան։ Սորա համար որոշեց հիմնել մի ակցիօներական ընկերութիւն, որ բաժնեատէրերից մինը պիտի լինի և Բարեգործական Ընկերութիւնը... Դէպի դպրոցական խնդիրը լաբջօրէն վերաբերուեց Վարչութիւնս և նրա ներկայացուցիչները երեք անդամ առիթ ունեցան շրջելու. դաւառիս զանազան շրջանները, ուսումնասիրելով ժողովրդի տնտեսական և կրթական դրութիւնը» [1]։

Նպաստել է դպրոցներին, կազմելով նրանց կից աշա-

---

[1]) Տեղեկագիր 1908 թ. եր. 69։

կերտական գրադարաններ, ուսումնառու աշակերտներին և աշակերտուհիներին, չքաւորներին։

Բաց է արել կար ու ձևի դպրոց 30 աշակերտուհիներով։

10. ԲԱԹՈՒՄ (Ապրիլի 3-ին)։ Անդամներ՝ 143 (1908-ին)։ Մուտք 1655 ր. 2 կոպ., ելք՝ 866 ր. 83 կոպ.։ Նախագահ՝ Գ. Մելիք-Շահնազարեան, քարտուղար՝ Յ. Բալայեան, գանձապահ՝ Ա. Չիլինգարեան, անդամներ՝ Յ. Խուդադեան, Պ. Զաքարեան։

Նպաստել է դպրոցներին, որոնցից մի քանիսին ազատել է փակման վտանգից։ Խորհրդից ստացած իր հաւաքած գումարներից նպաստ է տուել Թիւրքահայ գաղթականներին հայրենիք վերադառնալու։—

11. ԳԱՆՁԱԿ (Ապրիլի 3-ին)։ Անդամներ՝ մշտական՝ 2, գործադիր՝ 73։ Մուտք՝ 757 ր. 1 կոպ., ելք՝ 531 ր. 73 կոպ.։ Նախագահ՝ Յովսէփ Մելիք-Բէգլարեան, քարտուղար՝ Նիկողայոս Ղլիջեան, անդամներ՝ Եղիսաբէթ Նաբաթեան, Պաւել Տէր-Մարտիրոսեան, Աննա Մելիք-Բէգլարեան։

Նպաստել է աղքատ աշակերտներին, տառապեալներին, ձեռագործի դպրոցին։

12. ԱՐՄԱՒԻՐ (Ապրիլի 6-ին)։ Անդամներ՝ 19 (1908-ին 53)։ Մուտք՝ 661 ր. 98 կոպ. (1908-ին 1397 ր. 33 կոպ.), ելք՝ 404 ր. 55 կոպ. (1908-ին՝ 1309 ր. 45 կ.)։ Նախագահ՝ բժ. Մ. Բախչեան, փոխ-նախագահ՝ Ս. Սեֆերեան, գանձապահ-քարտուղար՝ Ա. Ունանեան, անդամներ՝ Ս. Եգորեան, Բ. Կուսիկեան։

Նպաստել է տեղական դպրոցին (1000 ռուբ.), ծրագրել է բանալ կար ու ձևի դպրոց, որի վրայ պիտի ծախսուի 1460 ռուբլի, ճանապարհածախս է տուել գաղթականներին հայրենիք վերադառնալու, օգնել է տառապեալներին։

13. ԿԵՐՍ (Ապրիլի 6) Անդամներ՝ 44 (1908-ին 80)։ Մուտք՝ 1446 ր. 33 կ., ելք՝ 1376 ր. 95 կ.։ Նախագահ՝ (1909-ին) Բժ. Ս. Հայրապետեան, քարտուղար՝ Լիպ. Ալլահվերդեան, գանձապահ՝ օր. Ա. Ալէքսանդրեան, անդամներ՝ Բէգ-Յովսէփեան, Յ. Պապովեան և Գ. Բոյաճեան։

Վարչութիւնը 1909-ին ներքին երկպառակութիւնների ասպարէզ դարձաւ (ինչպէս էր 1893-ին)։ Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը գնաց Կարս՝ հաշտութիւն հաստատելու համար և յաջողեցրեց լրացնել Վարչութեան թերի կազմը։ Բայց նրա հեռանալուց յետոյ հին կազմը (նախագահ՝ Ե. Տէր-Մինասեան, անդամներ՝ Մ. Մուրուզեան և Կ. Գրիգորեան) նորից հրաժարուեցին։ Հոկտեմբերին նոր Վարչութիւն վերակազմուեց Խորհրդի փոխ-անդամ Ե. Լալայեանի ջանքերով։

1908 և 1909-ին մեծ եռանդով աշխատել է թիւրքահայ գաղթականների հայրենիք վերադառնալու գործի մէջ, ծախսելով թէ Խորհրդից ուղարկած գումարը և թէ իր հաւաքածը։ 1909-ին Վարչութիւնը Կարսի թիւրքական հիւպատոսին խնդրեց միջնորդել որ վերադարձող գաղթականների անասուններից մաքս չը վերցնեն թիւրքական մաքսատները։ Հիւպատոսի միջնորդութիւնը ընդունուել էր Կ. Պոլսում, և այնուհետև գաղթականները անցնում էին սահմանը առանց առանձին դժուարութիւնների և նոյն իսկ առանց նպաստներ ստանալու անհրաժեշտութեան։ Նպաստել է դպրոցներին, աղքատ աշակերտներին հագուստներ է բաժանել, օգնել է տառապեալներին, Ալէքսանդրօպոլի հեղեղից վնասուածներին (1908 թ.) ուղակել է 314 ռուբլի։

14. ՔՈՒԹԱՅԻՍ (Ապրիլի 6-ին) Անդամներ՝ 50։ Մուտք՝ 643 ր. 80 կ., ելք՝ 477 ր. 31 կ.։ Նախագահ՝ Աշոտ քահանայ Տէր-Իսրայէլեան, քարտուղար՝ Սեդրակ Տէր-Առաքելեան, գանձապահ՝ Յակոբ Աւսարգսեան, անդամներ՝ Արշակ Թադէոսեան և Եղիսաբէթ Ստեփանեան։

Բացել է գրադարան-ընթերցարան, որի համար ձեռք է բերել մինչև 2000 հայերէն գրքեր։ Հիմնել է կիրակնօրեայ դպրոց՝ արհեստագիտական բաժնով։ Զխար և Սաչխերէթ գիւղերում բացել է ծխական դպրոցներ, ստանալով Խորհրդից նպաստ իւրաքանչիւրի համար 250 ռուբլի՝ օգնել է տեղական դպրոցին և չքաւոր աշակերտներին գրամով և հագուստեղէնով։

15. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ապրիլի 16-ին)։ Անդամներ՝ 42 (1908-ին)։ Մուտք և ելք՝ 800 ռուբ.։ Նախագահ՝ Գարեգին վարդապետ, քարտուղար՝ Միսաք Խոստիկեան, գանձապահ՝ Համասփիւռ Աւետիքեան, անդամներ՝ Սալոմէ Սամուէլեան և Ալէքսանդր Բզնունի։

Նպաստել է տեղական դպրոցի աշակերտներին հագուստեղէնով և ոտնամաններով, աղքատներին և հայրենիք վերադարձող գաղթականներին։ Բաց է արել ջուլհականոց, բայց փակել է չը կարողանալով մրցել շուկայի գների հետ։ Ծրագրել է կառուցանել ժողովրդական տուն, բայց չէ կարողացել յաջողեցնել այդ։ Մտադիր է բանալ կար ու ձևի դպրոց։

16. ԵՐԵՒԱՆ (Ապրիլի 20-ին)։ Անդամներ՝ 140։ Մուտք՝ 2335 ր. 16 կ., ելք՝ 2289 ր. 2 կ.։ Ունի գումար ռէնտաներով և առձեռն դրամով՝ 3751 ր. 31 կ.։ Նախագահ՝ տ. Մ. Միրզոյեան, փոխ-նախագահ՝ Բժ. Յ. Յովհաննիսեան, գանձապահ՝ Մ. Մուսինեան, քարտուղար՝ Գ. Խանազատեան։

Նպաստել է տեղական ծխական դպրոցներին (1909-ին՝ չորս դպրոցի 800 ր.), ուսումնառուներին, գործակատարների ընկերութեան, գրադարանին, կարօտեալներին, հայրենիք վերադարձող գաղթականներին (վերջիններիս համար ստացել է նպաստ Խորհրդից և իր միջոցներից էլ յատկացրել է գումար, ծրագրել է բանալու ապաստարան-արհեստանոց և գրադարան-ընթերցարան, որոնց համար մտադիր է սեպհական շէնք կառուցանել)։

Բացել է որբանոց 12 որբերի համար։

17. ՔԸՐՎԸՆՍԸՐԸ ԳԻՒՂ Ղազախի գաւառ (ապրիլի 20-ին) Անդամներ՝ մշտական 1, գործադիր 26։ Մուտք՝ 731 ր. 47 կոպ., ելք 397 ր. 32 կոպէկ։ Նախագահ՝ Մեսրոպ քահանայ Էդիլեան, քարտուղար՝ Հայկ Պալեան, գանձապահ՝ Արտեմ Իսախանեան, անդամներ՝ Գրիգոր Յովակիմեան և Միքայէլ Զաքարեան։

1908-ին գաւառում տարածուած հիւանդութիւնների առաջն առնելու համար դեղեր է բաժանել 350 աղքատների, օգնել է տեղական դպրոցին, աղքատներին։ Բաց է արել ջուլհականոց-արհեստանոց։ Ծրագրել է կիրակնօրեայ դպրոց հասակաւորների համար, դասախօսութիւններ, ժողովրդական ներկայացումներ, որոնց համար ներկայումս կառուցանում է ժողովրդական տուն, նպաստ ստանալով և Խորհրդից։

Գրադարանն ունի 1520 կտոր գիրք։ Յաճախորդների թիւը 573։ Կարդացուել է 807 գիրք։

Ունի մեղուանոց։

18. ՀԻՆ-ՆԸԼԹԻՋԵՒԱՆ (Ապրիլի 26-ին) Անդամներ՝ 40։ Մուտք՝ 2243 ր., ելք՝ 1460 ր. 41 կ.։ Նախագահ՝ Միքայէլ Զանփոլադեան, գանձապահ՝ Գէորգ Ղազարեան, քարտուղար՝ Սրամ Գիւրջեան, անդամներ՝ Կոստանդին Պօղոսեան, Յակոբ Սարգսեան։

Նպաստել է աղքատ աշակերտներին, տառապեալներին։ Բաց է արել դպրոցներ Խորհրդի ուղարկած նպաստներով։ Պահում է գրադարան-ընթերցարան։

19. ԸԽԸԼՅԽԱ (Ապրիլի 27-ին) Անդամներ՝ 58 (1908-ին՝ 90)։ Մուտք՝ 1018 ր. 6 կ., ելք՝ 272 ր. 79 կ.։ Նախագահ՝ բժ. Յ. Այվազեան, փոխ-նախագահ՝ Գր. Բուդուղեան, Գանձապահ-քարտուղար՝ Աբր. Անիսոնեան, անդամներ՝ Գրիգոր Զաթալբաշեան, Խորէն Սամարեան։

Աշխատել է յետ ստանալ և ստացել է նախկին ճիւղի կառուցած գրադարանական շինութիւնը Սուրբ Վարդանանց եկեղեցուց, որին նուիրել է ճիւղը իր փակման միջոցին։ Նպաստել է դպրոցներին, ուսումնառուներին և աղքատներին։ Ծրագրել է բաց անել խոհարարական կուրսեր։ Կազմակերպել է կիրակնօրեայ դասախօսութիւններ։ 1910-ի խօլերայի ժամանակ բաժանել է ախտահան միջոցներ։ Հիմնել է Աղքատախնամ Մասնախումբ, որ նպաստել է քաղաքի աղքատներին, բաժանելով 595 ր. 86 կոպ.։

20. ԳԵՐԲԵՆԴ (Մայիսի 19-ին)։ Անդամներ 53։ Մուտք՝ 1066 ր. 49½ կոպ., ելք՝ 510 ր. 43 կոպ.։ Նախագահ՝ Ռուբէն Տէր-Գրիգորեան, գանձապահ-քարտուղար՝ Յովսէփ Կիրակոսեան, անդամներ՝ Աննա Խիթարեան, Յովհաննէս Խաղուլեան, Տիգրան քահանայ Վարդանեան։

Նպաստել է դպրոցներին, աշակերտներին և կարօտեալներին։

21. ԵԿԱՏԵՐԻՆՕԳԼՈՒ (Մայիսի 20-ին)։ Անդամներ՝ մշտական 3, գործադիր 104։ Մուտք՝ ա) Եկատերինօգլուի նախկին Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնից ստացած 5382 ր. 35 կ.։ բ) սեփական եկամուտ՝ 4032 ր. 35 կ.։ Ելք՝ 2615 ր. 43 կոպ.։ Նախագահ՝ բժ. Ալեքսանոս Տէր-Օհանեան, քարտուղար՝ Արսէն քահանայ Վարդանեան, անդամներ՝ տ. Եղիսաբէթ Աշրաֆեան, տ. Գայեանէ Անսպէրքեան։

Նպաստել է տեղական դպրոցին, աշակերտներին, տառապեալներին։

22. ԳՕՐԻ (Մայիսի 25-ին)։ Անդամներ՝ 30։ Մուտք՝ 170 ր., ելք՝ 84 ր. 89 կոպ.։ Նախագահ՝ Ալէքսանդր Դաւթեան, փոխ-նախագահ՝ Յովհաննէս Մկրտչեան, քարտուղար-գանձապահ՝ օր. Ե. Բաբալեան, անդամներ՝ Կոստանդին Օրբելեան, Մովսէս Բաբալեան։

Նպաստել է չքաւոր ընտանիքներին։ Կառավարել է Ս. Գուլիշամբարեանի նուէրով բացած ջուլհականոցը։

23. ՆՈՒԽԻ (Յունիսի 20-ին) Անդամներ՝ 46։ Մուտք 562 ր. 72 կ., ելք՝ 466 ր. 33 կ.։ Նախագահ՝ Արշակ քահանայ Փալչեան, քարտուղար՝ Սահակ Տէր-Պողոսեան, անդամներ՝ Բէյլբուդ Մելիք-Ալլահվերդեան, տ. Զաւահիր Ասրեան, օր Եկատ. Նասիբեան։

Նպաստել է չքաւոր աշակերտներին։

24. ԱԼԻՔՍԱՆԴՐՈՊՕԼ (Յունիսի 22-ին)։ Անդամներ 37։ Մուտք 1925 ր. 46 կ., ելք 1785 ր. 18 կ.։ Նախագահ՝ բժ. Ա. Տէր-Շմաւոնեան, գանձապահ՝ Յ. Աղաբաբեան, քարտուղար՝ Ն. Կիրակոսեան, անդամ Ս. Թաբախեան։

Նպաստել է չքաւոր աշակերտներին, դպրոցներին և ուսանողներին։

25. ԱՐԴՈՒԻՆ (Յուլիսի 1-ին)։ Անդամներ՝ 44։ Մուտք և ելք՝ 311 ր. 59 կ.։ Նախագահ՝ Գրիգոր քահանայ Եսայեան, գանձապահ՝ Յովսէփ Կիւրեղեան, քարտուղար՝ Կարապետ Տէր-Բաղդասարեան, անդամներ՝ Ղազար Վարթուլեան, Յակոբ Միասարեան։

Նպաստել է տեղի ծխական դպրոցին, մանկական դրադարանին, չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին։

26. ԲՕՐԹՕՄ (Յուլիսի 20-ին)։ Անդամներ՝ 15։ Մուտք և ելք՝ 164 ռուբլի։ Նախագահ՝ Յակոբ Աւագեան, գանձապահ՝ Յակոբ Նալբանդեան, քարտուղար՝ Մկրտիչ Ղազարեան, անդամներ՝ Սիմէօն Ալաճաճեան, Յովհաննէս Յարոյեան։

Նպաստել է տեղական դպրոցին և չքաւորներին։

27. ԳՕՐԻՍ, Զանգեզուրի գաւառ (Յուլիսի 21-ին)։ Անդամներ՝ 34։ Մուտք՝ 564 ր. 68 կ., ելք՝ 410 ր. 79 կ.։ Նախագահ՝ Ալէքսանդր Բաղրամեան, քարտուղար-գանձա-

պահ՝ Միքայել Պարոնեան, անդամներ՝ Յակոբ Միրաքեան, Արշակ Ղազարեան, Լևոն Միքայէլեան։

Նպաստել է ծխական դպրոցի աշակերտներին և աշակերտուհիներին։

28. ԴՈՒՇԷԹ (Օգոստոսի 22-ին) Անդամներ՝ 15։ Մուտք և ելք՝ 137 ր. 20 կ.։ Նախագահ՝ Յուսիկ քահանայ Ապրելեան, անդամներ՝ Նիկողայոս Բարաթեան, օր. Նատալիա Կարապետեան, Գէորգ Աթոյեան, Ստեփան Ոսկեանց։

Նպաստել է տեղական դպրոցին։ Բացել է դպրոց Անանուր գիւղում։

29. ԹԵԼԵՒ (Օգոստոսի 24-ին)։ Անդամներ՝ 36։ Մուտք՝ 354 ր. 53 կ., ելք՝ 322 ր. 69 կ., նախագահ՝ Աբէլ աւ. քահանայ Սուքիասեան, քարտուղար՝ Գէորգ Տէր-Սարգսեան, գանձապահ՝ Լևոն Թաթուզեան, անդամներ՝ Միքայել Տէր-Յարութիւնեան, Արտեմ Տէր-Սարգսեան։

Նպաստել է աշակերտներին և տառապեալներին։

30. ՂՈՒՐՔ (Սեպտեմբերի 21)։ Անդամներ՝ 48։ Մուտք՝ 450 ր. 8 կ., ելք՝ 286 ր. 66 կ.։ Նախագահ՝ բժ. Միքայել Մելիք-Մկրտչեան, փոխ-նախագահ և քարտուղար՝ Խաչատուր քահանայ Փանեան, գանձագահ՝ Հայրապետ Մելիք-Դաղայեան, անդամներ՝ Ջումշուդ Բարսեղեան, Ալէքսան Բօղդանեան։

Պահում է աղքատանոց։ Նպաստել է չքաւոր աշակերտներին։ Ծրագրել է բանալ գրադարան-ընթերցարան։

31. ՓՈԹԻ (Հոկտեմբերի 19-ին)։ Անդամներ՝ 15։ Մուտք՝ 142 ր., ելք՝ 67 ր., նախագահ՝ Անդրէաս Ապրելեանց, քարտուղար-գանձապահ՝ Ղազարոս Բագարեանց, անդամ՝ Արտաշէս Վարդանեանց։

Նպաստել է ծխական դպրոցին։

32. ԻԳԴԻՐ (Հոկտեմբերի 21-ին)։ Անդամներ՝ 45։

Մուտք՝ 1199 ր. 3 կ., ելք՝ 1017 ր. 89 կոպ.։ Նախագահ՝ Խաչատուր Կանայեան, գանձապահ՝ Մամբրէ Տէր-Թովմասեան, քարտուղար՝ Անուշաւան Պօղոսեան, անդամներ՝ Նիկոլայ Գրիգորեան, Համազասպ Կանայեան։

Բաց է արել գրադարան-ընթերցարան ի յիշատակ Խաչատուր Աբովեանի և անուանել է «Աբովեան»։ Ընթերցարանն ստանում էր 13 պարբերական հրատարակութիւններ։ Գրքերի թիւը մօտ 1200։ Յաճախողներ՝ 3096, գրքեր տարուած են 3688 հատ։

Նպաստել է չքաւորներին, հայրենիք վերադարձող գաղթականներին։ Ծննդեան և Զատկի տօներին հանգանակութիւն է կատարել և օգնել է 65 ընտանիքների, ինչպէս նաև աղքատ աշակերտներին և աշակերտուհիներին տուել է հագուստ և թոշակ։ Կազմել է դպրոցական շինութեան ֆոնդ։ Խօլերայի ժամանակ բաց է արել ձրի թէյատուն։

33. ԿԸՂՋՈՒԸՆ (Հոկտեմբերի 24-ին)։ Անդամներ՝ 33։ Մուտք՝ 250 ր., ելք՝ 177 ր. 30 կ.։ Նախագահ՝ Ալէքսանդր Մամիկոնեան, քարտուղար՝ Թադ. Գիւլբայազեան, գանձապահ՝ Ա. Մատղալեան, անդամներ՝ Արամ Ղարիբեան (վախճանուած) Ադասի Էլիզբարեան, Ալէքսանդր Մամիկոնեան։

Նպաստել է տեղի ծխական դպրոցին։

34. ԹԼՄԻՐ-ԽԸՆ-ՇՈՒՐԸ (Նոյեմբերի 1-ին)։ Անդամներ՝ 19։ Մուտք՝ և ելք՝ 116 ր. 12 կ.։ Նախագահ՝ Յովհաննէս Կազեան, քարտուղար Գ. Աւշարեան, անդամներ՝ Ս. Սարումեան, Ա. Մարտիրոսեան, Ղևոնդ քահանայ Յովսէփեան։

Նպաստել է դպրոցին և չքաւորներին։

35. ՊԵՐՏԻԳՈՐՍԿ (Նոյեմբերի 2-ին)։ Անդամներ՝ 90։ Մուտք և ելք՝ 610 ր. 70 կ.։ Նախագահ՝ Աբրահամ քահանայ Շխինեանց, գանձապահ—քարտուղար՝ Ալէքսանդր

Վիրաբեան, անդամներ Թադէոս Պապովեան, Գրիգոր Եսայեան, Մկրտիչ Խոջայեան։

Նպաստել է տեղի ծխական դպրոցին։ Ծրագրել է բանալ ձրի և էժանագին հանրակացարան հասարակական չքաւոր գործիչների համար, ապագայում այդ հիմնարկութիւնը Սանասարեանի վերածելու դիտաւորութեամբ։

36. ԱՌԻԽՈՒՄ (Նոյեմբերի 9-ին)։ Անդամներ՝ 23։ Մուտք՝ 126 ր. 69 կ., ելք՝ 91 ր. 75 կ.։ Նախագահ՝ Նիկ. Աթաբէկեան, քարտուղար՝ Ջանիկ Կոտրաշեան, գանձապահ՝ Մինրան Ալթունեան, անդամներ՝ Եղիշէ քահանայ Տէր-Եղիազարեան, Գարեգին Բուլեան։

Նպաստել է դպրոցին և չքաւորներին։

37. ՁԽՈՐ գիւղ, Բութայիսի նահանգ (Դեկտեմբերի 3-ին)։ Անդամներ՝ 34։ Մուտք և ելք՝ 302 ր. 86 կ.։ Նախագահ՝ Արտաշէս քահանայ Գափամաճեան, գանձապահ՝ Յովհաննէս Սիմէոնգուլեան, անդամներ՝ Արտաշէս Կաճկաճեան, Պօղոս Կաճկաճեան, Միքայէլ Դուրուլեան։

Նպաստել է չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին թոշակներով և հագուստեղէնով։ Գլխաւոր հոգսն է եղել դպրոցական շինութեան ֆոնդ կազմել։ Տուել է այդ նպատակով 140 ր. և շինական մասնաժողովի հետ հանգանակել է 1200 ռուբլի։ Ծրագրել է բաց անել մանր վարկի ընկերութիւն։

38. ՄՈՉԴՈԿ (Դեկտեմբերի 28-ին)։ Անդամներ՝ 53։ Մուտք՝ 454 ր. 89 կ., ելք՝ 28 ր. 54 կ։ Նախագահ՝ Ս. Գեանջումեան, գանձապահ՝ Պ. Ուլուխանեան, քարտուղար՝ Ս. Գրիգորեան, Անդամներ՝ Կ. Նաւասարդեան, Կ. Շլթեան։

Նպաստել է տեղական չքաւորներին, Վարչութեան ամբողջ հոգսն է եղել միջոցներ ձեռք բերել որ կարելի լինի ծխական դպրոցին կից բանալ զամբիւղագործական

արհեստանոց, որ պիտի նպաստէ աղքատ ազգաբնակութեան։ Այդ նպատակով դիմումներ է արել զանազան մարդկանց։

Բաց է արել դրադարան-ընթերցարան «Հայրիկեան» անունով,

1909

39. ՕԼԹԻ (Յունվարի 4)։ Անդամներ՝ 15։ Մուտք՝ և ելք՝ 124 ր. 50 կ.։ Նախագահ՝ Ստեփան Տէր-Մարգարեան, անդամներ՝ Մ. Նալբանդեան, Պետրոս Ղազարեան, և Ա.. Տէր-Ներսիսեան։

Նպաստել է դպրոցին, կարօտեալներին, ընթերցարանին։

40. ՍՈՒՐՄ (Յունվարի 18-ին) անդամներ 23։ Մուտք՝ 163 ր. 44 կ., ելք՝ 114 ր. 25 կ.։ Նախագահ՝ Միքայէլ Առիւծեանց, քարտուղար՝ Յովսէփ քահանայ Առիւծեանց, գանձապահ՝ Գրիգոր Բարուշեան, անդամներ՝ Բարսեղ Զարեքեանց, Արշակ Շուղարեանց։

Նպաստել է դպրոցին, աղքատ աշակերտներին, ծրագրել է բանալ կիրակնօրեայ դպրոց։ 1900-ին ճիւղը փակման վտանգին էր ենթարկուած միջոցների պակասութեան պատճառով։ Խորհրդի յորդորներով վերակազմուեց 1911-ին։

41. ՎԼԱԴԻԿԱՒԿԱՍ (Մարտի 10-ին)։ Անդամներ՝ մշտական 3, գործադիր 117։ Մուտք՝ 2531 ր. 94 կոպ., ելք՝ 2236 ր. 5 կոպէկ։ Բացի այդ ճիւղն ունի 1225 ր. 28 կոպ. առանձին գումար։ Նախագահ՝ Յակոբ քահանայ Սառիկեան, գանձապահ՝ Սիմէօն Մամուլեան, քարտուղար՝ Համազասպ Դրամբեան, անդամներ՝ Եղիսաբէթ Կարախանեան, Լևոն Ղուկասեան, Մանուկ Ղազարեան։

Գլխաւոր նպաստը աշակերտներին (819 ր.)։ Բացել է զամբիւղագործական արհեստանոց (674 ր.)։ Օգնել է կարօտեալներին (643 ր.)։

42. ՑԵՐՍԿԻԻ ԿՈԼՈՊՑԻ (Տարուայ վերջերին)։ Անդամներ՝ 15 (1910-ին)։ Մուտք և ելք՝ 131 ր. 6 կոպ.։ Նախագահ՝ Ստեփան Ամեանց, քարտուղար՝ Յակոբ Գրիգորեան, անդամներ՝ Նիկողայոս Ճարեան, տ. Վարվառէ Թումանեան։

Վճռել է բանալ գրադարան-ընթերցարան, մանր վարկային ընկերութիւն։ Մտադիր է նաև վերցնել 2—3 դեսեատին հող՝ թթենիներ տնկելու և շերամապահութեամբ ու մեղուաբուծութեամբ պարապելու յօգուտ ճիւղի։

1910

43. ՆՈՎՈՐՈՍԻՑԿ (Փետրվարի 2-ին)։ Անդամներ՝ 30։ Մուտք՝ 231 ր. 5 կ., ելք՝ 228 ր. 44 կ.։ Նախագահ՝ Պօղոս քահանայ Տէր-Մինասեան, քարտուղար՝ Պօղոս Մարգարեան, անդամներ՝ Մեսրոբ Խաչիկեան, Միհրան Գիւլեանց, Հմայակ Մակարեանց։—

Նպաստել է դպրոցին։

44. ՂԱՓԱՆ Զանգէզուրի գաւառ (Մայիսի 29-ին)։ Անդամներ՝ 48։ Մուտք և ելք՝ 240 ռուբլի։ Նախագահ՝ Սմբատ Մելիք-Ստեփանեան, քարտուղար՝ Ի. Մելիք-Քարամեան, գանձապահ՝ Ս. Մելիք-Փարսադանեան, անդամներ՝ բժ. Ա. Խաչատրեան, Մովսէս Իւզբաշեան։

Բացել է գրադարան-ընթերցարան։

45. ՊԵՏՐՈՎՍԿ։ Բացուել է յունիսի 19-ին Խորհրդի փոխ-անդամ Ե. Լալայեանի ջանքերով։ Նախահաշիւ 1911-ի։ Անդամներ՝ 21։ Մուտք և ելք՝ 165 ր.։ Նախագահ-քարտուղար՝ Արշէն քահանայ Մարգարեան, գանձապահ՝ Գասպար Մամուլեան, անդամներ՝ Մարիամ Տուրփայեան, Աննա Նացվալեան, Սարգիս Միրզախանեան։

V

ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ընկերութեան կանոնագրութիւնը փոփոխութիւնների է ենթարկուել, բայց միշտ, սկզբից մինչև այժմ, անփոփոխ է մնացել Վերաստուգող Յանձնաժողով անունը կրող մարմինը, որի գործունէութիւնը սկզբի տարիներից շարունակվում է մինչև այժմ։ Այդ մարմինը միայն կենտրոնին չէ վերաբերում։ Նա իբրև Ընկերութեան վարիչ մարմինների մի անհրաժեշտ մաս, գործել է ամեն տեղ, ուր Ընկերութիւնը ունեցել է ճիւղեր։

Լինելով զուտ հաշուապահական հիմնարկութիւն, Վերաստուգող Յանձնաժողովը ամեն տարի ընդհանուր ժողովների առաջ բաց է արել Ընկերութեան կարողութեան քննուած և վերաստուգուած հաշիւները, ցուցմունքներ է տուել կանոնաւոր հաշուապահութեան, գումարների շահեցման մասին։ Այդպիսով նա կատարել է արտաքուստ մանը, ընթացիկ, ժամանակաւոր, բայց ըստ բովանդակութեան շատ կարևոր գործ։ Ընդհանուր ժողովները երկար ու մանրամասն զբաղուել են այդ վերաստուգող մարմնի տեղեկագրերով, և Ընկերութեան վարիչ մարմինների համար առաջնորդող են հանդիսացել նրա նկատողութիւնները։

Վերաստուգող Յանձնաժողովը գործի է հրաւիրվում 1883 թուականից, իսկ նրա համար հրահանգ մշակվում և հաստատվում է Ընդհանուր Ժողովի կողմից 1885-ին [1]։

Ըստ Կանոնագրութեան, Վերաստուգող Յանձնաժողովը ընտրվում է ամեն տարի, նախընթաց տարուայ հաշիւները քննելու համար։ Այսպիսով այդ մարմնի կազմը մշտապէս փոփոխութիւնների ենթարկուած է եղել, և այս

[1]) Տ. Յաւելուած.—

հանգամանքը անհնարին է դարձնում երեսուն տարիների ընթացքում գործած Մասնաժողովների (կենտրոնի և գաւառական ճիւղերի) ամբողջական կազմը այստեղ յիշատակելը։—

Առաջին Վերաստուգող Յանձնաժողովը, որ ընտրուեց 1883-ի յունիսի 6-ի Ընդհանուր Ժողովում, բաղկացած էր հետևեալ անձերից. Գ. Նահապետեան, Մ. Սալամբէկեան և Աւետիս Վարդապետեան (այժմ հանգուցեալ)։ Աւետիս Վարդապետեանը այնուհետև էլ, երկար տարիների ընթացքում, եղել է Վերաստուգող Յանձնաժողովի անդամ։—

Տարիներով նոյն Յանձնաժողովի անդամ վերընտրուել են. Նազարէթ Տիգրանեան, Յովհաննէս Ստեփանեան, Ն. Աբրահամեան, Յ. Քոչարեան, Կ. Շիրինեան, Ա. Շահիկեան, Ս. Խարազեան, Մ. Կայալեան, Ս. Մնացականեան, Ս. Շահվերդեան, Ա. Աւագեան։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։ Ներկայ աշխատութեան 24-րդ երեսում սխալմամբ չէ յիշատակուած Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, որ հիմնուած է 1861-ին։

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

По журнальному постановленію Тифлисскаго Губернскаго по дѣламъ объ обществахъ присутствія 16 января 1908 года состоявшемуся „Армянское Благотворительное Общество на Кавказѣ“ внесено въ реестръ, подъ № 79-мъ, настоящій уставъ утвержденъ и къ возникновенію дѣятельности означеннаго общества препятствій не встрѣчается. Января 31 дня 1908 г.

За Тифлисскаго Губернатора,

И. д. Вице-Губернатора **А. Чернявскій**

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում

I. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

§ 1. *Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածման հայերի մէջ Կովկասում և օգնել նրանց նիւթականապէս։*

§ 2. *Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը հետևեալ սահմանած միջոցներով ու կարգով իր գործերն կատարելու համար՝*

ա) պահպանում է արդէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները, հիմնում է և նիւթականապէս նպաստում է նորերի բացման.

բ) օժանդակում է ժողովրդի մէջ արհեստներ տարածելուն և նրա նիւթական դրութիւնը բարելաւելուն.

գ) օգնում է ուսանողներին ուսման մէջ.

դ) լոյս է ընծայում գրքեր ու պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) հիմնում է տպարաններ, վիմագրատներ, մուզէյումներ, դրադարաններ և ընթերցարաններ.

զ) հիմնում է հիւանդանոցներ, ամբուլատորիաներ (հիւանդանոց երթևեկ հիւանդների համար), ապաստարաններ, հասարա-

կական ճաշարաններ, թեյատներ, էժանագին ընակարաններ, գիշերելու տներ, պատսպարաններ, հանրակացարաններ, աշխատանքի տներ և այլ բարեգործական հաստատութիւններ։

է) օգնում է տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ, այն է՝ սովի, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդեհի և այլն, որի համար՝ իւրաքանչիւր առանձին դէպքում, պատշաճաւոր թոյլտուութեամբ՝ բացում է հանգանակութիւն, կազմակերպում է սանիտարական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից լիազօրներ։

ը) օգնում է կարևոր դէպքերում նիւթականապէս և բարոյապէս իր տեղական ճիւղերին, ինչպէս և հայկական այլ ընկերութիւններին և հաստատութիւններին։

II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 3 Ընկերութեան միջոցները կազմում են՝

ա) անդամների տարեկան վճարները.

բ) ընկերութեան գրամագլխի, շարժական և անշարժ կայքերի եկամուտները.

գ) նուէրներ գրամով, իրեղէններով և ամեն տեսակ գոյքով.

դ) գումարներ, որոնք գոյանում են իշխանութեան կողմից [illegible] ընթերցանութիւններից, հրապարակական [illegible] [illegible] [illegible]

պայմանով, նոյնպէս Ընկերութեան եկամուտների գեղջից այն կարգով ու այն չափով, ինչ չափով ցոյց է տրուած ստորև յիշուած 6-րդ §-ում։

§ 6. Ընկերութեան և նրա Տեղական Ճիւղերի եկամուտներից, համաձայն նախահաշուի՝ պահւում է ամենայն տարի 5—10% Ընդհանուր ժողովի հայեցողութեամբ, իբրև անձեռնմխելի և պահեստի գումարներ ամբողջ Ընկերութեան համար, որից $^1/_3$ պահւում է իբրև անձեռնմխելի, իսկ $^2/_3$ ընդհանուր պահեստի գումարներ։

§ 7. Պահեստի գումարի ծախսելու եղանակը որոշում է Ընդհանուր ժողովը։

§ 8. Ծախսից գումարը կազմում է Ընկերութիւնը մտած միւս բոլոր եկամուտներից, նոյնպէս անձեռնմխելի և պահեստի գումարների տոկոսներից, եթէ միայն այդպիսիք կլինին։ Իսկ յատուկ գումարի տոկոսները՝ դուրս գալով 6-րդ § ում յիշատակուած գեղջը, պէտք է գործադրուեն բացառապէս իրեն յատուկ նպատակի համար։

§ 9. Ծախսերն անւում են բացառապէս Ընդհանուր ժողովի թոյլտուութեամբ, այն է՝ իւրաքանչիւր տարուայ նախահաշիւը Ընդհանուր ժողովի կողմից հաստատուելուց յետոյ, նոյնպէս՝ հաստատուած այդ նախահաշուից դուրս, Ընդհանուր ժողովը, կարևոր դէպքերում, անում է ծախսերի յատուկ որոշումներ։

III. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 10. Ընկերութիւնն իր գործունէութիւնը առաջ տանելու համար՝ օգտւում է իր այն բոլոր իրաւունքներով ու արտօնութիւններով, որոնք յատուկ են ամեն մի իրաւաբանական մարմնի։

§ 11. Ընկերութիւնը յանձին իր Խորհրդի՝ համաձայն սոյն կանոնադրութեան՝ իրաւունք ունի բաց անել ճիւղեր Կովկասի սահմաններում։ Ճիւղեր բաց անելու համար պահանջւում է, որ գրուին անդամներ ոչ պակաս քան 15 հոգի։

§ 12. Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերել, գնել, ծա-

խել կամ կապալով տալ անշարժ կայքեր, նոյնպէս գրաւ ընդունել և գրաւ դնել։

§ 13. Ընկերութիւնը կարող է պատշաճաւոր իշխանութեան թոյլատրութեամբ ունենալ հանգանակութեան համար տուփեր եկեղեցիների և հասարակական հիմնարկութիւնների մէջ հայոց հոգևոր իշխանութեան, կամ հասարակական հիմնարկութիւնների վարչութիւնների համաձայնութեամբ։

§ 14. Ընկերութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն այս կանոնադրութիւնը օրինական կարգով։

§ 15. Ընկերութիւնն ունի առանձին կնիք և գրոշմ այս վերնագրով՝ «ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»։

IV. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

§ 16. Ընկերութիւնը կազմուում է անդամներից՝
ա) պատուաւոր
բ) մշտական և
գ) իսկական
Բոլոր այս կոչումները կրում են երկու սեռի անձինք ևս։

§ 17. Պատուաւոր անդամներ կարող են ընտրուել Ընկերութեանն առանձին ծառայութիւն ցոյց տուող անձինք։ Այդ ընտրութիւնը կատարում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովը Թիֆլիսում՝ Խորհրդի կամ Տեղական Վարչութիւնների առաջարկութեամբ։

§ 18. Մշտական անդամներ համարուում են Ընկերութեանը միանուագ ոչ պակաս քան 100 ռուբլի նուիրող անձինք։

§ 19. Իսկական անդամներ համարուում են տարեկան Ընկերութեան հինգ ռուբլի վճարողները։ Անկախ դրամական վճարներից, համաձայն Խորհրդի որոշման՝ իսկական անդամի կոչում կարող են կրել նոյնպէս Ընկերութեան ձրի ծառայութիւն ցոյց տուող անձինք։

§ 20. Այն անձինք, որոնք Ընկերութեան վերանորոգութիւնից առաջ եղել են Ընկերութեան պատուաւոր և մշտական անդամներ, մնում են նոյն կոչման մէջ և սոյն կանոնագրութեան հիման վերայ, եղած վերանորոգութիւնից յետոյ։

§ 21. Պատուաւոր անդամներին տրւում է Ընկերութիւնից պատշաճաւոր ստորագրութեամբ և կնիքով դրոշմած վկայագիրներ։

§ 22. Բոլոր անդամները, ինչ կոչման և լինին, ունին ձայնի իրաւունք Հնդհանուր ժողովներում. եթէ միայն անձամբ ներկայ են։

§ 23. Ընկերութեանը անդամ գրուողները հէնց գրուելիս՝ վճարում են իրենց անդամակցական վճարները։ Խորհուրդը և Տեղական Վարչութիւնները իրաւունք ունին վճարները բաժանել երկու ժամանակամիջոցի—յունուարի մէկին և յուլիսի մէկին։

§ 24. Այն անդամները, որոնք չորս ամսուայ ընթացքում չեն հատուցել իրենց վճարը, հաշուեւտութեան տարուայ սկզբից հրաժարուած են համարւում և կրկին ընդունւում են, երբ նորոգում են նոյն վճարը։

V. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

§ 25. Ընկերութեան գործերը վարում են Ընկերութեան Խորհուրդը և Տեղական Վարչութիւնները։ Խորհուրդը գտնւում է Թիֆլիսում, իսկ Տեղական Վարչութիւնները՝ Կովկասի զանազան քաղաքներում և տեղերում։

§ 26. Ընկերութեան Վարչութիւնների բոլոր անդամները, թէ Թիֆլիսում և թէ Թիֆլիսից դուրս, ձրի են կատարում իրանց պարտաւորութիւնները, բացի այն դէպքերից, որոնց Ընկերութեան Խորհուրդը վարձատրութեան արժանի կը գտնէ։

§ 27. Ընկերութեան բոլոր մարմինների պարտականութիւնն է՝ զարգացնել նրա գործունէութիւնը և աճեցնել նրա միջոցները։ Այս մարմինների կազմը և նրանց պարտականքների շրջանը բացատրուած է հետևեալ § §-ներում։

VI. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

§ 28. Խորհուրդը, իբրև կենտրոնական մարմին ամբողջ Ընկերութեան, բաղկացած 12 անդամներից, ընկերութեան անդամների Ընդհանուր ժողովից Թիֆլիսում ընտրուած, երեք տարով։

§ 29. Խորհրդի անդամների միաժամանակ հեռանալուց խուսափելու համար, առաջին երկու տարին վիճակով հեռանում է ամեն տարի նրանց $^1/_3$ մասը, իսկ յետոյ՝ ըստ աւագութեան ձայների։ Դուրս եկող անդամները կարող են նորից ընտրուել։

§ 30. Խորհրդի անդամների ժամանակից առաջ, որի համար նրանք ընտրուել էին, հեռանալու կամ նրանց երկար ժամանակ բացակայելու դէպքում, նրանց փոխարինելու համար՝ Ընդհանուր ժողովը ընտրում է 4 փոխանդամ։ Խորհրդի կազմի մէջ մնող փոխ-անդամը մնում է կազմի մէջ մինչև նոյն տարուայ Ընդհանուր ժողովը, ուր կատարւում է Ընկերութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնը։

Ծանօր. Խորհրդի այն անդամը, որը չնթացս երեք ամսուայ չի մասնակցել նրա նիստերին ոչ յարգելի պատճառներով, համարւում է Խորհրդի անդամի կոչումից հրաժարուած։

§ 31. Խորհրդի անդամները ընտրում են իրենց միջից ամենայն տարի մի Նախագահ և երկու փոխ-նախագահ, որոնցից մէկը կոչւում է առաջին, իսկ միւսը՝ երկրորդ, համաձայն նրանց ստացած քուէների քանակութեան. ընտրում են նոյնպէս դանձապահ և քարտուղար։ Վերջին երկու պաշտօնը կարելի է յանձնել մի հոգու Խորհրդի որոշման համաձայն։

§ 32. Խորհրդի նիստերի օրերը որոշում է ինքը Խորհուրդը։

§ 33. Խորհրդի նիստերի որոշումներն օրինական լինելու համար, անհրաժեշտ է անդամների ոչ պակաս քան կէսի ներկայութիւնը, հաշուելով և Նախագահին կամ նրա տեղը բռնող փոխնախագահին։ Խորհրդի մի որևէ անդամի հիւանդութեան կամ ժամանակաւոր բացակայութեան դէպքում Թիֆլիսից, Նախագահը հրաւիրում է փոխ-անդամներին, կարգով, ընտրութեան ժամանակ ամեն մէկի ստացած քուէների քանակութեան համաձայն։

§ 34. Խորհրդի հարցերը նախագահին վճռվում են ներկայ եղող անդամների ձայների հասարակ առաւելութեամբ, իսկ ձայների հաւասարութեան դէպքում նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս։

§ 35. Խորհրդի պարտաւորութիւններն են՝

ա) Բաժանել Խորհրդի աշխատանքները իր անդամների մէջ փոխադարձ համաձայնութեամբ.

բ) Հոգ տանել Ընկերութեան միջոցների զարգացման՝ իր նպատակներին հասնելու համար.

գ) Կառավարել կայքերը և պահպանել Ընկերութեան գրամագլուխը.

դ) Կառավարել Ընկերութեան հիմնարկութիւնները, կազմել այդ հիմնարկութիւնների պաշտօնեաների համար հրահանգներ, նոյնպէս և հսկել նրանց ներքին կարգ ու կանոնի վերայ.

ե) Նշանակել կամ արձակել Ընկերութեան հիմնարկութիւնների պաշտօնատար անձանց.

զ) Հսկել Ընկերութեան հիմնարկութիւնների մէջ պաշտօնատար անձանց իրենց պարտականութիւնների անթերի կատարմանը.

է) Տեղեկութիւններ հաւաքել Ընկերութեան օգնութեան դիմողների մասին և տալ համապատասխան նպաստ համաձայն Ընկերութեան միջոցների, նոյնպէս և հսկել կարօտեալների ստացած նպաստների գործադրութեան վերայ.

ը) Ըստ կարելոյն յաճախ ստուգութեան ենթարկել Ընկերութեան գոյքերն և գումարները.

թ) Պահել Ընկերութեան անդամների ցուցակը.

ժ) Հսկել տարեկան անդամակցական վճարների իր ժամանակին ստացմանը և չվճարողներին Ընկերութեան ցուցակից հեռացմանը.

ի) Սահմանել Ընկերութեան հաշուապահութեան և գործավարութեան համար եղանակ.

լ) Հսկել Կանոնագրութեան ճշտութեամբ գործադրման.

խ) Յարաբերութեան մէջ մտնել Ընկերութեան անունից պատշաճաւոր իշխանութիւնների և հաստատութիւնների հետ.

ծ) Հրաւիրել Ընկերութեան Ընդհանուր ժողովները.

կ) Կազմել տարեկան նախահաշիւները ու նրա գումարների ու գործունէութեան հաշիւները և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատութեանը.

ե) Կատարել Ընդհանուր ժողովների որոշումները.

ձ) Քննութեան առնել Ընկերութեան անդամների առաջարկութիւնները.

զ) Առաջարկել Ընդհանուր ժողովի քննութեանը՝ Խորհուրդից չը լուծուած կամ նրա իրաւունքների սահմաններից դուրս եղած հարցերը.

ճ) Վաղօրօք մշակել առհասարակ բոլոր այն խնդիրները, որոնք առաջարկուելու են Ընդհանուր ժողովին։

մ) Կազմել՝ սոյն այս Կանոնադրութեան սահմաններից դուրս չը գալով՝ Ընկերութեան և նրա ճիւղերի ներքին կարգապահութեան համար հրահանգներ և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատութեանը։

Ծանօթ. Խորհուրդն իրաւունք ունի կազմել առանձին յատուկ յանձնախմբեր՝ Ընկերութեան հիմնարկութիւններն աւելի մօտիկից կառավարելու համար։

§ 36. Խորհրդի նախագահը հրաւիրում է անդամներին ժողովի, ղեկավարում է ժողովները, հսկում է Կանոնադրութեանը, նոյնպէս և Խորհրդի և Ընդհանուր ժողովների որոշումների գործադրութեանը, ինչպէս և Ընկերութեան գործերի ընդհանուր ընթացքի վերայ և ստորագրում է Ընկերութեան բոլոր ելից թղթերը քարտուղարի կամ գանձապահի ըստ պատկանելոյն ստորագրութեամբ։

§ 37. Խորհրդի նախագահի բացակայութեան կամ հիւանդութեան դէպքում՝ Ընկերութեան վերաբերեալ նրա իրաւունքները և պարտականութիւնները ստանձնում է փոխ-նախագահներից մէկը՝ ըստ կարգի աւագութեան։

§ 38. Քարտուղարը վարում է Ընկերութեան գրագրութիւնը՝ կազմում է Ընկերութեան արձանագրութիւնները, պահում է այբբենական կարգով Ընկերութեան անդամների և Ընկերութիւնից նպաստ ստացող անձանց անուանական ցուցակը, նշանակելով այս վերջինների մասին հաւաքած տեղեկութիւնները, այն է՝ նրանց տուած օգնութեան տեսակի և քանակի մասին, ստորագրում է Ընկերութեան պաշտօնական թղթերը և կազմում է Ընկերութեան գործունէութեան տարեկան հաշիւը։

§ 39. Գանձապահը ընդունում է Ընկերութիւնը մտնող գրամական վճարները և գրամական ու նիւթական նուէրները, կատարում է նախագահի կարգադրութեամբ՝ համաձայն Խորհրդի կամ Ընդհանուր Ժողովների որոշումների, բոլոր գրամական գործունէութիւնները և վճարումները գրամով կամ իրեղէններով, պահում է ինչպէս փողի, նոյնպէս և իրեղէնների համար ժապաւենաւոր ելից և մտից մատեանները և կազմում է Ընկերութեան այդ գումարների տարեկան հաշիւը։

Ծանօթ. Գանձապահի ձեռքը եղած փողերի ապահովութեան պօլիսների, գոկումենտների և գրքերի, նոյնպէս և գրամական մտից և ելից մատեանների պահելու, այլ և գրամ ընդունելու և վճարելու եղանակը՝ որոշում է Խորհուրդը Վերատեսուչ Յանձնաժողովի հետ միասին։

§ 40. Ծախսերը կատարվում են նախահաշուի կամ Խորհրդի որոշումների համաձայն։ Անյետաձգելի դէպքերում նպաստների տալը՝ որոշում է Խորհրդի նախագահը իր անձնական պատասխանատուութեամբ, բայց Ընդհանուր Ժողովի սահմանած քանակից ոչ աւելի, այն պայմանով միայն, որ նա պարտաւոր է անպայման այդ մասին յայտնել Խորհրդին ի տեղեկութիւն հէնց նրա առաջին նիստում։

§ 41. Ընկերութեան անդամները իրաւունք ունին յայտնել Խորհրդին իրենց բանաւոր կամ գրաւոր կարծիքը՝ Ընկերութեան մէջ բարեփոխումներ կամ օգտակար նորմուծութիւններ մտցնելու մասին։

Առաջարկութիւն անող անդամին՝ Խորհրդից մերժում ստանալու դէպքում՝ իրաւունք է տրւում պահանջել Խորհրդից առաջադրել իր այդ առաջադրութիւնը առաջիկայ Ընդհանուր Ժողովին։ Այդ պահանջը պէտք է անուի ոչ ուշ քան մի ամիս Խորհրդի մերժումն ստանալուց յետոյ։ Առանց Խորհրդի դիտութեան՝ Ընդհանուր Ժողովին ոչ մի առաջարկութիւն չէ թոյլատրվում, բացի Ընկերութեան գործերին վերաբերեալ հարցասնդումներից։

§ 42. Խորհուրդը ղեկավարում է Ընկերութեան բոլոր գործերը դէպի պատշաճաւոր միութիւն, համապատասխան նրա գոյութեան նպատակին, ուստի և հարկաւոր դէպքերում, ուղարկում է իր անդամին ճիւղերը տեղն ու տեղը ծանօթանալու գործերի դրութեան հետ և տալիս է Տեղական Վարչութիւններին ղեկավարող ցուցմունքներ, սոյն այս Կանոնադրութեան սահմաններում։

§ 43. Խորհուրդը կենտրոնացնում է իր մէջ ճիւղերի դրամագլուխների, կայքերի և այլ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները։

§ 44. Իւրաքանչիւր տարուայ վերջին Խորհուրդը կազմում է Ընկերութեան յաջորդ տարուայ ծախսուց նախահաշիւը և այդ նախահաշիւը ներկայացնում է Ընդհանուր Ժողովի հաստատութեանը Թիֆլիսում, ոչ աւելի քան դեկտեմբերի 15-ը։

§ 45. Խորհուրդը մանող գումարները տրվում են պետական կամ մասնաւոր բանկեր ցպահանջումն կամ ընթացիկ հաշուով, նայելով թէ որն է աւելի օգտաւէտ և աշխատելով, որքան կարելի է, Խորհրդում պահել ոչ ուշ քան հինգ հարիւր ռուբլի։

§ 46. Խորհուրդն ունի իրաւունք՝

ա) Կապել ամեն տեսակ դաշինքներ և պայմանագրեր.

բ) Դատ բանալ ուր հարկն է, Ընկերութեան գործերի վերաբերմամբ և պաշտպանել նրա շահերը իր հաւատարմատարների ձեռքով, որի համար և նա տալիս է նրանց իր կողմից առանձին հաւատարմութիւն։

§ 47. Ընկերութեան գործերի վերաբերմամբ Խորհուրդը յարաբերութեան մէջ է մտնում բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների հետ։

§ 48. Ընկերութեան գործերին վերաբերեալ բոլոր ակտերը և պայմանագրերը, նոյնպէս գումարների պահանջումն փոխատու հիմնարկութիւններից և առհասարակ այն տեղերից, որոնց յանձնուած է Ընկերութեան դրամագլուխների պահպանութիւնը, նմանապէս և Ընկերութեանը պատկանեալ գումարների փոխադրութիւնը պէտք է ստորագրեն նախագահը կամ փոխ-նախագահը և Խորհրդի քարտուղարը։

§ 49. Խորհուրդը տալիս է Տեղական Վարչութիւններին կնիքների ձևեր և մատեանների օրինակներ՝ դրամական վճարները և նիւթական նուէրները գրելու համար։

§ 50. Ամենայն տարի, Տեղական Վարչութիւններից նախընտ-

թաց տարուայ հաշիւները ստանալուց յետոյ՝ Խորհուրդը կազմում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան գործունէութեան, գումարների ելից և մուտից և կայքերի դրութեան մասին և այս հաշիւը ներկայացնում է Ընդհանուր ժողովի վերանայման ոչ ուշ քան մայիսի 15-ը։

§ 51. Ընկերութիւնը բացի Խորհրդից, ունի նոյնպէս Վերաստուգող Յանձնաժողով, բաղկացած երեք անդամից, որոնք ընտրվում են ամենայն տարի Ընդհանուր ժողովից։ Յանձնաժողովն ընտրում է իր միջից մի նախագահ։ Յանձնաժողովի մի որ և է անդամի հիւանդութեան կամ ժամանակից առաջ դուրս գալու դէպքում, նրանց փոխարինելու համար՝ ընտրվում են երկու փոխ-անդամ նոյն կարգով և նոյն ժամանակի համար։

Ծանօթ. Խորհրդի և Վերաստուգող Յանձնաժողովի անդամները միևնոյն անձինք չեն կարող լինել։

§ 52. Վերաստուգող Յանձնաժողովը պարտաւոր է ամենայն տարի վերաստուգել Ընկերութեան գումարները, գոյքերը և գրքերը։ Նրա պարտականութիւնն է նոյնպէս Ընկերութեան տարեկան հաշուի և նախահաշիւների ստուգելը։ Այս հաշիւները ստուգելու համար՝ Խորհուրդը՝ Ընդհանուր ժողովից ոչ ուշ քան երկու շաբաթ, ուր պիտի հաստատուին հաշիւները՝ յանձնում է Յանձնաժողովին այդ հաշիւները և նախահաշիւը։ Յանձնաժողովը իր քննութեան հետևանքների մասին կազմում է արձանագրութիւն և յանձնում Խորհրդին, որը իր բացատրութիւններով ներկայացնում է Ընդհանուր ժողովին։ Յանձնաժողովի անդամները իրենց վերաքննութիւնների մասին նկատողութիւններ են անում և իրենց քննած գրքերի մէջ։

Ծանօթ. Վերաստուգող Յանձնաժողովը նոյնպէս իրաւունք ունի՝ ըստ իր հայեցողութեան, կամ Ընկերութեան անդամների այդ մասին արած հիմնաւոր և պատճառաբանեալ գրաւոր պահանջի՝ անակնկալ քննութիւն կատարել։

VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 53. Ընդհանուր ժողովները հրաւիրվում են Թիֆլիսում, տեղական լրագիրների միջոցով, տարէնը երկու անգամ՝ մայիսի 15-ից առաջ—հաշուի և դեկտեմբերի 15-ից առաջ—նախահաշուի

քննութեան համար։ Բացի սրանից, Խորհուրդը հրաւիրում է արտաքոյ կարգի ժողովներ հետեւեալ դէպքերում, այն է՝ երբ նա այդ անհրաժեշտ կգտնէ, երբ Խորհուրդը կստանայ յայտարարութիւն Ընկերութեան 25 անդամի ստորագրութեամբ, և վերջապէս, երբ այդ կըպահանջէ Վերաստուգող Յանձնաժողովը։ Մի խումբ անդամների կամ Վերաստուգող Յանձնաժողովի կողմից Ընդհանուր ժողով հրաւիրելու պահանջի դէպքում՝ պարտաւոր են նրանք ներկայացնել Խորհրդին գրաւոր յայտարարութիւն, ցոյց տալով այն հարցերը, որոնք անհրաժեշտ են կացուցանում արտաքոյ կարգի ժողովի հրաւէրը։

§ 54. Ընդհանուր ժողովը բացում է Խորհրդի նախագահը և առաջարկում է ժողովին ընտրել նախագահ և քարտուղար։ Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարն իւրաքանչիւր տարի ընտրվում են նոյն ժողովից։ Երբ որ Ընդհանուր ժողովում քննվում է խորհրդի հաշիւը կամ նրա գործունէութեան վերաբերեալ բողոքներ, Խորհրդի կազմին պատկանեալ անդամներից չեն կարող Ընդհանուր ժողովների նախագահ լինել։ Ընդհանուր ժողովները կայացած են համարվում, երբ Թիֆլիսում գտնուող բոլոր անդամների ոչ պակաս քան $1/5$ մասը ներկայ է ժողովին։ հակառակ դէպքում, չկայացած ժողովի փոխարէն, հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար այլ ևս չէ պահանջվում անդամների որ և է սահմանեալ թիւ։ Երկրորդ Ընդհանուր ժողովի ժամանակը որոշում են չը կայացած Ընդհանուր ժողովին ներկայ եղող անդամները։ Վերջին ժողովի (երկրորդ) քննութեան ենթարկվում են միայն այն գործերն ու հարցերն, որոնք մտած էին առաջին չը կայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ։

§ 55. Ընդհանուր ժողովի պարապմունքներին ենթարկվում են՝

ա) Խորհրդի և Տեղական Վարչութիւնների ընդհանուր հաշիւների քննութիւնը.

բ) Խորհրդի և Տեղական Վարչութիւնների նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը.

գ) Տեղական Վարչութիւնների համար Խորհրդից կազմուած հրահանգների քննութիւնը և հաստատութիւնը.

դ) Լուծումն զանազան հարցերի և միջոցների, սոյն Կանոնագրութեան սահմաններում, որոնք առաջարկվում են կամ Խորհրդից կամ Տեղական Վարչութիւններից Խորհրդի միջոցաւ.

ե) որոշումն նպաստի քանակութեան, որը կարող է տրուել բացառիկ դէպքերում, համաձայն 40-րդ § Խորհրդի նախագահի կարգադրութեամբ.

զ) Ընկերութեան պատուաւոր անդամների ընտրութիւնը.

է) Խորհրդի, Վերատուչդ Յանձնաժողովի անդամների և նրանց փոխանորդների ընտրութիւնը.

ը) Անշարժ և շարժական կայքեր գնելու, ծախելու, գրաւ դնելու կամ գրաւ առնելու ձեռնարկութիւնը.

թ) Կանոնադրութեան բացատրութիւնը և օրինական ճանապարհով նրա փոփոխութեան նախագծումն.

ժ) Ընկերութեան փակումն։

§ 56. Ընդհանուր ժողովին որ և իցէ առաջարկութիւն ներկայացնել ցանկացող անդամները պարտաւոր են այդ առաջարկութիւնը ենթարկել Խորհրդին կանխապէս վերաքննելու՝ Ընդհանուր ժողովի նիստից առնուազն 7 օր առաջ։

§ 57. Ընդհանուր ժողովի մէջ բոլոր հարցերը վճռվում են ձայների առաւելութեամբ, հաւասար եղած դէպքում, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս։ Իսկ այն խնդիրներում, որ վերաբերում է գնելուն, ծախելուն, անշարժ կայքերի գրաւ դնելուն, Կանոնադրութեան փոփոխութեան, անդամներին Ընկերութեան անուանական ցուցակից դուրս ձգելուն, որոնց գործունէութիւնը չէ համապատասխանում Ընկերութեան շահերին և Ընկերութեան փակելուն—պահանջվում է ձայների $^2/_3$ մեծամասնութիւնը։ Ընկերութեան փակման հարցի վերաբերմամբ, որ պահանջվում է Ընկերութեան բոլոր անդամների ձայների $^2/_3$ մասը իր բոլոր ճիւղերով—Խորհուրդը թէ լրագրութեան միջոցով և թէ պաշտօնական յայտարարութիւններով կանխապէս ազդարարում է Տեղական Վարչութիւններին, որպէսզի նրանք իրենց Ընդհանուր ժողովների վճիռները ուղարկեն Խորհրդին, որոշելով ընկերութեան խափանումն ցանկացող և ոչ ցանկացող անդամների թիւը։

VII. ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

§ 58. Տեղական Վարչութիւնները վարում են Ընկերութեան ճիւղերի գործերը, իւրաքանչիւրն իր շրջանի սահմաններում.

§ 59. Տեղական Վարչութիւնները կազմւում են Տեղական Ընդհանուր ժողովից ընտրուած հինգ անդամից և երկու փոխանդամից։ Այս հինգ անդամը իրենց միջից ընտրում են մի նախագահ, մի քարտուղար և մի գանձապահ, վերջին երկու պաշտօնը կարելի է յանձնել և մի անձի։

§ 60. Տեղական Վարչութեան անդամներն ընտրվում են երեք տարով։ Ամեն տարուայ վերջը Տեղական Վարչութեան անդամներից երկուսը թողնում են իրենց պաշտօնը, առաջին երկու տարին միայն վիճակով։

§ 61. Կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների հետ ունենալիք յարաբերութիւններն, ժողովներ հրաւիրելու, վճիռներ կայացնելու, ձայներ հաշուելու, թղթեր, արձանագրութիւններ և պարտագրեր ստորագրելու, գումարներ պահանջելու և փոխադրելու և նրանց համար անդորրագրեր տալու, նմանապէս գործավարական կարգը որոշելու և մասնագիտական հարցեր քննելու համար առանձին մասնախմբեր նշանակելու վերաբերմամբ—Տեղական Վարչութիւնները առաջնորդվում են այն կանոններով, որոնք սահմանուած են Խորհրդի համար.

Ծանոթ. Որպէսզի Տեղական Վարչութիւնների վճիռները վաւերական համարուեն, անհրաժեշտ է անդամների գոնէ երեքի ներկայութիւնը, որոնց մէջ պէտք է հաշուել նախագահը կամ նրա փոխանորդը. այս անդամներից որևէ մէկի բացակայութեան ժամանակ՝ նախագահը հրաւիրում է հերթով փոխ-անդամներին։

§ 62. Տեղական Վարչութիւնների մտից և ելից գումարների և առհասարակ նրա հսկողութեան ներքոյ գտնուող դրամագլուխների ստուգութեան համար՝ ընտրւում է Տեղական Ընդհանուր ժողովի անդամներից Վերաստուգող Յանձնաժողով՝ բաղկացած ոչ պակաս քան երեք անձից։

§ 63. Անդամակցական վճարները և դրամական ու նիւթական նուիրատուութիւններն ընդունվում են Տեղական Վարչութիւններն իրենց շրջանի մէջ, կամ այն տեղերում, ուր Վարչութիւններն իրենք ցոյց կտան,—գրվում են առանձին մատեաններում և այդ մատեաններից կտրած անդորրագրերը տրվում են Վարչութեան գանձապահի ստորագրութեամբ։

§ 64. Իւրաքանչիւր տարուայ վերջը Տեղական Վարչութիւնները կազմում են առաջիկայ տարուայ իրենց ծախսերի նախահաշիւը և այս նախահաշիւը, հոկտեմբերից ոչ ուշ՝ Տեղական Ընդհանուր Ժողովի նիստում քննելուց յետոյ՝ առաջարկում են Խորհրդին, որը նոյն նախահաշիւը իր եզրակացութեան և Ընկերութեան նախահաշուի հետ ներկայացնում է Թիֆլիսի Ընդհանուր Ժողովին քննելու և հաստատելու։

§ 65. Տեղական Վարչութիւնները Խորհրդին ուղարկում են պահելու հետևեալ գումարները՝ անձեռնմխելի, պահեստի և յատուկ գումարները և առհասարակ եկամուտից ստացած այն զեղջերը, որոնք յիշուած են 6-րդ §-ում։

§ 66. Տեղական Վարչութիւններն իրենց ընթացիկ ծախքերը հոգալու համար նախահաշուով որոշուած գումարներից կարող են առձեռն պահել ոչ աւելի քան երկու հարիւր բուբլի, աւելորդ գումարները, ըստ չափու ստացման, ուղարկվում են Խորհրդին պահելու, կամ յանձնում են պետական բանկը, նրա բաժանմունքները, խնայողական դրամարկղները կամ քաղաքային հասարակական բանկերը ցպահանջ կամ ընթացիք հաշուով, նայելով թէ որը յարմար կամ ձեռնտու կհամարէ Ընկերութեան Խորհուրդը։ Իսկ ուր որ այսպիսի հիմնարկութիւններ չկան, բոլոր յիշեալ ազատ գումարներն ուղարկուում են Խորհրդին ի պահեստ նոյն ճիւղի անունով։

VIII. ՏԵՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 67. Տեղական Ընդհանուր Ժողովները բացվում են իւրաքանչիւր անգամ ընտրուած առենապետի նախագահութեամբ. քարտուղարը՝ ըստ ցանկութեան Ընդհանուր Ժողովի՝ կարող է լինել և Տեղական Վարչութեան քարտուղարը. Ընդհանուր Ժողովը կարող է ընտրել և ուրիշ անձն։

§ 68. Սովորական Տեղական Ընդհանուր Ժողովները հրաւիրվում են յայտարարութեամբ տեղական լրագիրներում, ուր կան լրագրներ կամ առանձին կոչերով տարէնը երկու անգամ՝ մարտին—հաշուի, հոկտեմբերին՝ նախահաշուի քննութիւնների հա

մար։ Բացի սրանից Տեղական Վարչութիւնները հրաւիրում են արտաքոյ կարգի ժողովներ, այն ամենայն դէպքերում, երբ կարեւոր են համարում այդ, և նոյնպէս, երբ պահանջում է Վերաստուգող Յանձնաժողը, կամ երբ Վարչութիւններն ստանում են յայտարարութիւն եօթն անդամից ստորագրած, իւրաքանչիւր անգամ կանխապէս յայտարարելով պարապմունքների առարկաները։

Ընդհանուր ժողովը կայացած է համարվում, երբ ներկայ է գտնվում ոչ պակաս քան անդամների թուի կէսը, հակառակ դէպքում, հրաւիրվում է երկրորդ ժողով, որի համար արդէն այլևս չէ պահանջվում անդամների սահմանեալ թիւ։ Երկրորդ ժողովի օրը որոշում են չը կայացած Ընդհանուր ժողովում ներկայ եղող անդամները։ Այս երկրորդ ժողովի քննութեանը ենթարկվում են միայն այն գործերը ու խնդիրները, որոնք մտած էին առաջին չը կայացած ժողովի պարապմունքների ծրագրի մէջ։

§ 69. Սովորական Տեղական Ընդհանուր ժողովների պարապմունքներին ենթարկվում են՝

ա). Տեղական Վարչութեան նախահաշուի քննութիւնը.

բ). Այն հաշուի քննութիւնը, որը առաջարկւում է հաստատութեան համար. Խորհրդին՝ Ընդհանուր ժողովը մտցնելու համար։

գ). Տեղական Վարչութեան կողմից առաջարկուած այլ և այլ հարցերի և միջոցների քննութիւնը.

դ). Տեղական Վարչութեան. անդամների փոխ-անդամների և Վերաստուգող Յանձնաժողովի անդամների ընտրութիւնը.

ե). Ընկերութիւնը փակելու վերաբերմամբ արուած առաջարկութեան քննութիւնը։

§ 70. Տեղական Ընդհանուր ժողովների մէջ բոլոր գործերը վճռվում են ձայների առաւելութեամբ, նրանց հաւասարութեան դէպքում, նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս, իսկ այն հարցերում, որոնք վերաբերում են տեղական Վարչութեան անդամների ընտրութեանը, անշարժ կայքեր գնելուն ու ծախելուն և Ընկերութեան փակմանը՝ Տեղական ժողովները վարվում են համաձայն այն կանոնների, որոնք սահմանուած են Թիֆլիսի Ընդհանուր ժողովի համար. (Կանոնադրութիւն 57-րդ §)։

IX. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

§ 71. Ընկերութեան գումարների և գործունէութեան վերաբերեալ տարեկան հաշիւները Ընդհանուր ժողովի կողմից հաստատուելուց յետոյ՝ իւրաքանչիւր տարի երկու օրինակ ուղարկվում է Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի գիւանատուն և երկուական օրինակ էլ պատշաճաւոր Նահանգապետներին։

§ 72. Եթէ որ և է մի պատճառով Ընկերութիւնը դադարեցնէ իր գոյութիւնը, Ընկերութեան բոլոր մնացած գրամագլուխը ու կայքը գործ են դրվում ազգօգուտ գործերի վերայ, համաձայն սոյն Կանոնադրութեան՝ Ընկերութեան բոլոր ձայների $^{2}/_{3}$-ի որոշումով, բացի այն գումարներից և կայքերից, որոնք՝ Ընկերութիւնը փակուելու դէպքում, նախատեսնուած և որոշուած են հէնց նուիրողների կողմից։

Ընդհանուր ժողովը հաստատեց այս Կանոնադրութիւնը՝ ապրիլի 24-ի 1910-ի նիստին՝ Ընդհանուր ժողովի նախագահ՝ բժշկապետ Բ. Նաւասարդեան։

ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

1. Կ. Հ. Բ. Ընկերութիւնը իւր Կանոնադրութեան 1 և 35 յօդուածների համաձայն հիմնում է գրական ֆոնդ, որի նպատակն է օգնել կարօտ գրականագէտներին և նոցա որբացած ընտանիք-

ներին 1) այդ նպատակով Ընկերութեանը աւանդուած յատուկ գումարներից և 2) իւր միջոցներից։

2. Գրականագէտ անուան տակ ընդունվում են գրական այն գործողները, որոնք կամ գեղեցիկ գպրութեանը, կամ բանասիրութեանը, կամ գիտութեանը և առ հասարակ Հայոց գրականութեան մատուցել են որոշ ծառայութիւն։

Ծանօթ. Ամենայն մի գրականագէտ, որ ակն ունի գրական նպաստաղրամից օժանդակուելու, անպայման պէտք է գրական հրապարակի վրայ յայտնի եղած լինի իւր որ և է 'ի լոյս ընծայած երկասիրութեամբ։

3. Օգնութիւնը մատուցվում է կամ միանուագ կամ պարբերաբար կարօտ գրականագէտին կամ նորա ընտանիքին։

4. Օգնութեան գործը վարելու համար Ընկերութեան Խորհուրդը իրան կից ունի մի յանձնաժողով 5 անդամից, որոնցից 4-ը ընտրում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովը Ընկերութեան անդամների շարքից, իսկ հինգերորդը կը լինի Ընկերութեան Խորհրդի նախագահը, կամ սորա բացակայութեան դէպքում փոխնախագահը, որ և կը լինի յանձնաժողովին նախագահող։

Ծանօթ. Յանձնաժողովը ընտրվում է մի տարով։

5. Նպաստների որոշումը յանձնաժողովն է անում, իսկ որոշումներն ընդունել ի հաստատութիւն և նպաստների բաշխումն անելը Խորհրդին է պատկանում։

6. Գրական ֆոնդը ունի իւր ստորաբաժանմունքները՝ յատուկ նուէրների նշանակութեան համաձայն (որպէս օրինակ բանաստեղծ Ս. Շահազիզի յատկացրած Աբովեան-Նազարեան գումարը)։

Այս հրահանգը դեկտեմբերի 26-ին 1910 թ. Ընդհանուր ժողովում կարդացուեց, քննուեց և հաստատուեց։ Ընդհանուր ժողովի նախագահ՝ բժշկապետ Բ. Նաւասարդեան։

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի Աղքատախնամ Մասնաժողովների

ա. ՀԻՄՆՈՒՄԸ

1. Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը կազմում է Հայոց Աղքատախնամ մասնաժողովներ Թիֆլիսում՝ համաձայն իւր Կանոնագրութեան § 2-ի տրամադրութեան։

2. Աղքատախնամ Մասնաժողովը գործում է քաղաքի 4 մասերում՝ Հալաբարում, Կուկիայում, Խարփուխում և Վէրայում։

բ. ՆՊԱՏԱԿԸ

3. Աղքատախնամ մասնաժողովների նպատակն է ձգտել վերջ տալու փողոցային մուրացկանութեանը և ժամանակաւոր նիւթական օգնութիւն մատակարարել իւր շրջանի անտուն և անկարող աղքատներին, չքաւոր հիւանդներին և տառապեալներին, զուտամեալ հասակի կարօտեալներին, աղքատ և անօգնական ընտանիքներին և առ հասարակ նրանց, որոնք ընկել են անելանելի չքաւորութեան և թշուառութեան մէջ։

Ծանօթ. Մասնաժողովը նպաստում է նաև հայրենիք վերադառնալ ցանկացողներին, որոնք անգործ և պարապ մնալով քաղաքում, թշուառութեան դուռն են հասել։

Գ. ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

4. Վերոյիշեալ կարգի անձանց օգնութիւնը կամ նպաստը լինում է ա) միանուագ դրամական օժանդակութեամբ, բ) ամսական վճարով, որը սակայն չէ կարող մշտական լինել, գ) մատակարարելով ձրի կամ էժանագին ճաշարաններին և գիշերօթիկ ապաստարաններին համար միջոցներ և դ) գործ կամ պաշտօն ճարելով։

Դ. ՄԱՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

5. Ամեն մի թաղում ապրող Ընկերութեան անդամները ընտրում են մանաժողովի անդամներ թուով 5, որոնցից մէկը պէտք է լինի թաղի եկեղեցիների քահանաներից։ Մանաժողովի անդամներին հաստատում է Ընկերութեան Խորհուրդը։

6. Իւրաքանչիւր շրջանի Ազգատախնամ Մանաժողովը իրաւունք ունի հրաւիրել իւր կազմի մէջ աշխատակցելու համար և կողմնակի անձանց անդամակցական իրաւունքով։

7. Ազգատախնամ Մանաժողովի նախագահ համարվում է կով. Հ. Բարեգործական Ընկերութեան Խորհրդի անդամներից մէկը, Խորհրդի որոշմամբ, անդամները առաջին նիստում ընտրում են իրենց միջից իւրաքանչիւր տարուայ համար ձայների առաւելութեամբ փոխ-նախագահ, քարտուղար և գանձապահ։

Ծանօթ. Վերոյիշեալ պաշտօնական անձինք կարող են ամեն անգամ վերընտրուել։

Ե. ՄԱՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

8. Ազգատախնամ Մանաժողովը քննում է իրեն դիմող անձանց խնդիրները՝ գրաւոր թէ բանաւոր, և արձանագրական համառօտ որոշում կայացնում, ունենալով դրա համար առանձին մատեան։

9. Վերոյիշեալ խնդիրները քննվում են Մանաժողովի նիս-

տում և վճռվում են ներկայ գտնուող անդամների ձայների առաւելութեամբ, ձայների բաժանման դէպքում նախագահը ունի 1 ½ ձայն։

Ծանօթ. Շաբաթը մի անգամ Մասնաժողովի նախագահի կամ փոխ-նախագահի հրաւէրով նիստ է գումարվում հերթական խնդիրները քննելու և վճռելու համար։

10. Աղքատախնամ Մասնաժողովը իւր գործունէութեան տեղական շրջանը բաժանելով մասերի, նշանակում է իւրաքանչիւր մասի համար մէկ անդամ, որն պարտաւոր է այդ մասի չքաւոր, անանկ և թշուառացած անձանց և ընտանիքների կացութեան հետ ծանօթանալ և հարկաւոր դէպքերում Մասնաժողովի յանձնարարութեամբ զեկուցում ներկայացնել ժողովի նիստին։

11. Նախ քան որոշում կայացնելը նպաստ տալու մասին այս կամ այն խնդրով դիմողին՝ Մասնաժողովը պարտաւոր է իւր թաղական անդամի միջոցաւ քննել՝ թէ որքան իրականութեան համապատասխան է այն, ինչ որ գրուած է խնդրի մէջ։

12. Իւրաքանչիւր դիմողի խնդիրը վերոյիշեալ կարգով քննուած վճռվում է ոչ ուշ քան մի շաբաթուայ ընթացքում սկսած այն օրից, երբ խնդիրը մտել է մասնաժողովի գրասենեակը։

13. տարին երկու անգամ Յունվար և Յուլիս ամսին Մասնաժողովը համառօտ հաշիւ և տեղեկագիր է ներկայացնում Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին իւր գործունէութեան մասին։

14. Տարուայ վերջը Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Վերատուղիչ Մասնաժողովը քաղաքի Աղքատախնամ մասնաժողովների հաշիւները քննում է։ Խորհուրդը իրաւունք ունի քննելու Մասնաժողովի հաշիւները ամենայն ժամանակ իր բարեհայեցողութեամբ։

15. Աղքատախնամ Մասնաժողովը ընդունում է ի գիտութիւն և ի կատարումն Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի կողմից տրուած նկատողութիւնները և ցուցմունքները իւր գործունէութեան մասին։

16. Աղքատախնամ Մասնաժողովը իրաւունք ունի առաջարկութիւն անել Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդին ներկայ հրահանգի այս կամ այն յօդուածը փոփոխելու կամ լրացնելու մասին, եթէ նա գտնում է այդ փոփոխութիւնը կարևոր և շահաւէտ Մասնաժողովի գործունէութեան համար։

17. Իւրաքանչիւր տարուայ համար Մասնաժողովը պատրաստում է նախահաշիւ և ներկայացնում Խորհրդին։

զ. ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

18. Աղքատախնամ Մասնաժողովի միջոցները կազմում են. ա) նուիրաբերութիւններ դրամական գումարներով և իրերով, բ) Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի բիւղջէով սահմանուած տարեկան դրամական նպաստը, գ) Թիֆլիսի հայոց եկեղեցիներից ստացուած դրամական օժանդակութիւնները, դ) յատուկ թատրոնական ներկայացումներից, կոնցերտներից, դասախօսութիւններից, երաժշտական-գրական երեկոյթներից և պարահանդէսներից գոյացած արդիւնքը, ե) յատուկ տուփերից ստացուած հասոյթը և զ) պատահական և այլ եկամուտներ։

19. Աղքատախնամ Մասնաժողովի ամբողջ ստացուածքը համարվում է Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան սեփականութիւն։

20. Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը իւր տարեկան Տեղեկագրի մէջ նուիրում է առանձին բաժին քաղաքի Աղքատախնամ մասնաժողովների գործունէութեան մասին։

ԲՆԱԳՐԻ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ Է

Այս հրահանգը 'ի 27 յունվարի 1885 ամի ենթարկուեցաւ Ընդհանուր ժողովի քննադատութեան և սորա կողմանէ հաստատուեցաւ 'ի պատշաճաւոր գործադրութիւն։

Նախագահ Ընդհանուր ժողովի՝ Ս. ԱՐԾՐՈՒՆԻ
Քարտուղար՝ Գ. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վերաստուգող Յանձնաժողովին

§ 1. Վերաստուգող Յանձնաժողովը ընտրվում է՝ իւրաքանչիւր տարի մայիսի 15-ի Ընդհանուր ժողովում՝ նախորդ տարուայ, այն է յունուարից ցյունուար, դրամական հաշիւը վերաստուգելու համար։ (Կանոնագրութիւն, §§ 43 և 44, ա)։

§ 2. Վ. Յանձնաժողովը, հրաւիրուելով Խորհրդից, սկսում է իւր գործը ընթացիկ տարուայ սեպտեմբերի 20-ից և աւարտում է ց10 հոկտեմբերի նոյն տարուայ։

§ 3. Վ. Յանձնաժողովի գործն է՝ վերաստուգել Ընկերութեան Խորհրդի ելևմտից մատեանները, կահկարասեաց և կալուածքների ցուցակագրերը, արժէթղթերը և առհասարակ նիւթական իրաւանց վերաբերեալ ապացուցագրերը. նաև՝ մուտքի յօդուածներն ապացուցանող անդորրագրական մատեանները և այն, վկայաթղթերը, որոնց հետ առաջարկուած են դրամ կամ զանազան տեսակի ստացուածք, ծախքի յօդուածներն ապացուցանող վաւերացեալ հաշիւները և առհասարակ այլ և այլ ելից վկայաթղթերը, որպիսի են օժանդակութիւն ստացողների խնդրագրերը՝ սոցա վերաբերեալ արձանագրական տեղեկութիւններով։

§ 4. Վ. Յանձնաժողովը իւր գործը աւարտելուց զկնի՝ իրան յանձնուած մատեանները և այլ վկայաթղթերը անյապաղ, վերևում նշանակած ժամանակամիջոցում (§ 2.), վերադարձնում է Խորհրդին, հանդերձ իւր զեկուցագրով և նկատողութիւններով, որոնք Խորհուրդը իւր բացատրութիւններով ներկայացնում է այդ իսկ առթիւ գումարելի Ընդհանուր Ժողովին։

§ 5. Վ. Յանձնաժողովը առնելու է ի նկատի։

ա. ՄՈՒՏՔԻ ԿՈՂՄԱՆԷ

ա) Արդեօք ճշտութեամբ է փոխանցուած Ընկերութեան նիւթական բոլոր կարողութեան մնացորդը անցեալ տարուանից։

բ) Գրուած են արդեօք բոլոր եկամուտները պատշաճաւոր մատեաններում (§§ 3, 5, 28, 49)։

գ) Համաձայն են արդեօք այդ եկամուտները անդորրագրական մատեանների և այլ վկայագրերի հետ։

դ) Յանձնուած են արդեօք իւր ժամանակին Ընկերութեան գումարները վարկային հիմնարկութեանց կամ ուր հարկն է (§ 31)։

ե) Արդեօք հանվում է ճշտութեամբ հինգ տոկոս Ընկերութեան զուտ արդիւնքից՝ անձեռնմխելի գումար կազմելու համար (§ 29)։

զ) Համաձայն է արդեօք Ընկերութեան տարեկան Ընդհանուր Հաշիւը այն գրաւոր ապացոյցներին, որոնք հիմք պէտք է համարուին այդ հաշուին (§ 41)։

բ. ԾԱԽՔԻ ԿՈՂՄԱՆԷ

ա) Համաձայն են արդեօք բոլոր ծախքի գումարները նախահաշուի հետ (§ 30)։

բ. Կազմվում են արդեօք ճշտութեամբ Ընկերութեան Խորհրդի արձանագրութիւնները ծախքի վերաբերութեամբ։

գ) Տարեկան հաշվում ցոյց տուած ծախքերը համապատասխանն են արդեօք վկայագրերին (§ 41)։

դ. ԿԱՅՔԻ ԿՈՂՄԱՆԷ

ա) Ընկերութեան շարժական և անշարժ կայքերը գրվում են արդեօք մատեաններում կամ ցուցակագրերում և արդեօք ճշտութեամբ են ի մատեան արձանագրուած նոցա գները։

բ) Մատեանների մէջ գրուած կայքերը արդեօք մնում են անկորուստ և օրպիսի դրութեան մէջ են։

ԳՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԻՊԱԿՆԵՐ [1])

Էջ	Տող	Տպված է	Պիտի լինի
6	8 վ.	եկեղեցիս	յեկեղեցիս
»	5 ն.	աջաց	աչաց
18	6, 10 ն.	Վերածնութեան	Վերծանութեան
28	15 վ.	հետևանքով	հետևանքներով
32	14 ն.	Դպրոցասիրեաց	Դպրոցասիրաց
33	4 վ.	Միացեալք	Միացեալ
39	6 ն.	թոյլտվութիւն	թոյլտուութիւն
49	5 ն.	հիմնելուն	հիմնելու
53	13 վ.	ի հարկ է (այսպէս ամեն տեղ)	իհարկէ
74	2 վ.	հայաղջիկ	հայաղզի
75	11 վ.	է	էր
77	14 ն.	դասատվութեան	դասատուութեան
81	2 վ.	յանձնարարելու	յանձնարարելով
82	7 ն.	ուսանողները	ուսուցիչները
95	1 ն.	արգասի	արգասիք
97	18 վ.	Իսկ	Ինձ
«	23 «	միմիական	սեփական
98	17 «	մէջ	մէջ.
103	9 ն.	եկան	եկաւ
104	8 ն.	ամարուայ	ամառուայ
105	19 վ.	Խորհուրդ	խորհուրդ
106	10 վ.	տուա՜ծէ	տուած է
109	6 վ.	Ձմերուայ	Ձմեռուայ

[1]) Հեղինակը ցաւում է որ սրբագրիչների անփորձութեան պատճառով բազմաթիւ սխալներ են մնացել նրան աշխատութեան մէջ։ Այստեղ բերվում են գլխաւոր սխալները, իսկ մնացեալը ընթերցողն ինքը հեշտութեամբ կարող է նկատել։

Էջ	Տող	Տպուած է	Պիտի լինի
112	10 վ.	սկսեցին	սկսուեցին
«	6 ն.	յաւելով	յաւելլով
116	7 ն.	Արշակունին	Արշարունին
139	11 ն.	վերաբերմամբ գործունէութեան	վերաբերմամբ
141	2 ն.	արձանագրուելու	արձանագրելու
145	2 ն.	Ղուլիքևեցեան	Ղուլիքևեայեան
155	10 վ.	Կարապետ	Կարապետ և
157	6 վ.	ինքնուրոյն թիւ	ինքնուրոյնութիւն
170	10 վ.	յաջողացնելու	յաջողեցնելու
171	9 վ.	Մի ժամանակ	Միաժամանակ
205	15 ն.	պատուաւաւոր	պատուաւոր
209	18 ն.	Մեծարունի	Մեծարուհի
211	2 վ.	Կանոնադրութիւն	Կանոնադրութիւն 1899 թ.
«	3 վ.	1899—1908 թուականի	1899—1908
212	3 վ.	1889	1899
242	13 ն.	Յայտնի էր	Յայտնի է
249	2 վ.	Կանոնադրութիւն	Կանոնադրութիւն 1908 թ.
«	3 վ.	1908—1911 թուականի	1908—1911.
251	3 վ.	օրինաւոր,	օրինաւոր
252	12 վ.	Պայծառափայլութեան	Պայծառափայլութիւն
257	7 վ.	ազգաբնակութեան	ազգաբնակութեան կողմից
264	10 վ.	կանգնելով	կանգնելով
268	2 ն.	անդամ	անդամի
270	15 վ.	առանձին	առձեռն
274	14 վ.	1907	1897
279	2 ն.	ցանկանալով թէ	ցանկանալով իմանալ թէ
314	2 ն.	գործունէութիւնը միայն	գործունէութիւնը կայ միայն
320	7 վ.	ինչպէս էր	ինչպէս էր և

[2]n.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014130

ЦЕНА
11913